Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԻԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



9(47.925)
Հ-17
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հնագույն ժամանակներից մինչև 1045 թ.)

4907

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1980

9(Ա43) խեղես ԳՄԴ 63.3 (2Ա)
Հ177

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ս. Պ. Պողոսյան
Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր Բ. Ա. Ուլուբաբյան

Հակոբյան, Թ. Խ.

Հ 177 *Անիի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև 1045 թ.) /Խմբ. Ս. Պ. Պողոսյան.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1980.—416 էջ.*

Աշխատությունն ընդգրկում է միջնադարյան Հայաստանի հրաշակված մայրաքաղաք Անիի ընդհանուր քննական պատմությունը։ Լուսաբանված են նրա քաղաքական ու տնտեսական կյանքը, վարչական վիճակը տարբեր ժամանակներում, ճարտարապետությունը, բնակչությունը, հասարակական կյանքը, մշակույթը, հուշարձանները։ Գիրքը նկարազարդ է. կցված է նաև քաղաքի հատակագիծը՝ կարևորագույն հնությունների ու հուշարձանների նշումով։

0505010000—17
Հ ——————— 38—80
704 (02) —80

9(Ա43)
ԳՄԴ 63.3(2Ա)

АКОПЯН ТАТЕВОС ХАЧАТУРОВИЧ

ИСТОРИЯ ГОРОДА АНИ

(С древнейших времен до 1045 г.)

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1980

© *Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980*

«Ոչ է կարծ ընդոստուցեալ,
և ոչ ի լուր զարգուցեալ...»
(ԵՂԻՇԵ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծահռչակ Անի մայրաքաղաքը, որն իբրև բնակավայր գոյություն ուներ հնագույն ժամանակներից, միջին դարերում երկար ժամանակ եղել է Հայաստանի քաղաքական կյանքի, մշակույթի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների գլխավոր կենտրոնը։ Նրա պատմությունը ավելի լայն առումով հայ ժողովրդի IX—XIII դարերի՝ ելևէջներով հարուստ ընդհանուր պատմությունն է։

Անին միջնադարյան Հայաստանի ամենալավ ուսումնասիրված քաղաքն է, բայց դրա հետ մեկտեղ, նրա պատմությունը դեռևս ունի չլուսաբանված ու վիճելի շատ հարցեր, կնճռոտ շատ կողմեր, որոնց պարզաբանումը պահանջում է տևական ժամանակ, մեծ ջանքեր և նոր աղբյուրներ ու փաստեր։ Ղ. Ալիշանի, Ն. Մառի, Թ. Թորամանյանի, Հ. Օրբելու և մյուսների աշխատությունները հրապարակ գալուց հետո միջնադարյան Հայաստանի պատմությանը նվիրված տասնյակ լուրջ մենագրություններ, ամփոփիչ աշխատություններ, հիշատակարանների, ժամանակագրությունների, վիմագիր արձանագրությունների և այլ կարգի աղբյուրների ժողովածուներ են լույս ընծայվել, թարգմանվել և հրատարակվել են Հայաստանի ու հայերի մասին օտար աղբյուրների վկայություններ, ճանապարհորդական նոթեր և այլն։ Այլ կերպ ասած՝ Անիի պատմության վերաբերյալ մեծապես ավելացել են մեր գիտելիքները, հայտնի դարձել մեծ թվով նոր փաստեր ու իրողություններ, առանձին հարցերի վերաբերյալ առաջ քաշվել նոր կարծիքներ ու դրույթներ։

Սույն մենագրությամբ փորձել ենք հայագիտության, հայ ժողովրդի պատմության և նեղ անհագիտության սկզբնաղբյուրների ու գիտական հարուստ ժառանգության հիման վրա ներկայացնել Անիի համակողմանի ու քննական պատմությունը՝ հայ ժողովրդի (մասամբ և հարևան ժողովուրդների) ընդհանուր պատմության հետ սերտորեն առնչված։ Աշխատությունում քաղաքի պատմության մեծ ու փոքր տասնյակ հարցեր լուսաբանված են գիտա-

կան-քննական լույսի տակ՝ երբեմն միանգամայն նորովի մեկնաբանելով մեր ձեռքի տակ եղած հին ու նոր փաստերը, նախորդ հեղինակների արտահայտած կարծիքներն ու պատմական իրողությունները։ Դա առանձնապես վերաբերում է Անին քաղաքի վերածվելու ժամանակի ու պայմանների լուսաբանմանը, նրա տնտեսական կյանքի տարբեր բնագավառներին, տնտեսական ու մշակութային փոխազդեցություններին, քաղաքաշինությանը, Բագրատունիների թագավորության ու նրա մայրաքաղաքի անկմանը և բազմաթիվ այլ հարցերի։

Անիի պատմության աղբյուրներն անշափ բազմատեսակ ու բազմաքանակ են, անընդգրկելի, նույնիսկ դժվար է դրանց սոսկ թվարկումը։ Դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝ բանավոր աղբյուրներ, գրավոր աղբյուրներ և նյութական մշակույթի մնացորդներ։ Բանավոր աղբյուրները, որ վերաբերում են քաղաքի պատմության տարբեր ժամանակներին, մեզ են հասել ավանդությունների, զրույցների և առասպելների ձևով։ Այդպիսի բնույթ ունեն Անիի անվան ծագման, Աղջկաբերդի հիմնադրման, Խուրյանի զառիվեր կողի ժայռակերտ ճանապարհի ու Ստորգետնյա Անիի կառուցման, քաղաքի եկեղեցիների ու բնակչության քանակի, Հովվի եկեղեցու կառուցման, Անին Բյուզանդիայի կողմից գրավվելու պատմության մի քանի դրվագների, երկրաշարժերի, արևի խավարումների և քաղաքի անցյալի այլ հարցերի հետ կապված ավանդություններն ու զրույցները, որոնք գրի են առել տարբեր ժամանակներում՝ տարբեր հեղինակներ։

Ավելի ստվարաթիվ են գրավոր աղբյուրները՝ հայ և օտար պատմագիրների երկերը, ժամանակագրությունները, պատմական թեմայով գրված գրական ստեղծագործությունները, ճանապարհորդական նոթերը, վարքագրությունները, դատաստանագրքերը, ձեռագիր մատյանների հիշատակարանները և այլն, որոնք լույս են սփռում Անիի և միջնադարյան Հայաստանի ու նրա տասնյակ քաղաքների պատմության շատ հարցերի վրա։ Գրավոր աղբյուրների հատուկ խումբ են կազմում վիմագիր արձանագրությունները, որոնցից միայն Անիի ավերակներում հայտնաբերվածների թիվը հասնում է ավելի քան երկու և կես հարյուրի։ Սակայն Անիի մասին տեղեկություններ են հաղորդում ոչ միայն Անիի, այլ նաև երկրի այլ տեղերի մի շարք վիմագիր արձանագրություններ։ Դրանց մեջ արժանահավատ շատ հիշատակություններ կան եկեղեցիների կառուցման և դրանց կալվածքներ ու թանկարժեք իրեր նվիրելու, հարկերի ու տուրքերի, ջրմուղի, առևտրական կրպակների, արհեստանոցների, փողոցների անվանումների և ուրիշ բազ-

մաթիվ հարցերի վերաբերյալ։ Անիի վիմագիր արձանագրությունները հավաքել ու հրատարակել են Ղ. Ալիշանը, Կ. Բասմաջյանը, Կ. Կոստանյանցը, Ս. Ջալալյանը և ուրիշներ։ Դրանց ավելի ամբողջական ժողովածուն (մասնագետների կողմից ընդունելի վերծանություններով) հրատարակվել է մեր օրերում՝ Հ. Օրբելու խմբագրությամբ, որին տվել ենք առավելություն՝ չհաշված առանձին դեպքեր, երբ նախորդ վերծանությունները մեզ թվացել են ավելի արժանահավատ։

Միայն պատմագիրների, ժամանակագիրների, ճանապարհորդների, գրիչների և այլ կարգի հեղինակների անհագիտական նշանակություն ունեցող հաղորդումների, վկայությունների, հիշատակությունների վերաբերյալ կարելի է մի պատկառելի ծավալով գիրք գրել։

Սակայն բավարարվենք միայն մի քանի կարևոր աղբյուրների թվարկմամբ։ Առաջին տեղն, անշուշտ, գրավում են հայ մատենագիրները, որոնցից Անիի և Շիրակի վերաբերյալ հիշատակություններ ունեն Մ. Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկը, Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին, Վարդան Վարդապետը, Սմբատ Սպարապետը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Մխիթար Անեցին, Մխիթար Այրիվանեցին և շատ ուրիշներ։ Անիի վերաբերյալ վկայություններ ունեն նաև վրացական, բյուզանդական, պարսկական, արաբական և թուրքական աղբյուրները, որոնց հաղորդած տեղեկությունները երբեմն եզակի են և լրացնում կամ պարզություն են մտցնում քաղաքի պատմության այս կամ այն հարցի մեջ։ Պակաս նշանակություն չունեն նաև բանաստեղծ Ներսես Շնորհալու՝ եղեսիա քաղաքին նվիրված «Ողբ»-ը, մեծ փիլիսոփա Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», մանր ժամանակագրությունները (որ հավաքել ու մի քանի գրքով հրատարակել է Վ. Հակոբյանը), հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք հրատարակվել են մի շարք ժողովածուներում՝ Հ. Տաշյանի, Գ. Հովսեփյանի, Լ. Խաչիկյանի և այլոց կողմից։

XIII դարից սկսած Անիի մասին տեղեկություններ են հաղորդել արևմտաեվրոպական, ապա նաև ռուսական մի շարք ճանապարհորդներ, որոնց ճանապարհորդական տպավորությունները, նոթերն ու գրքերը նույնպես զգալի չափով նպաստել են տարբեր հարցերի լուսաբանմանը։ Արևմտաեվրոպական ճանապարհորդների ուղեգրությունների մի մասը թարգմանել և երկու հա-

տորով հրատարակել է Հովհ. Հակոբյանը, մյուս մասը նույնպես օգտագործվել է մեզ մատչելի լեզուների՝ հատկապես ռուսերենի օգնությամբ, իսկ արաբական, թուրքական, վրացական և մասամբ այլ լեզուներով գրված պատմագրական երկերը, ինչպես հայտնի է, հիմնականում ունեն իրենց հայերեն թարգմանությունները։ Յուրատեսակ սկզբնաղբյուրներ են XIX դարում և հաջորդ դարի սկզբներին Անի այցելած բնագետների, ճարտարապետների, պատմաբանների, հնագետների, ճանապարհորդների, զինվորականների, հետաքրքրասերների հիշատակություններն ու կատարած նկարագրությունները։ Բայց դրանք ավելի շուտ տպավորություններ են կամ տարբեր խորություն ու բովանդակություն ունեցող ուսումնասիրություններ, քան սկզբնաղբյուրներ։ Նոր շրջանի՝ վաղուց արդեն ավերակների կույտի վերածված Անիի մասին կարևոր նյութեր կան արխիվներում ու ձեռագրական ֆոնդերում։

Այդ բոլորով հանդերձ, Անիի պատմությունը խիստ թերի կլիներ, եթե վաղեմի քաղաքի ավերակներում հնագիտական տևական ուսումնասիրություններ ու պեղումներ չկատարվեին և ի հայտ չբերվեին այն հարստագույն նյութերը, որոնք, մեր կարծիքով, կազմում են նրա պատմության «միսն ու արյունը»։ Առանց հնագիտական նյութերի Անիի պատմությունը, իրոք, որոշ չափով կլիներ «գրքային պատմություն», ինչպես Ն. Մառը անվանել է իր «Ани» գրքի առաջին մասը («Ани, **книжная история города** и раскопки на месте городища», Л.—М., *1934*)։ Որոշ չափով ենք ասում, որովհետև նյութական մշակույթի մնացորդները ոչ թե ժխտում, այլ լրացնում, ճշգրտում են գրավոր աղբյուրների վկայությունները։ Ն. Մառի կոչած այդ վերնագիրը պատահական չէ։ Նա որոշ հարցերում երբեմն անտեղի անվստահություն է ցուցաբերել գրավոր աղբյուրների նկատմամբ, իսկ նյութական մշակույթի մնացորդներն ու ճարտարապետական հուշարձաններն էլ հաճախ գնահատել է յուրովի՝ հակառակ ճարտարապետության պատմության ականավոր մասնագետների կարծիքների։ Ընդ որում նա Անիի բուն պատմությանը տրամադրել է ընդամենը 46 էջ։ Սակայն այդ բոլորը չեն կարող ստվեր ձգել նրա բազմամյա հնագիտական պեղումների վրա, որոնց շնորհիվ Անիի պատմությունն ստացել է իր նյութերեն հիմքը, «իրերեն ապացույց»-ները՝ ամենավստահելի աղբյուրները։ Ն. Մառի ղեկավարությամբ կատարված այդ պեղումներին տարբեր ժամանակներում մասնակցել են տասնյակ մասնագետներ՝ Հ. Օրբելի, Թ. Թորամանյան, Ա. Վրույր, Հ. Քյուրքչյան, Գ. Ղափանցյան, Ն. Ադոնց, Դ. Կիպշիձե, Պոլտորացկի և ուրիշներ։

Պեղումների շնորհիվ մոտավորապես ճշտվել են քաղաքի տարածքի սահմանները, քաղաքամասերի և առանձին թաղամասերի տեղադրությունը, մի քանի փողոցների ու հրապարակների դիրքը, բուն քաղաքի հատակագծի ընդհանուր կողմերը, ճարտարապետական ու պատմական հուշարձանների տեղադրությունն ու բնորոշ առանձնահատկությունները։ Հայտնաբերված հարուստ նյութերը հնարավորություն են ընձեռում պարզաբանել նրա արհեստների տեսակներն ու արհեստավորական արտադրանքների մոտավոր կազմը, առևտուրը (հատկապես արտաքին առևտուրը), քաղաքի կոմունալ պայմանները (բաղնիքներ, ջրմուղ և այլն), գյուղատնտեսական զբաղմունքները, մշակութային երևույթները, ճարտարապետական ու քանդակագործական արվեստի զարգացման աստիճանը և այլ հարցեր։ Հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդներն այնքան շատ էին, որ բացի տեղում երկու բաժնից ստեղծված հարուստ թանգարանից, դրանց մի մասն ուղարկվել էր այլ վայրեր (հատկապես՝ Պետերբուրգ)։

Ավելի հարուստ է անիագիտական գրականությունը։ Հարյուրների են հասնում այդ մեծահռչակ մայրաքաղաքի պատմական, հնագիտական, ճարտարապետական, գրամագիտական, քաղաքաշինության, վիմագրական տարբեր հարցերն ընդգրկող գիտական հոդվածները, ամփոփիչ մենագրությունները, նկարագրական գրքերը, ճանապարհորդական տպավորությունները, որոնք տեղ են գտել գրքին կցված գրականության ցանկում։ Այդ բնագավառի երախտավորներից կարելի է նշել Մինաս Բժշկյանցին, Աբել Մխիթարյանցին, Կ. Բամաջյանին, Ս. Ջալալյանին, Հ. Գեղամյանցին, Ն. Սարգսյանին, Ղ. Ալիշանին, Հ. Աբրիխին, Ն. Մառին, որն իր գիտական գործունեության զգալի մասը նվիրել է հատկապես Անիի ուսումնասիրությանը, Մ. Ֆ. Բրոսեին, Թ. Թորամանյանին, Լինչին, Ստրժիգովսկուն, Լեոյին, Ն. Տոկարսկուն, ինչպես նաև մեր ժամանակների մի շարք հեղինակների՝ Վ. Հարությունյանին, Կ. Հովհաննիսյանին և այլոց։ Անիի պատմության զանազան հարցերին անդրադարձել են՝ Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Բ. Առաքելյանը, Վ. Աբրահամյանը, Լ. Խաչիկյանը, Բ. Շելկովնիկովը, Ա. Մովսիսյանը և ուրիշներ։ Կարևոր նշանակություն ունեն «Анийская серия» վերտառությամբ հրապարակված թվով 7 ժողովածուները, որոնցում տեղ են գտել Անիի պատմությանը նվիրված տասնյակ հոդվածներ ու աշխատություններ։

Անիի պատմության ոչ քիչ թվով հարցեր մինչև օրս էլ տակավին բանավեճի առարկա են։ Եվ դրանում զարմանալու ոչինչ չկա, որովհետև մեզ հասած աղբյուրները ոչ բոլոր հարցերին է, որ կա-

րող են բավարար պատասխան տալ։ Սակայն այստեղ չեն կարող ուշադրությունից վրիպել Ն. Մառի արտահայտած անընդունելի մի քանի տեսակետները, որ նրանից ժառանգել են նաև հետագայի որոշ հեղինակներ։ Դրանք հանգում են հետևյալին։ Ն. Մառը բնութագնահատել է Անիի պատմության Բագրատունիների շրջանը։ Նա փաստորեն X—XI դդ. Անին նույնիսկ իսկական քաղաք չի համարել, որը միանգամայն սխալ ու անընդունելի է։ Երկրորդ՝ սելջուկյան շրջանը Անիի համար նա համարել է բնականոն զարգացման շրջան, որ դարձյալ անընդունելի է, և երրորդ՝ գերագնահատել է Անիի ճարտարապետության վրա այլ ժողովուրդների թողած ճարտարապետական արվեստի ազդեցությունը, ինչպես և նրա շատ կոթողներ համարել է հայկական անցյալի դասական կառուցվածքների մեխանիկական կրկնություն։ Ն. Մառի անընդունելի այդ տեսակետները քննադատել են Թ. Թորամանյանը, Ն. Տոկարսկին, Կ. Ղաֆադարյանը, Բ. Առաքելյանը, Վ. Հարությունյանը, Ս. Մնացականյանը և ուրիշներ։ Հիմնականում Անիի՝ Բագրատունիների շրջանին ընդգրկող մեր այս աշխատությունն իր իսկ գոյությամբ նույնպես ժխտում ու մերժում է նրա անընդունելի տեսակետները։ Դրանում փաստական նյութերի հիման վրա ցույց է տրված, որ Անին X—XI դարերում եղել է բազմամարդ և բարեկարգ, արհեստագործության և առևտրի մեծ կենտրոն, ճարտարապետական կոթողների քաղաք, երկրի մշակութային ու քաղաքական կյանքի կարևոր կենտրոն։

Նախորդ ուսումնասիրողները սովորաբար Անիի պատմությունը շարադրել են առանց պարբերացման՝ «Անի» ընդհանուր վերնագրի տակ՝ հաճախ անտեսելով ժամանակը, սոցիալ-տնտեսական պայմանները, քաղաքական իրադարձությունները և պատմությունը բնութագրող այլ կողմեր։ Ելնելով երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական հարաբերությունների ընդհանուր դրությունից, ինչպես նաև քաղաքի անցած պատմական ուղու առանձնահատկություններից, փորձել ենք ժամանակագրական առումով Անիի պատմությունը մասնատել չորս հատվածի, որոնցից առաջինն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 961 թվականը, մինչև մայրաքաղաքի վերածվելը, երկրորդը՝ 961—1045 թվականները, երբ Անին Բագրատունիների Շիրակի թագավորության մայրաքաղաքն էր, երրորդ՝ 1045—1236 թվականները, Անիի պատմության հաջորդ շրջանը, որ յուրովի ազատ քաղաք էր և չորրորդ՝ անկման շրջանը՝ XIII—XIV դարեր։ Առաջին երկու պատմաշրջանների պատմությունը տրված է այս գրքում, իսկ մյուս երկուսը կտրվեն երկրորդ գրքում։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Անի

քաղաքի պատմության երկրորդ ու երրորդ պատմաշրջանները սոցիալ-տնտեսական ու հասարակական առումով իրարից էապես չեն տարբերվում, երկուսն էլ վերաբերում են զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանին, սակայն ֆունկցիոնալ տեսակետից իրարից զգալի չափով տարբերվում են՝ երկրորդ շրջանում (961—1045 թթ.) Անին մայրաքաղաք էր, իսկ երրորդում (1045—1236 թթ.)՝ սովորական իշխանանիստ։ Բացի դրանից, 1045—1236 թթ. Անիի հասարակության մեջ աստիճանաբար մեծ կշիռ ու նշանակություն էին ձեռք բերել, այսպես կոչված, մեծատունները, մշակութային և գաղափարախոսության բնագավառում շարունակվում էին այն նոր երևույթները, որոնք ձևավորվել էին տակավին նախորդ պատմաշրջանում։ Այդ բոլորից բացի, Անին XI—XIII դարերում մի տեսակ «ազատ» քաղաք էր՝ իր ներքին վարչակարգով ու տնտեսական դրությամբ զգալի չափով տարբերվելով նախորդ շրջանից։

Ինչպես ասվեց, գիրքն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 1045 թվականը։ Դրանում քննարկված են քաղաքի պատմության մեծ ու փոքր գրեթե բոլոր հարցերը՝ բնական պայմանների առանձնահատկությունները, Անին ըստ հնագույն աղբյուրների, Անին Կամսարականների և Բագրատունիների օրոք, մայրաքաղաք հռչակվելը, վարչական վիճակը, տնտեսությունը, քաղաքաշինությունը, կոմունալ պայմանները, քաղաքական պատմության կարևոր հարցերը, մշակույթը, բնակչությունն ու նրա հասարակական կյանքը և այլն։

Հեղինակը սիրով կընդունի գրքի մասին մասնագետների և ընթերցողների անաչառ դիտողությունները։

ЛИЧНАЯ БИБЛИОТЕКА АРУТЮНЯН Ж.А.

ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԵՎ ՆՐԱ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անի մայրաքաղաքն իր կանգուն ժամանակներում մտնում էր Այրարատյան աշխարհի Շիրակ գավառի մեջ՝ գրավելով երեք կողմից Ախուրյան և Անի (Ծաղկոցաձոր, Ալաջա) գետերի խոր ձորերով սահմանազատված եռանկյունաձև մի սարահարթ, որը հյուսիս-արևելքում միացած է Շիրակի ընդարձակ դաշտին և կազմում է նրա բնական շարունակությունը։ Այն գտնվում էր Շիրակի հարավային մասում, հյուսիսային լայնության 40°30′15″-ի և արևելյան երկայնության մոտ 43°30′-ի տակ[1]։

Նոր ժամանակներում՝ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից մինչև XX դարի 20-ական թվականների սկիզբը, Անիի ավերակները մտնում էին Ռուսաստանին անցած Կարսի մարզի Կարսի օկրուգի մեջ, իսկ դրանից հետո անցան Թուրքիային։ Անին Լենինականից գտնվում է մոտ 46 կմ, իսկ Անի երկաթուղային կայարանից՝ 7—7,5 կմ հեռավորության վրա՝ ՀՍՍՀ Անիի շրջանի Խարկով գյուղի դեմ-դիմաց, Ախուրյան գետի բարձրադիր աջ ափին։ Վաղեմի քաղաքի բուն տարածքի բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 1500 մետրի։

Նշված սահմանների միջև ամփոփված սարահարթը, որտեղ տեղադրված էր բուն քաղաքը, մեծ չէ. հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք այն ձգվում է մոտ մեկ կիլոմետր երկարությամբ, իսկ ամենալայն տեղում՝ արևելքից արևմուտք՝ 500—600 մետր։ Այդ սարահարթը քարքարոտ է և ալիքավորված։ Նրա հարավային ծայրում գտնվող բլուրն Ախուրյանի ձորից ունի ավելի քան 120 մ բարձրություն, դրա գագաթից երևում է ամբողջ սարահարթն իր խորդուբորդություններով։ Բլրի վրա հին ժամանակներում Կամսարականները կառուցել էին իրենց նստավայր բերդը, որը հետագայում վերածվեց միջնաբերդի։ Այդտեղ է կառուցվել Բագրատունիների արքայական պալատն իր օժանդակ շենքերով ու եկեղեցիներով։ Սարահարթի մյուս, շատ թե քիչ, նշանակալի բարձունքը գտնվում է նրա հարավ-արևմտյան ծայրին՝ Ախուրյան և Անի գետերի կազմած սրածայր ու խիստ ժայռոտ հրվանդանի վերջավորության վրա։ Այստեղ անհիշելի ժամանակներից կառուցված էր ամրոց, որը հետագայում ստացավ Կրպ-Կալա (Աղջղկաբերդ) անունը։ Սարահարթի հյուսիսային մասը՝ հիմքը, եթե այդպես կարելի է ասել, կտրտված է Գայլաձոր ու Իգաձոր փոքրիկ գետակների ու դրանց վտակների ոչ խոր ձորերով։

Անիի բնական համալնապատկերը լրացնում էին քառակուսաձև գեղեցկուհին՝ Արագածը (4096 մ), որ բարձրանում է դրա հարավ-արևելյան կողմում, և պատմական Առճո-Առիճ (այժմ՝ Ալաջա) լեռները (մինչև 2920 մ), որոնք ձգվում են վազեմի քաղաքի տեղադրավայրից հյուսիս-արևմուտք։

Անի քաղաքի գետնատակը բաղկացած է հիմնականում երկու գոյացություններից՝ ստորին շերտը կազմող տրախիտներից ու բազալտներից, որոնք արդյունք են Առճո-Առիճ ու Արագածի հրաբխային օջախների, և տուֆից, որն ընկած է դրանց վրա։ Առաջին շերտը բարձրանում է մինչև Ախուրյանի և Անի (Ալաջա) գետի ջրերի մակարդակը, որի վրա փռված է տուֆերի հաստ շերտը։ Անիի քարայրներն ուսումնասիրող Դ. Ա. Կիպշիձեն այստեղ արձանագրել է տարբեր որակ ու հզորություն ունեցող երեք շերտ, որոնցից ամենավերինը համարում է կարմիր գույնի, համեմատաբար բարակ տուֆի շերտը, միջինը՝ մեծ հաստություն ունեցող մուգ գույնի փափուկ շերտը, իսկ ստորինը՝ սև գույնի ամուր շերտը, նշելով, որ Անիի «քարտուն»-ների մեծագույն մասը միջին շերտում է[2]։

Անին գտնվում էր պարբերաբար կրկնվող երկրաշարժերի գոտում։ Մեր պատմագիրները՝ Արիստակես Լաստիվերտցին, Վարդան Վարդապետը, Մատթեոս Ուռհայեցին, հիշատակում են այստեղ տեղի ունեցած մի քանի ազետաբեր երկրաշարժեր, որոնք հսկայական վնասներ են հասցրել քաղաքին՝ պատճառ դառնալով նաև մարդկային բազմաթիվ զոհերի։ Անիում արձանագրված երկրաշարժերից կործանիչ բնույթ են ունեցել 1045 և 1131 թվականների երկրաշարժերը։ Ավանդույթի ուժով նույնիսկ Անիի կործա-

[1] *Փարիզի միջօրեականից հաշված Անին գտնվում է 41° 14′ արևելյան երկայնության տակ (տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 37)։ Քաղաքի ավերակների հատակագծում նրա աշխարհագրական կոորդինատների թվային արտահայտությունները մի փոքր այլ են (տե՛ս* **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, СПб, 1910, էջ 1):

[2] *Տե՛ս* **Кипшидзе Д. А.**, Пещеры Ани (материалы Анийской археологической кампании 1915 года), Ереван, 1972, էջ 14—16:

նումը կապում են այդ կարգի մի այլ երկրաշարժի հետ, որը, ըստ որոշ աղբյուրների, տեղի է ունեցել 1319 թվականին: Անիի ավերակները, քաղաքը պատմական ասպարեզից վերանալուց հետո էլ, կործանիչ երկրաշարժերի պատճառով ենթարկվել են նորանոր ավերումների:

Հասկանալի պատճառով Անիի տարածքում օդերևութաբանական դիտումներ չեն կատարվել, եթե նկատի չունենանք Հ. Գեղամյանցի 1879 թ. հուլիսի 16-ից մինչև 30-ը օրական երեք անգամ օդի բարեխառնության չափումները: Սակայն այդ մասնակի դիտումների արդյունքները նույնպես մեզ չեն հասել: Հեղինակը գրում է, որ իր դիտողությունների գրքույկը Ախուրյան գետն է ընկել նրա կամուրջներից մեկը դննելիս[3]:

Անիի և նրա շրջակայքի կլիմայական պայմաններն էապես չեն տարբերվում Շիրակի դաշտի հարավային կեսի կլիմայական և օդերևութաբանական պայմաններից: Շիրակի կլիման ընդհանուր առմամբ ցուրտ է: Այստեղ տարվա եղանակները խիստ սահմանագծված են: Ձմռանը երբեմն լինում են ուժեղ սառնամանիքներ: Օդի նվազագույն բարեխառնությունն իջնում է մինչև —41°, իսկ ամառը համեմատաբար շոգ է (օդի առավելագույն ջերմությունը՝ +36°): Ձմեռը Շիրակում երկարատև է, տեղում է առատ ձյուն: Եղանակներն ընդհանուր առմամբ պարզկա են: Դրանք հով և հաճելի են գարնանն ու աշնանը: Օդի տարեկան միջին բարեխառնությունը մոտ +6° է, հունվարինը՝ —10°, օգոստոսինը՝ մոտ +20°, իսկ մթնոլորտային տեղումները՝ ավելի քան 475 մմ: Օդը կաղդուրիչ ու առողջարար է: Անիի տարածքում (և ընդհանրապես ամբողջ Շիրակում) ամռանը կեսօրից հետո հյուսիսային կողմից փչում է չոր, բայց անփոշի ու ծաղիկների բուրմունքով հագեցած լեռնահովտային քամի («Կարախաչի քամի»), որը երբեմն հասնում է մեծ արագության: Ականատեսի վկայությամբ, այդ քամին Անիի ավերակներում գոռում-գոչում է՝ պատճառելով «տխրություն ու ահարեկություն»[4]:

Ինչպես ասվեց, Անիի եռանկյունաձև տարածքը երեք կողմերից շրջակայքից անջատում են Ախուրյանի և նրա աջակողմյան վտակ Անի գետակի անդնդախոր ձորերը, որոնք քաղաքի պաշտպանության համար ունեին հույժ կարևոր նշանակություն: Դրանց խիստ զառիվեր կողմերն անմատչելի էին արտաքին թշնամիների

[3] Հ. Գեղամյանց, Ախալցխայից մինչև Անի («Փորձ» ամսագիր, Տփխիս, 1880, № 8—9, էջ 107—108):

[4] Նույն տեղը, էջ 108:

համար: Ձորերի պաշտպանունակությունն ավելի էր ուժեղացվել արհեստական շինվածքներով:

Ախուրյանը կարելի է համարել Անիի մայր գետը: Վարդան Վարդապետն իր «Աշխարհացոյց»-ում ուղղակի գրում է, որ «Ախուրեան գետ Անու ջուրն է»[5]: Մյուս աղբյուրների հիշատակություններից պարզվում է, որ Ախուրյանը երբեք Անիի անունով չի կոչվել: Սակայն քաղաքի մոտով հոսող գետերից ամենամեծն էր և աշխարհագիրը մեծ սխալ չի գործել՝ դրա անունը կապելով հըզոր ակված մայրաքաղաքի անվան հետ:

Ախուրյան անունը գալիս է հնագույն ժամանակներից և առընչվել է այդ մասերում երբեմնի գոյություն ունեցած ուրարտական բերդաքաղաքի անվան հետ: Նոր ժամանակներում Թուրքերը կոչել են Արփաչայ (նաև՝ Արևմտյան Արփաչայ), նկատի ունենալով, որ այն սկիզբ է առնում Արփա (այժմ՝ Արփի) լճից: Աջ կողմից իր ամենախոշոր վտակ Կարսի գետն ընդունելուց հետո՝ Ախուրյանը շարունակում է հոսել դեպի հարավ և Արաքսին է միանում պատմական Բագարան քաղաքի տարածքից հարավ, ՀՍՍՀ այժմյան Հոկտեմբերյանի շրջանի երվանդաշատ գյուղից ոչ հեռու: Հոռոմոսի վանքի մոտից սկսած, Ախուրյանը հոսում է ոլորապտույտ, լայն ու խոր ձորով: Անիի տարածքում հոսում է արևելքից արևմուտք ուղղությամբ՝ 100—200 ոտնաչափ բարձրություն և խիստ զառիվեր կողեր ունեցող իր ձորով՝ հարավային մասից անմատույց դարձնելով վաղեմի մայրաքաղաքը: Այնպես որ Ախուրյան գետն ու նրա ձորն Անիի համար հիմնականում ունեցել են բնական պաշտպանական նշանակություն: Քաղաքի մակարդակից ցածր լինելու պատճառով, նրա ջրերը բնակիչները քիչ են օգտագործել: Ենթադրվում է, որ գաղտնի անցքերով Ախուրյանից խմելու ջուր են վերցրել քաղաքը թշնամու կողմից պաշարելու ժամանակ: Ախուրյանը ձկնառատ էր և ոմանք այդտեղ զբաղվում էին ձկնորսությամբ: Նրա ձորի զառիվեր կողերին նույնպես փորված էին մեծ ու փոքր բազմաթիվ «քարտուն»-ներ:

Անիի տարածքում, նրա հյուսիս-արևելյան մասում՝ աջ կողմից Ախուրյանին է միանում մի փոքրիկ գետակ, ավելի շուտ՝ հեղեղատ, որը վաղեմի քաղաքի այդ մասում առաջացրել է պաշտպանական նշանակություն ստացած բավականին խոր ձոր: Գետակն սկզբնաղբյուրներում հիշատակվում է Գլիձոր, Գելիձոր (կամ Գայլիձոր, Գայլեձոր) անունով: Այդ ձորի աջ պռնկից էր

[5] Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 15:

սկսվում Անիի Արտաքին (կամ Սմբատյան) պարիսպը՝ երկու շարքով ձգվելով դեպի արևմուտք: Այստեղ, ձորի ուղղությամբ կային մի քանի ջրաղացներ: Դրա ջրերը լայնորեն օգտագործվում էին նաև ոռոգման նպատակներով: Թ. Թորամանյանը ենթադրում է, որ Գլիձորի ջրերով էին լցնում նաև Սմբատյան պարսպի արտաքին կողմով ձգվող լայն ու խոր խրամը[6]:

Մայրաքաղաքի արևմտյան եզրով, հյուսիսից-հարավ հոսում է Ալաջա գետը (Ալաջա-չայ): Այն իրավամբ կարելի է կոչել նաև Ծաղկոցաձոր՝ նկատի ունենալով, որ հոսում է հաճախ հիշատակվող Ծաղկոցաձորով: Շատ հեղինակներ այն ուղղակի կոչում են Անիի գետ: Եվ թվում է, թե այս վերջին անվանումն ավելի ճիշտ է: Չէ՞ որ մայրաքաղաքի կյանքն իր զգալի մասով կապված էր այս փոքրիկ գետակի հովտի, նրա զառիվեր կողերին փորված հարյուրավոր «քարտուն»-ների հետ: Ծաղկոցաձորն Անիի արևմտյան մասի բնական ամրության գիծն էր և իր զառիթափ կողերով քաղաքի այդ մասը թշնամու համար դարձնում էր անմատույց: Այդ է պատճառը, որ Անիի արևմտյան մասում նույնպես համատարած պաշտպանական պարսպի կարիքը չի զգացվել: Անի-Ալաջա գետն սկիզբ է առնում Ալաջայի (Առճո—Առիճ) լանջերից (այժմյան թուրքական Անի գյուղի մոտակայքից) և մի քանի ձորակներ իր մեջ առնելով աջ կողմից Ախուրյանի մեջ է թափվում Աղջկաբերդ (Կըզկալա) կոչված ժայռոտ հրվանդանի ծայրում: Նրա մեջ թափվող գետակներից կարելի է հիշատակել Իգաձորը, որը մշտական հոսք չունի (հեղեղատ է) և Ալաջային է միանում քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում: Որոշ հեղինակներ Իգաձորն ուղղակի համարում են Ալաջայի ակունքը, թեպետև այն մի փոքրիկ ձորակ է, որն սկսվելով քաղաքի հյուսիսային մասից, հոսում է դեպի արևմուտք և միանում հյուսիսից-հարավ հոսող Ալաջային: Իգաձորի կողմերը նույնպես ժայռոտ են: Այստեղ նույնպես կային ժայռափոր «քարտուն»-ներ: Ծաղկոցաձորում կային բազմաթիվ բանջարանոցներ: Հավանաբար այն քաղաքի բնակչության հիմնական հանգստավայրն էր:

Նոր ժամանակներում Անիի երկու հիմնական գետերի՝ Ախուրյանի և Ալաջայի, ձորահովիտներով ճանապարհներ էին ձգվում: Կասկածից վեր է, որ դրանք գոյություն են ունեցել նաև միջնադարում, Անիի ծաղկման ժամանակներում և դրա համար էլ կա-

[6] Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Անի քաղաք, թե՛ ամրոց, Երևան, 1942, էջ 328:

րիք է զգացվել Ախուրյանի վրա կառուցել մի ամբողջ շարք կամուրջներ:

Ծաղկոցաձորից, Գայլաձորից և Իգաձորից բացի, Անիում հիշատակվում են նաև ուրիշ «ձոր»-եր՝ Բովաձոր, Կարմնջի (կամ Աբելանց) ձոր և այլն: Ըստ երևույթին դրանք բոլորն անջուր հեղեղատներ էին և ավելի շուտ թաղամասերի անուններ, որովհետև ներկայումս այդպիսի ձորակ-գետակների հետքեր անգամ չկան:

Բնական վիճակում գտնվող՝ նշված ջրերից բացի, Անիի բնակիչները խմելու համար օգտվում էին Առճո-Առիճ լեռների ստորոտից ջրմուղով բերված ջրից: Քաղաքի պատմության մեծ գիտակ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ խմելու համար բերված ջրի հետ անեցիները ոռոգման համար հետագայում օգտագործել են Գեղիկլեր կոչված գետակի ջրերի մի մասը, այն գետակի, որը հիմնականում Հոռոմոսի վանքի սեփականությունն էր և որը «մի ժամանակ» կոչվել է «Հոռոմոսի գետ»[7]:

Անի քաղաքի տարածքը լեռնային տափաստան է, Շիրակի արգավանդ դաշտի բաղկացուցիչ մասը, որը, ըստ ավանդության, իբրև հարուստ շրջան, տրված էր Հայկի սերնդին պատկանող շատակեր Շարային[8]: Հետագայում, դարեր շարունակ, ժողովրդի մեջ պահպանվել է այդ ավանդության վերապրուկը՝ Շարայի որկրամոլությունն ու Շիրակի հացառատությունը բնութագրող հետևյալ արտահայտությամբ. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»[9]:

Շիրակը սևահողային է, անտառազուրկ: Հին ժամանակներում բնակչությունն իբրև վառելիք օգտագործել է աթարը: Նախկին ժամանակներում նույնիսկ գետահովիտներում, որ նպաստավոր պայմաններ ունեն պտղարուծության համար, իբրև ընդհանուր երևույթ, այգեգործությամբ չէին զբաղվում, բացառյալ Ալաջայի՝ քաղաքին շփվող նեղ հովտից:

Անիի տարածքն ունի լեռնային տափաստաններին հատուկ բուսականություն: Նրան հյուսիսից հարող հարթավայրն ամառվա կեսին ամբողջովին թավշապատ է լինում, որն առանձին գեղեցկություն էր տալիս անտառազուրկ քաղաքին: Նոր ժամանակի ճանապարհորդներն ու Անիի ավերակներն ուսումնասիրողները նշում են, որ այստեղ աճում է այսպես կոչված վայրի կոտեմ (թուր-

[7] Թ. Թորամանյան, նշված աշխատությունը, էջ 328:

[8] Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 39—40:

[9] Նույն տեղը, էջ 40:

քերեն՝ չրթ-չրթ), որի վաճառքից ամայացած քաղաքի տերը տարեկան մի քանի հարյուր ռուբլու եկամուտ է ստանում։

Ներկայումս Անիի տարածքի բուսականությունը գրեթե ոչընչով չի տարբերվում շրջակայքի հարթավայրերի բուսականությունից։ Քաղաքը վերջնականապես ավերվելուց հետո դարեր են անցել և այդ ժամանակաընթացքում վերականգնվել է նրա բուսականությունն իր նախկին, բնական տեսակներով։

Անիի ավերակներում բնակություն են հաստատել սողուններ, դաշտամկներ, ոզնի, վայրի կատուներ, կաքավներ ու ագռավներ, ավերակները մի տեսակ խորհրդանշող բուեր և այլ կենդանիներ ու թռչուններ, որոնք և կազմում են նրա կենդանական միկրոաշխարհը։

Կարծում ենք, որ միջնադարյան քաղաքների համար բնական հումքերի մեջ ամենակարևորը բնական շինանյութերն էին՝ առաջին հերթին շինարարական քարը, ինչպես նաև բնափայտը, կավը, կիրը, ավազը և այլն, որոնց երկար տարածություններ փոխադրելը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Բնական շինանյութերի տեսակետից առանձնահատուկ պայմաններ ուներ Անին։ Այստեղ առկա են հզոր շերտեր կազմող և գործնականորեն նույնիսկ այժմ անսպառ համարվող բազմագույն ու բազմերանգ տուֆեր (դեղին, գորշ, կարմիր, սև, կարմրավուն, դեղնակարմրավուն և այլն), որոնց շինարարական բարձր հատկանիշները՝ դիմացկունությունը, գրեթե անհազորդիչ լինելը, դեղեցկությունը, շաղախների հետ կպչողականությունը, թեթև ու փափուկ լինելը հայտնի էին տակավին հնագույն ժամանակներից և մեծ առավելություն էին տալիս դրանց գործածության։ Անին հիմնականում կառուցված էր հենց իր շրջակայքի տուֆերից։ Նրա ամրակուռ պարիսպներն ու դրանց բարձրարհեստ բուրգերը, ինքնատիպ տաճարներն ու շքեղ պալատները, հյուրանոցները և ճարտարապետական մյուս կոթողները տուֆակերտ էին։ Նոր ժամանակների ճանապարհորդներից մեկը նույնիսկ մատնացույց է անում մայրաքաղաքի քարհանքերից մի քանիսը, որոնք նշմարելի էին XIX դ. երկրորդ կեսում։ Նա գրում է, որ կարմիր տուֆի հանքը եղել է Ախուրյանի աջ կողմում, Հոռոմոսի վանքի և քաղաքի միջև, ինչպես նաև քաղաքից մոտ 3—4 կմ արևմուտք, իսկ սև քարինը՝ Եռակատար (Ուչ-Քափալար) լեռան լանջերին։ Դրանցից բացի, քար է արդյունահանվել նաև բուն քաղաքի տարածքում[10]։

[10] Հ. Գեղամյանց, Ախալցխայից մինչև Անի, «Փորձ» հանդես, Տփխիս, 1880, № 8—9, էջ 105—106։

Անիի շրջանը հարուստ է նաև բազալտներով։ Դրանք հզոր շերտերով ընկած են տուֆերի տակ և մերկանում են Անին շրջապատող ձորերում, հատկապես Ախուրյանի նեղ հովտում։ Տուֆերի համեմատությամբ մայրաքաղաքի կառուցվածքներում բազալտը քիչ է օգտագործված, այն էլ գերազանցապես անմշակ կամ քիչ մշակված կոշտերի ձևով։

Անիի շինարարության համար անհրաժեշտ ավազը կարող էին վերցնել Ախուրյանի ձորից։ Բացառված չէ, որ այնտեղ պատերի շաղախի համար օգտագործված լինեն ընդամենը 7—8 կմ-ի վրա գտնվող սեմզան (ներկայիս Անիի շրջանի Անիպեմզա հանքավայրից)։

Այլ կարգի բնական նշանակալի հումքեր չի ունեցել Անին։

Անիի ավերակների բազմաթիվ նկարագրողներից մեկը գրում է, որ Ախուրյանի ձորում, Հոռոմոսի վանքից մինչև քաղաքի տարածքն ընկած հատվածում բխում է ծծմբային հանքային ջուր, որտեղ, տեղացիների ասելով, բնական վիճակում լոդանք են ընդունել հիվանդները[11]։

Այսպիսով, միջնադարյան Հայաստանի նշանավոր մայրաքաղաք Անին բնականից ուներ ամուր ու հարմար դիրք, առատ ջրեր, բնական լավորակ շինանյութեր, մերձակայքում՝ արդավանդ հարթություններ ու հանգստի շրջաններ։

[11] Պալասյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 69։

ԱՆԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 961 ԹՎԱԿԱՆԸ

1. ԱՆԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ VIII Դ. (Մ. Թ.) ՎԵՐՋԵՐԸ

Անի բնակավայրը գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից, սակայն դրա հիմնադրման մասին հավաստի որևէ տեղեկություն չի պահպանվել[1]։ Միայն հաստատապես կարելի է պնդել, որ այն իբրև ամրացված բնակավայր առաջացել է մեր թվականությունից հարյուրամյակներ առաջ. նրա պատմության սկիզբը հասնում է մինչև այն ժամանակները, երբ Հայկական լեռնաշխարհի ցեղերն ու ցեղախմբերը դեռևս ոչ բոլորն էին միավորված կազմավորվող հայ ժողովրդի մեջ։ Անիի վաղագույն պատմության իրեղեն վկայությունն այն բնդարձակ գերեզմանոցն է, որը գտնվում է քաղաքի ավերակներից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա, այժմյան թուրքական Անի գյուղի կալատեղերում։ Այդտեղ նշմարված իրերը սովորաբար վերագրում են VIII—VII դդ. (մ. թ. ա.), որոնք համարվում են ամենահին իրեղեն փաստերն Անիի տարածքում բնակավայր լինելու մասին[2]։

Անիի հնագույն ժամանակաշրջանի պատմությունը սերտորեն առնչվում է նրա անվան ծագման հետ, իսկ վերջինս քննարկման հարց է դարձել բազմաթիվ հեղինակների մոտ։

Անի անվան ծագման մասին գոյություն է ունեցել ժողովրդական մի ավանդություն։ Ըստ որի, քաղաքի հարավ-արևմտյան ծայրում, որտեղ իբր են խառնվում Ախուրյան գետն ու նրա աջակողմյան վտակ Ալաջան, Աղջկաբերդ կոչված անմատչելի լեռան վրա, ամրոցի հետ հեթանոսական շրջանում եղել է նաև Անահիտ աստվածուհու տաճարը, որը հետագայում վերածվել է եկեղեցու։ Իբր այդ տաճարի անունով էլ դրա մոտ առաջացած բնակավայրը (ավանը) կոչվել է Անի։ Հեթանոսական տաճարի համար տեղանքի

[1] **Н. Я. Марр**, Ани, столица древней Армении (историко-археологический набросок), СПб, 1898, էջ 197, **И. Орбели**, Развалины Ани, С.-Петербург, 1911, էջ 7։

[2] **И. Орбели**, Развалины Ани, էջ 7։



Անիի ընդհանուր համայնապատկերը

հարմար լինելը և ավանդության հնագույն ծագումն արձանագրելով՝ Ղ. Ալիշանը Անիի և Անահիտ աստվածուհու անունների կապը համարում է ընդունելի[3]։ Ղ. Ալիշանի այդ ենթադրությունը հավանական են համարել նաև մի քանի այլ հեղինակներ[4]։ Ոմանք էլ Ախուրյանի ափին գտնվող այս Անին, ինչպես նշում է Ղ. Ինճիճյանը, շփոթել են Բարձր Հայքի Դարանաղի գավառի Անի ամրոցի (հետագայում՝ Կամախ) հետ[5] և վերջինիս մասին Ագաթանգեղոսի ու Մովսես Խորենացու վկայությունները վերագրել մայրաքաղաք Անիին։ Հայագիտությանը վաղուց արդեն հայտնի է, որ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու հիշատակած Անի ամրոցը և այնտեղ գտնվող Արշակունիների գերեզմանոցն ու հեթանոսական տաճարը (որն ըստ Ագաթանգեղոսի կործանվեց Գրիգոր Լուսավորիչի ձեռքով[6], նույն անունը կրելուց բացի, ոչ մի կապ չունեն հետագայում մայրաքաղաք դարձած Անիի հետ։ Հայտնի է նաև, որ Դարանաղի գավառի Անիում գտնվում էր ոչ թե Անահիտի, այլ Արամազդի գլխավոր տաճարը։ Անահիտի տաճարը գտնվում էր դրա հարևան՝ Եկեղյաց գավառում, Երիզա (Երզնկա) ավանում։ Այնպես որ կասկածելի է ոչ միայն մայրաքաղաքի, այլև Դարանաղիի Անի ամրոցի անվան ծագումը Անահիտ դիցուհու անունից։ Անիի Միջնաբերդի հարավ-արևմտյան կողմում, Կրզկալա կոչված ժայռի վրա հեթանոսական տաճարի գոյությունը նույնպես չի հաստատվում այդտեղ պահպանված հնություններով։ Միայն հայտնի է, որ

[3] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37։

[4] *Տե՛ս, օրինակ,* Էփրիկյան Սուքիաս, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վիեննա, 1903—1905, էջ 180,* Վարազդատ Հարությունյան, *Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 58։*

[5] Ղուկաս Ինճիճյան, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 7։*

[6] Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909, էջ 409։*

այստեղ Գրիգոր Լուսավորիչի ժամանակներից ի վեր (IV դ. մ. թ.) գոյություն է ունեցել մի եկեղեցի, որը, ավերվելուց հետո, վերականգնվել է XIII դ.[7]:

Մեր այս ասածներն ու վկայակոչումները կապված են Անի տեղանվան և Անահիտ դիցուհու անվան առնչությունների հետ, իսկ դրանք բոլորը ելնում են վերը նշված ավանդությունից: Ակընհայտ է, որ Անին Անահիտ աստվածուհու անվան հետ կապող ավանդությունը ստեղծվել է ավելի ուշ՝ դարեր առաջ գոյություն ունեցած աշխարհագրական այդ անվան մեջ տեսնելով հին Հայաստանում այնքա՜ն տարածված դիցուհու անունը:

Անի անվան ծագումը լուսաբանելու գիտական առաջին լուրջ փորձը կատարել է Ն. Ադոնցը, հենվելով Ստրաբոնի մի կարևոր վկայության վրա: Ըստ այդ վկայության, Ատրպատականում բնակվող ժողովուրդների թվում էր նաև աենիա, աինիա, անիանի (Aivia, Aenia, Aniani) կոչված ժողովուրդը, որի մի մասը հնագույն ժամանակներում իր այդ բնօրրանից գաղթել էր Հայաստան և բնակություն հաստատել այստեղ[8]: Դրանց հիշատակը, ինչպես նկատում է Ն. Ադոնցը, Փայտակարան աշխարհում պահպանվել է Հանի[9] ձևով (որ գործածել է նաև պատմահայր Մովսես Խորենացին՝ Եփրատի ափին եղած Անի ամրոցի մասին խոսելիս)[10], իսկ Մեծ Հայքի կենտրոնական և արևմտյան մասում՝ Անի անուններով, որոնցից մեկը հետագայի մայրաքաղաքն էր, իսկ մյուսը՝ Անի ամրոցը (Կամախ)[11]: Ապա նա նշում է, որ նույն ձևով են ծագել Տուրուբերան աշխարհի Մարդաղի և Վասպուրականի Մարդաստան գավառանունները, որոնք կապված են դարձյալ հնագույն ժամանակներում Ատրպատականից Հայաստան գաղթած մարդերի (մեդացիների) հետ: Նա նույնիսկ ենթադրում է, որ այդ երկու ցեղերի՝ այնիանների ու մարդերի գաղթը Հայաստանի մի ծայրից դեպի մյուսը կատարվել է միևնույն պատճառներով[12]:

Ն. Ադոնցի՝ Անի անվան ծագման մասին արտահայտած այդ տեսակետը գրեթե առանց վերապահության ընդունել է Լեոն[13]:

---

[7] **Н. Я. Марр**, Ани, столица древней Армении, էջ 199:

[8] *Տե՛ս* **Страбон**, География в 17 томах, Москва, 1964, էջ 481 և 500:

[9] *Տե՛ս 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ը* (**Ս. Տ. Երեմյան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 109*):

[10] **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց, էջ 216, ծանոթագրություն*:

[11] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 56—57:

[12] *Նույն տեղը, էջ 57*:

[13] **Լեո**, *Հայոց պատմություն, հ. 1, Երևան, 1966, էջ 149*:

Անի անվան ծագմանն անդրադարձել է նաև Ն. Մառը, որը մեզ անհայտ պատճառներով խորհրդավոր լռություն է պահպանել Ն. Ադոնցի արտահայտած՝ ընդհանուր առմամբ ընդունելի վարկածի նկատմամբ, թեպետև վերջինս հրապարակվել է ավելի վաղ և նախորդել է Անիի վերաբերյալ Ն. Մառի աշխատություններին: Ն. Մառը նշելով, որ Անի անունը տարբեր հեղինակներ բացատրել են տարբեր կերպ, ինքն այն համարում է հաբեթական ծագման տերմին, որ, ըստ նրա, ունի հաբեթական «աստված» նշանակություն կամ հանի կոչված ցեղանվան ու կուռքի (տոտեմի) մնացուկ է[14]: Ինչպես տեսնում ենք, նրա ենթադրությունը էապես քիչ է տարբերվում Ն. Ադոնցի եզրակացություններից, որն ղզալի չափով իր հիմքում ունի պատմական-աշխարհագրական փաստեր:

Այլ աղբյուրների վկայություններից երևում է, որ Մեծ Հայքում, բացի նշված Փայտակարանի Հանի գավառից և Անի մայրաքաղաքից ու Անի ամրոցից, նույն անունով գոյություն են ունեցել նաև այլ վայրեր: Այսպես, Ի. Մարկվարտի կարծիքով Հայաստանի սահմաններում էր գտնվում (Ճորոխի ավազանում) Անակերտ վայրը, որի անունով էր կոչվում նաև Աճարայի լեռներից սկիզբ առնող Ճորոխի վտակներից մեկը[15], իսկ Կիլիկիայում Ջահան գետի միջին հովտում անհայտ ժամանակներից ի վեր գոյություն ուներ Անէ բերդը, որի տերը XII դ. վերջերին ոմն Սիմոնն էր, իսկ 1261 թ.՝ ոմն Գրիգորը[16]: Ի. Մարկվարտը ուղղակի կապ է տեսնում Անակերտ վայրի ու գետի անունների և այնիաներ ցեղանվան միջև, միաժամանակ զարմանքով նշելով, որ հույն հետազոտողներ Մեդիոսին և Կիրսիլոսին անհայտ են եղել Հայաստանի երկու Անիները (հետագայում մայրաքաղաքը և Եփրատի ափին գտնվող Անի ամրոցը)[17], որոնք նշված ցեղի համանունն էին: Թվում է, թե կարող է այնիաներ ցեղանվան հետ կապված լիներ նաև Անէ բերդի անունը, որը հավանաբար արտասանվել է նաև Անի ձևով, ինչպես Լոռի-ի բերդաքաղաքը երբեմն հանդիպում է Լոէ ձևով: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Մտրաբոնի հիշատակած այնիաներ ցեղի մի մասը Ատրպատականից գաղթելով Հայաստան, բնակություն է հաստատել շատ մեծ տարածքի վրա,

---

[14] **Н. Я. Марр**, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.—М., 1934, էջ 18:

[15] **Ի. Մարկվարտ**, *Պարսկահայք նահանգը («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1961, էջ 218)*:

[16] **Ղ. Ալիշան**, *Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 64 և 196*:

[17] **Ի. Մարկվարտ**, *Պարսկահայք նահանգը («Պատմա-բանասիրական հանդես», 1961, էջ 218)*:

կամ, ավելի շուտ, զանազան պատճառներով փոփոխել է իր բնակության շրջանները, սկսած Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքի դաշտավայրից (Փայտակարան աշխարհից) մինչև Շիրակ, Դարանաղի գավառ, Տայք և, նույնիսկ, Կիլիկիայի արևելյան ծայրագավառները ներառյալ:

Անին հին Հայաստանի այն հազվագյուտ անուններից է, որ շատ քիչ է ձևափոխվել օտար աղբյուրներում և դարեր շարունակ մնացել է անաղարտ: Հույն հեղինակներն այն սովորաբար կոչել են Անիոն (Aviov), ասորիները և արաբները՝ Անա, ռուսները, ֆրանսիացիները, պարսիկներն ու թուրքերը՝ Անի, թուրքական պատմագիր Էվլիյա Չելեբին՝ Ան, ճանապարհորդ Կլավիխոն (1403—1406)՝ Aumian, վրաց հեղինակ Վախուշտի Բագրատիոնը՝ Անիսի, XIX դ. ճանապարհորդ Մորից ֆոն Կոցեբուն՝ Աննա (Anna), մի այլ ճանապարհորդ՝ Աին (Ain) և այլն[18]: Տարբերակներ, որոնք հիմնականում պահպանում են հայահնչուն Անի անունը և առավելագույն դեպքում միայն հարմարեցված են տվյալ ժողովրդի լեզվի առանձնահատկություններին:

Սակայն որոշ հեղինակներ Անին հիշատակում են նաև այլ անուններով, կամ փորձեր են կատարված այդ անունը իմաստավորելու, իսկ Վարդանի «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունում Անին թյուրիմացաբար շփոթված է Կարսի հետ[19]: Վերջինիս սխալական լինելն ակնհայտ է և լրացուցիչ բացատրությունների կարիք չի զգում: Ավելի դժվար է մեկնաբանել Վարդան պատմիչի և նրան ընդօրինակած Մխիթար Այրիվանեցու այն հիշատակությունը, թե՝ «...քաղաքն Անի, որ կոչվի Խնամք» (Մ. Այրիվանեցու մոտ՝ «...ղԱնի քաղաք, որ Թարգմանի Խնամք»)[20]: Իմաստի տեսակետից միանգամայն պարզ է, որ Անին հայերեն խնամք բառի հետ ոչ մի առնչություն չունի և անընդունելի է պատմագիրների այդ բացատրությունը: Հավանական կարելի է համարել Ղ. Ինճիճյանի ենթադրությունը, ըստ որի խնամքը կամ

[18] *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Շիրակ, էջ 37,* Абих Г., Ани, статья акад. Г. В. Абиха (пер. с немецкого), СПб, 1881, *էջ 272,* Հովհ. Հակոբյան, *Ուշագրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 146, հ. Զ, Երևան, 1934, էջ 21 և 522,* պրոֆ. դր. Լ. Մելիք-սեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 40, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 4, էջ 120 և այլուր*

[19] *«Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի»,* քննական հրատարակություն Հայկ Պէրպէրեանի, *Բարիզ, 1960, էջ 17:*

[20] *Տե՛ս* Ղուկաս Ինճիճյան, *Տոորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 418,* Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 56:*

ածանցված է Անիի (Եփրատի ափին գտնվող ամրոցի) մյուս՝ Կամախ անունից, կամ վերջինս է ծագել Խնամքի աղճատումից[21]

Օտարազգի մի քանի հեղինակներ Անին հիշատակում են նաև Ախուրյան գետի թուրքական՝ Արփաչայ անունով[22], իսկ արաբական պատմագիր Ահմեդ բեն-Մուհամմեդ էլ-Ջաֆարին, խոսելով սելջուկների կողմից XI դ. 60-ական թվականներին Անիի պաշարման մասին՝ քաղաքը կոչում է Երկգետյա՝ երկու գետերի՝ Ախուրյանի և Ալաջայի (Անի) միջև գտնվելու պատճառով[23]:

Ահա Անի անվան այն տարբերակները, մյուս անունները և դրանց իմաստի բացատրությանը վերաբերող վկայություններն ու հետազոտողների եզրահանգումները, որոնք որոշ պարզություն են մտցնում այդ անվան ծագման և կրած փոփոխությունների՝ դեռևս ոչ լրիվ լուսաբանված հարցում:

Անառարկելի կարելի է համարել, որ Անիի տարածքում ամրացված բնակավայր է գոյություն ունեցել հնագույն ժամանակներից: Այդ են վկայում նրա անվան հնագույն ծագումը և վաղ ժամանակների նյութական մշակույթի այն մնացորդները, որոնք զանազան առիթներով նշմարվել են տարբեր ուսումնասիրողների կողմից: Դրանք բաղկացած են հնագույն կառուցվածքների մնացորդներից, դրամներից, զարդերից ու արձանիկներից, կերամիկական իրերից և հնագիտական այլ նյութերից, որոնց ամբողջությունը որոշ չափով ուրվագծում է Անիի նախակամսարական հնագույն ժամանակների պատմությունը:

Պատմահնագիտական առումով առանձնահատուկ նշանակություն ունեն քաղաքի տարածքում արձանագրված կիկլոպյան կառուցվածքների մնացորդները: Առաջինը, որ հատուկ ուշադրություն է դարձրել դրանց վրա, ակադեմիկոս Հ. Աբիխն է: Նա գրում է, որ քաղաքի հյուսիսային կողմում, այդ մասի պաշտպանական պարսպի ուղղությամբ նկատվում են բազալտե հսկայական քարերով, առանց շաղախի կատարված մի շարք կառուցվածքների մնացորդներ, որոնք իրենց բնույթով կիկլոպյան են և վերաբերում են հնագույն ժամանակներին[24]: Դրանք մի ամբողջ խումբ են կազմում և քառանկյունի կառուցվածքներ են՝ 5—6 ոտնաչափ բարձ-

[21] Ղուկաս Ինճիճեան, *Տոորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 418:*

[22] *Տե՛ս* Պալասյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի աւերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 75:*

[23] *Տե՛ս* Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, *էջ* 26:

[24] Абих Г., Ани, статья акад. Г. В. Абиха, *էջ* 290:

բությամբ և 4 ոտնաչափ լայնությամբ[25]: *Ականավոր գիտնականը կիկլոպյան կառուցվածքների այդ մնացորդները համարում է Անիի հնագույն ժամանակների ճարտարապետական կարևորագույն հուշարձանները, որոշ կապ տեսնելով դրանց և հնագույն հայկական կառուցվածքների միջև, հատկապես մատնացույց անելով Երվանդաշատ մայրաքաղաքի շինվածքները*[26]:

Անիի կիկլոպյան կառուցվածքների մնացորդների վերաբերյալ որոշակի նկարագրություն է կատարել նաև հայագետ-բանասեր Կոնիբերը, որը Դավիթ Անհաղթի աշխատություններն ուսումնասիրելու նպատակով 1888 թ. եղել է նաև Հայաստանում և ի թիվս էջմիածնի ու այլ վայրերի, այցելել է Անի[27]: *Նրա այդ ճանապարհորդության մասին, ինչպես վկայում է Ղ. Ալիշանը, անգլիական թերթերից մեկում եղել է հատուկ հաղորդում, ըստ որի բանասեր-ճանապարհորդը Անիի ավերակների տարածքում նկատել է 15-ի հասնող գոմմենների, որոնցից ոմանք տեղադրված են առանձին-առանձին, իսկ մյուսները երկու-երկու*[28]: *Լինչի ասելով կիկլոպյան սենյակի և զանգվածային պատի հետքեր են եղել Տիգրան Հոնենցի եկեղեցու մոտ, դրանից ավելի բարձրադիր տեղում*[29]:

Անիում եղած կիկլոպյան կառուցվածքների մասին Ն. Մառն արտահայտել է երկու իրարամերժ կարծիք: Մի դեպքում նա ժխտում է Անիում դրանց գոյությունը և նախորդ հեղինակների նկարագրած այդ տիպի կառուցվածքները հայտարարում լոկ հետագա շրջանի ձիթհանքեր, որոնցով այնքան հարուստ էր մեր միջնադարյան մայրաքաղաքը[30]: *Իսկ մի այլ տեղում, փաստերի ճնշման տակ, հարկադրված է խոստովանել, որ Վանի թագավորների ժամանակներում (թերևս դրանից էլ առաջ) շինարարության համար օգտագործված հսկա քարակոշտերը, որոնք իրար հետ են միացվել կրկաթե կամ բրոնզե գամերով, նույն նպատակներով օգտագործված են համեմատաբար նոր ժամանակներում և դրանց կարելի է հանդիպել Միջնաբերդի պաշտպանական պարսպի արևմտյան հատվածում, Կամսարականների աշտարակի վրա և նույնիսկ քաղաքի Սմբատյան պարսպի տարբեր հատվածներում*[31]: *Թե դրանք*

---

25 Նույն տեղը:

26 Նույն տեղը:

27 *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 114:*

28 *Տե՛ս* նույն տեղը:

29 Х. Ф. Б. Линч, Армения, т. I, Тифлис, 1910, *էջ* 481.

30 Н. Я. Марр, Ани, столица древней Армении, *էջ* 199:

31 Н. Я. Марр, Ани, *էջ 15: Տե՛ս նաև* Թորոս Թորամանյան, *Նյութեր հայ-*

նախապես որտե՞ղ են գտնվելիս եղել և կամ ի՞նչ տիպի կառուցվածքներում էին օգտագործված (ամրոցներ, տաճարներ, պաշտպանական պարիսպներ, աշտարակներ, դարպասներ և այլն), Ն. Մառը համարում է անորոշ:

Սկզբունքային բնույթ չունի այն հարցը, թե տարբեր հեղինակներ վերը նշված ավերակները կիկլոպյան կառուցվածքներ են համարել, թե ոչ, այլ այն, որ Անիում հնագույն ժամանակներում իրոք գոյություն են ունեցել շինություններ: Չենք կարող անվերապահորեն ընդունել Ն. Մառի նաև այն կարծիքը, թե դրանք եղել են համեմատաբար ուշ շրջանի ձիթհանքեր, որովհետև Հ. Աբիխի նկարագրած կառույցները (որոնք ունեցել են ընդամենը 5—6 ոտնաչափ բարձրություն և 4 ոտնաչափ լայնություն) ձիթհանքի համար անչափ փոքր էին և անհարմար: Նախաքրիստոնեական շրջանում, ինչպես նշում է Թորոս Թորամանյանը, հղկված որձաքարի հսկա քարակոշտերն օգտագործվում էին ոչ միայն սեպագիր արձանագրությունների, այլ նաև զանազան շինություններ կառուցելու համար, որպիսիք հայտնի են Արտաշատի տեղում, Դվինում, նույնիսկ Անիում[32]: *Այս տիպի կառուցվածքները հիմնականում տարածված էին անտիկ շրջանում (Երվանդաշատ, Դառնի և այլն):*

Անիում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և ճանապարհորդների դիտումները ցույց են տալիս, որ քաղաքի ամենահնագույն մասը, եթե այդպես կարելի է արտահայտվել, Աղջկաբերդի (Կըղկալա) ժայռային թերակղզին է, որ ընկած է Ախուրյան գետի և նրա աջակողմյան Անի կոչված վտակի միջև: Թ. Թորամանյանը նկատում է, որ հին ժամանակներում, «երբ ռազմագիտական անհրաժեշտ պահանջ էր սեպաձև ժայռերու վրա պաշտպանողական բերդեր կառուցանելը, անտարակույս, չէր կրող աչքէ վրիպած լինել այժմյան Կզկալա կոչված անմատչելի ժայռը՝ բերդի համար իր բոլոր հարմարություններով»[33]: *Եվ միանգամայն տրամաբանական ու ընդունելի է նրա այն ենթադրությունը, թե այստեղի հնագույն բերդը հավանաբար IV—V դդ. (մ. թ.) Անի ամրոցն էր, որի մասին պահպանվել են «հատուկտոր տեղեկություններ»*[34]: *Հնագույն այդ ամրոցում, ըստ բերնեբերան*

կական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, Երևան, 1942, էջ 331:

32 Թորոս Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 85:*

33 Նույն տեղը, *էջ 330:*

34 Նույն տեղը:

հաղորդվող ժողովրդական ավանդությունների, գոյություն է ունեցել նաև հեթանոսական տաճար, որը, իբր, կործանվել է Գրիգոր Լուսավորիչի ձեռքով և դրա տեղում կառուցվել քրիստոնեական եկեղեցի: Փաստերի բացակայության պատճառով դժվար է պատմական իրականություն համարել այդ ավանդությունը: Սակայն հայտնի է, որ Աղջկաբերդում հնուց գոյություն ուներ եկեղեցի: Դա հիմնովին վերանորոգել, կամ նրա մոտ, XIII դ. սկզբին, Զաքարե սպասալարը կառուցել է, ավերված վիճակում մեզ հասած, մի նոր եկեղեցի[35]:

Հնագիտական բավականին նյութեր են հայտնաբերվել Անի քաղաքի մոտ գտնվող Թուրքական Անի գյուղի մոտակայքի հնագույն ընդարձակ գերեզմանոցում: Հեթանոսական շրջանի հասարակական այդ գերեզմանոցը պեղել է Ն. Մառը: Հայտնաբերված նյութերով կազմել են Անիի թանգարանի փոքրիկ բաժիններից մեկը[36], որի ամբողջական բովանդակության մասին, սակայն, ընդարձակ տեղեկություններ չեն պահպանվել, համենայն դեպս այդպիսիք մեզ հայտնի չեն: Ն. Մառի ասելով, այդ գերեզմանոցը հրնագույն ժամանակների է և պատկանում է ուրարտական պետության սահմաններից դուրս գտնվող տեղական բնակչությանը: Նրա կարծիքով, այդտեղ հայտնաբերված գույքն իր հնությամբ ու բնույթով նման է «Անիի քարայրներում պեղված բրոնզե ապարանջանին»[37]:

Անիի վավերագրական պատմության առիթով կանդրադառնանք հարյուրավոր այն քարանձավ-տներին («քարտներին»), որոնք գտնվում էին մայրաքաղաքը արևելքից, հարավից և արևմուտքից սահմանագծող ձորերի զառիվեր կողերին: Այդ «քարտունների» կառուցման ժամանակը չի ճշտված: Սակայն կարելի է ենթադրել, որ դրանց մի մասը բնական քարայրներ են և ծառայել են իբրև բնակարաններ տակավին պատմության արշալույսին: Անիի քարանձավային սենյակներում հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է բրոնզե ապարանջան[38], որը հավանաբար վերաբերում է երկրորդ հազարամյակի վերջերին (մ. թ. ա.)[39]:

Բուն Անիից և նրա մոտակայքի ձորերից բացի, հնագույն ժամանակների կառուցվածքների հետքեր են նշմարվել նաև վա-

[35] Նույն տեղը:
[36] Նույն տեղը:
[37] Н. Я. Марр. Ани, էջ 15:
[38] Նույն տեղը:
[39] Նույն տեղը:

ղեմի մայրաքաղաքի շրջակայքում, որոնք հնագիտական-ճարտարապետական առումով մասնավորապես ուսումնասիրել է Թորոս Թորամանյանը: Հայ ճարտարապետության ականավոր պատմաբանը գրում է, որ կիկլոպյան ամրոցի բավական լավ պահպանված ավերակներ կան Անիից մոտ 5—6 կմ արևմուտք, քրդական Ղողլիջա (պատմական Բագնայր) գյուղից հարավ-արևելք, Ալաջա լեռան արևելյան գագաթներից մեկի վրա: Հնագույն այդ ամրոցը կառուցված է եղել հսկա որձաքարերով, առանց կրաշաղախի, և այն տեղացի քուրդ գյուղացիներն ուղղակի կոչել են Ղալա (բերդ):

Անիի հնագույն բնակավայր լինելու իրեղեն փաստերից մեկն էլ այն է, որ այստեղ հետագա շրջանի հարուստ կերամիկայի հետ, հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են նորքարեդարյան ժամանակի սև փայլով կերամիկական իրեր, որոնք Դվինում պեղած նույնատեսակ խեցեղենի հետ հիմք են տալիս որոշ զգուշությամբ կազմելու հնագույն ժամանակներում Հայաստանում տարածված կավագործության մասին ընդհանրապես:

Հայտնի է, որ հելլենիստական դարաշրջանում Հայաստանում տարածված են եղել Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե և ոսկի, իսկ հետագայում՝ հռոմեական, պարթևական, բյուզանդական դրամները[40]: Նույն այդ դարաշրջանի վերջերին, ինչպես եղրակացնում են դրամագետները, Հայաստանի տեղական առևտրում իշխողը եղել են հայկական ու պարթևական դրամները: Դրամագետ Խ. Ս. Մուշեղյանը Հայաստանի պետական թանգարանում պահպանվող դրամական գանձերի և հրապարակի վրա եղած ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա եկել է այն եզրակացության, որ I դարում (մ. թ. ա.) Հայաստանում մեծ մասամբ տարածված են եղել Տիգրան Բ-ի և մասամբ նրա որդու՝ Արտավազդ Բ-ի դրամները[41]: Իրոք որ լայն են Տիգրանի դրամների տարածման աշխարհագրական շրջանակները: Նրա արծաթե դրամներից հայտնաբերվել են Անիում, Վրացական ՍՍՀ Մարնեուլի և Ախալքալաքի շրջաններում, Քութայիսի մոտերքում, ՀՍՍՀ Էջմիածնի ու Շամշադինի շրջաններում և Ղարաբաղում[42]:

[40] Տե՛ս Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана, Баку, 1926, էջ 16, 17 և 18—21:

[41] Տե՛ս Հայաստանի պետական պատմական թանգարան, գույքահամար 8916, 17384, 17445, 17728, 18841 — 188844, Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, Баку, вып. I, 1926, № 25, вып. II, 1938, № 314. Խ. Ս. Մուշեղյան, Հայաստանի դրամական գանձերը, հ. 1, Երևան, 1973, էջ 54, «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1:

[42] Տե՛ս նույն տեղերը:

Սակայն Տիգրան Բ-ի արծաթե դրամի հայտնաբերումը Անիում եզակի դեպք չէ հնագույն այդ բնակավայրի համար։ Այստեղ հայտնաբերվել է նաև փյունիկյան Տյուրոս քաղաքի տետրադրախմա[43]։ Իսկ դրամական այդ հայտնաբերումները ցույց են տալիս, որ հելլենիստական դարաշրջանում Անին նշանակալի բնակավայր է եղել և հավանաբար նա որոշ առևտրատնտեսական կապեր ուներ ոչ միայն մայր երկրի տարբեր շրջանների, այլ նաև օտար երկրների հետ, թեպետև Աքեմենյանների տիրապետության, հելլենիստական և հայ Արշակունիների դարաշրջանից այստեղ որևէ հուշարձան չի պահպանվել[44]։

Այսպիսով, կիկլոպյան կառուցվածքների մնացորդներն ու հետքերը, Անիի մոտակայքի հին գերեզմաններից պեղած իրերը, «քարտուններից» հայտնաբերված բրոնզե ապարանջաններ, հելլենիստական ժամանակաշրջանի դրամների առկայությունը, նորքարեդարյան խեցեղենի հայտնաբերումները պեղումների ընթացքում, Աղջկաբերդի ու քաղաքի շրջակայքի հնություններ՝ այս բոլորը ցույց են տալիս, որ Անիի տեղում հնագույն ժամանակներից ի վեր գոյություն է ունեցել նշանակալից բնակավայր (թերևս ամբոց) և այն շեն է մնացել դարեր շարունակ։

Անիի հին շրջանի պատմության հարցերին անդրադարձած գրեթե բոլոր հեղինակները գտնում են, որ Արշակունյաց թագավորության ժամանակ այն Հայաստանի ամուր բերդերից մեկն էր։ Մեղ թվում է, որ այդ ժամանակներին վերաբերող պատմիչների վկայություններում Անին չհիշատակվելը պարզապես պետք է բացատրել պատեհ առիթների բացակայությամբ և նրանով, որ այդ ժամանակներում Կամսարականների նախարարանիստ բերդը Արշարունիք գավառի հայանի Արտագերսն էր, Անին դեռևս իշխանանիստ չէր և համեմատաբար քիչ էր առնչվում այդ կողմերում տեղի ունեցող քաղաքական դեպքերի հետ։ Նրա նշանակության որոշակի բարձրացման համար հավանաբար պայմաններ ստեղծվեցին միայն IV դարից, երբ Արշակ Երկրորդը անհնազանդ Կամսարականներից գրավելով նրանց աթոռանիստ Արտագերսը՝ այն դարձրեց Արշակունի թագավորների բերդ-գանձարաններից մեկը։ Պատմական դեպքերի ընթացքը հանգեցնում է այն եզրակացության, որ հետագայում իրենց նախարարական հեղինակությունն ու իրավունքները վերականգնած Կամսարականները, հավանաբար հենց

[43] Հայաստանի պետական պատմական թանգարան, գույքահամար 98, Ա. Մուշեղյան, Հայաստանի դրամական գանձերը, հ. 1, էջ 53։

[44] Н. Я. Марр, Ани, էջ 17—18։

նույն IV դարի վերջերից, իրենց իշխանական ոստանը գարձրին ամրությամբ հայտնի Անի ամրոցը, հետագայի հռչակված մայրաքաղաքը։

Շիրակ գավառը, որտեղ գտնվում էր Անին, Կամսարականներին էր տրված 321 թվականին՝ Տրդատ III-ի (287—332) կողմից։ Ավատատիրական այդ խոշոր գործարքի մասին մանրամասն ու արժանահավատ վկայություն ունի Մովսես Խորենացին։ «Յայնմ ժամու և ազգային նոցա Կամսար մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի. արքայի ընդունելով ի ջրոյն՝ տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի։ Այլ նա ոչ աւելի բաւեալ քան զեօթն աւուրս յետ մկրտութեանն, վախճանի։ Բայց թագաւորին Տրդատայ մխիթարեալ զգլուխ որդւոցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ ընա սերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց։ Յաւելու և այլ պարգևս-զքաղաքն Երուանդայ (Երվանդաշատը—Բ. Հ.) և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի. միայն զի ի մտաց նորա հեռացուցէ զյիշատակ բնիկ աշխարհին որ Պահլաւն կոչի, որպէս զի անվրդով զհաւատսն պահիցէ։ Իսկ Արշաւիր առաւել սիրեալ զգաւառն՝ յիւր անուն կոչէ Արշարունիս. քանզի յառաջ Երասխաձոր կոչէր»,—գրում է Խորենացին[45]։ Մովսես Խորենացու այս հիշատակությունը, որ տարբեր ձին[45]։ Մովսես Խորենացու այս հիշատակությունը, որ տարբեր առիթներով վկայակոչել են մի շարք հայագետ հեղինակներ[46], սպառիչ պատասխան է տալիս Տրդատ III-ի՝ Այրարատյան աշխարհի Շիրակ ու Արշարունիք գավառները և Դրասխանակերտ դաստակերտն ու երվանդաշատ քաղաքը Կամսարականներին պարգևելու հարցին։ Սակայն մեզ հետաքրքրում է այդ վկայության նաև մի ուրիշ կողմը։ Խորենացու այդ վկայությունից դժվար չէ կռահել, որ Կամսարի որդի Արշավիրի համար Երասխաձոր-Արշարունիքը Շիրակից ավելի սիրելի էր և առաջին Կամսարականների օրոք այստեղ էլ գտնվում էր նրանց ոստանը՝ Արտագերսը, որին ինչպես ասացինք, IV դարի վերջերին հավանաբար արդեն փոխարինել էր Անին։

Անին հայ պատմագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է V դարի կեսերին, կապված վարդանանց պատերազմի հետ։

[45] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 241։

[46] Տե՛ս, օրինակ, Հ. Գեղամյանց, Ախալցխայից մինչև Անի («Փորձ» միամսյա հանդես, Տփխիս, 1880, № 2, էջ 39), Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, Վենետիկ, 1923, էջ 6 և այլն։

ժամանակակից Եղիշե պատմագիրը գրում է, որ ապստամբները 450 կամ 451 թվականին զորավար Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ. «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին զրնակութիւնս նոցա: Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք, և առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս և զաւանս իւրեանց...»[47]:

Պատմիչի վկայությունից անմիջապես երևում է, որ Անին V դարում Հայաստանի հայտնի ամրոցներից մեկն էր և իր անառիկությամբ ոչնչով չէր զիջում մեծ հռչակ ունեցող Գառնիին ու Արտագերսին: Այնուհետև, պատմագրի խոսքերից դժվար չէ կռահել, որ մինչև ժողովրդական ազատագրական պատերազմը Անին նույնպես գտնվում էր պարսիկների ձեռքում և ազատագրվել է ապստամբների կողմից: Վերջապես այդ վկայությունից ակնհայտ է դառնում, որ Գառնիի ու Արտագերսի նման Անի բերդն ուներ իր ավանը, որ հավանաբար գտնվում էր պաշտպանական պարսպից դուրս: Եվ հավանական պետք է համարել այն ենթադրությունը, թե Անիի բուն բերդը հետագայում դարձավ Անի քաղաքի Միջնաբերդը[48]:

Անիի երկրորդ հիշատակությունը մեր պատմիչների կողմից դարձյալ կապված է սասանյան լծի դեմ ուղղված մեր ժողովրդի մղած ազատագրական պատերազմների հետ, որոնք տեղի էին ունենում 481—484 թվականներին Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Դեպքերին ժամանակակից Ղազար Փարպեցի պատմագիրը հաղորդում է, որ ապստամբության մասին դավաճան Վարազշապուհ Ամատունու մատնությունից հետո Հայաստանի պարսիկ մարզպան Ատրվշնասպը իր ջոկատով և դրան միացած դավաճանների խմբով դիմում է փախուստի՝ ժամանակավորապես հանգրվանելով Անի բերդի պարիսպների ետևում: Ահա պատմիչի խոսքերը. «Զոր իբրև լսէր մարզպանն Ատրվշնասպն և այլ պարսիկ մարդիկն և ջոկք ուրացողացն Հայոց՝ սրատաբեկեալք զարհուրէին և անքունք լինէին զմնացորդ մասն գիշերոյն յերկիւղէ: Հասեալք ի ժամ առաւօտուն՝ չուէին ի տեղւոյն և երթեալ բանակէին մօտ ի պարիսպ բերդին, որ անուանեալ կոչի Անի»[49]:

[47] Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 68:

[48] Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 489:

[49] Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 265:

Ապստամբները հետապնդում են մարզպանին և նրա ջոկատին: Վերջինիս, սակայն, հաջողվում է մի կերպ իրեն գցել Արտաշատ: Վահանի ջոկատներին այնուամենայնիվ հաջողվում է ավարի վերցնել փախուստի դիմած մարզպանի ամբողջ գումարն իր բեռներով, գերել դավաճանների պարագլուխ Գադիշո Խոռխոռունուն և հաջողությամբ Դվին հասնելուց հետո, պաշարել Արտաշատի բերդը: Մարզպանը և հպարտապետը մի կերպ կարողանում են Արտաշատից փախչել Ատրպատական[50]:

Եվ Կամսարականները շարունակում էին տիրություն անել Արշարունիքում ու Շիրակում, որտեղ (Շիրակում) մինչև V դարը հիշատակված միակ պատմական վայրը համարում են Անի բերդը: Դրա հետ միաժամանակ շատ ուսումնասիրողներ նշում են, որ Անի ամրոցն էլ Եղիշեից ու Ղազար Փարպեցուց մինչև VIII դարի վերջերը չի հիշատակվել որևէ հեղինակի կողմից: Սակայն, ինչքանով մեզ հայտնի է, այդ ժամանակաընթացքում Անին երեք անգամ հիշատակվել է: Դրանցից առաջինը կատարվել է VI դարի վերջերին, մի ճառընտիրում, որի գրիչները եղել են Սամվել ու Հովհաննես անուններով հոգևորականները, և այդ ձեռագիրը նրանք ընդօրինակել են 1419 թվականին Երուսաղեմում[51]: Ահա թե ինչ է ասված այդ վկայության մեջ. «Իսկ սուրբն Թաթուլ էր ծնընդեամբ ի Բղրուջ գեղջէ և անտի գնացեալ բնակեցաւ ի քաղաքագեաւղն Տեկոր, որ մերձ է յարեւելեան յԱնի, և պարապեալ ի վարժութիւնն դրոց, սուրբ վարդապետութեամբ լուսաւորեր բզբազումս և շնորհք տուան նմայ յԱստուծոյ որպէս սրբոյն Մեսրոպայ, զոր բովանդակ որպիսութիւնն գտանես ի պատմութեանն Կամսարականաց»[52]:

Հիշատակարանները կազմող Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ ընդգծված խոսքերը «պետք է նորամուծութիւն լինեին հետագայում, Տեկորի տեղը որոշելու համար»[53]: Անին V դարից արդեն հայտնի բերդ էր և դրանով կարող էին Տեկորի տեղը որոշել, և բացառված չէ, որ վկայության մեջ նորամուծվել է միայն մի բառ՝ «յարեւելեանսն»-ը: Այնուհետև, աղբյուրագիտության և Անիի ու Շիրակի, ինչպես և Կամսարականների պատմության համար խիստ կարևոր է VI դարի հեղինակի այն արտահայտությու-

[50] Նույն տեղը, էջ 265—266: Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37, Н. Я. Марр, Ани, էջ 19, Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 112 և այլուր:

[51] Տե՛ս Հովսեփյան Գարեգին, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 4:

[52] Նույն տեղը, էջ 4—5:

[53] Նույն տեղը, էջ 4:

նը, թե այդ ամրոցի մասին կարող ես գտնել «ի պատմութիւնն Կամսարականաց», մի աղբյուր, որ ինչպես նշում է Գ. Հովսեփյանը, գիտությանը տակավին անհայտ է[54]: Կարծում ենք նույն վկայությունը ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում և այլ առումներով: Դրանով նախ պարզվում է, որ մինչև VIII դարը Շիրակում Անիից բացի հիշատակվել է նաև Տեկորը (ինչպես և Մաղասբերդը, որի մասին քիչ հետո), և երկրորդ, վերջինս կրթության կենտրոններից էր ու բացառված չէ, որ հենց այդտեղ էլ իր սկզբնական կրթությունն ստացած լինի Անանիա Շիրակացին:

X դարի սկզբների պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցու, մասամբ և այլ հեղինակների երկերից հայտնի է, որ Աշոտ իշխանաց իշխանի (Աշոտ I Բագրատունի թագավորի) ժամանակ եղել է Շապուհ Բագրատունի անունով մի պատմագիր, որը գրել է իր ապրած ժամանակների պատմությունը, բայց որը սակայն մինչև օրս էլ մնացել է անհայտ: Էջմիածնում հայտնաբերված ձեռագիրը, որը 1921 թվականին հրատարակվել է իբրև Շապուհ Բագրատունու պատմություն[55], բոլորովին այլ բովանդակություն ունի և չի կարող պատկանել նրան, որի պատմության բնույթի ու բովանդակության մասին այնքան արժանահավատ տեղեկություններ է հաղորդել կաթողիկոս պատմագիր Դրասխանակերտցին[56]: Ուստի Էջմիածնում հրատարակված այդ երկի հեղինակը Մ. Աբեղյանի կողմից պայմանականորեն կոչված է Անանուն Զրուցագիր և հենց այս վերջինիս անանուն անունով էլ այդ աշխատանքը 1971 թ. վերահրատարակվել է Երևանում հետևյալ վերնագրով. «Պատմութիւն Անանուն Զրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի»: Անանուն հեղինակի այդ գործը կարելի է համարել զրույցների ժողովածու: Այստեղ տեղ են գտել Մահմեդի կողմից Բաղդադի կառուցման, Բյուզանդիայի Մորիկ կայսեր, Հացունյաց Խաչի, Սահակ կաթողիկոսի մասին եղած զրույցները և երկու այլ դրվագներ: Դրանցից մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում Մորիկի հետ կապված և «Պատմութիւն ս. Խաչին Հացունեաց...» զրույցները:

Միջնադարյան Հայաստանում տարածված է եղել այն զրույց-ավանդությունը, թե բյուզանդական Մորիկ կայսրը (582—603) ազգությամբ հայ է, Օշական գյուղից[57]: Այդ ավանդությունը Անանուն Զրուցագրի մոտ գրի է առնված հետևյալ ձևով.

«Զի յորժամ թագաւորեաց Մուրիկ ի Կոստանդինուպոլիս առաքեաց զմի ոմն աշխարհն իւր ի Հայք, ի քաղաքն Անի: Եւ նայ էր պարտիզպան: Եւ եկն այրն Հռոմայեցի և եգիտ զԴաւիդ զհայրն Մուրկայ: Եւ կոչէ զնայ առ ինքն ասէ ցնա. «կոչէ զքեզ որդին քո Մուրիկ, քանզի թագաւորեաց Հռոմոց»: Իբրև լուաւ Դավիթ, հայր Մուրկայ, ծիծաղեցաւ և ասէ. «ոչ կարեմ գալ. լաւ համարիմ զառակաւ պահէզս իմ քան զթագաւորութիւն Հռոմոց, քանզի ո՞վ տայր թագաւորեալ մարդոյ աւտարականին»[58]:

Թե ինչ պատմական հիմքի վրա է ստեղծվել այս զրույցը, մեզ համար տվյալ դեպքում առանձին հետաքրքրություն չի ներկայացնում: Կարևորն այն է, որ այստեղ նույնպես, վերը վկայակոչված հիշատակարանի նման, մեր կարծիքով Անին համարված է հայտնի վայր և բյուզանդական կայսեր ուղարկած հուլնը նախ գալիս է Անի, ապա գտնում նրա բանջարաբույծ հորը, վերջինիս հաղորդելով Մորիկի ցանկությունը:

Անին հիշատակված է նաև Հացունյաց ս. Խաչի մասին եղած զրույց-ավանդություններում, որը նույնպես վերաբերում է Մորիկ կայսեր ժամանակներին և դարձյալ կապված է վերջինիս հետ: Գրի առած այդ ավանդության մեջ ուղղակի ասված է այն մասին, թե Մորիկ կայսրը իբր Ախուրյանի ափին կառուցել է Անի բերդաքաղաքը:

Ն. Մառը, վկայակոչելով այդ հիշատակությունը, միանգամայն իրավացիորեն նշում է, որ Անի բերդը վաղուց գոյություն ուներ և չէր կարող հիմնադրված լինել կամ կառուցվել Մորիկի օրոք: Հարցն այստեղ կարող է վերաբերել նոր ամրությունների կառուցմանը կամ հների վերակառուցմանը: Սակայն պեղումների ընթացքում, ինչպես տեղեկացնում է ականատեսը, Անիում այդ շրջանի կառուցվածքների հետքեր չեն նկատվել, և հավանաբար խոսքը վերաբերում է Անիի մոտ գտնվող Մաղասբերդին, որի ավերակներում իրոք որ կան վաղ բյուզանդական շրջանի կառուցվածքների մնացորդներ[59]: Կարծում ենք, որ այստեղ զարմանալի ոչինչ չկա: Մաղասբերդը պաշտպանում էր Անիի մատուցք-

[54] Նույն տեղը, էջ 4, տողատակի ծանոթագրություն:

[55] «Պատմութիւն Տապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ եպիսկոպոս», Էջմիածին, 1921:

[56] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 463—464:

[57] Պատմում են նաև, որ Մորիկը Տարոնից էր, իսկ ոմանք էլ նրան համարում են Կապադովկիայի Արիսուս գյուղից (տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի», Երևան, 1971, էջ 49):

[58] Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1888, VII, էջ 399—400, Համմ. Н. Я. Марр. Ани, էջ 20:

[59] Н. Я. Марр. Ани, էջ 20:

ները։ Եվ վերջինս չնայած այդ ժամանակներում դեռևս քաղաք չէր, բայց վաղուց արդեն հռչակ ունեցող ամրոց էր և դրա մոտ կառուցված (կամ վերակառուցված) Մաղասբերդին վերաբերող շինարարական աշխատանքներն էլ կարող էին վերագրել Անիին։ Կարևորն այստեղ դարձյալ այն է, որ պատմական ու ավանդական դեպքերը պատմվում են Անիի հետ առնչված, որպես ավելի հայտնի և ճանաչված ամրոց ու մեծ ավան, որպես նախարարանիստ ոստան։

Անիի մասին կա նաև 554 թվականին վերաբերող հիշատակություն, որը վկայակոչված է XVIII դարի պատմագիր Ջաքարիայի կողմից։ Վերջինիս ասելով իբր այդ ձեռագիրն ընդօրինակել է Գրիգոր Մանկիկ Անեցին։ Ալիշանն այդ հիշատակությունը համարում է պարզապես անախրոնիզմ, նկատի ունենալով գլխավորապես այն, որ դրա մեջ Անին կոչված է մայրաքաղաք[60]։ Մակայն Ն. Մառն այստեղ ոչ մի անախրոնիզմ չի տեսնում։ Նրա կարծիքով տարօրինակ ոչինչ չկա, որ XVIII դարի հեղինակը Անին հիշատակելիս այն կոչել է մայրաքաղաք՝ ժամանակի կնիքը դնելով հնից եկող այդ հիշատակության վրա, եթե իհարկե նշված 554 թվականը հայկական տոմարով չի արտահայտված (այդ դեպքում վկայությունը կվերաբերվի 1105 թվականին՝ 554+551)[61]։ Բանասիրական կարգի անորոշությունները, սակայն, կասկածանք չեն առաջացնում, որ 554 թվականի հիշատակությունը պատմական առումով արժանահավատ է և հավանաբար Ջաքարիայի օգտագործած ձեռագիրը ոչ թե 1105 թվականին էր վերաբերում, այլ ավելի հին էր և ամենայն հավանականությամբ «մայրաքաղաք» բառը Անիին կցվել է հետագայում, թերևս հենց Ջաքարիայի կողմից։

Այսպիսով, Անիի մասին տեղեկությունները V դարի պատմագիրների (Եղիշե և Փարպեցի) հիշատակություններով չեն սպառվում։ Լինելով ամուր բերդ և Կամսարականների աթոռանիստը, այն VI—VII դդ. հիշատակվել է մի քանի աղբյուրներում, որոնք հիմնականում ավանդական են և որոշակի չափով լրացված ու փոփոխված են հետագա դարերում՝ գրիչների ու հեղինակների կողմից։

Ինչպես ասվեց, Կամսարականները Տրդատ III-ի ժամանակներից սեր էին դարձել Արշարունիքին և Շիրակի մեծագույն մասին։ Վերջինիս մյուս հատվածը պատկանում էր Սահառունիներին և Դիմաքսյաններին։

Կամսարականներն իրենց փառքի գագաթնակետին են հասնում VII դարում։ Ս. Կոզյանի կարծիքով նրանց այդ բարձրացման մեջ որոշակի դեր է խաղացել նաև Բյուզանդիայի՝ նրանց նկատմամբ ունեցած բարյացակամ քաղաքականությունը[62]։ Դրա հետ միաժամանակ, ինչպես նկատում է նա, բարձր իշխանության հասնելու համար լռելյայն մի մրցակցություն է սկզբնավորվում Կամսարականների ու Բագրատունիների միջև[63]։ Կարելի է ենթադրել, որ այդ հակամարտությունը Հայաստանի իշխանական այս երկու հայտնի տների միջև սրվում էր երկու խոշոր պետությունների՝ Կամսարականներին ընդհանուր առմամբ օգնող Բյուզանդիայի և Բագրատունիներին ավելի մոտ գտնվող Արաբական խալիֆայության վարած քաղաքականության հետևանքով։ Եվ ահա արաբական լծի դեմ բռնկված 773—775 թվականների ազատագրական պատերազմների ակտիվ մասնակիցների շարքում գրտնվող Կամսարականները մի շարք այլ նախարարությունների հետ խալիֆայությունից ստանում են մահացու հարված և հարկադրված են լինում իրենց կալվածքներն ամբողջությամբ վաճառել հզորացող Բագրատունիներին (որոնք նույնպես մասնակցել էին ապստամբությանը, բայց պահպանեցին իրենց դիրքերը՝) և շուտով հեռանալ Հայաստանի պատմական ասպարեզից ընդհանրապես[64], տեղափոխվելով Բյուզանդիա[65]։

Գրավոր աղբյուրների և պատմական հիմք ունեցող ավանդությունների ու զրույցների շնորհիվ հնարավոր եղավ ուրվագծել Անիի՝ Կամսարականների իշխանության ժամանակաշրջանի պատմությունը։ Սակայն Անին անցյալի այն քաղաքներից է, որը բավական մանրամասնությամբ ուսումնասիրված է հնագիտական առումով և այստեղ հայտնաբերված կառուցվածքների ավերակները ու նյութական մշակույթի մնացորդները գալիս են մասամբ լրացնելու նրա այդ շրջանի պատմության թերի կողմերը։ Դիմենք հնագիտական նյութերի օգնությանը։

Կամսարականների շրջանի (IV—VIII դդ.) կառուցվածքների հետքեր ու ավերակներ բուն քաղաքում հիմնականում նշմարվում

---

[60] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37, ծանոթագրություն 3։

[61] Н. Я. Марр, Ани, էջ 19։

[62] Կոզյան Ս., Կամսարականք է դարու («Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1926, № 1—2, էջ 57)։

[63] Նույն տեղը, էջ 58։

[64] Նույն տեղը, էջ 58—59։

[65] Ակո, երկերի ժողովածու, հ. 2, էջ 489։

են երկու տեղ՝ Աղջկաբերդում և Միջնաբերդում, իսկ քաղաքից դուրս, նրա շրջակայքում՝ Մաղասբերդում, Մրենում, Երերույքում, Տեկորում: Ժամանակագրական տեսակետից, ինչպես նկատում է Լեոն, Կամսարականների շինարարական արվեստի զարգացումն սկսվել է Հարավից՝ Արշարունիքից և աստիճանաբար տարածվել է դեպի հյուսիս[66], մոտավորապես Մրեն—Տեկոր—Ալաման—Երերույք—Անի ուղղությամբ: Ականավոր պատմաբանը Կամսարականների շինարարական բարձր մշակույթի հյուսիսային ծայրակետը համարում է Անին: Իսկ Անիում միանգամայն տրամաբանական էր, որ նրանց շինարարական մշակույթի հանգրվանները եղել են Աղջկաբերդն ու Միջնաբերդը: Առաջինը իբրև բերդ հավանաբար նախորդել է Միջնաբերդին և եղել է Կամսարականների առաջին հանգրվանը, իսկ երկրորդը՝ նրանց հիմնական բերդն էր, որ Բագրատունիների շրջանում, երբ դրա մոտ ծավալվեց քաղաքը, մնաց իբրև Միջնաբերդ: Դիպուկ է ասված, թե «Անին Հայաստանի բազմադարյան քաղաքակրթության բունին վրա աճած և ուռճացած մի պտղալից ոստ, չէր կարող ետ մնալ ընդհանուր մայր երկրին մեջ զարգացող արվեստներու հոսանքեն, նույնիսկ Կամսարականների օրով, որոնց գեղարվեստասիրության և փափկաճաշակ մեծագործության աննման կոթողներն են Տեկորի և Մրենի հոյակապ տաճարները, 5—7-րդ դարերեն մեզ հասած»[67]:

Հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Կամսարականների շրջանի Անիի հնագույն կառուցվածքները կատարվել են Աղջկաբերդում, որը բնականից ավելի ամուր դիրք ունի և հավանաբար հենց այդ պատճառով էլ սկզբից ևեթ գրավել է նրանց ուշադրությունը: Աղքատիկ են Կամսարականների շրջանից այստեղ պահպանված հնությունները, և հստակ տեղեկությունների բացակայության պատճառով դրանց ժամանակը որոշվում է միայն հավանական ենթադրությամբ: Դրանք երկու կարգի են՝ պաշտպանական կառուցվածքների հետքեր և պաշտամունքային: Անկասկած է, որ Կամսարականների շրջանում Աղջկաբերդի շուրջը, այն տեղերում, որտեղ համեմատաբար դյուրին է եղել մուտք գործել ամրոց, պատել են պարսպով, որոնց մնացորդներն Ախուրյանի և Ծաղկոցաձորերի կողմերում պահպանվել են մինչև մեր օրերը: Դրանք ունեցել են մի քանի բառակուսի բուրգեր[68], որոնց մնացորդները ևս նշմարվում են պարսպի տարբեր հատվածներում: Աղջկաբերդի հին պարսպի որոշ հատվածներ հավանաբար անփոփոխ են թողել և ներառել են հետագայում, ըստ երևույթին XIII դ. սկզբներին, կառուցված պաշտպանական նոր պարսպի համակարգում, իսկ վերջինս, որ շարված է դեղնագույն քարից և անհամեմատ ավելի լավ է պահպանվել, գտնվում է բլրի բարձունքի վրա, ինչպես հաղորդում է Թ. Թորամանյանը[69]:

[66] Նույն տեղը:

[67] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, Անի քաղաք, թե՞ ամրոց, Երևան, 1942, էջ 329:

[68] Նույնը, Աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 183:




Աղջկաբերդի (Կրգկալա) ընդհանուր ճամայնապատկերը

Աղջկաբերդում տարբեր ժամանակներում կառուցվել են մի քանի եկեղեցիներ: Դրանցից երկուսը, որ կառուցվել են հետագայում, XIX դ. 40-ական թվականներին տակավին կանգուն էին: XIII դարի սկզբներին այստեղ, Զաքարե իշխանի կառուցած (կամ վերանորոգած) եկեղեցու մոտ, ինչպես ասված է նրա շինարարական արձանագրության մեջ, գոյություն է ունեցել մի ավելի հին եկեղեցի: Այս վերջինի կառուցումը պատմական հիմք ունեցող ավանդության ուժով վերագրում են Գրիգոր Լուսավորիչին, որը, այդ նույն ավանդության ասելով, քանդել է տվել Աղջկաբերդի հեթանոսական տաճարը և դրա տեղում կառուցել տվել մի եկեղեցի: Հետագայում այդ եկեղեցին կոչվել են նրա անունով՝ ս. Գրի-

[69] Նույն տեղը:

գոր Լուսավորիչ[70]։ Սակայն մեզ հայտնի չեն նույնիսկ դրա հետքերը։

Հավանաբար Կամսարականների ժամանակ էր կառուցված նաև այն ժայռակերտ, աստիճանավոր, կամարակապ ծածկ ունեցող ճանապարհը, որը Միջնաբերդը կապում էր Աղջկաբերդի հետ։ Պահպանված ավանդությունը (ըստ որի Աղջկաբերդում բնակվող ինչ-որ թագավորի դուստրը այդ ճանապարհով էր գալիս քաղաք ու վերադառնում[71]) ցույց է տալիս դրա հնությունը, թեպետև կարող է առարկության տեղիք տալ։



Կամսարականների կառուցած պաշտպանական պարիսպը

Եթե Աղջկաբերդը կարելի է համարել Կամսարականների առաջին հանդրվանը Անիում, ապա Միջնաբերդն արդեն ամենայն հավանականությամբ նրանց իշխանանիստ ամրոցն էր, որի մոտ տարածվում էր համանուն ավանը։ Իբրև այդպիսին այն բլուրը, որի վրա գտնվում էր Միջնաբերդը, դեռևս Կամսարականների իշխանության ժամանակներում, շրջափակված է եղել բուրգավոր պարսպով։ Կամսարականների կառուցած պաշտպանական պարիսպը, անշուշտ, չէր կարող բավարարել Բագրատունի թագավորներին, մասամբ այն պատճառով, որ ըստ երևույթին այն որոշ հատվածներում ավերվել էր և մասամբ էլ այն պատճառով, որ սովորական իշխանական ամրոցն արքայանիստ քաղաքի Միջնաբերդ դարձնելու համար անհրաժեշտ էին հնից եկող շինություննե-

[70] Տե՛ս Լեո, Անի, Երևան, 1963, էջ 177—179։

[71] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 330։

րի ու պաշտպանական կառուցվածքների վերակառուցումներ ու նոր, արքայավայել կառուցումներ։

Իրոք, հնագիտական հետազոտությունները ցույց են տվել, որ Բագրատունիների շրջանում Անիի Միջնաբերդը վերջնականապես ձևավորվել է Կամսարականների հին ամրոցի հիման վրա։ Միջնաբերդի կառուցողները չէին կարող հաշվի չնստել հնից եկող պաշտպանական կառուցվածքների, հատկապես Կամսարականների ամրակուռ պարիսպների համակարգի հետ։ Եվ նրանք այս վերջինի որոշ հատվածներ ու տարրեր թողել են նույնությամբ՝ դրանք ներառնելով մի ընդհանուր պաշտպանական համալիրի մեջ։

Կամսարականների ամրոցի պաշտպանական պարիսպները հայտնաբերվել են Ն. Մառի ղեկավարությամբ կատարված 1907—1908 թվականների պեղումների ընթացքում[72]։ Դրանք կազմում էին Միջնաբերդի Բագրատունյան պարսպի մի հատվածը, որ ձգվում էր թագավորական պալատի հյուսիս-արևմտյան դահլիճից դեպի արևմուտք, դեպի Ծաղկոցաձորի կիրճը, ունենալով իր աշտարակները[73]։ Կամսարականների պարիսպներն իրենց կառուցվածքով որոշակիորեն տարբերվում են հետագայի պաշտպանական պարիսպներից։ Դրանք շարված են որձաքարի խոշոր կոշտերից, որոնք մինչ այդ մեկ անգամ արդեն օգտագործվել էին հնագույն ժամանակներում[74]։

Կամսարականների ամրոցի պարսպի մյուս հատվածները և ընդհանրապես պաշտպանական համալիրի մեծագույն մասը հայտնի պատճառներով չեն պահպանվել։ Դրանք մասամբ ավերվել են և մասամբ էլ քանդվել նորը կառուցելու համար։ Եվ իրոք, նշված թվականներին «քարե աստիճաններ ունեցող դարպասի» պեղման ժամանակ պարզվել է, որ Շադադյանների ժամանակ կառուցած այդ դարպասը պատրաստել են Կամսարականների ժամանակաշրջանի (VII դ.) աշտարակավոր պատի մեջ[75]։

Սակայն տեղում օգտագործելուց բացի, Կամսարականների շրջանի (և դրանից առաջ) շինարարության վրա օգտագործված քարերը, նոր կառուցումներ կատարելու նպատակով, մեծ քանակությամբ տարել են քաղաքի տարբեր մասերը։ Ն. Մառը նշում է, որ դրանց կարելի է հանդիպել նույնիսկ Սմբատյան պարսպի վրա[76]։ Այդ պատճառով էլ հնագիտական պեղումներով միանգա-

[72] Н. Я. Марр, Ани, էջ 49։

[73] Նույն տեղը։

[74] Նույն տեղը։

[75] Նույն տեղը։

[76] Նույն տեղը, էջ 15։

մայն անհնար է մանրամասնորեն պարզել, թե Կամսարականներն ապագա քաղաքի ո՞ր մասերում ի՞նչ են կառուցել։ Միայն ընդհանուր ձևով կարելի է ասել, որ Բագրատունյաց մայրաքաղաքում նախկինում օգտագործված շինանյութի այդքան լայն տարածումը ցույց է տալիս, որ Կամսարականների շրջանում Անի ամրոցում կատարվել էին պաշտպանական-շինարարական հսկայական աշխատանքներ, որոնց թվում և մեզ համար անհետ կորած իշխանական ապարանքներ։



Միջնաբերդի ընդհանուր համայնապատկերը

Միջնաբերդի՝ Կամսարականների շրջանի քաղաքացիական շինության մյուս կառուցվածքը Թ. Թորամանյանը ենթադրությամբ համարում է Անիի արքայական պալատի ջրամբարը։ Նա, ելնելով դրա կառուցման համար օգտագործված աղյուսի տեսակից ու ընդհանրապես Հայաստանում աղյուսի գործածության առանձնահատկություններից, եզրակացնում է, որ այդ ջրամբարի կառուցումը «կարելի է մինչև 7-րդ դարը տանել»[77]։ Ջրամբար կառուցելու համար մեզ թվում է, թե աղյուսն օգտագործել են հնագույնից մինչև նոր ժամանակները ներառյալ։ Սակայն այդ ամենևին չի կարող ականավոր ճարտարապետ-պատմաբանի կռահումը ժխտելու կամ կասկածանքի ենթարկելու պատճառ դառնալ։ Շատ տրամաբանա-

[77] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմության, աշխ. ժող., էջ 142։

կան է, որ աղբյուրազուրկ Անի ամրոցում ամենայն հավանականությամբ հին ժամանակներից ի վեր խմելու ջրի հարցը լուծել են ջրավազան պատրաստելով։ Բացառված չէ նաև, որ Կամսարականների իշխանության շրջանում այստեղ նույնիսկ կարող էր կառուցված լինել ջրմուղ։

Հատուկ ուշադրության է արժանի պալատական եկեղեցին, որը համարվում է Անիի միջնաբերդի ամենահին եկեղեցական կառույցը։ Հ. Աբիխը հարմար է համարում այն կոչել «Անիի թանկագին քարը»[78]։ Այս եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ ճարտարապետների շրջանում երկար ժամանակ տեղի է ունեցել բանավեճ։ Բանն այն է, որ եկեղեցու պատի վրա պահպանվել է դրա կառուցմանը նվիրված արձանագրություն, որը Ն. Մառը վերծանել է հետևյալ կերպ.

«Ես Աբրահամ վարդապետս շինեցի զեկեղեցիս զայս ի թուականութեան ՀԱ»[79]։

Նույն կերպ է ընթերցել այդ արձանագրությունը և Բասմաջյանը, միայն «Աբրահամ վարդապետ»-ի փոխարեն նրա մոտ վերծանված է «Աբիսողոմ վարդապետ»[80]։ Նույն ժամանակների և հետագայի բոլոր հեղինակները հետևել են այդ վերծանումներին։

Ն. Մառը և նրան հետևելով մի քանի ուրիշ հեղինակներ արձանագրության վերջին երկու տառը՝ «ՀԱ»-ն համարում են եկեղեցու կառուցման թվականը հայկական տոմարով արտահայտած, որը համապատասխանաբար կլինի 622 թվականը (71+551)։ Ընդ որում Ն. Մառը հայտարարում է, որ «առկա եղած քարերի վրա արձանագրությունը շարունակվելու ոչ մի հետք չկա» և այն ոչ միայն հաղորդում է պալատական եկեղեցու կառուցման թվականի ու կառուցողի մասին, այլև մեսրոպյան տառերով մեզ հայտնի ամենահին վիմագիր արձանագրությունն է հայոց պատմության մեջ[81]։


Չնայած բանավեճին, ընդհանուր առմամբ Ն. Մառի այդ վերծանումը պալատական եկեղեցու կառուցման թվականի վերաբերյալ մոտ տասը տարի մնաց իբրև ամենահավանականը։ Սակայն հետագայում հայտնաբերվեց նույն անձնավորության շինարարական ևս մի արձանագրություն, որի հիման վրա Հ. Ա. Օրբելին

[78] **Г. Абих**, Ани, статья акад. Г. В. Абиха, СПб, 1881, էջ 287։

[79] **Н. Марр**, Раскопки в Ани в 1904 г., СПб, 1906, էջ 19։

[80] Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, Վենետիկ, 1923, էջ 7։

[81] **Н. Марр**, Раскопки в Ани в 1904 г., էջ 19 և նույնի Дворцовая церковь». «Памятники армянского искусства Ани», вып. I, Петроград, 1915, էջ 10.



Պալատական եկեղեցին հյուսիս-արևմտյան կողմից

ցույց տվեց, որ խնդրո առարկա արձանագրության հեղինակը ոչ թե Աբրահամն է, այլ Աբիսողոմը և երկրորդ՝ արձանագրությունը վերաբերում է ոչ թե 622 թվականին, այլ հավանաբար X—XI դարերին, և արձանագրության վերջին «ՀԱ» տառերը պարզապես «Հայոց»-ի առաջին տառերն են:

Սակայն դրանով Հ. Օրբելին ամենևին չի ժխտում պալատական եկեղեցին VII դարի գործ համարելը: Նա ևս գտնում է, որ այդ եկեղեցին կառուցվել է Կամսարականների օրոք, իր ոճով միանգամայն համապատասխանում է VII դարին և Աբիսողոմը դրա X—XI դարերի վերականգնողներից կամ վերանորոգողներից մեկն է միայն, իսկ այդպիսի վերակառուցումներ ու վերափոխություններ եկեղեցու վրա մի քանիսն են նկատվում[82]:

Հնագետ-պատմաբաններից բացի, պալատական եկեղեցին VII դարի են համարում նաև ճարտարապետները՝ Թ. Թորամանյանը, Ն. Մ. Տոկարսկին, Ա. Լ. Յակոբսոնը և ուրիշներ[83]: Միայն բացառություն է կազմում Գ. Ն. Զուբինովը (հետագայում՝ Զուբինիշվիլի), որը չկարողանալով ժխտել պալատական եկեղեցու վրա նախաբագրատունյան շրջանի ճարտարապետության առանձնահատկությունների բացահայտ առկայությունը, այնուամենայնիվ, դրա կառուցումը վերագրում է IX (և նույնիսկ X) դարին, քիչ տեղյակ մարդու համարձակությամբ (նա այդ ժամանակ դեռ շատ երիտասարդ էր) հայտարարելով, թե «հայկական արվեստի համար ընդհանրապես հատուկ է մեծ կայունությունը, անշարժությունը»[84]: Փաստ չունենալով իր ասածը հիմնավորելու, երիտասարդ Գ. Ն. Զուբինովը նշում է այն հանգամանքը, թե Բագրատունիների ժամանակ Անիում կառուցված մի քանի եկեղեցիներ (Գագկաշեն, Առաքելոց) մեխանիկական կրկնություն են նախորդ ժամանակներում ստեղծված եկեղեցիների[85]: Սակայն սա բոլորովին այլ հարց է, և պալատական եկեղեցին ինքը կարող էր օրինակ լինել հետագայում կառուցվող եկեղեցիների համար: Գ. Ն. Զուբինով-Զուբինիշվիլու հիմքից ու փաստից զուրկ այդ հայտարարությունը-տեսակետը, սակայն, զարմանք չի պատճառում: Նա հետագայում էլ, իր ամբողջ գիտական գործունեության ընթացքում, մի շարք հարցերում հայկական ճարտարապետության մասին արտահայտել է անընդունելի տեսակետներ: Զարմանալին այն է, որ «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» հեղինակները որդեգրել են այդ անընդունելի և հնացած «տեսությունը» և պալատական եկեղեցին համարել են «IX—X դարերի սահմանագծին»[86] կառուցված շինություն, պարզապես հիմք ընդունելով ոչ թե նրա նախնական ճարտարապետական դիմանկարը, այլ հետագայի՝ IX—X դարերում կատարված վերափոխություններն ու վերակառուցումները, որոնք իրենց բնույթով տարբերվում են VII դարի ճարտարապետական ձևերից: Բայց չէ՞ որ հեղինակներին քաջ հայտնի են Ն. Մառի այն խոսքերը, թե այն «աչքի է զարնում իր հնությամբ», թե «շենքի հնությունը ավելի կարուկ է» երևում նրա քարից, այդ քարի մշակումից, շարվածքից, ընդհանուր կառուցվածքից, անգամ «դեկորատիվ մոտիվների բնույթից ու տեղաբաշխումից», «ամբողջ աշխատանքից»[87]:

Իսկ Թորոս Թորամանյանը պալատական եկեղեցու կառուց-

[82] **И. А. Орбели**, Шесть армянских надписей VII—X вв. Две надписи Дворцовой церкви в Ани. «Христианский восток», т. III, Петроград, 1915, էջ 82—83 և 87:

[83] **Թ. Թորամանյան**, *Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 49*, **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 183—184, **А. Л. Якобсон**, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 61—62.

[84] «Отчет Анийского музея древностей за 1916 год», составил **Г. Н. Чубинов**, Петроград, 1918, էջ 20:

[85] Նույն տեղը:

[86] *«Ակնարկ հայ ճարտ. պատմ.», Երևան, 1964, էջ 195:*

[87] **Н. Я. Марр**, Описание Дворцовой церкви, էջ 2:

ման սկզբնական ժամանակը նույնիսկ համարում է V դարը[88]: Նա գրում է. «Թեև արտաքուստ մասամբ նորոգված, գուցե և վրայի համարն ալ, սակայն ներքին պատերը 5-րդ և 7-րդ դարու արվեստագիտական դրոշմը կկրե իր սյուներով, խոյակներով և այլ զանազան դուռ արևելյան քանդակներով»[89]:

Ն. Մառը պալատական եկեղեցին համարում է եկեղեցական հնագույն կառուցվածքը Անիում[90], որը մի շարք վերանորոգումներից, վերակառուցումներից ու վերականգնումներից հետո XX դարի սկզբներն էր հասել կիսաքանդ վիճակում: Տարբեր ժամանակներում կատարված այդ վերափոխությունները բավական մանրամասնությամբ ու ճշգրտությամբ նկարագրված են պեղումների ընթացքում:

Պալատական եկեղեցին գտնվում էր արքունական պալատի մոտ, նրա հյուսիս-արևելյան կողմում: Չափսերով փոքր, բայց գեղեցիկ ու անպաճույճ այս եկեղեցին (երկարությունը ներսից մոտ 12 մ) պատկանում է միանավ բազիլիկների ընտանիքին: Թաղաձև ծածկը հանգչում է լավ մշակված երկու զույգ որմնամույթերի վրա: Եկեղեցու տարբեր մասերը կրում են տարբեր ժամանակներում կատարված վերափոխությունների կնիքը: Նույնիսկ եղել են ժամանակներ, երբ այս եկեղեցին հարմարեցրել են ուրիշ կարիքների («անգամ բաղնիքի») համար, նշում է Ն. Մառը: Եկեղեցին ամենայն հավանականությամբ կոչվել է ս. Սարգիս[91]: Եկեղեցու հյուսիսային կողմում, դրան կից հետագայում կառուցել են միահարկ գավիթ:

Ընդհանուր ճարտարապետական կառուցվածքից բացի, եկեղեցին հատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև իր կիսաշրջանաձև խորշերով, սյունիկներով, խոյակներով, զարդաքանդակներով: Նախշաքանդակներով առանձնապես հարուստ էր հարավային որմնախորշը: Այստեղ նույնիսկ քանդակված է եղել զոհողության տեսարան, որի թեման վերցված է եղել հին կտակարանից[92]: Սակայն Անիի մյուս բաղմաթիվ ճարտարապետական կառուցվածքների նման, պալատական եկեղեցին ևս ենթարկվել է կողոպտման: Նրա քարերի մի մասը ուշ ժամանակներում մոտիկ գյուղերի բնակիչները տարել են և օգտագործել իրենց խրճիթների

88 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 49:

89 Նույն տեղը:

90 Н. Я. Марр, Ани, էջ 49:

91 Նույնը Описание Дворцовой церкви, էջ 8 և 38:

92 Նույն տեղը:

կառուցման համար: Ն. Մառը նույնիսկ կոնկրետ նշում է 1,42 մ երկարությամբ, 0,72 մ բարձրությամբ և 0,25 մ հաստությամբ բարձրաքանդակ ունեցող մի քար, որը մինչև 1850 թվականը եղել է իր տեղում, եկեղեցու հյուսիսային դռան շրջանակի վրա և ժամանակին արտանկարվել է Կեստերնի կողմից[93], բայց հետագայում, նույն դարի վերջերին այն իր տեղից հանել, գողացել ու տարել են: Այդ բարձրաքանդակի վրա պատկերված էին երկու հեծյալներ, որոնք հարձակվում են մի վիշապի և մի ուրիշ, Կեստերնի նկարից վատ նշմարվող՝ արարածի վրա[94]:

Տեղում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Աղջկաբերդից ու Միջնաբերդից բացի, Կամսարականների ժամանակներում շինարարական աշխատանքներ են կատարվել նաև Միջնաբերդից՝ Կամսարականների բուն Անի ամրոցից, դուրս, դրան կից եղած ավանում՝ հետագա բուն քաղաքում:

Այդպիսի մի կառուցվածք է նկարագրում Հ. Օրբելին: Այն մի փոքր շենք է և հայտնաբերվել է 1908 թ. պեղումների ընթացքում: Շենքի հիմքը կազմում են չորս հաստ ու համեմատաբար ոչ բարձր պիլոններ (նեցուկներ, սյուներ), որոնք շարված են զորշադույն քարերից: Պիլոնների միջև շարված են եղել չորս պատեր և ունեցել են կամարակապ ծածկ: Շենքն այդ դրությամբ հավանաբար եղել է մատուռ, և թե սկզբնական շրջանում ինչ նպատակների է ծառայել, մնում է առեղծված: 1909 թվականի պեղումների ընթացքում ուսումնասիրված «պիլոններով շենքը» Ն. Մառի ենթադրությամբ սկզբնական շրջանում կապված է եղել մաղդեական կրոնի հետ և գոյություն է ունեցել տակավին Սասանյանների տիրապետության շրջանում: Նրա կարծիքով բացառված չէ նաև, որ մինչև եկեղեցու կամ մատուռի վերածվելը՝ այն կարող էր եղած լինել դամբարան կամ «ոսկորների տուն» («աստոդան»[95]): Հ. Օրբելին այդ շենքը, չհաշված Կամսարականների բերդի պալատական պարիսպն ու պալատի եկեղեցին, համարում է Անիի կառուցվածքներից ամենահինը[96]: Այդ նույն շենքի կառուցման ժամանակի մասին իր կարծիքն առանց կասկածանքի է արտահայտել նաև Թ. Թորամանյանը: Նա գրում է, որ «Սմբատաշեն պարսպից ոչ շատ հեռու Ն. Մառի պեղումներով հայտնաբերված

93 Նույն տեղը, էջ 72:

94 Նույնը, Ани, էջ 50:

95 Տե՛ս И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, С.-Петербург, 1910, էջ 29—30, Н. Я. Марр, Ани, էջ 53:

96 И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 29—30:

«Չորս հատ պիլոնները 10-րդ դարեն շատ առաջ շինված լինելու ամեն հավանական կներկայացնեն»[97]: Իսկ այդ շենքի նոր քաղաքում գտնվելը ցույց է տալիս, որ Կամսարականների շրջանում Անիի բնակավայրը չէր սահմանափակվում միայն բուն ամրոցով, այլ ամրոցին կից կար նաև բնակելի թաղ կամ ավան:

1909 թվականի պեղումների ժամանակ, որ հիմնականում կատարվում էին Առաքելոց եկեղեցու շրջանում և նպատակ ունեին այն մաքրել դրսից ու ներսից, հայտնաբերվել է մի այլ, փոքրիկ եկեղեցի, որը նոան զարդանախշեր ունենալու պատճառով, հետագայում հայտնի է դարձել «Նոերով եկեղեցի» անունով: Այն ենթադրաբար նույնպես վերագրում են VII—VIII դարերին[98], նկատի ունենալով նրա ճարտարապետական ընդհանուր ոճավորումը և, առանձնապես, նոան զարդաքանդակները, որ հիշեցնում են VII դարի եկեղեցիները, հատկապես Զվարթնոցի հայտնի զարդաքանդակները: Անհամոզիչ է Գ. Ն. Զուբինովի այն կարծիքը, թե եկեղեցին կառուցվել է XI դարի սկզբին[99], որովհետև նա VII—VIII դարերի եկեղեցիները հիշեցնող (ընդ որում VIII դարում ընդհանրապես նշանավոր որևէ կառուցում չի կատարվել՝ արարական ծանր լծի պատճառով) ճարտարապետական-կառուցողական ընդհանուր դրույթները մի կողմը թողած, փորձել է միայն մասնակի զարդանախշերի օգնությամբ «հիմնավորել»[100] եկեղեցին «երիտասարդացնելու» իր միտումը:

Սակայն միաժամանակ արդարությունը պահանջում է ասել, որ այդ եկեղեցին բավական մանրամասնությամբ նկարագրել է հենց Գ. Ն. Զուբինովը: Նա գրում է, որ չափսերով փոքր է այդ եկեղեցին, կառուցված է երկարավուն հատակագիծ ունեցող եկեղեցիների օրինակով, պատերը շարված են լավ տաշած, կարմրավուն խոշոր սալաքարերով և կանգնած է կրկնակի ցոկոլի (գետնախարիսխ) վրա, ունի միայն մեկ դուռ՝ հարավից, ունի Առաքելոց եկեղեցու կիսասյուները հիշեցնող սյուներ և գտնվում է վերջինի մոտ, որա մակարդակից 3—4 մետր բարձր: Եկեղեցին մեզ հասել էր ավերված վիճակում[101]:

Ահա այն բոլոր հուշարձաններն ու հնություններն, որոնք գալիս են Կամսարականների ժամանակներից և հետագայում մեծ

[97] Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատ., աշխ. ժող., էջ 323:*

[98] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, *էջ* 27:

[99] *Տե՛ս* «Отчет Аннйского музея древности за 1916 год», *էջ* 23—24:

[100] *Նույն տեղը, էջ 24—28:*

[101] *Նույն տեղը, էջ 23—25:*

չարք անգամ վերաշինվելուց, վերանորոգումներից ու վերականգնումներից հետո XIX դարի սկզբին էին հասել՝ վերը նկարագրված վիճակում:

Բացառված չէ նաև, որ Անիի «քարտուն»-ների մի մասը նույնպես բնակելի է եղել Կամսարականների ժամանակներից: Անին այդ ժամանակներում փաստորեն գտնվում էր պատմական Հայոնի վայրերի՝ Երերույքի, Տեկորի և Մաղասբերդի հանգույցում: Նշված հուշարձաններից ու հին կառույցների մնացորդներից բացի V—VIII դարերին վերաբերող նյութական մշակույթի նմուշներ վաղեմի քաղաքից գրեթե իսպառ բացակայում են: Լիովին կարելի է համաձայնել Ա. Ս. Շելկովնիկովի այն եզրակացությանը, թե «Անին շուշտ, բացառված չէ անհիական... իրերի մեջ այդ շրջանի պատահիկների գոյության հնարավորությունը, բայց այդպիսի փաստի հավանականությունը հավասար է գրեթե զրոյի...»[102]: Եվ դրանում զարմանալու ոչինչ չկա: Անին V—VIII դարերում առաջին հերթին ամրոց էր և ոչ թե արհեստագործության կենտրոն: Հետևապես այդ ժամանակներից տարբեր վիճակում մեզ հասած նյութական մշակույթի մնացորդները և հուշարձանները, պաշտամունքայինից բացի, իրենց բնույթով կապված են եղել պաշտպանության, Անի ամրոցի պաշտպանական համալիրի հետ (պարիսպներ, բուրգեր, ջրամբար և այլն):

Ժամանակագրական առումով Կամսարականների իշխանության ամենաբարձր զարգացման շրջանի հետ է կապված Հայաստանում մի ամբողջ շարք գիտությունների (աստղագիտություն, մաթեմատիկա, աշխարհագրություն և այլն) հիմնադիր Անանիա Շիրակացու գործունեությունը: Նրա Շիրակացի անունը, ինչպես միահամուռ գրում են ականավոր շատ հայագետներ[103], կապված է կամ Շիրակ գավառի, կամ էլ՝ Շիրակավան ավանի հետ: Վերջինս հետագայում ավելի հայտնի դարձավ Երազգավորս անունով և առաջին Բագրատունիների օրոք որոշ ժամանակ դարձել էր մայրաքաղաք: VII դարի վերջերին ապրած այդ նշանավոր հեղինակը, որի կենսագրությունը հայտնի է բավական մանրամասնությամբ, կոչվել է նաև Անանիա Աննեցի: Նա կամ ծնվել է Անիում, կամ երկար ապրել է այնտեղ և իր գործունեությամբ կապված է եղել Կամսարականների իշխանանիստ ամրոցի հետ: Հավանական են

[102] **Б. А. Шелковников,** Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957, *էջ* 9:

[103] *Տե՛ս* Ղ. Ինճիճյան, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 418,* Ղ. Ալիշան, *Շիրակ, էջ 37 և 96,* **Н. Я. Марр,** Ани, *էջ 20,* Նոյն, *Երկերի ժողովածու, հ. 2, էջ 341 և այլ տեղերում:*

համարում նաև, որ նա կարող էր ծագումով լինել կամ Անիից կամ թե դրա մոտակայքում գտնվող որևէ վանքից[104]: Մեզ հավանական է թվում, որ նա կարող էր որոշ ժամանակ ապրած լինել նաև Տեկորում, որտեղ, ինչպես տեսանք, այդ ժամանակներում դպրոց գոյություն ուներ: Այդտեղ նա կարող էր կամ սովորել, կամ հանդես գալ ուսուցչի պաշտոնով:

Ահա այն բոլորը, ինչ կարելի էր ասել Կամսարականների ժամանակաշրջանի Անիի վերաբերյալ:

2. ԱՆԻՆ VIII ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 961 ԹՎԱԿԱՆԸ

VIII դարի վերջերի դեպքերը ճակատագրական նշանակություն ունեցան Հայաստանի մի շարք նախարարական-իշխանական տների համար: Դրանց թվումն էին նաև արաբական լծի դեմ բռնկված 773—775 թթ. ապստամբության առանդուն մասնակիցներ Մամիկոնյաններն ու Կամսարականները: Այդ ապստամբությունն սկսվել էր Կումայրիում տեղի ունեցած դեպքերով, և դրա գլխավոր դեկավարը Մուշեղ Մամիկոնյանն էր, որը զոհվեց 775 թ. Բագրևանդի ճակատամարտում: Դրանից հետո Մամիկոնյանները Հայաստանում, համենայն դեպս՝ Արևելյան Հայաստանում, դադարեցին էական դեր խաղալուց: Ապստամբությունը ճնշելու ժամանակ մեծ հարված ստացան նաև Կամսարականները, որոնք պատմական ասպարեզից հեռացան դրանից ընդամենը տասը տարի անց, Կամսարական նշանավոր տան հայտնի ներկայացուցիչ Ներսեհ Կամսարականի մահվամբ, որը տեղի ունեցավ 785 թվականին, խաղարաց արշավանքին դիմագրավելու ժամանակ[105]:

Պատմական տեսակետից թերի ու սխալ կլիներ միայն Մուշեղի ու Ներսեհի մահվամբ բացատրել Մամիկոնյան ու Կամսարական տների քաղաքական ասպարեզից հեռանալը: Խալիֆայության գահի վրա հաստատված Աբասյանները VIII դարի վերջին քառորդից վարում էին հայ իշխանական տները վերացնելու, Հայաստանում արաբա-պարսկական ցեղեր բնակեցնելու (որոնք ենթադրվում էր, որ տեղում պետք է դառնային արաբական բռնակալների հենարանը), ժողովրդական-ազատագրական ապստամբություններն արյան մեջ խեղդելու և կողոպտիչ հարկային քաղա-

[104] Н. Я. Марр, Ани, էջ 20:

[105] Տե՛ս Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 51—52:

քականություն, որի զոհերը դարձան նաև բարեկամական կապերով իրար հետ կապված Մամիկոնյաններն ու Կամսարականները:

Սակայն հենց այդ դաժան դարում բոլորովին այլ ընթացք ստացավ Հայաստանի չորս խոշոր նախարարական-իշխանական տների՝ Բագրատունիների, Արծրունիների, Սյունեցիների և Ռշտունիքի ու Արցախի Առանշահիկների պատմությունը: Դրանք ոչ միայն կարողացան պահպանել իրենց տիրապետության ենթակա տարածքներն ու իշխանական իրավունքները, այլև անշափ հզորանալով, երկրում ձեռք բերեցին քաղաքական մեծ կշիռ: Առանձնապես նշելի են Բագրատունիների հաջողությունները: Նրանց ձեռներեց ու հեռատես ներկայացուցիչները՝ Վասակ Բագրատունին, նրա որդի Աշոտը, որին արաբները նշանակել էին իշխանաց իշխան, վերջինիս որդի Սմբատը, Սմբատի որդի Աշոտ Մսակերը, ապա՝ Սմբատ Խոստովանողը և սրա որդի Աշոտ իշխանաց իշխանը, որ հետագայում թագադրվեց Աշոտ I անունով[106], օգտվելով խալիֆայության ու Բյուզանդիայի, Հայաստանում արաբա-պարսկական տարբեր ցեղերի և երկրի բնիկ իշխանությունների միջև եղած հակասություններից, քայլ առ քայլ ընդարձակեցին իրենց իշխանության սահմանները, և IX դարի վերջերին արդեն տեր էին դարձել Հայաստանի մեծ մասին (Տայք, Տարոն, Այրարատյան աշխարհի մեծ մասը, Սպեր և այլն): Արշարունիքում, Շիրակում և դրանց հարակից գավառներում նրանց իշխող ճյուղն էլ հենց հիմնադիրը եղավ Բագրատունիների թագավորական հարստությանը:

Այժմ տեսնենք պատմական ինչպիսի ուղի է անցել Անին այդ դեպքերի հետ առնչված՝ մինչև մայրաքաղաք դառնալը:

Առաջին դեպքերը, որոնցով սկսվում է Անիի պատմությունը Բագրատունյաց շրջանը, Արշարունիքի և Շիրակի գնումն էր քաղաքական ասպարեզից հեռացող Կամսարականներից: Դա տեղի ունեցավ հետևյալ պայմաններում. 775 թվականին զոհված Սմբատ սպարապետի որդի Աշոտը, որին արաբները տվել էին Մսակեր մականունը, ձգտում է իր տոհմի հենակետը դարձնել Երկրի խորքում գտնվող Շիրակ և Արշարունիք գավառները: Նրանց նախկին տոհմական ոստան Դարոյնք ամրոցը (այժմյան Հին Բայազետի տեղում), ինչպես նշում է Ն. Ադոնցը, միշտ վտանգի էր ենթակա՝ մի կողմից հարևան Հարք ու Ապահունիք գավառներում հաստատ-

[106] Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 135: Հմմտ. Միհաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 14—15:

ված արաբական կայսիկ և ութմանիկ բավական ռազմատենչ ցեղերի, իսկ մյուս կողմից՝ Դվինի արաբական ոստիկանի բազմամարդ կայազորի կողմից[107]: Բագրատունիների համար հուսալի իշխանանիստ չէր կարող լինել նաև Ճորոխի հովտում՝ Սպեր գավառում գտնվող Կամախ (Կալմախ) ամրոցը[108], որտեղ քաշվելապաստանել էին Աշոտ Մսակերն ու իր եղբայր Շապուհը՝ Հայաստանում 773—775 թթ. ազատագրական շարժումներն արաբների կողմից հրով ու սրով ճնշելուց հետո:

Բագրատունի եղբայրները, սակայն, այդտեղ երկար չեն մնում: Բուն երկրում ապստամբության ճնշումից հետո ստեղծված իրադրությունը նպաստավոր էր նրա կենտրոնական գավառներում, հատկապես Արշարունիքում ու Շիրակում ամրանալու համար: Դրանց տերերը՝ Կամսարականները, խալիֆայությունից մահացու հարված էին ստացել և այլևս ի վիճակի չէին իրենց վաղեմի դիրքերը վերականգնել: Կար և մի ուրիշ անոյան: Արաբական զորավար-ֆեոդալ Ջահապը, որը գրավել էր Արշարունիքի մի մասը և, օգտվելով նրանից, որ ինքն ամուսնացել էր այդ գավառում տիրություն անող Մամիկոնյաններից մեկի՝ 775 թվականի զոհ Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, հավակնում էր գրավել գավառի նաև մյուս մասն ու նրա շրջակայքի տարածքները[109]: Սակայն ինչպես երևում է պատմական իրադարձությունների ընթացքից, Ջահապն իր այդ գործողությունները ձեռնարկել էր առանց խալիֆայության կամքը հարցնելու և առանց նույնիսկ նրա՝ էրմենիայի գլխավոր կառավարիչին՝ Դվինում նստող փոխարքային (ոստիկանին) հաշվի առնելու: Օգտվելով այդպիսի, կարելի է ասել, նպաստավոր պայմաններից, Բագրատունի եղբայրները, որ արդեն իրենց համար աթոռանիստ էին դարձրել Ախուրյանի աջ ափին գտնվող Բագարանը, կարողացան զենքի ուժով ի չիք դարձնել Ջահապի հավակնությունները և տեր դառնալ ոչ միայն ամբողջ Արշարունիքին, այլև, Վարդան պատմիչի արտահայտությամբ՝ «եւ զամենայն զկողմամբքն Շիրակայ՝ հարին զղօրսն Իսմայելի՝ որ անդ, եւ գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»[110]: Սակայն զենքի ուժով գրավված Շիրակն ու Արշարունիքը, ինչպես երևում է, մեխանիկորեն չէին կարող համարվել Բագրատունիների սեփականություն: Կամսարականներն ունեին ժառանգորդներ: Անհրաժեշտ էր որոշ հատուցում այդ ընդարձակ գավառների համար: Հենց այդ դրամով հատուցումն է, որ մեր կարծիքով, պատմագիրների մոտ դարձել է «առ ու վաճառք». գործարքը կատարվել է 783 թվականին: Այդ մասին վկայություն ունի Ասողիկը: Նա հաղորդում է, որ Աշոտ Մսակերը «գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգեն Կամսարականաց, և զարքունիսն ի Կոգովիտէ յԱրշարունիս փոխեաց»[111]:

Այդ նույնը Ասողիկից վերցրել են Մ. Ջամչյանը և հետագայի մյուս բոլոր հեղինակները: Ահա թե այդ մասին ինչպես է գրում Մ. Ջամչյանը. «Եւ իբրև այս յաջողեցաւ նոցանց դիմեցին ապա և յերկիրն Շիրակայ յԱրշարունիսն, և վանեցին անտի զՋահապ իշխանն և զամբողջ զօրս հագարացւոց՝ որք էին անդ. որով առաւել ևս վստահեցեալ՝ ետուն գանձ բազում ի Կամսարականս, և գնոյ առին ի նոցանէ զայն գաւառ. ուր և նորոգ շինեալ Աշոտոյ զերկրորդն Անի, որ յառաջն էր աւան փոքրիկ, բնակեցոյց ի նմա զընտանիս իւր»[112]:

Ղ. Ալիշանը Արշարունիքից բացի նշում է նաև Շիրակը. «Աշոտ Մսակեր պետ Բագրատունեաց, որ գանձագին արար ի Կամսարականաց զերկիր նոցա Արշարունիս և զՇիրակ, և զմասն մի սորա թափեաց զինու զօրութեամբ յԱրաբացւոց, առաջին յետ բազում դարուց նորոգող երևի ամրին Անոյ յելս Ը դարու, ուր և հաստատէ զբնակութիւն իւր»[113]:

Նախ անհնար է բացատրել, թե Բագրատունիներն այդ «բազում գանձերը» ի՞նչ աղբյուրներից էին կուտակել և արդյոք այդպիսի աղբյուրներ VIII դարում գոյություն ունե՞ն, թե ոչ: Պատ-

---

107 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 59:

108 Այս ամրոցը, որ ոչ մի կապ չունի Դարանաղի գավառի Անի-Կամախի հետ և համապատասխանում է հետագայի Թաո-Կլարջեթիայի՝ վրացիների կողմից Կալմախի կոչված ամրոցին, Վարդան Վարդապետը (և նրան հետևելով շատ հեղինակներ, որոնց թվում նաև այնպիսի մեծ հեղինակություններ, ինչպիսիք են՝ Մ. Ջամչյանը (Պատմութիւն Հայոց, հ. 2, էջ 415) և Ղ. Ալիշանը (Շիրակ, էջ 27), շփոթել է իրար հետ (տե՛ս Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 76: Համմ. Н. Я. Марр, Ани, էջ 21):

109 Н. Я. Марр, Ани, էջ 21:

110 Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, էջ 76: Տե՛ս նաև Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 59:

111 Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

112 Միխայել Ջամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1875, էջ 415: Տե՛ս նաև Н. Я. Марр, Ани, էջ 21, Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 59, Միհաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 12—13, Հ. Գեղամյանց, Ախալցխայից մինչև Անի, «Փորձ» հանդես, Տըփխիս, 1880, № 5, էջ 39, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 312, Նույնի, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 411 և այլն:

113 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37:

մությունից հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում, մանավանդ VIII դարի կեսերից, երբ խալիֆայության գահին տիրացան Աբասյանները, Հայաստանում բնատնտեսությունն ավելի էր ուժեղացել, դրամական հարաբերություններն ունեին չնչին չափեր և երկրում դրամի խիստ սղություն էր տիրում: Այդպիսի պայմաններում հազիվ թե Բագրատունիները կարողանային իրենց ձեռքում կենտրոնացնել «բազում գանձեր»: Այդ նույն ժամանակներում, ինչքան մեզ հայտնի է, Հայաստանում նույն բնույթի այլ գործարքներ չեն կատարվել: Այնուհետև, նկատի պետք է ունենալ, որ այդ ժամանակներում խալիֆայության բոլոր նվաճած երկրները ձևականորեն համարվում էին պետական սեփականություն, որ փաստորեն Արշարունիքն ու Շիրակը Բագրատունիների կողմից արաբներից նվաճվել էին զենքի ուժով և այլն: Այսպիսով, ՏՏՆՔ նորից ենք հանգում այն եզրակացության, որ Բագրատունիները այդ գավառները ոչ թե գնել են, այլ զենքի ուժով նվաճելուց հետո, իբրև հատուցում իրենց նախկին տերերին՝ Կամսարականների ժառանգորդներին տվել են որոշ գումար: Այնպես որ թեպետ արտաքնապես հարցը շատ պարզ է երևում, բայց իրականում ունի կնճռոտ շատ կողմեր, որոնց լուսաբանման համար անհրաժեշտ է հատուկ ուսումնասիրություն[114]: Ն. Մառն անդրադառնալով այդ կարևոր հարցին, նշում է, որ Կամսարականների հայրենական ընդարձակ տարածքների գնումը Բագրատունիների կողմից՝ այդ ժամանակների սոցիալական կյանքի համար կարևոր նշանակություն ունի, սակայն հայտնի չէ առաջիններն ինչ եղանակով են հավաքել, հավանաբար մեծ գումարների հասնող, այդ դրամագլուխը և վերջիվերջո, փաստերի բացակայության պատճառով, հրաժարվում է այդ կարևորագույն հարցին պատասխան տալուց. «Շիրակ գավառը նոր տերերի անցման պատմության մեջ մեզ համար հետաքրքիր է նշել այն փաստը, որ [այն] ունի սոցիալական խոշոր նշանակություն»,—գրում է նա: Բագրատունիները դրամով ձեռք էին բերել հսկայական հայրենական կալվածք: Մեզ համար արտակարգ կարևոր կլիներ իմանալ՝ ինչպիսի՞ ճանապարհներով է դեռևս այն ժամանակներում եռանդուռ անձանց ձեռքին կուտակվել դրամական միջոցները: Ցավոք, մենք աղբյուրների բացակայությամբ հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում, մանավանդ VIII դարի կեսերից, երբ խալիֆայության գահին տիրացան Աբասյանները, Հայաստանում բնատնտեսությունն ավելի էր ուժեղացել, դրամական հարաբերություններն ունեին չնչին չափեր և երկրում դրամի խիստ սղություն էր տիրում: Այդպիսի պայմաններում հազիվ թե Բագրատունիները կարողանային իրենց ձեռքում կենտրոնացնել «բազում գանձեր»: Այդ նույն ժամանակներում, ինչքան մեզ հայտնի է, Հայաստանում նույն բնույթի այլ գործարքներ չեն կատարվել: Այնուհետև, նկատի պետք է ունենալ, որ այդ ժամանակներում խալիֆայության բոլոր նվաճած երկրները ձևականորեն համարվում էին պետական սեփականություն, որ փաստորեն Արշարունիքն ու Շիրակը Բագրատունիների կողմից արաբներից նվաճվել էին զենքի ուժով և այլն: Այսպիսով, ՏՏՆՔ նորից ենք հանգում այն եզրակացության, որ Բագրատունիները այդ գավառները ոչ թե գնել են, այլ զենքի ուժով նվաճելուց հետո, իբրև հատուցում իրենց նախկին տերերին՝ Կամսարականների ժառանգորդներին տվել են որոշ գումար: Այնպես որ թեպետ արտաքնապես հարցը շատ պարզ է երևում, բայց իրականում ունի կնճռոտ շատ կողմեր, որոնց լուսաբանման համար անհրաժեշտ է հատուկ ուսումնասիրություն[114]: Ն. Մառն անդրադառնալով այդ կարևոր հարցին, նշում է, որ Կամսարականների հայրենական ընդարձակ տարածքների գնումը Բագրատունիների կողմից՝ այդ ժամանակների սոցիալական կյանքի համար կարևոր նշանակություն ունի, սակայն հայտնի չէ առաջիններն ինչ եղանակով են հավաքել, հավանաբար մեծ գումարների հասնող, այդ դրամագլուխը և վերջիվերջո, փաստերի բացակայության պատճառով, հրաժարվում է այդ կարևորագույն հարցին պատասխան տալուց. «Շիրակ գավառը նոր տերերի անցման պատմության մեջ մեզ համար հետաքրքիր է նշել այն փաստը, որ [այն] ունի սոցիալական խոշոր նշանակություն»,—գրում է նա: Բագրատունիները դրամով ձեռք էին բերել հսկայական հայրենական կալվածք: Մեզ համար արտակարգ կարևոր կլիներ իմանալ՝ ինչպիսի՞ ճանապարհներով է դեռևս այն ժամանակներում եռանդուռ անձանց ձեռքին կուտակվել դրամական միջոցները: Ցավոք, մենք աղբյուրների բացակայությամբ

[114] Արդյոք հնարավոր չէ՞, որ Բագրատունիները այդ գումարները կուտակած լինեին Սպերի հայտնի ոսկու հանքերի շահագործումից (նքե, իհարկե, դրանք ամբողջապես չէին գտնվում կայսրության տրամադրության տակ), մանավանդ որ Շիրակին ու Արշարունիքին տեր դարձան հենց դրանց՝ Սպերի հյուղի ներկայացուցիչները:

քյան (կամ անհետ կորչելու) պատճառով ի վիճակի չենք պատասխանել այդ հարցին[115]:

Անորոշ է նաև Շիրակը Բագրատուններին անցնելուց հետո ակզբնական շրջանի Անիի վիճակը: Մենք տեսանք, որ Վարդան Վարդապետը հաղորդում է, թե Աշոտ Մսակերն Անին վերաշինել է և իր ընտանիքով հաստատվել այնտեղ: Սակայն նա մեր այս Անին շփոթել է Անի-Կամախի և Սպերում գտնվող Կամախի հետ, ինչպես նկատել են Ն. Մառը և Ղ. Ալիշանը: Վերջինս իմիջիայլոց նշում է միայն Անիի և Անի-Կամախի շփոթությունը, առանց տեղյակ լինելու, որ վերջինս էլ շփոթել են Աշոտ Մսակերի Սպերի ժամանակավոր աթոռանիստի՝ Կամախի (Կալմախ) հետ: Ինչևէ, մեզ հետաքրքրում է միայն այն հարցը, թե Սպերից գալուց և Արշարունիքում ու Շիրակում հաստատվելուց հետո ո՞րն էր այստեղ Բագրատունիների առաջին ոստանը. Անին, թե՞ Բագարանը: Առանց կասկածանքի այս վերջինը[116], որը և նույն Աշոտ Մսակերի թոռ Աշոտ I-ի կողմից 885 թվականին հռչակվեց իբրև Բագրատունիների մայրաքաղաք, դրան X դարի սկզբներին փոխարինեց Շիրակավան-Երազդավորսը, իսկ 928-ին՝ Կարսը:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Անիի 885—961 թվականների վիճակը, նրա խաղացած դերն առաջին Բագրատունի թագավորների օրոք, հասարակ ամրոցից քաղաքի վերածվելու ժամանակի և հանգամանքների հետ կապված հարցերը, այդ ժամանակներից պահպանված հուշարձանների, հնություններ և նյութական մշակույթի այլ մնացորդների բնույթն ու ծավալը:

Առաջին Բագրատունի թագավորների օրոք թեպետև Անին մայրաքաղաք չէր, բայց սերտորեն առնչվում էր երկրի ներքին ու արտաքին քաղաքական դեպքերի հետ, հաճախ գտնվելով ուշադրության դրանց կիզակետում: Որոշ հեղինակների կարծիքով, Անին Բագրատունիների աթոռանիստն է եղել սկզբից ևէ՝ Աշոտ I Բագրատունու ժամանակներից[117], իսկական մայրաքաղաքի «կերպարանք

[115] **Н. Я. Марр.** Ани, էջ 21: Միանգամայն անորոշ է մնում նաև այն հարցը, թե ինչպես եղավ, որ Բագրատուններին անցավ նաև Շիրակի՝ Սահառունիներին ու Դիմաքսյաններին պատկանող բաժինը և թե Մամիկոնյաններին պատկանող Արշարունիքի մի մասը՝ հայտնի Արտագերս բերդով, նույնպես գնվեց դրամո՞վ, թե՞ սեփականացվեց միայն զենքի ուժով, և այլն:

[116] **Н. Я. Марр.** Ани, էջ 21:

[117] **Պալաֆյան Գրիգորիս,** Նկարագրութիւն Անիի աւերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 2—3, **Սարուխան,** Անի քաղաքը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1940, № 7—12, էջ 220—222:

առնելով» Աշոտ III-ի օրոք: Նրանցից մեկը՝ Գալաքյան Գրիգորիսը գրում է, «Թէ անուններու (Աշոտ I և Աշոտ III թագավորների— Բ. Հ.) շփոթութենէ առաջ եկած է այս տարբերութիւնը և Աշոտ Ա. է, որ առաջին անգամ Անիի մէջ օծուեցաւ Գէորգ կաթողիկոսէն, որով կ'ենթադրենք թէ այն ատենէն մայրաքաղաք եղած ըլլայ Անին»[118]:

Հետագայի մի քանի հեղինակներից բացի, Անին Աշոտ I-ի ժամանակից մայրաքաղաք լինելու մասին կա նաև ձեռագրական մի հիշատակարան, գրված ոմն Հակոբ երեցի կողմից մի հայսմավուրքի վերջում, որի ժամանակը ենթադրվում է XVI դարը: Այդ հիշատակարանը նախորդ հեղինակները նկատի չեն առել, ուստի անհրաժեշտ ենք համարում վկայակոչել, համառոտագրելով. «Յայսմաւուր յիշատակ է Աշոտոյ Բագրատունոյ Հայոց թագաւորի: Սա առաջին թագաւորեաց յազգէն Բագրատունեաց: Սա իշխան էր իշխանաց, եւ հաւատարիմ Բ թագաւորացն, Յունաց և Տաճկաց: Եւ սուլտանն Ապտուլայ առաքեաց նմա թագ, ի ձեռն Յուսփայ զաւրավարին Տաճկաց...

Կրսուի թէ «Վախճանեցաւ (Աշոտ Ա)... ի թըւականին մերում Յ. եւ ԺԸ. (=869) ամին: Կացեալ իշխանաց իշխան ամս ԼԱ. եւ ապա աւծաւ թագաւոր. եւ ե. ամ թագաւորեաց յԱնի»[119]:

Հիշատակարանի հեղինակն Աշոտ I-ի մահվան թվականությունն ակնհայտորեն սխալ է հաղորդում, որը, ըստ երևույթին, գալիս է նրա օգտագործած, մեզ անծանոթ, աղբյուրից: Իսկ մնացած տվյալները, չնչին բացառությամբ, համապատասխանում են Աշոտ I-ի ժամանակակից մատենագիրների հաղորդած տեղեկություններին: Ինչ վերաբերում է գրիչի այն վկայությանը, թե Աշոտը հինգ տարի թագավորել է Անիում, ապա դա պարզապես շփոթություն է: Կամ, ավելի ճիշտ, առաջին Բագրատունիների շրջանում Անին այնքան կարևոր դեր էր խաղում, որ ավանդույթի ուժով այն շատ հեղինակների կողմից ներկայացվում է իբրև Բագրատունիների թագավորության մայրաքաղաք ամբողջ այդ թագավորական հարստության ժամանակի համար: Թե ե՞րբ և ինչպիսի՞ պայմաններում Անին հռչակվեց մայրաքաղաք, այդ մասին, անշուշտ, ավելի հանգամանորեն խոսք կլինի հետագայում, դրա պատմության հաջորդ ժամանակաշրջանի մասին խոսելիս:

Տակավին Աշոտ I թագավորից առաջ, Աշոտ Մսակերի որդիների օրոք Անին դարձել էր Բագրատունիների Շիրակի ճյուղի կենտրոնատեղին: Ղ. Ալիշանի ասելով, այդ ճյուղի ոչ պակաս նշանավոր ներկայացուցիչ Աշոտ Մսակերի կրտսեր որդի, Հայոց ըսպարապետ Սմբատ Խոստովանողը իր համար աթոռանիստ էր դարձրել Շիրակի ամենաամուր բերդը՝ Անին[120]:

Պատմական դեպքերի ընթացքը ցույց է տալիս, որ Բագրատունիների թագավորության հաստատումից հետո էլ Անին մնում էր որպես Բագրատունիների թագավորության ժամանակավոր աթոռանիստը և կարևորագույն բերդը, ավելի ճիշտ՝ բերդ-գանձարանը, որտեղ պահվում էր նաև նրանց մյուս հարստությունների մեծ մասը:

Առանց տարակուսանքի այդ եզրակացությանը կարելի է հանդել X դարի սկզբների պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցու մի վկայությունից, որը վերաբերում է 908—909 թվականներին Սմբատ I-ի դեմ կազմակերպված դավադրությանը: Ատրպատականի Յուսուֆ ոստիկանն իր գործերը խալիֆայության հետ կարգավորելուց հետո, Սմբատ I-ից շտապ պահանջում է Հայաստանի հարկը: Սմբատ I-ն այդ հարկը տալու համար կարգադրում է առանց հապաղելու կրկնակի հարկ հավաքել՝ բերքի քանակի և անասունների գլխաքանակի $^1/_5$ չափով, որպեսզի հնարավոր լիներ և՛ փակել արաբական ոստիկանի պահանջած ծանր հարկերը, և՛ որոշ չափով միջոցներ կուտակել առաջիկայի համար: Այդ հողի վրա երկրում դժգոհություններ են սկսվում Սմբատ I-ի դեմ: Օգտվելով դրանից՝ արքունիքում բարձր դիրք գրավող իշխան Հասանը, միացած իր աներոջ (որը Հավնունի տոհմից էր) և վրաց Ատրներսեհ թագավորի հետ՝ դավադրություն է կազմակերպում Սմբատի դեմ: Սմբատ I-ն այդ ժամանակ գտնվում էր Տաշիրի կողմերում և դավադիրների համար կարծես նպաստավոր պայմաններ էին ստեղծվում: Հասանն ու խռովարար մյուս իշխանները Ատրներսեհին տեղավորում են Անի ամրոցում, իսկ մյուսներին, որոնք պետք է սպանեին թագավորին, ամրացնում են մայրաքաղաք Բագրեվանդ-Շիրակավանում՝ սպասելով Սմբատ I-ի գալուն: Սակայն վերջինս նախօրոք տեղեկություն ստանալով դավադրության մասին, իր ջոկատով գալիս է մայրաքաղաք և արագորեն խափանում խռովարարների մտադրությունները՝ կալանավորելով ու մեկուսացնելով նրանց: Իսկ Անիում գտնվող Հասանն ու Ատրներսեհ թագավորը սարսափած դավադրության այդպիսի վախճանից՝

---

[118] Պալաճյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 2—3:

[119] Տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», հ. Ա, կազմեց Հ. Հակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 99:

[120] Ղ. Ալիշան. Շիրակ, էջ 37, Նոյ, երկերի ժողովածու, հ. 2, էջ 426:

կողոպտում են Անիում գտնվող Բագրատունիների գանձերն ու թանկարժեք իրերը և մի կերպ փախչում Տայք[121]։

Ահա թե ինչ է հաղորդում կաթողիկոս պատմագիրն իր ընդարձակ վկայության վերջին հատվածում. «Ապա Ատրներսեհ և Հասանն տեսեալ, եթէ խորհուրդ սպանմանն (Սմբատ I-ին—Թ. Հ.) ոչ ել ի գլուխ՝ ահ երկիւղի զնոսա պատեալ պաշարեալ էր. ասէպ ասէպ ապա յաւարի առեալ զորս ի ձեռն ըմբռնեցաւ, այլ և զկարասի բազում որ եդեալ պահէր յամրոցին Անի՝ փախտեալ յամուրսն Տայոց չուեալ անդ անկանէին»[122]։

Դավադիրները հապշտապ ավարի են ենթարկել՝ ինչ ձեռքներն է ընկել։ Նրանց կողոպտած թանկարժեք իրերի թվումն էին նաև «զկարասի բազում որ եդեալ պահէր յամրոցին Անի»։

Սմբատ I-ի թագավորության ժամանակին են վերաբերում նաև նույն Հովհաննես կաթողիկոսի երկու այլ վկայությունները, որոնք նույնպես հաստատում են առաջին Բագրատունիների օրոք Անիի՝ իբրև ամրոցի, խաղացած մեծ դերի մասին։

Այդ երկու վկայություններն էլ վերաբերում են X դարի ըսկզբներին, Բագրատունի Սմբատ I թագավորի ժամանակներին։ Դրանցից մեկի համաձայն Անի ամրոցի մոտ «բարեկամական» դաշինք է կնքվում Սմբատ I-ի և խալիֆայության ներկայացուցչի՝ Ատրպատականի էմիր Ափշինի թողած ոմն ներքինապետի միջև, որին Սմբատ I-ը հանդիպում է Անիի մոտ։ Բագրատունի թագավորության համար ծանր պայմաններով էր կնքված այդ պայմանագիրը։ Դրանով փաստորեն Հայաստանը համարվել է նվաճված երկիր[123]։

Պատմիչն այդ դեպքերի մասին հետևյալ կերպ է հաղորդում. «Իսկ արքայ Սմբատ (Սմբատ I-ը—Թ. Հ.) ի դառնալն իւր ի Տայոց երթայ հանդիպի ներքինապետին մեծի մերձ յամուրն Անի յեղբ Ախուրեան գետոյ ի պայման սիրոյ ընդ միմեանս։ Ընդ որ յաւէտ հաճեալ ներքինապետն ի տեսանել զարքայ՝ խոստովանէր ոչ զոք թերևս համեմատ նմա տեսանէլ. և ապա համախորհ և համակամ և համագործ յայնմ օրէ և անդր ներքինապետն արքայի լինէր։ Եւ բազում պարգևս և պատիւս ընկալեալ ի նմանէ՝ գնայր ներքինապետն ի Փայտակարան քաղաք։ Իսկ որդի Ափշնի Դևդատն կաց մնաց ի Դվին քաղաքի՝ ոճիկս պատրաստեալ նմա թագաւորին Սմբատայ սուղ ինչ պակաս քան զամ մի»[124]։

Ներքինապետի առանձնահատուկ բարյացակամությունը Սմբատ I-ի նկատմամբ, որ նշված է պատմագրի վկայության մեջ, պարզապես բացատրվում է իր տիրոջ նկատմամբ ապստամբական տրամադրություններ ունենալով։ Ներքինապետը Սմբատ I-ին դիտում էր իբրև դաշնակից իր մտադրած ապստամբության ժամանակ։

Եգերների (աբխազների) թագավոր Կոստանդինը փորձում է իրեն ենթարկել Սմբատ I-ի կողմից Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում իր իշխանությանը ենթարկած մարզերը։ Սմբատն ու Վրաց թագավոր Ատրներսեհը դաշնակցած դուրս են գալիս Կոստանդինի դեմ։ Հայ-վրացական միացյալ զորքերը մեծ արագությամբ հասնում են հաղթանակի։ Կոստանդինն իր սակավաթիվ ուժերով ի վիճակի չէր լուրջ դիմադրություն ցույց տալու նրանց։ Աբխազների թագավորը գերվում է։ Սմբատ I-ը նրան շղթայակապ անելով, բանտարկում է Անի ամրոցում։ Սակայն Աբխազիայում ծագած գահակալական կռիվները նրան հարկադրում են ազատ արձակել Կոստանդինին և թույլ տալ վերադառնալու իր երկիրը։ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Իսկ արքայի Սմբատայ բազում ամրոցս յինքն գրաւեալ ի Վուրի աշխարհի, և կուսակալս կողմանցն այնոցիկ կացուցեալ՝ զեգերացին Կոստանդին ընդ իւր ածէ, ի դիպահոջ կացուցեալ յամուրն Անի երկաթի շղթայիւք. սակայն ոչ քամահանօք ինչ, այլ կրկին պատուով առատացուցեալ նմա զամենայն հանդերձանս և ոճիկս պիտոյից ըստ անդատին բարեբարոյ մտաց իւրոց»[125]։

Ժամանակակից պատմիչի վկայակոչված հիշատակություններն խոսում են այն մասին, որ Անին առաջին Բագրատունի թագավորների՝ մասնավորապես Սմբատ I-ի, օրոք կարևոր նշանակություն էր ստացել իբրև անմատույց ամրոց և բերդ-գանձարան։

Այժմ տեսնենք, ամրոց լինելուց բացի X դարի առաջին կեսում ինչ կարգի բնակավայր էր Անին՝ ավան, գյուղաքաղաք, թե՞ քաղաք։

Թվում է, թե պատմագրների վկայությունները (թեպետև կցկտուր) և հնագիտական նյութերը, որոնք այնքան առատությամբ ի հայտ են եկել բազմամյա պեղումների ընթացքում, բա-

---

[121] Ան., Երկերի ժողովածու, հ. 2, էջ 534։ Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37, Н. Я. Марр, Ани, էջ 22։

[122] Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 207։

[123] Н. Я. Марр, Ани, էջ 22, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37, Ան., Երկերի ժողովածու, հ. 2, էջ 525։

[124] Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 186—187։

[125] Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 201։ Համմ. Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37, էջ 22, Ան., Երկերի ժողովածու, հ. 2, էջ 532։

վական որոշակիորեն կարող են պատասխան տալ այդ հարցին։ Որ Անին սկզբից ևեթ եղել է անմատչելի ամրոց, ոչ ոք չի ժխտում և չի էլ կարող ժխտել. բնականից նրա ամուր դիրքը, հնագույն ժամանակներից մինչև առաջին Բագրատունիները ներառյալ այստեղ կատարված պաշտպանական կառուցումները, V դարից ի վեր (որոշ ընդհատումներով) պատմագիրների հիշատակությունները, ժողովրդական ավանդությունները այդ են վկայում։ Հարցը, սակայն, վերաբերում է նրան, թե ինչ կարգի բնակավայր կար Անի ամրոցին կից, դրա մայրաքաղաք հռչակվելու ժամանակներում՝ X դարի առաջին կեսին։

Պատմությունից հայտնի է, որ VIII—IX դարերում Հայաստանը գտնվելով արաբական խալիֆայության ծանր տիրապետության տակ՝ նախորդ ժամանակների համեմատությամբ մնտեսապես հետադիմել էր, նրա նախկին քաղաքներից շատերը կորցրել էին իրենց նշանակությունը և վերածվել սովորական բերդաքաղաքների։ Եվ միանգամայն տրամաբանական է, որ V դարից հիշատակվող Անի ամրոցումն էլ այդ դարերում որևէ առաջադիմություն չի կատարվել։ Նրա զարգացումը, ըստ երևույթին, սկսվել է Բագրատունիների թագավորության հռչակման ժամանակներից և շատ կարճ ժամանակամիջոցում վերածվել է քաղաքային տիպի բնակավայրի, եթե ոչ իսկական միջնադարյան քաղաքի։

Սյունիքի տեր Գրիգոր Սուփան իշխանը IX դարի վերջին, Մաքենիսի վանքի գմբեթավոր մեծ եկեղեցին կառուցելուց հետո, վանքին նվիրում է հսկայական կալվածքներ ու հարստություններ, դրանց մասին 901 թվականին վանքի պատի վրա թողնելով իր արձանագրությունը։ Ըստ արձանագրության, վանքին նվիրված ունեցվածքների թվումն են նաև հինգ կրպակ-խանութներ Անիից[126]։

Վիմագիր արձանագրության բովանդակած այդ փաստը շատ զորավոր է։ Անկախ նրանից, թե ինչ եղանակով էին այդ կրպակները դարձել Սյունիքի տիրոջ սեփականությունը՝ իբրև ժառանգություն մնացած իր մորից՝ Մարիամից, որը Բագրատունի Աշոտ I-ի աղջիկն էր, Սյունիքի վասակ Գաբուռ իշխանի կինը[127], թե մեկ այլ ճանապարհով, միևնույն է։ Կարևորն այն է, որ միայն մեկ բնակավայրում, այն էլ իր համար «օտար» իշխանության սահմաններում գտնվող բնակավայրում, Սյունիքի տերն ուներ սեփական մի շարք խանութներ։ Սակայն անկասկած է, որ Անիում այդ

[126] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179։ Համմ. Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, ս. Պետերբուրգ, 1912, էջ 5։

[127] Н. Я. Марр, Ани, էջ 33.

ժամանակներում կրպակ ու խանութ ունեցող այլ «տեր»-եր նույնպես կային և այդպիսի առևտրական կետերի թիվը առնվազն տասնյակների էր հասնում։ Եվ անկասկած է, որ միայն քաղաքային տիպի բնակավայրը կարող էր այդ ժամանակներում տասնյակներով կրպակ-խանութներ ունենալ։

Անիի պատմությամբ զբաղված բազմաթիվ մասնագետներից ոչ ոք ուշադրություն չի դարձրել Ստեփանոս Օրբելյանի մի այլ վկայության վրա, որ վերաբերում է X դ. 60-ական թվականներին։ Դրա մեջ Անին դարձյալ կոչված է քաղաք. «Ապա ամենայն ժողովոյն ընտրեալ զվահան վասն առաւել սրբութիւն եպիսկոպոսացըն և օծանեն զնա կաթողիկոս Հայոց (968 թ.—Թ. Հ.), որ և կեցեալ ամ մի՝ սկսաւ պատկերս բերել ի Վրաց և զնէր ի վերայ սեղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել...։ Վասն որոյ կարծիս իմն առեալ ամենեցուց եթէ դաշնադիր է ընդ Յոյնս. և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ նոցին, բողոք բարձին առ Թագաւորն. և նա հրաման տայր ժողովոյ յԱնի քաղաքի զի քննեսցեն զարժանն...»[128]։ Մինչդեռ նույն դեպքերի մասին Ստեփանոս Օրբելյանի ավագ սերնդակից Կիրակոս Գանձակեցու հիշատակության մեջ հավանաբար պարզապես ավանդության ուժով, Անին տակավին ամրոց է կոչված[129]։

Այսպիսով, ըստ գրավոր աղբյուրների Անին մայրաքաղաք դառնալուց առաջ արդեն քաղաք էր, կամ, համենայն դեպս, քաղաքային տիպի բնակավայր, որ ռազմականի հետ արդեն կարևոր դեր էր խաղում Բագրատունյաց Հայաստանի քաղաքական, տնտեսական ու կրոնական կյանքում։

Մոտավորապես այդպիսի եզրակացության կարելի է հանգել նաև մինչև մայրաքաղաք հռչակվելը այստեղ կատարված շինարարական աշխատանքների հիման վրա, որոնց մասին բավական հստակ գաղափար ենք կազմում հնագիտական պեղումների և ականատես հեղինակների նկարագրությունների հիման վրա։

Արդ, որո՞նք են ուշադրության արժանի շինարարական այն գործերը, որոնք կատարվել են առաջին Բագրատունի թագավորների օրոք, երբ Անին դեռ մայրաքաղաք չէր։

Թ. Թորամանյանը Անին նախքան մայրաքաղաք դառնալն արդեն համարում է բավականաչափ բազմամարդ քաղաք։ Նրա կարծիքով Անին այդ ժամանակ Աշոտյան պարիսպներով շրջափակված տարածությունից բացի ընդգրկում էր դրան հարակցող

[128] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 288—289։

[129] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 87։

սարահարթը: Նա մեկ առ մեկ թվարկում է այդ շրջանի շատ թե քիչ նշանակալի այն կառուցվածքները, որոնք գտնվում էին Միջնաբերդից դուրս և որոնք նյութեղեն ապացույց են քաղաքի տարածքի ընդարձակության: Նա եզրակացնում է, որ Աշոտի կառուցած պարիսպն իր մեջ էր առնում միայն քաղաքի մի մասը[130]:

Աշոտյան պարիսպներից շուտ էր կառուցված և դրանցից դուրս էր գտնվում Վահրամ Պահլավունու հոր՝ Գրիգոր Պահլավունու X դարի կեսին կառուցած տոհմական եկեղեցին՝ Ապուղամրենց ս. Գրիգորը[131]: Փոքրիկ, բայց ակնահաճո այդ եկեղեցին ներսից վեցաբսիդ է, իսկ արտաքինից՝ բազմաբսիդ: Հատակագծով և արտաքին նոանկյունաձև խորշերով սերտորեն առնչվում է VII դարի տաճարների հետ, որի հետ զգացվում են նաև նոր ձևավորվող եկեղեցական ճարտարապետական ոճի տարրերը՝ վերսլաց համաչափությունների բացահայտ գերակշռմամբ[132]:

Մենք արդեն նշեցինք, որ Ն. Մառի պեղումների շնորհիվ երևան են եկել չորս հատ պիլոններ, որոնք կառուցվել էին X դարից առաջ: Այս, այսպես կոչված, պիլոններով շենքը նույնպես քաղաքի հին մասից դուրս էր գտնվում: Այն հայտնաբերվել է Սմբատյան պարսպի մոտակայքում[133]:

Թորոս Թորամանյանի վկայությամբ, նույն Սմբատաշեն պարսպին գրեթե կից պահպանված են եղել մի փոքրիկ եկեղեցու ավերակներ: Դրա որմնաշյան վրա եղած խոյակի ոճը նա համարում է VI—VII դարերի հայկական ճարտարապետության ոճի նմանօրինակը և նշում, որ «Անիի մեջ, սկսյալ 10-րդ դ. մինչև անկում, խոյակներու նույն ոճի հետևողականության օրինակներ» «իրեն տակավին չէ պատահած», «նույնիսկ քանդակելու կերպը շատ կզանազանի Անիի քանդակագործելու արհեստագործութենեն»[134]:

Սմբատաշեն պարսպի մոտ այդ հին եկեղեցու գոյությունը նույնպես գալիս է ասելու, որ Անին նախքան մայրաքաղաք դառնալը՝ նույնիսկ մինչև X դարը, գրավում էր բավական ընդարձակ տարածք՝ հասնելով մինչև Իգաձորի ափերը[135]:

---

130 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմության, աշխ. ժողովածու, էջ 323:

131 Նույն տեղը:

132 Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 202—203:

133 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտարապետ. պատմության, աշխ. ժողովածու, էջ 323:

134 Նույն տեղը, էջ 323—324:

135 Նույն տեղը, էջ 324:

Նշված այդ շինություններն ամենայն հավանականությամբ այն կառուցվածքների միայն չնչին մասն էր, որ կատարվել էին Անիի Միջնաբերդից դուրս, դրա մինչև մայրաքաղաք հռչակվելը:

Եվ պատահական չէ, որ դրանք մեծմասամբ եկեղեցական շինությունների ավերակներ են: Այստեղ եղած քաղաքացիական հին շինությունները վաղուց արդեն վերացել էին երկրի երեսից:

Քաղաքի նոր մասում հայտնաբերվել է հնագույն խաչքարերից մեկը, որն ունի հին քանդակազարդեր և վերաբերում է 952 թվականին[136]: Հայտնի է, որ խաչքարերը հիմնականում եղել են իբրև մահարձաններ: Իսկ քաղաքի նոր թաղամասում դրանց գոյությունը նույնպես ցույց է տալիս, որ վերջինս բնակեցված է եղել տակավին մինչև Անին մայրաքաղաք դառնալը:

Կամսարականների և առաջին Բագրատունիների ժամանակ, անշուշտ, հիմնական ուշադրությունը դարձնում էին Անիի պաշտպանության՝ պաշտպանական պարիսպների, բուրգերի և մյուս կառուցվածքների վրա: Դրանց մասին մենք մասամբ արդեն խոսել ենք և ավելի մանրամասն կանդրադառնանք հետագայում: Այստեղ ուզում ենք նշել միայն մի փաստի մասին, որից կարելի է եզրակացնել, որ Բագրատունիներն Անիում պաշտպանական կառուցումներ են կատարել նաև մինչև մայրաքաղաք հռչակվելը: Այսպես, քաղաքի պարսպի բուրգերից մեկի վրա արձանագրված է. «Աշոտոյ իշխանաց իշխանի է»[137]: Պետք է ենթադրել, որ այդ բուրգը կառուցել է Աշոտ I-ը դեռևս իր իշխանաց իշխան եղած տարիներին:

Այսպիսով, Բագրատունիներն Անին մայրաքաղաք հռչակեցին այն ժամանակ, երբ նա հավանաբար արդեն ձևավորված, որոշակի կառուցվածք ունեցող միջնադարյան քաղաք էր: Այլապես 961 թվականին, այն մայրաքաղաք հռչակելուց հետո ընդամենը 2—3 տարի անց, հարկ չէր լինի նոր պարիսպ կառուցելու, որին ձեռնամուխ եղավ Աշոտ III-ը:

Անիի, իբրև բնակավայրի, վերաբերյալ համաձնուն չէ Ն. Մառի տեսակետն իր իսկ կատարած հետազոտությունների արդյունքների հետ: Նա գրում է, թե իբր «Բագրատունիների օրոք (ընդհանրապես—Թ. Հ.) Անին մեր հասկացողությամբ դեռևս իսկական քաղաք էլ չէր, այլ գերազանցապես թագակիր ֆեոդալի

---

136 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV веков, Ереван, 1961, էջ 348:

137 Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պրակ I, Անի քաղաք, Երևան, 1966, էջ 6:

ամրոց-ապարանք»[138]: Եվ իբրև ի հաստատումն այդ անընդունելի եզրահանգման, նշում է քաղաքային դասի տակավին թույլ լինելը և դրանց աշխատանքի արդյունքի յուրացումը ոչ թե իրենց, այլ «անշարժ գույքի մասնատերերի՝ տեղական ֆեոդալների կողմից»[139]: Նախ, միջին դարերում, ինչպես հայտնի է, բնակավայրի տեսակը հաստատող խիստ չափանիշներ գոյություն չունեին. միևնույն բնակավայրը հաճախ է պատահում, որ տարբեր հեղինակների մոտ տարբեր կարգի է համարվում: Օրինակ՝ Գառնին միևնույն ժամանակների տարբեր մատենագիրների մոտ համարված է ավան, քաղաք, բերդ, գյուղ, Երևանը՝ մեծ ավան, գյուղաքաղաք, քաղաք և այլն: Սակայն Անին այն բնակավայրը չէ, որի նկատմամբ պետք է կիրառել անհատական սկզբունքները: Այն Հայաստանի մեծագույն մասն իրեն ենթարկած Բագավորության մայրաքաղաքն էր, կրկնակի պարիսպներով շրջապատված, տասնյակ մոնումենտալ շենքերով պճնված, տասնյակ հազարավոր բնակչություն ունեցող մի քաղաք, որը X դարի երկրորդ կեսին արդեն որոշակիորեն ուներ ֆեոդալական դարաշրջանի քաղաքի կառուցվածքը (միջնաբերդ, բուն քաղաք, արվարձաններ) և դարձել էր արհեստագործության ու առևտրի կարևոր կենտրոն: Այդ մասին են վկայում հենց իր՝ Ն. Մառի հետազոտությունների արդյունքները, այդ է հաստատում Թորոս Թորամանյանի՝ հատուկ այդ հարցին նվիրված ուսումնասիրությունը, որ կրում է «Անի քաղա՞ք, թե՞ ամրոց» վերտառությունը[140]:

Մենք հետագա շարադրանքի ընթացքում նույնպես կտեսնենք, որ փաստական նյութերն անհարիր են Ն. Մառի այդ վարկածին: Ընդ որում, եթե այդ կարծիքն արտահայտված լիներ ոչ թե Մառի նման հեղինակավոր գիտնականի, այլ մի սկսնակի կամ «շարքային» հետազոտողի կողմից, հազիվ թե հարկ լիներ դրան անդրադառնալ՝ բացահայտ ծայրահեղության և, մասամբ, գռեհիկ սոցիոլոգիայի դիրքերից հարցին մոտենալու պատճառով: Ցավալին այն է, որ որոշ հեղինակներ մեխանիկորեն որդեգրել են այդ սխալ տեսակետը և փորձում են մատուցել իբրև ճշմարտություն: Դրանց թվին է պատկանում նաև Սարուխանը, որը հայտարարում է, թե «Անին իսկապես «Հայաստանի մայրաքաղաք» չէ, այլ Շիրակ գավառում հաստատված Բագրատունյաց իշխանության աթո-

[138] Н. Я. Марр, Ани, էջ 33:

[139] Նույն տեղը:

[140] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942:

ռատեղի»[141], սակայն հոդվածի հետագա հատվածներից մեկում այնուամենայնիվ չի մոռանում նշել, որ «Անին իրոք մայրաքաղաքի կերպարանք առավ Աշոտ Ողորմածի ժամանակ»[142]:

Ընդհանրապես Անիի պատմության Բագրատունյաց շրջանի շատ հարցեր բանավեճային են: Մասամբ այդ է պատճառը, որ մենք այդ շրջանը տալիս ենք առանձին գրքով, որպեսզի հստակ կերպով ընդգծվի, թե ինչպիսին էր Անին մայրաքաղաք եղած ժամանակ և ինչպիսի պատմական ընթացք ունեցավ հետագայում՝ երկրի քաղաքական անկախությունը կորցնելուց հետո:

[141] Տե՛ս «Հանդես ամսօրեայ» ամսագիր, 1940, № 7—12, Սարուխան, Անի-քաղաքը, էջ 220:

[142] Նույն տեղը, էջ 222:

ԱՆԻՆ 961—1045 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԱՆԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Պատմական հանգամանքների բերումով Բագրատունի առաջին թագավորների օրոք մեկը մյուսին փոխարինում են երեք մայրաքաղաքներ՝ Բագարանը, Շիրակավանը (Երազգավորս), Կարսը։ Դրանցից ոչ մեկը չուներ մայրաքաղաք լինելու այն տվյալները, որ ուներ Անին՝ այն ժամանակվա Շիրակի «ամենախոշոր կենտրոնը», մի այնպիսի կենտրոն, որը, Լեոյի պատկերավոր արտահայտությամբ, «կարող էր որոշ գույն հաղորդել Բագրատունյաց թագավորությանը, որոշ կնիք դրոշմել նրա կերպարանքի վրա»[1]։

Անին մայրաքաղաք հռչակելը դարձել էր մի տեսակ անհրաժեշտություն։ Նախորդ շրջանի վերաբերյալ խոսելիս մենք տեսանք, որ այն առանց մայրաքաղաք լինելու էլ վաղուց արդեն կարևոր դեր էր խաղում Բագրատունյաց թագավորությունում՝ լինելով ամենաամուր բերդը, արքունական ամրոց-գանձարանը և պատմական մի շարք դեպքերի հետ սերտորեն առնչված քաղաք։ Այնպես որ անարդարացի կլինեինք, եթե անվերապահորեն չըթաժանեինք Լեոյի այն կարծիքը, թե Անին մայրաքաղաք դարձնելը ելնում էր երկրի «թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական» շահերից, և որ դրա «անհրաժեշտությունը», «զգացել էին և Աշոտի նախորդները, բայց իրագործելու բախտը վիճակվեց միայն» «նրան»[2]։

Չնայած մեր պատմագիրների՝ Մատթեոս Ուռհայեցու, Ասողիկի և այլոց մի շարք վկայություններին, մանր ժամանակագրություններում ու ձեռագրերի հիշատակարաններում Անիի մայրաքաղաք հռչակվելու վերաբերյալ եղած հաղորդագրություններին, այնուամենայնիվ, այդ հարցի հետ առնչվող մանրամասները մեզ համար մնում են թերի լուսաբանված։ Այսպես, պատմագիտական առումով վերջնականապես չի ճշտված, թե Աշոտ III-ը (953—977)

[1] Ալո, *Երկերի ժողովածու, հ. 2, էջ 577։*

[2] Նույն տեղը։

մինչև Անին մայրաքաղաք դարձնելը ո՞րն էր համարում իր աթոռանիստը, չէ՞ որ վերջինս մայրաքաղաք է դարձել նրա թագավորության ութերորդ տարում, կամ թե ինչպես է եղել, որ նա ամենևին չի հակառակել իր եղբայր Մուշեղին, որը Կարսը հայտարարել էր իր մայրաքաղաքը, իսկ իրեն՝ Կարսի կամ Վանանդի թագավոր, կամ թե ինչպե՞ս է եղել, որ Աշոտ III-ը արքայից արքա («շահնշահ») է հռչակվել յոթ-ութ տարի թագավորելուց հետո միայն՝ 961 թվականին։ Պատմագիտական աշխատություններում Կարսի կամ Վանանդի թագավորության ստեղծումը և Մուշեղին թագավոր ճանաչելը սովորաբար բացատրում են յուրովի, «Ողորմած» մականունը կրող Աշոտ III-ի «բարի» ու «հանդուրժող», «խաղաղասեր» ու «խոնարհ» բնավորությամբ, ինչպիսին նրան ներկայացնում են մեր պատմագիրները[3], անշափ խտացնելով նրա բնավորության առանձնահատկությունները։ Հարցեր, որոնք կարոտ են պատմաբանասիրական լուսաբանությունների ու ճշգրտումների։ Նույնիսկ կան Անիի պատմությամբ զբաղվող այնպիսի հեղինակներ, որոնք, առանց, իհարկե, համապատասխան փաստերի, պնդում են, թե Անին իբր մայրաքաղաք է հռչակվել ոչ թե Աշոտ III-ի, այլ Աշոտ I-ի օրոք և Աշոտ թագավորի ձեռնադրության հանդիսությունների նկարագրությունները, որ կան մեր պատմագիրների մոտ, իբր վերաբերում են ոչ թե Աշոտ III-ին, այլ՝ Աշոտ I-ին[4]։ Գ. Պալաքյանի այդ կարծիքն անշուշտ թյուրիմացության արդյունք է և պարզապես երկու Աշոտներին իրար հետ շփոթելու հետևանք է, թեպետ նա ինքն է մյուս հայագետներին մեղադրում նույնանուն թագավորներին իրար հետ շփոթելու մեջ։

Ինչևէ, 961 թվականին Աշոտ III-ը, որ, ինչպես ասվեց, կրում էր Ողորմած մականունը, Անիում, հանդիսավոր պայմաններում օծվում է Հայոց թագավոր՝ «շահնշահ» (արքայից արքա) տիտղոսով։ Ինչպես երևում է, Աշոտի այդ թագադրությանը և Անին Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք հռչակվելուն մեծ կարևորություն է տրվել ու հսկայական արձագանքներ գտել և՛ ամբողջ Հայաստանում, և՛ հարևան երկրներում։ Աշոտ III-ի թագադրմանը ներկա են եղել զորքը, բարձրաստիճան պաշտոնյաներն ու իշխանները, հոգևորականները, հանդիսություններին մասնակցե-

[3] *Տե՛ս, օրինակ՝* Ասողիկ (Stեփաննոս Տaրոնեցի), *Պատմութիւն տիեզերական, էջ 180—181։*

[4] Պալաքյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի աւերակներուն, կ. Պոլիս, 1910, էջ 2—3։*

յու հրավիրված Աղվանից աշխարհի թագավոր Փիլիպպոսը, Հովհաննես կաթողիկոսը 40 եպիսկոպոսներով և ուրիշներ[5]։

Այդ պահից սկսած Անին հայտարարվում է հայոց մայրաքաղաք։ Եվ Բագրատունյաց թագավորությունը թևակոխում է քաղաքական ու հատկապես մշակութային կյանքի մի նոր ժամանակաշրջան, որը մի շարք հայագետների կողմից արդարացիորեն կոչվում է անիական շրջան և կազմում է Հայաստանում զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի մի հատվածը։

Անին նախորդ մայրաքաղաքների նկատմամբ ուներ մի շարք առավելություններ։ Նախ, նրա դիրքը բնականից շատ ամուր էր՝ երեք կողմից ակոսված Ախուրյանի ու դրա աջակողմյան վտակ Անիի (Ալաջայի) խիստ զառիվեր ձորերով։ Հին ժամանակներից ի վեր, ինչպես տեսանք, դրա այդ բնական դիրքային առավելությունները նկատի ունենալով, կամսարականներն այն դարձրել էին իրենց հենակետերից մեկը՝ ավելի անմատույց դարձնելով թերակղզու ամենանեղ մասում կառուցած հաստատուն պարիսպներով ու բուրգերով։ Եվ թվում է, որ Կամսարականների կառուցած պաշտպանական պարիսպներն Անին մայրաքաղաք հռչակվելու պահին հիմնականում պահպանվել էին։ Աշոտ III-ն այն միայն վերակառուցել ու վերանորոգել է։ Այլապես դժվար կ բացատրել, թե այդքան մեծ մասշտաբի կառույցն ինչպես է ավարտվել 1—2 տարում (963—964 թթ.)։ Հետաքրքիր Բագրատունիների աչքից չէր կարող վրիպել Անին՝ իբրև ամրոցի, այդ առավելությունները, և Ղ. Ալիշանը առաջին հեղինակներից է, որ Անին մայրաքաղաք դարձնելու կարևորագույն նախապայմանը համարել է նրա ամուր լինելը. «ի սակս ամրութեանն և դիտողութեան, յառաւել ևս ամրութիւն... յետ կիսոյ ժ դարու խորհեցան այլր հաստատել զաթոռ իւրեանց, որպէս և արարն Աշոտ-Դագիկ[6] Ողորմածն, յամի 961 յորում և մեծահանդէս փառօք օծաւ թագաւոր»[7],— գրում է նա՝ վկայակոչելով Մ. Ուռհայեցուն։

Երկրորդ, Անին X դարի սկզբներին վերածվել էր քաղաքի և հավանաբար նախկին ամրոցն արդեն փաստորեն ոչնչացել էր միջնաբերդ։ Դժվար չէ տեսնել, որ այն մայրաքաղաքի համար ավելի հարմար էր, քան Բագարան ու Երազգավորս ավանները (գյուղաքաղաքներ) և նույնիսկ Կարսը, որը նույնպես ուներ անմատույց բերդ, բայց, ըստ երևույթին, այդ ժամանակներում դեռ նա սովորական բերդ էր, քաղաքի չէր վերածվել և Աշոտ III-ի օրոք, ինչպես կարելի է ենթադրել, դարձել էր սոսկ սպարապետի աթոռանիստ։ Կասկած չի կարող լինել, որ Աշոտ III-ի եղբայր, սպարապետ Մուշեղը հենց այդ հանգամանքից է օգտվել իրեն հայտարարելով Վանանդի թագավոր, անելանելի փաստի առաջ կանգնեցնելով իր թագավոր եղբորը։

Երրորդ, Անին մայրաքաղաք հռչակելու համար, մեզ թվում է, կարևոր հանգամանք կարելի է համարել նաև այն, որ ի տարբերություն Բագրատունիների մյուս մայրաքաղաքների, այն գտնվում էր Բագրատունյաց թագավորության (X դարի կեսերի սահմաններով) գրեթե երկրաչափական կենտրոնում։ Իսկ հնում, ինչպես հայտնի է, մայրաքաղաքները սովորաբար գտնվում էին երկրի կենտրոնական շրջաններում։ Այս առիթով տեղին է նշել, որ ժամանակին հավանաբար այդ նկատի ուներ Տիգրան II-ը՝ նոր մայրաքաղաք կառուցելով իր տերության կենտրոնական մասում՝ Աղձնիք աշխարհում, Հայաստանի նախկին մայրաքաղաք Արտաշատի դիրքը համարելով իր պետության ծայրամասը։

Հայտնի է, որ Բագրատունիներն իրենց տիրույթներն ընդարձակել են ամենատարբեր եղանակով՝ զենքի ուժով, խալիֆայության հետ «լեզու գտնելով», դնմամբ և այլն։ Այդ տիրույթների մեջ առանձնահատուկ տեղ ունեին Արշարունիքը և Շիրակը։ Թվում է, որ քաղաքական տեսակետից մայրաքաղաքի համար ամենաապահով տեղն ամենից առաջ այդ գավառները կարող էին լինել։ Իսկ այդ գավառների բնակավայրերից, տվյալ ժամանակաշրջանում, Անին մայրաքաղաքի համար չուներ ուրիշ համազոր մրցակից։

Խոսելով Անիի՝ բնականից ամուր դիրքի մասին, չպետք է մոռանալ, որ այն միայն մի ամրացված կետ չէր, այլ շրջակայքի ամրոցների՝ հատկապես Մաղասբերդի ու Տիգնիսի հետ միասին կազմում էր ամրությունների հուսալի համակարգ։ Անիի շրջակայ-

[5] Տե՛ս Մաթևոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 3—4։ Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 180, Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 837, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37, Գևորգյան Մելիքսեթեկ, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, Ալեքսանդրապոլիս, 1903, էջ 26, Н. Я. Марр, Ани, էջ 22, Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 580 և այլուր։

[6] Մատթեոս Ուռհայեցին Անիի մայրաքաղաք դարձնելու հետ կապված արարողությունները ճիշտ նկարագրելու հետ միասին Աշոտ III-ին շփոթել է Դագիկ I-ի հետ և վերջինիս վերագրել Անիի առաջին թագավորի պատիվը (տե՛ս Մ. Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 3—4։ Համմ. Н. Я. Марр, Ани, էջ 22)։

Այդ նկատի ունի Ղ. Ալիշանը՝ Անիի անդրանիկ թագավոր Աշոտ Ողորմածի անվանը կցելով Դագիկի անունը («Շիրակ», էջ 37)։

[7] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37։

քում մեկը մյուսի հետևից առաջանում էին մշակույթի կենտրոններ (Տեկոր, Հոռոմոս)։ Այս հանգամանքները նույնպես նպաստեցին Անին մայրաքաղաք դարձնելուն, որն իր հերթին ազդեց դրանց հետագա զարգացման վրա։

Ինչպես երևում է, Անին մայրաքաղաք հռչակելը ինչ-որ ինքնանպատակ ձեռնարկում չէր։ Բագրատունի թագավորները նոր մայրաքաղաքը հիմք դարձնելով, պետք է ջանքեր գործադրեին միասնական պետություն ստեղծելու համար։ Սկզբից ասենք, որ այդպիսի պետություն ստեղծելու համար անհրաժեշտ սոցիալ-քաղաքական պայմաններ չկային։ Ավելին, ֆեոդալիզմի զարգացման հետ երկիրը մասնատվում էր առանձին ֆեոդալական իշխանությունների ու թագավորությունների։ Դեռևս X դարի սկզբներին իրենց անկախ թագավորներ հայտարարեցին Վասպուրականի Արծրունիները, Անին մայրաքաղաք դառնալուց հետո Վանանդն առանձին թագավորություն հռչակեց Աշոտ III-ի եղբայր Մուշեղը, նույն դարի 60-ական թվականների վերջերին ու 70-ական թվականների սկզբներին առաջացան Լոռու (կամ Կյուրիկյան) և Սյունիքի (կամ Կապանի) փոքրիկ թագավորությունները։ Երկրի տարբեր մասերում գոյություն ունեին հայկական և օտար դանադան իշխանություններ (Տարոնի և Սասունի, Տայքի, Արցախի, Գողթնի և այլն)[8], որոնք նույնպես խոչընդոտում էին միացյալ պետության ստեղծմանը, որն այնքան կենսական նշանակություն ուներ մեր ժողովրդի համար, բայց որն այդպես էլ հնարավոր չեղավ ստեղծել։

Առիթից օգտվելով նշենք, որ X—XI դարերի Հայաստանում մասնատվածության հետևանքով ստեղծված թագավորությունների ու իշխանությունների պատմությունն ուսումնասիրելիս ոմանք, նկատի ունենալով նրանցում տեղի ունեցող սոսկ տնտեսական ու մշակութային կյանքի զարգացումը, քաղաքական առումով ճիշտ գնահատելու փոխարեն, հաճույքով են խոսում այդ ֆեոդալական պետական միավորումների գոյության մասին, որն այնքան բացասաբար էր ազդում երկրի ռազմաքաղաքական հզորության վրա և թուլացնում էր դրա հիմքերը։

Այնուամենայնիվ, Բագրատունի թագավորները հնարավոր բոլոր միջոցները գործադրում էին կենտրոնացած, միասնական պետություն ստեղծելու համար։ Դրան մասամբ նպաստում էր երկարատև խաղաղության շրջանը, որ հաստատվել էր Աշոտ II-ի օրոք, X դարի 20-ական թվականների սկզբներից և, ընդհանուր առմամբ, շարունակվեց մինչև հաջորդ դարի 20-ական թվականները։ Երկրի խաղաղ կացությունը մի փոքր ընդհատվել է միայն 987 և 988 թվականներին, երբ Ատրպատականի Ասլհամ ամիրան արշավանք է կատարում ու ասպատակում Վասպուրականը և Այրարատյան աշխարհի մեծ մասը՝ անմիջական վտանգ սպառնալով Բագրատունյաց թագավորությանը, ինչպես և 955—964 թթ. տեղի ունեցած արխազների կրկնակի արշավանքներն ու ներքին խլրտումները[9]։ Սակայն դրանք, ընդհանուր առմամբ, առանց մեծ դժնդակների ու կորուստների համահարթվում են և երկիրը նորից մրտնում է իր բնականոն զարգացման ընթացքի մեջ։ Այնպես որ Բագրատունի թագավորների քաղաքական ղեկավար նպատակը՝ երկիրը մի միասնական պետության մեջ միավորելը, միշտ մնում էր օրակարգի մեջ՝ սկսած առաջին թագավորներից մինչև XI դարի առաջին քառորդի վերջերը ներառյալ։

Զգալի են Բագրատունի թագավորների այդ ուղղությամբ ձեռք բերած հաջողությունները։ Աշոտ II-ին (914—928) արդեն հաջողվել էր գերիշխանություն ձեռք բերել Հայաստանի մյուս պետական միավորումների նկատմամբ և ստանալ «շահնշահ» տիտղոսը։ Աշոտ III Ողորմածը, որը նույնպես կրում էր «շահնշահ» տիտղոսը, կարողացել էր իր սուվերենությանը ենթարկել նաև Վիրքի, Աբխազիայի ու Աղվանքի մի շարք իշխանություններ և Հայաստանում գտնվող մի քանի արաբական էմիրություններ. «զանուն տեառն Անուշ Շահնշահ կոչելով՝ իբրև թագաւորաց թագաւորն»[10]։

Միասնության գործն ավելի որոշակի կերպարանք է ստանում Սմբատ II-ի (977—989) և Գագիկ I-ի (989—1020) թագավորության տասնամյակներում։ Սմբատ II-ին հաջողվել էր փաստորեն վասպուրականի, Սյունիքի, Կարսի, Աղվանից թագավորներից բացի, որոնք ձևականորեն ենթարկվում էին Անի-Շիրակի թագավորությանը, սերտ դաշնակցության մեջ մտնել նաև Տայքի Դավիթ

[8] Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 271—283։ Տե՛ս նաև Լեո, Անի, Երևան, 1963, էջ 315—317, Աբրահամ Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 20, Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1955, էջ 53—54։

[9] Տե՛ս Աբրահամ Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Ա, Գահիրէ, 1941, էջ 223—224, Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 52—54։

[10] Վարդան Մեծ Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 201, Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 98։ Համմ. Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1-ին, Երևան, 1957, էջ 126։ Տե՛ս նաև Աբրահամ Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Ա, էջ 223—224։

Կյուրապաղատի և վրաց թագավորի հետ՝ 988 թվականին հարկադրելով Աբխազաց թագավորին հաշտություն խնդրելու[11]։

Քաղաքական միավորման վերջին փորձը կատարեց Գագիկ I-ը։ Նրան հաջողվեց ժամանակավորապես ոչ միայն պահպանել այն միությունը, որ ստեղծվել էր իր նախորդների կողմից, այլև ավելի ամրապնդել այն և ընդարձակել իր պետության սահմանները մինչև Արցախի Փառիսոս գավառի մեծ մասը ներառյալ[12]։ Աշոտ III-ը, Սմբատ II-ը և հատկապես Գագիկ I-ը մեծ ջանքեր գործադրեցին զինված ուժերի կազմակերպման վրա՝ ստեղծելով մի քանի տասնյակ հազար զինվորներից բաղկացած, լավ վարժված ու ժամանակի պահանջներին համապատասխանող բանակ[13]։ Որոշ առումներով արդարացի է լեռն, երբ Բագրատունիներին համարում է ավելի անկախ թագավոր, քան երբեմնի հայ Արշակունիներին, որոնք քաղաքական պայմանների հետևանքով գրեթե մշտապես, չնչին բացառությամբ, հարկադրված էին հաշվի նստել մերթ Սասանյանների, մերթ Բյուզանդիայի, մերթ էլ միաժամանակ այդ երկուսի հետ։ Բագրատունիներն այդպիսի կապանքներից ազատ էին։ Նրանք չեզոք էին խալիֆայության և Բյուզանդիայի մրցակցության նկատմամբ ու վարում էին միանգամայն ինքնուրույն քաղաքականություն։

Սխալ են հայագիտության մեջ երբեմն տեղ գտնող այն արտահայտությունները, թե Անի-Շիրակի թագավորությունը շատ փոքր տարածք ուներ, «գավառական» էր, իսկ Անին, Ն. Մառի ընդգծված ծայրահեղ արտահայտությամբ, իբր ոչ ավելի ոչ պակաս սոսկ մայրաքաղաքն էր «հայկական միջնադարյան փոքր իշխանություններից մեկի»[14]։ Մինչդեռ դրա սահմանները Գագիկ I-ի օրոք ձգվում էին Ուխթիքից (Օլթի) ու Կարինից (Էրզրում) մինչև Արցախի խորքերն ու Վասպուրականի ծայրաշրջանները՝ իրենց մեջ ընդգրկելով նախկին Այրարատյան աշխարհի մեծագույն մասը, Սյունիքի հյուսիս-արևմտյան մասը (Գեղարքունիք, Սոտք, Վայոց ձոր, Աղահեջք գավառները)[15] և զգալի տերիտորիաներ Արցախի ու Գուգարքի կողմերում։ Ստեփանոս Օրբելյանը միանգամայն հասկանալի պատճառով լռության մատնելով Սյունիքի նըշված գավառները Անի—Շիրակի թագավորության կազմում գտնվելու մասին, և հիշեցնելով, որ Սյունիքը կտրված էր Բագրատունիների թագավորությունից, վերջինիս սահմանները թվարկում է հետևյալ կերպ. «Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Զորոյ գետն և մինչ ի Գարդմանն»[16]։ Անի-Շիրակի թագավորության գրաված տարածքի մասին Ստեփանոս Օրբելյանի այդ վկայությունը թերի է։ Այն ավելի ամբողջական կդառնա, եթե նկատի ունենանք նաև X դարի վերջերի և XI դարի սկզբների պատմագիր Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկի) հետևյալ հիշատակությունը Գագիկ I-ի կողմից Սյունիքում և Արցախում նոր տարածքներ գրավելու վերաբերյալ. «Եւ տիրեաց նա (Գագիկ I-ը—Բ. Հ.) յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան եղբայր իւր. և ոչ ոք էր, որ զարհուրեցուցաներ զՀայաստանեայս մինչև ցօր գրելոյ իմոյ զրան յիշատակիս այսորիկ»[17]։

Ամենահամեստ հաշիվներով այդ սահմանների միջև ամփոփված Անի-Շիրակի թագավորության տարածքը հասնում էր մոտ 50 հազար քառակուսի կիլոմետրի, որը միջնադարյան ֆեոդալական պետության համար փոքր տարածք չի կարելի համարել։ Հետևապես, Անին ոչ թե գավառապետության, այլ մի ամբողջ շարք փոքր թագավորությունների ու իշխանությունների գլուխ կանգնած բավական ընդարձակ պետության մայրաքաղաքն էր, որ իր ժամանակին հասավ միջազգային ճանաչման։ Բագրատունիների այդ թագավորությունն ուղղակի կոչվում էր նաև իր մայրաքաղաք Անիի անունով (Անիի թագավորություն)։

Բագրատունի թագավորների համար երկրի միասնության հարցից պակաս կարևոր չէր նաև իրենց հիմնական հենակետի՝ մայրաքաղաք Անիի ամրացման ու անմատչելի դարձնելու հոգսը։ Ճիշտ է, Անին բնականից ամուր դիրք ուներ, բայց նրա նախկին ամրության գծերն ու մյուս պաշտպանական կառուցվածքները նոր պայմաններում արդեն անբավարար էին։ Այն արդեն ոչ թե սովորական ամրոց էր կամ շարքային քաղաք, այլ «քաղաքների քաղաք»՝ մայրաքաղաք, և մեծ թափով ընդարձակվում էր։

---

[11] Առշակ Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Ա, էջ 224։

[12] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 256։

[13] Տե՛ս, օրինակ, Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 221—222, 387, 448 և այլն։

[14] Н. Я. Марр. Ани, էջ 45։

[15] Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966, էջ 62—63, նույնի, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 272—274։

[16] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 300։ Նույնը տե՛ս նաև Վ. Ա. Հակոբյան, Մատեան ժամանակագրութեանց, հ. Ա, Երևան, 1951, Անանուն ժամանակագրություն (դարը՝ Ղ), էջ 384։

[17] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 256։

Անիին մայրաքաղաքի առաջին տեսք տվողը այստեղ հաստատված Բագրատունի առաջին թագավորն է՝ Աշոտ III-ը: Նա նախ և առաջ կառուցում է քաղաքի ներքին պարիսպը (963—964 թվականներին)[18], որը հետագայում կոչվեց Աշոտյան կամ Փոքր պարիսպ, իր բուրգերով ու աշտարակներով: Աշոտյան պարիսպները, որ բացվել են Ն. Մառի կատարած պեղումների ընթացքում, կառուցվել են մեծ վարպետությամբ, ժամանակի պահանջներին համապատասխան: Սակայն դրանցով չեն սահմանափակվում Աշոտ III-ի ժամանակվա պետական-պաշտպանական նշանակություն ունեցող կառուցումները: Ենթադրվում է, որ նրա օրոք է անցկացվել քաղաքի առաջին ջրմուղը և կառուցվել արքունի պալատի որոշ մասեր[19]:

Քաղաքն ընդարձակվում ու զարգանում էր միջնադարի համար անսովոր արագ թափով: Մայրաքաղաք հռչակվելուց հետո ընդամենը մեկ և կես տասնամյակի ընթացքում Անին արդեն գրավում էր Միջնաբերդից հյուսիս-արևելք ընկած ընդարձակ սարահարթը և խիստ պահանջ էր զգացվում պաշտպանական երկրորդ՝ Արտաքին կամ Մեծ պարսպի, որն արդեն կառուցվում է Աշոտ III-ի հաջորդի՝ Սմբատ II-ի օրոք, ութ տարվա ընթացքում: Ահա թե ինչ է պատմում Ասողիկն Անիի պաշտպանական կառույցների պակաս կազմող այդ պարսպի մասին. «Սա (Սմբատ II-ը —Թ. Հ.) լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրեան գետոյ մինչև ցձորն Ծաղկոցաց, կրով և վիմով մածուցեալ, մահարձանօք և աշտարակօք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն, յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բևեռապինդ ամրացուցեալ»[20]:

Սմբատյան կամ Արտաքին (Մեծ) պարսպի ավերակները համեմատաբար լավ են պահպանվել և նշմարվում են ամբողջ տարածության վրա՝ մոտ 2,5 կմ երկարությամբ: Այն մանրամասն նկարագրված է մի ամբողջ շարք հեղինակների կողմից, որոնց արտահայտած կարծիքների մասին խոսք կլինի քաղաքաշինությանը և հուշարձանների ու հնությունների նկարագրությանը նվիրված գլուխներում:

Անիի պաշտպանական կառուցվածքները Աշոտյան և Սմբատյան պարիսպներով չէին սահմանափակվում: Դրանցից բացի, քա-

[18] Վարդան Վարդապետ, Համառօտի պատմութեան լուսաբանեալ, էջ 89—90:

[19] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, էջ 333—334:

[20] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 187:

ղաքի պաշտպանական համալիրի մեջ էին մտնում Աղջկաբերդի, Միջնաբերդի ամրությունները, Ախուրյանի, Ծաղկոցաձորի, Գլիձորի ուղղությամբ կառուցված պարսպահատվածները, քաղաքի արվարձաններում ու մատույցներում ստեղծված պաշտպանական պարիսպները և առանձին կետեր[21]: Դրանց մի զգալի մասը նույնպես ստեղծվել է Բագրատունիների օրոք: Մասնավորապես Սմբատ II-ի օրոք է անցկացվել Սմբատյան պարսպին զուգահեռ, դրա արտաքին կողմով մոտ 500 մետր ձգվող խոր խանդակը, որը լցնում էին ջրով և պաշտպանականից բացի, ուներ նաև տնտեսական մեծ նշանակություն: Այդ մեծ կառուցումները նկատի ունենալով, զույների խտացում չի կարելի համարել Լեոյի այն արտահայտությունը, թե՝ «Անի մայրաքաղաքն իսկապես նրա (Սմբատ II-ի) ձեռքի գործն է»[22]:

Սակայն չպետք է կարծել, որ Բագրատունի թագավորներն իրենց բոլոր միջոցներն ու եռանդը ներդնում էին միայն պաշտպանական-ռազմական նպատակներով և Անին էլ դարձրել էին մի ռազմական ճամբար: Անիում Բագրատունիների թագավորության շրջանում են կառուցվել Ախուրյանի կամուրջներից մի քանիսը, արքունական պալատի հիմնական մասերը, քարավանատներ, կառուցապատվել բնակելի ամրողջական թաղամասեր ու փողոցներ, բազմաթիվ եկեղեցիներ (որոնց թվումն են Մայր եկեղեցին, Գագկաշեն տաճարը, Առաքելոց եկեղեցին. ս. Փրկիչը և այլն), իշխանական ապարանքներ, հյուրանոցներ, «քարտուն»-ներ և այլն:

Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում երկրի տնտեսական ու մշակութային կյանքի մեծ առաջադիմության, քաղաքների աննախընթաց զարգացման հետ Անին արագորեն վերածվում է խոշոր, բազմամարդ, բարեկարգ քաղաքի, արհեստագործության ու առևտրի հայտնի կենտրոնի՝ իր զարգացած մշակույթով: Եվ այդ բոլոր նվաճումներն Անիում ձեռք են բերվել համեմատաբար կարճ ժամանակաընթացքում՝ հիմնականում 961—1045 թվականներին: Պետք է նկատել, որ այս հարցում անիագիտության մեջ երկու ծայրահեղ կարծիք է արտահայտվել. մեկը, որի հիմնադիրը, եթե կարելի է այդպես արտահայտվել, Ն. Մառն է, լրիվ ժխտում է Բագրատունի թագավորների ժամանակ Անիի մեծ քաղաք լինելը (նույնիսկ ընդհանրապես քաղաք լինելը, ինչպես մենք տեսանք վերը) և այդ շրջանի ձեռքբերումները՝ մանավանդ ճարտարապետության բնագավառում, ամեն կերպ ձգտում է

[21] Տե՛ս Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 39:

[22] Լեո, երկերի ժողովածու, հ. 2, էջ 591:

կապել մայրաքաղաքի պատմության հետագա ժամանակների, այդ թվում նույնիսկ սելջուկյան տիրապետության շրջանի հետ:

Հակառակ վարկածի ականավոր ներկայացուցիչներից է Լեոն: Նա իր «Անի» աշխատության մեջ գրում է, որ Բագրատունիներից հետո Անին «արդեն նախկին փառքով ապրող մի քաղաք էր: Գլխավորը այն 84-ամյա շրջանն էր, երբ... Բագրատունյաց մայրաքաղաքն էր: Այդ շրջանն է Անին Անի դարձրել...: Վերջացավ Բագրատունիների շրջանը և այդ վերջից հետո Անին արդեն ավերանք ու դժբախտություն քարոզող մի քաղաք է»[23]:

Ինչպես տեսնում ենք, այս էլ մյուս ծայրահեղությունն է, որ Անիի պատմության մեջ Բագրատունիներից հետո ոչինչ դրական չի տեսնում, դանդ է առնում Զաքարյանների շրջանը (XIII դարի սկզբները), երբ Անին իր տնտեսությամբ, մշակույթով, բազմամարդությամբ ու բարեկարգման աստիճանով Առաջավոր Ասիայի հայտնի քաղաքներից էր, ունենալով միջնադարյան ազատ քաղաքների ու քաղաքային ինքնավարության որոշակի արտահայտված առանձնահատկություններ:

Պատմական իրողությունն այն է, որ Անիի ամենաբուռն զարգացման շրջանը Բագրատունյաց թագավորության ժամանակներն են, երբ այն մեծ արագությամբ վերածվեց բարեկարգ, ճարտարապետական գլուխգործոցների, բավարար կոմունալ պայմաններ ունեցող, կրկնակի պարիսպներով պաշտպանված քաղաքի, որի շուրջը փռված էին նրա վերգետնյա ու ստորգետնյա արվարձանները: Ուրիշ շատ հանգամանքների հետ չպետք է մոռանալ նաև այն, որ ինքնուրույն պետության մայրաքաղաքը, անկախ ժամանակաշրջանի բնույթից, ուներ և ունի մեծ առավելություններ ոչ միայն ֆունկցիոնալ, այլև տնտեսական, մշակութային և այլ առումներով: Եվ այս տեսակետից միթե՞ պատահական է, որ պատմահայր Մովսես Խորենացին հայկական ինքնուրույն պետության անկումը համարել է մեր ժողովրդի պատմության ավարտը և սրտի կսկիծով ողբացել այն[24], ինչպես և Արիստակես Լաստիվերտցին է դառնաձայն ազում Բագրատունիների անկումը[25]: Մայրաքաղաքը թվում է, թե տվյալ պետության քաղաքական, տնտեսական ու սոցիալական կյանքի ծանրաչափն ու հայելին է: Անին էլ առաջին հերթին «իր թագավորության արդյունքն» էր, ինչպես իրավացիորեն նշում է Լեոն[26]: Առաջ գնալով ասենք, որ քաղաքի մեծությունն ու փառքը չի որոշվում միայն նրա բնակչության թվով, դրված տարածքով, պարունակած շենքերով, տնտեսական որոշ ցուցանիշներով, այլ նաև քաղաքական այն դերով, որ խաղում է տվյալ ժողովրդի պատմության մեջ: Իսկ այդպիսի դեր Անին խաղացել է միայն Բագրատունիների թագավորության օրոք:

Վերջապես պետք է հաշվի նստել մեզ հասած գրավոր աղբյուրների հետ: Չէ՞ որ հիմքից զուրկ չէ Արիստակես Լաստիվերտցու այն արտահայտությունը, թե Անին XI դարում «տիեզերահռչակ»[27] էր, չէ՞ որ ականավոր շատ հայագետներ վաղուց արդեն ցույց են տվել, որ X—XI դարերում Հայաստանում տնտեսության բուռն զարգացմանը զուգընթաց մեծ առաջադիմություն էր կատարում նաև քաղաքային կյանքը՝ զարգացման նոր շրջան էին ապրում երկրի հին քաղաքները (Դվին, Կարին, Նախճավան, Վան և այլն), առաջացել էին նոր քաղաքներ (Կարս, Արծն, Խլաթ և այլն), որոնց թվում և Անի մայրաքաղաքը[28]: Միթե՞ պարզ չէ, որ այդ զարգացումն առավել մեծ չափերով վերաբերում է Բագրատունյաց մայրաքաղաքին, արդեն այդ ժամանակ «տիեզերահռչակ» Անիին: Եթե Բագրատունիների ժամանակ Անին «նույնիսկ իսկական քաղաք էլ չէր», ինչպես Ն. Մառն է հայտարարում, ապա ո՞ւմ էին պետք այն հսկա կառուցվածքները, որ Բագրատունի թագավորները կատարում էին այնտեղ, ինչի՞ համար պետք է ծառայեին քարավանատները, Ախուրյանի կամուրջները և այլն, որոնք թույլ են տվել ժամանակակից պատմիչին այն «տիեզերահռչակ» կոչելու, իսկ այլ հեղինակներին՝ Բագրատունիների թագավորությունն անվանելու «Անի-Շիրակի» կամ ուղղակի «Անիի թագավորություն»:

Պատմական տարբեր ժամանակներում, դերազանցապես քաղաքական հանգամանքների բերումով, կաթողիկոսական աթոռը հաստատվել է տարբեր տեղ: Արշակունիների թագավորության օրոք, քրիստոնեությունը պաշտոնական կրոն ընդունվելուց հետո, Հայոց Հայրապետի աթոռը հաստատվեց Վաղարշապատ քաղաքում, իսկ հետագայում, սասանյան Պարսկաստանի և Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում Դվինն էր դարձել նրա աթոռատեղին: Բագրատունյաց թագավորության կազմավորումից հետո կաթողիկոսական աթոռը նախ հաստատվեց Անիից

---

[23] Լեո, Անի, Երևան, 1963, էջ 342:

[24] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 358—366:

[25] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 58—61:

[26] Լեո, Անի, էջ 276:

[27] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 162:

[28] Акад. Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 205, 220 և այլուր: Համմ. նույնի «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում»:

ոչ հեռու գտնվող Արգինա ավանում, ապա ուղղակի Անիում[29]։ Բագրատունիների մայրաքաղաքում դրա հաստատվելու ճշգրիտ թվականը հայտնի չէ, բայց սովորաբար ընդունում են 993 թվականը[30], երբ կաթողիկոս էր ձեռնադրված Սարգիս Ա Մյունեցին[31]։ Եթե Անին կաթողիկոսների նստավայր դառնալը մի կողմից նպաստել է Բագրատունի թագավորների երկրի միավորման ձգտումներին, մյուս կողմից էլ մեծ խոշընդոտ է հարուցել։ Ավելին, Անիի կաթողիկոսներից Պետրոս Ա Գետադարձը (1019—1058), որ հսկայական հարստությունների տեր էր և երկրի խոշորագույն ֆեոդալներից մեկը, ոչ միայն խանգարում էր երկրի միասնությանը, այլև վեստ Սարգսի հետ հունասեր կուսակցության գլուխ անցած փաստորեն Անին վաճառեց բյուզանդացիներին։ Նա ընդհանուր առմամբ թշնամական հարաբերություններ ուներ ժամանակի Հովհաննես-Սմբատ թագավորի հետ և խռովելով, մի քանի տարի ծածուկ հեռացել էր Վասպուրականի Զորո վանքը[32]։

Իբրև կաթողիկոսանիստ, Անիում էին ձեռնադրվում Հայաստանի մի քանի հարյուրի հասնող եկեղեցական թեմերի թեմակալները՝ եպիսկոպոսները։ Անին էլ մի առանձին թեմ էր կազմում, որի թեմակալը, ի տարբերություն մյուս բոլոր քաղաքների թեմերի առաջնորդների, սովորաբար կոչվում էր մեծ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս։

Անիից հետո էլ Հայոց կաթողիկոսների աթոռանիստը շարունակվում է մի տեղից մյուսը փոխադրվել։

Բագրատունյաց թագավորության պետական կառուցվածքը հար և նման էր Արշակունիների պետական կառուցվածքին, միայն համապատասխանելով ժամանակի պայմաններին։ Անի-Շիրակի այդ թագավորությունը տիպիկ ֆեոդալական պետական միավորում էր, որի գլուխ կանգնած էր Բագրատունիների ամենաուժեղ ֆեոդալական տունը։ Բացառյալ Աշոտ I-ի (885—890), որ Բագրատունի առաջին թագավորն էր, Բագրատունի մյուս թագավորները՝ սկսած Սմբատ I-ից կրում էին «շահնշահ» (արքայից-արքա) տիտղոսը և ձևականորեն համարվում էին Հայաստանում գոյություն

29 Տե՛ս Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 203—204։

30 Ս. Ք. Մ., Ազգային պատմություն Անի քաղաքի («Մեղու Հայաստանի» լրագիր, Թիֆլիս, 1858, № 9)։

31 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, մասն Դ, Բեյրութ, 1959, նյութերի ցուցակ, էջ Ա—Բ։

32 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 75—78, Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 107, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 89—90։

ունեցող մյուս ֆեոդալական թագավորությունների և հայկական ու ոչ հայկական իշխանությունների ավագագույնը։ Թագավորը օժտված էր բռնակալական բոլոր իրավունքներով և ներքին ու արտաքին քաղաքականության բոլոր թելերը պահում էր իր ձեռքում։ Ֆեոդալական սանդուխքի հաջորդ աստիճանի վրա գտնվում էին դահերեց իշխանները, որոնցից աստիճանով ավելի ցածր էին դահակալ իշխանները, իսկ վերջին աստիճանը զբաղեցնում էին, այսպես կոչված, մանր ազնվականները, որոնցից, ինչպես IV—VII դդ. էր, կազմված էր «ազատագունդ» զորքը[33]։

Իրենց ներքին կյանքում Բագրատունի թագավորների վասալներն ունեին տիրակալական լայն իրավունքներ։ Թագավորի գերագույն իրավունքն իր վասալ իշխանների նկատմամբ կրում էր սոսկ քաղաքական բնույթ։

Պետության մեջ կառավարման համար գոյություն ունեին մի քանի գործակալություններ։ Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր գործունեության հատուկ բնագավառը և գլխավորվում էր մի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից։ Պետության ամենաբարձր պաշտոններն էին՝ իշխանաց իշխանը, սպարապետը, մարզպանը և մուխտիբը։

Իշխանաց իշխանի պարտականությունների մեջ էին մտնում հիմնական ֆեոդալների միջև եղած վեճերի լուծումը։

Անի-Շիրակի թագավորության սպարապետը, որ սովորաբար կոչվել է «Հայոց սպարապետ», կատարում էր երկրի ռազմական ուժերի գերագույն հրամանատարության պաշտոնը։ Պատերազմների ժամանակ նրան էին ենթարկվում ոչ միայն Անի-Շիրակի, այլ նաև վերջինիս վասալ թագավորությունների ու իշխանությունների զորքերը։ Գլխավոր հրամանատարի պաշտոնով հանդես էին գալիս նաև Բագրատունի թագավորները[34]։

Անիի Բագրատունիների թագավորությունում կարևոր դեր էին խաղում հատկապես Պահլավունիները, որոնց հայրենական կալվածքը հիմնականում կազմում էր Բջնի հայտնի բերդն իր շրջակայքի գավառով։ Մայրաքաղաքի պատմության հետ սերտորեն առնչված են նրանց նահապետ Ապուղամրի շինարարական գործունեությունը, նրա որդիներ Վասակ ու Վահրամ զորավարների հերոսությունները, որոնք երկուսն էլ զոհվել են Հայրենիքի Բյուզանդիայի դեմ մարտնչելիս, Վասակի որդու՝ Հայտնի Գրիգոր Մա-

33 Տե՛ս պրոֆ. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. I, Երևան, 1939, էջ 23։

34 Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 272—274։

գիստրոսի գիտական ու մանկավարժական գործունեությունը և այլն[35]: Պահլավունի իշխաններից ոմանք Անիում սահացել էին իշխանաց իշխանի կոչում, կառարում էին սպարապետի և մարզպանի պաշտոնը, նրանց է պատկանում Անիի Ապուղամրենց ս. Գրիգոր, Առաքելոց, ս. Փրկիչ եկեղեցիների, Մարմաշենի հայտնի տաճարի, Բջնի ամրոցի ու եկեղեցու, Կեչառիսի և ճարտարապետական այլ կոթողների կառուցման պատիվը: Պահլավունիները իրենց ծագումը կապում էին Արշակունիների (Կամսարականների) և Լուսավորիչի տոհմի հետ: Պահլավունի տոհմին են պատկանում միջնադարյան հայ մշակույթի խոշորագույն երկու ներկայացուցիչներ՝ Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին[36]:

Պահլավունիները, ընդհանուր առմամբ, Բագրատունի թագավորներին ամենամոտ կանգնած իշխաններն էին: Նրանցից առանձնապես հայտնի է Վահրամ Պահլավունին՝ Անի-Շիրակի թագավորության քաջ ու հայրենասեր սպարապետը:

Միանգամայն ճիշտ է նկատում Թորոս Թորամանյանը. Բագրատունի թագավորները «բավական չհամարելով մայրաքաղաքի բնական ամրությունը, ամբողջ ազատանին ալ հավաքեր են գահի շուրջը, հավանորեն անոնց վրա շատ մոտեն հսկելու համար, որովհետև անջատ բերդերու մեջ բնակող իշխաններ և նախարարներ, անցյալում շատ տխուր ապացույցներ տված են իրենց հպատակության և հիրասիրության նկատմամբ»[37],— եզրակացնում է նա: Այո՛, մեզ հասած գրավոր տեղեկություններից և նյութական մշակույթի մնացորդներից երևում է, որ Անիի բնակչության մեջ բավական մեծ տոկոս էին կազմում հասարակության վերնախավի ներկայացուցիչները՝ իշխաններն ու նրանց անմիջական ենթակա ազնվականները: Թեպետև այդ զգուշավորությունը նույնպես անզոր էր խափանելու ֆեոդալիզմին հատուկ երկպառակությունները, գահի համար մղվող կռիվները, դավաճանությունն ու քամահրելի գործերը:

Հայաստանի միջնադարյան քաղաքների կառավարման եղանակի, պաշտոնեության ու հիմնարկների, դրանց իրավունքների և

---

[35] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 53, 120, 148, Նոյն, Անի, էջ 164—165, նույնի, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 642—644 և այլուր:

[36] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 360, նույնի, Հայապատում, հ. Ա, Վենետիկ, 1901, էջ 519, Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, էջ 325, Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, Վենետիկ, 1923, էջ 17, Նոյն, Անի, էջ 164—165:

[37] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, էջ 325:

պարտականությունների վերաբերյալ մեզ հասած տեղեկություններն աղքատիկ ու կցկտուր են: Այդ է պատճառը, որ ուսումնասիրողների մոտ դրանք համապատասխան լուսաբանում չեն ստացել. հրապարակի վրա եղած գրականության մեջ քաղաքների կառավարման հարցերի մասին եղած դատողություններն ու եզրահանգումները ենթադրության շրջանակներից դուրս չեն գալիս: Այդ տեսակետից գրեթե բացառություն չի կազմում նաև Անին, որի պատմական կյանքի վերաբերյալ կան այնքան առատ աղբյուրներ և այնքան մեծ թվով ուսումնասիրություններ:

Միջնադարյան քաղաքներից յուրաքանչյուրը մի վարչական միավոր էր, մի համայնք, որտեղ ժամանակի ընթացքում առաջացել էին տարբեր կարգի կառավարման հիմնարկներ՝ պետական կամ տիրակալական և հասարակական: Վերջիններս ինքնավարական հիմնարկներ էին, որոնք կարող էին իրենց գործունեության մեջ կամ ազատ լինել, կամ ենթարկված էին պետական մարմիններին[38] քաղաքի տիրոջը:

X—XI դարերի Հայաստանի խոշոր քաղաքներում, որոնց թվում և Անիում, գլխավոր պաշտոնյաներից մեկը համարվում էր վերակացուն՝ մութասիբը (կամ մուհթասիբը), որը հսկում էր շուկաների, դրանցում օգտագործվող չափ ու կշիռների վրա: Բացի դրանցից, նա ուներ ֆինանսական ու ոստիկանական պարտականություններ[39]: Վերատեսուչ-մութասիբին, ըստ երևույթին, ստորադրված էին ավելի ցածր կարգի մի շարք պաշտոնյաներ՝ տանուտերները[40], որոնք հետագա դարերում կոչվեցին մելիքներ[41]: Ֆեոդալական հողի վրա գտնվող քաղաքների գլխավոր վերատեսուչը նշանակվում էր գավառատեր իշխանի, իսկ մայրաքաղաքներինը՝ թագավորի կողմից: Անիի քաղաքային պաշտոնյաների պարտականությունների մասին որոշ գաղափար են տալիս վիմագիր մի քանի արձանագրություններ, որոնք վերաբերում են քաղաքում առևտրի կազմակերպմանը, հարկերին և այլն: Նկատի ունենալով Բագրատունյաց Հայաստանի քաղաքներում «մութասիբի» («մուսադիպ», արաբական «մուհթասիբ»-ը) հիշատակությունը վիմագիր արձանագրություններում, ակադեմիկոս Հ. Մանանդյանը ենթադ-

---

[38] **А. К. Дживелегов,** Средневековые города в Западной Европе, С.-Петербург, 1902, էջ 63, 97, 145:

[39] Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 27 և 221: Համմ. **Я. А. Манандян,** О торговле и городах Армении..., էջ 231—232:

[40] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 101:

[41] **С. А. Егиазаров,** Исследования по истории учреждений Закавказья, ч. II, Городские цехи, Казань, 1891, Ներածություն, էջ XL—XLI:

րում է, որ այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքներն «իրենց տիպով» ու «ներքին կառուցվածքով» «զգալի նմանություն են ունեցել խալիֆայության քաղաքների հետ»[42]:

Սակայն X—XI դարերի Հայաստանի խոշոր քաղաքների, մասնավորապես մայրաքաղաք Անիի կառավարումը չէր սահմանափակվում միայն պետական մարմինների կողմից նշանակված վերատեսուչներով ու «տանուտեր»-ներով: Այդ դարերում երկրի խոշոր քաղաքները (Անի, Դվին, Արծն, Կարս և այլն) դարձել էին առևտրի ու արհեստագործության նշանակալի կենտրոններ, քաղաքային դասը՝ առևտրականներն ու արհեստավորները, բավական բազմամարդ էին և իրենց տնտեսական գործունեությամբ կարևոր դեր էին խաղում քաղաքների ներքին կյանքում՝ սկսած դրանց կոմունալ պայմանների բարելավումից, քաղաքի պաշտպանության կազմակերպումից մինչև դրա քաղաքական վիճակով զբաղվելը ներառյալ: Տեղին է նկատում պրոֆ. Ս. Պողոսյանը՝ «արհեստագործության ու առևտրի դերի բարձրացումն անխուսափելիորեն բարձրացրեց նաև քաղաքային դասի դերն ու տեղը հասարակական կյանքում»[43]: Արհեստավորների ու առևտրականների պայքարը քաղաքատեր ֆեոդալների դեմ՝ հատկապես քաղաքների կառավարմանը մասնակցություն ունենալու իրավունքի համար, դառնում է անխուսափելի: Այդ պայքարի արդյունքը սովորաբար լինում էր այն, որ միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքներում X—XI դարերում աստիճանաբար ստեղծվում էին ինքնավարական մարմիններ՝ «ավագանի», «ավագների խորհուրդներ» կամ ուղղակի՝ «երիցանի»:

Անիում Բագրատունիների թագավորության շրջանում իրոք որ գոյություն ուներ քաղաքի այդպիսի «գլխավորք»[44], որն, ըստ վիմագիր արձանագրությունների, կարևոր դեր էր խաղում քաղաքի ներքին կյանքում: Անիի այդ առաջին ինքնավարական մարմնի մասին խոսելիս սովորաբար վկայակոչում են Արիստակես Լաստիվերտցու հիշատակությունն այն մասին, որ Գագիկ II-ին Բյուզանդիայում արգելափակելուց հետո Անի քաղաքի «գլխավորք»-ը (ավագանին) որոշում է մայրաքաղաքի բախտը տնօրինելու իր հայեցողությամբ՝ դիմելով Դվինի էմիրին[45]:

[42] Я. А. Манандян, О торговли и городах Армении..., էջ 232, համմ. նույնի «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940, էջ 26:

[43] Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 48:

[44] Տե՛ս В. Бартольд, Персидская надпись на стене Аннийской мечети Мануче, Аннийская серия № 5, С.-Петербург, 1911, էջ 42—44:

[45] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 62—63:

Քաղաքի վիմագիր արձանագրություններից մեկում (հայտնաբերվել է 1906 թ. պեղումների ընթացքում, Գագկաշեն եկեղեցու մոտ, երեսպատման քարերի բեկորների վրա և վերականգնվել է Ն. Մառի (1906 թ.) ու Ա. Ա. Քալանթարյանի (1909 թ.) միացյալ ջանքերով), որը դրվել է Գագիկ I-ի (989—1020) հրամանով, հետևյալն է ասված. «...Որդի իրացն տէր է եւ եթէ ննջեցեալն ի յաւտար քաղաքէ լինի գլխաւորք քաղաքիս պահեն մինչեւ ի գալուստն իւր. լինի... հոգոց... ով այս գրոյս հակառակ կայ նզովեալ լիցի յայ եւ ի ՅԺԲ հայրապետաց եւ իմ մեղացս պարտական: Հաստատուն է գիրս հրամանաւ Գագկա Շ.Հանդշահի, որդո Աշոտոյ արքայից արքայի. վկայութեամբ այ եւ տէր Սարգսի: Ընդունեցէք եւ վայելեցէք կամս այ»[46]:

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը թերի է: Դրա ոչ բոլոր բեկորներն են հայտնաբերված և որոշ տեղերում եղծված է: Սակայն ընդհանուր բովանդակությունից ակնհայտ է, որ Անիում Գագիկ I-ի օրոք գոյություն ուներ քաղաքի «գլխավորք»-ը և որ թագավորի հրամանով վերջիններս պարտավոր էին «իւաւտար քաղաքէ» Անիում մահացածի ունեցվածքը պահել մինչև նրա հարազատների գալը:

Անիի «գլխավորք»-ի մասին այս արձանագրությունը ոչ միայն ամենահին աղբյուրներից է, այլև այն որոշ բանալի է հասկանալու քաղաքի ինքնավարական բարձրագույն մարմնի ենթակայության աստիճանը: Քանի դեռ Բագրատունիների թագավորները հաստատուն նստած էին իրենց գահին, քաղաքի «գլխավորք»-ը («երիցանին») հավանաբար լիովին ենթակա էին նրանց կամքին: Այս տեսակետից միանգամայն ընդունելի կարելի է համարել Հ. Մանանդյանի այն ենթադրությունը, թե Բագրատունիների թագավորության շրջանում Հայաստանի խոշոր քաղաքները հիմնականում կառավարվում էին տիրակալական կարգով՝ «պաշտոնատար մարդկանցով և ուրիշ խոշոր սենյորներով»[47]: «Երիցանի»-ի գոյության մասին հիշատակություններ ունեն արաբական մատենագիրները[48]:

Սակայն, թվում է, թե ինքնավարական մարմինների դերը քաղաքի կյանքում կտրուկ կերպով բարձրանում է դրա «օրինական տերերի»՝ Բագրատունի թագավորների վերացմամբ: Եթե թագա-

[46] Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, Երևան, 1966, էջ 42:

[47] Я. А. Манандян, О торговле и городах Армении..., էջ 231—232: Դվինում IX—X դդ.:

[48] Տե՛ս նույն տեղը, էջ 231:

վորության շրջանում քաղաքի «գլխավորք»-ը օտար մեռելի հետ կապված չնչին հարցը պետք է լուծեր թագավորի հրամանով, հոգևորականի վկայությամբ, ապա այդ նույն թագավորության անկման շրջանում, ինչպես վկայակոչվեց Արիստակես Լաստիվերտցու համապատասխան, հաղորդումը, քաղաքի գլխավորները նույնիսկ իրավասու էին տնօրինել ամբողջ քաղաքի ճակատագիրը: Այդպիսի մի դեպքի մասին էլ վկայում է Կիրակոս Գանձակեցին մոնղոլների 1236 թվականի արշավանքի հետ կապված: Ժամանակակիցը հաղորդում է, որ քաղաքի «երիցանին» կորուկ մերժել է Անին հանձնելու մասին մոնղոլական զորավարի ուղարկած պատգամավորների առաջարկը[49]: Առաջ գնալով ասենք, որ արհեստագործության և առևտրի հետագա զարգացումն ավելի բարձրացրեց քաղաքի ինքնավարության դերն ու նշանակությունը, թեպետև այն Հայաստանի քաղաքներում միշտ մնաց պետական-ֆեոդալական մարմինների և իշխանությունների ենթական: Այս հարցի մասին Ն. Մառի և մյուս հեղինակների արտահայտած կարծիքները, որոնք վերաբերում են Անիի պատմության հաջորդ դարաշրջանին, կքննարկվեն ըստ ժամանակագրական կարգի:

Այսպիսով, IX—XI դարերի Հայաստանի խոշոր քաղաքներում, որոնց թվում և Անիում, աստիճանաբար ձևավորվում է քաղաքային դասի ինքնավարության մարմինը՝ «քաղաքի գլխավորք»-ը («երիցանին» կամ «խորհուրդը», ինչպես կոչվել են միջնադարյան Եվրոպայի քաղաքների ինքնավարության մարմինները)[50], որն այդ նույն ժամանակաշրջանի վերջում ձեռք է բերում ավելի լայն իրավունքներ, բայց այնուամենայնիվ մնալով քաղաքի տեր ֆեոդալի լիակատար իրավասության տակ:

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ա. Երկրի ընդհանուր տնտեսական զարգացումը և Անին

IX դարի երկրորդ կեսից քաղաքական անկախության նվաճումից ի վեր Հայաստանը թևակոխեց տնտեսական բուռն զարգացման շրջան. զարգանում էին դրա գյուղատնտեսության ճյուղերը, ներքին ու արտաքին առևտուրը, արհեստագործությունը, քաղաքային կյանքը: Հայաստանի այդ տնտեսական զարգացման մասին վկայություններ ունեն հայ և օտարազգի պատմագիրները: XI դարի հայ պատմագիր Արիստակես Լաստիվերտցին Բագրատունյաց Հայաստանը նկարագրում է որպես մի «փարթամ այգի»[51]: X դարի արաբական հեղինակ Իբն-Ֆաքիհը աշխարհագրական բովանդակություն ունեցող իր «Գիրք երկրների մասին» աշխատությունում նշում է, որ այդ ժամանակ միայն Արաքսի հովտում եղել են մոտ 1000 քաղաք ու գյուղ, իսկ արաբական մի այլ, ավելի հայտնի հեղինակ՝ Յակուտն իր «Աշխարհագրական բառարանում» հաղորդում է, որ Հայաստանում կային 18000 գյուղեր ու գյուղաքաղաքներ[52]:

Տնտեսական այդ վերելքի հիմնական պատճառը, անշուշտ, երկրի քաղաքական անկախության վերականգնումն էր, որին 15—20 տարի հետո հաջորդեց այն ժամանակաշրջանը, երբ Բագրատունյաց Հայաստանը դադարեց նաև խալիֆայությանը հարկատու լինելուց: Երկրի նյութական միջոցները կուտակվում էին ներսում և հիմք դառնում նրա տնտեսական հետագա զարգացման համար:

Հայաստանի տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նաև ավելի քան 100 տարի տևած խաղաղությամբ, որ հաստատվել էր Աշոտ Երկաթի օրոք, X դարի առաջին քառորդի վերջերին: Երկիրն այդ ժամանակաընթացքում «գրեթե չէնթարկվեց հարձակումների ու ավերածությունների և ապրեց խաղաղ ու հանգիստ», նշում է Հ. Մանանդյանը՝ երկարատև խաղաղությունը բնութագրելով իբրև երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը[53]:

Բագրատունյաց Հայաստանը, ընդհանուր առմամբ, չէզոք էր խալիֆայության և Բյուզանդիայի միջև եղած մրցակցության նկատմամբ: Այն դարձել էր Արևելքն Արևմուտքի հետ կապող կարևոր օղակներից, տարանցիկ աշխույժ առևտրի միջավայր, որը նույնպես մեծապես նպաստում էր նրա տնտեսության զարգացմանը:

Հայ ժողովրդի միջին դարերի պատմության մասնագետների մեծագույն մասը (Լեո, Ադոնց, Հ. Մանանդյան, Բ. Առաքելյան, Կ. Ղաֆադարյան և ուրիշներ) IX—XI դարերն իրոք որ դիտում են իբրև երկրի տնտեսական կյանքի բուռն վերելքի շրջան, որն ընդհատվեց սելջուկյան և շադադյան տիրապետության ժամանակներում և նորից շարունակվեց XII դարի վերջերին ու XIII դարի առաջին տասնամյակներին՝ Զաքարյանների օրոք: Բացառություն

---

[49] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 258:

[50] А. К. Живелегов, Средневековые города Западной Европы, էջ 143:

[51] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 62—63:

[52] Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 6 (տվյալները բերված են Լորանի «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև» ֆրանսերեն աշխատությունից, Փարիզ, 1919, էջ 44):

[53] Նույն տեղը, էջ 13: Տե՛ս նաև՝ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 20:

են կազմում միայն Ն. Մառը, Հ. Օրբելին, և Ջուբինով-Ջուբինիշվիլին: Նրանք տնտեսական և, մանավանդ, մշակութային առումով թերագնահատել են Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանը: Հարկ ենք համարում ենթադրել, որ նրանց այդ անընդունելի, մեզ հասած գրավոր աղբյուրների նկատմամբ ներհակ տեսակետը հավանաբար մասամբ արդյունք է նրա, որ Անիի պեղումների ընթացքում հայտնաբերված հուշարձանների ու նյութական մշակույթի մնացորդների մեծ մասը վերաբերում է Բագրատունյաց ժամանակներին: Բայց չէ՞ որ սելջուկյան և շադդադյան տիրապետության շրջանում ավերվել էր Անիի նախորդ ժամանակների հուշարձանների զգալի մասը, իսկ կանգուն մնացածներն էլ Զաքարյանների օրոք վերակառուցվել, վերափոխվել, վերանորոգվել էին, որի պատճառով էլ մասամբ կորցրել էին իրենց նախնական տեսքը: Ստացվում է այնպես, որ Անիի Բագրատունյաց շրջանի հուշարձանների մի մասն ընդհանրապես ավերվել ու չնչվել էր երկրի երեսից, իսկ մի մասն էլ վերափոխության ենթարկվել հետագա շրջանում: Այս վերջիններիս զգալի մասը նրանք վերագրում են Բագրատունիներին հաջորդած ժամանակներին, որի հետևանքն է պատմական իրականությանը հակասող, այդ ընդհանրացումը Ն. Մառի և Հ. Օրբելու նման ականավոր գիտնականների կողմից, որին, ի թիվս մի շարք հեղինակների, առարկել են Հ. Մանանդյանը, Կ. Ղաֆադարյանը և ուրիշներ[54]:

X—XI դարերի երկրի տնտեսական ընդհանուր վերելքի առանձնահատուկ կողմերից մեկը քաղաքային կյանքի զարգացումն էր՝ արհեստագործության, առևտրի զարգացումը, տասնյակ բերդեր՝ քաղաքների, ագարակները՝ ավանների, ավաններից շատերը՝ քաղաքների, բազմաթիվ գյուղեր՝ գյուղաքաղաքների (կամ քաղաքագյուղի) վերածվելը: Հիմնվում էին բազմաթիվ նոր բնակավայրեր, ավելի բազմամարդ էին դառնում հնից գոյություն ունեցած քաղաքներն ու գյուղերը: Ժամանակակից պատմագրի պատկերավոր արտահայտությամբ՝ «ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ»[55]:

Քաղաքային կյանքի այդ բուռն վերելքը Հ. Ա. Մանանդյանը հիմնականում համարում է միջազգային տարանցիկ առևտրի զարգացման հետևանք»[56]: Թվում է, թե միանգամայն ճիշտ

[54] Տե՛ս Я. А. Манандян, О торговле и городах Армении..., էջ 272—275, Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1952, էջ 8:

[55] Ասողիկ. Պատմութիւն տիեզերական, ս. Պետերբուրգ, 1885, էջ 161:

[56] Տե՛ս նրա «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում» և «О торговле и городах Армении...», աշխատությունները:

ընութագրելով այդ ժամանակաշրջանի քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացումը, դրա հետ միաժամանակ նա շատ է գերագնահատել այդ զարգացման մեջ տարանցիկ ու միջազգային ծավալուն առևտրի դերը: Անվիճելի է, որ վերջինս հսկայական նշանակություն է ունեցել X—XI դարերում Հայաստանի քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացման համար: Սակայն, մեր կարծիքով, տարանցիկ ու արտաքին առևտուրը չէր կարող դրա գլխավոր նախապայմանը լինել: Հայտնի է, որ մոնղոլական տիրապետության շրջանում ևս մոնղոլ խաները խրախուսում էին արտաքին առևտուրը՝ այն դիտելով որպես տերունական դրամարկղները հարստացնող կարևոր աղբյուր: Սակայն X—XI դարերի և մոնղոլական ժամանակաշրջանի Հայաստանի արտաքին առևտուրն իրարից էապես տարբերվում էին: X—XI դարերի արտաքին առևտուրը սերտորեն առնչված էր երկրի ներքին տնտեսական կյանքի, ներքին մանրածախ առևտրի, երկրի զարգացող արհեստագործության ու գյուղատնտեսության հետ և գերազանցապես արտացոլելով դրանց վերելքը, ինքն իր հերթին նպաստում էր երկրի ընդհանուր տնտեսական զարգացմանը: Մինչդեռ մոնղոլական տիրապետության և հետագա ժամանակների Հայաստանի վրայով կատարվող առևտուրը երկրի տնտեսական կյանքի հետ համեմատաբար քիչ էր առնչվում և մեր ժողովրդի ընդհանուր առաջադիմությանը գրեթե ոչնչով չէր նպաստում: Հանրահայտ է, որ արտաքին ու տարանցիկ առևտուրը տվյալ երկրի համար խոշոր նշանակություն է ունենում միայն այն ժամանակ, երբ այն զուգորդվում է ներքին առևտրի հետ, երբ դրան տվյալ երկիրն իր հերթին մասնակցում է սեփական ապրանքներով: Ժողովրդական տնտեսության խորքերը թափանցող, դրանց ճյուղերի վրա ազդող և դրանց հիման վրա ավելի ծավալվող առևտուր էր Հայաստանի X—XI դարերի և՛ արտաքին, և՛ որոշ առումով նրա տարածքով կատարվող քարավանային տարանցիկ առևտուրը:

Քաղաքների առաջացման ու զարգացման հիմնական նախապայմանը, այնուամենայնիվ, մնում էր երկրի ներսի աշխատանքի բաժանումը, ինչպես միանգամայն ընդունելի ձևով նշում է Բ. Ն. Առաքելյանը[57], վկայակոչելով մարքսիզմի դասականների ասույթները միջնադարյան քաղաքի ծագման մեջ աշխատանքի բաժանման խաղացած որոշիչ դերը IX—XII դարերի Գերմանիա-

[57] Բաբկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. I, Երևան, 1958, էջ 60—65:

յում[58]: X—XI դարերում իրոք որ պայմաններ էին ստեղծվել արհեստագործությունը գյուղից աստիճանաբար անջատվելու, արհեստագործությունն ու մեծածախ առևտուրը քաղաքում կենտրոնացնելու, դրամական հարաբերությունները ծավալելու, առանձին անհատների ձեռքին հսկայական հարստություններ կուտակվելու համար, որը մենք կտեսնենք Անիում տեղի ունեցող գույքային հարաբերությունների և մասամբ հարկերի ու տուրքերի մասին խոսելիս:

Իբրև ընդհանուր կանոն, X—XI դդ. Հայաստանի խոշոր քաղաքները գտնվում էին միջազգային քարավանային մայրուղիների վրա: Պարսկաստանից Հայաստանի վրայով Տրապիզոն տանող հյուսիսային հիմնական մայրուղու վրա էին գտնվում Նախճավանը, Դվինը, Անին, Կարսը, Արծնը[59], որոնցից վերջին երեքը իբրև քաղաք ձևավորվել էին IX—X դարերում և դարձել ակնառու, մարդաշատ քաղաքներ, առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոններ: «Իբրև ակն մի պատուական լուսադեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեին գեղեցիկ, բոլորովին զարդարուն», «ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր»,— գրում է Արիստակես Լաստիվերտցին իր հայրենի քաղաք Արծնի մասին[60]: Նա նույն կերպ է բնութագրում և մյուս քաղաքները:

X—XI դարերում հայտնի էին նաև երկրի հարավային մասի մի շարք քաղաքներ, որոնք նույնպես գտնվում էին քարավանային մայրուղու վրա: Այս վերջինս ձգվում էր Հայաստանի հարավային շրջաններով, և նրա վրա էին գտնվում Վանը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը (Բիթլիս) և այլն, որոնք նույնպես դարձել էին վաճառաշահ, խոշոր քաղաքներ:

Գլխավոր մայրուղիների վրայի խոշոր քաղաքներից բացի, X—XI դարերում մի ամբողջ շարք քաղաքներ էին առաջացել նաև երկրի տարբեր անկյուններում (Կապան, Լոռի, Արտանուջ, Ոստան, Աղթամար քաղաք-կղզի և այլն), որոնք դարձել էին տեղական առևտրի ու արհեստագործության զգալի կետեր:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ X—XI դարերի բովանդակ Հայաստանում ամենաարագ զարգացողն Անին էր՝ Բագրատունիների հռչակված մայրաքաղաքը: Փաստական նյութի հիման վրա կտեսնենք, որ Անին ընդամենը 50—60 տարվա ընթացքում

[58] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, հ. I, 1947, էջ 25:

[59] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 13 և այլուր:

[60] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 74 և 75:

դարձել էր Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկը: Անին ամենաարագ զարգացումն ունեցել է հենց Բագրատունիների ժամանակաշրջանում: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ սելջուկյան ու շադադյան տիրապետության շրջանում քաղաքը բազմիցս ավերվելուց և ձեռքից ձեռք անցնելուց հետո՝ Զաքարյանների օրոք, նորից է բռնում բնականոն զարգացման ուղին և, XII դարի համեմատությամբ, XIII դ. առաջին տասնամյակներին հասնում բավականին բարձր մակարդակի:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես և հետագայում, Անին ֆեոդալական Հայաստանի խոշոր քաղաք էր: Անընդունելի է Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի և մյուսների այն վարկածը, որ իբր Բագրատունյաց Հայաստանում ֆեոդալական հասարակարգն արդեն քայքայվում էր և ձևավորվում էր բուրժուական հասարակարգ. «Մինչ Անիում մարում էին ֆեոդալականության վերջին ճառագայթները, Արևմուտքը նոր էր ողջունում նրա արշալույսը»,— գրում է Ն. Ադոնցը[61]: Գրեթե նույն կերպ է բնութագրում X—XI դարերի Հայաստանի հասարակարգը նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը: Նա նույնություն է տեսնում այդ դարերի Հայաստանի տնտեսական զարգացման և Արևմտյան Եվրոպայի՝ XIV—XV դարերում, այսինքն՝ ռեֆորմացիայից առաջ ունեցած վիճակի միջև[62]: Բուրժուական հարաբերություններ մեզ մոտ չէին սաղմնավորվել առավել ևս հետագայում՝ XII—XIII դարերում, ինչպես փորձում են համոզել մի շարք հեղինակներ, վկայակոչելով տնտեսական զարգացման ցուցանիշները, դրամական հարաբերությունների զարգացումը, դաղափարախոսության բնագավառում աշխարհիկ մտածողության տարրերի որոշ գերակշռությունը, ֆեոդալիզմի դեմ ուղղված գյուղացիական շարժումները և այլն[63]:

Այնպես որ մենք գործ ունենք ֆեոդալական քաղաքի պատմության հետ, զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի[64] խոշոր մայրաքաղաքի և արհեստագործության ու առևտրի նշանավոր կենտրոնի պատմության հետ:

Իբրև ամփոփում մեջ բերենք Կ. Մարքսի հետևյալ հուշող եզ-

[61] Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 48:

[62] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 40:

[63] Н. Я. Марр, Ани, էջ 35, Л. Оганесян, История медицины в Армении, часть II, Ереван. էջ 3—4, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 4—6: Համմ. Վ. Կ. Զալոյան, Հայկական ռենեսանս, Երևան, 1964, էջ 17 և այլն:

[64] Ըստ հայ ժողովրդի պատմության նորագույն, ընդունված ժամանակագրության, IX—XIII դարերը համարվում են զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջան:

րահանգումը. «Թեև կապիտալիստական արտադրության առաջին սաղմերը սպորադիկ կերպով հանդիպում են արդեն XIV ու XV դարերում Միջերկրական ծովի առանձին քաղաքներում, բայց և այնպես կապիտալիստական դարագլուխն սկսվում է միայն XVI դարից։ Այնտեղ, որտեղ սկսվում է նա, վաղուց արդեն ոչնչացել է ճորտատիրությունը, և արդեն զգալիորեն թոշնել է միջնադարի ամենավառ ծաղիկը—ազատ քաղաքները»[65]։

Մի՞թե ակնհայտ չէ, որ Հայաստանը X—XIII դարերում շատ հեռու էր այդ վիճակից և սոսկ տիպիկ ֆեոդալական երկիր էր՝ ֆեոդալական քաղաքներով, որոնցից խոշորները ձեռք էին բերել որոշ ինքնավարություն։

Բ. Անի մայրաքաղաքի արհեստագործությունը X—XI դդ.

922 թվականից հաստատված երկարատև խաղաղության, երկրի տնտեսական կյանքի ընդհանուր առաջադիմության, ներքին ու արտաքին առևտրի ծավալման, դրամական հարաբերությունների զարգացման շնորհիվ, քաղաքական անկախության պայմաններում X—XI դարերում մեծ առաջընթաց են ապրում նաև արհեստները։ Դրանք նախորդ ժամանակների համեմատությամբ հասել էին ավելի բարձր վարպետության և աստիճանաբար կենտրոնանում էին քաղաքում, որպես քաղաքային արհեստագործություն։ Ուրիշ կերպ ասած, քաղաքն աստիճանաբար դառնում էր արհեստագործության ու առևտրի կենտրոն։ Այդ կարգի քաղաքներից էին Անին, Դվինը, Արծնը, Կարսը, Խլաթը և այլն։ Իբրև արագ ընդարձակվող մայրաքաղաք, բազմամարդ բնակավայր ու միջազգային առևտրի կենտրոն, Անիում արհեստագործական արտադրանքների մեծ պահանջարկ կար, սկսած տնային գործածության իրերից՝ հասարակ կավե ամանեղենից և հագուստից, գյուղատնտեսական ու արհեստավորական գործիքներից, զենքերից ու զինամթերքներից և վերջացրած մետաքսե ընտիր գործվածքներով ու գորգերով, ոսկերչական ու արծաթագործական զարդերով, եկեղեցական սպասքով և այլ բազմատեսակ առարկաներով։ Անիի արհեստագործության զարգացման համար, այլ տեղերից բերվող հումքերի հետ միասին (ոսկի, արծաթ, պղինձ, հում մետաքս, անագ, փայտանյութ և այլն), կային տեղական հանքային և ոչ հանքային մի ամբողջ շարք նյութեր, որոնք մշակում էին անեցի արհեստավորները (տուֆեր, բազալտներ, պեմզա, կավեր, գյուղատնտեսական մթերքներ՝ կաշի, բուրդ, քնջութ, կտավհատ, վուշ և այլն)։

X—XI դարերի Անիի արհեստագործությունը պատմական առումով ներկայացնելն առանձնահատուկ դժվարության հետ է կապված։ Գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկություններն աղքատիկ են, իսկ պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը զանգվածորեն վերաբերում են քաղաքի պատմության համեմատաբար ուշ շրջանին, որոնց շատերի ժամանակն էլ ընդհանրապես չի ճշտված։ Մասամբ այդ նկատի ուներ Ն. Մառը, երբ գրում էր. «Մենք մեր պեղումների ընթացքում դեռևս չենք հասել մինչև այն շերտերը», որտեղ «պետք է գտնվեն այդպիսի հուշարձաններ»[66]։ Ըստ երևույթին շատ տարածվելու փոխարեն, եթե պեղումները կենտրոնացվեին ավելի սակավ թվով կետերում և թափանցվեր քաղաքի մշակութային ավելի խոշոր շերտերը, ուրիշ չէր լինի դանդատվել X—XI դարերի նյութական մշակույթի պեղածո մնացորդների սակավության վերաբերյալ։ Ինչևէ, եղած նյութերի հիման վրա կփորձենք ներկայացնել Հայոց մայրաքաղաքի այդ պատմաշրջանի արհեստագործությունը, օգտվելով նաև հետագա դարերի որոշ տվյալներից, քաջ գիտակցելով, որ միջնադարյան արհեստները բավական պահպանողական են եղել և կարճ ժամանակամիջոցում աննշան են փոփոխության ենթարկվել։

Արհեստների զարգացումը, ինչպես նկատում է Լ. Խաչիկյանը, միջնադարյան Հայաստանում «հիմնականում ընթանում էր ոչ թե գործիքների կատարելագործման ուղիով, այլ առաջին հերթին աշխատանքի բաժանման հետագա խորացմամբ»[67]։ Նա այդ եզրահանգմանն է եկել Գրիգոր Մագիստրոսի և XIV դարի վերջերին ու XV դարի սկզբներին ապրած Մատթեոս Ջուղայեցու՝ հյուսնության, ոսկերչության, երկաթագործության, պղնձագործության, թանկարժեք կտորներ արտադրող արհեստավորների մասին հաղորդած տեղեկություններից[68]։ Ընդ որում, Գրիգոր Մագիստրոսի վկայությունը ժամանակագրական տեսակետից (XI դ. առաջին կես) ուղղակի վերաբերում է մեզ հետաքրքրող շրջանին։ Ահա թե ինչ է ասում այդ գիտուն հեղինակը ժամանակի Պետրոս կաթողիկոսին (Պետրոս Գետադարձին) ուղղված նամակներից մեկում. «...Ըստ

[65] К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, т. I, 1947, ст. 26.

[66] Н. Я. Марр. Ани, էջ 128, ձեռագրություն 165 а։

[67] Լ. Խաչիկյան. Արհեստագործության վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում X—XIV դարերում (Առանձնատիպ ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. «Տեղեկագրից», Երևան, 1958, № 3, էջ 36)։

[68] Նույն տեղը։

օրէն հիւանաց, որք արհեստին են մակացուք, ոչ նախուստ յանտառս կա ի մայրս ճեպին հատանել փայտս, քանզի այլ ոք են պարապեալ այնոցիկ, և այլ, որք հարթեն և սղոցեն, և ապա ծայրագոյնքն՝ ճախարակօք և այլովք գործարանօք գեղապանձ զնոսա յարդարեն գահուրակս և աթոռս և այլ ինչ գործարանս: Այսպէս և որք ոսկւոյն են պարապեալք և երկաթոյ և պղնձոյ»[69]:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Մագիստրոսի՝ բառիս իսկական իմաստով խոր տնտեսագիտական հաղորդման մեջ խոսվում է և՛ արհեստների ճյուղավորման, և՛ դրանց ներսում աշխատանքի բաժանման խորացման, և՛ կատարելագործված գործիքների (ճախարակի) առկայության, և՛ բարձրորակ իրերի արտադրության մասին: Նրա ասելով՝ փաստորեն հյուսնությունը երեք տարբեր արհեստների էր բաժանվում՝ վայրի ծառ կտրողներից ու փայտանյութ պատրաստողներից, այդ փայտանյութը հարթողներից ու սղոցողներից և, վերջապես, բուն հյուսներից (կամ ատաղձագործ), որոնք արդեն սղոցած ու հարթված փայտանյութերից արտադրում էին գեղեցիկ «գահուրակ»-ներ, աթոռներ և այլ ապրանքներ՝ «ճախարակ»-ների և այլ «գործարան»-ների (գործիքների) միջոցով: Հյուսնության մասին այդքան որոշակի ու համեմատաբար մանրամասն հաղորդելուց հետո, նա նշում է, որ նույն վիճակը գոյություն ուներ նաև ոսկերչության, երկաթագործության և պղնձագործության մեջ: Միանգամայն հասկանալի է, որ երկաթից, պղնձից կամ ոսկուց պատրաստի իրեր արտադրելու համար հումքը պետք է վերամշակվեր մի քանի օղակներում, մինչև որ հատներ պատրաստի իրեր արտադրող բուն ոսկերչին, դարբնին, զինագործին կամ պղնձէ ամանեղեն արտադրողներին:

Անիի պեղումներից հայտնաբերված իրերի մնացորդները, պատմագիրների հաղորդած տեղեկությունները, վիմագիր արձանագրությունների նյութերը ցույց են տալիս, որ քաղաքային մի շարք արհեստներ (զինագործություն, ջուլհակություն, գորգագործություն, ասեղնագործություն, կավագործություն, փայտագործության և այլն) հասել էին բավականին բարձր զարգացման և դրանց արտադրած ապրանքների մի մասը արտահանվում էր զանազան երկրներ:

Անիում հայտնաբերված արհեստավորական գործիքների հավաքածուն շատ աղքատիկ է և հնարավորություն չի տալիս բնութագրել արհեստավորների օգտագործած գործիքների զարգացման աստիճանը: Այդ բացը մասամբ լրացվում է Բ. Առաքելյանի և Վ. Աբրահամյանի՝ միջնադարյան Հայաստանի արհեստներին վերաբերող ուսումնասիրությունների շնորհիվ[70], որոնց մեջ նկարագրված են, IX—XIII դարերի Հայաստանի արհեստավորական մի ամբողջ շարք գործիքներ՝ իրենց տեխնիկական բնութագրերով հանդերձ: Միայն պետք է նկատել, որ արհեստները մասնատվելով, նույն արհեստի մեջ աշխատանքի բաժանման խորացմամբ գործիքներն էլ ենթարկվել են փոփոխման՝ ասենք, օրինակ, դարբնի նախնական ամենաշեն գործիքներին փոխարինել են դարբնության մասնատումից առաջացած փականագործի, զինագործի և մյուսների ավելի մասնագիտացված գործիքները:

Արհեստագործության վարպետության բարձրացման, արհեստավորական արտադրանքների բարելավման, ինչպես և արհեստավորների տնտեսական-իրավական վիճակի մասնակի լավացման համար հանրահայտ էր արհեստավորական եղբայրությունների (որ հետագայում սովորաբար կոչվեցին համքարություններ և էսնաֆություններ) խաղացած դերը: Եվրոպայում այդ կարգի արհեստավորական-արտադրական կազմակերպությունները՝ ցեխերը, ծագել են XI և XII դարերի սահմանագլխին, որպես քայքայվող բնատնտեսության և ճորտատիրությունից ազատ արհեստավորների երևան գալու արդյունք[71]: Լուծված կարելի է համարել նաև համքարությունների ծագման հարցը Հայաստանում: Բոլոր այն հեղինակները, ովքեր զբաղվել են Հայաստանի արհեստագործության պատմությամբ, համքարությունների առաջացումն ընդհանուր առմամբ կապում են Բագրատունյաց թագավորության ժամանակների հետ[72]: Դրանց կրոնական և որոշ արտադրական սո-

---

[69] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 9:

[70] Տե՛ս Բարկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, հ. I, 1958, հ. II, 1964, Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956:

[71] А. К. Дживелегов, Средневековые города Западной Европы, С.-Петербург, 1902, էջ 169:

[72] С. А. Елиазаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II, Городские цехи, введение. էջ XXXVII—XXXIX, П. Шаншиев. Два слова об амкаре, Тифлис, 1875, Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, էջ 16—17, Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883. Я. А. Манандян, О торговле и городах Армении.., էջ 232—233, Բարկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 1, Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., էջ 240—241, Լ. Խաչիկյան, Արհեստագործության վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում X—XIV դարերում, ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 49, Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան, 1959, էջ 55—56 և այլուր:

վորությունները գալիս էին տակավին հին ժամանակներից՝ ավանդույթի ձևով: X—XI դարերում համքարությունները կազմավորվելուց հետո նույնպես մեծամասամբ ղեկավարվում էին ավանդույթների հիման վրա, իսկ շատերը մինչև վերջ էլ ընդհանրապես չեն ունեցել իրենց գրավոր օրենքները:

Եթե X—XI դարերի Հայաստանի մյուս քաղաքներում արհեստավորական եղբայրությունների մասին խոսվում է անուղղակի նյութերի կամ ավելի ուշ ժամանակներին վերաբերող հիշատակությունների հիման վրա, այն էլ միայն հավանական ենթադրությունների շրջանակներում, ապա Անիի արհեստավորական և առևտրական եղբայրությունների մասին կան ավելի արժանահավատ տեղեկություններ, որոնք հաղորդվում են հիմնականում վիմագիր արձանագրությունների մեջ: Ըստ վիմագիր արձանագրությունների, Անիում գոյություն են ունեցել այդ եղբայրությունների անունով մի շարք փողոցներ՝ Դարբնոց (ս. Գրիգոր Լկեղեցու մոտակայքում), Բազնոց, Կոշկակարոց, Նալպանդնոց, Փոլկարարոց (?) փողոցներ, Կատունոց (ըստ Ղ. Ալիշանի ենթադրության պարսկերեն քյուղադ կոչված լայն ղռնստ կարողներ), Դատակկարոց խանութ և այլն[73]: Այո՛, իրենց գոյության ամբողջ ընթացքում համքարություններից յուրաքանչյուրը, որ կազմված էր միևնույն տեսակի արհեստավորներից կամ առևտրականներից, զբաղեցնում էր քաղաքի որևէ փողոց, փողոցի մի հատված, նրբանցք, շարք կամ թաղամաս, որ և սովորաբար կոչվում էր տվյալ համքարության անունով: Արհեստը ժառանգաբար անցնում էր հորից որդուն, իսկ եղբայրության պաշտոնական անձինք ընտրովի էին[74]:

Արհեստավորական այդ եղբայրությունների մեջ միանգամայն տարբեր դիրք ու իրավիճակ ունեին վարպետներն ու աշակերտները: Դրանց իրավական փոխադարձ հարաբերություններն իրենց արտահայտությունն են գտել նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում[75], ըստ որի վարպետն աշակերտին սովորեցնելու համար իրավունք չուներ վարձ վերցնելու: Սակայն դրա փոխարեն աշակերտը որակավորում ստանալուց հետո պարտավոր էր իր վարպետին տալ հատուկ նվերներ, մի սովորույթ, որ Անդրկովկասի և հարևան երկրների համքարությունների կյանքում ուժի մեջ մնաց ընդհուպ մինչև վերջիններիս վերացումը[76]:

[73] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 89:

[74] **Н. Я. Марр,** Кавказский культурный мир и Армения, էջ 16—17.

[75] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, էջ 233—234:

[76] **С. А. Егиазаров,** Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, введение, էջ XXXIX:

Իրավական որոշ հարաբերություններ էին ձևավորվել նաև եղբայրությունների և նույն եղբայրության մեջ մտնող վարպետների միջև: Լ. Խաչիկյանը ենթադրում է, որ արհեստավորների միջև ծագած վեճերի համաձայնեցման համար էին հիմնականում ծառայում քաղաքներում առաջացած «ծերոց ատեան»-ներ կոչված դատական մարմինները[77]:

Թե՛ արհեստավորական և թե՛ առևտրական եղբայրությունների անդամները հարկատու էին: Մխիթար Գոշի Դատաստանագրքում դրանցից վերցվող հարկի մասին կա հատուկ հոդված[78]:

Համքարությունների, մասնավորապես Անիի X—XI դարերի արհեստավորական եղբայրությունների արտադրական ու ոչ արտադրական սովորույթների ու կանոնների վերաբերյալ գրավոր ուրիշ տեղեկություններ չկան: Եղած հիշատակությունները հաջորդ ժամանակներին են վերաբերում և քննարկման առարկա կարող են դառնալ հետագայում: Անշուշտ, արհեստավորները ոչ բոլորն էին ընդգրկված եղբայրությունների մեջ:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում արհեստավորների աշխատանքի վարձատրման հետ կապված հարցը: Մխիթար Գոշի Դատաստանագրքի 114-րդ հոդվածում ասված է այն մասին, որ արհեստավորները կարող էին աշխատել և՛ դրամով («վարձով»), և՛ «հատվածով»[79], այսինքն՝ պատվիրատուի տված հումքի մի մասով: Վարձատրման այդ երկու ձևի մասին Լ. Խաչիկյանը Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից վկայակոչում է XII—XIV դարերին վերաբերող մի քանի փաստեր, որոնք հաստատում են արհեստավորների աշխատանքը վարձատրելու այդ երկու եղանակի գոյությունը[80]:

Պեղումների շնորհիվ Անիում հայտնաբերվել են մեծ քանակությամբ արհեստավորական արտադրանքների մնացորդներ՝ բրուտագործական ամենատարբեր տեսակի ամաններ ու անոթներ, ապակագործական, ոսկերչական, մանածագործական, դարբնոցային և այլ արհեստագործական իրեր, որոնց մեծագույն մասը տեղական արտադրանքն է: Դրանց մի մասը, անշուշտ, բաժին է ընկնում X—XI դարերին: Վիմագիր արձանագրություններում, ժամանակագրների ու պատմագիրների աշխատություններում, հիշատակարաններում և այլ աղբյուրներում հիշատակված Անիի ար-

[77] Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 41:

[78] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, էջ 299—319:

[79] Նույն տեղը, էջ 273—278:

[80] Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Հաս. գիտութ. «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 48:

հեստների թիվը մոտ 40-ի է հասնում, որի մեծ մասը, անշուշտ Բագրատունիների թագավորության շրջանում արդեն գոյություն ուներ և, հավանաբար, զանգվածորեն համախմբված էր արհեստավորական եղբայրությունների մեջ։ Տարբեր աղբյուրներում հիշատակություն կա նաև քաղաքի արհեստանոցների մասին։ Սակայն ինչպես հետագա դարերում, այնպես էլ մանավանդ միջնադարում արհեստավորի արհեստանոցն ու առևտրականի կրպակն իրարից ոչնչով չէին տարբերվում։ Այնպես որ աղբյուրներում հիշատակվող կրպակը կարող էր լինել և՛ արհեստանոց, և՛ խանութ։

Անիում տարածված արհեստներից էին մետաղամշակման հետ կապված՝ դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունն ու արծաթագործությունը, պղնձագործությունը, անագազօծությունը, տեքստիլ արհեստներից՝ մանածագործությունը, ջուլհակությունը, գորգագործությունը, ներկարարությունը, ասեղնագործությունը, ինչպես նաև դերձակությունը, գդակագործությունը և այլն, շինարարական և դրա հետ կապված արհեստներից՝ քարտաշությունը, որմնադրությունը, ծեփագործությունը, ներկարարությունը, հյուսնությունը (նաև առաղձագործությունը), ճրագկալներ, ջահեր և ապակյա իրեր արտադրող արհեստագործությունը, կավագործությունը լայն առումով (որի մեջ մտնում էին մի ամբողջ շարք արհեստներ), լարարարությունը, փոլկարարությունը, որի բնույթը հայտնի չէ, գրաստային տրանսպորտի և հեծյալ բանակի կարիքները բավարարող կաշեգործությունը, համեստագործությունը, պայտարարությունը, ձեռագրերի ստեղծման հետ կապված բազմաթիվ արհեստներ՝ սկսած մագաղաթ (կամ թուղթ) պատրաստելուց մինչև ձեռագիր մատյանի ձևավորումն ու կազմելը ներառյալ։

Նեղ տնտեսագիտական առումով քաղաքում կային նաև այնպիսի արտադրական ձեռնարկություններ, որոնց չի կարելի նույնացնել բուն արհեստների հետ։ Դրանք ձիթհանքերն ու ջրաղացներն էին, որոնք ավելի շուտ որոշ առումով հարում էին տնայնագործական տիպի ձեռնարկություններին։

Արդ, փորձենք համառոտակի ներկայացնել Անիի X—XI դարերի կարևոր արհեստները և ձիթհանքերն ու ջրաղացները, մեր շարադրանքն սկսելով վերջիններից։

Արձանագրություններում հիշատակված և երկարամյա պեղումների ընթացքում հայտնաբերված ձիթհանքերի թիվն Անիում հասնում էր 20-ի։ Դա բավական մեծ թիվ է։ Բոլոր ուսումնասիրողներն այն կարծիքին են, որ ձիթհանքերը սովորաբար կառուցվում էին եկեղեցիներին կից, կամ դրանց էին նվիրվում զանազան

մարդկանց կողմից և դրանց արտադրած ձեթով լուսավորում էին եկեղեցիները[81]։

Որ ձեթի ճրագով էին լուսավորվում եկեղեցիները երեկոյան և, մասամբ, առավոտյան ժամերգությունների ժամանակ, կասկածից վեր է։ Միանգամայն հասկանալի է, որ մի քաղաքում տասնյակ ձիթհանքերի արտադրած ձեթը, դրանից բացի, օգտագործվում էր նաև այլ նպատակներով՝ սննդի մեջ, Այրային Անիի «քարտուն»-ները, ինչպես և քաղաքի բնակելի շենքերը լուսավորելու համար։ Սակայն ինչպես երևում է, եկեղեցին այդ բնագավառում մի տեսակ մոնոպոլ դիրք էր գրավում։ Հնարավոր է, որ պասերի ժամանակ եկեղեցին իր ունեցած ձեթի մի մասը վաճառում էր քաղաքացիներին՝ սննդի մեջ օգտագործելու համար։



Ջիթհանք

Ն. Մառը, որ մանրամասն նկարագրել է Անիի ձիթհանքերից մեկը, առանց կասկածանքի ձեթի համար հումք է համարել կտավհատը (գանգրավոր վուշը)[82], թեպետև դրա մնացորդներից չեն հայտնաբերվել։ Շիրակի դաշտը, որտեղից քաղաքն ստանում էր իր ձեթի հումքը, իրոք որ կտավհատով շատ հայտնի էր։ Սակայն բացառված չէր, որ այստեղ կարող էին ձեթ ստանալ նաև քնջութից, որի մշակույթն այնքան մեծ տարածում էր գտել երկրի բոլոր գավառներում ու կլիմայական ամենատարբեր գոտիներում։

---

[81] Տե՛ս, օրինակ՝ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 88։

[82] Н. Я. Марр, Ани, էջ 117։

Ն. Մառի պեղած ձիթհանքը գտնվում էր ս. Սարգիս եկեղեցու մոտ և նրա ասելով քաղաքի «ամենախոշորներից չէր, բայց նրանում պահպանվել էին հետաքրքիր մասեր»՝ գերանի համար պատրաստված լամբը (փոսը), դրա տակ սարքված միանգամայն դատարկ փոսը, որտեղ տեղավորում էին կարասը կամ շանը և ստացված ձեթը լցվում էր դրա մեջ, վառարանը (մեծ թավան, սաջը), որի վրա չորացնում էին հումքը՝ կտավհատը (կամ քընջութը), ամբողջական քարե հսկա անիվ, քարե մեծ կոշտերից պատրաստված շրջան, որի վրա դրված է եղել եղան օգնությամբ պտտվող քարը և այլն[83]: Ձիթհանքի ավերակների նկարագրությունից պարզվում է, որ դարեր շարունակ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող այդ տնայնագործական ձեռնարկության «տեխնիկական» վիճակը էական փոփոխության չի ենթարկվել: Ճարտարապետների վկայությամբ դարեր շարունակ՝ ընդհուպ մինչև XVII—XVIII դարերը, կայուն են եղել և դրանց արտադրական շենքերի տեսակները՝ միայն այն տարբերությամբ, որ ուշ միջնադարյան ձիթհանքերը մեծամասամբ բաղկացած էին մի քանի սենյակներից, որոնցից յուրաքանչյուրում կազմակերպվում էր արտադրական առանձին պրոցես»[84]: Հետևապես տեխնիկական և կառուցողական առումով X—XI և XII—XIII դարերի ձիթհանքերն իրարից ամենևին չէին տարբերվում:

Ն. Մառի կողմից ս. Սարգիս եկեղեցու մոտ պեղած այդ ձիթհանքից բացի, ձիթհանքեր են հիշատակվում նաև ս. Փրկիչ եկեղեցու մոտ[85], քաղաքային պարսպի Կարինի դռան մոտակայքում և այլուր[86], որոնք վերաբերում են տարբեր ժամանակների:

Ձիթհանքերի նման տնայնագործական տիպի ձեռնարկություններ էին նաև ջրաղացները, միայն այն տարբերությամբ, որ վերջիններիս շարժիչ ուժը հոսող ջուրն էր, և եթե ձիթհանքերում սովորաբար մի քանի մարդ էր աշխատում, ապա ջրաղացում միայն մեկ ջրաղացպան կարող էր լինել: Դրանք իրարից տարբերվում էին նաև այսպես կոչված տեղաբաշխմամբ: Ձիթհանքերը կարող էին տեղադրվել քաղաքի ցանկացած կետում, իսկ ջրաղացները՝ միայն շարժող ուժի աղբյուրի մոտ՝ գետակների ափերին կամ մոտակայքում:

Վիմագիր արձանագրությունների մեջ բազմիցս հիշատակ-


[83] Նույն տեղը, էջ 117—118:

[84] Վաղագյատ Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 82:

[85] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, էջ 44—45:

[86] Գ. Ալիշան, Շիրակ, էջ 86 և 88:

վում են Անիում գտնվող ջրաղացների մասին: Հավանաբար ջրաղացներն էլ այստեղ տասնյակների էին հասնում և տեխնիկապես հար ու նման էին ուշ միջնադարի (և նույնիսկ նոր ժամանակների) ջրաղացներին: Ջրաղացների դիրքի վերաբերյալ քիչ տեղեկություններ կան, միայն նշվում է, որ Հատորնիկ անունով ջրաղացը գտնվում էր Գայլեձորում և դրան հարակից էր Գունիճանց տոհմի ջրաղացը[87]: Անիի հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում Գայլեձորում, Մաղկոցաձորում, քաղաքի Արտաքին պարսպի մոտակայքում, պաշտպանական ջրափոսի երկայնքով նկատվել են ջրաղացների մնացորդներ, իսկ քաղաքի տարբեր տեղերում՝ ս. Սարգիս եկեղեցու մոտ[88] և այլ տեղերում՝ այլուրի կամ հացահատիկի շտեմարաններ ու հորեր, որոնք ավանդույթի ուժով պահպանվել են պատմական հետագա ժամանակաշրջաններում:



Բրոնզե չաե գտնված Դագկաշեն տաճարում

Հայտնի է, որ դարբնությունը մետաղամշակության հետ կապված արհեստների «նախահայրն» է: Մի ամբողջ շարք արհեստներ են ծագել (գինագործություն, փականագործություն և այլն) դարբնությունից, բայց այն մինչև վերջ էլ պահպանել է իր գոյությունը: Մենք տեսանք, որ Գրիգոր Մագիստրոսի նամակներից մեկում նշվում է, որ երկաթագործության մեջ (որ առաջին հերթին պետք է հասկանալ դարբնությունը) էլ հյուսնության, պղնձագործության և ոսկերչության նման գոյություն են ունեցել արհեստի ենթաճյուղեր, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր արտադրական գործունեության շրջանակները[89]: Անիում երկաթյա իրեր համեմատաբար քիչ են հայտնաբերվել: Մեր կարծիքով դա մասամբ կարելի է բացատրել նրանով, որ երկաթը շուտ օքսիդացող


[87] Նույն տեղը, էջ 88:

[88] Н. Я. Марр, Ани, էջ 118:

[89] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 9:

մետաղ է և ժամանակի ընթացքում երկաթյա իրերը օքսիդացել-ոչնչացել են: Սակայն քաղաքում տարածված այդ արհեստը միանգամայն նյութագուրկ չի ներկայանում մեզ: Պեղումների ընթացքում հայտնաբերված գյուղատնտեսական գործիքները, պատմագիրների մոտ հիշատակված քաղաքի դարպասների դռների երկաթե գամերը և այլ արտադրանքներ դարբինների ձեռքի գործն էր:

Մետաղամշակման արհեստներից զինագործությունն ուներ առաջնակարգ նշանակություն: Տասնյակ հազարների հասնող բանակի զինումը և զինամթերքով ապահովումը առաջին հերթին կատարվում էր տեղական զինագործների ջանքերով: Հնագիտական պեղումների շնորհիվ Անիում գործածված զենքերի և զինամթերքի բավական հարուստ հավաքածու է ստեղծված եղել: Սակայն «զարմանալին այն է, —գրում է հնագետ Կ. Ղաֆադարյանը,— որ մեր պատմագիրների այնքան շատ հիշատակած սակրը և սուսերը մինչև այժմ չի գտնվել ո՛չ Անիում և ո՛չ էլ Դվինում, թեև գիտենք, որ հայկական զորքի մեջ եղել են և՛ սակրավորների, և՛ սուսերավորների ամբողջ խմբեր»[90]:



Բռնգեղ բուրվառ գտնված Գագկաշեն տաճարում

Թվում է, թե հայկական զորքի զենքերի թվում «այնքան շատ հիշատակված» սակրի ու սուսերի բացակայությունը այնքան էլ էական չէ: Կարևորն այն է, որ և՛ Դվինում, և՛ Անիում գտածո զենքի տեսակները բազմաթիվ են ու բավական բազմազան:

Հնագիտական պեղումներով ի հայտ եկած պղնձե մեծ քանակությամբ իրերը, որոնց մեծագույն մասը տեղական ծագումի էր,

[90] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, էջ 165:

հիմք են տալիս ենթադրելու, որ Անիում զարգացած էր նաև մետաղամշակման այդ արհեստագործությունը՝ պղնձագործությունը: Հայտնաբերված են տնային գործածության իրեր՝ թավաներ, գդալիկներ, պղնձե ամաններ ու կաթսաներ, տարբեր մեծության խաչեր, ջահեր և այլ իրեր[91]: Պղնձագործության հետ սերտորեն կապված էր անագապատումը:

Գրավոր աղբյուրների տեղեկություններից ու կատարված նկարագրություններից երևում է, որ Անիում տարածված արհեստներից էին նաև ոսկերչությունն ու արծաթագործությունը: Այդ են վկայում եկեղեցական ոսկե ու արծաթե սպասքների, արքունական ու իշխանական պալատների ոսկեզօծ զահլիճների, հասարակության բարձր խավի ներկայացուցիչների՝ հատկապես կանանց ոսկե ու արծաթե զարդերի մասին եղած նկարագրությունները, որոնք այնքան ընդգծված չափազանցությամբ կատարել են ժամանակակից պատմագիրները: Հատկանշական է, որ Անիի պեղումների ընթացքում ոսկե կամ արծաթե առարկաներ ու իրեր չեն հայտնաբերվել և Կ. Ղաֆադարյանը զարմանքով է նշում այդ մասին[92]: Սակայն զարմանալու ոչինչ չկա: Մինչև հնագետի բահն ու բրիչը ավերակ քաղաքում գործելը հարյուրամյակներ շարունակ «ջանասիրաբար» փորփրել են գանձագողերը և առաջին հերթին կողոպտել ոսկուց ու արծաթից պատրաստած առարկաներն ու իրերը: Գրիգոր Մագիստրոսից վերը վկայակոչվածից երևում է[93], որ ոսկերչությունը XI դարի առաջին կեսի Հայաստանում տիպիկ քաղաքային արհեստագործություն էր, մի քանի նեղ մասնագիտությունների (ենթաարհեստների) բաժանված մի արհեստագործություն, որի արտադրանքների համար հավանաբար միշտ էլ մեծ պահանջարկ կար և՛ հոգևոր շրջաններում, և՛ բարձր աղնվականության մոտ ու արքունիքում:

Զարդարանքների թվին են պատկանում նաև այլակե տարբեր

[91] Տե՛ս **Н. Марр.** О раскопках и работах в Ани летом 1906 года. С.-Петербург, 1907. *Էջ 48—49,* **Թ. Թորամանյան,** *Նյութեր հայ հարտարապետության պատմության, աշխ. ժող., էջ 370,* **Կ. Ղաֆադարյան,** *Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1-ին, էջ 167—168 և այլուր:*

[92] Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքն ու նրա պեղումները, հ. 1-ին, էջ 178, Միջնադարյան Հայաստանի արծաթագործությանն է նվիրված* **Ա. Յա. Կակովկինի** *հատուկ ուսումնասիրությունը* («Памятники армянского художественного серебра XI—XV вв.». автореферат, Ленинград, 1970), *որտեղ նա փաստական նյութերի հիման վրա ցույց է տվել, որ Անին Հայաստանի մի շարք քաղաքների ու վանքերի հետ միասին եղել է ոսկերչական ու արծաթագործական արհեստագործությունների նշանավոր կենտրոններից:*

[93] **Գրիգոր Մագիստրոսի** *Թղթերը, էջ 9:*

ուլունքները, ապարանջանները, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են պեղումների ընթացքում[94]: Ընդ որում 1907 թվականին հայտնաբերված ապարանջանները գրեթե վնասված չեն: Անիում հանդիպում են տարբեր գույնի՝ կանաչ, կապույտ, սև և դեղին ապարանջաններ[95], որոնք պատրաստված են բարձր վարպետությամբ: Այնպես որ ապակեգործությունը մայրաքաղաքի հայտնի արհեստներից էր: Անիի ապակեգործներն արտադրում էին նաև սրվակներ, գավաթներ, բաժակներ, գունավոր նախշավոր անոթներ և նույնիսկ բյուրեղապակյա իրեր: Լինչը վկայում է, որ ինքը էջմիածնում եղած ժամանակ իրեն ցույց են տվել Բագրատունիների շրջանի բյուրեղապակյա խաչ, ինչպես և մի ուրիշ խաչ, որը, ինչպես տեղում են ասել, վերցված է եղել Անիից[96]:

Մեծ խումբ են կազմում տեքստիլ արհեստագործություններն ու դրանց հետ սերտորեն առնչված մյուս արհեստները: Դրանց մեջ ամենից տարածվածները, անշուշտ, մանածագործությունն ու ջուլհակությունն էին, որոնք նաև գյուղական արհեստներ էին և գոյություն ունեին շատ թե քիչ նշանակալի բոլոր բնակավայրերում: Անին Դվինի, Կարինի, Երզնկայի և Վանի հետ համարվում է Հայաստանի IX—XIII դարերի մանածագործության խոշոր կենտրոնը[97]: Այստեղի մանածագործները թել էին մանում բամբակից, բրդից, վուշից և մետաքսից: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են բամբակե գործվածքի, մետաքսե զգեստի, ոսկեթելով նախշված սփռոցի, կապերտի և այլ գործվածքների մնացորդներ[98]: Մանկական դամբարաններից մեկում հայտնաբերվել են իրար վրա հագցրած մետաքսե զգեստներ, մետաքսե գործվածքի մի կտոր էլ հայտնաբերվել է իշխանական դամբարաններից մեկում, իսկ Ծաղկոցաձորի իշխանական դամբարանում ի հայտ է եկել կարմիր, դեղին և շագանակագույն թելից գործված մի զարդարուն դեկորատիվ կապերտի կտոր, որտեղ օգտագործված է եղել նաև վուշե թել[99]: Այնպես որ Անին նուրբ գործվածքներ արտադրող հայտնի քաղաքներից էր, իսկ այդպիսիները, հատկապես մետաքսաթել գործվածքները, ինչպես երևում է Ասողիկի մի վկայությունից, լայն տարածում ունեին X—XI դարերի Հայաստանում,

[94] Н. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 48:
[95] Նույն տեղը:
[96] Лянч, Армения, т. I, Тифлис, 1910, ст. 348:
[97] Վ. Ա. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.*, էջ 174:
[98] Նույն տեղը, էջ 180:
[99] Նույն տեղը, էջ 182:

հատկապես մայրաքաղաք Անիում[100], որտեղ կերպասագործները կազմում էին հատուկ արհեստավորական (կամ առևտրական) եղբայրություն՝ «բազզնոց»:

Թորոս Թորամանյանը պատմում է, որ իր ծննդավայրի՝ Շապինգարահիսարի շրջանի Թամարզա քաղաքի բնակիչները, որոնց նախնիները ամբողջությամբ Անիի գաղթականներից էին, հատուկ հակում ունեին դեպի «ոստայնանկությունը» և այդ բնագավառում հասել էին մեծ վարպետության: Ականավոր հայագետը դրանով ուզում է ասել, որ միջնադարյան Անիի այդ արհեստի ավանդույթները պահպանվել էին մինչև նոր ժամանակները[101]:

Հայաստանը արտաքին շուկայում միշտ էլ լավ համբավ է ունեցել իր գորգերով: Առևտրի վերաբերյալ խոսելիս կտեսնենք, որ X—XI դարերի աղբյուրներում հիացմունքով է խոսվում հայկական գորգերի մասին: Դրանք իրենց զարդերով, գույներով, գործվածքի որակով համարվում էին առաջնակարգ և շուկաներում ունեին շատ բարձր գին: Անիում կատարված պեղումների ընթացքում կապերտների մնացորդների հետ նշմարվել են նաև գորգերի հետքեր: Ենթադրվում է, որ պալատական սենյակների մի մասի ներսի պատերը ծածկում էին թանկարժեք գորգերով, որոնք արտադրում էին տեղի արհեստավորները:

Ձևագործությունն իբրև արհեստ վաղ ծագում ունի. գյուղի, ավանի, քաղաքի բնակիչները դրանով սկզբնապես զբաղվում էին որպես երկրորդական գործ, ազատ ժամանակի զբաղմունք: Սակայն քաղաքային կյանքի զարգացմամբ, հասարակության բարձր խավերի պահանջմունքի ավելացմամբ ձևագործությունն էլ, ուրիշ մի շարք զբաղմունքների նման, ձևավորվում է իբրև ինքնուրույն արհեստ, որը սերտորեն առնչվում է ջուլհակության, դերձակության և այլ արհեստների հետ: Արդարացի է վ. Ա. Աբրահամյանը, երբ նշելով ոսկեթել նուրբ ասեղնագործության մասին մեր պատմագիրների վկայությունները, Անիից հայտնաբերված «նուրբ ձևագործների նմուշները», ՀՍՍՀ պատմության թանգարանի ազգագրական նյութերը և էջմիածնին ու մյուս վանքերին ու եկեղեցիներին տարբեր ժամանակներում նվիրված ձևագործական ընտիր ցուցանմուշները՝ գալիս է այն եզրակացության, որ ձևագործությունը միջնադարյան Հայաստանի զարգացած արհեստներից էր և սերտորեն կապված էր գործվածքների (մենք կասենք՝ հատ-

[100] Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական*, էջ 161:
[101] Թ. Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտ. պատմության, աշխ., ժող.*, էջ 373:

կապես նուրբ գործվածքների) արտադրության հետ[102]։ Ըստ երեվույթին այդ արհեստի ամենանշանավոր կենտրոնն Անին էր, որտեղ պեղումների ընթացքում, ինչպես ասվեց, գտնվել են դրա զանազան արտադրանքների մնացորդները։ Կ. Ղաֆադարյանը ենթադրում է, որ Դվինում և Անիում հայտնաբերված բավական քանակությամբ ոսկորե սրածայր ու տափակ առարկաները եղել են ձեռագործի գործիքներ[103]։

Կան արհեստներ, որոնց գոյությունը քաղաքում (այն էլ Անիի նման խոշոր քաղաքներում) պարտադիր է։ Այդպիսի արհեստների թվին է պատկանում նաև դերձակությունը։ Բնակչության հագուստի պահանջը բավարարելու, զորքը հանդերձավորելու համար պահանջվում էին բավական թվով դերձակներ, որոնք, ըստ երևույթին, մասնագիտացել էին արտադրական լայն ընդգրկումի այդ արհեստի տարբեր ճյուղերում։ Այս տեսակետից հավանական կարելի է համարել Ղ. Ալիշանի այն ենթադրությունը, թե Անիում իրենց անվան փողոց ունեցող (Կատունոց)՝ արհեստավորական եղբայրություն կազմող արհեստավորները դերձակներ էին, որոնք կարում էին պարսկերեն քյուդադ («քիւտատ») կոչված լայն զգեստներ[104]։ Անիում դերձակության գոյության և լայն տարածման նյութական ապացույցներն այն տարբեր տեսակի հագուստներն ու դրանց մնացորդներն են, որ բավական քանակությամբ գտնվել են հնագիտական հետազոտությունների ընթացքում։

Որ դերձակությունը բաժանված էր ճյուղերի, դրա ներսում առաջացել էին տարբեր արհեստներ, պարզ երևում է նրանից, որ Անիում գոյություն ուներ գլխարկ կարողների եղբայրություն իր հատուկ փողոցով, որ կրում էր «Գդակկարոց» անունը։ Իսկ դրանից նաև հետևում է, որ դերձակության միայն մի նեղ ճյուղը կազմող՝ գդակագործության մեջ զբաղված էին բավական մեծ թվով արհեստավորներ։

Հայաստանը բնական ներկանյութերով հայտնի երկրներից է։ Այստեղ արհեստական եղանակով զանազան ներկեր են ստացել նաև բույսերից ու կենդանիներից։ Առանձնապես մեծ հռչակ է վայելել Արարատյան դաշտի եղեգնուտներում ապրող որդի մի տեսակից ստացվող վառ կարմիր գույնի, չգունաթափվող ներկը՝ «որդան կարմիր»-ը, որի մասին այնքան գովեստով են խոսում արաբական մատենագիրները (նրանք այդ ներկը կոչում են «ալ-

[102] Վ. Ա. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.*, էջ 210։
[103] Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները*, հ. 1-ին, էջ 180։
[104] Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 89։

կըրմըզի»=վառ կարմիր)[105]։ Այդ ներկերով են ստեղծված մեր միջնադարյան մանրանկարչության անմահ կտավները, դրանցով են գրված ու նկարազարդված մեր հազարավոր ձեռագրերը։ Սակայն ներկի ամենամեծ սպառողը, եթե այդպես կարելի է արտահայտվել, եղել է ներկարարությունը, որը սերտորեն առնչվել է ջուլհակության, գորգագործության, ասեղնագործության և տեքստիլ այլ արհեստների հետ։ Անիում հայտնաբերված տեղական արտադրության կտորները և դրանցից կարված բոլոր հագուստները, անշուշտ, ներկվել են տեղում, տեղական ներկարարների կողմից։ Ցավոք, պեղումների ընթացքում ներկարարի արհեստանոց (ներկատուն) չի հայտնաբերվել։ Զարմանալի է նաև, որ Անիի ներկարարների մասին ընդհանուր առմամբ հիշատակություններ քիչ կան։ Միայն մեկ հիշատակություն կա քաղաքի վիմագիր արձանագրություններից մեկում, որտեղ այլ արհեստավորների հետ նշվում է նաև Անիի ներկարարների հարկերի վերացման մասին[106], իսկ մի այլ հիշատակություն՝ «Երազահանդ»-ում[107]։



Նախշաճանդակ փայտյա իր

Մեծ խումբ են կազմում շինարարական արհեստները՝ քարտաշությունը, որմնադրությունը, ծեփագործությունը, ներկարարությունը, հյուսնությունը։ Սրանք հավանաբար իրենց հերթին մասնատված էին ենթաճյուղերի։ Շինարարական արհեստներն այնպիսի բնույթի են, որ առանց գրավոր հիշատակությունների էլ կարելի է դրանք բնութագրել քաղաքի պահպանված շենքերի ավերակների, փայտյա մասերի մնացորդների, ծեփագործության՝ մեզ հասած նմուշների հիման վրա։ Այդ նույն շինարար վարպետների ձեռքով էր մի քանի տասնյակ տարիների ընթացքում կառուցվել Բագրատունիների չքնաղ մայրաքաղաքը։ Մեծ վարպե-

[105] *Տե՛ս* Թ. Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրություն*, էջ 292—293։
[106] *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 62։
[107] *Տե՛ս* Վ. Ա. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում IV—XVIII դարերում*, էջ 160։

տության էին հասել քարտաշներն ու որմնադիրները: Մասնագետները զարմանքով են արձանագրում դրանց ձեռքի աշխատանքի բարձր արվեստը՝ քարի մշակումը, շենքերի ու պաշտպանական պարիսպների շարվածքը, վարպետների ձեռքով կատարված քանդակները: Բոլոր ճանապարհորդներն ու մասնագետ հետազոտողները միահամուռ վկայում են, որ Անիում քարի (հատկապես տուֆի և բազալտի) շինարարական մշակումն ու պատերի շարվածքը յուրահատուկ էր այդ քաղաքի համար: Պետք է նշել, որ Շիրակի միջնադարյան քարագործ վարպետների լավագույն ավանդույթները շարունակվեցին նաև հետագայում: Եվ պատահական չէ, որ նոր ժամանակներում, ինչպես կտեսնենք, Ալեքսանդրապոլում, տեղի վարպետների ձեռքով կառուցվել է Անիի Կաթողիկե եկեղեցու կրկնօրինակը՝ ս. Խաչ եկեղեցին, որտեղ այժմ տեղավորված է Լենինականի ֆիլհարմոնիան[108]:

Կասկածից վեր է, որ քարտաշության ու որմնադրության հետ Անիի շինարարական արհեստների թվին էին պատկանում նաև ծեփագործությունն ու ներկարարությունը: Բագրատունիների թագավորության ժամանակներում նշանավոր շենքերի ներսի պատերը սովորաբար սրբատաշ քարերից էին և ծեփի կարիքը չէին զգում, կամ սովորական մշակված քարից էին և դրանք ծածկվում էին գորգերով ու կապերտներով: Իսկ սովորական խրճիթներն ընդհանրապես չէին ծեփում: Այնպես որ շատ հավանական է Ն. Մառի այն ենթադրությունը, որ պեղումների ժամանակ հայտնաբերված գիպսե ձուլածո նախշազարդերը, որոնք դրվում էին սովորաբար պատերի ներսից՝ քիվերի ուղղությամբ, ուշ ժամանակաշրջանի են՝ XII—XIII դարերի, և կպցվել են («կարկատանի» ձևով) նախկին սրբատաշ ու քանդակված քարերի վրա[109]: Սակայն առանց ծեփագործի ու ներկարարի սովորաբար շենքը չի կարելի կառուցած ավարտած համարել: Ծեփագործն ու ներկարարն աշխատանքի իրենց բաժինն ունեին հատկապես բնակելի շենքերի շինարարության մեջ:

Հյուսնությունն ավելի տարածված արհեստ էր: Հյուսների ձեռքի գործն էր մատենագիրների մոտ հիշատակվող Անիի պարիսպների մայրի փայտից պատրաստած ամուր դռները, Ախուրյանի կամուրջների փայտյա մասերը, պեղումների ընթացքում հայտնաբերված գրքակալներն ու մյուս իրերը: Գրիգոր Մագիստրոսից

[108] Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, *Սովետական Հայաստանի քաղաքները*, Երևան, 1977, էջ 73:

[109] Н. Я. Марр, Ани, էջ 70: Համմ. Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները*, հ. 1-ին, էջ 132 և 143—144:

վկայակոչված նամակի («Թուղթ») մեջ, ինչպես տեսանք, խոսվում է այն մասին, որ հյուսնի արհեստը մասնատված էր մի քանի ենթաճյուղերի, որ հյուսները, փայտանյութը նախնական մշակումից հետո, դրանից պատրաստում էին աթոռներ, գահավորակներ և այլ իրեր[110]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հյուսնությունն այն արհեստների թվին էր պատկանում, որի արտադրանքն ընդհանրապես վատ է պահպանվում: Նրա երկաթագործի ու ոսկերչի արտադրած իրերը կողոպտել են գանձ որոնող բախտախնդիրները, ապա հյուսնի պատրաստած առարկաներն էլ ճարակ են դարձել հրդեհների ու ժամանակի քայքայիչ գործունեության: Սակայն պահպանված սակավաթիվ առարկաներն էլ բավական են (Սևանի եկեղեցու փայտյա մասերը՝ խոյակներն ու դռները, Անիի Առաքելոց եկեղեցու դուռը, պեղումների ընթացքում հայտնաբերված փայտե իրերի նախշավոր բեկորները և այլն[111]), որոշակի գաղափար կազմելու այդ շրջանի հյուսնության զարգացման մասին, որի վերաբերյալ կան նաև մատենագրական անուղղակի և կցկտուր տեղեկություններ:

Հանրահայտ է հին և միջին դարերում կավագործական արհեստների տարածումը ոչ միայն քաղաքներում, այլև ավաններում, գյուղաքաղաքներում ու գյուղերում: Կավագործությունն արհեստների լայն բնագավառ է, այն իր մեջ ընդգրկում էր հասա-



Կավե գավաթ

րակ աղյուսից, կղմինդրից ու ջրի խողովակներից, թոնիրներից ու տնային գործածության կոպիտ ամաններից մինչև հախճապակի ու ճենապակի արտադրող արհեստները:

Անիում շինարարության մեջ աղյուս ամենևին չի օգտագործված: Այստեղ չեն կառուցել նաև կավակերտ տներ, ինչպես և չեն

[110] Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը*, էջ 9:

[111] Տե՛ս Վ. Ս. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.*, էջ 229:

եղել կղմինդրապատ շենքեր: Անին քարակերտ էր: Սակայն այդ ամենևին չի խանգարել կավագործական արհեստների լայն, շատ լայն զարգացմանը: Դեռևս 1906 թվականին, այսինքն՝ Անիի պեղումների ընդհատումից ավելի քան տասը տարի առաջ, Ն. Մառը գրում էր. «Ինձ հայտնի չէ ուրիշ որևէ այնպիսի վայր, որն իր մեջ գտնված ինչպես հասարակ, այնպես էլ գունավոր կավե առարկաների քանակությամբ մրցեր Անիի հետ»[112], հույս հայտնելով, որ հետագայում այդ կարգի, բայց ավելի բարձրորակ առարկաների նմուշներ (նույնիսկ անվթար մնացած վիճակում) դեռ շատ կհայտնաբերվեն[113]: Իրոք չէր սխալվում մեծ անիագետը: Հետագա տարիներին կատարված պեղումների ընթացքում Անիի կերամիկական արտադրանքների հավաքածուն հարստացավ ամենատարբեր կարգի ու որակի ջնարակած խեցեղենով: Սակայն դեռ այդ ժամանակ, 1906 թվականին միայն հիմք ընդունելով արդեն պեղած խեցեղենը և կանխատեսելով այդ կարգի նոր առարկաների հայտնաբերման հեռանկարը, Ն. Մառը կասկածանքի տակ է դնում այն տեսությունը, ըստ որի խերսոնեսում ջնարակած խեցեղենի արտադրության եղանակը իբր անցել է «Եգիպտոսից, Սիրիայի և Կովկասի վրայով, կամ Պարսկաստանից Կասպիական առևտրի միջոցով»[114]: Ն. Մառը հավանական է համարում, որ ջնարակած խեցեղենի արտադրությունը, ինչպես ցույց են տալիս Անիի պեղումներից ստացված առատ ու հարուստ նյութերը, պետք է անցած լինի Հայաստանի և Անդրկովկասի վրայով[115]:

Անիի խեցեղենի արտադրության մասին ավելի բարձր գնահատական է տվել Բ. Ա. Շելկովնիկովը, որն այն դարձրել է հատուկ մենագրության առարկա և ընդհանրացրել է այն բոլոր նյութերը, որոնք հայտնաբերվել են Ն. Մառի գլխավորությամբ կատարված պեղումների ընթացքում: Նա նշում է, որ երկարատև պեղումների ընթացքում Անիում հայտնաբերված հարստագույն խեցեղենը՝ սկսած «հասարակ և կոպիտ կավե առարկաներից մինչև նրբագույն հախճապակին ու ճենապակին» «գեղարվեստական և մշակութային-պատմական առումով հսկայական հետաքրքրություն է ներկայացնում» և դրա նշանակությունը դուրս է գալիս Կովկասի պատմության շրջանակներից՝ «լույս սփռելով Մերձավոր և Միջին Արևելքի միջնադարյան ժամանակաշրջանի գեղարվեստա-

[112] **Н. Марр,** О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 49:
[113] Նույն տեղը:
[114] Նույն տեղը, Համմ. **Н. П. Кондаков,** Русские клады, СПб, 1896, 1896, հ 1. էջ 41:
[115] **Н. Марр,** О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 49:

կան խեցեղենի պատմության մի քանի մութ կողմերի վրա»[116]: Այնուհետև նա ավելացնում է, որ Եվրոպայում ու Ամերիկայում եղած Առաջավոր Ասիայի բարձրորակ խեցեղենի նմուշները մեծամասամբ չունեն իրենց «անձնագրերը» (արտադրության տեղն ու ժամանակը) և իրենց նշանակությամբ դիջում են Անիում հայտնաբերված նշումներին[117]:



Սկաւեակ

Ավելացնելու ոչինչ չունենք: Ընդունելի են Անիի միջնադարյան խեցեղենի մասին մասնագետների այդ ենթադրություններն ու եզրահանգումները:

Ինչպես ասվեց, Անիի խեցեղենը բազմատեսակ է՝ և՛ ըստ նշանակության ու առարկաների տեսակների, և՛ ըստ գույնի ու կատարման տեխնիկայի, և՛ ըստ զարդերի ու ամրության: Նրա հավաքածուն բացառիկ հարուստ է ինչպես քանակով, այնպես էլ բազմազանությամբ: Նկատի ունենալով պատրաստման տեխնիկան, ամրությունը, գույնը և այլն, Բ. Ա. Շելկովնիկովն Անիում հայտնաբերված խեցեղենը բաժանել է 14 խմբի, որոնց մի մասն իր հերթին մասնատել է ենթախմբերի, մանրամասն նկարագրել հայտնաբերված խեցեղեն բոլոր իրերը՝ տեղական և բերովի, նշելով դրանց տեսակը, ձևը, գույնը, ամրությունը, նախշերի բնույթն ու բովանդակությունը, երեսապատումը և այլն (տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 15—64):

Անիի խեցեղենի ամենաբարձրորակ տեսակները հախճապակին,

[116] **Б. А. Шелковников,** Поливная керамика из раскопок города Ани. Ереван, 1957, էջ 5:
[117] Նույն տեղը:

ճենապակին ու ապակին էին, որոնց լավագույն տեսակները գտնվել են Բագավորական պալատում՝ հախճապակյա թասեր, բաժակներ, ջրամաններ և այլ առարկաներ: Միջնադարյան Հայաստանի հախճապակյա խեցեղենը բաժանում են երկու խմբի՝ գունավոր, փորագիր քանդակներով և սպիտակ՝ ծակոտկեն առարկաներ, որոնք թրծելու ժամանակ լցրել են թափանցիկ ջնարա-



Կարաս

կով: Դրանք բոլորը նախշազարդ են՝ գազանների, թռչնակերպ կենդանիների, ծաղիկների (հատկապես վարդի) պատկերներով, բույսերի ու երկրաչափական ձևերի փորագրություններով առարկաներ[118]: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հախճապակյա նուրբ թասերի արտադրությունը: Նկատի ունենալով, որ այս վերջինների մնացորդները հայտնաբերվել են միայն Բագրատունիների պալատում, այն էլ մի տեղ կենտրոնացած՝ հատուկ հորերում «պահեստավորված», մասնագետները ենթադրում են, որ դրանց արտադրությունը ծագել ու զարգացել է Բագրատունի թագավորների օրոք[119], իսկ հետագայում խեցեղենի այդ տեսակի արտադրությունը մայրաքաղաքում դադարել է: Մի փոքր ավելի ուշ, հավանաբար XII դարից, Անիում, ինչպես և Դվինում արտադրում էին նաև շողյուն ոսկեգույն հախճապակի, որը մի ժամանակ, անկախ նրանից, թե որտեղ է հայտնաբերված, համարում էին պարսկական արտադրանք: Անիում և Դվինում հայտնաբերվել են նաև Պարսկաստանի Ռեյ ու Սուլթանաբադ քաղաքների ոսկեգույն շողյուն հախճապակե իրերի մնացորդներ[120]:


Ըստ Կ. Ղաֆադարյանի պատմական հետաքրքիր էվոլյուցիա

[118] Վ. Ս. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.*, էջ 218—219:

[119] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները*, հ. 1-ին, էջ 219:

[120] Նույն տեղը, էջ 222 (Համմ. Э. К. Квербфельд, Керамика Ближнего Востока, Ленинград, 1947, էջ 41):

է ապրել Դվինում և Անիում հատկապես գեղարվեստական խեցեղենի արտադրությունը: Նա գրում է, որ եթե սկզբնական շրջանում այդ բնագավառում Անին ընթանում էր Դվինի հետևից, այժմ՝ աշակերտում էր նրան, ապա հետագայում առանձին բնագավառներում առաջ է անցնում[121] և դառնում գեղարվեստական խեցեղենի արտադրության ավելի հայտնի կենտրոն:



Կաթսա

Հախճապակու և ճենապակու հետ Անիում արտադրվել են նաև մեծ քանակությամբ ջնարակած և չջնարակած բազմատեսակ առարկաներ՝ տնային գործածության ամանեղեն, կարասներ, անդկամաններ և այլ իրեր: Մեծ քաղաքներում, ինչպիսիք Անին ու Դվինն էին, սովորաբար խեցեղենի արտադրության հիմնական դեմքը պրոֆեսիոնալ բրուտն էր[122], որը հասել էր բավական բարձր վարպետության, բայց բացառված չէր նաև, այսպես կոչված, տնային վարպետների գոյությունը դրանց «արվարձաններում ու չքավորական թաղերում»: Վերջիններս իրենց վարպետությամբ պրոֆեսիոնալ բրուտներին շատ էին զիջում բայց և այնպես հասարակ եղանակով պատրաստում էին ամենօրյա օգտագործվող զանազան առարկաներ՝ փարչեր, կճուճներ, կուլաներ, թոնիրներ, ճրագներ և այլն[123]:

Անիի կավագործության մեջ իր ուրույն տեղն ունի կարասների, այսպես կոչված, անդկամանների արտադրությունը: Կարա-

[121] Նույն տեղը, էջ 261:

[122] Նույն տեղը, էջ 182:

[123] Նույն տեղը:

սը մեծ կիրառություն ուներ միջնադարյան գյուղացու և քաղաքացու կյանքում։ Տարբեր ժամանակներում, տարբեր մեծությամբ, դեղարվեստական տեսակետից տարբեր որակի, տարբեր նշանակության ու տարբեր որակով պատրաստված այդ հարյուրավոր կարասները, որոնք հայտնաբերվել են հնագիտական պեղումների ընթացքում, ցույց են տալիս Անիի կավագործության մեծ ծավալը։ Եթե մյուս մանր իրերը՝ հատկապես հախճապակյա ու ճենապակյա իրերի մի մասը կարող էր ներմուծված լինել ուրիշ, երբեմն շատ հեռավոր երկրներից, ապա կարասն այն ժամանակվա տրանսպորտային պայմաններում գրեթե անհնար էր հեռավոր տարածություններ վրա տեղափոխել։ Դրանք զանգվածորեն արտադրում էին տեղում։

Մասնագետների ուշադրությունն առանձնապես գրավել են Անիի ոչ թե հասարակ, այլ դրոշմազարդ կարասները, որոնց մասին կարելի է մի քանի խոսք ասել։

Սովետական Հայաստանի տարածքում նախշազարդ կարասների բեկորներ են գտնվել Զվարթնոցում, Դաունիում, Տավուշի ու Ամբերդի բերդերում, մեծ քանակությամբ՝ Դվինում։ **Այդպիսի կարասների բեկորներ հայտնաբերված են նաև Անիում։** Անիի ու Դվինի դրոշմազարդ կարասներին հար ու նման են նաև Ադրբեջանում ու Վրաստանում հայտնաբերվածները[124]։



Կարասի նախշազարդ գոտի

Հնագետները Անիի ու Դվինի նախշազարդ կարասները սովորաբար բաժանում են երեք խմբի՝ դրոշմազարդ գոտիավոր, ուռուցիկ վերադիր կենդանապատկերներով և վերադիր զարդերով կարասների։ Անիի կարասներն ուսումնասիրող Գ. Չուբինովը վերադիր զարդերով կարասները համարում է ավելի հին, քան դրոշմազարդերովը, այն վերագրելով ուշ միջնադարին (XIII դարից հետո)։ Բացի այդ, վկայակոչելով Դաղստանի պղնձե կաթսաների և Անիի դրոշմազարդ կարասների քանդակների նմանության մասին Հ. Օրբելու արտահայտած կարծիքը, նա, առանց որևէ փաստերի, հայտարարում է, թե Անիի կարասների դրոշմազարդերը դաղստանյան կարասների դրոշմազարդերի ընդօրինակություն են[125]։ Կ. Ղաֆադարյանն անընդունելի է համարում Գ. Չուբինովի այս կարծիքը։ Նկատի ունենալով այն, որ Դվինում, իբրև ավելի հին քաղաքի, ուռուցիկ զարդերով կարասներ չեն գտնվել (այդ զարդերի ծագումը կապում են XII—XIII դարերի ճարտարապետական բարձրաքանդակների հետ), իսկ դրոշմազարդ գոտիներով կարասների բեկորները սովորաբար դուրս են գալիս քաղաքի IX—XII դարերի շերտից, նա եզրակացնում է, որ դրանք արտադրվել են հենց այդ ժամանակներում[126], այսինքն՝ հիմնականում Բագրատունիների թագավորության շրջանում, ժամանակի հարցում անընդունելի համարելով նաև Բ. Շելկովնիկովի արտահայտած կարծիքը, ըստ որի այդ կարգի կարասներն Անիում արտադրվել են ոչ թե IX—XII, այլև XII—XIII դարերում[127]։ Ընդ որում Գ. Չուբինովի այդ սխալ տեսակետները առաջինը քննադատել է Բ. Շելկովնիկովը։

Ինչ վերաբերում է հայկական ծագում ունեցող այդ կարասների դրոշմազարդերի ընդօրինակություն համարելը, որ առանց հիմքի հայտարարում է Գ. Չուբինովը, լուրջ գիտական խոսք չի կարելի համարել։ Նախ՝ Հայաստանում նախշազարդված կարասներն ավելի հին են, երկրորդ՝ Դաղստանից երբեք կարասներ չեն ներմուծվել Հայաստան և երրորդ՝ ոչ թե կաթսաների դրոշմազարդերն են ազդել կարասների դրոշմազարդերի գոտիների վրա, այլ ընդհակառակը, վերջիններից են ընդօրինակվել կաթսաների դրոշմազարդերը,— ինչպես միանգամայն իրավացիորեն նշում է Դվինի երկարամյա պեղումների ղեկավար Կ. Ղաֆադարյանը[128]։

Ինչպես երևում է, դրոշմազարդ կարասների արտադրությունն Անիում ավելի մեծ մասշտաբներ է ունեցել, քան այդ ցույց են տալիս հայտնաբերված հնագիտական նյութերը։ Անիում նույնիսկ գտնվել է դրոշմազարդ կատարելու դրոշմ, որը հավաստում է նաև

[124] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1-ին, էջ 193 և 194։

[125] **Г. Чубинов,** Декоративное убранство анийских карасов (опыт классификации), «Христианский восток», вып. I, Петроград, 1916. էջ 22—38։

[126] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1-ին, էջ 197։

[127] Տե՛ս նույն տեղը։

[128] Նույն տեղը, էջ 193—197։

այդ կարգի նախշազարդ կարասների տեղական արտադրության մասին։

Դրոշմազարդ հատարակ խեցանոթների մեջ հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պեղումների ընթացքում բավական մեծ քանակությամբ հայտնաբերված անդկամանները։ XI—XIII դարերում անդկամաններն ունեցել են աշխարհագրական տարածման լայն սահմաններ՝ դրանցից գտնվել են Միջին Ասիայում, Պարսկաստանում, Հայաստանում և Անդրկովկասում, Հարավային Ռուսաստանում և այլուր։ Ենթադրվում է, որ անդկամանները (և դրանց արտադրությունը) Փոքր Ասիա է տարված Անիի և Վասպուրականի բրուտների միջոցով[129]։ Մի ժամանակ առեղծվածային համարվող այդ անդկամանների խաղացած դերի մասին արտահայտվել են իրարամերժ մի շարք կարծիքներ, մասնագետների միջև բավական երկար ժամանակ մղվել բանավեճ։ Ոմանց կարծիքով դրանք ծառայել են իբրև հրձիգ նռնակներ. իբր թե այրող հեղուկ են լցրել դրանց մեջ և նետել թշնամու վրա, ոմանք էլ դրանք համարել են ձիթաճրագներ, մյուսները՝ փոքրիկ ջրամաններ, իսկ ոմանք էլ կարծիք են հայտնել, թե դրանք զարդարանքներ են եղել և «բիվի փոխարեն» շարել են շենքերի ճակատներին[130]։ Սակայն ժամանակի ընթացքում լուծվում է այդ առեղծվածը։ Պարզվում է, որ նեղ շուրթերով և ընդհանուր առմամբ ձվաձև այդ անոթներն օգտագործվել են օծանելիք պահելու համար։ Դրանցում պահում էին անուշահոտ յուղեր և սնդիկ, որն օգտագործել են մազերը հինա դնելու համար։

Սովետական Հայաստանի տարածքում ամենամեծ քանակությամբ անդկամաններ գտնվել են Դվինում։ Անիում հայտնաբերվածներն ավելի մեծաքանակ են և ավելի մեծ ու զարդարուն։ Միայն ինը տարվա պեղումների ընթացքում Անիում դրանցից գրանվել է 620 օրինակ[131]։ Բացի դրանից, Դվինի ու Անիի անդկամաններն իրարից տարբերվում են նաև գույնով. առաջինում գտնվածներն ընդհանուր առմամբ գորշ և կապտավուն են, իսկ Անիում հայտնաբերվածները՝ դեղնավուն։ Այդ տարբեր գույները հետևանք էին տեղում եղած հումքի՝ կավի ունեցած գույնի[132]։

Անիի պեղումների ընթացքում գտնվել են բաղմաթիվ և՛ ամ-

[129] Տե՛ս Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., էջ 215։


[130] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1-ին, էջ 204 և 207։

[131] Н. Я. Марр, Ани, էջ 96։

[132] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1-ին, էջ 204։

բողջական մնացած, և՛ ջարդված անդկամաններ։ Միայն 1911 թվականի ամռանը կատարված պեղումների ընթացքում, որ կենտրոնացած էին քաղաքի գլխավոր փողոցում, գտնվել են և՛ անվթար մնացած, և՛ ջարդված մի շարք անդկամաններ[133]։ Գտնված մի կարասում եղել են նաև մի քանի անվթար մնացած անդկամաններ և բեկորներ։ Անդկամաններ ու դրանց մնացորդներ են հայտնաբերվել նաև պեղած կարասի մոտակայքում[134]։

Անիում հայտնաբերված անդկամանների զգալի մասը, ինչպես ենթադրում է Ն. Մառը, արտադրվել էր Բագրատունիների շրջանում, X—XI դարերում[135]։ Կարծում ենք, Ն. Մառի այդ ենթադրությունը շատ հավանական է, որովհետև XI դարից, ինչպես տեսանք, անդկամանների տարածման սահմաններն արդեն ձգվում էին Միջին Ասիայի կենտրոնական շրջաններից մինչև Փոքր Ասիա։



Անդկաման

Հաշվի առնելով հայտնաբերված անդկամանների մեծ քանակը և դրանց օգտագործման նպատակի մասին հնագետների շրջանում եղած տարակարծությունն ու մղվող բանավեճը, Հ. Օրբելին հատուկ ուսումնասիրել է Անիում գտնված անդկամանները։ Այդ ուսումնասիրության հիման վրա էլ Ն. Մառն իր «Անի» աշխատությունում, նկարագրել է անդկամանները։ Ահա թե իրենցից ինչ են ներկայացնում անդկամանները։ Սովորաբար դրանք տարբեր գույների (գորշ, կանաչավուն, դեղնավուն, կապույտ և այլն) ձվաձև անոթներ են։ Ծանր են, ամուր ինչպես քարը, նշանակալի

[136] Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 90։

[134] Նույն տեղը։

[135] Նույն տեղը, էջ 96։

հատ պատերով, գլխիկավոր՝ նեղ շուրթեր ունեցող բեբանով[136]։ Զարդանախշված են, մեծությամբ՝ մարդու բռունցքի չափ։ Դրանց մեջ, ինչպես ենթադրում է Ն. Մառը (նկատի ունենալով քաղաքի բոլոր մասերում և մեծ քանակությամբ առկա լինելը), սնդիկից բացի պահել են նաև օծանելիքներ[137]։

Ըստ երևույթին, սնդկամաններում սնդիկ և օծանելիք պահելու մասին վերջնական չի կարելի համարել նաև այս «վերջնական» ենթադրությունը։ Մեզ թվում է, որ դրանցում միայն սընդիկ են պահել, որովհետև այն կավե ամանի մեջ նախ, չի ներծծվում և երկրորդ, ծանր է, ապակե անոթներում պահելը հարմար չէ։ Մինչդեռ Ն. Մառը վկայում է, որ սնդկամանների պատերն, այնուամենայնիվ, ջուրը ներծծում են[138]։ Հարց է առաջանում, թե օծանելիքն ինչո՞ւ չպետք է պահվեր ապակե (հախճապակե, ճենապակե) սրվակներում, որը միանգամայն մատչելի էր օծանելիք օգտագործող հարուստ տիկինների համար և ավելի դեղեցիկ ու ավելի կայուն էր, քան կավը՝ անկախ դրա մշակման աստիճանից։

Այսպես ուրեմն, մայրաքաղաք Անին X—XI դարերում կավագործության հայտնի կենտրոններից էր։ Այստեղ բրուտն իր ձեռքի տակ ունենալով տեղական կավը, պատրաստել է բազմատեսակ առարկաներ ու անոթներ՝ ամանեղեն, կարասներ, սնդկամաններ, ջրի խողովակներ, հախճապակե ու ճենապակե զանազան իրեր և այլն։ Իսկ արտադրված ապրանքների այդպիսի բազմազանությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Անիում այդ ժամանակաշրջանում կավագործությունն ուներ մի շարք ենթաճյուղեր ու արհեստներ։

Բոլորովին վերջերս ՀՍՍՀ Սպիտակ քաղաքի մոտ, Փամբակ գետի վերին հոսանքում, հայտնաբերվել է արհեստական քարանձավներից բաղկացած միջնադարյան մի մեծ բնակավայր։ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության ինստիտուտի արշավախմբի նախնական պեղումների շնորհիվ այդտեղ հայտնաբերվել են Անիից բերված խեցեղեն՝ ջնարակած բարձրարվեստ նկարազարդ անոթներ[139]։

Անիում առանձին փողոց կամ շարք զբաղեցնող (արհեստավորական եղբայրություն կազմող) արհեստավորներից էին նաև

[136] Նույն տեղը, էջ 95—96։
[137] Նույն տեղը, էջ 96։
[138] Նույն տեղը, էջ 95։
[139] Տե՛ս «Սովետական Հայաստան» լրագիր, Երևան, 1977, հուլիսի 15։

կոշկակարները («Կոշկակարոց», սառաջները (համեստագործ կամ թամբագործ՝ «Սառաճ փողոց») և մեզ համար տակավին անհայտ փոլկարարները («Փոլկարարոց»)[140]։ Դժվար է իմանալ նաև լարարար կոչված արհեստների բնույթը։ Այդ արհեստը հիշատակված է միայն մեկ արձանագրությունում, որտեղ ասված է. «Ես Սարգիս լարարարս եաու ղիմ տունս ի սուրբ Գրիգոր...»[141]։ Այդ տերմինը չկա հայոց լեզվի բառարաններում։ Լարարարը հավանաբար հավասարապես կարող էր լինել պարանագործ կամ պողպատից լար պատրաստող, կամ գզրարի գործիքի համար աղիքից լար պատրաստող և այլն։

Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, որ բազմամարդ մայրաքաղաքի բնակչությունը, նրա տասնյակների հասնող բանակ-կայազորը, որի մեծագույն մասը բաղկացած էր հեծյալներից, քարավանային լայն առևտուրը կոշկեղենի, ձիու և բեռնակիր անասունների թամբի, համեմի ու այլ պարագաների մեծ պահանջարկ էին ներկայացնում։ Մեր պատմագիրների վկայություններից երեվում է, որ իշխանները, մյուս բարձրաստիճան ազնվականությունը հագնում էին տարբեր գույնի ճաշակավոր կոշիկներ։ Կոշիկները մտնում էին նաև զորքի հանդերձավորման մեջ։ Այդ արհեստանեղին հիմնական հումք մատակարարողները կաշեգործներն էին, եթե այս վերջիններիս ղբաղմունքը դիտելու լիներ իբրև առանձին արհեստագործություն։ Չէ՞ որ կան հիշատակություններ (ավելի ուշ ժամանակի) այն մասին, որ միևնույն վարպետն իր ձեռքով և՛ մշակում էր կաշին, և՛ դրանից պատրաստում զանազան ապրանքներ։ Անիի կաշեգործության վերաբերյալ խոսելիս չի կարելի զանց առնել այն հանգամանքը, որ Քարանձավային Անիի աղավնատների թռչնաղբը, որի մասին կնշվի իր տեղում, պարարտանյութից բացի, օգտագործվում էր նաև կաշին դաբաղելու համար։

Մոտավորապես այդպիսին էր X—XI դարերի Անիի արհեստագործության վիճակը։ Նյութի սակավությունը, հնագիտական հետազոտությունների ժամանակ քաղաքի X—XI դարերի հնագիտական շերտի համեմատաբար վատ ուսումնասիրությունը և այլ պարագաներ առայժմ բացառում են այդ շրջանի արհեստագործության որոշ ճյուղերն ըստ ամենայնի բնութագրելը։

[140] Գ. Ալիշան, Շիրակ, էջ 89։
[141] Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, էջ 32։

Գ. Առևտուրը

Միջնադարյան քաղաքի տնտեսական կյանքի հիմքում, արհեստագործությանը հավասար, ընկած էր առևտուրը՝ ներքին, արտաքին և տարանցիկ առևտուրը: Երկրի ընդհանուր տնտեսական զարգացման, դրամական տնտեսության առաջադիմության հետ վերելք էր ապրում նաև առևտուրը՝ իր հերթին ազդելով դրանց հետագա առաջընթացի վրա: Երկրի տասնյակ քաղաքների շուկաներում ու խանութներում, վանքերի մոտ՝ կրոնական տոների ժամանակ գործող առ ու վաճառքի կետերում, որտեղ կենտրոնական դեմքն ուխտավորներն էին, ճանապարհային կայաններում և այլուր կատարվում էր ներքին, իր զգալի մասով մանրածախ առևտուր: Երկրի ու նրա քաղաքների համար էլ ավելի կարևոր նշանակություն էր ստացել արտաքին ու տարանցիկ առևտուրը: Պատահական չէ, որ XI դարի պատմագիր Արիստակես Լաստիվերտցին այդ ժամանակների վաճառաշահ Արծն և Կարս քաղաքների հարստացման աղբյուրը համարում է առևտուրը՝ «և ծով և ցամաք երկնէր և առատանայր», «հարստացեալք բազում ընչեղութեամբ: Ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»[142]:

Բագրատունիների շրջանում Հայաստանում արտաքին ու տարանցիկ առևտրի համար ստեղծված արտակարգ բարենպաստ պայմանների մասին նշել են մի շարք հեղինակներ: Առանձնապես ուշադրության արժանի են Վ. Գուրկո-Կրյաժինի և Հ. Մանանդյանի բնութագրումները: Վ. Գուրկո-Կրյաժինը նշում է, որ բյուզանդական և արաբական դարավոր պայքարի ու հարատև պատերազմների հետևանքով Ասորիքի և Փոքր Ասիայի վրայով կատարվող առևտուրն ընդհատված էր և այդպիսի պայմաններում, ընդհակառակը, խիստ մեծացել էր Բագրատունյաց Հայաստանի նշանակությունը համաշխարհային առևտրի մեջ՝ դառնալով այդ առևտրի միակ ապահով կամուրջը Արևմուտքի և Արևելքի միջև[143]: *Իսկ ակադեմիկոս Հ. Մանանդյանն այդ առևտրի համար ստեղծված բացառիկ նպաստավոր պայմաններն արձանագրելու հետ միասին, հիմնականում դրա հետ է կապում Բագրատունյաց Հայաստանի հին քաղաքների աշխուժացումը և նոր, վաճառաշահ քաղաքների առաջացումն ու զարգացումը. «Բագրատունիների հովանավորության տակ զարգացող մեծ առևտրի վերակենդա-*

[142] **Արիստակես Լաստիվերացի**, *Պատմութիւն*, էջ 78 և 91:

[143] **В. Гурко-Кряжин**, Прошлое и настоящее Советской Армении, «Новый Восток», Москва, 1927, кн. 16—17, էջ 205—206:

նացմանը պետք է վերագրել, անշուշտ, թե՛ Հայաստանի տնտեսական բարգավաճ վիճակը և թե՛ հոյակապ քաղաքների հիմնումն ու դրանց բուռն ու արագ աճումն այս ժամանակաշրջանում»[144],—գրում է նա: *Իսկ մի այլ տեղում մեծ հայագետը Բագրատունյաց շրջանի քաղաքների հարստացման աղբյուրն ուղղակի համարում է «նորից զարգացող միջազգային առևտուրը»*[145]:

Որ X—XI դարերի Հայաստանի քաղաքների զարգացման հիմնական նախապայմաններից մեկը միջազգային առևտրի ծավալումն էր, այդ անկասկած է և կարելի է ընդունել անվերապահորեն: Սակայն առկա էին նաև ուրիշ այնպիսի նախապայմաններ, որոնք իրենց հերթին պայմանավորում էին այդ առևտրի ծավալմանը, պասսիվ տարանցիկ առևտրից երկրի ներսում բեկվող և դրա տնտեսական կյանքի վրա ազդող ավելի ակտիվ առևտրի վերածվելուն: Եթե հարցին այդ տեսակետից մոտենանք, իսկ մեզ թվում է, որ այդ ավելի ճիշտ է, ապա կտեսնենք, որ արտաքին՝ միջազգային առևտրի զարգացումը ոչ թե նախապայման էր, այլ առաջին հերթին հետևանք երկրի տնտեսական ընդհանուր զարգացման, դրամական տնտեսության առաջադիմության, խաղաղ պայմանների, քաղաքական անկախության և այլն, որոնք թեև ուշադրության են առնված Հ. Մանանդյանի կողմից, բայց դիտված են իբրև երկրորդ կարգի դրդապատճառներ, մի տեսակետ, որը պաշտպանել հնարավոր չէ: Պատմությունից բերենք միայն երկու օրինակ: Եթե քաղաքների զարգացումը միայն տարանցիկ ու միջազգային առևտրի ծավալման հետևանք էր, ապա ինչպե՞ս է, որ քաղաքներ առաջացան նաև առևտրական մայրուղիներից դուրս գտնվող վայրերում (Կապան, Եղեգիս, Սուրբ Մարի, Աղթամար, Արտանուջ, Գառնի և այլն): Այնուհետև հայտնի է, որ մոնղոլական տիրապետության շրջանում նույնպես Հայաստանի վրայով կատարվում էր բավական աշխույժ միջազգային առևտուր, բայց երկրի քաղաքներն անկում էին ապրում, նրանք փաստորեն գերազանցապես վերածվել էին այդ առևտուրը սոսկ սպասարկող ճանապարհակայանների: Հետևապես, թվում է արտաքին առևտրի խաղացած դերը ճիշտ հասկանալու համար պետք է այն քննել երկրի ընդհանուր տնտեսական, քաղաքական ու սոցիալական զարգացման ընդհանրության մեջ, իբրև նրա բաղադրիչներից մեկը: Ինչքան էլ տրտնջալու լինենք երկրի տնտեսական կյանքի մասին նյութի սակավության համար, այնուամենայնիվ

[144] **Հ. Մանանդյան**, *Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում*, էջ 10:

[145] **Նույնը**, О торговле и городах Армении, էջ 205:

այդ ժամանակաշրջանի երկու նշանավոր պատմագիրները՝ Ասողիկը և Արիստակես Լաստիվերացին իրենց վկայություններով բավականին որոշակի գաղափար են տալիս ոչ միայն առևտրի, այլև երկրի տնտեսական ընդհանուր զարգացման, քաղաքական անդորրության, բնակավայրերի կարուկ առաջընթացի վերաբերյալ[146]։ Բագրատունիների թագավորության շրջանի ընդհանուր վերելքի մասին շատերն են խոսել (Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Լեո, Թ. Թորամանյան, Մ. Աբեղյան, Բ. Առաքելյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Երեմյան, Ս. Պողոսյան և ուրիշներ), և պարզաբանվել են բազմաթիվ հարցեր։ Մենք միայն ցանկացանք ընդգծել, որ քաղաքային կյանքի զարգացման հիմքում առաջին հերթին ընկած էր ոչ թե արտաքին առևտուրը, որ ավելի շուտ ընդհանուր զարգացման արտահայտություններից մեկն էր, այլ երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական կյանքի վերելքը։ Երկիր թևակոխել էր զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը, ինչպես ասվում է հայ ժողովրդի պատմության ցանկացած դասագրքում։

X—XI դարերի Հայաստանի տնտեսական զարգացումն առաջին հերթին իր ծանրաշափական արտահայտությունն էր գտնում մայրաքաղաք Անիի կյանքում։ Անին այդ ընդհանուր զարգացման կիզակետն էր և շատ կարճ ժամանակամիջոցում վերածվել էր վաճառաշահ խոշոր քաղաքի, առևտրի խոշորագույն կենտրոնի, «տիեզերահռչակ» քաղաքի, ինչպես այն կոչել է Արիստակես Լաստիվերացին[147]։

Անիի տնտեսական կյանքում կարևոր դեր էին խաղում և՛ ներքին առևտուրը, և՛ արտաքին ու տարանցիկ առևտուրը։ Մեր շարադրանքն սկսում ենք ներքին առևտրի բնութագրումից, որն իր ծավալով ըստ երևույթին արտաքին ու տարանցիկ առևտրին քիչ էր զիջում, բայց քաղաքի ներքին կյանքում նրա դերը հրապարակային էր։

Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» «Յաղագս դատաստանաց վաճառաց» վերնագրով ՃԻԳ (123) հոդվածում, որը գերազանցապես վերցված է ժողովրդական սովորություններից, ամբողջապես վերաբերում է քաղաքներում, ավաններում և գավառների մյուս բնակավայրերում առևտրի կազմակերպմանը և այն կանոններին, որոնք առևտրի ժամանակ պետք է պահպանվեին։ Միանգամայն հասկանալի է, որ այդ սովորությունները գոյություն ունեին և նախորդ շրջանում ու ամբողջապես վերաբերում են նաև X—XI դարերին։ Մի կողմ թողնելով առևտրի մյուս կողմերին վերաբերող հոդվածները, տեսնենք այնտեղ ինչ է ասված առևտրի կազմակերպման ու դրա վրա հսկողություն սահմանելու վերաբերյալ։

«Եւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս, կամ յիշխանաց ըստ հրամանի թագաւորաց, թէ՛ ի քաղաքս, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի գաւառս։ Եւ նախահոդութեամբ պչափս եւ զկշիռս եւ զոյգս նոքա դիցեն տեսանելով զզօրութիւնս վաճառին։ Կարգեսցեն եւ կուփիչս միշտ որոնել եւ տեսանել, զի մի՛ նենգութիւն ինչ արասցեն։ Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի։ Գողիցն ի չափսն եւ ի կշիռսն հատուցանել չորեքկին, եւ յանդիմանութեամբ նշաւակել ի զարհուրումն այլոց։ Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զձեռն հատանել հրամանաւ իշխանաց...։

Այլ ի վաճառս խարդողաց զգեստսն՝ ըստ գողիցն հատուցի»[148]։ Հոդվածից միանգամայն հասկանալի է, որ Անիում առևտուրը կազմակերպվում էր ըստ Բագրատունի թագավորների հրամանի, որով սահմանվում էին նաև չափի ու կշռի միավորները։ Շուկաներում սահմանում էին վերակացուներ՝ «կուփիչս», որ հավանաբար համապատասխանում էր մութսիբին։ «Կուփիչ»-ները պարտավոր էին հսկել ու կանխել նենգությունը, խարդախությունը, դրամանենգությունը, որոնց համար սահմանված էին խիստ պատիժներ։ Առևտրի մեջ խաբողներին դիտում էին իբրև գողեր և պատժում վերջիններիս համար սահմանված հոդվածներով։ Գոշի Դատաստանագրքի այդ հոդվածը միաժամանակ ցույց է տալիս, որ շուկաներում անսովոր երևույթներ չէին խարդախությունն ու նենգությունը, չափի ու կշիռների, գների մեջ կատարվող խաբեությունները, այլապես այդպիսի օրինադանցությունների համար իրավական հատուկ հոդվածներ չէին մշակվի։ Վիմագրական մի քանի արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ մայրաքաղաքում վաճառատեղի ընտրելը կամայական չէր։ Շուկաների և դրանց խանութների տեղադրությունն ամենայն հավանականությամբ հաստատվում էր հատուկ հրամանագրերով, որոնցով սահմանվում էին նաև տվյալ առևտրական կետում՝ հրապարակում կամ շուկայում կատարվող առևտրի ապրանքների տեսակները[149]։

---

146 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 155—282, Արիստակես Լաստիվերացի, Պատմութիւն, էջ 78—86, 91—92, 162—168 և այլն։

147 Արիստակես Լաստիվերացի, Պատմութիւն, էջ 162։

148 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 334—335։

149 Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I։

Անիի ներքին առևտուրը, անշուշտ, չէր սահմանափակվում միայն քաղաքի շրջանակներով։ Անին սերտորեն կապված էր երկրի տարբեր ծայրերի հետ։ X դարում, ինչպես հաղորդում է արաբական պատմագիր Ալ-Մուքադասին, Անիի անունով հատուկ դարպաս (դուռ) կար Դվինում[150], իսկ Անիում կար Դվինի (կամ Երևանի) դուռ։ Անիում արտադրված զանազան իրեր են գտնված Բագրատունյաց Հայաստանի տարբեր շրջաններում։ Մենք տեսանք, որ բոլորովին վերջերս Անիում արտադրված ընտիր խեցեղենի նմուշներ են գտնվել նաև ՀՍՍՀ Սպիտակ քաղաքի մոտակայքում ի հայտ եկած միջնադարյան քարանձավային բնակատեղիում։

Շուկան ոչ միայն առևտրի, այլև հասարակական-տնտեսական կյանքի կենտրոն էր։ Հայտնի է Արևելքում դրանց խաղացած դերը հասարակական-տնտեսական կյանքում։ Շուկայում էին հիմնականում գտնվում խանութներն ու կրպակները։ Այն հետագայի շուկաների նման ամենայն հավանականությամբ ունեցել է ընդարձակ հրապարակ, որտեղ կանգ էին առնում բեռնակիր ու վաճառվող անասունները, կատարվում էին զանազան գործարքներ, վաճառքի էին հանվում մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ։ Երևակայությամբ, բայց ճշմարտությունից հեռու չեն Լեոյի հետևյալ խոսքերը. «Արևելքի քաղաքների կյանքը ամբողջապես շուկաների մեջ է։ Իսկ Անիի պես մի խոշոր ու փարթամ քաղաքի շուկան չէր կարող չլինել մեծ ու բանուկ։ Այս ձորը (Իգաձորը—Թ. Հ.), իհարկե, միակ շուկան չէր։ Այնտեղ, քաղաքի մեջ էլ կա շուկա։ Բայց այնտեղ չկար, չէր կարող լինել այսպիսի լայնարձակ ազատություն։ Գուցե ավելի գյուղական է Իգաձորի շուկան։ Բայց այստեղ էլ, անշուշտ, խռնվում էին ամեն կողմից եկած վաճառողներ ու գնողներ։ Այստեղ միայն շրջակա գյուղացիները չէին պարպում իրանց սայլերը, կանգնեցնում իրանց հոտերը։ Այստեղ էին գալիս և հեռավոր կարավաններ, և արևելյան քանի՛ լեզուներ խառնվում էին այս ձորում վաճառքի գործերի մեջ։ Աննեցին, չմոռանանք, հարաբերություններ ուներ նույնիսկ կախարդիչ Հնդկաստանի հետ...»[151]։

Արևելյան շուկայի այնպիսի նկարագրություն, որ կարող է ճշմարիտ լինել դարերի համար։

---

[150] «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXXVIII, **Ал-Мукадассий**, перевод **Н. А. Караулова**, էջ 9—10։ Հմմտ. **Я. А. Манандян**, О торговле и городах Армении. էջ 214։

[151] Լեո, *Անի, 1963, էջ 202։ Հմմտ. Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 50 և 56։*

Անին, անշուշտ, իրրև խոշոր քաղաք, ունեցել է մի քանի շուկաներ։ Պեղումների ընթացքում գլխավոր փողոցի վրա, Աբուլ-Մամրան մզկիթի մոտ հայտնաբերվել է քարաշեն խանութների երկու շարք, որոնց միջև գտնվում է բավական լայն տարածություն՝ հրապարակ։ Առևտրական (և արհեստավորական) այդ շարքերի առկայությունը և վիմագրական արձանագրությունների անդրադառնում են, որ ուղղակի վկայությունները նկատի ունենալով, ենթադրում են, որ դա եղել է Անիի գլխավոր շուկա-հրապարակը, նրա ներքին տնտեսական կյանքի գլխավոր կենտրոնը։

Ապրանքների գների, առևտրի կարգ ու կանոնի պահպանման, չափ ու կշռի միավորների, դրամական միավորների վրա հսկելու, վաճառվող ապրանքներից հատուկ հարկ վերցնելու վրա հսկում էր քաղաքապետը՝ տանուտերը, որին, ըստ երևույթին, շուկայում կային ստորադրված վերակացուներ՝ մութասիբը, Թերևս հենց Գոշի մոտ հիշատակված «կոփիչք»-ները։ Դրանք համապատասխանում են պարսկական տիրապետության շրջանի (XVI—XVIII դդ.) դարուղային (ոստիկանապետ) և նրա ստորադրյալներին՝ բազարբաշին, միզանդարին և այլն։ Այլ կերպ ասած, շուկայի (և քաղաքի) կառավարման սիստեմը մնացել էր նույնը, միայն պաշտոնների անուններն էին փոխվել, ինչպես եղրակացրել է Ս. Ա. Եղիազարովը[152]։

Վիմագիր արձանագրություններում բազմաթիվ հիշատակություններ կան խանութների մասին։ Դրանք սովորաբար կոչվել են՝ «կուղպակ», որ բառացի նշանակում է կրպակ։ Վիմագիր արձանագրություններից երևում է, որ տակավին Բագրատունիների թագավորության շրջանում, մեծամասամբ «հոգու փրկության համար», նվիրատվության կարգով, մեծ թվով խանութներ էին կենտրոնացել եկեղեցիների ձեռքին։ Այսպես, օրինակ, մի արձանագրության համաձայն իշխանաց իշխան Վահրամը (սպարապետը)՝ գնելով երկու կուղպակ, նվիրում է ս. Գրիգոր եկեղեցուն՝ իբրև իր որդի Ապուղամրի «հոգեբաժին»։ 994 թվականին վերաբերող մի այլ արձանագրությամբ տիկնանց տիկին Շուշանը նույն եկեղեցուն է նվիրել կուղպակներ, 1036 թվականի արձանագրության համաձայն Ապլղարիբ մարզպանը ս. Փրկիչ եկեղեցին կառուցելուց հետո՝ դրան տված այլ նվիրատվությունների հետ նշում է նաև երեք կուղպակ, որ գնել էր «իր հալալ ինչքով», 1037 թվականին դրր-

---

[152] **С. А. Егиазаров**, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II, Городские цехи, введение, էջ XLI։

ված մի ուրիշ արձանագրության մեջ նշվում է, որ հիմնովին վերանորոգման է ենթարկվել ինչ-որ կուղպակ և այլն[153]:

Անիում գտնվող կուղպակ-խանութները կարող էին նվիրաբերվել նաև երկրի այլ շրջաններում գտնվող եկեղեցիներին ու վանքերին: Այդպիսի մի դեպքի մասին արձանագրված է Սյունիքի Մաքենիսի վանքի պատին, որի բնագիրը պահպանված է նաև Ստեփանոս Օրբելյանի մոտ: Արձանագրությունը վերաբերում է X դարին: Դրանում թվարկված են այն նվիրատվությունները, որ կատարել է Սյունյաց Սուփան իշխանը՝ վանքը կառուցելուց հետո. «Կամաւն Աստուծոյ ես Սուփան՝ Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աստուածային կտակարանօք. և եառ զսեփական տեղն մեր ի սա որ բուռ անուան եկեղեցւոյս Աստուածածնին ասի, իւր ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, և եառ որս ձկանց զԲողաշէն սեղանոյն, և 700 դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, 200 դրամ ի Կաթկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ. եառ և 5 կուղպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղեգիս, և զամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լիցի առատապէս և փարթամացուցի ներքոյ և արտաքոյ. եառ և ջուխրս եզանց և ջոկս զուարակաց և անդեայս և հօտս ոչխարաց...»[154]:

Արձանագրությունից նախ հետևում է, որ Անիի կուղպակներից կարող էին նվիրվել երկրի տարբեր վայրերի եկեղեցիներին ու վանքերին: Այդ միանգամայն պարզ է և թվում է, թե հակաճառության առիթներ չկան: Սակայն հարցը դրանում չէ: Խիստ հետաքրքրություն է ներկայացնում կուղպակների սեփականատիրության հարցը, թե ո՞ւմ են պատկանել քաղաքի կուղպակները: Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ ենթադրություն կա, թե Սյունիքի իշխաններն Անիի այդ կուղպակ-խանութները ժառանգություն էին ստացել Բագրատունի թագավորներից: Սակայն այդ կասկածելի է, որովհետև Անիի վիմագիր արձանագրություններից երևում է, որ այստեղ իշխան-իշխանուհիները վանքերին ու եկեղեցիներին նվիրել են միայն «գանձագին» կուղպակներ, այսինքն՝ դրամով գնած խանութներ: Արդյոք այստեղից չի՞ հետևում, որ ազնվական բարձր դասը, որի թվում և Բագրատունիները, սեփական կուղպակներ բնդհանրապես չունեին: Եթե այդպես է, ապա Սյունյաց իշխաններն ինչպե՞ս կարող էին կուղպակներ ժառանգություն ստանալ Բագրատունի թագավորներից: Լավ, դիցուք թե սյունեցիներն այդ 5 կուղպակը ժառանգություն էին ստացել: Իսկ ի՞նչ եղանակներով էին նրանք սեփականացրել եկեղեցուն նվիրված մյուս կալվածքները, հատկապես՝ Երևանի 5 այգին և Գառնիի 500 առու այգին, չէ՞ որ Կոտայքը, որտեղ գտնվում էր Երևանը և Գառնիի շրջակայքը (Մազազ գավառը), երբեք Սյունիքի իշխանության մեջ չեն մտել և չէին կարող դրա իշխանների սեփականությունը լինել: Այստեղից էլ թվում է, թե ավելի ճիշտ կլիներ կարծել, որ դրանք, ինչպես և Անիի կուղպակները, Սյունյաց իշխանները ոչ թե ժառանգություն են ստացել, այլ դրամով են գնել և նվիրել Մաքենիսին:

Ուրեմն, ամենից հավանականն այն է, որ կուղպակ-խանութները և կուղպակ-արհեստանոցները զանգվածորեն կազմում էին առևտրականների և արհեստավորների սեփականությունը:

Կուղպակ-խանութների մեծության, կահավորանքի, օժանդակ հարմարությունների մասին ուղղակի հիշատակություններ չկան: Սակայն մատենագրական կցկտուր տեղեկությունները և հնագիտական ուսումնասիրությունների արդյունքներն, այնուամենայնիվ, հնարավորություն են ընձեռում այդ մասին որոշ գաղափար կազմել: Այրային Անիում խանութների համար հարմարեցված «քարտուն»-ներն ունեն քարակերտ դարակներ՝ ապրանքները դասավորելու համար, երբեմն երկու հարկանի էին և առաջին հարկը, իբրև «նկուղ» ծառայում էր ապրանքները պահելու, իսկ երկրորդը՝ վաճառելու համար: Ամենայն հավանականությամբ այդպիսի հարմարություններ ունեին նաև բուն քաղաքի՝ գլխավոր շուկայի, մյուս շուկաների, հյուրատների և այլ տեղերի կուղպակ-խանութները:

Ղ. Ալիշանը, որ հավաքել ու սիստեմի է բերել Անիի խանութների վերաբերյալ եղած մատենագրական տեղեկությունները և իրեն հայտնի հնագիտական ու վիմագրական բոլոր նյութերը, դրանց բնույթի մասին գրում է. «Վաճառատեղի կամ Շուկայ՝ այսու անուամբք ոչ է սովոր ի քաղաքիս. իսկ կուղպակք կամ կուղպակի, զոր արդ կրպակս կոչեմք, բազում ուրեք յիշատակին, և յաճախ յանուն տերանցն, որպէս հնագոյնքն որ յարձանս Ապուղամրենց, յամի 995, և ի սկիզբն ժ դարու (պետք է լինի ԺԱ դարու—Թ. Հ.) Մրուանայ, Լորազոյնի և Ոսսատի. և նորագոյնք՝ Թորոսոնց, Վարդի, Ասիծոյ, Աւետաց և այլն: Զանազանին ուրեք և յաւելուածով կտեր մասնկամբ, կուղպակի-կտեր, զոր օրինակ ի փողոցս տեսաք փողոցկտեր:—Սալք Թուի յատակն, զի յիշէ ոմն զկուղպակ իւր առ ներքին Սլբեր Տիգրանայ. այլուր յիշին և ներքնատունք նոցին կամ ստորին յարկք. որպէս ի վերջին յիշատակիդ

[153] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 32, 45 և 49:

[154] Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179—180:

կուղպակի-կտերոյ՝ ասի լինել դաղլայն (տողատակին ծանոթագրում է՝ թերևս թավլա, ախոռ, ձիանոց) ի ներքևն. և տակաւդ»[155]:

Այսպես ուրեմն, վիմագրական նյութերից Ղ. Ալիշանը եզրակացնում է, որ խանութները սովորաբար կոչվում էին իրենց տերերի անունով (իսկ դրանց մեջ իշխաններ ու բարձրաստիճան պաշտոնյաներ չեն հիշատակված), դրանք կարող էին փողոցների նման սալահատակված լինել, դրանց որոշ մասն ուներ ներքնահարկեր և օժանդակ այլ հարմարություններ, ուշ շրջանում՝ նույնիսկ գոմեր՝ ախոռներ:

Կուղպակները, ինչպես կարելի է եզրակացնել հնագիտական ուսումնասիրություններից և ճանապարհորդական նոթերից, կենտրոնացված էին որոշ տեղերում՝ շուկաներում: Մի սովորույթ, որ պահպանվեց հետագա դարերում: Խանութների թիվն Անիում ըստ երևույթին հարյուրների էր հասնում: Եվ այդ զարմանալի չպիտի թվի, որովհետև լայն իմաստով, ինչպես ասվեց, կուղպակ էր կոչվում և առևտրականի խանութը, և արհեստավորի արհեստանոցը: Առավել ևս չպետք է զարմանալ, եթե նկատի ունենանք, որ XVIII դարի վերջերին ու XIX դարի սկզբներին ընդամենը 10—12 հազար բնակիչ ունեցող Երևանի խանութների ու արհեստանոցների թիվը 850-ից անցնում էր[156]:

Խանութներից բացի, Անիի ավերակներում տեղ-տեղ պատահում են մինչև 2—2,5 մետր խորությամբ բավականին մեծ փոսեր՝ հորեր, որոնք լցված են հող ու քարով: Ենթադրվում է, որ դրանք եղել են հացահատիկի շտեմարան-հորեր, կամ դրանցում տեղավորվել են նույն նպատակին ծառայող կարասներ[157]:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեր կողմից վկայակոչված ՃԻԹ հոդվածում («Յաղագս դատաստանաց վաճառաց») խոսվում է նաև ապրանքների գների նշանակման մասին: Ըստ դրա, հացի, գինու և մյուս այդպիսի (այսինքն՝ գյուղատնտեսական) ապրանքների գները որոշում էին բերքի առատությունը («ըստ քաջաբերութեան») կամ այդպիսի այլ պատճառներ հաշվի առնելով: Գները կարող էին փոփոխության ենթարկվել նաև բերքի պակասության և նման այլ պատճառներով, թագավորների և իշխանների հրամանով՝ «յիշատակելով գաւառապետաց եւ ժողովրդապետաց»:

[155] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 88:

[156] Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան, 1959, էջ 102:

[157] Տե՛ս «Տեղեկագրութիւն Անի քաղաքին հանդերձ տեսարանացոյց պատկերօք», խմբ. Հովհաննես Տէր-Աբրահամեան, Թեոդոսիա, 1867, էջ 50:

Հոդվածի շարունակությունից երևում է նաև, որ գներն ընդհանրապես շատ փոփոխական էին և ամենևին բացառված չէին այդ բնագավառում ևս խարդախություններն ու օրինազանցությունները: Ապրանքների գների վերաբերյալ իրավական նորմերի վերածված սովորություններն ամբողջական, ըստ Գոշի և ոչ թե ըստ մեր մեկնաբանության, պատկերացնելու համար այնուամենայնիվ հարկ ենք համարում մեջ բերել հոդվածի համապատասխան հատվածը.

«Իսկ զգին հացի և զգինւոյ եւ զայլոց այսպիսեաց ըստ քաջաբերութեան ամի կամ ըստ այլ իմիք պատճառի, նմանապէս ըստ նուազութեան եւ ըստ այդպիսեացդ պատճառի փոփոխել ի վեր եւ ի խոնարհ թագաւորաց լիցի հրամանաւ և իշխանաց՝ յիշատակելով գաւառապետաց եւ ժողովրդապետաց: Այլ անհասատ լիցի փոխելն յաղքատաց ըստ կարեաց վաճառողաց, եւ կամ փարթամաց անկարոտից վաճառողաց: Բայց իշխանք ի վեր եւ ի խոնարհ զգինն առնել ուղիղ տեսելեամբ արասցեն, զի մի մշակք եւ այլ ինչ գործօնեայք, նմանապէս վաճառականք, վրիպեալ զըրկիցին յիւրաքանչիւր յերկանց. եւ կամ դատաւորք ճշգրիտ քննութեամբ ըստ հրամանի իշխանաց առնիցեն»[158]:

Գների սահմանման այդ կարգը, անտարակույս, վերաբերում է և՛ ներքին, և՛ արտաքին առևտրին: Եվ եթե գները սահմանելիս հիմք են ընդունել տարվա բերքի կամ մյուս բարիքների չափը[159], ապա ակնհայտ է, թե ինչպիսի մեծ տատանումներ են ունեցել մանավանդ գյուղատնտեսական մթերքների գները: Պատմությունից հայտնի է, որ միջին դարերում պարբերաբար կրկնվել են անբերրի տարիները, որոնք հետևանք էին երաշտի, կարկտի, ցրտահարության, հեղեղների և բնական այլ աղետների, ինչպես նաև պատերազմների, մահասփյուռ հիվանդությունների: Իսկ դրանց հետևանքը չէր սահմանափակվում միայն գների բարձրացմամբ. հաճախ մոլեգնում էր իսկական սովը, որը բազմաթիվ կյանքեր էր խլում: Եվ միանգամայն հասկանալի է, որ Անիում ավելի խիստ պետք է արտահայտվեին գյուղատնտեսական ապրանքների գների տատանումները՝ մանավանդ պաշարումների ժամանակ, երբ քաղաքի բնակչությունը մեծապես ավելանում էր՝ այստեղ ապաստան գտնող շրջակայքի գյուղացիության հաշվին:

Սակայն իրավական նորմի ուժ ստացած այդ սովորույթներից բացի, ապրանքների կոնկրետ գների մասին տեղեկություններ չեն

[158] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, էջ 435—436:

[159] Նույն տեղը, էջ 435:

պահպանվել և գրկված ենք այդ հիման վրա կյանքի ու ապրուստի պայմանների վերաբերյալ որոշակի գաղափար կազմելուց։

Բազմազան էին ներքին առևտրի ապրանքները։ Դրանք հիմնականում բաղկացած էին բնական ու գյուղատնտեսական հումքերից՝ ներկանյութ, քարաղ, մետաղներ, բամբակ, բուրդ, մետաքս, կաշի, նաև սննդամթերքներ՝ հացահատիկ, ձուկ, կաթնամթերքներ, ինչպես և անասուններ, միս և այլն։ Մեծ խումբ էին կազմում արհեստավորական տանդյակների հասնող շինվածքներն ու իրեր[160]։

Գոշի «Դատաստանագրքից» երևում է, որ շուկայի վերակացուի հիմնական պարտականություններից մեկը չափի և կշիռներին հսկելն էր, որպեսզի դրանք չխարդախեն և չխաբեն ապրանքներ գնողներին։ Ըստ երևույթին վերակացուն ի վիճակի չէր խարդախություններն ու խաբեությունները վերացնել։ Հիմնականում դրանով պետք է բացատրել «Դատաստանագրքի»՝ առևտրին վերաբերող համապատասխան հոդվածում դրան հատուկ տեղ տալն ու պատժի չափի նշումը[161]։ Հավանաբար Անիի շուկաներում և խանութներում տեղական չափ ու կշռի միավորների հետ ուժի մեջ էին նաև բյուզանդականն ու արաբականը։

Բագրատունյաց Հայաստանում և նրա մայրաքաղաք Անիում շրջանառության մեջ եղած դրամների վերաբերյալ նույնպես ուղղակի հիշատակություններ չկան։ Առայժմ չեն հայտնաբերված նաև Անի-Շիրակի թագավորության հատած որևէ դրամ ո՛չ Անիում, ո՛չ Դվինում, ո՛չ էլ Հայաստանի այդ ժամանակաշրջանի մյուս քաղաքներում ու գավառներում։ Տրամաբանական եզրակացությունն այն է, որ Անիի Բագրատունիները չունեին իրենց հատած սեփական դրամը[162], համենայն դեպս մինչև այժմ այդպիսին չի հայտնաբերվել։ Հայտնի է, որ առանց փաստի պատմություն չի կարող լինել։ Այնուամենայնիվ, միանգամայն տեղին հարց է առաջանում, թե ինչո՞ւ Անի-Շիրակի Բագրատունիները չունեին իրենց դրամը, չէ՞ որ երկիրը հարուստ էր ոսկով, արծաթով ու պղնձով, չէ՞ որ նրանք միանգամայն ինքնուրույն թագավորներ էին (նույնիսկ «արքայից արքա» տիտղոսով) և իրավունք ունեին ու կարող էին հատանել իրենց սեփական դրամը, մանավանդ, որ այդ շատ կամրապնդեր իրենց ավագության դիրքը հայկական

[160] *Տե՛ս* **Հ. Մանանդյան**, *Հայաստանի քաղաքները X—XI դարերում, էջ 27—34։*

[161] *Տե՛ս* **Մխիթար Գոշ**, *Դատաստանագիրք Հայոց, էջ 435։*

[162] **Х. Мушегян**, Из истории денежного обращения Двина, «Известия» АН Арм. ССР, 1956, № 11, *էջ* 86։

մյուս թագավորությունների ու իշխանությունների և գերիշխանությունը Հայաստանի տարածքում գտնվող ու իրենց ենթակա արաբական էմիրությունների նկատմամբ։ Թվում է, թե դրա հավանական պատճառը Բագրատունիների թագավորության տարանցիկ ու միջազգային առևտրի արտակարգ լայն զարգացումն էր։ Երկիրը փաստորեն X—XI դարերում վերածվել էր Արևելքի ու Արևմուտքի միջև կատարվող առևտրի մի լայն գոտու, որտեղ շրջանառության մեջ էին գտնվում աշխարհակալ տերությունների՝ Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության դրամի միավորները։ Միջազգային առևտրի շահերը պահանջում էին ինչքան հնարավոր էր դրամական միավորների մեջ միատեսակություն ու պարզություն։ Բագրատունիները մեծ շահեր ունեին այդ առևտրից և թվում է, թե հանուն այդ շահերի էլ հրաժարվել էին սեփական դրամ ունենալուց։ Այդ եղանակով Բագրատունյաց Հայաստանը դարձել էր մի այնպիսի երկիր, որտեղ շրջանառության մեջ եղած դրամական միավորներն իրենց արժեքներով քաջ հայտնի էին շատ երկրների վաճառականների և կարող էին առանց լրացուցիչ խոշընդոտների առևտուր անել։

Արաբական տիրապետության շրջանում, ինչպես հայտնի է, Հայաստանում հիմնականում շրջանառության մեջ էին դինարը, դիրհեմը և ֆելսը[163], որոնք ըստ երևույթին երկրում մնացին տիրապետող նաև առաջին Բագրատունիների օրոք։ Սակայն հետագայում, հավանաբար X դարի երկրորդ քառորդից կամ երկրորդ կեսից, ավելի տիրապետող են դառնում դրամի բյուզանդական միավորները։ Ն. Յա. Մառը Անիի պեղումների ժամանակ հայտնաբերել է բյուզանդական անանուն 608 պղնձե դրամներ, որոնք պահվում էին Անիի թանգարանում[163]։ Անիից բացի, բյուզանդական դրամներ են հայտնաբերված Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Բորչալուի, Ջանգեղուրի գավառներում։ Դրանք պղնձե, արծաթե ու ոսկե դրամներ են և վերաբերում են *VII—IX* դարերին[164]։ Իսկ դրանց աշխարհագրական տարածման այդպիսի լայն սահմանները ցույց են տալիս, որ X—XI դարերում Հայաստանում շրջանառության մեջ բյուզանդական դրամի միավորները խաղում էին կարևոր դեր։

Նույնիսկ Անի-Շիրակի թագավորության արևելյան ծայրա-

[163] *Տե՛ս* **Р. А. Гусейнов**, Из истории денежного обращения в Передней Азии в XI—XII вв., инст. Археологии АН СССР нумизматика и эпиграфика, т. IX, Москва. 1971, *էջ* 103, **Е. А. Пахомов**, Монетные клады Азербайджана, Баку, 1926, *էջ* 50։

[164] **Е. А. Пахомов**, Монетные клады Азербайджана, *էջ* 43—52։

շրջանում գտնվող Դվին քաղաքում (որտեղ բյուզանդական ազդեցությունը համեմատաբար ավելի թույլ էր արտահայտվում և այդ ժամանակներում զերծ էր բյուզանդական տիրապետությունից) XI դարի առաջին քառորդի վերջերից բյուզանդական դրամը շրջանառության մեջ դրավում էր առաջնակարգ տեղ[165]։ Թվում է, թե բյուզանդական դրամի այդպիսի լայն տարածումը ոչ միայն կայսրության դավթողական քաղաքականության հետևանք էր, որի զոհերը դարձան Տարոնի իշխանությունը, Տայքի կյուրապաղատությունը և Վասպուրականի ու Անի-Շիրակի թագավորությունները, այլև նրա, որ Բյուզանդիան, խալիֆայության հետ համեմատած, կենտրոնաձիգ պետություն էր՝ իր համեմատաբար կայուն ու տեբության բոլոր պրովինցիաներում շրջանառության մեջ գտնվող դրամի միավորներով։ Մինչդեռ խալիֆայությունը մասնատված էր առանձին իշխանությունների՝ էմիրությունների և այլևս չուներ իր նախկին միասնական դրամական սիստեմը ու այդ տեսակետից չէր կարող համապատասխանել մրցակից լինել դեռևս իրեն ամուր զգացող Բյուզանդիայի համար։

Մեր ազգային պատմիչների մոտ, այդ դարերին վերաբերող բնագրերում և վիմագիր արձանագրություններում, որպես դրամի միավորներ, սովորաբար հիշատակվում են դահեկանը և դրամը[166], որոնց պարունակած մետաղի քանակը խիստ փոփոխական էր և անորոշ։ Օգտվելով դրանից, անհատ մարդիկ հաճախ զբաղվել են դրամանենգությամբ՝ հատանելով դահեկան և սովորական դրամ։ Դրամանենգությունն այնքան տարածված երևույթ է եղել, որ անհրաժեշտություն է զգացվել դրա համար սահմանել հատուկ պատիժ՝ իշխանների հրամանով կտրելով դահեկան ու դրամ հատողների ձեռքը. «Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զձեռսն հատանել հրամանաւ իշխանաց»,— ասված է Գոշի «Դատաստանագրքում»[167]։

Միանգամայն հասկանալի է, որ դրամական միևնույն միավորները շրջանառության մեջ էին և՛ ներքին, և՛ արտաքին ու տարանցիկ առևտրում։ Սակայն ներքին առևտուրը, եթե վերցնենք ոչ միայն Անիի, այլև ամբողջ երկրի մասշտաբով, իր զգալի մասով փոխանակային առևտրի բնույթ ուներ և այստեղ դրամը փաստորեն ծառայում էր տարբեր ապրանքների համեմատական գինը

[165] **Х. Мушегян**, Из истории денежного обращения Двина, «Изв.» АН Арм. ССР, 1956, № 11, էջ 86—87։

[166] *Տե՛ս, օրինակ՝* **Ստ. Օրբելյան**, *Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 179,* **Մխիթար Գոշ**, *Դատաստանագիրք Հայոց, էջ 435 և այլուր։*

[167] **Մխիթար Գոշ**, *Դատաստանագիրք Հայոց, էջ 435։*

որոշելու համար։ Այլ կերպ ասած, դրամի դերը շատ ավելի բարձր էր արտաքին ու տարանցիկ առևտրում։

Բուն Հայկական պետությունը ծովեր չի ունեցել։ Նրա ջրային ճանապարհները սահմանափակված էին մի քանի լճերով (Գեղամա ծով, Վանա լիճ, Ուրմիո լիճ) և խոշոր երկու-երեք գետերի (Եփրատ, Արաքս, Ճորոխ) շատ սահմանափակ հատվածներով։ Երկրի մակերևույթը խիստ լեռնային լինելու պատճառով, ցամաքային ճանապարհների մեծ մասը ձմռանն ամիսներով փակվում էր և մի գավառից մյուսը, մի «աշխարհ»-ից մյուսն անցնելը մեծ դժվարությունների հետ էր կապված։ Դրանք սովորաբար ձգվում էին գետահովիտներով և անցնում լեռնանցքներով։ Սակայն երկրի աշխարհագրական դիրքը Արևելքի ու Արևմուտքի նկատմամբ այն դարձրել էր կամուրջ, կապող օղակ գրեթե պատմական բոլոր ժամանակաշրջաններում։ Հայտնի է, որ հին շրջանում Հայաստանի քարավանային կարևոր ճանապարհների հանգույցը Արտաշատն էր *V—IX* դարերում՝ Դվինը, իսկ դրանից հետո, *X—XIII* դարերում միջազգային առևտրի ճանապարհների մեծ հանգուցակետ դարձավ մեր խնդրո առարկա մայրաքաղաք Անին։

Անի մտնող և Անիից դուրս եկող ճանապարհները կարելի է բաժանել երկու խմբի՝ տեղական ճանապարհների և տարանցիկ՝ քարավանային առևտրի մայրուղիների։ Անին իր շրջակայքի և երկրի տարբեր մասերի հետ կապված էր տեղական մի շարք ճանապարհներով, որոնց մի մասն արհեստական կառուցված ճանապարհներ էին՝ մասամբ Բագրատունի թագավորների ժամանակներից ի վեր գործող ճանապարհներ[168]։ Առանձնապես ուշադրության արժանի էր ժայռափոր ու ոլորապտույտ այն ճանապարհը, որը քաղաքը կապում էր Ախուրյանի վրա ձգված մեծ, երկհարկանի կամրջի հետ։ Այս ճանապարհը, ինչպես գտնում են մասնագետները, խիստ վտանգավոր զառիվեր լեռնալանջով ձգվելու պատճառով, վերևից ծածկել են կամարակապ ծածկոցով։

Մենք նշեցինք, որ Անին կապված էր Դվինի, Երևանի, Լոռու թագավորության և երկրի այլ քաղաքների ու գավառների հետ։ Այս տեսակետից ուշագրավ է Ղ. Ալիշանի հետևյալ նկարագրությունը, որ ամբողջապես հիմնված է իր ձեռքի տակ եղած փաստական նյութերի վրա. «Վկայութիւն մի ևս այսոցիկ ցուցանեն բազմաթիւ

[168] *Տե՛ս* **Г. Абих**, Ани, *էջ 293,* **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, С.-Петербург, 1910, *էջ 41,* **Թ. Թորամանյան**, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 35 և 185,* **Պալասյան Գրիգորիս**, *Նկարագրութիւն Անեի աւերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 64,* **Լեո**, *Անի, Երևան, 1963, էջ 177—181 և այլուր։*

դրունք քաղաքին՝ արքունի պողոտայիւք, որք ձգին ի դէպ է վկայութիւն համարել, թէ և օրինակաւ ասիցէ, զբանս Արիստակիսի Քերական գրչի յառաջին կէս ԺԳ դարու. «Ի Դունայ յԱնի ո՞րչափ մղոն է։— «ՅԱնոյ ի Կարին ո՞րչափ մղոն է։ ՅԱնոյ ի Սերաստիա ո՞րքան է»։— Ընդ դրունս Անոյ և ընդ պողոտայս՝ յայտ է թէ ոչ միայն բնիկքն Հայք և բնակակիցք Վրացիք և Տաճիկք, մուտ և ելս առնէին, այլ և եկք ի բազում աշխարհաց, թէպէտ ի պատճառս վաճառականութեան և թէպէտ տարադէմ ուղևորութեանց...»[169]։

Ակնհայտ է, որ Ղ. Ալիշանի վկայակոչած Արիստակես Քերականի գրվածքն իր բովանդակությամբ նման է VII դարի «Մշոնաշափք»-ին, միայն այն տարբերությամբ, որ այն վերաբերում է XII դարին և տեղեկություններ է հաղորդում Հայաստանով անցնող հյուսիսային քարավանային գլխավոր մայրուղու կայանների մասին։ Մինչդեռ VII դարի «Մշոնաշափք»-ում ամենայն մանրամասնությամբ թվարկված են Դվինից դուրս եկող ճանապարհներն ու դրանց կարևոր կայանները։ Անկախ այդ բոլորից, XII դարին վերաբերող սկզբնաղբյուրից երևում է, որ Անին հյուսիսային մայրուղու՝ Հայաստանով ձգվող հատվածի ամենակարևոր կայանն էր, որպիսին, նա, անկասկած, դարձել էր դեռևս Բագրատունյաց թագավորության շրջանում։

Տեղական ճանապարհների վրա, որոնցից մի քանիսը ուղղակի կազմում էին երկրով անցնող տարանցիկ քարավանային ճանապարհների առանձին հատվածներ, տարբեր ժամանակներում կառուցվել էին իջևանատներ, որոնք հիմնականում ընկած էին քարավանային մայրուղու վրա և աղդարարում էին վերջինիս ուղղությունը (Վերին Թալին, Ներքին Ջրարփի, Արուճ)[170], իսկ դրանց գոյությունը միաժամանակ ցույց է տալիս Անիի կարևոր դերը միջազգային տարանցիկ առևտրի մեջ։

Եկվոր վաճառականների ու նրանց ապրանքների համար քաղաքում ստեղծվել էին հարմարություններ։ Հիմնականում նրանց, ինչպես և այլ տեղերից ու երկրներից զանազան գործերով Անի եկողների համար ստեղծված էին հյուրանոցներ (հյուրատներ),

[169] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 92։ Համմ. Աբիստակես Գրիչ (կամ Քերական), Վերուծութիւնք բացարեալ ի բազմազան բառից եւ բայից, կանոն երրորդ, վասն անուանց քաղաքաց և գիւղից..., Լ. Գ. Խաչերյան, «Գրչության արվեստի» լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 239։

[170] Տե՛ս А. Л. Якобсон. Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, էջ 106։ Համմ. Վաւրագդատ Հաւուրյանյան, Անի քաղաքը, էջ 22—23։

խանապարներ (օժանդակ հարմարություններ ունեցող հյուրանոցներ), փնդուկներ (պանդոկներ, իջևաններ), որոնք ապրելու հարմարություններից բացի, իրենց կից ունեին նաև վաճառականների բեռնակիր անասունների ախոռներ, սայլերի կանգառի տեղեր և ապրանքներ վաճառելու կրպակներ։ Կիսաառևտրական-կիսակոմունալ այդ հաստատությունները, որոնց մասին ըստ ամենայնի կխոսվի քաղաքի կոմունալ պայմաններին անդրադառնալիս, պատկանում էին և՛ մասնավոր մարդկանց, և՛ եկեղեցիներին, որոնք դրանք ստացել էին տարբեր անձերից, նվիրատվության կարգով[171]։

Արդ որո՞նք էին այն քարավանային կարևոր մայրուղիները, որ Բագրատունյաց Հայաստանն ու նրա մայրաքաղաք Անին դարձնում էին տարանցիկ ու միջազգային առևտրի կարևորագույն կենտրոն, առևտուր, որ կատարվում էր արևելքի ու արևմուտքի երկրների միջև։ X—XI (և XII—XIII) դարերում Հայաստանով անցնող երկու այդպիսի մայրուղի կար, որոնցից մեկը ձգվում էր երկրի հյուսիսային շրջաններով, իսկ երկրորդը՝ հարավային։ Հայաստանի (մենք կասեինք Հյուսիսային Հայաստանի) համար, ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, դրանցից առանձնապես կարևոր նշանակություն ուներ հյուսիսային մայրուղին, որ փոխարինել էր ավելի հին ժամանակներում գործող Արտաշատ (կամ Դվին)—Սատաղ (Երզնկայից հյուսիս-արևմուտք) գլխավոր ճանապարհին։ Անիի և ամբողջ Բագրատունյաց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այդ նոր քարավանային առևտրի մայրուղին Հայաստանում ուներ հետևյալ ուղղությունը՝ Նախիջևան—Դվին—Անի—Կարս—Կարին—Արծն—Տրապիզոն[172]։ Դրանցից յուրաքանչյուրում գլխավոր ճանապարհից բաժանվում և դեպի տարբեր կողմեր էին ձգվում երկրորդական այլ ուղիներ։ Այսպես, օրինակ, Արծնից մի այլ ճանապարհ բաժանվելով՝ գնում էր դեպի Երզնկա ու Սերաստիա, Կարսից մի ուրիշ ճանապարհ ձգվում էր դեպի Օլթի ու Արտանուջ, Դվինից բավական կարևոր մի ճանապարհ՝ Արաքսի հովտով, Արփա գետի ափով, Սուլեմայի լեռնանցքով, Սևանա լճի հարավային առափնյայով, Զոդով ու Թարթառի հովտով ձգվում էր դեպի Պարտավ, իսկ մի այլ ճանա-

[171] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, էջ 46, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 45 և 88, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XV веков, էջ 101—102, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV веков, էջ 262—263, Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի բարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 41։

[172] Я. А. Манандян, О торговле и городах Армении, էջ 219 և 233։

պարհ՝ Բջնիի վրայով՝ Տփխիս։ Սակայն այդ ժամանակ ճանապարհների խոշորագույն հանգույցը Անին էր։ Այստեղ գլխավոր մայրուղուց բաժանվում և ճառագայթաձև դեպի տարբեր կողմեր էին ձգվում մի քանի ճանապարհներ, որոնց մեջ առանձնապես կարևոր նշանակություն ունեին Անի—Լոռի բերդաքաղաք—Շամշուլդե—Տփխիս և Անի—Կարս—Արդանուջ—Սև ծով ճանապարհները։

Ժամանակի համեմատությամբ հյուսիսային մայրուղին և մասամբ դրա ենթաճյուղերը բավականին բարեկարգ էին, անիվային փոխադրամիջոցների համար՝ պիտանի։ Հավանական է, որ հատուկ հսկողություն է եղել դրանք սարքին վիճակում պահպանելու համար։ Քարավանները ձմռան բուք ու բորանին, գիշերները, հոգնած ժամանակ կարող էին հանգիստ առնել ճանապարհի ուղղությամբ կառուցված իջևաններում կամ քաղաքներում, որտեղ, ինչպես տեսանք Անիի օրինակով, կային հյուրատներ, խանապարներ և փնդուկներ։

Երկրի ընդհանուր զարգացման համար կարևոր նշանակություն ուներ նաև հարավային մայրուղին, որը մի քանի ենթաճյուղերով միացած էր հյուսիսային գլխավոր ճանապարհի հետ։ Հայաստանի մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հարավային մայրուղին ուներ հետևյալ ուղղությունը՝ Մարանդ (Ատրպատականում)—Հեր (Խոյ)—Բերկրի (Վանա լճի հյուսիս-արևելյան ափի մոտ, որտեղից մի այլ ճանապարհ տանում էր դեպի Վան ու Ոստան)—Արճեշ (լճի հյուսիսային ափին)—Խլաթ—Բիթլիս—Արզն (այժմյան Հազրոն)—Ամիդ (Դիարբեքիր)[173]։ Այս ճանապարհը հյուսիսային մայրուղու հետ միանում էր Հեր (Խոյ)—Նախիջևան, Արճեշ—Վաղարշակերտ—Անի և Խլաթ—Մանազկերտ—Կարին ճանապարհներով՝ գլխավոր մայրուղիների և դրանցից անջատվող մյուս ճանապարհների հետ երկրում կազմելով բեռնակիր և անվային փոխադրամիջոցների մատչելի ճանապարհների բավական խիտ ցանց։

Անիով անցնող, նրա հետ առնչվող և Անիին առևտրա-տնտեսական առումով կարևոր նշանակություն տվող ճանապարհների

[173] Հայաստանի հարավով անցնող այս ճանապարհը չպետք է շփոթել ընդհանրապես Արևելքն Արևմուտքի հետ կապող հարավային մայրուղու հետ, որը ձգվում էր Ատրպատականով, Միջագետքով, Ասորիքով, Փոքր Ասիայով դեպի Սև ծովի հարավային ափերը և որը մեզ հետաքրքրող ժամանակներում, ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, կորցրել էր իր նախկին արտակարգ նշանակությունը (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 329—330)։

մասին մեր շարադրանքն անհրաժեշտ ենք համարում ավարտել հետևյալ փոքր դիտողությամբ, որ, մեր կարծիքով, յուրաքանչյուր դեպքում պետք է նկատի ունենալ ավյալ քաղաքի կամ քաղաքների դիրքի նպաստավոր կամ աննպաստ լինելը բնութագրելիս։ Մենք այդ դիտողությունն ուղում ենք անել Անիի օրինակով։ Ինչպես նշվեց, Պարսկաստանի կողմերից Արաքսի ափով եկող հին ճանապարհը, որ անցնում էր Արտաշատով (Դվինով), Երվանդաշատով և Սատաղով, ավելի կարճ էր ու հարմար, քան Դվինով, Անիով և Կարսով անցնող նոր ճանապարհը։ Այստեղից էլ հարց է առաջանում՝ ապա ինչո՞ւ նախկին ճանապարհին փոխարինեց այս նոր ճանապարհը, չէ՞ որ առաջինը նույնպես ձգվում էր բագրատունիների թագավորության տարածքով և այդ ինչպե՞ս եղավ, որ քարավաններն սկսեցին գնալ նոր, ավելի երկար ճանապարհով։ Մեր կարծիքով, ճանապարհի այդ ուղղության պատճառը երեքն էին՝ ա) նախ նոր ճանապարհն անցնում էր Բագրատունիների թագավորության կենտրոնական շրջաններով, որ ավելի էր ապահով թշնամական հարձակումներից, բ) X դարում վաճառաշահ քաղաքների վերածվող Բագրատունիների դույզ մայրաքաղաքները՝ Անին ու Կարսը և դրանցից արևմուտք գտնվող Արծն «աղատ» քաղաքը դեպի իրենց էին ձգում ոչ միայն երկրի ներսի, այլև միջազգային առևտրի թևերը, քարավանային առևտրի ճանապարհները։ Ուզում ենք ասել, որ եթե միջազգային քարավանային առևտուրը նպաստեց (ըստ ակադեմիկոս Հ. Մանանդյանի ուղղակի պատճառ դարձավ)[174] մի շարք նոր քաղաքների առաջացմանն ու զարգացմանը, ապա այդ քաղաքներն էլ, մանավանդ Անին, դեպի իրենց ձգեցին միջազգային առևտրի ճանապարհները և դրանով իսկ տնտեսական տեսակետից ավելի նպաստավոր դարձավ նրանց աշխարհագրական դիրքը։

Ներմուծվող ապրանքներից վերցվող մաքսի չափի վերաբերյալ, ինչքան մեզ հայտնի է, տեղեկություններ չեն պահպանվել՝ ոչ մատենագիտական, ոչ էլ վիմագրական ու այլ կարգի աղբյուրներում։ Միակ աղբյուրը մնում է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», որի «Յաղագս դատաստանաց վաճառաց» ճիգ հոդվածի մաքսին վերաբերող մասը ձևակերպված է հետևյալ կերպ. «Իսկ զմաքսն առնուլ իրաւապէս յորժամ ի քաղաքս կամ ի գաւառս եկեալ վաճառիցեն։ Այլ մի՛ լիցի յանցս ճանապարհաց մաքսել եթէ ոչ վաճառիցեն, բայց վարձս միայն թէ ի թշնամեաց

[174] Տե՛ս Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 329, նույնի «О торговле и городах Армении», էջ 214—215 և 233։

ընդ նոսա գնալով պահիցեն։ Այլ մաքս հրամանաւ լիցի թագաւորաց. եւ իշխանք նմանապէս ի հրամանս նոցա մաքսիցեն»[175]։

Ինչպես տեսնում ենք, մաքս վերցվում էր միայն այն ժամանակ, երբ բերված ապրանքը քաղաքում կամ գավառում վաճառվում էր։ Այնուհետև, մաքսը նշանակվում էր թագավորների հրամանով։ Դժվար է ասել, թե մաքսը ապրանքի գնի որ տոկոսն էր կազմում։ Սակայն առանց այդ էլ Գոշի «Դատաստանագրքի» հոդվածից երևում է, որ արտաքին առևտրի համար Հայաստանում գոյություն ունեցող մաքսային սիստեմը խրախուսիչ էր. ճանապարհների (հավանաբար նաև կամուրջների) և չվաճառված ապրանքների համար մաքս չէր գանձվում։ Իսկ այդքանը քիչ արտոնություն չէր ներմուծումը խրախուսելու համար։ Սակայն հոդվածից կարելի է նաև եզրակացնել, որ որոշ վարձ վերցնելուց բացի, տարանցիկ առևտրի ապրանքները, որոնք Հայաստանի վրայով տարվում էին այլ երկրներ, ըստ երևույթին ազատ էին մաքսից։

Անին լինելով արտաքին ու տարանցիկ առևտրի կենտրոն, անշուշտ, ունեցել է իր մաքսատունը, գուցե և մի քանի մաքսատուն։ Անիի պատմությամբ, հատկապես նրա հնագիտությամբ ու ճարտարապետությամբ զբաղվող մասնագետներից ոմանք ենթադրում են, որ Մանուչեի մզկիթի նախնական շենքը (որ կառուցված է եղել Բագրատունի թագավորների օրոք և մինարեի ու լրացուցիչ մի քանի կառուցումներից հետո մզկիթի է վերածվել XI դարի երկրորդ կեսին) եղել է քաղաքի մաքսատունը[176], իսկ ոմանք էլ մաքսատուն են համարել Ախուրյանի երկհարկանի կամրջի աջակողմյան բացվող ու փակվող մասի վերին հարկը։

Բագրատունիների թագավորության ժամանակների Անիի արտաքին առևտրի վերաբերյալ նյութերն ու հիշատակություններն ընդհանրապես սակավ են։ Ընդ որում արևմտյան երկրների՝ Բյուզանդիայի և Կիևյան Ռուսիայի հետ ունեցած նեղ առևտրական կապերի մասին ընդհանրապես վկայություններ չկան, այդ այն դեպքում, երբ հայտնի են դրանց միջև գոյություն ունեցած փոխհարաբերությունները մյուս բնագավառներում՝ հատկապես մշակույթի ասպարեզում, որի մասին հարկ կլինի խոսել հետագայում։ Իսկ արևելյան երկրների հետ Բագրատունիների թագավորության և նրա մայրաքաղաքի առևտրական հարաբերությունների վերաբերյալ, այնուամենայնիվ, որոշ նյութեր կան, որոնք հնարավորություն են ընձեռում այն ընդհանուր գծերով բնութագրելու։ Այսպես՝

[175] Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք Հայոց*, էջ 435։

[176] Տե՛ս Վարազդատ Հարությունյան, *Անի քաղաքը*, էջ 79։

պատմագիրների վկայությունները և Անիում հնագիտական հետազոտությունների ընթացքում պեղած նյութերը ցույց են տալիս, որ Անին ու Անի-Շիրակի թագավորությունն առևտրական կապեր ունեին հեռավոր Չինաստանի, Հնդկաստանի ու Միջին Ասիայի և հարևան Պարսկաստանի հետ։

Չինաստանի հետ առևտրական հարաբերություններ ունենալու վերաբերյալ բացառապես գաղափար ենք կազմում պեղումների ընթացքում հայտնաբերված իրերի մնացորդներով։ Չինական սելադոնի (ճենապակու) բազմաթիվ բեկորներ են գտնվել Բագրատունիների արքայական պալատի պեղումների ընթացքում։ Իսկ այդ հայտնաբերումները ցույց են տալիս, որ հատկապես պալատական վերնախավը մեծ պահանջարկ ուներ բարձրորակ ճենապակու («չինական ապակի»), որը ներմուծվում էր հեռավոր Չինաստանից։ Կ. Ղաֆադարյանը նշում է, որ Դվինում չինական սելադոնի մնացորդներ չեն հայտնաբերվել, և նրա կարծիքով դրա կարիքն այստեղ չեն զգացել՝ տեղական համապատասխան բարձրորակ կերամիկայի արտադրություն ունենալու շնորհիվ[177]։ Հաղիվ թե կարելի է նույնությամբ ընդունել նրա այդ ենթադրությունը։ Չժխտելով Դվինում բարձրորակ խեցեղեն արտադրելու մասին արած նրա հիմնավոր եզրակացությունը, միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ մայրաքաղաքի վերնախավը՝ թագավորն ու նրան շրջապատող բարձր պաշտոնյությունը, թվում է, ավելի խստապահանջ էին և սիրում էին ավելի ճոխ սպասք (կիսաավանդական պատմություններն ընդհանրապես անցյալներին վերագրում են ավելի շռայլ ու ճոխ ապրելու սովորություններ), քան այն ժամանակվա Դվինի հասարակության վերնախավի ներկայացուցիչները, որոնք հենց նույն Կ. Ղաֆադարյանի արտահայտությամբ՝ «սելադոն դրեթե չեն գործածել»[178]։

Անկասկած է, որ Չինաստանի հետ առևտրական հարաբերությունները չէին սահմանափակվում միայն ճենապակի ներմուծելով, որը տեղափոխման տեսակետից, այն ժամանակվա փոխադրամիջոցների բնույթի պատճառով, անհարմարություններ էր կապված, թեպետև դրանք հավանաբար Հայաստան էին հասնում ոչ թե անմիջապես հայ վաճառականների, այլ միջնորդված առևտրի շնորհիվ։ Հայտնի է, որ Չինաստանը միջազգային առևտրին ավելի լայն չափով մասնակցում էր իր մետաքսով և իզուր չէր, որ այնտեղից դեպի արևմուտքի երկրներ գլխավոր մայրու-

[177] Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքն ու նրա պեղումները*, հ. I, էջ 229։

[178] Նույն տեղը։

ղին ստացել էր «Մետաքսի ճանապարհ» անունը։ Եվ եթե Անիում չինական մետաքսե ապրանքների մնացորդներ չեն հայտնաբերվել, ապա դա բացատրվում է միայն նրանով, որ դրանք չեն դիմացել ժամանակի անողոք քայքայիչ ուժին։

Չնայած Հնդկաստանը պատմական Հայաստանից բաժանված էր միայն Պարսկաստանով և առևտրա-տնտեսական տեսակետից ու այլ առումներով ավելի էր առնչվում մեր երկրի հետ, քայց Անի-Շիրակի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող նյութեր ու փաստեր շատ քիչ կան։ Միակ արժանահավատ փաստն այն է, որ Անիի Մայր եկեղեցու համար Բագրատունի թագավորը Հնդկաստանից բերել է ավել 12 լիտր քաշ ունեցող բարձրարվեստ մի ջահ։ Այդ ջահը, անշուշտ, ինչպես իրավացիորեն արձանագրում է Ա. Ալպոյաճյանը, Հայաստան է բերվել հայ վաճառականների միջոցով[179]։ Իսկ այդ ցույց է տալիս, որ Հնդկաստանն այն ժամանակվա Հայաստանի ու նրա վաճառականների համար «խորհրդավոր» չէր, ինչպիսին պատկերացնում էին եվրոպացիները։ Հայաստանում գիտեին, թե ինչ կարելի է այնտեղից բերել և, հավանաբար, ինչ կարելի է այնտեղ արտահանել։ Թվում է, թե ժամանակի ընթացքում հայ-հնդկական առևտրի մասին կհայտնաբերվեն նոր նյութեր ու փաստեր, որոնք այս բնագավառը մեզ համար կդարձնեն այնպես որոշակի, ինչպես մշակութային կապերի պատմությունն է։

Միջին Ասիայի հետ Բագրատունյաց շրջանի Հայաստանի առևտրական հարաբերությունների մասին պահպանվել են գրավոր աղբյուրներ, որոնց վկայությունները զետեղված են Թուրքմենների ու Թուրքմենիայի պատմությանը վերաբերող ժողովածուում։ Դրանցից առաջինը արաբ հեղինակ Ալ-Իդրիսու վկայությունն է։ Նա հաղորդում է, որ Միջին Ասիայի Մագրա կոչված գետի հովտի «անտառներում կա մի կենդանի, որ կաղր է կոչվում, այդ կենդանին ունի գեղեցիկ մորթի, որը պատկանում է լավագույն մորթիների թվին և բարձր գին ունի։ Այդպիսի բազմաթիվ կենդանիներ են որսում և դրանց մորթին տանում Ռումի և Հայաստանի երկրները»[180]։

Ալ-Իդրիսու այդ վկայությունից պարզ երևում է, որ Միջին Ասիան (Թուրքմենիա) Հայաստանի ու Ռումի (Բյուզանդիա) հետ

[179] Արշակ Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Ա, Գահիրե, 1941, էջ 375 և 387։

[180] «Материалы по истории туркмен и Туркмении», т. I, Москва—Ленинград, 1939, ст. 221: Թարգմանությունը բերված է ըստ Կ. Ղաֆադարյանի (տե՛ս «Դվին քաղաքն ու նրա պեղումները», հ. I, էջ 261)։

ուներ առևտրական ավելի լայն կապեր, բայց նրան հետաքրքրել է միայն կուղբը, որի առիթով էլ նշել է դրա մորթու որակի ու արտահանության վերաբերյալ։

Նույն Բագրատունիների ժամանակաշրջանին է վերաբերում մի այլ արաբ հեղինակի (XI դ.)՝ Աբուլ-Ֆազլի—Բեյհակիի «Թարիխի—Բեյհակի» տարեգրության մեջ հայկական գորգերի մասին մի կարևոր վկայություն, ըստ որի Թուրքմենստանում հայկական գորգերը համարում էին ամենաորակյալն ու թանկագինը բոլոր գորգերի մեջ։ Նրա ասելով Խորասանի Սուրի էմիրին հիջրեի 424 թվականին (1033 թ.) տարած 500 հակ նվերների մեջ թանկագին հագուստեղենի, անոթների, զարդերի, թանկագին քարերի ու սովորական գորգերի և այլ՝ էմիրին սազական իրերի հետ եղել են և հայկական գորգեր։ «Սուրիի այդ նվերների մեջ,— վկայում է նա,— այնքան շատ կար հագուստեղեն, անոթներ, ոսկե և արծաթե առարկաներ, սորուկներ ու սորկուհիներ, մուշկ ու քաֆուր և մարգարիտ, հայկական գորգեր (ընդգծ. Կ. Ղաֆադարյանի) և (սովորական) գորգեր և այլ բարիքներ, որ էմիրն ու բոլոր ներկա եղողները զարմացան»[181]։ Պարզ է, որ հայկական գորգերն այդտեղ ավելի վաղ էին հայտնի։ Այլապես դրանք չէին կարող միանգամից այդքան մեծ համբավ ձեռք բերել։

Այսպիսով, եթե Անիում հայտնաբերված ճենապակու մնացորդների և Անի բերված հնդկական կանեհի միջոցով դատողություններ ենք անում Չինաստանի ու Հնդկաստանի հետ Բագրատունյաց Հայաստանի ու նրա մայրաքաղաքի առևտրական հարաբերությունների մասին, ապա այստեղ մենք գործ ունենք ոչ միայն ներմուծման (կուղբի մորթի), այլև արտահանման (հայկական գորգեր) հետ, այսինքն՝ այսպես ասած, լրիվ ցիկլի արտաքին առևտրի հետ։

Ինչ խոսք, որ Անին ավելի սերտ առևտրական հարաբերություններ է ունեցել մեր անմիջական հարևանների՝ Բյուզանդիայի, Վրաստանի, Պարսկաստանի և Աղվանքի հետ։ Հարավային մայրուղին անապահով լինելու պատճառով, Բյուզանդիան Արևելքի ապրանքների մեծ մասն ստանում էր Բագրատունյաց Հայաստանի ու նրա մայրաքաղաք Անիի վրայով, իսկ վերջինս հատուկ ճանապարհներով, ինչպես տեսանք, կապված էր Վրաստանի մայրաքաղաք Տփխիսի (Լոռիի և Շամշուլդեի վրայով) և Աղվանքի մայրաքաղաք Պարտավի (Դվինի ու Ջոդի վրայով) հետ։ Ինչպես

[181] «Материалы по истории туркмен и Туркмении», т. I, ст. 338: Թարգմ. Կ. Ղաֆադարյանի («Դվին քաղաքն ու նրա պեղումները», հ. I, էջ 261)։

Բյուզանդիայի, այնպես էլ Վրաստանի համար Անին տարանցիկ առևտրի կարևոր հանգույց էր: Նա Անիի վրայով էր ստանում բյուզանդական ապրանքների մի մասը, իսկ հայկական ծագում ունեցող ապրանքների գերակշիռ հատվածն, ըստ երևույթին, Վրաստան էր արտահանվում հենց Անիի վրայով:

Չնայած, պատմական իրականության համաձայն, Հայաստանը Պարսկաստանի հետ միշտ էլ ունեցել է առևտրական աշխույժ հարաբերություններ, որովհետև վերջինիս տարածքով ձգվող քարավանային ճանապարհները շարունակվում էին նաև Հայաստանի վրայով դեպի արևմուտք, սակայն Բագրատունիների ժամանակաշրջանի Անիի ու Պարսկաստանի միջև կատարվող առևտրի մասին փաստական նյութեր ու գրավոր վկայություններ քիչ են պահպանվել: Անիում կատարված պեղումների ընթացքում պարսկական ծագում ունեցող խեցեղենը, որ մեծ չափերի է հասնում, զանգվածորեն վերաբերում է Անիի պատմության հաջորդ ժամանակաշրջանին՝ XII—XIII դարերին[182]: Սակայն հիմնականում բարձրորակ հախճապակուց բաղկացած այդ խեցեղենի ներմուծումն Անի հավանաբար ուներ իր ավանդույթը, որա ներհոսքը ամենայն հավանականությամբ սկսվել էր X դարի երկրորդ կեսից և պեղումների ընթացքում այդ ժամանակների իրանական հախճապակու բացակայությունը պարզապես պետք է բացատրել նրանով, ինչպես ենթադրում է Բ. Ա. Շելկովնիկովը, որ պեղումները չեն հասել Բագրատունյաց թագավորության շրջանի հնագիտական շերտին[183]:

Մոտավորապես այդպիսին էին Անիի արտաքին ու տարանցիկ առևտրի շրջանակները՝ Չինաստանից մինչև Բյուզանդիա, ահա նրա ընդգրկած տարածքի մոտավոր սահմանները:

Արտաքին առևտուրը քարավանային բնույթ ուներ: Վաճառականները իրենց ապրանքներով միանալով, կազմում էին քարավաններ և հայտնի ճանապարհներով, երկար ժամանակով առևտրի էին գնում զանազան երկրներ: Բացառություն չէին կազմում և Հայաստանի վաճառականները: Թովմա Արծրունու մի վկայությունից երևում է, որ նրանք վաղ գարնանը նախապատրաստվում էին հեռավոր ճանապարհորդությունների և առևտրի համար: Նա գրում է. «Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին

[182] Б. А. Шелковников. Поливная керамика из раскопок города Ани, էջ 66:

[183] Նույն տեղը:

Դվնայ... աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրաւսէր վաստակոցն, և որսորդքն զինքեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն, և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն»[184]:

Դարերի ավանդույթ ունեցող քարավանային առևտրի այդ ձևը, որի մասին ակնարկում է X դարի պատմագիրը, լիովին վերաբերում է նաև Անիի վաճառականներին: Սակայն նրա այդ վկայությամբ, այնուամենայնիվ, անհնար է որոշակի գաղափար կազմել վաճառականների նախապատրաստական աշխատանքների որպիսության, քարավաններ կազմելու և դրանց կազմի ու բնույթի, քարավանային առևտրի համար օգտագործվող փոխադրամիջոցների, վաճառքի տարվող ապրանքների, այցելության ենթակա քաղաքների ու երկրների և այլ բազմաթիվ հարցերի մասին, որոնք կամրողջացնեին մեր գիտելիքները միջնադարյան Հայաստանի քարավանային առևտրի վերաբերյալ:

Արտաքին, տարանցիկ ու տեղական առևտրի բնույթի և դրանց՝ երկրի ներքին կյանքի վրա թողած ազդեցության համար շատ կարևոր նշանակություն ունի արտահանվող ապրանքների կազմը, որովհետև վերջինս հիմնականում արտացոլում է երկրի տնտեսական վիճակը՝ հարստությունները, բերքը, արհեստավորական արտադրանքները և այլն:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, ի մի բերելով արաբական մատենագիրների հաղորդած տեղեկությունները, գալիս է այն եզրակացության, որ Հայաստանի քաղաքները Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում համաշխարհային առևտրին մասնակցում էին հացահատիկ, շինարարական փայտ (հատկապես ընկուզենի), ձուկ (տարեխ՝ Վանա լճից, իշխան՝ Սևանա լճից և շամային՝ Կուր գետից), անասուններ (ձիեր, ջորիներ, ոչխար և այլն), մետաղներ (արծաթ, երկաթ, պղինձ, կապար, սնդիկ), լեռնային ձյութ, պղնձարջասպ, քարաղ և այլ ապրանքներ արտահանելով[185]: Ըստ նրա, Բագրատունյաց Հայաստանից արտահանվում էին արհեստավորական զանազան արտադրանքներ ու իրեր՝ հագուստներ, բամբակե և մետաքսե գործվածքներ, գլխի փաթթոցներ, ծածկոցներ, բազմոցների ու բարձերի երեսներ, թիկնոց-

[184] Թովմա Արծրունի, Պատմութիւն ի տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 281—282: Համմ. Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքն ու նրա պեղումները, հ. I, էջ 261—262:

[185] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 27—29:

ներ, վարագույրներ, գորգեր, կերամիկա ու մետաղամշակման ամենատարբեր տեսակի արտադրանքներ[186]։

Կարծում ենք, որ արտաքին առևտուրը կատարվում էր միայն դրամով, ապրանքափոխանակություն ըստ երևույթին ամենևին չի եղել։ Այնուհետև, արտաքին առևտրի բնորոշ կողմերից մեկն էլ այն էր, որ դա հիմնականում մեծածախ առևտուր էր, հակառակ ներքին առևտրի, որտեղ իշխողը մանրածախ առևտուրն էր։

Արտահանվող այդ ապրանքներից շատերը բաժին էին ընկնում նաև մայրաքաղաք Անիին։ Նրա արտադրած ապրանքներից հավանաբար արտահանվում էին գորգեր, զանազան գործվածքներ, որոշ տեսակի խեցեղեն, ներկեր, հացահատիկ (ամբողջը Շիրակից), անասուններ, քարաղ (Կողբից և մասամբ Կաղզվանից)։

Սակայն Անին արտաքին առևտրին ակտիվորեն մասնակցելու հետ նաև կարևորագույն հանգույց էր քարավանային տարանցիկ մայրուղու վրա։ Անիի վրայով էին փոխադրվում նաև Արևմուտքից դեպի Արևելք վաճառքի տարվող ապրանքների զգալի մասը։ Անին առևտրի բաշխիչ կենտրոն էր նաև ամբողջ Անի-Շիրակի թագավորության համար։ Հավանաբար այստեղ էր կենտրոնացվում երկրից արտահանվող ապրանքների մեծ մասը և նրա միջոցով էին հիմնականում ձեռք բերվում ներմուծվող ապրանքները։ Ճիշտ է, այդ մասին գրավոր վկայություններ չկան, իսկ հնագիտական նյութերն էլ աղքատիկ են, բայց այդպիսի ենթադրություն կարելի է անել՝ ելնելով երկրի ու նրա մայրաքաղաքի այդ ժամանակաշրջանի ընդհանուր դրությունից։ Առանձնապես նշելի է այն իրողությունը, որ արտաքին ու տարանցիկ առևտրին սպասարկելու համար Անիում ստեղծված հյուրատներից, խանապարներից ու փնդուկներից բացի այստեղ նույն նպատակին էին հիմնականում ծառայում որոշ արհեստներ (Թամբագործություն-Համեստագործությունը, պայտարությունը և այլն)։

Իսկ Հայաստան, այդ թվում և Անի ներմուծվող ապրանքներից էին՝ մետաքսե և բրդե թանկագին գործվածքները, թանկագին քարերը, ոսկե և արծաթե զարդերը, արհեստավորական որոշ արտադրանքներ, հախճապակյա, ճենապակե ու բյուրեղապակե ամանեղենը և այլն, որոնց մնացորդներից հայտնաբերվել են քաղաքի հնագիտական պեղումների ընթացքում։

Գրեթե անհնար է ասել, թե Անին և Բագրատունյաց Հայաստանը արտաքին առևտրի մեջ ինչ հաշվեկշիռ ունեին։ Նույնիսկ

[186] Նույն տեղը, էջ 29—34։

հավանական եղրակացության համար, հատկապես ծավալին վերաբերող, չկան հուշող նյութեր։ Սակայն նկատի ունենալով Անիում պեղումների ընթացքում հայտնաբերված օտարերկրյա ծագում ունեցող առարկաների սակավությունը տեղականի նկատմամբ և այն, որ պետական միջոցներով քաղաքում կատարվում էր պաշտպանական, քաղաքացիական և եկեղեցական ահռելի միջոցներ պահանջող հսկա շինարարություն, կարելի է ենթադրել, որ արտաքին առևտրում Հայաստանի և, հատկապես, Անիի հաշվեկշիռն ակտիվ էր. դրանք ավելի շատ ապրանքներ էին արտահանում, քան ներմուծում էին, ինչպես Արևելքի երկրների արտաքին առևտուրն Արևմուտքի հետ ընդհանրապես առաջինի համար ուներ ակտիվ հաշվեկշիռ։ Կարծում ենք, որ մայրաքաղաքի արագ զարգացման նախապայմաններից մեկը հենց արտաքին առևտրից ստացվող եկամուտներն էին, որոնք համարվում էին պետական գանձարկղը հարստացնող կարևորագույն աղբյուրներից մեկը։

Ահա դրանք էին, մեր կարծիքով, X—XI դարերի Անիի արտաքին ու տարանցիկ առևտուրը բնութագրող հիմնական ցուցանիշները։

Դ. Գյուղատնտեսական զբաղմունքները

Միջին դարերի քաղաքները, որպես կանոն, զգալի չափով նաև գյուղատնտեսական խոշոր բնակավայրերի բնույթ ունեին։ Նրանց տնտեսական կյանքում գյուղատնտեսական զբաղմունքները՝ երկրագործությունը, այգեգործությունը և նույնիսկ անասնապահությունն ու գյուղատնտեսության այլ ճյուղեր կազմում էին քաղաքի բնակչության մի մասի, հատկապես արվարձանների բնակչության զբաղմունքը։ Սակայն բացառված չէր նաև արհեստավորների ու մանր առևտրականների, եկեղեցիների ու վանքերի գյուղատնտեսական օժանդակ տնտեսությունների առկայությունը։ Միջնադարում Հայաստանի խոշոր քաղաքներից, մեր կարծիքով, գյուղատնտեսական զբաղմունքներով հատկապես հայտնի էին Դվինը, որ գրավում էր հսկայական տարածություն և նույնիսկ պարսպով շրջափակված նրա շահաստանում կային բավական ընդարձակ այգիներ, բանջարանոցներ ու անգամ հացահատիկային ցանքեր, վանը, որի մի ընդարձակ թաղամասն անհիշելի ժամանակներից կոչվել է Այգեստան՝ գրեթե համատարած այգեստաններ լինելու պատճառով, և Վաղարշապատը, որի գրաված տարածքի արևմտյան սահմանը հասնում էր Քասախ գետը, իսկ

արևելյանը՝ Զվարթնոց։ Եվ մասամբ այդ փոփոխությունն է եղել պատճառը, որ Վաղարշապատը (էջմիածին) կոչվել է նաև Քաղաքաշատ, ինչպես Դվինի շրջակայքը՝ Դվնաղաշատ։ Սակայն գյուղատնտեսության դերը երկրի խոշոր քաղաքներում, ինչպես մատնանշում է Հ. Մանանդյանը, առևտրի ու արհեստագործության համեմատ, երկրորդական էր, «քաղաքների հարստության գլխավոր աղբյուրը ոչ թե գյուղատնտեսությունն էր, այլ... միջազգային ու ներքին մեծ առևտուրը», ինչպես և արհեստագործությունը[187]։ Նրա ասելով «...Քաղաքային կյանքում կարևոր տեղ է ունեցել երկրագործությունը և քաղաքների բնակչության զգալի մասը կազմել են հողատեր ազնվական կամ ռամիկ քաղաքացիները, որոնք քաղաքի արվարձաններում ունեցել են այգիներ, բանջարանոցներ և հողագործական այլ տարածություններ»[188]։

Մեզ հասած գրավոր վկայությունները, հնագիտական նյութերը և հենց իրենք՝ մայրաքաղաք Անիի ավերակները, անուղղակիորեն գալիս են ասելու, որ վերը նշված քաղաքների համեմատությամբ գյուղատնտեսական ճյուղերն այստեղ ավելի երկրորդական դեր ունեին։ Բուն քաղաքը, ինչպես կտեսնենք հետագայում, խիտ բնակեցված ու կառուցապատված էր, գյուղատնտեսության համար ազատ տարածություններ պարապապատ Անիում չկային։ Այդ պատճառով էլ գյուղատնտեսական զբաղմունքները քաղաքում կարևոր դեր էին խաղում միայն արվարձաններում։

Բուն քաղաքի հյուսիսային կողմում, Արտաքին պարիսպներից դուրս, տարածվում էր մի ընդարձակ սարահարթ, որտեղ գտնվում էր քաղաքի արվարձանների մի մասը։ Այստեղի բնակիչների մեծ մասը հավանաբար զբաղվում էր երկրագործությամբ։ Թ. Թորամանյանը, որ շրջագայել ու բավական մանրամասնությամբ նկարագրել է այդտեղ նշմարվող հնությունների ավերակներն ու հետքերը (գերեզմանոց, մահարձան, երբեմնի պարսպապատ ընդարձակ առանձին-առանձին հողատարածություններ, եկեղեցի և այլն), գրում է, որ այդ տարածությունն ամբողջապես բնակեցված է եղել և տեղի բնակչությունն զբաղվել է հիմնականում գյուղատնտեսությամբ[189], իսկ Լեոն ուղղակի գրելով, որ «...մինչև Բագնայր ու Հոռոմոս, անշուշտ, ձգված էին անեցիների ոչ

[187] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 26։ Համմ. Լեո, Անի, էջ 273, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 22։

[188] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 26։

[189] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական հարատարակության պատմության, աշխ. ժողովածու, էջ 327—328։

միայն հողերը, այլև գուցե շատ տները»[190], սրամտորեն նկատել է. «Անին այն հորիզոնի մեջ, որ երևում է միջնաբերդից,—սա և հասկանալի է, և՛ բնական»[191], իմա միջնաբերդից երևացող ամբողջ տարածությունն ըստ նրա մտել է Անիի մեջ։

Անիի գյուղատնտեսության մյուս գոտին, եթե այսպես կարելի է ասել, հավանաբար եղել է Ծաղկոցաձորը, որտեղ ըստ կիսաավանդական պատմությունների, կային բազմաթիվ բանջարանոցներ և ծաղկանոցներ։ Այդ ձորը միաժամանակ անեցիների հանգստավայրերից էր։ Եվ բացառված չէ Անիի պատմությամբ զբաղվողներից շատերի այն կարծիքը, թե այդ բազմաթիվ «քարտուն»-ներում ապրողները զանգվածորեն զբաղվում էին գյուղատնտեսությամբ[192], որոնց հողատարածությունները հիմնականում կազմում էին քաղաքի հյուսիսային մասի հարթությունները։

Վիմագիր արձանագրություններից երևում է, որ Անին ուներ հացահատիկի արտեր, մշակովի հողեր, խոտհարքներ։ Այսպես, 1031 թվականին վերաբերող մի արձանագրությունում խոսվում է այն մասին, որ իշխանաց իշխան Վահրամի որդի Ապուղամրը Առաքելոց եկեղեցուն է նվիրել «զԿառնուտի արտն»[193], 1046 թվականի մի ուրիշ արձանագրության մեջ Ապուղարիբ մարզպանը ս. Փրկիչ եկեղեցուն տված կալվածքների մեջ նշում է նաև «և ձիթահանք և այգի և հողեար[194]»։ Նույն կարգի տեղեկություններ կան նաև հաջորդ ժամանակների արձանագրություններում։ Այնպես որ «արտերը», «հողերը», որ երկրագործության նախապայմաններն են, եղել են նաև պարգևանքի առարկաներ։ Սակայն հնարավոր է նաև, որ Անիի վիմագիր արձանագրություններում հիշատակված արտերի, հողերի ու խոտհարքների մի մասը գտնվել է ոչ թե քաղաքում, այլ ուրիշ վայրերում, որոնց նվիրատվության մասին նույնպես շատ տեղեկություններ կան այդ նույն արձանագրություններում։ Մեր այդ ենթադրությունը հենված է այն բանի վրա, որ երբեմն քաղաքի այս կամ այն եկեղեցուն տրվող հողերի հետ նշվում են նաև այգիներ, առանց դրանց տեղը նշելու։ Իսկ այգու հիշատակումն էլ հենց կասկածանք է հարուցում. Անիում հազիվ թե այգիներ լինեին։ Տեղանքի բարձրությու-

[190] Լեո, Անի, էջ 274։

[191] Նույն տեղը։

[192] Նույն տեղը, էջ 273։

[193] Տե՛ս Գևորգյան Մելիխսեդեկ, Համառոտ տեղագրություն հնությանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 43։

[194] Նույն տեղը, էջ 37։

նը և բաց սարահարթ լինելն այն ժամանակվա պայմաններում այդիների գոյությունը բացառում էին։

Հայտնի է, որ X—XI դարերում և հետագայում, մինչև մոնղոլական ծանր լծի հաստատումը, Հայաստանում երկրագործությունը, տնտեսության մյուս ճյուղերի հետ միասին, բավական առաջադիմում է. արորը տեղ-տեղ փոխարինվում է երկաթե խոփ ունեցող ծանր գութանով, որը գործի էր դրվում «վեցկեռով» վեց եզների (կամ գոմեշների) օգնությամբ, հիմնական երկրագործական շրջաններում, այդ թվում և Շիրակում կիրառվում էր հացահատիկային եռադաշտյան սիստեմը՝ աշնանացան ցորենի, գարնանացան ցորենի (կամ գարու) ու հարոսի հերթականությամբ, ընդարձակվում էին ցանքատարածությունները, կառուցվում ոռոգման ջրանցքներ ու ջրավազաններ, կիրառվում էր պարարտացումը գոմաղբով, որը նույնիսկ դառնում էր ֆեոդալի համար գյուղացու պարտադիր աշխատանքներից մեկը։

Անիի պեղումների ընթացքում հայտնաբերվել են երկրագործական դանազան գործիքներ՝ տարբեր տեսակի գութանի երկաթե խոփեր, գերանդիներ, բահեր ու բրիչներ, կամեր, եղաններ և այլն[195]։ Իսկ դրանց առկայությունը ցույց է տալիս, որ քաղաքում երկրագործությունը տնտեսության ճյուղերից մեկն էր։ Քանի որ պեղումները գրեթե ամբողջապես կատարվել են միայն քաղաքի կենտրոնական թաղերում, ապա զարմանալի չէ, որ երկրագործական գործիքներն ու երկրագործության մեջ օգտագործվող գույքը համեմատաբար քիչ են հայտնաբերվել։ Ըստ երևույթին բազմազան և ավելի մեծ քանակությամբ գործիքներ ու գույք կգտնվեր, եթե հնագիտական հետազոտություններ կատարվեին հատկապես վաղեմի քաղաքի ենթադրվող արվարձաններում։

Դժվար է ասել, թե ինչպիսի սերմնափոխանակություն էր կատարվում քաղաքի երկրագործության մեջ, ինչքան էր սովորաբար բերքի քանակը, ինչ կուլտուրաներ էին մշակում և այլն։ Նյութերի բացակայությունն այդ հնարավորությունը մեզ չի տալիս։ Սակայն ակնհայտ է, որ Շիրակի բաղկացուցիչ մասը կազմող Անիի սարահարթում առաջին հերթին պետք է մշակվեր ցորեն (և ընդհանրապես հացահատիկ), որով հնագույն ժամանակներից ի վեր «Շարայի բաժին ստացած» այդ դաշտն այնքա՞ն հայտնի էր հացառատությամբ։ Այդ են հուշում նաև հայտնաբերված երկրագործական գործիքների տեսակները։ Սակայն,

[195] Տե՛ս Հ. Օրբելի, *Անդո ավերակները*, Վաղարշապատ, 1919, էջ 51, նույնի «Избранные труды», Ереван, 1963, էջ 86։

ինչպես երևում է, հացահատիկի մշակությամբ չէին սպառվում Անիի երկրագործական զբաղմունքները։ Քաղաքի տասնյակ ձիթհանքերի հումքի մի մասը հավանաբար տալիս էին արվարձանները՝ մշակելով քնջութ, կտավհատ (դանգրահեր վուշ), իսկ քաղաքացիների ամենօրյա պահանջները բավարարելու համար բացառված չէր նաև բանջարանոցների գոյությունը բուն քաղաքում և, հատկապես, արվարձաններում ու քաղաքը շրջափակող ձորերի նեղ հովիտներում։

Այստեղ հացահատիկի ու մասամբ ձիթհատու կուլտուրաների մշակությամբ զբաղվելու նպատակով այն ժամանակվա պայմաններում, հազիվ թե արհեստական ոռոգման համար անհանգստանային։ Անիի սարահարթում առանց արհեստական ոռոգման և՛ հացահատիկների, և՛ քնջութի ու վուշի մշակությունից կարող էին ստանալ իր ժամանակի համար բավարար բերք։ Սակայն Անիում խմելու ջրից բացի, մտածել են նաև ոռոգման ջուր ունենալու մասին։ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ տնտեսական այլ նպատակների հետ, ոռոգման համար օգտագործում էին նոր ժամանակներում Դեղիկլեր կոչված գյուղի գետակի ջրերը։ Նա գրում է, որ այդ գետակի ջրերի մի մասը (Սմբատ II-ին վերագրված ջրանցքով) հոսում էր դեպի Անի՝ այստեղ գործի դնելով Գայլիձորի ջրաղացներն ու ոռոգելով մերձակայքի հողերը, իսկ մյուս մասը տարվում էր Հոռոմոսի վանքի հանդամասերը[196]։ Հավանաբար խմելու ջրի ջրմուղով և ոռոգման ու տնտեսական այլ նպատակների համար օգտագործվող այդ գետակի ջրերով չէր սահմանափակվում մեծ քաղաքի ջրամատակարարման հարցը։ Եվ դա զարմանալի չէ։ Մենք գործ ունենք Անիի պատմության այն ժամանակաշրջանի հետ, երբ ոռոգիչ ջրանցքների ու ջրավազանների կառուցումը սովորական էր դարձել Սյունիքում, Վասպուրականում, Արարատյան դաշտում և այլուր[197]։ Իսկ թե ինչ հիմունքներով էին քաղաքացիներն օգտվում ոռոգման ջրանցքի ջրերից, կտեսնենք քիչ հետո, հարկերի ու տուրքերի մասին խոսելիս։

Ենթադրվում է, որ քաղաքի հողատարածությունների, հավանաբար հիմնականում բանջարանոցների, պարարտացման համար օգտագործում էին (գոմաղբից բացի) թռչնաղբ։ Անիի այսպես կոչված քարայրային թաղամասերում խանութների, եկեղեցիների, բնակելի տների մոտ հսկայական քանակությամբ աղավնիների

[196] Թ. Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, աշխ. *Ժողովածու*, էջ 328։

[197] Տե՛ս Ս. Գ. Պողոսյան, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. II, էջ 37—38։

ծերտը հավաքելու ու իբրև պարարտանյութ (և դարաղանյութ) օգտագործելու համար պատրաստել էին ստորգետնյա հաղարավոր բներ, որոնք դասավորված էին շարքերով։ Ն. Մ. Տոկարսկին պատմում է, որ ինքը 1915 թվականին Արևմտյան Հայաստանում շրջագայելիս Օլթի քաղաքի մոտ, հովախ կոչված գյուղից վերև գտնվող բերդում տեսել է նույն կարգի աղավնատներ, որոնք սակայն պատրաստված են եղել քարից և արշավախմբի անդամները զանազան կիսաառասպելական ենթադրություններ են արել դրանց պատրաստելու ու նպատակների մասին։ Սակայն հետագայում, Անիի աղավնատներին ծանոթանալուց հետո, ինքը եկել է այն համոզման, որ աղավնատները պատրաստել են դրանց աղբը հավաքելու և իբրև լավագույն պարարտանյութ օգտագործելու համար[198]։

Ահա այն բոլոր նախադրյալներն ու փաստերը, որոնք ընդհանուր գծերով բնութագրում են Անիի X—XI դարերի տնտեսության օժանդակ ճյուղերից մեկը՝ հացահատիկի մշակումն ու բանջարաբուծությունը։

Անիի գյուղատնտեսական զբաղմունքները, սակայն, չէին սահմանափակվում դրանով միայն։ Հանրահայտ է, որ միջին դարերում, ինչպես և հնում, երկրագործությունն առանց անասնապահության դժվար է պատկերացնել, որովհետև միակ քարշող ուժը՝ եղները, գոմեշները, ձիերն էին։ Մեզ մոտ այդ նպատակով սովորաբար օգտագործվել են եղներն ու գոմեշները։ Այդ ընդհանուր, միանգամայն տրամաբանական դրույթին անշուշտ դեռ քիչ է Անիում անասնապահական զբաղմունքի գոյության մասին շատ թե քիչ արժանահավատ ենթադրություն անելու համար։ Սակայն Ասողիկի մի անուղղակի վկայությունից արդեն կարող ենք եզրակացնել, որ քաղաքում իրոք անասնապահությունը նույնպես տնտեսության ճյուղերից մեկն էր։ Այսպես, Ասողիկը, պատմելով Սմբատ II-ի մեծ հարստության և փարթամության մասին, վկայում է, որ Անիում կային հացի ու գինու մեծ պաշարներ և խոտի մեծ ամբարանոց, որտեղ պահվում էին մի շարք տարիների ընթացքում հավաքված ու դիզված խոտի պաշարները[199]։ Խոտի այդ դեզերը կարող էին պահվել արքայական ձիանոցի, բերդապահ զորքի ձիերի կամ այլ անասունների համար։ Միայն հաստատ է, որ խոտի հսկայական դեզերի առկայությունը, որ այնքան

[198] **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., Ереван, *1961, էջ 257։ Հմմտ.* **Վարազդատ Հարությունյան,** *Անի քաղաքը, էջ 36։*

[199] *Տե՛ս* **Ասողիկ,** *Պատմութիւն տիեզերական, էջ 253—254։ Հմմտ.* **Լեո,** *Անի, էջ 273։*

խնամքով պահպանվում էր տարիներով, ենթադրում է նաև անասնապահության գոյությունը։ Տասնյակ ձիթհանքերում իբրև շարժիչ ուժ օգտագործում էին գոմեշներ ու եզներ, որոնք, անշուշտ, պահում էին տեղում, քաղաքի արվարձաններում։ Վերջապես քաղաքում կային մի քանի արհեստագործություններ, որոնք ամբողջապես կապված էին տարանցիկ առևտրի և տեղական անասնապահության հետ (պայտարարություն, համեստագործություն և այլն)։ Եթե տեղում անասնապահություն չլիներ, հազիվ թե քաղաքում այնքան պայտագործներ ու համեստագործներ լինեին, որպեսզի կազմեին առանձին-առանձին արհեստագործական եղբայրություններ, յուրաքանչյուրն զբաղեցնելով մի փողոց կամ մի շարք։

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների և գավառների գյուղատնտեսության նման, Անիում ևս գոյություն են ունեցել չորս կարգի տնտեսություններ՝ պետական, տերունի, վանական-եկեղեցական և մանր, որոնցից համեմատաբար զարգացած ու զգալի մասով ապրանքային բնույթ ունեին առաջին երկուսը։ Մշակում էին հացահատիկ, կտավհատ և քնջութ, բանջարեղեն, կանաչեղեն։ Քաղաքն ուներ իր պարտեզներն ու ծաղկանոցները։

Ահա այսպիսին էր Անիի գյուղատնտեսական զբաղմունքների ընդհանուր վիճակը X—XI դարերում։

Ե. Հարկերն ու տուրքերը և հարկադիր աշխատանքները

Միջնադարյան Հայաստանի հարկերը, տուրքերն ու հարկադիր աշխատանքները տարբեր ժամանակների ու ծագման բազմաթիվ անուններով հիշատակված մի բարդ սիստեմ են[200]։ Դրանում կարող ենք գտնել ոչ միայն հայկական, այլև արաբական, պարսկական, քրդական, թուրքական ու մոնղոլական, հունական ու վրացական ծագման այնպիսի հարկեր ու տուրքեր, որոնց իմաստն առ այսօր չի լուսաբանված։ Էլ չենք խոսում դրանց չափերի մասին, որոնք ընդհանրապես շատ աղոտ են հայտնի։ Սխալ կլիներ, եթե ասենք հարկերն ու տուրքերը քիչ են ուսումնասիրվել, կամ շատ սակավ են սկզբնաղբյուրները։ Մշ, բավական շատ են ուսումնասիրվել և աղբյուրների աղքատությունից էլ տրտնջալու առիթները

[200] *Տե՛ս* **Н. Я. Марр,** Ани, *էջ 23։ Հմմտ.* **В. Н. Бенешевич,** Три аннийские надписи XI в., Аннйская серия, VII, вып. II, Петроград, 1921, *էջ 1—11։*

քիչ են: Սակայն դրանց հաղորդած տեղեկություններից շատերն անորոշ են և հետազոտողներին բանալի չեն տալիս ըստ էության յուսաբանելու հասարակության ներքին կյանքի համար այնքա՜ն կարևոր այդ բնագավառի մի ամբողջ շարք հարցեր: Հարկերի ու տուրքերի մասին տեղեկություններ կան Անիի վիմագիր արձանագրություններում (առանձնապես ս. Առաքելոց եկեղեցու արձանագրություններում), ինչպես և պատմագիրների երկերում: Դրանք տարբեր առումներով ուսումնասիրել են Ղ. Ալիշանը, Ն. Յա. Մառը, Ս. Ա. Եղիազարովը, Լեոն, Հ. Մանանդյանը, Ս. Բարխուդարյանը և ուրիշներ:

Անիի հարկերի ու տուրքերի համեմատաբար լիակատար ցուցակը կազմել է Ղ. Ալիշանը: Նրա կազմած այդ ցուցակի մեջ մտել են ինչպես Բագրատունիների թագավորության, այնպես էլ հետագայի՝ հունական-բյուզանդական, սելջուկյան, Զաքարյան ու մոնղոլական տիրապետության ժամանակների հարկերն ու տուրքերը: Ըստ նրա այդ ցուցակի, Անիի և նրա շրջակայքի վիմագիր արձանագրություններում հիշատակված հարկերի, տուրքերի ու մաքսերի թիվը, նշված ժամանակաշրջաններում, հասնում էր 40-ի[201], բայց տարբերակների հետ նա տողատակում հիշատակում է մոտ 70 տեսակի հարկեր ու տուրքեր՝ սոսկ նշելով դրանց հիշատակության ժամանակները, առանց հատուկ ուսումնասիրության[202]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Անիի հարկերի ու տուրքերի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար, նախ անհրաժեշտ ենք համարում, ըստ Ղ. Ալիշանի, կազմել այն հարկերի ու տուրքերի ցուցակը, որոնք վերաբերում են Բագրատունիների թագավորության շրջանին և բյուզանդական տիրապետության տարիներին (1045—1064), նկատի ունենալով որ Բյուզանդիայի գրավմամբ Անիի հարկային սիստեմի մեջ էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, եթե նկատի չունենանք առանձին հարկերի թեթևացման ու ոչ կարևոր մեկ-երկու հարկի վերացման մասին բյուզանդական կառավարիչների հրամանագրերը, որոնք տեղ են գտել քաղաքի վիմագիր արձանագրություններում: Սակայն դրանք իրարից տարբերելու համար, բյուզանդական տիրապետության տարիներին հիշատակված հարկերի ու տուրքերի մասին նշում ենք փակագծերի մեջ՝ «բ» տառով, իսկ եթե երկու ժամանակաշրջաններում էլ հիշատակվում է, ապա փակագծում գրում ենք «հ» և «բ»:

[201] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 91:
[202] Նույն տեղը, էջ 91—92:

Ահա այդ ցուցակը Ղ. Ալիշանի ընդունած կարգով.

1. Այդոյ (հարկ)
2. Անգարիոն (բ)
3. Բամբակի (հարկ)
4. Բերդի (հարկ)
5. Գինեւուրի՝ սայլով կամ գրաստով (բաժ, բ)
6. Եկեղեցաց հարկ
7. Թաստակ (հ և բ)
8. Ծուժ
9. Կամին (հարկ կամ կոռ, բ)
10. Կապիճք (տուրք, բ, որ 6 դրամ էր և իջեցվել է 4 դրամի)
11. Կոռ (եղին)
12. Կոռ մարդոյ
13. Կոռ վեցկէ (բ)
14. Հարկ (ընդհանուր)
15. Հարկ մսագործ (սպանդանոցի կամ մորթելեաց, բ)
16. Մորթելեաց բաժ (բ)
17. Մրուր
18. Շալակաւորի (բաժ, հ և բ)
19. Շարիաթ (հասարակ կոչումն տրից)
20. Շարիաթ իւղոյ
21. Պախտ (բ)
22. Պաշտոտ
23. Սայլի (բաժ, բ)[203]:

Այս ցուցակը շատ հետու է կատարյալ և ամբողջական լինելուց: Նախ, դրանում տեղ են գտել միայն Անիի ու նրա շրջակայքի մի քանի բնակավայրերի վիմագիր արձանագրություններում հիշատակվող հարկերն ու տուրքերը, երկրորդ, ինչպես ինքը՝ Ղ. Ալիշանն է խոստովանում, «Իբրև քառասուն տեսակք բաժից և տրից կամ մաքսից նշանակին յարձանս Անւոյ և սահմանացն, որոյ քննութիւն և գիտութիւն արդարև պիտանի էր ի ծանօթութիւն քաղաքական տնտեսութեան ժամանակին. այլ և մեր ոչ կարացեալ ի վերայ հասանել ամենայնի, և կարօտեալ ևս ստոյգ ընթերցուածոյ ոմանց յանուանացն, նշանակեմք աստանոր ի մի վայր...»[204], երրորդ, Անիի արձանագրություններում հիշատակված ոչ բոլոր հարկերն ու տուրքերն էին, որ վերաբերում էին քաղաքին, և վերջապես, չորրորդ, մեծավաստակ հայագետի կազմած ցուցակում տեղ չեն գտել մեր մատենագիրների երկերում ու գրիչների հիշատակարաններում նշվող մի քանի հարկեր ու տուրքեր: Եվ ընդհանրապես, ինչպես ասվեց, ըստ ժամանակաշրջանների նշանակված հարկերի, տուրքերի և հարկադիր աշխատանքների, նույնիսկ սոսկ ցուցակների կազմումը կապված է դրեթե անհաղթահարելի դժվարությունների հետ:

Սակայն Ղ. Ալիշանի «Շիրակ»-ի լույսի ընծայումից հետո անցել է գրեթե մեկ հարյուրամյակ և այդ մեկդարյա ժամանա-

[203] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 91—92:
[204] Նույն տեղը:

կաշրջանում հայագիտությունը բազմաթիվ այլ հարցերի հետ անդրադարձել է նաև միջնադարյան Հայաստանի հարկատեսակների ու տուրքերի լուսաբանմանը, որից օգտվելով, փորձենք որոշ պարզություն մտցնել X—XI դարերի Անիի հարկացուցակում, սկզբում խոսելով ցուցակում մտածների բնույթի, ապա այն հարկերի ու տուրքերի մասին, որոնք Դ. Ալիշանի կազմած ցուցակում չեն մտել։

«Այգոյ» հարկը, որ գոյություն է ունեցել Բագրատունիների թագավորության շրջանում, իմաստով միանգամայն հասկանալի է։ Սակայն անհայտ է մնում դրա չափը և Անիում գոյություն ունենալը։ Կարծում ենք, որ դա կամ Անիում չի եղել, կամ վերաբերում էր բանջարանոցներին ու մանր պարտեզներին, որպիսիք իրոք կային մայրաքաղաքի գետահովտային արվարձաններում։

Անգարիոն կոչված հարկը հիշատակվում է բյուզանդական կարճատև տիրապետության շրջանում (Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 27)։ Ա.Ճառյանը «անգարիոն»-ը համարում է գործածված «պարսկական սուրհանդակների պարտադիր ծառայության» իմաստով և կոչում է ուղղակի «տարապարհարկ»[205]։ Արձանագրության մեջ նշվում է Անի քաղաքի բնակիչներին այդ պարհակից (տուրքից) ազատելու մասին։ Արձանագրությունը վերաբերում է XI դ. 50-ական թվականների սկզբներին, հետևապես, ամենայն հավանականությամբ այդ տուրքն Անիում գոյություն ուներ նաև Բագրատունիների թագավորության շրջանում։ Ցուցակում տեղ գտած մյուս չորս հարկերը՝ Բագրատունիների շրջանի բամբակի և բեղդի հարկերը, բյուզանդական տիրապետության տարիների «գինեւորի», բաժը և Անի-Շիրակի թագավորության օրոք հիշատակվող եկեղեցական հարկը իմաստով նույնպես հասկանալի են, իսկ վերջինս նույնիսկ հայտնի է իր չափով. եկեղեցական հիմնական հարկը սովորաբար կոչվում էր տասանորդ և կազմում էր եկամտի 1/10 մասը, չհաշված մյուս տուրքերը և «նվիրատվությունները»։ Եկեղեցուն տրվող հարկը դալիս էր հնից և շարունակել է իր գոյությունը հետագա դարերում։

Բամբակի հարկ էր կոչվում ըստ երևույթին դրա վաճառքից դանձվող տուրքը, որ մտնում էր խալա կոչված ընդհանուր հարկի մեջ, իսկ բեղդի հարկը հավանաբար այն պարհակն էր, որ քաղաքացիները պարտավոր էին կատարել քաղաքի պաշտպանական կառուցվածքների վրա։

[205] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 183, հմմտ. Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1956, էջ 232։

Թաստակ կոչված տուրքը (կամ հարկ) հիշատակվում է վերը նշված բյուզանդական կառավարիչ Ահարոնի թողած արձանագրության մեջ, որը վերաբերում է 1045—1054 թվականներին, բայց հավանաբար այն գոյություն ուներ (թերևս այլ անունով) նաև Բագրատունիների թագավորության օրոք։ Անի քաղաքի թաստակը կազմում էր երկու լիտր և, ենթադրվում է, որ այն դանձել են մեծամեծների օգտին։ Ըստ Ս. Պողոսյանի, դա է պատճառը, որ արձանագրության մեջ այդ հարկի վերացման համար նշվում է «քաղաքի պաշտոնյաների համաձայնությունը»[206]։ Սակայն «Թաստակ» կոչված տուրքն ավելի լայն քննության է ենթարկվել Ս. Եղիազարովի ու Հ. Մանանդյանի մոտ, որոնք երկուսն էլ համարծիք են այն լրացուցիչ հարկ, նվիրատվության նման մի տուրք համարելու հարցում։ Ի լրումն դրա Հ. Մանանդյանը «Թաստակ»-ը ուղղակի համարել է տեղական պաշտոնյաներին տրվող տուրք, որը կազմել է հողային հարկի 1/4 մասը[207]։

Ծուծ կոչված տուրքի և՛ բնույթը, և՛ չափը մնում են չլուսաբանված։ Այն վիմագիր արձանագրության մեջ հիշատակվում է որպես Բագրատունիների շրջանի տուրք։

Մյուս հարկերից, տուրքերից ու կոռային աշխատանքներից իրենց բնույթով հասկանալի են կամիճ հարկը կամ կոռը (բյուզանդական շրջանի), կապիճը, որը դրամական հարկ էր (նույնպես բյուզանդական շրջանի) և, ըստ նշված արձանագրության, իջեցվել էր 4 դրամի, կոռ եզին, կոռ մարդո-ն Բագրատունիների թագավորության շրջանի, կոռ վեցկի բյուզանդական տիրապետության տարիների կոռային աշխատանքներ էին, որոնցից ոմանք, հավանաբար, վերաբերում էին նաև Անի քաղաքին։ Բնույթով միանգամայն հասկանալի, բայց չափով մեզ համար անծանոթ են մնում նաև բընդհանուր հարկը, մսագործին ու սպանդանոցին անասուն մորթելու համար տրվող տուրքը։ Չեն պարզաբանված նաև «մռուր»-ի և «պաշտխուռ»-ի բնույթն ու չափը։ Դրանք երկուսն էլ հիշատակվում են Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում, իսկ «շալակավոր»-ի բաժը (շալակով ապրանք վաճառելու համար տրվող տուրքը՝ բաժը), որ հիշատակվում է և՛ Բագրատունիների, և՛ բյուզանդական տիրապետության շրջանում, և՛ բյուզանդական

[206] Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., էջ 221։

[207] С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, публичного и частного, вып. I, Киев, 1919, էջ 42, Հ. Մանանդյան, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Պետհամալսարանի «Տեղեկագիր», № 4, Երևան, 1928։

տիրապետության տարիների «սայլ»-ի տուրքը (պարհակ) ուղիղ իմաստով հասկանալի են, միայն դարձյալ անորոշ են դրանց չափը, քանակը։

Բագրատունիների թագավորության շրջանում Անիի վիմագիր արձանագրություններում հիշատակված են «շարիատ» կոչված երկու հարկ, որոնցից մեկը ուղղակի կոչված է «շարիատ», որը Ղ. Ալիշանը համարում է «հասարակ կոչումն արից», իսկ մյուսը՝ «շարիատ իւղոյ»[208]։ Վերջինս պարզ է, տուրք էր, որ վերցվում էր յուղով, կամ յուղից։ Ընդ որում, առաջինը՝ «շարիատը» բյուզանդական շրջանում չի հիշատակվում։ «Շարիատը» հողի հարկ էր, ենթադրում, որ վերցվում էր ստացված բերքից։ Բյուզանդական շրջանում այս հարկը Անիի վիմագիր արձանագրություններում չի հիշատակված։ Կարծում ենք, որ այս հարկը հավանաբար քաղաքացիների հողերի վրա չէր տարածվում և ըստ երևույթին այդ պատճառով էլ այն չի հիշատակվում քաղաքի գրեթե բոլոր տեսակի հարկերը շոշափող բյուզանդական կառավարիչների թողած վիմագիր արձանագրություններում։ «Շարիատ»-ը մասնակի տուրք չէր, այլ ընդհանուր հարկ և այդպիսին գոյություն ունենալու ու ուժի մեջ լինելու դեպքում, թվում է, թե անպայման կհիշատակվեր։

Բյուզանդական տիրապետության շրջանում հիշատակվում է մի այլ՝ «պախատ» կոչված հարկ, որը Ղ. Ալիշանն ուղղակի կոչել է «պախատ տանց»[209]։ Այն գրեթե նույնությամբ տեղ է գտել Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում պախտ բառի դիմաց, միայն եզակի թվով՝ «տան հարկ» ձևով[210]։ Այս հարկը վերցնում էին քաղաքի բնակիչներից՝ նրանց տան ու դրա զբաղեցրած հողի համար։ Այն ամենայն հավանականությամբ դրամական հարկ էր։ Այս հարցում դժվար է միանալ Հ. Մանանդյանի ենթադրական կարծիքին, ըստ որի «պախատ»-ն ու «շարիատ»-ը հոմանիշներ էին՝ սովորական հողային հարկ, որը գանձվում էր բնամթերքով[211]։ Չէ՞ որ արձանագրության մեջ «պախատ»-ի մասին ուղղակի ասված է. «պախատից տանց քաղաքիս»։

Անկասկած է, որ Անիի և նրա մերձակայքի վիմագիր արձանագրություններում չեն հիշատակված բոլոր հարկերը, տուրքերն ու հարկադիր աշխատանքները։ Գոյություն ունեին դրանց ուրիշ տեսակներ, որոնք առիթ չլինելու պատճառով չեն հիշատակվել, իսկ հիշատակվածների թվում էլ կան այնպիսիները, որոնք մեզ համար մնում են միանգամայն անհայտ։ Սակայն կան նաև Անիի վիմագիր արձանագրություններում հիշատակված հարկեր ու տուրքեր, որոնք չեն մտել Ղ. Ալիշանի կազմած ցուցակի մեջ, որովհետև նրա ժամանակ ոչ բոլոր արձանագրություններն էին հայտնի և հայտնիները ոչ բոլորն էին վերջնականապես վերծանված, որի մասին, ինչպես տեսանք, նշում է ինքը՝ ցուցակի հեղինակը։ Անհրաժեշտ ենք համարում նշել դրանցից մի տուրքի մասին, որ մեծ տարածում ուներ Հայաստանում և կապված էր երկրագործության ու այգեգործության հետ։ Դա ոռոգման ջրից օգտվելու համար ջրանցքն անցկացնելու՝ պետությանը, ֆեոդալին կամ վանքին (եթե, իհարկե, ջրանցքը գյուղական համայնքը չէր կառուցել) տրվող հարկն էր՝ «խալա»-ն, որ հիշատակված է նաև Անիի ս. Փրկիչ եկեղեցու 1036 թվականի արձանագրության մեջ[212]։ Արձանագրությունը վերաբերում է Աշնակ գյուղում ս. Փրկչին տրված այգուն։ Ահա դրա համապատասխան հատվածը. «Արդ տուաք որմով եւ ծառովք պտղաբերովք եւ անպտղանք եւ խոտագետովք եւ։ Գ։ աւր ջուր ազատ ի խալաէ եւ ի գեղջէ զկտակս զայս...»[213]։

Ինչպես տեսնում ենք, խալա-ն տրվում էր ոռոգման ջրից օգտվելու համար (որոշ տեղերում նաև անջրդի այգիների ու տեխնիկական մշակույթների համար) և ս. Փրկչին նվիրվող այգին երեք օր (հավանաբար շաբաթական) առանց հարկ տալու կարող էր օգտագործել ոռոգելի ջուրը։ Կասկած չկա, որ նույն այդ տուրքն ուժի

---

208 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 92։ Կապիճը եզակի թվով՝ «կապիճ» ձևով գործածվել է որպես հողի տարածաչափ (1 կապիճը մոտավորապես հավասար էր 100 քառ. մ-ի) և հեղուկների չափման միավոր (որ հավասար էր 980 գրամի), տե՛ս ՀՍՀ «Տեղեկագիր», 1947, № 5, էջ 75—76։ Համմ. Ռ. Խ. Հակոբյան. Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, էջ 225—226։

209 Նույն տեղը։

210 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. ե, Երևան, 1931, էջ 781։

211 Հ. Մանանդյան. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմութ., Պետհամալսարանի «Տեղեկագիր», 1928, № 4։

212 Այս արձանագրությունը գետեղված է նաև Ղ. Ալիշանի մոտ («Շիրակ», էջ 84) և զարմանալի է, որ արձանագրության մեջ հիշատակված «խաուա»-ն (կամ «խալե») չի մտցված իր կազմած ցուցակի մեջ։ Նրա մոտ այդ անունով երկու հարկ կա նշված՝ «խալա-խաղողի» և «խալա-գինւոյ», որոնք հիշատակված են XIII դարում և չեն կարող նույնանալ ս. Փրկչի 1036 թ. արձանագրության «խալա»-ի հետ, որը ոռոգման ջրի տուրքն էր։ Ըստ երևույթին Ղ. Ալիշանն այդ հարկն իր կազմած ցուցակի մեջ չի մտցրել միայն այն պատճառով, որ ուղղակիորեն Անիին չէր վերաբերում, այլ Աշնակին։ Բայց «խալա»-ն երկրում համընդհանուր հարկ էր։ Այն, մեր կարծիքով, հավասարապես վերաբերում էր նաև Անիին, որտեղ կառուցված էր ոռոգման ջրանցքը։

213 Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 48։

մեջ էր նաև Անիում։ Այստեղ ևս ոռոգման համար կառուցված էր առու, որի ջրերով քաղաքի և նրա արվարձանների բնակիչներն իրենց ցանքատարածություններն ու բանջարանոցները ոռոգելու համար տալիս էին խալա կոչված այդ հարկը։ Հավանաբար այդ տուրքի չափը տարբեր շրջաններում տարբեր էր. ավելի չորային շրջաններում, որտեղ մանավանդ եթե զբաղվում էին այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ, ըստ երևույթին այն ավելի բարձր էր, իսկ համեմատաբար խոնավ կլիմա ունեցող գավառներում՝ համեմատաբար ցածր։ Բոլոր դեպքերում բնական վիճակից հանված ջուրը ոռոգման նպատակներով օգտագործելու համար սահմանված էր որոշ բանակի տուրք։ Ահա թե ինչպես է պրոֆ. Ս. Սամվելյանը ձևակերպել ոռոգման ջրի շուրջը միջնադարում ձևավորված հարաբերությունների բնույթը. «... ջուրը, որ հանվում էր իր բնական վիճակից և արհեստական ոռոգման է ծառայում որոշ շինարարության միջոցով, դառնում է իրավահարաբերությունների օբյեկտ և սեփականության իրավունքով պատկանում է բացարձակապես կալվածատեր ֆեոդալին, երբ սա իր նյութական միջոցներով է սեփականատեր դառնում, և կամ գյուղական համայնքներին, եթե սրանց աշխատանքով ու միջոցներով է ստեղծվել արհեստական ոռոգման սիստեմը»[214]։ Լիովին կարելի է համաձայնել մասնագետի այդ եզրակացությանը, միայն ավելացնելով, որ ոռոգման առուն կարող էր կառուցված լինել նաև վանքերի կամ պետության կողմից։ Անիի ոռոգման առուն Բագրատունիների շրջանում, ամենայն հավանականությամբ, կառուցվել էր պետության միջոցներով և կազմում էր պետական սեփականություն։

Այսքանով էլ չեն ավարտվում X—XI դարերում Անիում եղած հարկերն ու տուրքերը։ Կային ուրիշ բազմաթիվ հարկեր, տուրքեր ու հարկադիր աշխատանքներ ևս (արհեստավորներից ու առևտրականներից վերցվող հարկեր, գյուղից քաղաք վաճառքի բերված մթերքների համար վերցվող տուրքը՝ դռնագիրը, պատերազմների ժամանակ սահմանված տուրքեր ու հարկադիր աշխատանքներ և այլն), որոնց վերաբերյալ մեր ձեռքի տակ չկան համապատասխան նյութեր ու փաստեր։

Հասարակական հարկադիր աշխատանքները՝ բերդերի, պաշտպանական այլ կառուցվածքների, ճանապարհների և այլ օբյեկտների կառուցումը կատարվում էր գյուղացիների ու քաղաքացիների հարկադիր աշխատանքներով[215]։

[214] Պրոֆ. Ս. Սամվելյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, հ. I, Երևան, 1939, էջ 203։

[215] Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք Հայոց*, մաս 2, հոդվ. 1։

Հարկերի ու տուրքերի հավաքումը կատարվում էր «կոփիչ»-ների և դրանց ստորադրված վերակացուների միջոցով։ Կոփիչների վրա էր ընկած չափերի ու կշիռների վրա հսկելը, դրանք կեղծողներին պատժի ենթարկելը և շուկայական ոստիկանական այլ պարտականություններ[216]։

Հավանաբար արհեստավորական ու առևտրական եղբայրությունները նույնպես որոշակի դեր էին խաղում հարկերի հավաքման գործում։

Ինչպես նշվեց, տնտեսական կյանքի ընդհանուր առաջադիմության, քաղաքների, ներքին ու արտաքին առևտրի զարգացման հետևանքով X—XI դարերում երկրում ավելի լայն չափեր էին ընդունում դրամական հարաբերությունները։ Դրամն այդ շրջանում դառնում է արտաքին ու տարանցիկ առևտրի հիմնական միջոցը, կուտակման և պարգևանքի առարկա, որը մեծ գումարներով նվիրաբերում էին հատկապես վանքերին ու եկեղեցիներին։ Այն աստիճանաբար սկսում էր մուտք գործել երկրի տնտեսական կյանքի բոլոր բնագավառները։ Հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում՝ VII—IX դարերում գրեթե միայն պետական հարկերն էին հավաքում դրամով, իսկ մնացած հարկերը, որոնց թվում և ֆեոդալին տրվող հողի հիմնական հարկը տրվում էր բնամթերքով՝ բերքի որոշակի մասով։ Դրությունը փոխվում է IX—XI դարերում, երբ երկիրն արդեն թևակոխում է զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը։ Այժմ արդեն սկսում են դրամով գանձել նաև ֆեոդալին տրվող հողի հարկը՝ հողային renտան[217]։ Բնատուրքից դրամական հարկին անցնելը, որ կատարվեց X—XI դարերում, անշուշտ, հիմնականում վերաբերում է գյուղին, քաղաքում, մանավանդ Անիում, ինչպես տեսանք, գյուղատնտեսությունը երկրորդական-երրորդական նշանակություն ուներ, իսկ քաղաքի տնտեսությունը բնութագրող արհեստագործությունից ու առևտրից վերցվող հարկը հիմնականում միշտ էլ գանձվել է դրամով։

Ընդհանուր գծերով այդպիսին էր Անիի հարկային սիստեմը X—XI դարերում, որն ամենևին հավակնություն չունի նույնիսկ բավարար համարվելու։

[216] Տե՛ս С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II, Городские цехи, введение, էջ XL։

[217] Ս. Պ. Պողոսյան, *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ.*, էջ 202։

Զ. Հասարակական-տնտեսական հարաբերությունները

X—XI դարերի Անին տիպիկ ֆեոդալական քաղաք էր, մի քանի ավելի մանր թագավորությունների գլուխ կանգնած՝ Անի-Շիրակի թագավորության մայրաքաղաքը։ Հետևապես, քաղաքի տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր կողմերը կրում էին ֆեոդալիզմի կնիքը, ֆեոդալականացման էին ենթարկվել, եթե կարելի է այդ ձևով բնութագրել։ Ամփոփելով սկզբնաղբյուրների հաղորդած անուղղակի տեղեկություններն այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքների բնակչության հասարակական շերտերի մասին, ակադեմիկոս Հ. Մանանդյանը գրում է, որ դրանցում «բնակչության դգալի մասը կազմում էր խոշոր և մանր հողատիրական արիստոկրատիան, ինչպես նաև քաղաքային բնակիչները, որոնք ունեին իրենց այգիները, բանջարանոցները և երկրագործական տնտեսությունը»[218]։

Բնակչության հասարակական խմբերի տեսակետից այդպիսի քաղաք էր և Անին։ Բայց նա պատկանում էր Հ. Մանանդյանի ասած այն «խոշոր քաղաքների» թվին, որոնք «գործուն մասնակցություն ունեին միջազգային առևտրին, լինելով միաժամանակ առևտրական ու արհեստավորական բնակչության» մեծ կենտրոն[219]։ Քաղաքի բնակչության ցածրագույն խավը կազմում էին օրավարձով աշխատողներն ու գյուղատնտեսությամբ զբաղվողները։

Քաղաքում գոյություն ուներ սեփականատիրական չորս ձև՝ պետական, խոշոր մասնատիրական (տերունի), եկեղեցական և մանր սեփականատիրական։ Պետական (արքունական) սեփականությունը բաղկացած էր արքունի պալատից ու դրա օժանդակ շենքերից, պաշտպանական բոլոր կարգի կառուցվածքներից ու միջոցներից, ինչպես նաև զանազան կալվածքներից։ Այլապես անբացատրելի կլիներ Ասողիկի վկայությունը Սմբատ II-ի խոտի հսկայական դեզերի, գինու ու հացի մեծ պաշարների և այլ ունեցվածքների մասին[220]։ Վերջապես, մայրաքաղաքն ինքը իրավական առումով Բագրատունի թագավորների սեփականությունն էր համարվում։ Պետական ու արքունի գանձերը հիմնականում գտնվում էին մայրաքաղաքից դուրս՝ բերդ-գանձարաններում (Մաղասբերդում, Տիգնիսում և այլուր)։ Երկրի ոսկու և արծաթի բոլոր հանքավայրերը համարվում էին առաջինները թագավորի, իսկ երկրորդները՝

[218] Я. А. Манандян, О торговле и городах Армении, էջ 220։
[219] Նույն տեղը։
[220] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 253։

թագուհու սեփականությունը, նրանց էր պատկանում դրանք իրենց ձեռքում պահելու կամ օտարելու իրավունքը։ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» այդ մասին ուղղակի հետևյալն է ասված. «Ի գալառս ոսկեհանս գտեալ յամենայն սահմանս իւրեանց՝ արքայից լիցի, իսկ արծաթ՝ թագուհեաց. եւ ի կամս նոցա և մասնաւորել նոցա կամ ոչ»[221]։ Այնպես որ պետության ու արքունիքի եկամուտներն ու հարստության աղբյուրը միայն հարկերն ու տուրքերը չէին, այլ նաև երկրի ընդերքի հարստությունները, տարբեր տեղերում գտնվող եկամուտները և այլն։ Այս տեսակետից անհնար է համաձայնել Լեոյի հետ, որը նշելով XI դարի սկզբներին Բագրատունիների թագավորության երեք մասի բաժանվելու մասին, գրում է, թե նրանցից «մեկի (նկատի ունի Անի-Շիրակի կենտրոնական թագավորությունը) սեփականությունը միայն Անի քաղաքն էր»[222]։

Ըստ երևույթին Անիում ապրող ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչները, որոնք սովորաբար կատարում էին վարչական ու զինվորական ծառայություն, մայրաքաղաքում հողային տարածություններ չունեին, կամ քչերն ունեին։ Դա մասնավորապես երևում է նրանից, որ ֆեոդալների կողմից եկեղեցիներին ու վանքերին տրված նվիրատվությունների մեջ արտեր ու այգիներ հազվագեպ են հիշատակվում։ Նվիրատվությունները սովորաբար բաղկացած էին կուղպակ-խանութներից, ձիթհանքերից, տներից և այլն[223]։ Նույն կուղպակ-խանութներից, ձիթհանքերից, տներից և այլն[223]։ Նույն նիսկ նրանց սեփականությունը կազմող տները հաճախ գտնվում էին քաղաքից դուրս[224]՝ տարբեր գավառներում։ Օրինակ, Պահլավունի հայտնի տոհմի հայրենական կալվածքները գտնվում էին Բջնիի շրջակայքում, իսկ նույն տոհմի ականավոր ներկայացուցիչ Վահրամ Պահլավունու սեփականությունն էր կազմում իր կառուցած Մարմաշենի տաճարի և Վահրամաբերդի շրջակայքը՝ Անի քաղաքից հյուսիս։ Քաղաքից դուրս գտնվում էին նաև մյուս խոշոր ֆեոդալների (Վասակ Սարգսի և մյուսների) հայրենական ընդարձակ կալվածքները։ Կարծում ենք, որ մայրաքաղաքի հետ դրանց կապող քաղաքին բնորոշ սեփականատիրություններն էին՝ խանութները, ձիթհանքերը, բաղնիքները, շքեղ տները (որոնք կարող էին լինել ուղղակի պալատներ), ինչպես նաև վարչական ու ռազմական

[221] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, էջ 325։
[222] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, 1969, էջ 129։
[223] Տե՛ս, օրինակ, Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179—180, Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 12, 48-49 և այլն։
[224] Н. Марр, Раскопки в Ани в 1904 году, СПб, 1906, էջ 11։

քարձր պաշտոնները և, ընդհանրապես, քաղաքի, մանավանդ մայրաքաղաքի շռայլ կյանքը, որի վերաբերյալ նույնիսկ ստեղծվել են չարագուշակ ավանդություններ ու զրույցներ։ Այս հարցում ուշադրության արժանի է նաև Թ. Թորամանյանի այն կարծիքը, թե Բագրատունիներն իրենք էին բոլոր միջոցներով խոշոր ֆեոդալներին կենտրոնացնում մայրաքաղաքում՝ նրանց կենտրոնախույս ձգտումներն ու ապստամբական տրամադրություններն ավելի հեշտ կատարելու նպատակով, որի համար նա օրինակ է բերում Բագրատունիների վերջին շրջանի խոշորագույն ֆեոդալներից մեկին՝ Վեստ Սարգսին[225]։

Տակավին լուծված չի կարելի համարել քաղաքային դասի՝ արհեստավորների ու առևտրականների սեփականատիրական իրավունքի հարցը։ Իսկ այդ հարցը, մեր կարծիքով, գրեթե ամբողջապես կապված է բնակելի տների և արհեստանոցների ու կրպակների հետ, որոնք գրավում են քաղաքի կառուցապատ տարածքի մեծագույն մասը։ Ն. Մառի կարծիքով, արհեստավորական «հասարակ» խավի սեփականատիրական իրավունքի մասին որոշակի ոչինչ չկա և ընդհանրապես հայտնի չէ, թե այդ խավի ներկայացուցիչները սեփական տուն կամ խանութ ունեցել են, թե՞ ոչ, և կամ ինչպիսին են եղել Անիի տնատերերի ու վարձակալողների հարաբերությունները[226]։

Մեզ թվում է, որ մայրաքաղաքի հասարակայնության ցածրագույն խավը՝ արվարձաններում գյուղատնտեսությամբ զբաղվողներն ու օրավարձով աշխատող ընչազուրկները, ապրում էին ամենահասարակ խրճիթներում, որոնք որևէ արժեք չէին ներկայացնում։ Կարծում ենք խոսքը դրանց մասին չէ, այլ արհեստավորների ու առևտրականների տների և արհեստանոցների ու խանութների, որոնցից վերջինները զգալի եկամուտ կարող էին բերել։ Խանութների և արհեստանոցների սեփականատիրական իրավունքը, եթե դատելու լինենք վիմագիր արձանագրությունների հաղորդած տեղեկություններով, բացառապես (կամ գրեթե բացառապես) պատկանում էր ֆեոդալներին, որոնք դրան տեր էին դարձել իրրև «ի հալալ ինչից», «ինչից» կամ դրամով գնելով՝ իրրև «դանձագին»[227] հայրենիք, և եկեղեցուն, որոնց սեփականատիրական հիմնական աղբյուրը եղել է նվիրատվությունները։ Հավանական է, որ իրոք խանութներն ու արհեստանոցները, որպես կանոն, սերունական

[225] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժող., էջ 325։ Համմ. Կեո, Հայոց պատմություն, հ. II, էջ 695—697։

[226] H. Марр, Раскопки в Ани в 1904 году, էջ 11։ Համմ. նույնի, «Ани», էջ 55։

[227] Նույն տեղը։

էին կամ եկեղեցական և որոշ պայմաններով վարձով էին տրվում առևտրականներին ու արհեստավորներին՝ տիրոջը բերելով զգալի եկամուտներ։ Տերունական կամ եկեղեցական էին նաև հյուրանոցներն ու իջևանատները, ձիթհանքերը, որոնք նույնպես տրվում էին վարձով։

Սակայն, մեր կարծիքով, քաղաքային «հասարակ» աշխատավոր բնակչությանը պատկանող տները, որոնք իրենց բակերում կարող էին ունենալ փոքրիկ բանջարանոցներ, հավանորեն զանգվածորեն կազմում էր նրանց սեփականությունը։ Եվ արձանագրություններում դրանց նվիրատվության մասին տեղեկություններ չհաղորդվելը պարզապես պետք է բացատրել նախ նրանով, որ արհեստավորներին ու մանր առևտրականներին պատկանող տները հասարակ խրճիթներ էին ու չէին կարող լինել նվիրատվության առարկա, և երկրորդ, ընդհանրապես հասարակության ցածր խավը «ավելորդ» ունեցվածք չուներ եկեղեցուն նվիրելու, այդ եղանակով, եկեղեցու միջոցով «հոգու փրկության» կարիքը չուներ, որովհետև իրական կյանքում նա «մեղք» չէր գործել։ Սակայն հնարավոր է նաև, որ մանր առևտրականներն ու արհեստավորները նույնիսկ եկեղեցուն նվիրաբերած լինեին զանազան պարգևներ, որոնց թվում և տներ-խրճիթներ, բայց դրանք հատուկ արձանագրության արժանի չհամարվեին։

Արդ, որո՞նք են այն փաստերը, որոնց հիման վրա համարձակություն ունեցանք արհեստավորների ու առևտրականների սեփական տներ ունենալու մասին ենթադրություն անել, նույնիսկ որոշ առումով առարկության չհանդուրժող տոնով։ Դրանք Անիի վիմագիր երկու արձանագրություններն են, որոնք այդ առումով նախորդ ուսումնասիրողների կողմից ուշադրության չեն արժանացել։ Դրանք երկուսն էլ վերաբերում են Բագրատունիների թագավորության շրջանին։ Առաջինը գտնվում էր Առաքելոց եկեղեցու, իսկ երկրորդը՝ Գրիգոր Պահլավունու եկեղեցու վրա։ Դրանք ունեն հետևյալ բնագրերը.

ա) «Յանուն այ. ես Խաչատուր Հոռոմ գիմ գանձագին սարավուլիով տունս ի սուրբ Առաքեալս իմ ոգոյս եւ իմ ծնողաց. եւ պարտին սպասաւորք սորա ի տարւոջն ։Ե։ աւր ժամ արնեն անխափան եւ եթե ոք հակառակ գրոյս այսորիկ յաւագաց կամ ի յնդանեաց կամ յաւատարաց ... նզովեալ եղիցի հոգւով եւ մարմնով անլուծանելի»[228]։

Դժվար չէ կռահել, որ Խաչատուրը հասարակ քաղաքացի էր՝ ոչ

[228] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 12։

«մարզպան» էր, ոչ «իշխան», ոչ «իշխանաց իշխան» և ոչ էլ հոգևորական, որոնց նվիրատվական արձանագրություններում ամենուրեք նշվում են տիտղոսները։ Այնուհետև, ըստ դրա ակնհայտ է դառնում, որ «հասարակ» քաղաքացիները նույնպես կարող էին լինել սեփական տնատերեր, որոնք կարող էին ձեռք բերել իրրև «գանձագին» սեփականություն և, երրորդ, որ մեր կարծիքով, ամենից կարևորն է, այդ «հասարակ» մարդիկ նույնպես կարող էին ունենալ սարավուլիով բարեկարգ տներ։ Հենց արժեք ներկայացնող այդպիսի տների նվիրատվության մասին է, որ հավանաբար նըշվում էին հատուկ արձանագրություններում, իսկ «հասարակ» քաղաքացիներից այդպիսի համեմատաբար մեծ արժեքի տուն ունեցողներ շատ քիչ կային և այդ քչերից էլ միայն սակավաթիվ անհատներ կարող էին տուն նվիրաբերել եկեղեցուն։

բ) «Ես Սարգիս լարարաբս եւու զիմ տունս ի սուրբ Գրիգոր, որ առնեն ինձ ժամ ի տարին ՃԺ։ աւր, իսկ որ հակառ դա զիմ յիշատակս խափանէ յամենակալ բանէն աւ... հոգով եւ մարմնով ամեն»[229]։

Սարգիսը սովորական արհեստավոր էր՝ «լարարար» և իր սեփական տունը նվիրելով ս. Գրիգոր եկեղեցուն, տարեկան 15 օր իր օգտին պատարագ մատուցելու իրավունք էր ստանում։ Կատարվելիք պատարագների քանակը ցույց է տալիս, որ նրա տունը ևս բավական բարեկարգ է եղել, այլապես դրա նվիրատվության մասին չէր նշվի հատուկ արձանագրությամբ, այն էլ տարվա ընթացքում ստանալով այդքան մեծ քանակությամբ պատարագ։

Թվում է, թե բերված փաստերը դալիս են ասելու, որ Անիի բնակելի տների մի մասը ցածր խավի ներկայացուցիչների՝ գերազանցապես առևտրականների ու արհեստավորների, սեփականությունն էր։

Քաղաքի երկու և կես հարյուրի հասնող վիմագիր արձանագրություններից երևում է, սակայն, որ Անիի «տերերը» առաջին հերթին հարյուրների հասնող եկեղեցիներն էին, որոնցից շատերը նվիրատվության, գնման, ժառանգության ստանալու և այլ եղանակներով ձեռք էին բերել հսկայական հարստություններ և ընդարձակ կալվածքներ։ Ընդ որում, կարելի է ասել, Բագրատունիների թագավորության շրջանում «հոգու փրկության» գաղի տակ եկեղեցիներին տրվող նվիրատվությունները նոր էին սկսվել, բայց ավելի շատանալու մեծ միտումներ ունեին և, իրոք, Զաքարյանների ժամանակ հասան առավելագույն չափերի։

[229] Տե՛ս նույն տեղը, էջ 32։

Մի քանի խոսք X—XI դարերում Անիի եկեղեցիներին տրվող նվիրատվությունների մասին, որոնք զգալի չափով բնութագրում են այդ ժամանակաշրջանի հասարակական-տնտեսական հարաբերությունները։ Հարմարության տեսակետից դրանք ներկայացնենք երեք խմբով, առաջին խմբի մեջ ներառնելով հողային տարածությունները՝ այգիները, արտերը, խոտհարքները և այլն, երկրորդի մեջ՝ առանձին օբյեկտները՝ խանութներ, ձիթհանքեր, տներ, հյուրանոցներ և այլն, իսկ երրորդում՝ այլևայլ արժեքավոր իրեր ու հարստություններ և դրամական նվիրատվություններ։

Սկզբնական շրջանում, մինչև X դարը ներառյալ, ինչպես նըկատում է Թ. Թորամանյանը, հոգու փրկության համար եկեղեցի կառուցողների կամ եկեղեցիներին զանազան նվերներ տվողների մասին կողմից «պատարագի պահանջ» չի եղել, այդ սովորությունն սկըսվել է XI դարով և XII դարում հասել այնպիսի չափերի, որ «հանձն առնված պատարագներու լիակատար իրագործելու համար բավական չէին տարվույն օրերը, ուստի ստիպված ամեն եկեղեցիներու մեջ ավելացուցեր են խորաններ՝ ավանդատուններու վրա. կրկնահարկ շիներ են ավանդատուններ հատկապես այդ նպատակով...»[230]։ Անկախ նրանից, թե նվիրաբերողը «հոգու փրկության համար» պատարագի պահանջ էր ներկայացրել եկեղեցուն, թե ոչ, X—XI դարերում բազմաթիվ հողային տարածություններ են նվիրաբերվել մայրաքաղաքի եկեղեցիներին։

Կարևորն այն չէր, թե հատկապես քանի կալվածք էր տրվել եկեղեցիներին, այլ այն, որ գնալով այդ երևույթն ավելի մեծ չափեր էր ընդունում։

1031 թվականին վերաբերող Առաքելոց եկեղեցու մի արձանագրությամբ նշվում է, որ Վահրամ իշխանաց իշխանի որդի Ապուղամրը (արձանագրության մեջ՝ Աբողամր) Կառնուտի արտը նվիրել է այդ եկեղեցուն «իր եղբայր Գրիգորի առողջության և կյանքի երկարության համար.»։ Նշ։ Թուին. Շնորհիւն աւ. ես Աբողամր որդի Վահրամա իշխանաց իշխանի եւու զԿառնուտի արտն ի սուրբ Առաքեալս, վասն եղբարւ իմ Գրիգորայ առողջութեան եւ կենացն երկարութեան»[231]։

1036 թվականի մի այլ արձանագրություն, որ ս. Փրկիչ եկեղեցու վրա թողել է Ապլղարիբ մարզպանը՝ հայտնի Վահրամի և Վասակի եղբայրը, հաղորդում է նույն մարզպանի կողմից այդ ե-

[230] Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական հարաբարպետության պատմ., աշխ. ժողովածու, էջ 215։

[231] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի, էջ 12։

կեղեցու կառուցման և դրան նվիրաբերված մեծ քանակությամբ կալվածքների ու այլ հարստությունների մասին։ Ըստ արձանագրության, մյուս մեծ նվիրատվությունների հետ Ապլղարիբ մարզպանը ս. Փրկչին է տվել նաև «այգի եւ հողեար»[232], իսկ նույն թվականի մի այլ արձանագրության մեջ, որը նույնպես գտնվում էր ս. Փրկիչ եկեղեցու վրա, ասվում է այն մասին, որ եկեղեցուն է նվիրվել Աշնակ գյուղում գտնվող մի այգի «որմով եւ ծառովք պտղաբերովք և անպտղաւք եւ խոտագետնովք եւ։ Գ։ աւր ջուր ազատ ի խալաէ եւ գեղջէ յամենայն հասաց եւ գրեցաք մեծաւ հաստատութեամբ զկտակս դայս...»[233]։

Այս վերջին արձանագրությունը հուշում է նաև այն մասին, որ Անիի եկեղեցիները կալվածքներ էին ստանում ոչ միայն քաղաքից, այլև դրանից դուրս, ֆեոդալներին պատկանող գավառներում։ Տրվյալ դեպքում ս. Փրկչի ստացած Աշնակի այգին գտնվում էր Արագածոտն գավառում։ Այդ արձանագրությունն ուշադրության արժանի է նաև այլ առումով, այն ժամանակվա պտղատու այգիների բնույթի մասին արժեքավոր տեղեկություններ պարունակելով։ Աշնակի այդ այգին եղել է պարսպապատ, պտղատու ծառերից բացի ունեցել է նաև անպտուղ (դեկորատիվ) ծառեր՝ հավանաբար սոսիներ կամ բարդիներ, որ հին ժամանակներից ի վեր տնկում էին այգիների արտաքին տարմանագծի ուղղությամբ՝ շոգի և քամու ազդեցությունը թուլացնելու համար, իսկ խոտհարքները հավանաբար բռնում էին ծառամիջյան ազատ տարածությունները։ Ինչ վերաբերում է արհեստական ոռոգման և ոռոգման ջրի համար սահմանված հարկի հիշատակությանը, որ նույնպես կարևոր է, արդեն անդրադարձել ենք այլ առիթով՝ քաղաքի գյուղատնտեսական ղրաղմունքները բնութագրելիս։

Վիմագիր արձանագրություններում եկեղեցիներին նվիրվող կուղպակ-խանութների, տների, ձիթհանքերի, հյուրատների մասին ավելի շատ հիշատակություններ կան։ Եվ դա միանգամայն տրամաբանական է։ Քաղաքում անշարժ ունեցվածքն առաջին հերթին բաղկացած էր ոչ թե հողային տարածություններից, այլ գանազան կարգի կառուցվածքներից՝ տնտեսական-արտադրական գանազան շենքերից և բնակելի տներից։

Այդ կարգի ամենահին արձանագրություններից մեկը, որ վերաբերում է X դ. երկրորդ կեսին, վերը հիշված Խաչատուրինն է։ Ըստ դրա, Խաչատուրն իր «գանձագին սարաւոյթով» տոնը նվիրել

232 Նույն տեղը, էջ 45։

233 Նույն տեղը, էջ 48։

է ս. Առաքելոց եկեղեցուն՝ իր և ծնողների «հոգու փրկության» համար[234]։

994 թվականին վերաբերող մի այլ արձանագրության համաձայն տիկնանց տիկին Շուշանը՝ Գրիգոր իշխանի կինը, ս. Գրիգոր եկեղեցուն է նվիրել «զմրուանա կուղպակս», նզովելով իր կտակը խախտողներին[235]։ Իսկ Վահրամ իշխանաց իշխանի մի նվիրատվական արձանագրությունը վերաբերում է XI դարի 30-ական թվականներին։ Արձանագրության մեջ ասված է. «Կամաւքն Այ Վահրամ իշխանաց իշխան, եւտու զիմ որդոյն զԱպուխամրի ոսկեբաժին եւ գնեցի։ Բ։ կուղպակ զլորագոյնին եւ զմրսատին յՈղականց. եւտու ի սուրբ Գրիգորի...»[236]։ Նույն կարգի արձանագրություն էր նաև վերը նշված Ապլղարիբ մարզպանի նվիրատվական արձանագրությունը ս. Փրկիչ եկեղեցու վրա։ Այդ արձանագրությունը, ինչպես ասվեց, վերաբերում է 1036 թվականին. «...շինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս Անի շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ, եւ գնեցի հալալ ընչից իմոց կուղպականի։ Գ։ եւ ձիթահաց եւ այգի եւ հողեար եւտու ի սուրբ Փրկիչս...»[237]։

Ի միջի այլոց, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում եկեղեցիներին ամենամեծ նվիրաբերողը եղել է ս. Փրկչի կառուցող այդ նույն Ապլղարիբը, որի թողած մի այլ եղծված արձանագրությունից (Շուշան Պահլավունու եկեղեցու վրա) իմանում ենք հետևյալը. «... Ապլղարիպ գնեցի ի հալալ ընչից իմոց կուղպակ եւ եւտու ի սուրբ Գրիգորիս տափով...»[238]։ Շուշան Պահլավունու եկեղեցու մուտքի բարավորի վրա, եղծված վիճակում, պահպանվել էր մի ավելի բնադարձակ արձանագրություն, որը վերաբերում է 1037 թվականին և վերծանվել է հետևյալ կերպ.

«... Ի։ ՆԶԶ։ Թուին... կուղպակ... Նորոգեցի հիմանէ... սին սպասի եւ ղին... սպասիւք։ Բ։ շուրջառ, սկի եւ սբ. նշան... հրամանաւ սբ. եւ արժնաւոր ներ հր... ր քաջ... գ... աս տնով վարժուր, տնով եւ պահիզով եւ ամենայնիւ.. մի ի տարին անխափան Շուշան տիկնաց տիկնոջ»[239], ապա գալիս է կտակը խախտողների հասցեին ուղղված անեծքի սովորական խոսքերը, որ պահպանվել են անխաթար։ Չնայած արձանագրությունը հնարավոր չի եղել լիովին վերականգնել, սակայն այդպիսի կիսատ-պռատ վիճակում էլ դրժ-

234 Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաքը, էջ 12։

235 Նույն տեղը, էջ 32։

236 Նույն տեղը։

237 Նույն տեղը, էջ 45։

238 Նույն տեղը, էջ 49։

239 Նույն տեղը։

վար չէ տեսնել, որ նա սովորական նվիրատվական արձանագրություն է, ըստ որի Շուշան Պահլավունու եկեղեցուն են տրվել եկեղեցական զանազան սպասքներ, տներ և այլ ունեցվածքներ։

Փոքր թիվ չեն կազմում նաև այն արձանագրությունները, ըստ որոնց եկեղեցիներին նվիրվել էին զանազան սպասք (շուրջառ, սկիհ և այլն), ջահեր, կրոնական բովանդակությամբ ձեռագրեր, դրամ և այլ հարստություններ, որոնք դարձյալ տրվում էին «հոգու փրկության» քողի տակ և որոնց համար տարվա ընթացքում նվիրատուի կամ նրա հարազատների (նաչած արձանագրություն-կտակի պահանջների) համար սահմանվում էին պատարագներ։ Նվիրատուներ կարող էին լինել նաև թագավորներն ու թագուհիները։ Ըստ երևույթին Անիի եկեղեցիներին տրված նվերների մեջ ամենատարժեքավորներից մեկը, գուցե և ամենաթանկագինը Սմբատ II-ի՝ Մայր եկեղեցուն նվիրած բյուրեղապակյա ջահն էր, որ մեծ գումար տալով, բերել էր տվել Հնդկաստանից։ Նույն տաճարին մեծամեծ նվերներ է տվել նաև կառուցողը՝ Կատրամիդե թագուհին՝ Գագիկ I-ի կինը։

Ըստ երևույթին մայրաքաղաքի եկեղեցիների համար, որպես նվերներ, այլ երկրներից սպասքից բացի, բերվում էին նաև «մասունքներ»։ Այդպիսի մի դեպքի մասին է ասվում ս. Փրկիչ եկեղեցու կամարներից մեկի վրա Ապլղարիբ Պահլավունու թողած արձանագրությունը. «Ի։ՆՉԴ։ թուականիս. ես Ապլղարիպ մարզպան եղէ հրովարտակ ի Սմբատա Շահնշահէ առ կայսրն Յունաց Միխէլի Կոստանդինուպոլիս. եւ շատ չանիւ եւ մեծածախ գանձիւ բերի մասն ի սրբոց խաչէն եւ եկեալ կատարեցի զտաճարս զայս եւ զնշանն լուսո կանգնեցի ի պսակ հարսնիս Քրիստոսի եւ նդի լուծ սպասաւորաց եկեղեցոյ զկիւրակէին աւրն գիշերապաշտաւն առնել մինչեւ ի գալուստն Քրիստոսի...»[240]։ Ինչպես տեսնում ենք, ս. Փրկիչ եկեղեցու համար, ժամանակի թագավոր Հովհաննես-Սմբատի՝ Բյուզանդիայի կայսր Միխայելին ուղղած նամակի համաձայն, Ապլղարիբ մարզպանը «մեծածախ գանձիւ» Բյուզանդիայից բերում է «զնշանն մասն ի սրբոց խաչէն» և կանգնեցնում իր կառուցած տաճարում։

Ինչպես տեսանք, Անիի եկեղեցիները կալվածքներ և անշարժ այլ ունեցվածք կարող էին ստանալ նաև քաղաքից դուրս՝ երկրի տարբեր կողմերում։ Գոյություն ուներ նաև հակառակ երևույթը. Անիում կարող էին նվեր ստանալ զանազան ունեցվածքներ՝ կուղպակներ, տներ և այլն, քաղաքից դուրս գտնվող վանքերն ու եկեղեցիները։ Դրանք սովորաբար նվիրում էին զանազան եղանակներով մայրաքաղաքում սեփականություն ձեռք բերած ֆեոդալները, որոնք հավանաբար այդտեղ չէին բնակվում։ Դրա բնորոշ փաստերից է Սյունյաց Սուփան իշխանի թողած արձանագրությունը, որ գտնվում է իր կառուցած Մաքենիսի վանքի տաճարի վրա և ընդօրինակված է նաև պատմիչ Ստեփանոս Օրբելյանի կողմից։ Արձանագրության մեջ եկեղեցու շինության մասին հիշատակելուց բացի, թվարկվում են Սյունյաց իշխանի բոլոր նվիրաբերությունները՝ եկեղեցու անունով Աստվածածին կոչված վայրն իր դաշտերով ու լեռներով, քանկագին սպասքներ ու կտակարաններ, Բողաշեն կոչված ձկնորսարանը, 1250 դրամ՝ զանազան տեղերի հարկերից, հինգ այգի Երևանում, 500 առու այգի Գառնի գյուղաքաղաքում, երկու այգի Եղեգիսում, «ջուլիրս եղանց և ջոկս զուակարաց և անդեայս և հօտս ոչխարաց...»[241]։ Դրանց թվումն էին նաև Անիում գտնվող հինգ կուղպակ, որի մասին նշվեց քաղաքի ներքին առևտրին անդրադառնալիս։

Ոչ միայն նվիրատվությունները, այլև հենց վանքերը, տաճարներն ու եկեղեցիները կառուցվում էին հիմնականում ֆեոդալների, թագավորների ու թագուհիների կողմից։ Մեզ հետաքրքրող դարերում Անիում դեռևս չեն հիշատակվում այսպես կոչված «մեծատուններ»՝ վաճառականությամբ, վաշխառությամբ, զանազան կապալներով ու այլևայլ եղանակներով հարստացած հոնենցները, սահմադինները և մյուսները, որոնք հաջորդ դարերի եկեղեցիների հիմնական կառուցողները և «բարերարներն» էին։

Այսպիսով, եկեղեցիներն ու վանքերը նվիրատվությամբ, զրամով գնելով ու այլ եղանակներով X—XI դարերում արդեն դարձել էին խոշոր հայրենատերեր, նոր եկամուտներ բերող արժեքավոր կալվածքների ու հսկայական ունեցվածքների տերեր, որոնք կարող էին ունենալ և իրենց հյուրատները, ձիթհանքերը, արհեստանոցները, խանութները և այլն։

Այդ եղանակով մեծ հարստությունների ու կալվածքների տեր էին դարձել ոչ միայն վանքերը և եկեղեցիները, այլ նաև կաթողիկոսական աթոռը։ Իր ժամանակի խոշորագույն ֆեոդալներից էր հատկապես Պետրոս Գետադարձ կաթողիկոսը (1019—1059), որի հիմնական աթոռանիստն Անին էր։ Հայոց հայրապետի Արշարունիք գավառում ունեցած հայրենական կալվածքներից, Սուրմառի և

---

[240] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պրակ I, Անի քաղաք, էջ 46։

[241] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179—180։ Համմ. Ս. Դ. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. IV, Երևան, 1973, էջ 290—291։

Ծառաքար բնակավայրերից բացի, կաթողիկոսական աթոռն ուներ հայոց թագավորներից տրված 500 «գեղ անվանի», կաթողիկոսին սահմանված էին հարյուրավոր թեմական-եպիսկոպոսներ։ Նրա մշտական շքախումբը կազմված էր կաթողիկոսարանում մշտապես ապրող, կաթողիկոսի խորհրդակից 12 եպիսկոպոսներից, 4 վարդապետներից, վաթսուն կրոնավորներից և 500 աշխարհական երեցներից[242]։ Նա «յոյժ սիրող էր գանձաց»[243], «եւ չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան ղթագաւորութեանն Հայոց»[244]։

Կալվածքներն ու ունեցվածքն անցնում էին ժառանգաբար։ Իսկ ժառանգության մասին Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» կա մի ընդարձակ հոդված, ըստ որի ժառանգորդը համարվում է որդին, եթե այդպիսին չկա, ապա ժառանգորդ է համարվում չամուսնացած դուստրը, իսկ ամուսնացած դուստրը կարող է ստանալ կես բաժին՝ առանց ժառանգորդ լինելու իրավունքի։ Դուստր չունենալու դեպքում ժառանգորդ է դառնում եղբայրը, իսկ եթե եղբայր չունի, ապա ժառանգորդ է հորեղբայրը և այլն։ Ունեցվածքի սեփականատիրական ու ժառանգականության իրավունքը միջին դարերում փաստորեն սրբագործված էր։ Այդ իրավունքն էլ հենց հայկական պայմաններում իր իրավաբանական ձևակերպումն ու նորմն է գտել Գոշի «Դատաստանագրքի» նշված հոդվածում, որից հարկ ենք համարում բերել հետևյալ հատվածը համառոտացրելով. «... Զի որդւոյ անկ է ժառանգ լինել, քան իցէ. ապա թէ ոչ իցէ— դստերն, որ տակաւին ի տան իցէ անկարգ։ Իսկ արտաքս ընացեալն եւ առն եղեալն-երկու դուստր միոյ դստեր դրաժին առցէն, այլ ոչ կարեն ժառանգ լինել. եւ այս յայտ անտի, զի ոչ թողին զդստերան... յօտար ցեղս արանց լինել, զի մի՛ ժառանգութիւնն յօտարս ելցէ։ Ապա թէ չիցէ դուստր, եղբայրն ժառանգիցէ...։ Ապա թէ չիցէ եղբայր, հօրեղբայրն ժառանգիցէ։ Եւ թէ չիցէ հօրեղբայր, այլ ընտանի մերձաւոր ժառանգիցէ ի ցեղն հօրն, որքան ազգական իցէ...»[245]։

Ինչպես տեսնում ենք, ժառանգության կարգը տրված է շատ որոշակի և հանգամանորեն՝ ընդգրկելով գրեթե բոլոր հնարավոր դեպքերը։ Իսկ մի հատուկ հոդված (Հոդված ՃԺԶ), որ կրում է «Յաղագս դատաստանաց նուիրաց յեկեղեցի հող կամ ջուր, կամ այգի, կամ այլ ինչ այնպիսի» վերնագիրը, ամբողջովին վերաբերում է նվիրատվության կարգով եկեղեցիների (և վանքերի) ստացած կալվածքներին ու հարստություններին։ Եկեղեցուն կամ վանքին տրրված նվերը մշտապես պետք է մնար եկեղեցուն իբրև սեփականություն, իսկ տվյալ եկեղեցին ինչ-ինչ պատճառով քանդվելու դեպքում, անցնում էր դրա տեղում կամ դրա փոխարեն նոր կառուցվածին[246]։

Անի քաղաքի X—XI դարերի հասարակական-տնտեսական հարաբերությունները, որոնց բնութագրմանը նվիրեցինք բավական էջեր, այնպիսին էին, որ գնալով քաղաքի հասարակության դասակարգային շերտավորումն ավելի էր խորանում, գնալով հսկայական հարստություններ էին կուտակվում ֆեոդալական վերնախավի ու եկեղեցու ձեռքին և արդեն աստիճանաբար ձևավորվում էր հասարակական այն նոր խումբը՝ այսպես կոչված «մեծատունների» խումբը, որը բաղկացած էր վաշխառուներից, վաճառականներից, կապալառուներից՝ կրելով պարոն կամ պատրոն տիտղոսը և որը հասարակության մեջ կարևոր դիրք գրավեց հետագայում. Բագրատունիների թագավորության անկումից հետո՝ XII—XIII դարերում։ Սակայն Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանին նույնպես հատուկ էր հասարակության տարբեր շերտերի տնտեսական ու իրավական վիճակի աղաղակող անհավասարությունը և Ֆրիկի խոսքերով ասած այդ ժամանակաշրջանը նույնպես բնորոշվում էր նրանով, որ՝

«Մէկն ի պապանց պարոնորդի
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի

Մէկին հազար դեկան ոսկի,
Մէկին ո՛չ փող մի պղնձի.
Մէկին հազար հատ մարգարտի,
Մէկին ոչ ուլնիկ մի ապիկի...»[247]։

Եվ պատահական չէ, որ միջնադարյան Հայաստանում գյուղացիական շարժումները (Այրարատում, Սյունիքում) և նույն բնույթի, բայց ազանդավորական քողով հանդես եկող թոնդրակյան շարժումը, որոնք վերջ ի վերջո ուղղված էին ֆեոդալիզմի դեմ, ծավալվեցին հատկապես X դարում և XI դարի առաջին կեսում։ Հ. Մա-

---

242 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 153—154։ Կոստանյանց Կ., Պետրոս Ա. Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 18—19, Աե, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 651—652։

243 Առիստակես Լաստիվերացի, Պատմութիւն, Երևան, 1963, էջ 82։

244 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 154։

245 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, էջ 371—372։

246 Նույն տեղը, էջ 278—279։

247 Ֆրիկ, Բանաստեղծություններ, կազմեցին Մ. Մկրյան և Ե. Թորոսյան, Երևան, 1941, էջ 235—236։

նանդյանն այդ առիթով գրում է. «Քաղաքների և ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման այս ժամանակաշրջանում Բագրատունյաց Հայաստանում ևս, ինչպես ռեֆորմացիայից առաջ Արևմտյան Եվրոպայում, դասակարգային պայքարի սրատկացման պարզ ցուցանիշներ էին գյուղացիական ապստամբական շարժումները» X դարի սկզբներին, ինչպես և Թոնդրակյան շարժումը[248]: Թեև վիճելի է X—XI դարերի Հայաստանի և ռեֆորմացիայից առաջ Եվրոպայի ունեցած սոցիալ-տնտեսական վիճակի այդ համեմատությունը, բայց ժամանակաշրջանի հատուկ դասակարգային պայքարը բնութագրված է հիմնավորապես:

3. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Մատենագրական, վիմագրական և հնագիտական անուղղակի տեղեկություններից երևում է, որ Անիի բնակչության թիվը մեծացել է միջնադարի համար անսովոր արագությամբ: Նա X դարի առաջին կեսում տակավին այնքան փոքր էր, որ, ինչպես տեսանք, ուսումնասիրողներից շատերը համարել են սովորական բերդ կամ ամրոց, իսկ մայրաքաղաք դառնալուց հետո՝ ընդամենը մի քանի տասնյակ տարվա ընթացքում, այնքան է բազմամարդ դարձել, որ անհրաժեշտ է եղել, Ներքին պարիսպը կառուցելուց 15 տարի անց, կառուցել Արտաքինը: Եվ միանդամայն հասկանալի է, որ նրա բնակչության ավելացման հիմնական աղբյուրը մեխանիկական աճն էր, Անի-Շիրակի թագավորության տարբեր մասերից դեպի Անի ձգվող և այնտեղ հաստատվող զանգվածները: Տարբեր առիթներով Անիի բնակչության մեխանիկական աճի հարցին անդրադարձած հեղինակները, որպես կանոն, մատնացույց են անում միայն նրա ամուր դիրքը, անմատույց լինելը և նշում, որ ռամիկ բնակչությունը տարբեր կողմերից «գաղթեցին և եկան լցուեցան Անի»[1]:

Բնակչության կուտակման համար, անշուշտ, Անիի բնականից ամուր դիրք ունենալը և պաշտպանական հուսալի կառուցվածքները խաղացել են որոշ դեր: Սակայն նոր հռչակված մայրաքաղաքի բնակչության արագաթափ ավելացումը բացատրել միայն նրա ամրությամբ, շատ պարզունակ կլիներ և իրական դրության

[248] Հ. Մանանդյան, *Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում*, էջ 44—45:

[1] *Տե՛ս* Ղևոնդ Ինճիճյան, *Նախնւոսւթիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 49, Գևորգյան Մելիխսեդեկ, *Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ*, էջ 27 և այլուր:

հետ քիչ առնչվող: Անիի բնակչության թվի կտրուկ ավելացումն առաջին հերթին կապված էր նրա մայրաքաղաք դառնալու հետ. իբրև այդպիսին այստեղ հաստատվեց ոչ միայն Բագրատունիների թագավորական տունն իր անմիջական ենթականերով հանդերձ, այլև մեծ թվով ֆեոդալ ազնվականներ, հոգևորականներ (որոնց թիվն առանձնապես ավելացավ, երբ Անին դարձավ նաև կաթողիկոսանիստ) և այլն: Սակայն մայրաքաղաքի բնակչության հիմնական զանգվածները՝ արհեստավորությունը, առևտրականները և գյուղատնտեսությամբ զբաղվողներն ու օրավարձով աշխատողները, այստեղ էին կուտակվել հիմնականում սոցիալ-տնտեսական նոր երևույթների՝ քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման և արհեստագործությունը գյուղատնտեսությունից անջատվելու հիմքի վրա: Հատկանշական է, որ ոչ միայն Անին, այլև X—XI դարերի Հայաստանի մյուս խոշոր քաղաքները ևս (հատկապես նորաստեղծ Արծնը և Կարսը) շատ կարճ ժամանակամիջոցում դարձան մարդաշատ քաղաքներ: Բազմամարդ դառնալու համար Անիի պայմաններն ավելի նպաստավոր էին. այն քարավանային ճանապարհների հանգույց էր, մայրաքաղաք, ամուր բերդ, Անի-Շիրակի թագավորության միակ նշանավոր քաղաքը, որ գտնվում էր երկրի կենտրոնում: Այս բոլորը նպաստեցին 40—50 տարվա ընթացքում նրա՝ սովորական բերդաքաղաքից մեծ քաղաքի վերածվելուն:

Միջնադարյան Եվրոպայի քաղաքների օրինակով, Անիում ևս նոր բնակություն հաստատողների մեջ, ըստ երևույթին, ամենամեծ զանգվածը կախյալ գյուղացիությունն էր, որի «փախուստը մեծ զանգվածը նկատվում էր ամբողջ միջնադարի ընթացքում»[2]: Իսկ դա հիմնականում տեղի էր ունենում ճորտացման պրոցեսի ուժեղացման, «ֆեոդալների և վանքերի կողմից» գյուղացիության հողերի մի մասի զավթման հետևանքով[3]: Կարծում ենք, որ այդ եղանակով Անիում հավաքվեց ոչ միայն միջնադարի քաղաքներին հատուկ՝ օրավարձով աշխատող «սեպագործների ամբոխը», որի մասին նշում են մարքսիզմի դասականները, այլև բավական թվով այնպիսի գյուղացիներ, որոնք ամբողջած չէին ֆեոդալի հողին և կարող էին ազատորեն տեղափոխվել ցանկացած վայրը: Ըստ երևույթին Անիի արվարձաններում դրանք բնակություն հաստատեցին պետական հողերի վրա և երկրագործության հետ կարող էին զբաղվել նաև

[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IV, էջ 41:

[3] Բարկեն Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում*, հ. 1, Երևան, 1958, էջ 67:

գյուղական տիպի արհեստներով (զգրարություն, մանածագործություն, դարբնություն և այլն)։

Քաղաքի բնակչության բնական աճը հավանաբար, աննշան էր, որ ընդհանրապես հատուկ էր միջնադարին[4]։ Այն նոր ու նորագույն ժամանակների աճի նույնիսկ կեսը չէր կազմում։ Դժվար է Անի քաղաքի բնակչության բնական աճի մասին որևէ, թեկուզ միայն ենթադրական թիվ առաջադրել։ Վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նվիրատուների երեխաների քանակը սովորաբար եղել է ոչ ավելի, քան 1—3, հետևապես, բնական աճն էլ շատ ցածր էր։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Անիից արտագաղթ չի կատարվել. դրա համար առիթներ չեն եղել և ուսումնասիրողներն այդպիսի փաստեր չեն արձանագրել[5]։ Այնպես որ Անիից դուրս գնացողները Բագրատունիների թագավորության շրջանում առանձին անհատներ էին և որևէ չափով չէին կարող ազդել նրա բնակչության ընդհանուր թվի նվազեցման վրա։

Բոլոր ժամանակներում էլ քաղաքի դեմքը, երկրում խաղացած նրա դերը առաջին հերթին պայմանավորված էր մարդաշատությամբ։ Այս առումով էլ Անիի բնակչության թվի որոշումը նրա պատմության կարևորագույն հարցերից է, մի հարց, որը շատ ու շատ ուսումնասիրողների է հետաքրքրել, բայց որը, այնուամենայնիվ, մնացել է մինչև վերջ չլուսաբանված։ Այլ կերպ էլ պատկերացնել չի կարելի, քանի որ մինչև նոր ժամանակները ընդհանուր մարդահամարներ չեն կատարվել և ստույգ հայտնի չէ ո՛չ երկրների և ո՛չ էլ դրանց առանձին բնակավայրերի բնակչության թիվը։ Մասամբ այդ բացը ներկայումս վերացվում է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ, բայց պակաս դժվարությունների հետ չէ կապված նաև վերջիններիս ճիշտ առաջադրանքներ տալը։

Անիի մարդաշատությունը հաստատելու համար ուսումնասիրողներից ոմանք մատնացույց են անում նրա պարիսպներից դուրս՝ ընդարձակ արվարձանների (որոնց թվում նաև քարանձավային հարյուրավոր բնակարանների) գոյությունը, քաղաքի համար վրտանգավոր սահերին մինչև 60 հազարանոց հսկա բանակ դուրս բերելը, եկեղեցիների շատությունը, այն, որ Անին Շիրակի միակ քաղաքն էր, սելջուկյան տիրապետության ժամանակներից ի վեր

[4] *Տե՛ս* Ю. Г. Саушкин, Введение в экономическую географию, Москва, *1970, էջ 146։*

[5] *Տե՛ս* Միհաս Բժշկյանց, *Պատմութիւն Անւոյ, Վենետիկ, 1830։*

Անիից դուրս եկած հսկայական թվով գաղթականները[6] և այլ անուղղակի, շատ դեպքերում կիսաավանդական բնույթի, չափազանցված հիշատակություններ ու վկայություններ։ Անշուշտ, այդ բոլորն անուղղակիորեն ցույց են տալիս, որ Անին շատ բազմամարդ ու խոշոր քաղաք է եղել դեռևս Բագրատունիների թագավորության շրջանում։ Բայց դրանք առանձին-առանձին և միասին վերցրած, այնուամենայնիվ, կոնկրետ որևէ թիվ տալու հիմք չեն։

Քաղաքի բնակչության քանակի մասին, մեր կարծիքով, շատ թե քիչ գաղափար կարող ենք կազմել հատկապես այն վկայությունների հիման վրա, որոնք կատարվել են ժամանակակից պատմագիրների աշխատություններում և որոնք կոնկրետ թվեր են պարունակում։ Ըստ հայ պատմագիրների, Անին ունեցել է 10.000 տուն՝ 100.000 բնակիչներով[7]։ Թեպետև Անիում մարդահամար և տների հաշվառում տեղի չի ունեցել։ Եվ առաջին իսկ հայացքից այդպիսի հարաբերակցություն չի կարող լինել տների թվի ու բնակիչների քանակի միջև (յուրաքանչյուր տանն ընկնում է 10 բնակիչ, որ շատ անհավանական է), բայցևայնպես X—XI դարերի Անիի բնակչության թիվը հավանաբար այդքանի հասել է։ Այդ թիվն ավելի հավանական է թվում, երբ նկատի ենք ունենում Հայաստանի երկու այլ խոշոր քաղաքների՝ Դվինի և Արծնի մասին եղած վկայությունները։ Թովմա Արծրունու հիշատակության համաձայն, IX դարում Դվինի երկրորդ երկրաշարժի հետևանքով, 893 թվականին քաղաքի զոհերի թիվը հասել է ավելի քան 70 հազարի[8]։ Հայտնի է, որ այդ երկրաշարժը տեղի է ունեցել գիշերը, երբ ամբողջ քաղաքը թաղված է եղել խոր քնի մեջ և այդ պատճառով էլ հսկայական թվով զոհեր են եղել։ Ինչքան էլ չափազանցված լինի զոհերի թիվը, այնուամենայնիվ դրանից երևում է, որ Դվինն ունեցել է մոտ 100 հազար բնակիչ։ Էլ ավելի բնորոշ են Կարինի մոտ եղած Արծն քաղաքի XI դարի առաջին կեսում ունեցած բնակչության թվի վերա-

[6] *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Շիրակ, էջ 90—91,* Գևորգյան Մելիքսեդեկ, *Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 27 և 55,* Պալաճյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 19—20,* Թորոս Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, էջ 323,* Հ. Մանանդյան, *Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 20—22,* Լեո, *Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1967, էջ 70,* Բաբկեն Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 1, էջ 78 և այլուր։*

[7] *Տե՛ս* Հ. Օրբելի, *Անվո ավերակները, հայերեն թարգմ., Վաղարշապատ, 1911, էջ 26։* Համմ. Я. А. Манандян, О торговле и городах Армении, *էջ* 222:

[8] Թովմա Արծրունի, *Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 372։*

բերյալ վկայություններ։ Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ սելջուկների երկրորդ արշավանքի ընթացքում, 1049 թվականին նրանց ձեռքով հիմնահատակ ավերված այդ քաղաքի միայն զոհերի թիվը հասել է 150 հազար մարդու։ Արծնի գրավման ու ավերման ժամանակ զոհերի մոտավորապես այդքան քանակություն է հաղորդում նաև բյուզանդական պատմագիրը[9]։ Ըստ նրա վկայության, զոհերի թիվը նույնպես հասել է ավելի քան 150 հազար մարդու։ Երկու միանգամայն տարբեր պատմագիրների այդ հիշատակությունները, որոնք շատ քիչ են իրարից տարբերվում, նույնպես ցույց են տալիս, որ Արծն քաղաքը հավանաբար նույնպես ունեցել է ոչ պակաս, քան 100 հազար բնակիչ։ Իսկ Անին այդ ժամանակ իրրև մարդաշատ քաղաք, ամենայն հավանականությամբ ոչ միայն ոչնչով չէր զիջում Դվինին ու Արծնին, այլև նա Հայաստանի քաղաքների մեջ միակն էր, որ ժամանակակից պատմագիր Արիստակես Լաստիվերտցու կողմից, անշուշտ ոչ առանց նրա մարդաշատության հաշվի առնելու, կոչվել է «տիեզերահռչակ»[10]։

X—XI դարերի Հայաստանի խոշոր քաղաքներում այնպիսի լայն ծավալի ու կարճ ժամանակամիջոցում այնպիսի կառուցողական աշխատանքներ չեն կատարվել, ինչպիսին կատարվել է Անիում. Ներքին պարիսպ, երկուս ու կես կիլոմետրանոց Արտաքին պարիսպ՝ շարված սրբատաշ քարերից, բազմաթիվ աշտարակներով, մի ամբողջ շարք տաճարներ (Կաթողիկե, Գագկաշեն և այլն), 500 մ երկարության պաշտպանական փոս և այլն։ Այն ժամանակվա պայմաններում շինարարական այդպիսի մեծ աշխատանքներ, մեզ թվում է, հնարավոր էր իրականացնել միայն բազմահազար աշխատողների առկայությամբ։ Հավանաբար Անիում կենտրոնացած էր Շիրակի ոչ միայն քարագործ ու շինարար վարպետների մեծագույն մասը, այլև հազարավոր հասարակ աշխատողներ։ Այլապես անհնար կլիներ ձևքի մուրճի, հատիչի, բահի և բրիչի օգնությամբ ընդամենը 40—50 տարվա ընթացքում սովորական բերդաքաղաքը վերածել մարդաշատ, ճոխ ու վաճառաշահ մայրաքաղաքի, որը պատմիչի վկայությամբ հայտնի էր ամենուրեք՝ «տիեզերահռչակ» էր։

Այդ բոլորը նկատի ունենալով, ընդունելի կարելի է համարել Հայոց պատմության նահապետ Մ. Չամչյանի տեսակետը, ըստ որի

[9] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 103, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, բյուզանդական աղբյուրներ, հ. Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 82։

[10] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմություն*, էջ 162։

Անին X—XI դարերում ունեցել է շուրջ 100 հազար բնակիչ[11]։ Եվ թվում է, թե այդ տեսակետից մի փոքր անորոշ է և իրական դրությունը չի արտահայտում Հ. Մանանդյանի այն եզրահանգումը, թե «բնակչության թիվը 50—100000 Անիի համար հնարավոր է և միանգամայն բուլլատելի»[12]։

Հայ հեղինակներից ոմանք անհավատալի չափով մեծացրել են Անիի բնակչության թիվը, հասցնելով մինչև մեկ միլիոն մարդու և, նույնիսկ դրանից ավելի[13]։ Նախասովետական հեղինակներից մեկը՝ Գ. Պալաքյանը, միանգամայն արդարացի է, որ այդ թիվը համարում է «ծիծաղելի չափազանցություն»[14]։

Անիի մարդաշատ լինելն ընդգծելու համար այդպիսի չափազանցությունների կարիքը չի զգացվում։ Առանց այդ էլ 100 հազար բնակիչը միջնադարյան քաղաքի համար շատ մեծ, այդ ժամանակվա Արևելքի մեծ քաղաքներին համապատասխանող թիվ է։ Իսկ Եվրոպայի քաղաքներն, ընդհանրապես, բացառյալ Հռոմի և Փարիզի, շատ ավելի փոքր են եղել։ Այսպես, օրինակ, XV դարի Գերմանիայի խոշորագույն քաղաք Քյոլնը ունեցել է ընդամենը 35 հազար բնակիչ[15], XI դարում Անգլիայի ամենախոշոր քաղաքներից (Լոնդոն, Բրիստոլ և այլն) յուրաքանչյուրի բնակչության թիվը 7000—8000 մարդուց չէր անցնում, Բազելը XIV դ. ունեցել է մոտ 15 հազար բնակիչ, Մայնի Ֆրանկֆուրտը՝ 9000, Լայպցիգը՝ 1474 թ. մոտ 4000, Նյուրնբերգը՝ 1449-ին 20000 բնակչից մի փոքր ավելի և այլն[16]։ Մարդաշատ էին միայն Փարիզը, Հռոմը և հյուսիս-իտալական մի քանի քաղաքներ[17]։

Հետագայում, քաղաքի հաջորդ դարերի պատմությունը շարադրելիս, նորից ենք անդրադառնալու Անիի բնակչության թվի հարցին։ Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ Անին հետագայում, անգամ XIII դարի առաջին տասնամյակներին, երբեք 100 հազար բնակչից ավելի (կամ նույնիսկ այդքան) չի ունեցել. 1064 թվականին սելջուկների կողմից գրավվելուց ու ավերվելուց հե-

[11] Մ. Չամչյան, *Պատմություն Հայոց*, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 851։

[12] Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 320։

[13] Տե՛ս Դուկաս Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, էջ 49, Գևորգյան Մելիքսեդեկ, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 27։

[14] Պալաքյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 19։

[15] **А. Э. Бринкман,** Площадь и монумент, Москва, 1935, էջ 153;

[16] Տե՛ս **А. К. Живелегов,** Средневековые города Западной Европы, С.-Петербург, 1002, էջ 217—219;

[17] Նույն տեղը։

տո քաղաքից մի այնպիսի մեծ արտադրող է կատարվել, որ հետագայում, բնակչության թվի առումով, հաղիվ թե վերականգնված լիներ նախկին դրությունը։

Միջնադարյան քաղաքներում բնակչությունը հիմնականում տեղաբաշխված էր ըստ հասարակության շերտերի։ Անիի Միջնաբերդում, որտեղ գտնվում էին արքունական պալատը, եկեղեցին և օժանդակ մի շարք շենքեր, բնակվում էին թագավորն ու իր ընտանիքը, պալատականները, թիկնապահ զորքը։ Բուն քաղաքի բնակչության հիմնական զանգվածները բաղկացած էին առևտրականներից ու արհեստավորներից, իսկ արվարձաններինը՝ գյուղատնտեսությամբ զբաղվողներից, ինչպես նաև ընչազուրկ ամբոխից, որն օրվա հացը վաստակում էր ֆիզիկական ծանր աշխատանքով։ Իր հնագիտական ուսումնասիրությունների հիման վրա, Ն. Մառը եկել է այն եզրակացության, որ Անիի բնակչության ցածր խավերն ապրում էին խղճուկ վիճակում։ Նրանց բնակարանները կամ ողորմելի հյուղակներ էին, կամ «քարտուն»-ներ, որոնք փորված էին Ծաղկոցաձորի և մասամբ Իգաձորի ու Ախուրյանի ձորալանջերին[18]։ Այդ նույն «քարտուն»-ներից կային նաև ավելի շքեղները, բաղկացած բավականին մեծ մի քանի սենյակներից, որոնք ունեին միջանցքներ և օժանդակ հարմարություններ[19]։ Սրանք ամենայն հավանականությամբ պատկանում էին հարուստ մարդկանց, և նրանք այստեղ ըստ երևույթին ապաստանում էին միայն քաղաքին նվաճողների կողմից վտանգի ենթարկվելու կամ պաշարման ժամանակ։

Ըստ հասարակական շերտերի՝ Անիի բնակեցման նկարագրված դասավորությունը հետագայում, երբ այն դադարեց մայրաքաղաք լինելուց և սկսեց աստիճանաբար անշքանալ՝ փոխվեց և նրա բնակչության աշխարհագրական տեղաբաշխման պատկերը։ Ն. Մառի պեղումներով՝ ընդհուպ Ներքին կամ Աշոտյան պարսպի մոտ, հայտնաբերվել են աղքատ խավին պատկանող խղճուկ խրճիթների ավերակներ։ Այդ հյուղակները կառուցված էին հետագայում, հին, մայրաքաղաքի կենտրոնին սազական շքեղ շենքերի ավերակների վրա[20]։

Քաղաքներում ապրում էր բնակչության չնչին մասը։ Օրինակ՝ ըստ որոշ հաշվարկների XI դարի Անգլիայում քաղաքային բնակչությունը կազմում էր երկրի ընդհանուր բնակչության մոտ 10 տո-

[18] **Н. Я. Марр**, Ани, էջ 29։
[19] **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 255—256։
[20] **Н. Я. Марр**, Ани, էջ 54։

տոսը միայն[21]։ Պատկերը գրեթե նույնն էր նաև եվրոպական ու արևելյան մյուս երկրներում, որոնց թվում և Հայաստանում։ Կարելի է ենթադրել, որ Շիրակում X—XI դարերում ամբողջ բնակչությունը կազմում էր մոտ մեկ միլիոն մարդ, որի մոտ 10 տոկոսը կենտրոնացած էր մայրաքաղաք Անիում, իսկ մնացածը բնակվում էր գյուղական տիպի բնակավայրերում (որոնց թվում և գյուղաքաղաքներում. Անին Շիրակի միակ իսկական քաղաքն էր)։

Սակայն հարցը միայն սոսկ թվաբանական չէ։ Հանրահայտ է, որ միջին դարերը «ագրարային դարեր էին», գյուղատնտեսության ու գյուղացիության բացարձակ գերակշռության դարեր երկրների մեծագույն մասում։ Կարևորն այն է, թե սոցիալ-տնտեսական և իրավական ի՞նչ վիճակ ուներ քաղաքային դասը՝ առևտրականներն ու արհեստավորները, ինչո՞վ էին նրանք տարբերվում գյուղացիությունից։

Միջնադարյան Հայաստանի գյուղացիության ու քաղաքային դասի՝ քաղաքացիների իրավական ու տնտեսական վիճակի տարբերությունները դեռևս հանգամանորեն չեն ուսումնասիրված։ Դրանք երկուսն էլ պատկանում էին հարկատու, շահագործվող դասակարգին և մատենագրական անվանակոչմամբ սովորաբար կրում էին ռամիկներ անունը[22], բայց սոցիալ-տնտեսական ու իրավական առումով իրարից զգալի չափով տարբերվում էին։ Գյուղացիությունը, որ կոչվում էր շինականություն (շինականներ), ավելի ցածր աստիճանի վրա էր գտնվում, քան քաղաքացիները։ Դեռևս Մովսես Խորենացին վկայում է, որ Վաղարշակ թագավորի սահմանած կարգի համաձայն քաղաքացիները գյուղացիներից ավելի բարձր էին դասված[23]։ Այդ նույն կարգի մի վկայություն ունի նաև Հովհաննես Դրասխանակերտցին[24]։ Նա գրում է, որ Ներսես Տայեցի կաթողիկոսը Զվարթնոց տաճարը կառուցելուց հետո, նրա շուրջը բնակեցնում է գյուղացիներ, բայց քաղաքացիների իրավունքով։ Այդ վկայություններից ընդհանուր ձևով կարելի է եզրակացնել, որ քաղաքացիները գյուղացիների համեմատությամբ ավելի արտոնյալ էին, ավելի հարգված ու բարձր, բայց թե որն էր այդ արտոնությունը, այնուամենայնիվ, մնում է անորոշ. հայտնի չէ

[21] *Տե՛ս* **А. К. Живелегов**, Средневековые города Западной Европы, էջ 217։
[22] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, էջ 479։
[23] **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 108—109։
[24] **Հովհաննես Դրասխանակերտցի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 88։

քաղաքացիների իրավական ու տնտեսական վիճակն ինչով էր գյուղացիության վիճակից ավելի լավ[25]։ Այդ տարբերությունն ավելի որոշակի է արձանագրված Մխիթար Գոշի Դատաստանագրքում, որի համապատասխան հոդվածը կվկայակոչվի հետագայում։

Պատմագիրների ու ժամանակագիրների հաղորդած անուղղակի տեղեկություններից և հնագիտական պեղումների արդյունքներից երևում է, որ Անին ազգագրական տեսակետից X—XI դարերում կատարյալ միատարր քաղաք էր, նրա բնակչությունը բաղկացած էր միայն հայերից։ Ուրիշ ազգություններին պատկանողները այստեղ տակավին չէին կազմում։ Այդպիսի եզրակացության կարելի է հանգել ոչ միայն նշված տեղեկությունների, այլև պատմական ընդհանուր իրադրության հիման վրա. X—XI դարերում Անին չի նվաճվել օտարի կողմից, այնտեղ այլ ժողովուրդներ չեն բնակվել։ Քաղաքի ավերակներում հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում չեն հայտնաբերվել Բագրատունիների ժամանակաշրջանի ոչ մզկիթներ և ոչ էլ վրացական կամ հունական եկեղեցիներ։ Այդպիսիները Անիում կառուցվել են հետագայում՝ սելջուկյան և Զաքարյան տիրապետության շրջանում։

Անիի հասարակական-դասակարգային հարաբերությունները հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել։ Այդ հարցը տարբեր առիթներով շոշափել են մի քանի հեղինակներ, առանց, սակայն, դրա մեջ խորանալու միտումով։ Հավանաբար հայագիտության այդ բացը, բազմաթիվ այլ թերացումների նման, առաջին հերթին փաստական նյութի բացակայության հետևանք է։ Ն. Մառը, որ կանգ է առել քաղաքի պատմության շատ կողմերի վրա, նրա հասարակության դասակարգային հարաբերությունները քննելիս բավարարվել է միայն դասակարգային տրոհման խորացումը և գաղափարախոսության բնագավառում մի քանի նոր երևույթներ արձանագրելով։ Եվ նրա այդ դիտողությունները բացառապես վերաբերում են ոչ թե Բագրատունիների շրջանին, այլ XII—XIII դարերին։

Դեռևս վերջնականապես պարզաբանված չի կարելի համարել նաև Պետրոս Գետադարձ կաթողիկոսի դեմ Անիի բնակչության ընդվզումների բնույթը, ինչպես և Թոնդրակեցիների՝ մայրաքաղաքում ու Շիրակի գավառում ունեցած գործունեության հարցերը։ Սակայն միանգամայն տրամաբանական է, որ X—XI դարերում տեղի ունեցած գյուղացիական շարժումները, որոնց մասին նշվեց վերևում, և Թոնդրակյան շարժումը իրենց ազդեցությունը պետք է

[25] **Я. А. Манандян,** О торговле и городах Армении, էջ 230—231։

թողած լինեին նաև Անիի հասարակական կյանքի վրա։ Այս տեսակետից ուշադրության արժանի է պրոֆ. Ս. Պողոսյանի ենթադրությունը Շիրակում և Անիում Թոնդրակյանների գործունեության վերաբերյալ։ Վկայակոչելով Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ուղղած՝ Գրիգոր Մագիստրոսի մի քանի նամակները, որոնցում նամակագիրն ակնարկում է Անիում ու դրա շրջակայքում պայքարած մարդկանց մասին՝ դրանց անվանելով «մանիքեցիներ և սադուկեցիներ»[26], նա գալիս է այն եզրակացության, որ «XI դարի առաջին կեսին Թոնդրակյաններն ակտիվ գործունեություն էին ծավալել նաև Շիրակում»[27]։ Փորձեր են եղել նաև մասամբ Թոնդրակեցիների հետ կապելու Պետրոս Գետադարձի դեմ ուղղված անեցիների ընդվզումները և բյուզանդական նվաճողներին ցույց տված հերոսական դիմադրության կազմակերպումը 1044—1045 թվականներին[28]։

Հասարակական կյանքի նոր երևույթները չէին սահմանափակվում միայն դասակարգային պայքարի տարբեր ձևերի արտահայտմամբ։ Իբրև տնտեսական ու հասարակական կյանքի զարգացման հետևանք, X դարից ի վեր արդեն նկատելի կերպով անկման պրոցես է սկսվում կրոնական խստակեցության մեջ, հարստություն կիտելու մեծ տենչանք է առաջանում, ամենուրեք արձանագրվում է աշխարհիկ մտածողության զարգացում, աշխարհիկ կյանքի վայելքներից լիովին օգտվելու ձգտում, որոնք համարվում են վերածննդի նախանշաններ գաղափարախոսության բնագավառում։ Ժամանակակից պատմագիրներն ու մյուս հեղինակները՝ Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին, Սամվել Անեցին, Ներսես Շնորհալին և ուրիշներ, լինելով քրիստոնեական կրոնի ջատագովներ, այդ բոլոր երևույթները ներկայացնում են եկեղեցու հայեցակետից և համարում բարոյական անկում։ Եկեղեցական բարոյախոսության տեսակետից այդ բարոյական անկման լրիվ պատկերը տրված է կրոնական տեսիլքով՝ XI դարի մի ավանդության մեջ, որի կենտրոնական դեմքը ժամանակի ամենագիտուն վարդապետներից մեկն է՝ Հովհաննես Կոզեռնը։ Այդ ավանդություն-տեսիլքն, ըստ Ն. Մառի, ապոկրիֆ է և ծագել է XII դարում[29], բայց բովան-

[26] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 26—30 և 35—36։

[27] Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների հեթանոսությունը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., էջ 414։

[28] Տե՛ս Աս. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1954, № 3։

[29] **Н. Я. Марр,** Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, С.-Петербург, 1895, էջ 18—19։

դակութեամբ վերաբերում է XI-ին և սերտորեն կապված է Անիի հետ։ Ըստ դրա, 1022 և 1036 թվականներին տեղի են ունենում երկրաշարժեր, որոնց ուղեկցում է նաև Արևի խավարումը։ Հովհաննես-Սմբատ թագավորը և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, բնական այդ ահեղ երևույթները համարելով չարագուշակ նշաններ Գրիգոր Մագիստրոսին և մի քանի այլ իշխանների ուղարկում են Սևանի վանքը՝ Հովհաննես Կոգեռնից իմանալու, թե դրանք ինչի նշան են։ Վարդապետը նրանց հարցին պատասխանում է, թե դա նշան է այն բանի, որ սատանան ազատվել է իր կապանքներից և «... ահա յայտնեաւ ոչ ոք կարասցէ կալ հատատաուն ի հատատս Քրիստոսի և ի պատուիրանսն Աստուծոյ՝ ո՛չ հայրապետ և ո՛չ վարդապետ, ո՛չ եպիսկոպոս և ո՛չ քահանայ, ո՛չ աբեղայ և ո՛չ կրօնաւոր, ո՛չ իշխան և ո՛չ ժողովուրդ. իշխանք յարենան ի գոռս և յասպարակս և յափշտակողս, դատաւորք ի կաշառս և յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս և զմենաստանս և յաշխարհի զբազմունս դեգերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց, սատեն զաղօթս և թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի և զհետ երթան գովեստից մարդկան, որոճալով որոճին զդիւական երգս (սիրս երգերը—Մ. Աբեղյան)... Այլ և իշխանք պիղծ և մեծախտիւ յանդգնեալ... միշտ և հանապազ ի գինարբուսն դեգերին վասն սիրոյ և ցանկութեան շար և պիղծ ախտին։ Հայրապետք և եպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան աստուածասէրք»[30]։

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Կոգեռնի տեսիլքում տրված է իրական կյանքի, աշխարհիկ մտածողության նկարագրությունը եկեղեցական գաղափարախոսության առումով։ Եվ այդ նոր մտածելակերպն ընդգրկում է և՛ աշխարհիկ մարդկանց՝ իշխաններին, դինվորականներին, և՛ հոգևորականներին՝ սկսած հասարակ քահանայից մինչև Հայոց հայրապետը ներառյալ։

Սակայն աշխարհիկ մտածողության մասին եղած տեղեկությունները չեն սահմանափակվում Հովհաննես Կոգեռնի տեսիլքով, որ տեղ է գտել Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ում։ XI—XII դարերի աշխարհիկ մտածողության, եկեղեցու տեսանկյունով «բարքերի անկման» մասին շատ տեղեկություններ են հաղորդում նաև Արիստակես Լաստիվերացին, հենց ինքը՝ Մատթեոս Ուռհայեցին, Ներսես Շնորհալին, Սմբատ սպարապետը, XIII դ. երկրորդ կեսում Կիլիկիայով և Մեծ Հայքով դեպի Չինաստան ճանա-

[30] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 52—53։ Հմմտ. Մ. Աբեղյան, *երկեր*, հ. Դ, Երևան, 1970, էջ 26—27։

պարհորդություն կատարած հայանի Մարկո Պոլոն և ուրիշներ, որոնց վկայություններն ու տեղեկությունները քննարկված ու լուսաբանված են Մ. Աբեղյանի կողմից[31]։

Իսկ դրանք հանգում են հետևյալին։ Ընկնում է կրոնական խստակեցությունը, իրական կյանքն ու աշխարհը մեծ արժեք են ստանում քաղաքացիների համար, թեպետ սրանք չեն դադարում բարեպաշտ լինելուց և բարեպաշտական գործեր կատարելուց, նրբանք ապրում են ճոխ պալատներում՝ օգտվելով կյանքի բոլոր վայելքներից։ Նրանք «մխայն հեշտութեան և փափկութեան սպասեն»,— գրում է Ա. Լաստիվերտցին քաղաքացիների մասին, սիրում են «ուրախ երգերը» և «հանդեսները», իսկ Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ Հովհաննես-Սմբատ թագավորի եղբայր Աշոտի մահից հետո «Հայոց գործը թուլամորթ դարձավ», «սատեց պատերազմական արվեստը», «նստավ ի գինարբուսն», «սիրեցին... զերգս գուսանաց»։ Նույն կարգի վկայություններ ունեն նաև ապագայի հեղինակները՝ Ն. Շնորհալին, Սմբատ Սպարապետը, Մարկո Պոլոն[32]։

Մեծ չափերի է հասնում ընչաքաղցությունը, արծաթասիրությունը, իսկ հարստություններ կիտելը հասնում է մոլուցքի, հատկապես եկեղեցու սպասավորների ամենաբարձր խավի մեջ։ Պետրոս Գետադարձն ու նրա անմիջական ենթակաները՝ գավառների թեմակալները ամենատարբեր եղանակներով դառնում են ժամանակի ամենահարուստ մարդկանցից։ Մատթեոս Ուռհայեցին պատմելով սելջուկ թուրքերի կողմից 1049 թվականին Արծն քաղաքի ավերման ու կողոպուտի մասին՝ գրում էր որ «ինքը բազմաթիվ անգամ շատերից լսել է քորեպիսկոպոս Դավթուկի մասին, թե նրա կողոպտված դանձատան գանձերը «բարձեցին քառասուն ուղտի», թե «նրա տնից 800 վեցկի էր դուրս գալիս» և այլն[33]։ Հայոց հայրապետ Պետրոսը, որի անբավ հարստությունների մասին նշեցինք այլ տեղ, իր ժամանակակիցների մեջ Դավթուկի նման անկուշտ ուրիշ թեմակալներ ևս ուներ։ Հարստություն կիտելու «հիվանդությունը» մեծ տարածում ուներ նաև հասարակության աշխարհիկ խմբերում։ XI դարի Անիում «վաղեմի «գահերեցներից ու նահապետներից» զատ «առևտրի և փողատիրության շնորհիվ» առաջանում է «տեղական մեծատոհմների նոսր» «խավը»,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— որի ներկայացուցիչներին Լաստիվերացին նշում է

[31] Տե՛ս Մ. Աբեղյան, *երկեր*, հ. Դ, էջ 24—27։

[32] Տե՛ս նույն տեղը, էջ 24—25։

[33] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 103։

«գլխավորք քաղաքին» անունով[34] և որին «հակադրվում էին քաղքենի «ռամիկները»... քաղաքի հետ ընկած թաղերում ու ծայրամասերում, վիմափոր որջերում («քարտուններում») ու մղած հյուղերում ապրող մանր արհեստավորների, մշակների, ստրուկների և երբեմն նույնիսկ ճորտերի խիտ... մասսաները...»[35]։ XI դարի Անիում ստրուկների և ճորտերի առկայությունը, որի մասին ասում է Ա. Հովհաննիսյանը, վիճելի հարց է, իսկ հասարակության շերտերի ընդհանուր բնութագրումը կարելի է ընդունել անվերապահորեն։ Այո՛, X—XI դարերից արդեն աստիճանաբար ձևավորվում էր ազնվական տիտղոս չունեցող, բայց խիստ հարուստ և ազդեցիկ «մեծատուններին» այն փոքր խավը, որ հետագայում այնքան մեծ դեր է խաղացել Անիի ներքին կյանքի բոլոր բնագավառներում։

Ճնագիտական պեղումների նյութերը, պատմագիրների նկարագրությունները, Ղրիմում, Արևմտյան Ուկրաինայում, Լեհաստանում, Փոքր Ասիայում և այլուր ապաստանած անեցի զաղթականների նիստուկացին վերաբերող նյութերը, որոնք հրապարակված են տարբեր հեղինակների կողմից, ցույց են տալիս, որ վաղեմի մայրաքաղաքի բնակչությունն ունեցել է ազգագրական իր յուրահատուկ կոլորիտը, սիրել է իր հայրենի քաղաքը և ամենուրեք հպարտացել է անեցի լինելով, նույնիսկ նոր ժամանակների սերունդները, որոնց միայն ապուպապերն էին իսկական անեցիներ։ Սակայն ցավով պետք է արձանագրել, որ ազգագրական տեսակետից նույնպես շատ մեծ հետաքրքրություն ներկայացնող քաղաքն առանձին ուշադրության չի արժանացել։ Նրա բնակչության տնտեսական, կենցաղային ու մասամբ կրոնական սովորությունների մասին նշվում են միայն պատմական, գրականագիտական և, նույնիսկ, ճարտարապետական աշխատություններում։ Ազգագրագետները նույնպես զբաղվել են Անիով և մյուս քաղաքներով, բայց ոչ թե նեղ ազգագրական, այլ հիմնականում տնտեսության պատմության առումով։

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Թորոս Թորամանյանի «Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը» հոդվածը, որ տպագրվել է «Գեղարվեստ» հանդեսի 1917 թ. № 6-ում և հիմնականում գրված է Անիին վերաբերող նյութերի ու V—XV դարերի պատմիչների նը-

[34] Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 231։

[35] Նույն տեղը։

կարագրությունների հիման վրա[36]։ Ընդ որում ազգային սովորություններին վերաբերող մասը գրված է ընդգծված չափազանցություններով, պակասը լրացնելով երևակայությամբ, թեպետ իր կատարած նկարագրականի վերջում հեղինակը գրում է, որ «Սկսած 4-րդ 5-րդ դարերու պատմիչներն մինչև 14-րդ 15-րդ դարերու պատմիչներ, առավել կամ նվազ չափով, այս ճոխ ու փարթամ կենցաղի նկարագրական հատվածներ ունեին, որոնք գրեթե համանման են իրարու... [և] հազիվ թե չափազանցություններ նկատելի լինեն»[37]։ Այդ կարգի պատմագիրներից մեկն էլ Ստեփանոս Ասողիկն է, որը բացահայտ չափազանցությունների մեջ է ընկնում հայտարարելով, թե նույնիսկ հովիվներն ու նախարարները հագնում էին մետաքսե պատմուճան[38]։ Ըստ դրա, թագավորներն ու իշխանները դնում էին թանկագին քարերով զարդարված թագ կամ խույր, ականջներից կախում էին թանկագին օղեր, հագնում էին ոսկեթել պատմուճաններ, որոնց վրայից՝ սամույրե կամ թանկագին կերպասե վերարկու, իրենց աստիճանին համապատասխան հագնում էին տարբեր գույնի կոշիկներ, իսկ մեջքերին կապում էին «ոսկեպատ կամ արծաթապատ» կամարներ։ Կանայք ավելի պճնազարդ էին. «Մետաքսեղեն ոսկեթել անկվածո դիպակներե շինված էին անոնց պատմուճանները։ Մարգարիտներով և թանկագին գոհարներով խառն էին անոնց մազերու զարդարանքները։ Ոսկեձույլ կամար ունեին մեջքերին, ակնակուռ օղեր՝ ականջներին, նույնպես ապարանջաններ՝ թևերին...»[39]։ Նա գրում է, որ իշխանական ու արքունական ապարանքներում գործածում էին փետուրե փափուկ անկողիններ, «ոսկեզարդ և նկարազարդ» մահճակալներ, որոնք «ծածկվում էին ամպհովանիներով և ոսկեթել բանված վրագույրներով», ճաշատեսակներն ընտիր էին և պատրաստվում էին որսակենդանիների ընտիր մսից, «մատաղ հորթուկներու ուղեղից», գործածում էին ոսկեղեն սպասք, ունեին ընտանեկան ճաշասրահներ»[40]։

Օգտվելով գերազանցապես իր հայրենի քաղաք Արծնի փարթամության մասին Արիստակես Լաստիվերտցու հաղորդումներից[41] և նկատի ունենալով Անիի պեղումների շնորհիվ հայտնաբերված հագուստների ու տնային սպասքի մնացորդները, Մ. Աբեղյանը

[36] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, էջ 351—353։

[37] Նույն տեղը, էջ 353։

[38] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 161։

[39] Թ. Թորամանյան, Նշված աշխատ., էջ 351—352։

[40] Նույն տեղը, էջ 352—353։

[41] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 79—81։

գրեթե նույն ձևով է ներկայացնում X—XIII դարերի Հայաստանի փարթամ քաղաքների «նիստան ու կացը և հանդերձները»։ Նա գրում է, որ «Հագնում էին դիպակ, մետաքսե պատմուճաններ և, ինչպես պեղումներից հայտնաբերվել է, մետաքսի ամբողջ հագուստներ՝ ոսկեթել ասեղնագործությամբ։ ... Ամեն ինչ ճոխ ու պերճ էր»[42]։ Շքեղ ու ընտիր են եղել նաև տնային գործածության իրերը և սպասքը՝ գորգերը, բազմոցները, վարագույրները, հախճապակյա ու ճենապակյա պատկերազարդ ամանեղենը, որ հիմնականում արտադրվում էր Անիում, ինչպես նաև գարդերը[43]։

Եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ մեզ հասած աղբյուրները Հայաստանի փարթամ քաղաքների ներքին կյանքը նկարագրել են առանց զգալի չափազանցությունների, այնուամենայնիվ, դրանք խիստ թերի են և գրեթե բացառապես վերաբերում են միայն քաղաքների ամենահարուստ խավի ներքին կյանքին, նիստուկացին, որոնք չեն կարող, բնականաբար, ազգագրական տեսակետից ներկայացնել բազմաշերտ բնակչությամբ քաղաքները, տասնյակ ղրաղմոնքների ու արհեստների ներքին տնտեսական-արտադրական սովորությունները և այլն։ Այնպես որ X—XI դարերի Հայաստանի քաղաքների, որոնց թվում և Անիի, ազգագրությունը մեր դարի գիտության մակարդակով տակավին մնում է չուսումնասիրված, իսկ դրա համար բավականին նյութեր կան կուտակված նաև թանգարաններում։

4. ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ–ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԵՄՔԸ, ԿՈՄՈՒՆԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Շնորհիվ այն բանի, որ Անիի ավերակները, այնուամենայնիվ, հասել են մինչև մեր ժամանակները և գրավոր աղբյուրներից բացի, տասնյակ հեղինակների կողմից դրանք ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության, մանավանդ հնագիտական առումով, ուստի քաղաքի կառուցվածքի ու գրաված տարածության, քաղաքաշինության, ճարտարապետության, հատակագծման և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ ստեղծվել է հսկայական գրականություն, որը թույլ է տալիս, վերջին տասնամյակներում հրապարակված սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ, շոշափել մի ամբողջ շարք հարցեր, առանց որոնց անհնար է պատկերացնել քաղաքի համակողմանի պատմությունը։

[42] Մ. Աբեղյան, երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 24։

[43] Նույն տեղը։

Ա. Քաղաքի կառուցվածքը և թաղամասերը

Անին միջնադարյան այն հազվագյուտ քաղաքներից էր, որոնք համեմատաբար խիտ էին բնակեցված։ Քաղաքի բուն տարածքում ցանքատարածություններ գրեթե չկային և նրա պարսպապատ մասը համեմատաբար ընդարձակ չէր։ Սակայն նա չէր սահմանափակվում միայն պարսպապատ քաղաքամասերով։ Նրա բաղկացուցիչ մասերն էին նաև արվարձանները, որոնք քաղաքը շրջապատում էին գրեթե բոլոր կողմերից։ Առանձնապես ընդարձակ էին նրա հյուսիս-արևելյան արվարձանները՝ երկար ձգվող սարահարթի վրա[1]։

Անիի գրաված տարածքի մեծությունը որոշելու հարցին շատ հայագետներ են անդրադարձել, գերազանցապես կապված նրա բնակչության թվի պարզաբանման հետ։ Հիմնական եղրակացություններից մեկն այն է, որ Անին իր բնակչության թվի համեմատությամբ ընդհանրապես փոքր տարածություն է գրավել։

Մոտավորապես հայտնի է Անիի ժամանակաշրջանի Առաջավոր և Միջին Ասիայի խոշոր քաղաքների՝ Մերվի, Ռեյի, Պարտավի և մյուսների մեծությունը։ Օգտվելով արաբական մատենագիրների հիշատակություններից, Հ. Մանանդյանը գրում է, որ դրանց գրաված տարածքի միջին երկարությունը հասնում էր ավելի քան 6 կմ-ի (մեկ փարսախի) և ոմանին մոտավորապես նույնքան էլ լայնությունը[2], այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրը գրավում էր 36 քառ. կմ տարածություն, որը հավասար է 3600 հեկտարի (Մանանդյանի մոտ՝ 40 քառ. կմ և 4000 հա)։ Պարտավի ավերակները գտնվում են Ադրբեջանական ՍՍՀ Բարդա շրջկենտրոնի մոտ, Թարթառ գետի ստորին հոսանքում։ Տարբեր վիճակում պահպանված դրա ավերակներն իրոք գրավում են ընդարձակ տարածություն։

Հ. Մանանդյանը հավանական է համարում, որ նշված քաղաքների մեծությունն են ունեցել «նաև Անին և X—XI դդ. հայկական մյուս քաղաքները՝ իրենց արվարձանների հետ միասին»[3]։

Մեր կարծիքով այս հարցում բացարձակ առավելությունը պետք է տալ Թ. Թորամանյանին, որը շրջագայել, դիտել ու նկարագրել է ընդամենը մոտ 170 հեկտար տարածք գրավող Անիի (բուն քաղաքի, ըստ Հ. Օրբելու ավելի քան 150 հեկտար)[4] ընդարձակ շրջակայքը։ Ինչպես նշեցինք բնակչության թվի մասին խոսելիս, Թ. Թորամանյանն Անիի պարսպապատ մասի հյուսիս-արևել-

[1] Н. Марр, Ани, столица древней Армении, էջ 221։

[2] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 22։

[3] Նույն տեղը։

[4] И. Орбели, Развалины Ани. էջ 29։

յան շարունակությունը կազմող սարահարթի վրա Հովվի հայտնի եկեղեցուց ու դեպի Հոռոմոսի վանքը տանող ճանապարհին բարձրացող զույգ սյուներից բացի, նկատել է ընդարձակ գերեզմանոցի, տների, մահարձանների, բաղնիքի, հարյուրավոր մեռ երկարություն ունեցող պատերի (ըստ նրա դրանք այգիների ու պարտեզների «շրջափակ պարիսպներ» էին) և այլ շինվածքների հետքեր ու ավերակներ, և դրանից եզրակացրել, որ քաղաքը տարածված է «եղել ընդարձակ տարածության վրա»[5]: Նրա կարծիքով քաղաքի շրջագծի մեջ էին մտնում և նրա արվարձաններն էին Միջնաբերդից 4—10 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերը՝ Հոռոմոսի վանքը, Բագնայրը (Ղոչլիջա), Առջո-Առիճը (Ալաջա գյուղ) և այլն, վարչական ու տնտեսական առումներով «անմիջական կապ» ունենալով քաղաքի հետ[6]: Հեղինակի դիտումները ցույց են տվել, որ քաղաքը որոշ տարածություններ է ընդգրկել նաև Ախուրյանի ձախ ափից, ինչպես նաև Մաղկոցաձորն ամբողջությամբ:

Մառը նույնպես այն կարծիքին է, որ Անիի տարածքը չէր սահմանափակվում միայն պարսպապատ քաղաքով, որ նրա մեջ էր մտնում նաև այն ամբողջ սարահարթը, որ ձգվում էր մինչև Միջնաբերդից 4 վերստ հեռավորություն ունեցող զույգ սյուները՝ Հոռոմոս տանող ճանապարհի վրա[7]: Սակայն Մառն Անիի այդպիսի սահմանները վերագրում է հետագա ժամանակաշրջանին՝ Զաքարյանների իշխանության ժամանակներին[8]: Մեր կարծիքով, ականավոր անիագետն այս հարցում ևս արտահայտել է անընդունելի տեսակետ: Հայտնի է, որ քաղաքի ներքին պարսպի կառուցումից ընդամենը մեկ ևկես տասնամյակ հետո, քաղաքի արագ ընդարձակման հետևանքով, կառուցել են նաև Արտաքին պարիսպը, որը, միանգամայն հասկանալի է, արվարձաններն իր մեջ չէր ամփոփում և ընդհանրապես միջին դարերում, ինչքանով գիտենք, քաղաքի բուն պարիսպները ոչ մի տեղ արվարձաններն իրենց մեջ չեն ընդգրկել: Այդ ակնհայտ է դառնում, եթե նկատի ենք ունենում Անիի հյուսիս-արևելյան ամենաընդարձակ արվարձանում Բագրատունիների ժամանակ կառուցված Հովվի եկեղեցին, որի գոյությունն առանց այդ հատվածները բնակչություն ունենալու, միանգամայն անիմաստ կլիներ: Ենթադրվում է նաև, որ «հեռվից զանգակատան նման» զույգ սյուները նույնպես գոյություն ունեն Բագ-

[5] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմութ., աշխ. երկրորդ ժողովածու, էջ 178:

[6] Նույնը, աշխ. ժողովածու, էջ 327—328:

[7] **Н. Марр**, Ани, столица древней Армении, էջ 221:

[8] Նույն տեղը:

գատունիների ժամանակներից: Հետևապես պետք է ենթադրել, որ Անին իր «բնական սահմաններին» հիմնականում հասել էր արդեն Բագրատունիների ժամանակ, հատկապես Արտաքին պարիսպը կառուցելուց հետո՝ մինչև բյուզանդական ագրեսիան: Անուղղակիորեն դրա օգտին է խոսում այն փաստը, որ թե՛ բյուզանդական հարձակումների և թե՛ մանավանդ 1064 թ. սելջուկյան արշավանքի ժամանակ քաղաքում բուն բնակչությունից բացի ապաստան էին գտել հազարավոր (թերևս տասնյակ հազարավոր) բնակիչներ, որոնք զանգվածորեն բնակվում էին նրա արվարձաններում և միայն վտանգի դեպքում պատսպարվում էին պաշտպանական պարիսպներից ներս:

Եթե ընդունելու լինենք Թ. Թորամանյանի կարծիքը, իսկ չընդունելու ոչ մի հիմք չունենք, և կատարենք որոշ թվաբանական հաշվումներ, ապա դուրս կգա, որ Անի քաղաքն իր արվարձանների հետ Բագրատունիների թագավորության շրջանում գրավել է մոտ 25—30 քառ. կմ (2500—3000 հա) տարածք, որի մեծագույն մասը՝ ավելի քան 80 տոկոսը կազմում էին արվարձանները՝ Արտաքին պարսպից դուրս գտնվող թաղամասերը՝ Ախուրյանի ձորն ու մասամբ գետի ձախափնյա շրջանում, Մաղկոցաձորում, Գլիձորում, Իգաձորում, հյուսիս-արևելյան սարահարթի վրա և այլուր, որոնք բուն քաղաքի համեմատությամբ նոսր էին բնակեցված ու կազմում էին բնակեցված առանձին զանգվածներ:

Անին և Բագրատունյաց Հայաստանի մյուս խոշոր քաղաքներն իրենց հատակագծային կառուցվածքով նման էին Պարսկաստանի ու Միջին Ասիայի խոշոր քաղաքներին: Վերջիններս սովորաբար բաժանվում էին երեք մասի՝ միջնաբերդի, որ անվանվում էր «կուխենդուզ», բուն քաղաքի՝ «շահրիստան» և արվարձանների՝ «ռաբադ»[9]: «Կուխենդուզը» սովորաբար գտնվում էր քաղաքի կենտրոնում, շրջապատված հատուկ պարսպով, որա շուրջը փռված էր «շահրիստանը», որը նույնպես պատած էր պաշտպանական պարիսպներով, որոնցից դուրս արդեն «ռաբադն» էր՝ արվարձանները, որոնք նույնպես երբեմն կարող էին պարսպապատ լինել: Պատմականորեն քաղաքի այդ մասերն առաջացել են տարբեր ժամանակներում՝ սկզբնապես հիմնադրվել էր բերդը, որի շուրջը հետագայում բուն քաղաքն առաջանալուց հետո, այն դարձել էր արդեն միջնաբերդ: Բուն քաղաքի ձևավորման հետ, թերևս դրանից մի փոքր ուշ, առաջացել են արվարձանները:

[9] **В. Бартольд**, Историко-географический обзор Ирана. СПб, 1903, էջ 8—9, **Հ. Մանանդյան**, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 20—21, նույնի «О торговле и городах Армении», էջ 221:

Պատմա-ճարտարապետական տեսակետից Անիի հատակագծային կառուցվածքն ուսումնասիրելը համեմատաբար դյուրին է եղել պարզապես այն պատճառով, որ դրա ավերակներում պարզորոշ նկատվում են իրարից որոշակիորեն բաժանված՝ Միջնաբերդը, բուն քաղաքը և արվարձանները։ Տեղանքի բնույթն արգելք է հանդիսացել Միջնաբերդի շուրջը բուն քաղաքի ծավալվելուն։ Անիի Միջնաբերդը գտնվում էր քաղաքի ոչ թե կենտրոնում, ինչպես սովորաբար մյուս քաղաքների միջնաբերդերի տեղադրությունն էր, այլ հարավ-արևմտյան ծայրում։ Նրա Միջնաբերդն իրոև ինքնուրույն ամրոց կամ բերդ, գոյություն ուներ հին ժամանակներից և մինչև Բագրատունիների ժամանակները կամսարականների կարևորագույն հենակետերից մեկն էր։ Անին մայրաքաղաք հռչակվելուց ընդամենը 2—3 տարի անց՝ 964 թվականին, երբ կառուցվեց Աշոտյան կամ Ներքին պարիսպը, այդ հին բերդն արդեն դարձավ Միջնաբերդ, որի և Աշոտյան պարիսպների միջև ընկած էր Հին քաղաքը (Ներքին բերդ), իսկ դրանից 15—20 տարի անց՝ Արտաքին կամ Սմբատյան պարսպի կառուցմամբ սահմանագծվեց նաև Նոր քաղաքը։ Հին և Նոր քաղաքը միասին վերցրած կազմում էին բուն քաղաքը՝ Արիստակես Լաստիվերտցու արտահայտությամբ՝ «շահհաստանը»[10] («շահհրիստան»)։ Արտաքին պարսպից դուրս տարածվում էին քաղաքի արվարձանները, որոնք կազմում էին առանձին-առանձին զանգվածներ՝ թաղամասեր, եթե այդպես կարելի է անվանել։ Ըստ Ֆ. Մոսիևիչի հանույթի կազմած հատակագծի, Միջնաբերդը գրավում էր մոտ 2,7 հեկտար, Հին քաղաքը, որ ընկած էր Միջնաբերդի ու Աշոտյան պարսպի միջև, ուներ 400 մ երկարություն (հարավից հյուսիս) և 120—150 մ լայնք (արևելքից արևմուտք), մոտավորապես ուներ 6—6,5 հեկտար տարածք, Աշոտյան և Սմբատյան պարիսպների միջև ընկած Նոր քաղաքը գրավում էր մոտ 42 հեկտար տարածք[11]։ Եվ այսպիսով, բուն քաղաքն ըստ հատակագծի, կազմում էր մոտ 52 հեկտար։ Սակայն Նոր քաղաքի բաղկացուցիչ մաս են համարվել նաև Ծաղկոցաձորն ու Ախուրյանի կիրճի մի մասը, որ պարսպապատ բուն քաղաքի հետ, ըստ Հ. Օրբելու, կազմել է 150, իսկ ըստ այլ հեղինակների տվյալների՝ 170 հեկտար[12]։

[10] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 63։

[11] Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 28։ Հեղինակի մոտ թվերը իրականից մի փոքր տարբերվում են, որ էական չէ։

[12] И. Орбели, Развалины Ани, էջ 29։ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժողովածու, էջ 178։

Խոշոր քաղաքներին հատուկ Անիի կառուցվածքային-հատակագծային այդ համալիրը, որ բաղկացած էր Միջնաբերդից, բուն քաղաքից և արվարձաններից, Բագրատունիների թագավորության շրջանում արդեն վերջնականապես ձևավորվել էր։ Առանց արվարձանների Ն. Մառը ևս պարսպապատ Անին բաժանում է երեք մասի՝ Միջնաբերդի, Հին քաղաքի և Նոր քաղաքի, միաժամանակ նշելով, որ այն «չէր շրջափակվում քաղաքային պարիսպների մեջ. նա հյուսիս-արևելքից դուրս էր գալիս բաց լայնածավալ տարածությունը, որտեղ տեղավորված էր քաղաքի ամրացված մասերի հետ մի ամբողջություն կազմող արվարձանը» և ենթադրում է, որ քաղաքի «արվարձանային մասը հասել է» մինչև Հաղթական կամար անվանված ղույգ սյուները[13], ինչպես նաև դուրս եկել արևելյան, արևմտյան ու հարավային կողմերի «բնական սահմաններից» իր մեջ ընդգրկելով Ծաղկոցաձորի ու Ախուրյանի հակադիր դառիվեր կողերը[14]։

Եթե ելնելով նույն ժամանակների քաղաքների կառուցվածքի ընդհանուր սխեմայից և ձևավորման ընթացքից, առանց արվարձանների Անին հստակորեն բաժանում են վերը նշված երեք հատվածի՝ Միջնաբերդի, Հին քաղաքի ու Նոր քաղաքի, վերջին երկուսը միասին անվանելով բուն քաղաք կամ «շահհաստան», ապա մեծ դժվարություն է ներկայացնում նրա արվարձանների ու քաղաքին հարող բնակավայրերի դասակարգման հարցը։ Նրա արվարձանները թվով շատ էին և կազմում էին բնակեցված մեծ ու փոքր մի շարք զանգվածներ, որոնց մի մասի համար նույնիսկ անհնար է ընդունելի որևէ անուն տալը։ Այնուամենայնիվ, չհաշված առանձին մանր-մունր թաղամասերը, որոնց մեծությունը, բնույթն ու տեղադրությունը տակավին մնում է անհայտ, Անիի արվարձանները և բուն քաղաքից դուրս գտնվող մյուս քաղաքամասերը կարելի է կոչել հետևյալ անուններով՝ Հյուսիսային, Հարավային, Քարանձավային Անի՝ Ծաղկոցաձորի հետ միասին, Ստորերկրյա Անի։ Վերջանց մի մասին (Քարանձավային Անի, Ստորերկրյա Անի) նախորդ հեղինակների կողմից համապատասխան անուններ տրվել են, որոնք գործածվել են նաև մեր աշխատության մեջ, իսկ մյուս արվարձանները (Հյուսիսային արվարձան, Հարավային արվարձան) պարզապես կոչել ենք նկատի ունենալով քաղաքի նկատմամբ դրանց ունեցած դիրքը։ Չհաշված այն բնակավայրերը, որոնք գտնվում էին քաղաքի շրջակայքում, դրա օրգանական մասը չէին կազ-

[13] Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 221։

[14] Նույն տեղը։




Միջնաբերդն իր շրջակայքով

մում, բայց բոլոր թելերով կապված էին նրա հետ և քիչ էին տարբերվում արվարձաններից։

Այժմ փորձենք համառոտակի ներկայացնել Անիի բոլոր քաղաքամասերն ու արվարձանները առանձին-առանձին, սկսելով Միջնաբերդից և ավարտելով արվարձաններով։

Միջնաբերդը տեղադրված էր քաղաքի հարավ-արևմտյան անկյունում, բլրի վրա, քաղաքի նկատմամբ ամենաբարձր կետում։



Միջանցք միջնաբերդում

Նրա բարձրությունը բուն քաղաքից հասնում էր 80—100 մետրի (ըստ ոմանց՝ անգլիական 400 ոտնաչափի) և գրավում էր մոտ 4 հեկտար (ըստ Ֆ. Մոսինիչի հատակագծի՝ 2,7 հա) տարածք, որից 4000 քառակուսի մետրը այսինքն՝ շուրջ մեկ տասներորդ մասը, զբաղեցնում էր արքունական պալատը[15]։ Միջնաբերդը քաղաքից բաժանվում էր հաստատապատ պարիսպներով, որը կառուցվել էր դեռևս Կամսարականների օրոք։ Միջնաբերդը Բագրատունիների աթոռանիստն էր։ Արքունական պալատից բացի, այստեղ էին գտնվում գինանոցը («տուն գինաց»), գանձարանը («տուն գանձուց»), «տուն սպազինաց», ամբարանոց («համբարանոց»), բնակելի տներ բերդապահ զինվորականների, պալատական պաշտոնյաների, հոգևորականների համար, պալատական եկեղեցին, արքայական գրադարանը, թագավորների գերեզմանոցը և այլն, որոնք գտնվում էին արքունական ապարանքի պարսպից դուրս և լրացնում էին դրա համալիրը[16]։ Այստեղ, մինչև XI դարը, տարբեր ժամանակներում կառուցված են եղել տարբեր մեծության 7 եկեղեցիներ, որոնցից ամենամեծը, որը Հարությաեկեղեցին էր, մինչև Բագրատունիների վերջը կոչվում է պալատի կամ պալատական եկեղեցի, կառուցվել էր դեռևս VII դարում՝ Կամսարականների օրոք[17]։ Միջնաբերդն ուներ իր բաղնիքը, ջրմուղը։ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ օգտվելով ջրի առատությունից, Բագրատունիներն այստեղ ստեղծել էին «ծառաստաններ, ծաղկանոցներ և ամբողջ արքունիքի բլուրը» զարդարել էին նաև իբրև զբոսավայր»[18]։ Նրա այդ ենթադրությունը միանգամայն հավանական է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ ըստ Թովմա Արծրունու հիշատակության, նույն կարգի ծաղկանոցներ ու ծառաստաններ ստեղծվել էին նաև Արծրունի թագավորների աթոռանիստ Աղթամարում ու Ոստանում՝ Գագիկ Արծրունու օրոք (908/9—940)[19]։

Միջնաբերդի ամբողջ բլուրը ծածկված է տարբեր շինվածքների ավերակներով։ Հնագիտական հիմնական ուսումնասիրություններն այստեղ կատարվել են 1907—1908 թվականների գիտարշավ-

---

15 Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 66—67, Թ. Թորամանյան, Նյութեր հայկակ. ճարտարապետ. պատմ., աշխ. ժող., էջ 361—376։ Հմմտ. Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 24։

16 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 361—362, Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 202։

17 Նույն տեղը, էջ 362։

18 Նույն տեղը, էջ 365։

19 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեայց, էջ 474—477։



Միջնաբերդ. պալատի պատի մի հատվածը

ների ընթացքում՝ կիզակետ ունենալով արքունական պալատը: Թեպետ Միջնաբերդի ճարտարապետական հուշարձաններից շատ քչին մնացորդներ են միայն պահպանվել, սակայն դրանք էլ բավական են, գրավոր աղբյուրների հետ միասին, բնութագրելու ու արժեքավորելու Բագրատունիների նշանավոր աթոռանիստի նշանավոր հուշարձանները՝ արքունական պալատն իր օժանդակ շէնքերով, պալատական եկեղեցին, պալատի ու Միջնաբերդի պարիսպները, ջրմուղը և այլն, որոնց կանդրադառնանք ըստ կարգի:

Ինչպես նշվեց, Բուն Բաղաքը («Շահաստան») երկու մասից էր բաղկացած՝ Հին Բաղաքից և Նոր Բաղաքից, որոնք պարզապես այդպես են կոչվել տարբեր ժամանակներում պարսպապատվելու շնորհիվ. առաջինը պարսպապատվել է Աշոտ III-ի օրոք, 964 թվականին և ընկած էր այդ նոր կառուցված Աշոտյան և վաղուց գոյություն ունեցող Միջնաբերդի պարիսպների միջև: Գրաված տարածքով Հին քաղաքը Նորից անհամեմատ փոքր էր, բայց նրա նման խիտ կառուցապատված էր: Այստեղ, Աշոտյան պարիսպներին հարող մասերում 1893 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվել են «աղբատիկ տնակների ամբողջական թաղամասեր»[20], որոնք անշուշտ, ստեղծվել էին XIII դարից հետո, երբ Անին արդեն դադարել էր թագավորական կամ իշխանական աթոռանիստ լինելուց և բավական հետադիմել: Քաղաքի արագ ծավալման ու կառուցապատման հետևանքով, Աշոտյան պարսպի կառուցումից ընդամենը 15 տարի անց, 989 թ. հարկ է լինում կառուցել պաշտպանական մի նոր պարիսպ՝ Արտաքին կամ Ամբաստյան պարիսպը, որն Աշոտյան պարսպից գտնվում էր 700—720 մետր հեռավորության վրա: Հենց այդ երկու պարիսպների միջև ընկած քաղաքահատվածն էլ սովորաբար կոչվում է Նոր քաղաք: Չպետք է կարծել, որ Նոր քաղաքը ծագել է Ամբաստյան պարսպի կառուցումից հետո, կամ դրա կառուցման նախօրեին: Այս հարցում միանգամայն անառարկելի է Ն. Մառը, որը գրում է, թե «Բուն քաղաքը, Անիի նոր մասը, ծնվել ու աճել է 989 թ. Ամբաստյան պարիսպների կառուցումից շատ առաջ, այն կառուցապատվել և գեղեցկացվել է 964 թ. Աշոտյան պարիսպների կառուցումից շատ առաջ, ինչպես վկայում են Առաքելոց եկեղեցու մոտ պեղած Կամսարականների ժամանակաշրջանի ճարտարապետական հուշարձանները»[21]:

Հ. Օրբելին Աշոտյան ու Ամբաստյան պարիսպների միջև փռված հատվածից բացի, Նոր քաղաքի մեջ է ընդգրկում նաև Արտաքին պարսպից դուրս գտնվող «Անիի սարահարթի զգալի մասը», ինչպես և «Մաղկոցաձորի բարանձավային բնակարանները»[22]: Ըստ էության թերևս անընդունելի չի կարելի համարել Հ. Օրբելու այդ տեսակետը, սակայն եթե նկատի ունենանք քաղաքի պաշտպանական համալիրի տեղադրությունը, հատակագծման ու կառուցապատման առանձնահատկությունները և, նույնիսկ, սոցիալական տեսակետից բնակչության տարբերությունները, ապա Ամբաստյան պարիսպներից դուրս գտնվող այդ թաղամասերն ավելի շուտ արվարձաններ էին, քան բուն քաղաքի մասերը: Այդ պատճառով էլ դրանց մասին խոսք կլինի արվարձաններին անդրադառնալիս:

Միանգամայն հասկանալի է, որ Անին իբրև քաղաք առաջին հերթին բնութագրվում է նրա բուն մասով՝ «շահաստանով»: Եվ իրոք, այստեղ էր գտնվում Բագրատունյաց ժամանակաշրջանի ճարտարապետական կարևոր հուշարձանների մեծագույն մասը (Մայր եկեղեցի, Գագկաշեն եկեղեցի, Առաքելոց եկեղեցի, ս. Խաչ եկեղեցի և այլն, հյուրանոցներ, բաղնիքներ, իշխանական ապարանքներ և մոնումենտալ այլ կառույցներ), այստեղ էր հիմնականում կենտրոնացած քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքը, և այն ավելի խստորեն էր ենթարկված ընդհանուր հատակագծման, ունենալով ժամանակի պահանջներին համապատասխան կոմունալ պայմաններ: Կարելի է նաև ենթադրել, որ Անիի բնակչության կեսից ավելին կենտրոնացած էր բուն քաղաքում:

Անին շրջապատող արվարձանների մեջ ամենից ընդարձակը,

[20] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 5:

[21] **Н. Я. Марр**, Ани էջ 79:

[22] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 18 և 36—38:

թերևս, նաև մարդաշատը, գտնվում էր նրա հյուսիսային և մասամբ հյուսիս-արևելյան կողմում, Սմբատյան պարսպի ու պաշտպանական փոսի դիմաց տարածվող սարահարթի վրա։ Անիի այդ ընդարձակ արվարձանը (կամ արվարձանները) պայմանականորեն կարելի է կոչել Հյուսիսային կամ Հյուսիսի արվարձան։ Մյուս արվարձանների նման Հյուսիսայինը նույնպես շատ թույլ է ուսումնասիրված և նույնիսկ դժվար է որոշել, թե այդ կողմի արվարձանը միասնական բնակելի մեկ զանգված էր կազմում, թե՞ բաղկացած էր առանձին-առանձին արվարձաններից։ Որոշակի հայտնի չեն նաև դրա տարածման սահմանները։ Միայն նկատի ունենալով նշմարվող ավերակներն ու հնությունները, ենթադրում են, որ քաղաքի արվարձաններն այդ ուղղությամբ ձգվում էին առնվազն մինչև Հոռոմոս տանող ճանապարհին գտնվող զանգակատուն կամ հաղթական կամար համարված զույգ սյուները և այժմյան թուրքական Անի գյուղը։ Այդ ամբողջ սարահարթի վրա նշմարվում են բազմաթիվ անշուք շենքերի, երբեմն հարյուրավոր մետրերով ձգվող այգեպաշտպան կամ ցանքապաշտպան պարիսպների մնացորդներ, հասարակական ընդարձակ գերեզմանոց, եկեղեցիների, մեծ բաղնիքի, ձիթհանքերի հետքեր[23], որոնք այդ մասերի կառուցապատման ու բնակեցված լինելու իրեղեն ապացույցներ են։ Թորոս Թորամանյանը, որը համեմատաբար ամենից լավ գիտեր ամրացված քաղաքից դուրս գտնվող այդ ընդարձակ գոտին, երբեմնի կանգուն այդ արվարձանի հնությունների մասին հիշատակելուց հետո գրում է. «Ամբողջ դաշտավայրը, շնորհիվ խրամների լցնելու համար այստեղեն անցնող վտակի պարզված առատ ջրերու, ծածկված է եղեր ծառաստաններով ու մրգաստաններով, որոնց մեջ կղզիացած են եղեր առանձին թաղամասեր կամ արվարձաններ՝ իրարմե մեկերկու հարյուր քայլ հեռավորության վրա։ Նույնիսկ այստեղ կարելի է զանազանել առանձին անհատական սեփականություններ՝ իրենց բնակարաններով, պարտեզներով, եկեղեցիներով և գերեզմանոցներով»[24]։

Ամենայն հավանականությամբ Շիրակի ծառազուրկ դաշտի բաղկացուցիչ մասը կազմող այդ սարահարթում, ինչպես նկատել ենք մի ուրիշ առիթով, այգիներ չեն եղել, այլ ցանքադաշտեր ու փոքրիկ պարտեզներ։ Սակայն այդ էապես չէր ազդում արվարձանի հատակագծի բնույթի վրա և ամբողջությամբ վերցրած, ականատես Թորամանյանի վկայությամբ, Անիի արվարձանները «ունեին նույն տիպը, ինչ որ Անին»[25]։

[23] Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմ., աշխ. ժողովածու, էջ 327—328 և աշխ. երկրորդ ժող., էջ 179։

[24] Նույն տեղը, աշխ. ժողովածու, էջ 328։

Արվարձանի բնակչության հիմնական զանգվածները կազմում էր աշխատավոր հասարակ ժողովուրդը՝ արհեստավորներ, մանր առևտրականներ, գյուղատնտեսությամբ զբաղվողներ, օրավարձով աշխատող բազմաթիվ ընչազուրկներ[25]։ Սակայն Հյուսիսի արվարձաններում ապրում էին նաև ոչ փոքր թվով հասարակության բարձրը խավի ներկայացուցիչներ։ Թ. Թորամանյանը քաղաքի այս արվարձանային մասում նշմարել է երկու հասարակական գերեզմանոց՝ մեկը Ծաղկոցաձորում, իսկ մյուսը՝ Հոռոմոսի ճանապարհի վրա, մինչև տասը տարբեր մեծության շքեղ դամբարաններ, որոնցից մի քանիսը ոչնչով չէին զիջում Հոռոմոսի վանքի դամբարաններին, և Հովվի հոյակերտ եկեղեցին։ Դրանից էլ նա հանգում է այն եզրակացության, որ «պարիսպի հյուսիսային կողմի դաշտավայրն ալ միայն անեցի հասարակ ժողովրդի բնակության հատկացված չէր, համեմատաբար մեծ թիվ կկազմեր այնտեղ ալ ազնվական դասակարգը»[26]։

Պատմագրական հիշատակություններից և անուղղակի փաստերից երևում է, որ Հյուսիսի արվարձանների բնակիչներն արտաքին հարձակումների ժամանակ ապաստանում էին քաղաքի ամրացված մասում՝ բուն քաղաքում[27]։

Հյուսիսի արվարձանների ուշադրության արժանի հուշարձանների մասին նույնպես խոսք կլինի քաղաքի ճարտարապետական կարևոր կոթողները ներկայացնելիս։

Հարավի արվարձանը, որ գտնվում էր Միջնաբերդի ու Աղջկաբերդի դիմաց և ձգվում էր Ախուրյան գետի ձախ ափի երկայնքով 1—2 կմ երկարությամբ, գրեթե ամենևին չի ուսումնասիրված։ Դրա մասին մեր ձեռքի տակ եղած ամբողջ նյութը սահմանափակվում է Թ. Թորամանյանի մի դիտողությամբ, ըստ որի Անիի հարավային վերջավորության դիմաց, Ախուրյանի ձախ ափին երբեմնի եղած արվարձանի տեղում կան «եկեղեցիներու, բնակարաններու բազմաթիվ ավերակ մնացորդներ և հասարակաց գերեզմանատներ»[28]։ Արվարձանի բնակիչները քաղաքի և Միջնաբերդի հետ կապվում էին Ախուրյանի վրա կառուցված կամուրջներով։ Եթե Հյուսիսի արվարձանների առաջացման ժամանակն այդտեղ եղած

[25] Н. Я. Марр. Ани, էջ 54։

[26] Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմ., աշխ. ժող., էջ 328։

[27] Նույն տեղը։

[28] Նույն տեղը։

ճարտարապետական հուշարձանների (հատկապես Հովվի եկեղեցու) գոյությամբ և այլ փաստերով բավական որոշակի է (հիմնականում ձևավորվել է Բագրատունիների թագավորության շրջանում), ապա Հարավի արվարձանի ծագման ժամանակը հաստատող ուղղակի որևէ փաստ մեզ հայտնի չէ։ Ըստ երևույթին Հարավի արվարձանը նույնպես առաջացել է Բագրատունիների ժամանակներում։ Այլապես միայն քարավանային առևտրի համար քաղաքի տարածքի այդ հատվածի սահմաններում Ախուրյանի վրա մեկից ավելի կամուրջների կառուցումը (որ վերագրում են Բագրատունիների շրջանին)[29], անիմաստ կլիներ։ Իր հատակագծային ու կառուցապատման բնույթով, ըստ երևույթին, Հարավի արվարձանը Հյուսիսայինից էապես չէր տարբերվում։

Հայտնի է, որ նախնադարյան ժամանակներում մարդկանց առաջին կացարանները սովորաբար քարայրներն էին։ Հետագայում, հատկապես լեռնային երկրներում, արդեն քաղաքակրթված մարդը, այնուամենայնիվ, լիովին չի հրաժարվում քարանձավներից՝ անհրաժեշտության դեպքում դրանք հարմարեցնելով նոր պայմաններին, օգտագործում է գանազան նպատակներով՝ իբրև բնակարան, ապաստարան, թաքստոց և այլն։ Եվ միանգամայն տրամաբանական է, որ ժամանակի ընթացքում, լեռնային երկրներում, բնականից գոյություն ունեցող քարայրներն իրենց կարիքներին հարմարեցնելուց բացի, սկսում են կերտել նաև տարբեր նշանակության ժայռափոր տներ ու ամբողջական բնակավայրեր։ Հայաստանում այդ կարգի բնակավայրերից էին Հին Գորիսը, Խնձորեսկը, Վրաստանում՝ Ուպլիս-ցիխեն (Գորի քաղաքի մոտ) և այլն[30]։

Հարյուրավոր այդպիսի քարանձավ-տներ կային Անի մայրաքաղաքի տարածքը երեք կողմերից շրջափակող գառիվեր ձորերի կողերին, որոնք չնայած ցրված էին տարբեր տեղերում, բայց իրենց բնույթով իրար նման էին և պայմանականորեն բոլորը կարելի է խմբավորել մի թաղամասի (ավելի ճիշտ՝ քաղաքամասի) տակ, այն կոչելով Քարանձավային կամ Այրային Անի, ինչպես գործածել են Անին ուսումնասիրողներից շատերը։ Դրանք բնակարաններից բացի, ունեին եկեղեցիներ, խանութներ, ձիթհանքեր ու ջրաղացներ, գերեզմանոցներ և այլն, կազմելով մի ամբողջ քաղաքաման[31], որ գոյություն ուներ տակավին Բագրատունիների թագավորության շրջանում[32]։

Չնայած նրան, որ Քարանձավային Անին բազմամարդ և բազմաֆունկցիոնալ քաղաքամաս էր, որի մի հատվածը, ինչպես տեսանք, նույնիսկ մտնում էր Նոր քաղաքի մեջ, այնուամենայնիվ, հայ մատենագիրները դրա մասին չեն թողել որևէ վկայություն կամ հիշատակություն։ Քարանձավային Անիի վերաբերյալ միակ հիշատակությունը կատարել է Թամար թագուհու ժամանակների Վրաց տակութքունը կատարել է Թամար թագուհու ժամանակների Վրաց մի անանուն ժամանակագիր, 1209 կամ 1211 թվականին Արդաբիլի էմիրի Անի կատարած արշավանքի առնչությամբ, երբ քաղաքի բնակիչների մի մասը թշնամուց պաշտպանվելու համար ապաստան է գտել քարանձավներում՝ «բարտոն»-ներում, ինչպես դրանք կոչված են պատմագրի մոտ[33]։

Սակայն հայ հեղինակները, եթե հատկապես չեն հիշատակել Անիի քարանձավների մասին, այդ ամենևին չի նշանակում, թե ընդհանրապես նրանք անտեղյակ էին երկրում այդպիսի ժայռափոր ու պաշտպանական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող քարայրների մասին։ Առանձնապես ուշադրության արժանի է XIII դարի մի հեղինակի՝ Հովհան քահանայի ժամանակագրության մեջ մոնղոլական 1236 թվականի արշավանքի առնչությամբ արված հետևյալ վկայությունը, որն այդ առիթով նախորդ հեղինակների կողմից ամենևին նկատի չի առնված. «ՈՁԵ (1236) թուին անտառիկ բերդն, որ կոչի Կայեան և Լաւոն քաղաք և Անի մայրաքաղաք Հայոց և այլ բնաւ աշխարքս Հայոց, գառաւք և անառ բերդորեայք և բարայրք և անմուտ մայրիք ի միում ամ առան. և կոտորեցան անհամար և անթիւ արք և կանայք և մանկունք. և ով կարէ պատմել զնեղութիւն ղատաստանս, զոր էհաս մեզ յանողորմ ազգէն նեռոդաց...»[34]։ Իսկ այդ վկայությունից պարզ երևում է, որ ժամանակագիրը բերդերի հետ համագոր է համարել և «քարայրք», որոնք, անշուշտ, ոչ թե սոսկ բնական քարայրներ են, այլև պաշտպանական նպատակներին արհեստականորեն հարմարեցված յուրատեսակ ժայռափոր ամրոցներ, ամենայն հավանականությամբ Քա-

[29] Նույն տեղը։

[30] **Д. А. Кипшидзе,** Пещеры Ани (материалы XIV Анийской археологической кампании 1915 года), Ереван. 1972, էջ 24։

[31] Գ. Ալիշան, *Շիրակ*, էջ 87, **Н. Я. Марр,** Ани, столица древней Армении, էջ 221, **Д. А. Кипшидзе,** Пещеры Ани, էջ 22։


[32] **Д. А. Кипшидзе,** Пещеры Ани, էջ 22։

[33] *Տե՛ս* Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Բ, Երևան, *1936*, էջ *22*։ *Համմ.* **Д. А. Кипшидзе,** Пещеры Ани, էջ *22—23*։ *Տե՛ս նաև* **Х. Ф. Б. Линч,** Армения, т. I, Тифлис, 1910, էջ *494* և այլուր։

[34] *Տե՛ս* Գ. Ա. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ*, հ. *I*, Երևան, *1951*, էջ *26*։

բանձավային Անիի կարգի «ամրոցներ»։ Հիշատակութ յունից դժվար չէ եզրակացնել նաև, որ երկրում այդ ժամանակներում «քարայրք» շատ կային, բայց դրանք նույնպես Քարանձավային Անիի նման չեն արժանացել մեր մատենագիրների ուշադրությանը։

Ինչպես ասվեց, Անիի քարայր-տները («քարտուններ») միատեսակ մի զանգված չէին կազմում, այլ ցրված էին քաղաքը երեք կողմից փակող ձորերի զառիվեր կողերին, որտեղ նույնպես կազմում էին առանձին-առանձին խմբեր։ Ամենից մեծ թվով քարայրները գտնվում էին Ծաղկոցաձորի աջ ու ձախ կողերին։ Սակայն դրանք փոքր թիվ չէին կազմում նաև հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից քաղաքին հարող Իգաձորում ու Գլիձորում (Գայլեձոր), ինչպես նաև Ախուրյանի աջակողմյան ժայռոտ կողերին[35]։



Քարանձավային տուն («Խաչատուն»)

Քարանձավային Անին հնագիտական տեսակետից ուսումնասիրվել է 1910, 1911 և 1915 թվականների ընթացքում։ Ուժեղ հողմնահարության և ուժգին երկրաշարժերի հետևանքով քարայր-տների մեծ մասը ավերվել է և թաղվել փուխր լեռնատեսակների թափվածքների տակ։ Եվ հնագետները հնարավորություն են ունեցել դիտել ու ուսումնասիրել քարանձավային քաղաքի միայն մի մասը, «մարդկանց կողմից վաղուց լքված մինչև 500 կիսաավերված համայիրներ», բայց հաստատապես պնդելով, որ դրանց թիվը ժայռափոր քաղաքամասի կանգուն ժամանակներում 1000-ից պակաս չի եղել, ինչպես եզրակացնում է Քարանձավային Անիի հիմնական ուսումնասիրողը՝ Դ. Ա. Կիպշիձեն[36]։ «Քարտունները» փորված էին փափուկ ու փուխր լեռնատեսակների մեջ և զարմանալի չէ, որ դրանք վատ են պահպանվել։ Առանձնապես մեծ ավերման են ենթարկվել Ախուրյանի ձորի այրային տները[37]։

Քարանձավային Անին բաղկացած էր մշտական բնակչություն ունեցող թաղամասերից. «Այն իսկական քարանձավային քաղաք էր, նման Վրաստանում, Գորի քաղաքի մոտ գտնվող Ուպլիս-ցիխային»[38] և Վարձիային։ Անիի ժայռափոր այդ թաղամասերը ստեղծվել են բավական երկար ժամանակամիջոցում։ Սակայն դրանք իրենց վերջնական ձևավորումը ստացել են Բագրատունիների ժամանակաշրջանում՝ IX—XI դարերում, իսկ հետագայում՝ XIII դարի սկզբներին, ճոխացել եկեղեցական, դամբարանային, բնակարանային, առևտրական և այլ համալիրներով։ Այդ պարզ երևում է քարայր-տների ճարտարապետական ոճավորումից, քանդակներից և այլ առանձնահատկություններից։

Սկզբնական շրջանում, երբ այրային այդ տները շատ բիչ էին ուսումնասիրված՝ գտնում էին, որ դրանք պատկանելիս են եղել քաղաքի աղքատ բնակչությանը՝ նշելով այն հանգամանքը, որ այդպիսի տներում կարելի է յոլա գնալ առանց վառելիքի և, իրր, դրանք շատ էժանագին էին։ Սակայն հետագայում, Թ. Թորամանյանի, Ն. Մառի, Դ. Կիպշիձեի և ուրիշների կողմից հիմնովին ժխտվեց այդ տեսակետը։ Քարանձավային Անիի նույնիսկ «աղքատ խրճիթները» իրենց ընդհանուր արժեքով ոչնչով չէին զիջում վերգետնյա տներին, բայց այդտեղ կային նաև շքեղ տներ՝ մի քանի սենյակից բաղկացած ամբողջական բնակարաններ իրենց հարմարություններով[39], որոնց «կառուցումը» կապված էր անհամեմատ ավելի մեծ ծախսերի հետ։

Քարանձավային Անիի քարայր-համալիրների մեծագույն մասը կազմում էին բնակարանները։ Տարբեր վիճակում մեզ հասած այդպիսի քարայր-բնակարանների թիվը հասնում էր մոտ 400-ի։ Առանձին հետաքրքրություն էին ներկայացնում հատկապես բնակելի խոշոր համալիրները, որոնք սովորաբար բաղկացած էին 3—5 սենյակից[40]։ Սակայն դրանց թիվն անհամեմատ փոքր էր։ Բնակելի

---

[35] **Н. Я. Марр**, Ани, էջ 93, Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. երկրորդ ժողովածու, էջ 183, **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани. էջ 36, **Д. А. Кипшидзе**, Пещеры Ани, էջ 13, 17 և 25—167, **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 256 և այլն։

[36] **Д. А. Кипшидзе**, Пещеры Ани, էջ 22։

[37] Նույն տեղը։

[38] Նույն տեղը, էջ 24։ Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 87։

[39] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմ., աշխատությունների ժող., էջ 325—326, **Н. Я. Марр**, Ани, էջ 170, **Д. А. Кипшидзе**, Пещеры Ани, էջ 17—18։

[40] **Д. А. Кипшидзе**, Пещеры Ани, էջ 17—18։ Թ. Թորամանյանը տեղեկացնում է, որ Ծաղկոցաձորի կողմում կային այնպիսի այրեր, որ կարող էին տեղավորել 5000-ից ավելի ոչխար (տե՛ս «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», աշխատությունների երկրորդ ժողովածու, էջ 183)։

քարայրների մեծագույն մասը մեկ խոշոր սենյակից բաղկացած բնակարաններ էին, որոնք սովորաբար իրենց պատերին ունեին որմնախորշեր՝ տնտեսական նպատակների համար, լույսի համար տանիքում ունեին երդիկներ կամ նույն նպատակով անցք էր փորված դեպի ձորը նայող պատի վրա՝ մուտքի վերևի մասում, յուրաքանչյուրն ունեցել է իր օջախը։ Մասնագետները պնդում են, որ եթե անձավային քաղամասերի աղքատ բնակիչները մշտական էին բնակվում այդտեղ, ապա ունևորները, որոնք իրենց շքեղ բնակարանները (իսկ հասարակության բարձրագույն խավին պատկանողները՝ դղյակներ ու պալատներ) ունեին վերգետնյա Անիում, քարանձավային բնակարաններ իշնում էին միայն քաղաքն արտաքին թշնամու կողմից վտանգի ենթարկվելու, հատկապես պաշարման ժամանակ։

Ժայռափոր կառուցվածքների մյուս խումբը կազմում էին եկեղեցիները, որոնցից նշմարվողների թիվը ըստ Դ. Ա. Կիպշիձեի հասնում էր մոտ 30-ի[41]։ Քարանձավային եկեղեցիները շատ փոքր էին՝ բառիս իսկական իմաստով «եկեղեցիկներ», ինչպես դրանք կոչված են Անիի քարայրները հետազոտողների մոտ։ Դրանք միանավ աղոթարաններ էին, կիսակլոր (ճանք՝ քառանկյունի), մեկ մետր բարձրությամբ բեմով, դարձյալ ժայռափոր, հասարակ սյուներով։ Հազվադեպ պահպանվել են դրանց ներսի ծեփի հետքերը։ Ամենուրեք նկատվում են Անիի վերգետնյա եկեղեցիների ճարտարապետական ազդեցությունը[42]։ Ըստ նշանակության, Քարանձավային Անիում գոյություն ունեին երկու կարգի եկեղեցիներ՝ ծխական կամ հասարակական, որոնք ավելի մեծաթիվ էին (յուրաքանչյուր թաղամաս ուներ այդպիսի մեկ և ավելի եկեղեցիներ) և տոհմական կամ ընտանեկան[43]։ Վերջին կարգի եկեղեցիներից մեզ հետաքրքրող ժամանակաշրջանից չեն պահպանվել, կամ գուցե X—XI դարերում այդպիսիք չեն եղել։

Ժայռափոր կառուցվածքների հաջորդ խումբը գերեզմանատներն են (հանգստարաններ), դրանց մի մասը, ըստ երևույթին, գոյություն ունեն հնագույն ժամանակներից և ստեղծվել էին ուրարտական ժամանակների ավանդույթների, քարայրներում թաղելու հնագույն սովորությունների հիման վրա։ Դ. Ա. Կիպշիձեն ենթադրում է, որ պահպանված ժայռափոր գերեզմանոցները, որոնք սովորաբար «ուղղանկյուն և կիսաշրջանաձև որմնախորշեր էին»

[41] Д. А. Кипшидзе, Пещеры Ани, էջ 17։
[42] Նույն տեղը, էջ 18—19։
[43] Նույն տեղը։

բաց սրահում, հավանաբար ստեղծվել էին X դարից ոչ վաղ[44], այսինքն՝ Անիի զարգացմանը զուգընթաց։ Եկեղեցիներից բացի, հնագետներն ու ճարտարապետները նկարագրում են նաև եկեղեցական մի բարդ համալիր «վանք»՝ բաղկացած բազմաթիվ սենյակներից ու մի քանի եկեղեցիներից, իր բնույթով նման Գեղարդա վանքին։ Այդ «վանքը» բավական մանրամասնությամբ նկարագրել է Ն. Տոկարսկին Դ. Ա. Կիպշիձեի գրքում կատարած իր ընդարձակ ծանոթագրության մեջ[45]։ Այդ համալիրը համարվում է Քարանձավային Անիի ամենահայտնի կառուցվածքներից մեկը, չափագրված են նրա բոլոր սենյակները և նկարագրված բավական մանրամասնությամբ։ Այն գտնվում է Ծաղկոցաձորում, և ճակատային պատում առաջացած թափվածքի պատճառով սրահը (գավիթը) լավ լուսավորված է եղել։ Ենթադրվում է, որ դա կարող էր լինել ոչ թե վանք, այլ XII—XIII դարերի՝ Տիգրան Հոնենցի նման որևէ մեծատունի ամառային աթոռանիստ։ «Վանքի» եկեղեցու և գավթի հատակագիծը, որ կազմվել է ըստ 1916 թ. չափագրման, հրատարակված է «Անի» աշխատության մեջ, բայց սխալմամբ այն համարելով ոչ թե քարանձավային համալիր, այլ վերգետնյա։

Քարանձավային Անիի յուրատեսակ «կառուցվածք»-ներից են, այսպես կոչված, աղավնատները, որոնցից դիտվել ու նկարագրվել է 15—16 հատ։ Աղավնատները ցրված են Անիի գրեթե բոլոր քարանձավային թաղամասերում և սովորաբար ուղղանկյուն փորվածքներ են։ Դրանք չափսերով փոքր են, բայց պատրաստելը կապված է եղել մեծ վարպետության հետ, մանավանդ նուրբ ու բարակ միջնորմները, որոնք իրարից անջատում էին ուղղանկյուն բույնխորշերը։ Նույնիսկ ենթադրում են, որ դրանք փորելու համար գործածում էին մեզ համար անծանոթ հատուկ գործիքներ[46]։

Մինչև մեր ժամանակներն այդ բներում ապրում էին աղավնիներ։ Իսկ հնում դրանց համար հատուկ բների կառուցումը բացատրվում է գյուղատնտեսական կարիքներով։ Հին Հունաստանում, Եգիպտոսում և այլ երկրներում, ինչպես ասվել է, հատուկ տներ էին կառուցում աղավնիների համար՝ կուտակվող ծերտը (թռչնաղբը) իբրև պարարտանյութ օգտագործելու նպատակով[47]։

Դ. Ա. Կիպշիձեն կասկածում է այդ փոքրիկ կերամածքների նշանակության և անեցիների կողմից կուտակված թռչնաղբը պարարտացման նպատակով օգտագործելու սովորության գոյության

[44] Նույն տեղը, էջ 20։
[45] Տե՛ս նույն տեղը, էջ 176—177, Ն. Տոկարսկու ծանոթագրությունը։
[46] Նույն տեղը, էջ 20։
[47] Նույն տեղը, էջ 20—21։

հարցում, նկատի ունենալով, որ Հայաստանի այլ մասերում այդպիսի աղավնանոցներ չեն եղել և գրավոր որևէ հիշատակություն չկա Անիի աղավնանոցների մասին[48], քնպետև հենց ինքն ականատես է եղել, թե ինչպես լուսանկարիչ Ա. Մ. Վրույրը գիտարշավների ընթացքում այդտեղ դարերով կուտակված թռչնաղբը օգտագործել է Ծաղկոցաձորի իր ամառային բանջարանոցը պարարտացնելու համար[49]։ Նա տեղյակ չէր, որ Ն. Տոկարսկին 1915 թ., երբ աշխատում էր Կարմիր խաչի առաջավոր ջոկատում, Օլթիի շրջանում, խուվախ գյուղի մոտ, մի հին բերդի փլատակներում տեսել է այդպիսի աղավնանոցի հատուկ կառուցվածք[50]։ Այսպիսով, պարզվում է, որ իրոք Անիի աղավնանոցները նույնպես պատրաստված էին թռչնաղբ հավաքելու և այն գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար։

Դ. Ա. Կիպշիձեն նշում է, որ աղավնանոցները ևս, քարանձավային մյուս կառուցվածքների նման, կրում էին վերգետնյա Անիի ճարտարապետական հուշարձանների ազդեցությունը, նմանություն տեսնելով կլոր աղավնանոցների և նույն ձևն ունեցող տաճարների միջև։

Քարանձավային Անիում կային զանազան աստիճաններ՝ յարուսների միջև, անցքեր, «փողոցներ»[51], համալիրների ներսում կամ առանձին համալիրների միջև, գաղտնի անցքեր՝ վտանգավոր պահերին թշնամու կողմից առանց նկատվելու վերգետնյա քաղաքից Քարանձավային Անի մտնելու համար[52]։ Դ. Ա. Կիպշիձեն այս խմբի մեջ է մտցնում նաև Ստորերկրյա Անին, որ անընդունելի է։ Վերջինս, որի մասին խոսք կլինի քիչ հետո, իր բնույթով ու նշանակությամբ Քարանձավային Անիից էապես տարբերվում էր և դրա հետ չպետք է շփոթել։

Քարանձավային Անիի կառուցվածքների վերջին խումբը, որը ևս ուշադրության արժանի է, կազմված էր վրպակներից (խանութներից)։ Միանգամայն տրամաբանական է, որ Քարանձավային

---

48 Նույն տեղը, էջ 20։

49 Նույն տեղը։

50 Տե՛ս նույն տեղը, էջ 172, Ն. Տոկարսկու ծանոթագրությունը։

51 Հնում երբեմն փողոց են կոչվել ապարանքների զանազան հարկաբաժինների միջև եղած անցքերը, որոնք երկու կողմերից փակվում էին հատուկ դռներով և ունեին սովորաբար կամարակապ ծածկ։ Հնում գործածված այդ «փողոց» հասկացության համապատասխանող այժմ գործածական բառ չկա (Ֆ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 356—357) և չպետք է շփոթել այժմյան «փողոց»-ի հետ։

52 Д. А. Кипшидзе, Пещеры Ани, էջ 21։

Անին, իբրև բավական մեծ քաղաքամաս, պետք է ունենար իր առևտրի հետերը՝ խանութները։ Դրանք բնակելի տներից էապես չէին տարբերվում, միևնույն սենյակը կարող էր ծառայել և՛ բնակության համար, և՛ իբրև կրպակ-խանութ[53]։ Գոյություն ունեին նաև երկհարկանի խանութներ։ Ըստ երևույթին դրանց առաջին հարկը ծառայել է իբրև պահեստ, իսկ երկրորդը՝ խանութ։ Սակայն միանգամայն ընդունելի է այդ առիթով Դ. Ա. Կիպշիձեի՝ Ներսես Սարգսյանի և Ղ. Ալիշանի հասցեին արած այն դիտողությունը, թե «բոլոր քարանձավները» չի կարելի «համարել երկհարկանի կըրպակներ» («կրպակք երկհարկեան»), ինչպես թվացել է նրանց[54]։

Ստորերկրյա (կամ Ստորգետնյա) Անին, ըստ էության առանձին թաղամաս չի կարելի համարել հենց այն պարզ պատճառով, որ այն իրենից ներկայացնում էր սոսկ մի անցք, որը ձգվում էր հին քաղաքի տակ։ Այն մշտական բնակիչներ երբեք չի ունեցել՝ խոնավության, ցրտի, օդի սակավության, լույսի բացակայության պատճառով, և չի կարող թաղամաս կոչվել։

Ընդհանուր առմամբ Ստորերկրյա Անին մայրաքաղաքի ամենավատ ուսումնասիրված տեղամասն է, եթե չասենք, որ ուղեգրական նյութերից, կիսաավանդական զրույցներից և առանձին անհատների ընդգծված չափազանցություններով պատմածներից բացի, դրա վերաբերյալ այլ կարգի, գիտության համար ավելի հուսալի նյութեր գրեթե չկան։ Պատմագիրների ու գրիչների կողմից ոչ մի վկայության կամ հիշատակության, վիմագիր արձանագրություններում ոչ մի ակնարկ չկա Ստորերկրյա Անիի վերաբերյալ։ Թերևս այդ մասամբ բացատրվում է նրանով, որ ունենալով գերազանցապես ռազմական-պաշտպանական նշանակություն, հավանաբար այն ինչ-որ չափով «գաղտնագրված» էր և գտնվում էր քաղաքի պետական-ռազմական մարմինների հսկողության ներքո։ Ներկայումս, որ այնքան կարևոր նշանակություն է տրվում քարայրների ուսումնասիրությանը և դրա հիման վրա ձևավորվել է գիտության հատուկ ճյուղ, Անիի ստորերկրյա կառույցներն ու անցքերը, հայտնի պատճառով, գիտության տեսադաշտից դուրս են մնացել։

Այնուամենայնիվ, Ստորերկրյա Անին իսպառ անհայտ չէ գիտության համար։ Նոր ժամանակների հեղինակների, ճանապարհորդների և Անիի պեղումներին մասնակցած հնագետների ու ճարտարապետների շնորհիվ ընդհանուր գծերով պարզաբանված է դրա բնույթն ու նշանակությունը։

---

53 Նույն տեղը, էջ 21—22։

54 Նույն տեղը, էջ 22, ինչպես նաև՝ Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 144, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 87։

Ստորերկրյա Անիի մասին պահպանված ավանդություններից ուշադրության արժանի են հատկապես երկուսը։ Դրանցից մեկի համաձայն Ստորերկրյա Անիի միջոցով, որ բաղկացած էր ստորգետնյա երկար անցքից և դրա վրա փորված երկու ընդարձակ սրահներից (ինչքանով մեզ հայտնի է) Բագրատունիների մայրաքաղաքը կապված էր Կարսի և միջնադարյան Հայաստանի ուրիշ նշանավոր քաղաքների հետ[55]։ Ավանդության պատմական հիմքն այն է, որ Անին հավանաբար այդ զաղտնի անցքով կապված էր Ախուրյանի ձախափնյա մասի հետ, ինչպես ենթադրում է Հ. Օրբելին[56]։ Մեծ մայրաքաղաքի համար այդպիսի զաղտնուղիները միանգամայն հասկանալի է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Հայաստանի միջնադարյան բերդերի մեծ մասը (Բաղաբերդ, Պռոշաբերդ, Տավուշ և այլն) ուներ այդպիսի ստորգետնյա ճանապարհներ՝ թշնամու կողմից պաշարման ժամանակ ջուր վերցնելու և այլ նպատակների համար։ Մի այլ ավանդության ասելով, Ստորգետնյա Անիում «բնակվում էին» քաղաքի հայրենասերների ոգիները, հայրենասերներ, որոնք մինչև վերջ հավատարիմ պաշտպան մնացին և չլքեցին իրենց մայրաքաղաքը։

Ստորգետնյա Անիի մասին բավական տեղեկություններ են հաղորդում, բայց ընդգծված չափազանցությամբ, Գեղամյանցը և ռուսական սպա Ռժևսկին, չնայած նրանք երկուսն էլ իրենց նկարագրություններում հաճախ Քարանձավային և Ստորերկրյա Անիները շփոթել են իրար հետ։ Գեղամյանցի ասելով, Քյուրքչյանի վանեցի ծառաների հետ ավելի քան կես ժամ եղել է Ստորերկրյա Անիում և որոշ տեղեկություններ էլ իմացել է իրեն ուղեկցող թուրքից։ Նա գրում է, որ Ստորերկրյա Անիի գլխավոր մուտքը գտնվում է Ծաղկոցաձորում, քաղաքի Արտաքին պարսպի մոտ և թափված քարակոշտերը ծածկել են դրա մեծ մասը։ Իր ուղեկիցների հետ նրան, այնուամենայնիվ, հաջողվել է մտնել այդ մուտքով և կատարել որոշ դիտումներ։ Այնուհետև նա գրում է, որ ներսում զգացվում է սաոր քամի, խոնավ է, անտանելի մութ, օդը սակավ է ու հեղձուցիչ, ճանապարհը ոլորապտույտ է, որոշ տեղերում այնքան նեղ ու ցածր (թափվածքների պատճառով), որ առաջ կարելի է գնալ միայն կռացած կամ, նույնիսկ, սողալով։ Վերջապես հասնում ես Ստորերկրյա Անիին, որն ընդարձակ սրահ է և կարող է ազատ տեղավորել հարյուրավոր մարդիկ[57]։

[55] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 9։

[56] Նույն տեղը։

[57] Հ. Գեղամյան, *Ախալցխայից մինչև Անի, «Փորձ», ամսագիր, Տիֆխիս, 1880, № 8—9, էջ 96—97։ Համմս.* Լեո, *Անի, էջ 212—215։*

Ռուս հարյուրապետ Ռժևսկին բավական երկար հուշեր է պատմում 1877—1878 թթ. ռուս-պարսկական պատերազմին իր մասնակցության մասին։ Նա էջեր է նվիրում Անիի ավերակների նկարագրությանը[58], որտեղ 1877 թ. գարնան վերջերին և ամռանը երկար ժամանակով դիրքավորվել էր իրենց կազակական ջոկատը։ Նա նշում է Անիի քաղաքական պատմության բոլոր արժանահիշատակ դեպքերը և ճարտարապետական կոթողները։ Սակայն ռուս սպայի հուշերի մեջ մեզ համար կարևորը նրա հաղորդումներն են Ստորերկրյա Անիի մասին, որովհետև դրանք ինչ-որ չափով լրացնում են մեր գիտելիքները դրա ժայռափոր զաղտնուղու և ընդարձակ սրահի վերաբերյալ։ Նա գրում է, որ ամառվա շոգից ռուսական զորքը պատսպարվում էր այդ ստորգետնյա անցքում և որ այնտեղ փորված կանոնավոր քառանկյունի, ընդարձակ ու հով սրահում ջոկատի հրամանատարը տվել է իր համար անմոռանալի մեծ բանկետ, որ Ախուրյանի ափից Բորիսովի ղեկավարությամբ Անի ուղարկված հեծյալ հետախուզական փոքրիկ խումբը մի չերքեզ հեծյալի հետապնդելու ժամանակ մտել է ստորերկրյա մեծ անցքը և դժվարությամբ ու մի քանի անգամ շփոթվելուց հետո դուրս եկել իրենց մտած մուտքի հակառակ կողմից։ Նա նշում է նաև այդ ստորերկրյա անցքի և նրա ուղղությամբ փորված մեծ ու փոքր սենյակների հնագիտական հետախուզության կարևորությունը քաղաքի պատմության համար[59]։

Ցավով պետք է նշել, որ Ստորերկրյա Անին հնագիտական երկարատև գիտարշավների ընթացքում չի արժանացել հատուկ ուշադրության։ Դրա ուսումնասիրության բնագավառում, Հ. Գեղամյանցի ու Ռժևսկու ժամանակակիցների համեմատությամբ, զգալի առաջադիմություն չի կատարվել։ Այնուամենայնիվ, եղած նյութերի և մասնակի դիտողությունների հիման վրա հնագետներն արել են մի շարք ենթադրություններ ու կռահումներ։

Ստորերկրյա Անին ամենայն հավանականությամբ ստեղծվել է Անի մայրաքաղաքի ձևավորման հետ, X—XI դարերում։ Ոմանք ենթադրում են, որ Ստորերկրյա Անին (հատկապես դրա գետնուղին) պետք է կառուցված լինի Գագիկ II-ի օրոք[60]։ Այդ, անշուշտ,

[58] «Из воспоминаний сотенного командира Ржевского. «Сборник военных рассказов, составленных офицерами — участниками войны 1877—1878 гг.», СПб, 1879, էջ 136—148։

[59] Նույն տեղը, *էջ 146—147։ Համմս.* Լեո, *Անի, էջ 215—217։*

[60] *«Տեղագրութիւն Անի քաղաքին հանդերձ տեսարանացոյց պատկերօք», խմբ. Հովհաննէս Տէր-Աբրահամեան, Թեոդոսիա, 1867, էջ 45։ Ստորերկրյա Անիի մուտքերից մեկը գտնվում էր Գլիձորում, քաղաքի Արտաքին պարսպի մոտ և պաշտ-*

անընդունելի է, որովհետև հազիվ թե հնարավոր լիներ Գագիկ II-ի թագավորության 2—3 տարվա ընթացքում (այն էլ այնքան խառը ժամանակներում) այդպիսի գետնափոր հսկա կառուցում կատարել։ Ըստ երևույթին Ստորերկրյա Անիի կառուցումը հիմնականում կատարվել է Բագրատունի առաջին թագավորների օրոք և բացառված չէ, ինչպես ենթադրում են ոմանք, որ դրա մի մասն իբրև քարայր գոյություն է ունեցել բնականից[61]։

Ջարմանալի է, որ «Ստորերկրյա Անի» հասկացությունը ոչ միայն հաճախ շփոթել են Քարանձավային Անիի հետ, այլև տարբեր հեղինակներ այն տարբեր կերպ են հասկացել։ Ն. Մառը գտնում է, որ «երբ խոսում են Ստորգետնյա Անիի մասին, ապա նկատի ունեն կամ սբ. Գրիգոր Լկեղեցուց ներքև, Ախուրյան գետի կողմից նեղ ստորգետնյա անցքը, կամ միջնաբերդի տակի ազատ տարածությունը, ուր կարելի է ներս սողալ Մաղկոցաձորի կողմից, մոտիկ այն տեղին, որտեղ բացվել է Աբուղամրենց եկեղեցու կառուցման մասին արձանագրությունը։ Սակայն նոր քաղաքում, հայտնագործված Աշոտյան պարիսպներից դուրս, տաճարից դեպի հյուսիս-արևելք կա ավելի հետաքրքիր ստորերկրյա Անի»[62]։ Եվ այդ «ավելի հետաքրքիր ստորերկրյա Անին» Մառի նկարագրությամբ իրենից ներկայացնում է կամարակապ պատերով սրահ (անցք— Թ. Հ.), յուրաքանչյուր 14—15 քայլի վրա ունենալով դուռ ունեցող միջնորմներ, բարձրությունը պահպանված վիճակում (այսինքն՝ թափվածքների մակերևույթից հաշված) կամարակապ բաժինը 1,975 մ է, իսկ ուղիղ պատեր ունեցող բաժինինը՝ 2 մ, պատերի որոշ հատվածներում հանդիպում են քանդակազարդ շրջանակներ։ Այդ սրահը (անցքը) տարածվում է Նոր քաղաքի տակ, որտեղ, Առաքելոց եկեղեցու և Մայր տաճարի միջև հայտնաբերվել է այլ ուղղությամբ ձգվող մի ուրիշ սրահ, որի բնույթն ու նշված սրահի հետ ունեցած առնչությունը մնացել է առանց լուսաբանելու[63]։

Այնուհետև՝ Հին քաղաքի տակ գտնվող Ստորերկրյա Անի կարելի է մտնել Մաղկոցաձորի կողմից։ Սկզբում անցքը թափվածքների պատճառով շատ նեղ է և պետք է գնալ սողալով, իսկ հետո բավական ընդարձակ է և կարելի է գնալ կուզեկուզ։ Այդ նեղ անցքի վրա կան բավական ընդարձակ երկու դահլիճ, որոնց առաստաղները հանգում են ժայռակերտ սյուների վրա։ Դրանք ոչ բարձր

պանվում էր վերջինիս այդ մասում գտնվող աշտարակի միջոցով։ Թուրքերն այդ անցքը կոչել են «Գեղան գյալմազ» (=գնացողը չի վերադառնա)։

[61] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 10։

[62] **Н. Марр**, Раскопки в Ани в 1904 году, СПб, 1906, էջ 15։

[63] Նույն տեղը, էջ 15—16։

միջնորմներով բաժանված են բազմաթիվ մանր սենյակների։ Փլվածքների պատճառով երկրորդ դահլիճի առաստաղը շատ ցածր է։ Միջանցքը (անցքը) շարունակվում է երկու դահլիճներից ավելի հետո, բայց շատ չանցած դրա դեմը փակում է կավե հզոր թափվածքը։ Այդ անցքի երկարությունը մոտ քից մինչև կավե թափվածքը մոտավորապես 55—60 սաժեն է (մոտ 111—121 մ)[64]։

Հնում այդ անցքը ծայրեծայր բաց է եղել և գգալի լայն։ Առաջին դահլիճում հայտնաբերվել է ձիու աղբ։ Հ. Օրբելին ենթադրում է, որ այդ ստորերկրյա անցքը կապ ուներ քաղաքի Միջնաբերդի հետ, այսինքն՝ հիմնականում ուներ պաշտպանական նշանակություն։ Նա դրա հետ միասին գրում է, որ Ստորերկրյա Անիի մի մասը անկասկած ստեղծվել է մարդու կողմից և մինչև օրս էլ նրա կատվում են փորող գործիքների հետքեր[65]։

Անիի շրջակայքում կային մի շարք բնակավայրեր, որոնք բոլոր առումներով կապված էին նրա հետ։ Դրանք Անիից գտնվում էին 4—10 կմ հեռավորության վրա և վարչականորեն, տնտեսական առումով փաստորեն ոչնչով չէին տարբերվում քաղաքի մյուս արվարձաններից։ Թ. Թորամանյանը քաղաքի այդ կարգի արվարձանների շարքն է դասում Հոռոմոսի վանքը և Բագնայր (Ղոզլիջա), Առճո-Ախիճ (Ալաջա), և ավերակ այլ գյուղերի տեղում եղած բնակավայրերը[66]։

Անիի, Հոռոմոսի և դրանց մոտակայքի վայրերի վիմագիր արձանագրություններում հիշատակված են այլ տեղանուններ (հիմնականում բարդված «ձոր» մասնիկով), որոնց մի մասը հավանաբար Անի քաղաքի փոքր թաղերից էր։ Այդ տեղանուններից են՝ **Ջորբ, Իգաձոր, Բովաձոր, Կարմնջի ձոր (Աբելաց ձոր), Աբելի ակն, Ապուսց ձոր** և այլն[67]։ Իսկ Մաղկոցաձորն ու Գայլաձորը (Գլիձոր) մտնում էին բուն քաղաքի մեջ։

Բ. Քաղաքաշինություն

Անին միջնադարի պայմաններում ամենաարագ ծավալված ու խոշորացած քաղաքներից է։ «Քաղաքը [Բագրատունի] թագավորների օրոք աճել է անսովոր արագությամբ»,— գրում է Ն. Մառը[68]։

[64] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 9—10։

[65] Նույն տեղը, էջ 10։

[66] **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 328։

[67] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 87։

[68] **Н. Я. Марр**, Ани, столица древней Армении, էջ 204։

Մայրաքաղաք հռչակվելուց 2—3 տարի անց՝ 964 թ. հարկ է լինում քաղաքի համար կառուցել պաշտպանական պարիսպ։ Սակայն արագ աճող քաղաքի համար Աշոտ III-ի կառուցած այդ պարիսպը շատ «նեղ» էր։ Նրա թագավորության վերջին տարիներին բուն քաղաքի մեծագույն մասն արդեն ներքին պարսպից դուրս էր, հյուսիսում գտնվող սարահարթի կողմից մշտապես վտանգի ենթակա։ Արդեն «հասակ առած» մայրաքաղաքը Սմբատ II-ի օրոք հյուսիսային կողմից պատվում է նոր, ավելի ընդարձակ պարսպով, որի ընդգրկած տարածքը (բուն քաղաքը) արդեն ամենահամեստ հաշիվներով հասնում էր 150—170 հեկտարի։ Անիի արագ աճը արձանագրված է ոչ միայն պատմագիրների ու գրիչների, այլև դրա պատմության հարցերով զբաղվող բոլոր մասնագետների կողմից[69]։

Անիի աճն ու զարգացումը նույն թափով շարունակվում է Կագիկ I-ի և մասամբ նրա հաջորդների օրոք։ Ընդհանուր առմամբ ճիշտ է Լեոյի բանաստեղծական շնչով գրածը, թե՝ «Սմբատից հետո էլ [Անիի] ծավալման մեծ թափը կանգ չառավ։ Նա գնաց դեպի հյուսիս, դուրս եկավ Սմբատյան կրկնակ պարիսպներից, տարածվեց դաշտի վրա, իջավ ձորերը և անթիվ քարայրներ փորեց իր համար։ Այսպես արագ ու միանգամայն արտակարգ էր զարմանալի մայրաքաղաքի հասակ բաշելը»[70]։ Այո՛, XI դարի սկզբներին Անին արդեն խոշոր քաղաք էր և ձևավորվել էին այդ ժամանակների Արևելքի քաղաքներին հատուկ նրա քաղաքամասերը՝ Միջնաբերդը, բուն քաղաքը («շահաստանը») և բազմաթիվ արվարձանները։ Այլ կերպ ասած, ընդամենը մի քանի տասնյակ տարվա ընթացքում կառուցվել էր մի մայրաքաղաք, որը խոշոր լինելուց բացի, այնքան մեծ համբավ էր ունեցել իր գեղեցկությամբ և ճարտարապետական հուշարձանների բազմազանությամբ ու բազմաքանակությամբ։

Անիի աճման ու ծավալման այդպիսի մեծ թափն ամենևին զարմանք չի պատճառում, երբ նկատի ենք ունենում այդ նույն ժամանակներում աճած ու «հասակ առած» Հայաստանի մյուս խոշոր ու բազմամարդ քաղաքները, հատկապես՝ Արծնը և Կարսը։ Կարսը մինչև X դարը սովորական բերդ էր, Արծնը՝ սովորական բնակավայր, իսկ այդ նույն դարի վերջերին և XI դ. սկզբներին արդեն վերածվել էին վաճառաշահ խոշոր քաղաքների, որոնց մա-

[69] Տե՛ս, օրինակ, **Н. М. Токарский**. Архитектура Армении IV—XIV вв., էջ 191, **А. Л. Якобсон**, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 58 և այլուր։

[70] Լեո, Անի, 1963, էջ 250—251։

սին նույնպես այնքան մեծ գովեստով է խոսում Արիստակես Լաստիվերտցին[71]։ Դա քաղաքային կյանքի բուռն զարգացման շրջան էր, երբ Հայաստանում մեծ վերելք էին ապրում տասնյակ քաղաքներ։

Միով բանիվ, Անիում X դարի երկրորդ կեսին և XI դ. սկզբներին ծավալվել էր միջնադարի համար անսովոր մասշտաբի քաղաքաշինություն, որի արդյունքը եղավ կարճ ժամանակամիջոցում մի խոշոր ու գեղեցիկ քաղաքի ստեղծումը։

Երեք խմբի կարելի է բաժանել այդ ժամանակների Անիում կատարված կառուցումները՝ պաշտպանական, եկեղեցական և քաղաքացիական, որոնցից յուրաքանչյուրը թե՛ ճարտարապետական և թե՛ նպատակադրության տեսակետից ուներ իր առանձնահատկությունները։ Դրանք իրարից տարբերվում էին նաև կառուցման կարգով։ Այսպես, Բագրատունիների թագավորության շրջանում պաշտպանական կառուցումները գրեթե բացառապես կատարվում էին պետության կողմից, պետական միջոցների հաշվին, թեպետ շինարարությանն իրենց աշխատանքով մասնակցում էին հարկատու քաղաքացիները։ Հետագա ժամանակներում քաղաքի պաշտպանական կառուցումները կատարվում էին ինչպես նրա տեր ֆեոդալի, այնպես էլ մյուս իշխանների ու մեծատունների կողմից։ Իսկ եկեղեցական ու քաղաքացիական կառուցումներն սկզբից ևեթ կատարվում էին և՛ պետության, և՛ անհատ մարդկանց կողմից։ Մենք այդ կտեսնենք քաղաքի կարևորագույն հուշարձանները նկարագրելիս։

Միջին դարերում սովորաբար ամրացված սահմանային գծեր չկային։ Ամբողջ երկրի պաշտպանությունը հարևան երկրից կամ դրա վրայով կատարվող հարձակումներից ապահովելու համար, սահմանի ուղղությամբ ստեղծվում էր բերդերի, ամրոցների ու ամրացված այլ կետերի շղթա, իսկ առանձին քաղաքների պաշտպանությունը սովորաբար ապահովում էին բնական պայմաններից ելնող պաշտպանական կառույցների՝ պարիսպների, աշտարակների, ստորերկրյա գաղտնաբանների ու ապաստարանների, խանդակների ստեղծմամբ։ Պաշտպանական նպատակների համար բնական պայմանների լավագույն ձևով օգտագործման, արհեստական կառույցների հետ քաղաքը թշնամու համար անմատչելի դարձնելու տիպիկ օրինակ կարող է ծառայել Անին։ Բագրատունիներն իրենց մայրաքաղաքը հռչակելով Անին, ստրատեգիական առումով լավագույն ձևով օգտագործեցին դրա բնական պայմանները՝ երեք

[71] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 78—79 և 91։

կողմից քաղաքն ակոսող զառիվեր կիրճերը, քաղաքի բուն տարածքում եղած բլուրները, ստորգետնյա պաշտպանական ժայռափոր զանազան կառույցներ կատարելու հարմար պայմանները և դրանց զուգորդելով իրենց ստեղծած բարձրաբերձ աշտարակներով հռչակավոր պարիսպները, պաշտպանական խանդակը, ստորգետնյա գաղտնուղիներն ու գաղտնարանները, Անին դարձրին ամրություններ հուսալի հանգույց, որը կարող էր դիմագրավել ցանկացած թշնամուն։ Վ. Հարությունյանն ի մի բերելով Անիի պաշտպանական համալիրի վերաբերյալ հնագիտական գրականության մեջ եղած բոլոր տվյալները՝ քաղաքի պաշտպանական միջոցները, հենվելով դրանցից յուրաքանչյուրի նշանակությունից (առանց Ախուրյանի վրայի կամուրջների, որոնք նույնպես ռազմական առումով ունեին առաջնակարգ նշանակություն), բաժանում է 8 խմբի՝ 1) Աղջկաբերդի ամրություններ, 2) Միջնաբերդի ամրություններ, 3) Աշոտյան պարիսպներ, 4) Սմբատյան պարիսպներ, 5) Պաշտպանական խանդակ, որը ձգվում է Սմբատյան պարսպին զուգահեռ, 6) Ծաղկոցաձոր, Գլիձորի և Ախուրյանի կիրճերի ուղղությամբ կառուցված լրացուցիչ պարիսպներ, 7) արվարձանների պարիսպներ և 8) մայրաքաղաքի մատույցների ամրացված կետեր[72]։


Մեզ թվում է, որ Անիի պաշտպանությունը, միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների համեմատությամբ, ավելի էր ուժեղանում նաև նրանով, որ այն ավելի խիտ էր բնակեցված, բնակչության թվի համեմատությամբ ավելի քիչ տարածք էր գրավում և այդ տարածքն անմատչելի դարձնելը համեմատաբար հեշտ էր։ Վերջապես, պետք է նաև նկատի ունենալ, որ գերազանցապես պաշտպանական նպատակներին էին ծառայում Ստորերկրյա Անին և Քարանձավային Անիի որոշ կերտվածքներ, որոնք վերը նշվածների հետ Բագրատունիների մայրաքաղաքը դարձնում էին անմատույց։ Եվ թվում է, որ մայրաքաղաքի պաշտպանունակությունն ավելի բարձրացնելու համար Անիի տերերը, այլ հանգամանքների հետ միասին, աշխատել են շատ չծավալել քաղաքի ամրացված մասի տարածքը, առանձնահատուկ ուշադրություն դարձրել պաշտպանական պարիսպների ամրակուռությանը և խելացիորեն են օգտագործել Ստորերկրյա Անին։

Շատ բնորոշ է, որ Յակուտն (1179—1229) իր աշխարհագրական բառարանում նշելով Անիի մասին, առաջին հերթին մատնացույց է անում նրա ոչ թե վաճառաշահ մեծ քաղաք լինելը, այլ իբրև ամուր բերդ. «Ամուր բերդ և քաղաք Հայաստանում»,— գրում է

[72] Վաղագրատ Հարությունյան, *Անի քաղաքը*, էջ 39։

նա[73]։ Անիի, առանձնապես նրա Միջնաբերդի անմատույց լինելու մասին բազմիցս նշել է նաև մեծ անիագետը՝ Ն. Յա. Մառը։ Նա Անիի Միջնաբերդն ուղղակի համարել է անառիկ ոչ միայն Բագրատունիների շրջանում, այլև հետագայում, երբ քաղաքը բազմիցս անցել է ձեռքից ձեռք[74]։ Իսկ այդ ամրությունն առաջին հերթին պայմանավորված էր պաշտպանական կառուցվածքներով, որ իրենց նախնական վիճակով գրեթե բոլորը գոյություն ունեին Բագրատունիների թագավորության շրջանից։ Այսպես, 964 թվականին կառուցվում է Աշոտյան պարիսպը, որը Հին քաղաքը բաժանում էր Նոր քաղաքից, 989 թ.՝ Սմբատյան երկշարք պարիսպը, ապա դրա առջևով, դրսի կողմից ձգվող խանդակը։ Նույն ժամանակներում են կառուցվել նաև Ծաղկոցաձորի, Գլիձորի և Ախուրյանի կիրճերի քաղաք թափանցելու համար համեմատաբար մատչելի՝ հատվածների պարիսպները։ Իսկ արքունական պալատի ու բուն Միջնաբերդի պարիսպներն իրենց նախնական վիճակով տակավին գոյություն ունեին Կամսարականների ժամանակներից։

Մի քանի խոսք պաշտպանական այն կառուցվածքների մասին, որոնց վերաբերյալ հատուկ խոսք չի եղել և հետագայում էլ առիթ չի լինելու դրանց հիմնովին անդրադառնալու։




Մի հատված Անիի պաշտպանական պարիսպներից

Անիի պաշտպանական կառուցվածքների համալիրում իր հատուկ տեղն ուներ Արտաքին կամ Սմբատյան պարսպի առջևով, դրսի կողմից դրան զուգահեռ փորված խանդակը՝ փոսը, որը լցր-

[73] Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 78։

[74] Н. Я. Марр. Ани, էջ 55։

ված լինելու ու շատ քիչ նշմարվելու պատճառով, հնագիտական առումով վատ է ուսումնասիրված։ Հետաքրքիր է, որ այդ խանդակի մասին առաջին անգամ հիշատակվում է ոչ թե հայկական, այլ մուսուլմանական աղբյուրում, 1064 թվականին Անին սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանի կողմից գրավելու առնչությամբ[75]։ Ենթադրվում է, որ այդ խանդակն էլ ստեղծվել է Սմբատյան պարսպի հետ՝ Սմբատ II-ի կողմից[76], X դարի 80-ական թվականների վերջին կամ 90-ականների սկզբին։ Թ. Թորամանյանի դիտումների համաձայն, խանդակն ուներ 500 մետր երկարություն և 10—12 մ լայնություն[77]։ Ջուրը փոսում, քաղաքը վտանգի ենթարկված պահերին, որոշակի մակարդակի վրա պահելու նպատակով, խանդակը ոչ միայն երկու կողմերից ուներ որձաքարե համատարած պատեր, այլև իրարից որոշակի հեռավորության վրա դրանք լայնական, դարձյալ ջրամերժ պատերով միացած էին իրար հետ՝ ամբողջ խանդակը վերածելով գրեթե հավասար մեծություն ունեցող քառանկյունի ջրավազանների շղթայի։ Քանի որ տեղանքն իր կենտրոնական մասում մի փոքր ավելի բարձր էր, քան ծայրերում, ուստի ջրաշինարարները միայն այդ եղանակով կարող էին խանդակի ամբողջ երկայնքով ապահովել ջրի միևնույն խորությունը. ջուրը խանդակ էր լցվում դրա կենտրոնի ամենաբարձր մասից և աստիճանաբար լցնում դեպի Գայլիձոր ու Իգաձոր իջնող բոլոր հատվածները։ Խաղաղ ժամանակ խանդակի ավելացած ջրերը օգտագործվում էին ոռոգման ու ջրաղացներ գործի դնելու նպատակներով։ Խանդակի ջրի խորությունը հավանաբար հասնում էր մի քանի մետրի, որովհետև դրա վրայով անցել են նավակներով։



Անիի պաշտպանական պարիսպների ընդհանուր համայնապատկերը

[75] Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 79։

[76] Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցյալն ու ներկան, Վենետիկ, 1923, էջ 8։

[77] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետութ. պատմ., աշխ. ժողովածու, էջ 334։

Անիին վերաբերող գիտահանրամատչելի գրականությունից ընթերցողը երբեմն առաջին հայացքից այն տպավորությունն է ստանում, որ քաղաքը պարսպապատ է եղել միայն մի կողմից՝ Ծաղկոցաձորի և Ախուրյանի կիրճերով կազմված «թերակղզու» հյուսիսային մասից։ Բայց դա այդպես չէ։ Բուն Անին պարսպապատ է եղել բոլոր կողմերից, միայն այն տարբերությամբ, որ նրա հյուսիսային կողմից, որտեղից սպասվում էր հարձակման հիմնական վտանգը (բացի Աշոտյան պարսպից, որն իր մեջ էր առնում քաղաքի միայն մի փոքր մասը), ձգվում էին Սմբատյան կրկնակի պարիսպները, իսկ մյուս կողմերից՝ Ծաղկոցաձորի, Գլիձորի և Ախուրյանի կիրճերի կողմից պարսպապատվել են միայն առանձին հատվածներ, որոնք նույնպես կարող էին դյուրին լինել թշնամու կողմից քաղաք ներթափանցելու համար, և վերջիններս Սմբատյան պարիսպների հետ քաղաքը բոլոր կողմերից փաստորեն վերցրնում էին իրենց մեջ։ Քաղաքի այդ մասերում, նույնիսկ որոշ տեղերում, գոյություն ուներ ոչ թե մեկ, այլ երկու և ավելի պարիսպ։ Այսպես, օրինակ՝ կրկնակի պարսպով էր պատած Լուսավորիչ եկեղեցու մոտից սբ. Փրկիչ եկեղեցու, Մայր տաճարի ու Մանուչեի մզկիթի մոտով դեպի Միջնարերդի հարավային կողմը ձգվող հատվածը[78]։ Թ. Թորամանյանը նշում է, որ Ախուրյանի ձորի արևմտյան կողմում որոշ «տեղերը ոչ թե երկու, այլ ըստ պահանջի մինչև 3—4 շարքեր եղեր են ամրություններու, միայն թե ի հարկե, ոչ միշտ շարունակված, այլ պետք չեղած տեղերը ընդհատված»[79]։

Նույն կարգի առանձին հատվածներից բաղկացած պարիսպներ կային նաև քաղաքի հարավային՝ Ախուրյանի ձորի հյուսիսային (աջ) կողմում, Աղջկաբերդի արևելյան փեշերից մինչև Ախուրյանի և Ծաղկոցաձորի գետախառնուրդը ձգվող գառիվեր ձորալանջի որոշ տեղերում, որոնք նույնպես համեմատաբար մատչելի էին կիրճից քաղաք բարձրանալու համար։ Քաղաքի այս կողմի պարիսպները կառուցվել էին ավելի վաղ ժամանակներում՝ հավանաբար Կամսարականների օրոք և ամրացված էին «քառակուսի բուրգերով»[80]։ Դրանց մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը։ Իսկ անմիջականորեն Աղջկաբերդի բարձունքում գտնվող պարիսպները կառուցվել էին համեմատաբար ավելի ուշ ժամանակներում, Աշոտյան և Սմբատյան պարիսպներից շատ ուշ՝ հավանաբար XIII

[78] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետ. պատմ., աշխատ. երկրորդ ժողովածու, էջ 186։

[79] Նույն տեղը։

[80] Նույն տեղը, էջ 183։

դարում, ինչպես ենթադրում է Թ. Թորամանյանը։ Առանձնապես հոգ են տարել Միջնաբերդին հարող մասերը ամրակուռ պարսպով ավելի ամրացնելու մասին՝ չբավականանալով նրա շրջապարսպով[81]։ Իրենց շարվածքով, հաստությամբ, բարձրությամբ ու ճարտարապետական մյուս հատկանիշներով դրանք նման էին քաղաքի գլխավոր պարիսպներին։ Առանձին հատվածներով պարսպապատումը, որ կատարվել է Անիում՝ Գլիձորի, Ծաղկոցաձորի և Ախուրյանի ուղղությամբ, միջնադարյան Հայաստանում եզակի երևույթ չէր։ Ավելորդ մեծ ծախսերից խուսափելու համար ընդհանրապես հարկ չեն համարել ձորերի խիտ զառիվեր կողերին համատարած պաշտպանական պարիսպներ կառուցել։ Արհեստական պաշտպանական միջոցներով ամրացրել են միայն այն տեղերը, որոնցով թշնամին կարող էր մտնել քաղաք կամ բերդ։ Այդ կարգի պարսպապատման բնորոշ օրինակ կարող են լինել նաև Լոռի քաղաքի ձորերով ակոսված կողմերի, Պռոշարերդի և այլ քաղաքների ու բերդերի ընդհատվող պարիսպները։

Մենք տեսանք, որ Սմբատյան պարիսպներից դուրս, քաղաքի հյուսիսային թաղամասերում Թ. Թորամանյանը դիտել ու նկարագրել է պարսպապատ առանձին տեղամասեր, որոնք նա համարել է երբեմնի բանջարանոցներ ու այգիներ։ Այդ «այգեպաշտպան» պարիսպների երկարությունը, ինչպես ենթադրել է Թ. Թորամանյանը, դրանց պահպանված մնացորդների հիման վրա, 50—60 քայլից (մոտ 25—30 մետր) հասնում էր մինչև 700—800 քայլի[82]։ Իսկ ոմանք ենթադրում են, որ դրանցից 1—1,5 մետր հաստություն և հարյուրավոր մետր երկարություն ունեցողները կարող էին հյուսիսային արվարձանների համար ունենալ «պաշտպանական պատերի նշանակություն»[83]։ Այդ ենթադրության օգտին է խոսում ոչ այնքան նշմարված պատերի երկարությունը (որը կարող էր իր մեջ պարփակել սովորական մեծությամբ այգին կամ բանջարանոցը), որքան հաստությունը. այգին կամ բանջարանոցը 1—1,5 մ հաստությամբ պատով շրջափակելն անիմաստ և անհավանական է։ Սակայն մի փոքր ավելի համարձակ խոսք կարելի է ասել միայն այն ժամանակ, երբ հայտնի լիներ նաև այդ «պաշտպանական» պատերի մոտավոր բարձրությունը։

Անիի մատույցները պաշտպանում էին Մաղասբերդ և Տիգնիս

[81] Լևո, Անի, էջ 265։

[82] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժող., էջ 178։

[83] Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, էջ 49։

ամուր բերդերը, որտեղ նույնպես ստեղծված էին պաշտպանական հուսալի միջոցներ, ամրակուռ պատեր՝ բարձրաբերձ աշտարակներով։ Բնականից Մաղասբերդն ավելի ամուր էր, իսկ արհեստական պաշտպանական կառույցներով ավելի հայտնին Տիգնիսն էր. այն պատած էր բոլոր կողմերից բերդն օղակող սրբատաշ քարերով շարված՝ կրկնակի պարիսպներով, որոնց անկյուններում բարձրանում էին ատամնավոր քիվերով ամրակուռ աշտարակները[84]։

Պակաս միջոցներ ու աշխատանք չէին գործադրվել նաև Ստորերկրյա Անին ստեղծելիս, որի գոյությունը, ինչպես ասվեց, հիմնականում կապված էր մայրաքաղաքի պաշտպանունակությունն ավելի հարթրացնելու հետ։ Դրա ստորերկրյա անցքերը, խոռոչները, խորշերը, սրահները, գաղտնարանները, որ հիմնականում ստեղծվել էին մարդկային աշխատանքով, նույնպես յուրակերպ պաշտպանական շինվածքներ էին, մի փոքր ավելի համարձակ արտահայտությամբ՝ «ստորերկրյա ռազմական ամբողջական համալիր», որը, սակայն, պատմական, ռազմական, ճարտարապետական և նույնիսկ հնագիտական առումներով հատուկ ուսումնասիրության չի ենթարկված և շատ քիչ է հայտնի։

Շարադրանքից դժվար չէ եզրակացնել, որ Անիում Բագրատունիների թագավորության ժամանակներում կատարված բուռն քաղաքաշինության մեջ ռազմական-պաշտպանականը մշտապես գտնվում էր պետության ուշադրության կենտրոնում և ուներ հսկայական մասշտաբներ։

Թվում է, թե պետական շինարարության մեջ քաղաքում իր մասշտաբներով երկրորդ տեղը գրավում էին պաշտամունքային կառուցումները՝ առաջին հերթին եկեղեցաշինությունը։ Մայրաքաղաքի ընդարձակմանն ու ձևավորմանը զուգընթաց կառուցվում էին նաև տասնյակ եկեղեցիներ։ Դրանք իբրև պաշտամունքային կառուցվածքներ, ունեին իրենց յուրահատկությունները և տարբերվում էին այդ նույն ժամանակներում կառուցված քաղաքացիական շենքերից և պաշտպանական շինվածքներից։ Մասնագետներն ընդգծում են, որ վերջին խմբերից եկեղեցական հուշարձանները տարբերվում էին նախ և առաջ նրանով, որ դրանք «տիպիկ» քաղաքային կառուցվածքներ էին[85]։ Սակայն դրա հետ միասին արձանագրվում է և Անիի բոլոր կարգի կառուցվածքների (եկեղեցական, ռազմական, քաղաքացիական) ընդհանրությունը՝ ճարտարապետական մի շարք հատկանիշների ներդաշնակությունը։ Առանձնապես

[84] Նույն տեղը, էջ 49—50։

[85] Տե՛ս նույն տեղը, էջ 68։

մատնացույց է տրվում կառուցման համար օգտագործված շինանյութը, դրա գույնը, ճարտարապետական-գեղարվեստական հնարանքների ընդհանրությունը, շարվածքը և այլն[86]։

Բագրատունիների թագավորության շրջանում ծավալված եկեղեցական բուռն շինարարությունը չէր կարող կատարվել պատմական ունեցվածքից դուրս, երկրում նախորդ ժամանակներում ձևավորված եկեղեցական ճարտարապետությունից անկախ։ Եվ իրոք X—XI դարերի եկեղեցական հուշարձաններն ընդհանուր առմամբ իրենց վրա կրում էին նախաարաբական շրջանի (հատկապես VII դարի) եկեղեցական մոնումենտալ ճարտարապետության խոր կնիքը։ Այդ առանձնապես ցայտուն կերպով երևում է եկեղեցաշատ Անիում, որը ժառանգեց նախաարաբական շրջանի եկեղեցական կառուցվածքների «հատակագծային և ծավալատարածական լուծումները»՝ դրանք ենթարկելով X—XI դարերի ճարտարապետական-ոճական առանձնահատկություններին և գեղարվեստական ըմբռնումներին։ Այսպես, Զվարթնոցի նմանությամբ կառուցված էր Անիի Գագկաշեն տաճարը, Մայր տաճարը դարձյալ նախաարաբական շրջանի գմբեթավոր բազիլիկայի վերարտադրություն էր, Առաքելոց եկեղեցին կառուցված էր էջմիածնի նմանությամբ, իսկ Ապուղամրենց սբ. Փրկիչ և Հռիփսիմե եկեղեցիները դարձյալ նման էին VII դարի բազմաբսիդ տաճարներին[87]։ Ընդ որում Զվարթնոցի նմանությամբ X—XI դարերում եկեղեցիներ էին կառուցված նաև այլ տեղերում, նույնիսկ Եվրոպայում։

Միջնադարյան Հայաստանի ոչ մի քաղաք այնքան բազմաթիվ եկեղեցիներ չի ունեցել, ինչքան ունեցել է Անին, որը սովորաբար կոչել են նաև «1001 եկեղեցիների քաղաք»։ Նպատակ չունենք մինչև 1045 թվականն ընդգրկող այս գրքում հատուկ քննարկել այն հարցը, թե Անին քանի եկեղեցի է ունեցել և ինչքանով է իրականությանը մոտ դրան վերագրվող 1001 եկեղեցիների գոյությունը։ Նախ, այդ մասին որևէ ստույգ աղբյուր գոյություն չունի, բաղաքում եկեղեցիների հատուկ հաշվարկ չի կատարվել և երկրորդ, այդ հարցին անհրաժեշտ կլինի անդրադառնալ քաղաքի պատմության հաջորդ ժամանակաշրջանի առնչությամբ, երբ դրա եկեղեցիների թիվը հասել էր իր առավելագույն չափին։ Բայց և այնպես չի կարելի չնշել, որ X—XIII դարերի հայկական քաղաքներում եկեղեցիներն ընդհանուր առմամբ բազմաթիվ էին։ 1049 թվականին ավերված Անծն քաղաքում, ըստ հիշատակությունների, իբր կար 800 եկեղեցի, Սեբաստիայում՝ 600 և այլն[88]։ Նոր ժամանակների ճանապարհորդ Դյուբուան նշում է, որ ոչ մի տեղ այնքան շատ եկեղեցիներ չկան, ինչքան որ կան Հայաստանում և Վրաստանում[89]։ Արաբական պատմագիր Ալ-Ասիրը Անիի բարգավաճ լինելու մասին նշելուց հետո հաղորդում է, որ այնտեղ կա ավելի քան 500 եկեղեցի[90]։ Նեղ թվաբանական հաշվարկներից անկախ, կարելի է հաստատապես ասել, որ Անին ունեցել է հարյուրավոր եկեղեցիներ ու մատուռներ։ Դրանց մեծ մասը Բագրատունիների թագավորության շրջանում արդեն գոյություն ուներ։

Անիի եկեղեցիները ցրված էին ամբողջ քաղաքով մեկ։ Եկեղեցիներ կային և Միջնաբերդում ու բուն քաղաքում, և վերգետնյա ու բարանձավային արվարձաններում, և ներքին պաշտպանական պարիսպների աշտարակներում։ Նրա գմբեթավոր եկեղեցիները՝ Մայր եկեղեցին, Գագկաշենը, Առաքելոցը և մյուսները զարդարում էին քաղաքը։ Դրանք տեղադրված էին որոշակի օրինաչափությամբ՝ հաշվի առնելով տվյալ քաղաքամասի առանձնահատկություններն ու կարևորությունը, տեղանքի պայմանները, քաղաքի հատակագծի ընդհանուր պահանջները և այլն։ Եկեղեցիների մեծ մասը կառուցված էր մեծ վարպետությամբ և, իբրև կանոն, իր վեհությամբ ու մոնումենտալությամբ առաջին իսկ հայացքից աչքի էր զարնում քաղաքի ընդհանուր ֆոնի վրա։

X—XI դարերում Անիի եկեղեցիներն ու մատուռները կառուցվում էին կառավարողների, ինչպես և ազդեցիկ իշխանական տների կողմից[91]։ Կաթողիկոսները, որ այնքան խոշոր դեր են խաղացել VII դարի Հայաստանի եկեղեցաշինության մեջ, այս շրջանում Անիում շատ թե քիչ նշանակություն ունեցող պաշտամունքային որևէ կառուցում չեն կատարել։ Մայրաքաղաքի այդ ժամանակների եկեղեցաշինության բնագավառում առանձնապես կարևոր դեր են խաղացել Բագրատունիների թագավորական տունը և Պահլավունի ազդեցիկ իշխանները։ Ընդ որում նշանավոր եկեղեցիների ու տաճարների մեծ մասի (Մայր եկեղեցի, Գագկաշեն, սբ. Փրկիչ և այլն) կառուցողները մեզ հայտնի են վիմագիր արձանագրությունների և պատմագիրների վկայությունների շնորհիվ, իսկ մյուս մեծագույն մասի արարողները մեզ հայտնի չեն։ Քարանձավային Անիում, վերգետնյա արվարձաններում և բուն քաղաքում ցրված տասնյակ ու

---

86 Նույն տեղը։

87 Նույն տեղը, էջ 56։

88 Տե՛ս «Բազմավեպ», 1846, Դ, էջ 325։

89 Նույն տեղը։

90 Из Тарихи ал-Камиль **Ибн-ал-Асри**, пер. П. К. Жузе, Баку, 1940. էջ 120։

91 **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 206։

տասնյակ եկեղեցիների կառուցողներն անհայտ են մնացել պատմության համար՝ մասամբ հիմնատակ ավերվելու և մասամբ էլ կառուցողական վիմագիր արձանագրություններ, կամ գրավոր վկայություններ չունենալու հետևանքով։ Նույնիսկ հայտնի չէ Հովվի եկեղեցու կառուցողի անունը, մի եկեղեցի, որ մասնագետները համարում են անկրկնելի ճարտարապետական գլուխգործոց, «գոհար»։

Ամենահամեստ հաշվարկներով, X—XI դարերում Անիի եկեղեցիների թիվն ամենայն հավանականությամբ 100-ից անցնում էր։ Դրանցից 5—7-ը գտնվում էին Միջնաբերդում, 20—30-ը՝ բուն քաղաքում, իսկ մի քանի տասնյակի հասնող մյուս եկեղեցիները ցրված էին Հյուսիսային ու Հարավային արվարձաններում, Քարանձավային Անիում և դրա շրջակայքում։ Եկեղեցիների մի մասը հասարակ մատուռներ էին։ Անին մի քանի եկեղեցիներ, այդ թվում և պալատական եկեղեցին, ժառանգություն էր ստացել նախորդ ժամանակներից, իսկ մյուսները կառուցվել էին Բագրատունիների թագավորության շրջանում՝ X—XI դարերում։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի եկեղեցական կարևոր հուշարձաններից էին՝ Մայր եկեղեցին, որ կառուցվել էր X դ. վերջերին և XI դ. սկզբին, Գագկաշեն եկեղեցին՝ կառուցված Գագիկ I-ի օրոք, XI դ. սկզբներին, Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին՝ կառուցված 980 թվականին, Առաքելոց եկեղեցին, ս. Փրկիչը (1036 թ.), Հովվի եկեղեցին[92] և այլն, որոնց մասին խոսք կլինի հիշատակության արժանի հուշարձանները նկարագրելիս։

Վարդան պատմագրի վկայությամբ, Աշոտ III-ը 964 թվականին, բաղաքի ներքին պարսպի կառուցման հետ, նրա բոլոր աշտարակները վերածել է եկեղեցիների, որոնց մասին, սակայն, ոչ մի վկայություն չկա. մենք տեղեկություն չունենք նրանց ո՛չ անվան, ո՛չ մեծության և ո՛չ էլ կահավորման ու ճարտարապետական արվեստի վերաբերյալ։

Բազմաթիվ հիշատակություններ կան այն մասին, որ թագավորներն ու թագուհիները, բարձրաստիճան իշխանավորներն ու մեծատուները և նույնիսկ ոչ ազնվական դասին պատկանող զա-

[92] Տե՛ս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 282, Н. Я. Марр, Ани, էջ 35, 101—102, 119—120 և այլն, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 91, 94—95, 164, 178, 221, 236—238, И. Орбели, Развалины Ани, էջ 31—32, Նույն, եժ, հ. 2, էջ 592—593, Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, էջ 11—12, Միհաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 23, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 193—197, 206, 225, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 30—82, 124—126 և այլուր։

նազան անձինք եկեղեցիներին նվիրաբերում էին կալվածքներ, ապասք և տարբեր ունեցվածք ու հարստություններ, որոնց մասին խոսք եղավ դույքային հարաբերությունները ներկայացնելիս։

Ինչ վերաբերում է Բագրատունյաց ժամանակաշրջանի եկեղեցական հուշարձանների ճարտարապետական առանձնահատկություններին, ապա դրանք կնշվեն քաղաքի՝ իբրև երկրի ամենանշանավոր ճարտարապետական կենտրոնի, բնութագիրը տալիս։ Սակայն այստեղ չենք կարող անտարբեր անցնել Ն. Մառի այն սխալ կարծիքի կողքով, ըստ որի իբր «անիական եկեղեցական ճարտարապետական ոճը, որը հայկական արվեստի պատմության մեջ էպոխա է կազմում, չի պատկանում ֆեոդալական Հայաստանին» և իբր «Անիում սեփական ոճը ծագել և զարգացել է XII և XIII դարերում», այն էլ «իրանական և մուսուլմանական» ոճի ազդեցության տակ[93]։ Մառի այդ կարծիքի բացահայտ սխալական լինելը ցույց է տրվել հայ ճարտարապետության պատմության մասնագետների և հնագետների կողմից։ Առանձին հուշարձանների նկարագրության բաժնում մենք կտեսնենք, որ իրոք անհիմն է նրա այդ կարծիքը։ X—XI դարերը հայ ճարտարապետության պատմության մի նոր ժամանակաշրջան էր, որը հենվում էր նախաարաբական ճարտարապետական ոճերի վրա և ստեղծելով այդ դարերին հատուկ ճարտարապետական սքանչելի հուշարձաններ՝ Աղթամար, Տաթև, Հաղպատ, Սանահին, Կեչառուք, Մարմաշեն, Անիի Մայր եկեղեցի, Հովվի եկեղեցի և տասնյակ այլ կոթողներ, որոնք անցյալի պարզունակ կրկնություն համարելը գիտության հետ ոչ մի ընդհանուր բան ունենալ չի կարող։


Պաշտպանական ու եկեղեցական շինարարության համեմատությամբ քաղաքացիական շինարարությունը շատ ավելի մեծ մասշտաբներ ուներ։ 50—60 տարվա ընթացքում Անիում կառուցել են հազարավոր տուն-բնակարաններ, որոնց զգալի մասը՝ ժայռափոր, թագավորական ու իշխանական պալատներ, հյուրանոցներ, խանութներ, բաղնիքներ, քաղաքում ցանցավորված՝ ջրմուղ, կամուրջներ, ճանապարհներ, որոնք լրացնում էին քաղաքի ընդհանուր դեմքը։

Պաշտպանական կառուցվածքների, եկեղեցիների և պալատների համեմատությամբ, բնակելի տներն անբավարար են պեղված և դրանց մնացորդները, ընդհանուր առմամբ, վատ են պահպանվել նախ, այն պատճառով, որ մյուս կառույցների համեմատությամբ ավելի շատ էին ենթակա փլման ու ավերման և երկրորդ, ինչպես

[93] Н. Я. Марр, Ани, էջ 35։

ենթադրում է Ն. Մ. Տոկարսկին, երկիր ներխուժած նվաճողներն առաջին հերթին «կողոպտել ու ավերել են բնակելի շենքերը, որտեղ կարելի էր գտնել հարուստ ավար և որոնք մեծ համառությամբ պաշտպանվում էին բնակիչների կողմից»[94]: Հնագիտական պեղումների ընթացքում այս կամ այն չափով դիտված ու հետազոտված բնակելի տները քաղաքի այդ կարգի շենքերի միայն մի չնչին տոկոսն են կազմում: Ավելին, դրանք, կարելի է ասել գրեթե առանց բացառության, ոչ թե Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում էին կառուցվել, այլ հետագայում: Սակայն հայտնի է, որ աղքատ բնակչության տների ընդհանուր կառուցվածքը՝ «ժողովրդական ճարտարապետությունը», ինչպես ընդունված է կոչել, աննշան փոփոխություն է կրել և XII—XIII դարերի այդ կարգի շենքերի միջոցով կարելի է ճիշտ գաղափար կազմել նաև X—XI դարերի բնակելի տների մասին:

Հնագիտական պեղումների ընթացքում, այնուամենայնիվ, վաղեմի քաղաքի տարբեր հատվածներում՝ և՛ վերգետնյա թաղամասերում (Մանուչեի մզկիթի մոտ, Միջնաբերդի երկու կետերում, Գագկաշեն եկեղեցու մոտ և այլ տեղերում), և՛ Քարանձավային Անիում դիտվել ու նկարագրվել են բավական քանակությամբ բնակելի տներ[95]:



Աշոտյան պարսպի մոտ պեղված տներ

[94] **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., էջ 143:

[95] Տե՛ս **Н. Марр,** Раскопки в Ани в 1904 году, С.-Петербург, 1906. էջ 10—11, նույնը, XI Анийская археологическая кампания, СПб, 1913.

Դրանցից առանձին ուշադրության արժանի են 1904 և 1911 թթ. պեղումների ընթացքում կատարված ուսումնասիրությունները: 1940 թվականին, Հին քաղաքում, Աշոտյան պարսպի մոտ, Ծաղկոցաձորի բարձրադիր ափին հնագիտական արշավախումբը բացել է «Անիի աղքատ թաղամասերի» մի անկյուն[96], որտեղ ապրող բնակիչների կյանքի, կենցաղի, բնակարանային պայմանների ուսումնասիրությունը, Ն. Մառի արտահայտությամբ, «հասարակական-պատմական» մեծ հետաքրքրություն էր ներկայացնում: Թ. Թորամանյանի կարծիքով, այդ աղքատ բնակիչները Աշոտյան պարսպի մոտ իրենց խրճիթները սարքել և բնակություն էին հաստատել 1064 թվականից հետո, երբ Ալփ-Արսլանի կողմից Անին ավերվելուց հետո նրա բնակչության զգալի զանգվածները դիմեցին արտագաղթի, իսկ արվարձանների բնակչության մի մասն եկավ ու հաստատվեց նրանց տեղում՝ բուն քաղաքում:

Ավելի արդյունավետ էին XI դ. հնագիտական արշավախմբերի ընթացքում, Միջնաբերդի՝ համեմատաբար հարուստ բնակելի թաղամասում, կատարված պեղումները, որոնք ընդգրկել են մոտ 1800 քառ. մետր տարածք: Այդ տարածքի վրա հայտնաբերվել է բնակելի 9 համալիր՝ մոտ 35 սենյակներով[97]:

Եվ ահա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակելի տների համալիրները բաղկացած էին 3—6 բնակելի ու օժանդակ սենյակներից, որոնք բոլորն իրար հետ հաղորդվում էին միջանցքներով: Տները սովորաբար մեկուկես-երկու հարկանի էին. առաջին կամ նկուղային հարկում սովորաբար գտնվում էին օժանդակ սենյակները, իսկ բարձր հարկերում՝ բնակելի սենյակները: Հարուստ բնակելի տների համալիրների մեջ երբեմն եղել են նաև «փոքր եկեղեցիներ կամ աղոթարաններ»: Պատերը շարված էին անկանոն քարակոշտերով, իսկ հարուստների տները՝ երբեմն սրբատաշ քարերով: Պատերը ներսից կամ սվաղում էին, կամ ծեփում էին առանց ծեփի՝ դրանք ծածկելով զանազան գործվածքներով (գորգեր, կարպետներ): Աղքատ բնակիչների խրճիթների հատակը սվաղում էին սովորական ցեխով, իսկ հարուստներինը՝ սալահատակված էին, երբեմն՝ սրբատաշ քարերով: Անիի տարածքը փոքր էր և այն օգտագործել են խնայողաբար. բնակելի թաղամասերում տները շատ խիտ էին և կից տներն ունեին ընդհանուր պատեր, տները դասավորված էին ոչ թե փողոցների երկայնքով, այլ

[96] **Н. Марр,** Раскопки в Ани в 1904 году, էջ 10—11:

[97] Նույնը, XI Анийская археологич. кампания. Համմ. **А. Л. Якобсон,** Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 94:

խորությամբ։ Տներն իրար կպած լինելու պատճառով լույսի և օդափոխության համար լուսամուտների փոխարեն սովորաբար տանիքում թողնում էին երդիկ։ Տուն-համալիրները սովորաբար ունեին փրենց թոնրատունը։ Իրրև կանոն, տներն իրենց շքամուտքով նայում էին ոչ թե դեպի փողոց, այլ՝ բակ, փողոցի կողմի պատը խուլ էր և տունը կամ մի քանի տուն միաժամանակ փողոցի հետ կապվում էին նեղ միջանցքով, տների դասավորման մի եղանակ, որ միջնադարում տարածված էր ամբողջ Արևելքում[98]։ Տների նշված դասավորությունը տիպիկ էր նաև Թուրք-պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Երևանին. իրենց ունեցվածքն ու ընտանիքի պատիվը տիրողների աչքից գերծ պահելու համար Հին Երևանի տների գլխավոր մուտքերը նայում էին դեպի բակ, իսկ փողոցի կողմում խուլ պատ էր, միայն փոքրիկ ու անշուք դռնով[99]։ Այդ փաստը նույնպես, մեր կարծիքով, գալիս է կրկին հաստատելու, որ նկարագրված բնակարանները զանգվածորեն պատկանում էին օտարների տիրապետության ժամանակներին։ Քաղաքական անկախության ժամանակներում՝ X—XI դարերում, հավանաբար դրա կարիքը չկար, շքամուտքով դեպի փողոց նայող տուն կառուցելը կապված չէր որևէ վտանգի հետ։

Թոնիրներից բացի, տների ներքին տնտեսական հարմարանքներից էին՝ բուխարիները, խորշերը (պատրհանները), հորերը, ամբարները և այլն։ Մթերքները սովորաբար պահվում էին նկուղներում, կարասների կամ հորերի մեջ։ Անկողինը և տնային գործածության զանազան իրերը՝ պատրհաններում, որը խախտում և ճարտարապետական առումով ակնհաճո էր դարձնում հարթ պատերը[100]։ Նկարագրված բնակելի տները հիմնականում պատկանում էին քաղաքի աշխատավորներին՝ աղքատներին, արհեստավորներին, մանր առևտրականներին, գյուղատնտեսությամբ զբաղվողներին և այլոց։ Բարձրաստիճան պաշտոնականությունը, մեծատուները և մյուս մեծահարուստներն ապրում էին դղյակներում ու պալատներում։ Սակայն նախքան դրանց մասին խոսելը նշենք, որ քաղաքի շահագործվող շերտերի համեմատաբար հարուստ ներկայացուցիչների տներն իրենց կառուցվածքով, հարմարություններով ու ձևավոր-

[98] Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 105—106, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 94—97, акад. Я. А. Манандян, О торговле и городах Армении, էջ 210, Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 126, Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, էջ 76 և այլուր։

[99] Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 223—224։

[100] Н. Я. Марр, Ани, էջ 197։

մամբ նույնպես զգալի չափով տարբերվում էին աղքատների անշուք խրճիթներից։ Այդ ճոխությունն ամենից առաջ զգացվում էր բանդակազարդ մուտքերից և միավոր-սենյակների քանակից։

Անիի քաղաքացիական շինությունների մյուս խումբը կազմում էին իշխանական ու թագավորական պալատները (կամ ապարանքները)։

Հայաստանի արքունական և իշխանական ապարանքները հատուկ ուսումնասիրության են ենթարկվել Թ. Թորամանյանի կողմից։ Նա գրում է, որ սովորաբար ապարանքների համար ընտրում էին բլուրների գագաթները կամ լանջերը, որ դրանք պարսպապատ էին, որոնց մեջ ընդգրկված տարածքում տեղադրված էին ապարանքի մասերը կազմող և դրա օժանդակ հարմարությունները՝ տաճարը (տոնասրահ կամ հանդիսասրահ), դահլիճը (կամ դահլիճներ), սրահը, հրապարակը, բնակելի տներն ու սենյակները, դիվանատունը, դանձատունը, զինանոցը և այլն, ծաղկանոցներ, մըրգաստաններ[101]։

Հին Հայաստանի արքունական պալատներից և ոչ մեկը չի պահպանվել. մեզ հայտնի չեն Արտաշեսյանների, Արշակունիների, ինչպես և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի ֆեոդալական մանր թագավորությունների՝ Սյունիքի, Վասպուրականի, Կարսի, Լոռու թագավորական ապարանքները՝ դրանց ծավալը, համալիրի մեջ մտնող կառույցները, ճարտարապետական առանձնահատկությունները և այլն։ Գրեթե ոչինչ չի պահպանվել նաև սկզբնաղբյուրներում հիշատակված Արտազում կառուցված (VII դ.) Գրիգոր Մամիկոնյանի իշխանական ապարանքից, Զվարթնոցին կից Ներսես Գ. Շինող կաթողիկոսի կառուցած կաթողիկոսական ապարանքից և Բագարանի ամրոց-ապարանքից[102]։ Աննախանձելի են նաև Արշակունիների օրոք Դվինում ստեղծված արքունական և կաթողիկոսական ապարանքների մեզ հասած մնացորդները։ Եվ այդ միանգամայն հասկանալի է ու պատմական տեսակետից բացատրելի։ Ժամանակի ավերիչ գործունեության, բնական կործանարար ուժերի՝ երկրաշարժերի վրա գումարվում էին մեր երկիրը պարբերաբար ներխուժած արտաքին նվաճողների ավերումներն ու կողոպուտը, նվաճողներ, որոնց հիմնական հարվածն ուղղված էր արքունական ու իշխանական աշտոնեիստ ապարանքների դեմ։

Այդ տեսակետից Անին համեմատաբար մեծ ժառանգություն է

[101] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմութ., աշխ. ժողովածու, էջ 353—354։

[102] Նույն տեղը, էջ 357—360։

թողել մեզ. տարբեր վիճակում, բայց բոլորն ավերված, միջնադարյան մայրաքաղաքի ապարանքներից մեզ հայտնի են՝ Բագրատունիների, Պարոնի, Սարգսի, Ապլղարիբի և Վարդապետի պալատները[103], չհաշված մեծատունների (Տիգրան Հոնենցի և ուրիշների) շքեղ տները և մի ամբողջ շարք այնպիսի շինվածքներ, որոնք հիշատակվում են անվանապես[104], բայց դժվար է կռահել դրանց բրնույթը։ Անշուշտ, դրանցից բացի, եղել են նաև իշխանական (ու հավանաբար կաթողիկոսական) ուրիշ ապարանքներ, որոնց ոչ հետքերն են հայտնի և ոչ էլ հիշատակվել են որևէ գրավոր աղբյուրում։ Նշվածներից միայն երկուսը՝ Բագրատունիների արքունական պալատը և Ապլղարիբի իշխանական ապարանքը կառուցվել էին մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ X—XI դարերում, իսկ մյուսները հետագա շրջանի հուշարձաններ էին և կարող են ուշադրությանն արժանանալ սույն աշխատության հաջորդ՝ XI—XIV դարերն ընդգրկող մասում։

Բագրատունիների պալատը, որը հնագիտական առումով բավական խնամքով հետազոտվել է, հնարավորին մանրամասնությամբ կներկայացվի քաղաքի հուշարձանները նկարագրելիս։ Ինչ վերաբերում է Ապլղարիբի պալատին, ապա այն մեզ հայտնի է միայն գրական աղբյուրներից։ Ըստ դրանց Ապլղարիբն իր այդ ապարանքը կառուցել է Հովհաննես-Սմբատ Բագավորի օրոք (1036 թ.) և գտնվում էր ս. Փրկիչ եկեղեցու մոտ[105]։ Իշխանական այդ ապարանքի մասին եղած հիշատակությունը նկատի ունենալով, Անիի հնագիտական XII արշավախումբը 1913 թ. ջանքեր է գործադրում վաղեմի պալատի ավերակները բացելու և հետազոտելու համար։ Սակայն պալատի հետքերը հայտնաբերելու աշխատանքները որևէ արդյունք չեն տալիս, բայց դրա փոխարեն հայտնի է դառնում գլխավոր փողոցի ուղղությամբ, այդ մասով անցնող ջրմուղի մի զգալի հատվածը[106]։

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Անիում Բագրատունիների թագավորության շրջանում ընդհանրապես իշխանական պալատներ քիչ են կառուցվել։ Փաստորեն Ապլղարիբ մարզպանի պալատից բացի, ուրիշ այդ կարգի ապարանքների մասին հիշատակություններ չկան, թեպետև դրանց գոյությունը բացառված չէր։ Թվում է, թե Բագրատունիները ոչ բոլոր դեպքերում էին թույլատրում մայրաքաղաքում իշխանանիստ ապարանքներ կառուցելու, որովհետև դրանք կարող էին հենակետ դառնալ ֆեոդալական երկպառակությունների համար։

Բնակելի տներից հետո իրենց թվաքանակով հավանաբար երկրորդ տեղը գրավում էին հյուրատները, խանապարները և փղնդուկները միասին վերցրած։ Դժվար է ասել, թե Անին X—XI դարերում, կամ հետագայում այդ կարգի ինչքան շինություններ է ունեցել։ Անուղղակի աղբյուրների տվյալներից և միջնադարյան խոշոր քաղաքների առևտրի ու արհեստագործության բնույթից ելնելով, կարելի է պնդել, որ Անիի արհեստանոց-կրպակների, խանութների, հյուրանոցների, իջևանների ընդհանուր թիվը հարյուրների էր հասնում։ Դրանց մի մասը, անշուշտ, տեղադրված էր արհեստավորի կամ առևտրականի տանը, իսկ մյուսները տարբեր մեծության առանձին շինություններ էին, որոնցից ոմանք իրենց շքեղությամբ, հարմարավետությամբ ու մեծությամբ ոչնչով չէին զիջում քաղաքի նշանակալի հուշարձաններին։ Այդ կարգի շինվածքներից մեկն էր նաև այն շենքը, որը գոյություն ուներ Բագրատունիների թագավորության շրջանում և սելջուկյան առաջին իշխողների ժամանակ վերափոխելով, դարձրին Մանուչեի անունը կրող մզկիթ։ Դրա առաջին հարկը և երկրորդ հարկի մի մասը կառուցվել է X դարի երկրորդ կեսում, հավանաբար քաղաքի Աշոտյան պարիսպների հետ միասին, ինչպես ենթադրում է Ն. Մառը[107]։ Այն գտնվում է Ախուրյանի բարձրադիր աջ ափին, լեռնալանջի վրա։ Նախնական վիճակում այն սյունազարդ շենք էր, կամարակապ տանիքով, «լայն լուսամուտներով, հրաշալի տեսքով», մի շենք, որն «իշխում էր Ախուրյանի կիրճի վրա» և «ամրությամբ Անիում չուներ իր մրցակիցը»[108]։ Շենքը կառուցված է Աշոտյան պարսպի միևնույն կարմիր քարից։ Այն քաղաքացիական բնույթի շենք էր, վարչական կամ առևտրական նշանակությամբ. ոմանք համարում են մաքսատուն, ոմանք՝ դիվանատուն, ոմանք՝ պահակատուն և այլն[109]։ Ինչպես ասվեց, սելջուկների օրոք վերափոխությունից և ութանկյուն մինարեի կառուցումից հետո այն դարձրին մզկիթ, որը կանգուն վիճակում գոյություն ունի առ այսօր։

---

[103] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 34—36, **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 251—253, **Г. Абих**, Ани, էջ 282—283 և այլն։

[104] Գ. Ալիշան, Շիրակ, էջ *89*։

[105] Նույն տեղը։

[106] *Տե՛ս* **Н. Я. Марр**, Ани, էջ *117*։

[107] Նույն տեղը, էջ *118*։

[108] Նույն տեղը։

[109] Նույն տեղը։ *Տե՛ս նաև* **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 189—190, **Т. Измайлова, М. Айвазян**, Искусство Армении. Москва, 1962, էջ 82—83, **В. М. Арутюнян и С. А. Сафарян**. Памятники армянского зодчества, Москва, 1951, էջ 54։

Ինչպես ասվել է, հիմնականում Բագրատունիների թագավորության շրջանում էին «ձևավորվել» Քարանձավային ու Ստորերկրյա Անին, որոնցից առաջինը առավելապես բնակելի թաղամասերից էր բաղկացած, իսկ երկրորդը ռազմապաշտպանական նշանակություն ուներ և բաղկացած էր ստորերկրյա սրահներից, զանազան նպատակների ծառայող խոռոչներից, գաղտնարաններից, անցքերից ու «փողոցներից»։ Այսպիսով, Բագրատունիների օրոք հսկայական ծավալի քաղաքաշինություն է կատարվել վերգետնյա Անիի տակ[110]։

Բագրատունիների ժամանակ արդեն վաճառաշահ խոշոր քաղաք դարձած Անին ապահովված էր նաև ժամանակի պահանջներին բավարարող կոմունալ պայմաններով՝ ցանցավորված ջրմուղով, բավականին թվով բաղնիքներով։ Զգալի ծախսեր էին անում փողոցների ու հրապարակների բարեկարգման, Միջնաբերդի ապատ տարածությունները ծաղկանոցների ու պարտեզների վերածելու վրա։ Գետնափոր ու ժայռակերտ ճանապարհների հետ, որ քաղաքը կապում էին Ախուրյանի ու Ծաղկոցաձորի կիրճերի և ընդգետնյա թաղամասերի հետ, Անիում և դրա մոտակայքում՝ Ախուրյան գետի վրա կառուցվել էին մոնումենտալ մի քանի կամուրջներ, որոնցից երկուսը՝ քաղաքի բուն տարածքում։ Ենթադրվում է, որ կամրջաշինությունը հիմնականում կատարվել է հենց Բագրատունիների թագավորության շրջանում՝ X—XI դարերում։

Այդպիսին էր, ընդհանուր գծերով, քաղաքաշինության բնույթն ու ծավալը X—XI դարերի Անիում, Բագրատունիների մեծահռչակ մայրաքաղաքում։

Գ. Անին հայկական ճարտարապետության խոշորագույն կենտրոն

Վերնագրի իմաստից դժվար չէ կռահել, որ այս ենթագլուխը նեղ ճարտարապետական է և, հետևապես, պետք է շարադրել հրապարակի վրա եղած հսկայական գրականության հիման վրա։ Առանց տատանվելու կարելի է համարձակորեն ասել, որ Անին ամենից շատ ուսումնասիրվել է ճարտարապետների և հնագետ-ճարտարապետների կողմից։ Այդ բնագավառում ստեղծվել է հսկայական գրականություն, որի մեջ վաղեմի մայրաքաղաքի ճարտարապետության մի ամբողջ շարք հարցեր դարձել են բանավեճի առարկա։ Նյութի այդպիսի առատությունն ու իրարամերժ կարծիքները հնարավորություն են տվել ոչ մասնագետին՝ Անիի ճարտարապետության մասին անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելու հետ, անել նաև պատմական բնույթի որոշ դատողություններ՝ առանց պատշաճ համարելու խորամուխ լինել նեղ հարցերի մեջ։ Եվ թող մասնագետները ներող լինեն հատկապես այս ենթագլխում տեղ գտած հնարավոր թերությունների համար։

Հայկական ճարտարապետության պատմության ականավոր մասնագետ Թորոս Թորամանյանը նշում է հին ժամանակներից մինչև XV դարը հայ ճարտարապետության վերելքի (նրա մոտ՝ «վերածնություն») չորս շրջան, որոնցից առաջինը, նրա կարծիքով, ընդգրկում էր III—V դարերը, երկրորդը՝ VII դարը (Ավանի, Դվինի, Եղվարդի կաթողիկեները, Թալիշի մայր եկեղեցին, Զվարթնոցը և այլն)։ Վերելքի երրորդ շրջանը ընդգրկում էր X—XI դարերը, որին դեռևս IX դ. վերջերին նախորդել էր մի միջանկյալ շրջան։ Չորրորդ շրջանը (որ նա համարում է «ոճերու այնպիսի նշանակալից ու հանդուգն ձեռնարկումների շրջան, որոնց համար մենք միշտ հպարտ պիտի լինենք») ավարտվում է XV դարով՝ հայկական ճարտարապետության երկարատև անկմամբ[111]։

Մասնագետների մեծագույն մասն ընդունել և նորանոր նյութերով լրացրել է Թ. Թորամանյանի այդ պարբերացումը։ Մեզ համար առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուղղակի մեր խնդրո առարկային վերաբերող՝ X—XI դարերի հայկական ճարտարապետության զարգացման ու բնույթի մասին նրանց արած դիտողություններն ու հետևությունները։ Սկսենք հենց Թ. Թորամանյանից, Անիի ճարտարապետության ուսումնասիրման ամենամեծ երախտավորից։ Նա միջնադարյան այդ վիհաշուք քաղաքի ճարտարապետության պատմությունը բաժանում է երեք պատմաշրջանի՝ առաջինի մեջ ընդգրկելով Կամսարականների իշխանության ժամանակները։ Այդ շրջանից որոշ վերափոխություններից հետո պահպանվել են պալատական եկեղեցին, պաշտպանական պատերի մնացորդներ, պալատական կառույցների հիմքերի մասեր, որոնց հիման վրա և դաղափար ենք կազմում Կամսարականների ժամանակների Անիի ճարտարապետության վերաբերյալ[112]։

---

[110] Տե՛ս Գ. Ալիշան, Շիրակ, էջ 80. Н. Я. Марр. Ани, էջ 93, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 325—327, Գևորգյան Մկրտիչեպեկ, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 56 և այլուր։

[111] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմ., աշխ. ժողովածու, էջ 53—54։

[112] Նույն տեղը, աշխ. երկրորդ ժողովածու, էջ 49։

Ճարտարապետական այդ պատմաշրջանի վերջին և հաջորդ ժամանակաշրջանի առաջին, այսպես ասած, «սահմանային» հուշարձանը համարել է Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին, որը, Թ. Թորամանյանի արտահայտությամբ, «կկրի իր վրա հին արվեստի վերջին շառավիղները և նոր շրջանի արշալույսի ցոլքերը»[113]: Դրան հաջորդում է մայրաքաղաքի ճարտարապետության զարգացման երկրորդ՝ բուռն շրջանը, որը ժամանակագրական տեսակետից ընդգրկում է X դարի երկրորդ կեսից մինչև 1064 թվականը, երբ Անին գրավեց ու ավերեց սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանը: Թ. Թորամանյանի բնութագրմամբ, այս նոր ժամանակաշրջանի հուշարձանների վրայից սկսեցին վերանալ «նախկին լուրջ ու ծանր երևույթները» և նոր կառուցվող շենքերը, որոնց հատուկ էր «մի զուտորիկ վայելչություն», պճնում էին «բարակ որմնասյուներ»-ն ու զարդաքանդակ կամարները, ներդաշնակ ուղիղ գծերով «բազմահյուս մանածոներ»-ը: Թ. Թորամանյանը նշում է, որ կարճատև լինելու պատճառով, «այս շրջանը» «դեռ չտված յուր վերջին կատարելագործության պտուղները»՝ XI դ. կեսերին ենթարկվեց «վաղահաս ճակատագրական անկման», սելջուկյան տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում չտալով ուշադրության արժանի որևէ շինվածք կամ հուշարձան, բացի եղածների այլանդակումից: Անիի ճարտարապետության մի նոր, բուռն զարգացման ժամանակաշրջան էր Զաքարյանների իշխանության շրջանը, երբ քաղաքում մեկը մյուսի հետևից կառուցվեցին բազմաթիվ շքեղ տաճարներ, իշխանական ապարանքներ, բնակելի տների համալիրներ, հյուրատներ, իջևաններ և այլն[114], որոնք իրենց վրա կրում էին վերածննդի դարաշրջանի բնորոշ գծերը:

Անիի պատմության ու հնագիտության բազմաթիվ հարցեր իոր գիտականությամբ և հայ ժողովրդի ընդհանուր պատմության հետ սերտ առնչված լուսաբանելու հետ միասին, որոշ հարցերում Ն. Մառը, մեղմ արտահայտված, թույլ է տվել սխալներ: Նա ճարտարապետական առումով Բագրատունիների շրջանն Անիում համարում է լոկ անցյալի կրկնություն. «... Հայոց Թագավորների դարաշրջանում, Անիի շինությունները սոսկ կրկնություն էին հին Հայաստանի տարբեր շրջաններում մշակված ճարտարապետական ոճերի: Բագրատունի Թագավորները... աշխատում էին զարդարել իրենց մայրաքաղաքը... վերարտադրելով... արդեն գոյություն ունեցող օրինակները, ընդօրինակելով հայրենի արվեստի նշանավոր հին հուշարձանները»[115]:

Սկզբնական շրջանում ուսումնասիրողներից շատերը, դրեթե առանց քննադատության, ընդունում էին Ն. Մառի այդ սխալ տեսակետը և X—XI դարերի Անիի ճարտարապետությունը համարում սոսկ նախորդ ժամանակների հուշարձանների կրկնություն: Ընդ որում բոլորը, սկսած Ն. Մառից ու Չուբինով-Չուբինաշվիլուց, այդ սխալ տեսակետը «հիմնավորելու» համար վկայակոչում են հիմնականում Բագրատունիների շրջանում կերտված միայն երկու հուշարձանները՝ Առաքելոց եկեղեցին, որը համարել են էջմիածնի ընդօրինակությունը կամ վերարտադրությունը և Գագկաշենը՝ կառուցված Զվարթնոցի օրինակով: Նախ, դրանք էջմիածնի ու Զվարթնոցի կրկնություն չէին, մանավանդ որ վերջինս ավերված էր և հուշակավոր Տրդատը սկզբում պետք է ուսումնասիրեր ավերակները[116] և վերականգներ դրա նախնական վիճակը, ապա՝ ձեռնամուխ լիներ դրա կառուցմանը: Մի աշխատանք, որ ժամանակակից ճարտարապետները համարում են զգալի ներդրում: Եվ, բացի դրանից, Գագկաշենի համամասնությունները Զվարթնոցից տարբերվում էին: Առաջինի ուղղահայաց առանցքը հորիզոնական հատակագծի համեմատությամբ ավելի բարձր էր, չհաշված դեկորատիվ զարդաքանդակների և ներքին մանրամասների տարբերությունները:

Իսկ Առաքելոց եկեղեցու ու էջմիածնի միօրինակությունն ընդհանրապես զգալի չափով բանավեճի առարկա է և դրա մասին առարկություն չհանդուրժող տեսակետ արտահայտելը գիտության շրջանակներին անհամապատասխան համարձակություն կարելի է համարել: Սակայն հանրահայտ է, որ բոլոր դեպքերում արվեստի յուրաքանչյուր նոր շրջան սկզբնապես հենվում է հնի վրա, ընդունում վերջինիս լավագույն տարրերը, իսկ հետագայում դրանք զարգացնելով, վերափոխելով ու նոր ժամանակներին հատուկ ոճեր մշակելով, դառնում է ինքնուրույն մի նոր ուղղություն, որին արդեն հատուկ են տվյալ ժամանակաշրջանի արվեստի բնորոշ կողմերը: Սակայն չէ՞ որ Անիի X—XI դարերի հուշարձանները չէին սահմանափակվում միայն երկու եկեղեցիներով: Իսկ ի՞նչ կասեին մասնագետները մեծահռչակ Մայր տաճարի, ոսկերչական կերտվածք ունեցող Հովվի եկեղեցու, մյուս տասնյակ եկեղեցիների, ար-

[113] Նույն տեղը:

[114] Նույն տեղը, էջ 49—50:

[115] **Н. Я. Марр.** Ани, էջ 35, Համմ. **Г. Н. Чубинашвили.** Армянское искусство с конца IX до начала XI в., «Сасунский Давид», сборник под редакцией Меликсет-Бека, Тбилиси, 1939, էջ 44—45:

[116] Տե՛ս **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., էջ 141:

քունական պալատի, պաշտպանական պարիսպների, ժայռափոր կերտվածքների, մոնումենտալ կամուրջների, իշխանական ապարանքների և այլնի մասին, որ մի ամբողջական, ճարտարապետական առումով «տիեզերահռչակ» մայրաքաղաք էին կազմում։ Եթե Բագրատունյաց մայրաքաղաքի ճարտարապետության ակունքները կազմում էին մեր ազգային մշակույթի VII դարի մոնումենտալ հուշարձաններն ու IX դարի վերջերի ու X դարի սկզբների հոյակապ շինվածքները՝ Ավանը, Էջմիածինը, Հռիփսիմեն, Զվարթնոցը, Տաթևը, Աղթամարը և մյուս սքանչելի կերտվածքները, ապա Բագրատունիների շրջանի ճարտարապետական գլուխգործոցներն էլ իրենց հերթին հիմք դարձան Զաքարյանների ժամանակաշրջանի ճարտարապետական մշակույթի նոր վերածնության համար, մշակույթ, որ գրեթե հասցրեց ընդհատվել ու անկում էր ապրում սելջուկյան տիրապետության օրոք։ Ն. Մառի այդ անընդունելի կարծիքի պատճառներից մեկը հավանաբար այն է, որ հնագիտական պեղումների ընթացքում Բագրատունյաց շրջանի հուշարձաններ համեմատաբար քիչ են հայտնաբերվել և հայտնաբերվածների մեծ մասն էլ կրում են հետագա ժամանակների վերականգնումների ու որոշ վերափոխությունների կնիքը։ Առանձին հուշարձաններ նկատի չենք առնում, որ այդ հարցերում նույնպես նա արտահայտում է ոչ ընդունելի, իսկ երբեմն էլ՝ սովորական տրամաբանության հակասող տեսակետներ։

Ոչ ոք չի ժխտել, որ Բագրատունիների թագավորության ժամանակներում, մանավանդ սկզբնական շրջանում, Անիի քաղաքաշինության (հատկապես եկեղեցաշինության) մեջ օգտագործվել է անցյալի փորձը և նախաարաբական շրջանի ազգային դասական ճարտարապետության հուշարձաններն ու ճարտարապետական տարրերը[117], սակայն այդ բոլորը հանգեցնել մեխանիկական կրկնության և ընդհանրապես ժխտել հայկական ճարտարապետական արվեստի (տվյալ դեպքում մասնավորապես Անիի ճարտարապետության) մի նոր, բեղմնավոր ու նորույթներով լի շրջանի (ինչպիսին էին X—XI դարերը) գոյությունը, պարզապես խիստ կողմնակալ է կամ թյուրիմացության արդյունք։ Ընդ որում, Թ. Թորամանյանը նշում է, որ Բագրատունյաց շրջանի հայ ճարտարապետության «վերածնունդը» անցել է «երկու տեսակ այլայլություններ», «իրարմե թեև ոչ օտար, այնուամենայնիվ, որոշ չափով տարբեր, ինչպես մեկ ծնողի երկու հարազատ զավակները։ IX դարեն մինչև X դարու կեսի վերածնությունը կազմված է V և VII դարու հայ ճարտարապետության ավանդական գծերով, իսկ X-ի կեսեն մինչև XI-ի վերջերը երևացող այլայլությունը իր անմիջապես նախորդին վրա զգեցված է մի տարազ, որն իր մանրամասնության մեջ ավելի հեռավոր ասորա-քաղդեական ավանդություններու հետ կարելի է կապել, քան մոտակա ժամանակի ոճերու հետ»[118]։ Ակնառավոր մասնագետի մտքերը շարադրված են այնքան պարզ ու հստակ, որ որևէ ծանոթագրության կարիք չունեն։

Պետք է նաև նշել, որ Ն. Մառը, ժխտելով X—XI դարերի հայ ճարտարապետության ձեռքբերումները, դրա հետ միասին սելջուկյան և Շադադյանների տիրապետության ժամանակները համարել է ճարտարապետական մշակույթի առաջընթացի շրջան[119] և առաջ քաշել այն անընդունելի ու բացահայտ ոչ գիտական թեզը, թե իբրև այդ շրջանի հայկական ճարտարապետությունն իր վրա կրում էր սելջուկյան-մուսուլմանական ճարտարապետության կնիքը։ Անհրաժեշտ ենք համարում վկայակոչել սելջուկյան տիրապետությանը տված Թ. Թորամանյանի դիպուկ գնահատականը։ Ահա թե ինչ է գրում նա.

«Շետտատյաններու շրջանին մեջ ճարտարապետության և գեղարվեստներու զարգացման տեսակետով առանձնապես աչքի ընկնող ոչինչ չեմ գտներ, ընդհակառակը, ողբերգակ բանաստեղծ լիներ հարկ է՝ հունաց տիրապետութենեն և Արփասլանի կոտորածեն սկսած՝ մինչև մեծն Զաքարեի տիրապետության փրկարար շրջանը բովանդակ Շիրակի սուգն ու շիվանը ողբալու համար։ Ես այստեղ Շետտատյաններու անունով առավելն արձանագրել կարող եմ քանի մը արվեստագիտական այլանդակություններ և պատմական վշտահարի անցքեր...»[120]։

Անհրաժեշտ է ավելացնել, որ Շադադյանները եթե ձգտում էլ ունեցային, միևնույն է, չէին կարող Անիում էական հուշարձաններ ստեղծել. նրանց տիրապետության կողոպտիչ բնույթը և քաղաքի վրա կատարվող հաճախակի հարձակումները դրա հնարավորությունն իսպառ բացառում էին։ Նախորդ ժամանակաշրջանում վա-

---

117 Տե՛ս, օրինակ՝ Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 338—339, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 232—233, Т. А. Измайлова, Культурное наследие и убранства анийских памятников, «Известия» АН Арм. ССР, 1959, №. 10, էջ 67—68, С. Мнацаканян, Новые материалы по истории армянского зодчества IX—X вв., «Известия» АН Арм. ССР, 1957, № 2, էջ 57 և այլուր։

118 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 338։

119 Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 209—210։

120 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 339։

ռուցված շենքի վերափոխումը մզկիթի (որ կոչվեց Մանուչեի անունով), մի այլ մզկիթի կառուցումը և Ալփ-Արսլանի 1064 թվականի ավերածություններից հետո պաշտպանական պարսպի որոշ վերանորոգումներն ու մի նոր բերդի կառուցումը (որոնց մասին անուղղակի հիշատակություն ունի Վարդան Վարդապետը)[121] վկայակոչելով՝ Շադադյանների տիրապետության ժամանակները ճարտարապետական (և ընդհանրապես մշակույթի) առումով համարել առաջադիմական շրջան, ինչպես Ն. Մառն է համարել[122], ոչ միայն անհամոզիչ է, այլև զուրկ է հիմքից: Ճարտարապետական առումով նորույթներ չբերող մանր-մունր վերանորոգումները, վերափոխությունները և մեկ մզկիթի ու մեկ բուրգի կառուցումը ոչ մի նշանակություն չեն ունեցել հսկա քաղաքի համար և ոչնչով չեն հարըստացրել նրա ճարտարապետական մշակույթը:

Պատմականորեն շփման մեջ գտնվող ժողովուրդներն այլ բնագավառների հետ միասին փոխադարձ ազդեցություն են թողել նաև ճարտարապետության ասպարեզում: Սակայն երբեմն ոչ տեղին օգտվելով համեմատական մեթոդից, ուսումնասիրողները միևնույն երևույթների վերաբերյալ արել են իրարամերժ եզրակացություններ, արտահայտել երբեմն ծայրահեղության հասնող տեսակետներ, որոնք ի չիք են դարձնում ազգային ինքնատիպ մշակույթի գոյության հնարավորությունը: Այդպիսի ընդհանուր մտայնություն գոյություն ուներ հայկական ճարտարապետության մասին ամբողջ XIX դարի ընթացքում: Այդ ընդհանուր, սխալ կարծիքը Թ. Թորամանյանի ընդհանրացմամբ արտահայտվում է հետևյալ կերպ. «Հայ ճարտարապետությունը կույր հետևողություն է Հայաստանը շրջապատող մեծ ազգերու ճարտարապետական արվեստներուն»[123]: Սակայն հենց նույն դարում հավաքված փաստական նյութերի ճնշման տակ հեղինակների մեծագույն մասը հանգեց միանգամայն այլ եզրակացության: Դրանցից շատեր գտնում էին, որ V դարից ընդհուպ մինչև Անիի անկումը, չնայած ծանր ժամանակներին, երբ Հայաստանը մի քանի անգամ նվաճվել է օտարների կողմից և երկար ժամանակով մնացել դրանց լծի տակ, բայց հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր մշակույթի ինքնատիպությունը, եղրակացրել է Ն. Մառը[124], թեպետև կոնկրետ հայ ճարտարապետության մասին արտահայտած նրա կարծիքները (ինչպես նշեցինք և դեռ ավելի կլինի այլ տեղերում նորից նշելու), որոշակիորեն տարբերվում են մեր մշակույթին տված այդ գնահատականից:

Հայ ճարտարապետական արվեստն առանձնահատուկ ուշադրության առարկա է դառնում XIX դարի վերջերից: Հակառակ նախկինում տիրող վերը նշված ընդհանուր կարծիքի, նորագույն ուսումնասիրողները՝ Յոսեֆ Ֆրասոն, Տեքսիեն, Ստրժիգովսկին և ուրիշներ, հայկական ճարտարապետությունը համարել են ոչ միայն ինքնատիպ, այլև գոթական ճարտարապետական ոճի ակունքներից մեկը[125]: Նույն կարծիքին են նաև դրանց նախորդած ու հաջորդած ուրիշ բազմաթիվ հետազոտողներ: Այնպես որ այդ հարցը վաղուց արդեն վերջնականապես լուսաբանված է հօգուտ հայ ճարտարապետության ինքնուրույնության: Միայն Գ. Ն. Զուբինաշվիլին է, որ շարունակում է «ժխտել» հայկական ճարտարապետության ինքնատիպությունը: Նրա այդ կողմնակալ վերաբերմունքը հայ մշակույթի մասին նոր չէ և սաղմնավորվել է դեռևս երիտասարդ տարիներին, երբ որոշ ժամանակ մասնակցել է Անիի հնագիտական հետազոտություններին: Հետագայում, իր հոդվածներում ու աշխատություններում մեջ նա առիթը բաց չի թողել կրկնելու գիտական հիմքից զուրկ իր այդ «գիտական» տեսակետը, որն ավելի ընդհանուր ձևով շարադրել է «Разыскания по армянской архитектуре» (Тбилиси, 1967) մեջ: Այդ աշխատություններում տեղ գտած սխալների մասին է, որ հանդես են եկել հայ հնագիտության, պատմության ու ճարտարապետության ականավոր երեք մասնագետներ՝ Բ. Առաքելյանը, Վ. Հարությունյանը և Ս. Մնացականյանը, որոնք հանրահայտ փաստերի վկայակոչումով անառարկելիորեն ցույց են տվել, որ Գ. Ն. Զուբինաշվիլին միտումնավոր նսեմացրել է հայկական ճարտարապետությունը և այն համարել վրացական ճարտարապետության հավելվածը: Նա խառնել է ժամանակագրությունը, ճարտարապետական հուշարձանների ստեղծման հերթականությունը, արաբական տիրապետության ծանր դարերը համարել ճարտարապետական մշակույթի բարձրացման շրջան, հայկական կենտրոնամբեթ տաճարները դիտել Ջվարիից ընդօրինակված և արել գիտության հետ ոչնչով չառնչվող ու փաստազուրկ այլ հայտարարու-

[121] Նույն տեղը, էջ 339—340:

[122] Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 209—210:

[123] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 56—57:

[124] Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 7:

[125] Տե՛ս «Բազմավեպ», 1939, № 8—10, Հայկական և բիւզանդական ճարտարապետութիւն, էջ 234—244, C. Texier, Description de l'Armenia, la Perse et Mésopotamie, Paris, 1842, հ. 2, էջ 112, Х. Ф. Б. Линч, Армения. т. I, էջ 499, Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատ. ժողովածու, էջ 338—339 և այլուր:

թյուններ[126], փոխանակ լրջորեն լուսաբանելու հայ և վրաց ժողովուրդների ճարտարապետական առնչությունները, որ իրոք գոյություն ունեն և որոնց իսկական գիտական ուսումնասիրությունը կարող է հավասարապես օգտակար լինել դրանց մշակույթի պատմության համար։

Գրիգորիս Պալաբյանը, օգտվելով սկզբնաղբյուրների հիշատակություններից, հրապարակի վրա եղած գրականության տվյալներից և քաղաքի ավերակ շենքերում դիտվող ճարտարապետական յուրահատկություններից, Անիի ճարտարապետական ոճի (անիական ճարտարապետական ոճի) համար արձանագրում է հետևյալ առանձնահատկությունները՝ հատակագծի պարզություն, ամբողջ շինվածքի և դրա առանձին մասերի միջև՝ կատարյալ ներդաշնակություն, կամարների, սյուների, քանդակների ու զարդարանքների առատություն՝ առանց, սակայն, ավելորդությունների, միօրինակության բացակայություն, բարձր արվեստի քանդակագործներ, եկեղեցիներում՝ «խորհրդավոր մթնոլորտ» ու սրածայր կամողիկների առկայություն և այլն[127], որոնք ընդհանուր առմամբ ճիշտ են բնութագրում Անիի ճարտարապետությունը։ Այնուհետև նա նշում է, որ քաղաքի շենքերի քանդակները հարազատ են բնությանը և վերցված են բնությունից. դրանցում պատկերված են ծառեր, տունկեր, ծաղիկներ, կենդանիներ և այլն։ Անիի ճարտարապետական հուշարձանների վրա, իբրև կանոն, մարդկանց պատկերներ քիչ են քանդակել, հակառակ բյուզանդական ճարտարապետական հուշարձանների, որոնց վրա այնքան շատ են մարդու քանդակները[128]։

Անիի ճարտարապետության «մանրուքների» մասին խոսելիս աննշան է շրջանցել Թ. Թորամանյանի և Ն. Մառի՝ գործածված շինանյութերի, շարվածքների, տանիքի, կամարների առանձնահատկությունների, շաղախի պատրաստման եղանակի և այլ հարցերի մասին արած դիտողությունները, որոնք հիմնականում հանգում են հետևյալին։

Անին գերազանցապես աուֆակերտ քաղաք էր՝ նրա եկեղեցիները, պալատները, պաշտպանական պարիսպները և մյուս կառուցվածքները շարված էին տուֆով, որի մշակումը հասել էր բարձր վարպետության։ Իբրև ընդհանուր օրինաչափություն, Ն. Մառը նշում է, որ քաղաքում ինչքան հին է շենքը, այնքան նրա ճակատի

126 *Տե՛ս* Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре»). Ереван, 1969.

127 Պալաբյան Գրիգորիս, *Նկարագրություն Անիի ավերակների*ն, էջ 77—78։

128 Նույն տեղը, էջ 78 և 79։

շարվածքի համար օգտագործել են ավելի խոշոր քարեր[129]։ Տուֆն այստեղ մշակել են ըստ նշանակության։ Օրինակ՝ կամարների համար օգտագործվող տուֆ քարը կտրել են 12—15 սանտիմետր չափերով և դրանք շարելուց հետո լցրել են կրաշաղախը[130]։ Իսկ սովորական պատերի համար օգտագործել են դարձյալ սրբատաշ, բայց ավելի բարակ քարեր՝ ըստ էության սալիկներ։ Ընդ որում կարևոր բոլոր հուշարձանների պատերը և՛ ներսից, և՛ դրսից շարված են սրբատաշ քարերով այնպիսի վարպետությամբ, որ դրանց միջև եղած գծերը հազիվ են նկատվում։ Անիում հետագա շրջանում որոշ տարածում է գտել նաև երկգույն՝ սև ու դեղին (կամ սև ու կարմիր) քարերով՝ «շախմատաձև» քարապատումը։ Այդ եղանակով են քարապատել եկեղեցիների, պաշտպանական պարիսպների որոշ մասեր։ Պահպանված են այդպիսի՝ «շախմատային» քարապատում ունեցող երկու կառուցվածքներ՝ մեկ եկեղեցի և մեկ տուն, որոնք երկուսն էլ կոչել են «շախմատային»[131]։

Մեզ հետաքրքրող շրջանում Անիում շինարարության համար բազալտ հազվադեպ են օգտագործել, չնայած դրա շրջակայքը հավասարապես հարուստ էր նաև տրաքարերով։

Մատենադարանի վկայությամբ աղյուսն ընդհանրապես քարաշատ Հայաստանում քիչ է գործածվել։ Առաջին դարում արդեն համընդհանուր գործածություն ուներ տուֆը, բայց իբրև շարվածքի նյութ երբեմն օգտագործվել է նաև աղյուսը, որից կառուցած երկու վանքեր (Սրվեղի և Կիրանց վանքերը) կանգուն վիճակում հասել են մինչև մեր օրերը[132]։ Իսկ Անիում աղյուսը դրեթե բացառապես գործածվել է ջրաշինարարական կառույցներում։ Դրանցում տուֆի գործածությունը, ջրաթափանց լինելու պատճառով, հարմար չէ։ Անիի Միջնաբերդի ջրամբարը, որ շինված էր պալատին կից, ամբողջովին աղյուսաշեն է և, ըստ Թ. Թորամանյանի ենթադրության, կառուցվել է VII դարում՝ Կամսարականների օրոք[133]։

Անիում մեծ վարպետությամբ են կառուցել նաև տանիքները։ X դարից ի վեր հայ ճարտարապետներն ու շինարարները տանիքների համար կղմինդրի փոխարեն սկսում են օգտագործել տուֆը՝ բարակ տախտակների ձևով, որոնց եզրերին արած փոսիկներն ու ելուստները հնարավորություն էին տալիս դրանք կղմինդրի նման այնպես շարել կողք-կողքի, որպեսզի արանքներով ջուրը չթափան-

129 Н. Я. Марр, Ани, *էջ 121*։

130 Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 138*։

131 *Տե՛ս* Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., *էջ 261*։

132 Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատ., աշխ. ժող., էջ 141—142*։

133 Նույն տեղը, *էջ 142*։

ցի[134]: Չթավականանալով դրանով, տանիքի տուֆի բոլոր քարերը շարելուց հետո, օծել են ձեթով, որպեսզի վերացնեն տուֆի՝ ջուր ու խոնավություն կլանելու ընդունակությունը[135]: Մեզ թվում է, որ Անիում ձիթհանքերի այնքան առատությունը պայմանավորված էր նաև շինարարության համար ձեթի մեծ պահանջով: Իրոք, դժվար չէ կռահել, որ տուֆածածկ յուրաքանչյուր շենքի համար պահանջվում էր հսկայական քանակությամբ ձեթ:

Անիում Բագրատունյաց թագավորության շրջանում փայտանյութը ևս լայն չափերով օգտագործվել է շինարարության մեջ: Բնակարանների առաստաղները, հարկերի միջև եղած ծածկերը, դռներն ու լուսամուտները, որոշ դեպքերում նաև՝ սյունները պատրաստում էին փայտից՝ մայրու, եղևնու, կաղնու, հացենու, ընկուզենու փայտից[136]: Անին ամենայն հավանականությամբ իր փայտանյութը հիմնականում ստանում էր այժմյան Սարիղամիշի անտառներից, որոնք տարածվում են Կարս գետի վերնագավառում: Անիի ավերակներում հայտնաբերված են Բագրատունյաց ժամանակների ծածկերի համար օգտագործված քանդակազարդ գերաններ և զանազան կամարներ: Այդ գերանները, որ ի հայտ էին եկել արքունական պալատի ստորին մասում, հետագայում կառուցված շինությունների վրա, Թ. Թորամանյանի վկայությամբ, մինչև առաջին համաշխարհային պատերազմը պահպանվում էին Անիի թանգարանում[137]:

Լայն գործունեություն է ունեցել կրաշաղախը, որ այնքան կպչուն է և ժամանակի ընթացքում տուֆի, բազալտի կամ քարեղեն այլ շինանյութերի հետ կազմում է միաձույլ զանգված: Անիի ճարտարապետության պատմության համար առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում շինարարական շաղախ պատրաստելու եղանակը, որ վերականգնվել է Գագկաշեն եկեղեցու պեղումների ընթացքում հայտնաբերված «քարեղեն տաշտ»-ի և նրա մեջ գտնված ավազի ու կրի փոշու օգնությամբ: Աննեխիներն այդ կրաշաղախը, ինչպես ենթադրում է Թ. Թորամանյանը, պատրաստել են մեզ հայտնի սովորական եղանակով (ջրի, այրված կրի և ավազի միջոցով)[138]: Սակայն ծեփանյութին Անիում, հատկապես Բագրատունիների թագավորության շրջանում, շատ քիչ է օգտագործվել: Քանի որ կարևոր հուշարձանները ներսից ու դրսից շարվում էին (ավելի ճիշտ՝ քարապատվում էին) սրբատաշ քարերով և «արատներ ծածկող» ծեփի կարիքը չունեին: Ծեփն օգտագործվել է մասնավոր տներում, այն էլ XII—XIII դարերից սկսած[139]: Բագրատունյաց շրջանի նրա որոշ հուշարձանների (Կաթողիկե, ս. Փրկիչ, Ապուղամրենց եկեղեցի) ներսի կողմերին նկատվող ծեփերն արված են XIII դարից ոչ առաջ և նկարազարդ են[140]:

Ինչպես երկրի մյուս մասերում ու քաղաքներում, այնպես էլ Անիում համեմատաբար լավ են պահպանվել պաշտամունքային հուշարձանները՝ եկեղեցիներն ու վանքերը, որոնք թշնամու կողմից քիչ էին ավերվում, ամուր էին կառուցված և, բացի դրանից, պարբերաբար ենթարկվում էին վերանորոգման: Որոշ չափով լավ են պահպանվել նաև պաշտպանական կառուցվածքները՝ պարիսպները, բուրգերը, ստորերկրյա անցքերն ու սրահները, խոռոչներն ու գաղտնարանները: Ամենից վատ պահպանվել են քաղաքացիական շենքերը՝ բնակելի տները, պալատները, տնտեսական շենքերը. դրանք ավելի հաճախ են ենթարկվել ավերումների: Բացի դրանից, այդ կարգի շենքերը, ինչպես նշում է Թ. Թորամանյանը, միշտ ենթակա են եղել «փոփոխվելու, վերաշինվելու՝ քանի դեռ քաղաքը կենդանի է», և այդ պատճառով էլ այսօրվա կանգուն քաղաքներում, գրում է նա, «անփոփոխ պահված 150 տարվա հնություն ունեցող շենք դժվար է գտնել»[141]: Այստեղից էլ միանգամայն հասկանալի է, թե ինչու հնագիտական պեղումների ընթացքում Բագրատունիների ժամանակներին լիովին «հարազատ» մնացած շենքերի ու հուշարձանների ավերակներ համեմատաբար քիչ են հայտնաբերվել:


Հայկական մշակույթի պատմության մեջ ճարտարապետությունը գրավում է կենտրոնական տեղ, իսկ միջնադարյան հայկական ճարտարապետության մեծագույն կենտրոնը Անին էր, որը դարձել էր ճարտարապետական մշակույթի մեծ «խառնարան»[142], «Հայաստանում ճարտարապետական պետական ուղղության օրենսդիրը»[143],— ինչպես գրում են ճարտարապետության պատմության մեր ժամանակների մասնագետները: Անին այդ դիրքին էր հասել մայրաքաղաք դառնալուց հետո՝ X—XI դարերում, օգտագործելով մինչ այդ Հայաստանի զարգացած մասերի ճարտարապետական հարուստ ժառանգությունը (Զվարթնոց, Էջմիածին, Տաթև և այլն):

---

[134] Նույն տեղը:
[135] Նույն տեղը:
[136] Նույն տեղը, էջ 145:
[137] Նույն տեղը, էջ 144:
[138] Նույն տեղը, էջ 141:

[139] Նույն տեղը:
[140] Նույն տեղը:
[141] Նույն տեղը, էջ 181:
[142] Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 204:
[143] К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, էջ 101:

X դարի երկրորդ կեսից և, հատկապես, XI դարում Բագրատունիների մայրաքաղաքում աշխատում ու ստեղծագործում էին «երկրի ականավոր ճարտարապետները, որոնց ստեղծագործությունը բնութագրում է ճարտարապետական մտքի հետագա զարգացման ուղիները» և իր ազդեցությունն է թողել այդ ժամանակներում երկրի տարբեր մասերում աշխատող վարպետների վրա[144]: Այլ կերպ ասած, նախորդ ժամանակների դասական ճարտարապետական ժառանգության հիմքի վրա է ձևավորվել Անիի ճարտարապետական դպրոցը, որն իր հերթին սկսել է իր ազդեցությունը թողնել երկրի տարբեր տեղերում զարգացող ճարտարապետական արվեստի վրա ընդհանրապես: Այսպես, մասնագետները նշում են, որ Վահրամ Պահլավունու կառուցած Մարմաշենի եկեղեցին իր ճարտարապետական ընդհանուր կառուցվածքով նման է Անիի Մայր տաճարին, Խծկոնքի վանքի գլխավոր տաճարը՝ Անիի Գագկաշեն եկեղեցուն, նմանություններ կան մայրաքաղաքի և երկրի տարբեր մասերի գավիթների միջև և այլն[145]: Չնայած բոլոր ճարտարապետ-պատմաբանները վկայում են, որ այդ նմանությունները երբեք չեն ջնջում դրանցից յուրաքանչյուրի ճարտարապետական ինքնուրույնությունը, մանավանդ հարդարանքի տեսակետից: Հետաքրքիր է, որ նույնիսկ նոր ժամանակներում եկեղեցաշինության մեջ օգտվում էին Անիի հուշարձանների ճարտարապետական լուծումներից. Ալեքսանդրապոլում (Լենինական) XIX դ. վերջերին կառուցված ս. Խաչ եկեղեցին նման է Անիի Մայր տաճարին, և պատմում են, որ դրա կառուցող վարպետն այն ուղղակի ընդօրինակել է:



Քանդակազարդ քար

Անիի ճարտարապետական մեծ վերելքը, ինչպես ասվել է այլ առիթով, արձանագրել է նաև դրա պատմության մեծ նշանակություն. Մառը[146]: Սակայն նա Բագրատունիների շրջանը համարել է երկրում նախկինում ստեղծված ճարտարապետական հուշարձանների կրկնության ժամանակներ և, ընդհանրապես, թերագնահատել է X—XI դարերի անհիական ճարտարապետության նշանակությունը, ինչպես միանգամայն իրավացիորեն նկատում է Կ. Ղաֆադարյանը[147]:

Ինչպես ասվեց, XIX դարում ճարտարապետ-պատմաբանների մոտ այն մտայնությունը կար, թե հայկական ճարտարապետությունն ընդօրինակություն է «շրջապատող մեծ ազգերու ճարտարապետական արվեստներուն»[148]: Մասնագետները հայկական ճարտարապետության մեջ, միակողմանիորեն, միկրոսկոպիկ եղանակով ամենուրեք փնտրում էին հունական, բյուզանդական, դոթական, պարսկական, արաբական, սելջուկյան ազդեցություններ, լոկ «ազդեցություններ», առանց փոխազդեցության վրա ուշադրություն դարձնելու, որը որոշ չափով ընդունելի կլիներ: Սակայն հետագայում, ինչպես ասվեց, հավաքված հսկայական նյութերի ճնշման տակ եվրոպական ողջախոհ ուսումնասիրողներից շատերը հրաժարվեցին ավանդույթի ուժ ստացած այդ տեսությունից և սկսեցին ավելի գիտականորեն խորամուխ լինել հարցի մեջ: Առանձնապես նշելի են ֆրանսիացի ականավոր գիտնական Տեքսիեի, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, հայտնի արվեստաբան Ստրժիգովսկու, վերջինիս աշակերտ՝ իտալացի Յոսեֆ Ֆրասսոնի, A. Choisy-ի, Լինչի, ինչպես և Թ. Թորամանյանի[149] և մեր օրերի մի շարք հետազոտողների ուսումնասիրությունները որոնց եզրակացությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Հայկական ճարտարապետությունն ինքնատիպ, ուրույն մի ճարտարապետություն է և ոչ թե այլ ազգերի ճարտարապետական ձևերի կրկնություն:

2. Հայկական ճարտարապետությունն իր ազդեցությունն է թողել բյուզանդականի վրա, Հայաստանը համարվում է «բոլոր զբսբեթավոր ճարտարապետության» «ծննդավայրը»[150] և «հունական» կոչված խաչաձև եկեղեցին իրականում հայկական ծագում ունի[151]:

---

[114] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 182:

[145] Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 105:

[146] Н. Я. Марр. Ани, էջ 9 և 35:

[147] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 262:

[148] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 56—57:

[149] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 68 և 178, Պալասյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 74—75, «Բազմավեպ», 1939, № 8—10, էջ 232—244 և այլուր:

[150] Տե՛ս «Բազմավեպ», 1939, № 8—10, էջ 232:

[151] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 68:

Ռոբերտ Կեր Փորտերը Թուրքիայի հայերի մասին իր հիշատակությունների մեջ (1817—1820) գրում է. «Այս վայրը [Ամասիան] նշանավոր է որպես Ստրաբոնի ծննդավայրը։ Մտնելով քաղաքը, հետաքրքրության առաջին առարկան քրիստոնեական մի եկեղեցու ավերակներն էին, մի գեղեցիկ նմուշ նույն ոճով, ինչ որ տեսել էի Անիում՝ նվիրական ճարտարապետության ամենագեղեցիկ մնացորդների»[152]։ Այդպիսի օրինակներ կային և ուրիշ տեղերում։

3. Հայկական ճարտարապետության տարրերը, Անիի գաղթականների միջոցով XI—XII դարերում տարածում են գտել Սև ծովի առափնյա շրջաններում, Մոլդավիայում, Արևմտյան Ուկրաինայում, Լեհաստանում և այլուր։

4. Արևմտյան Եվրոպայում այնքան մեծ տարածում գտած գոթական ոճի արմատները գտնվում են Անիում. Բագրատունյաց մայրաքաղաքի Մայր տաճարն իր մեջ արդեն պարունակում էր գոթական ոճի տարրերը, որ հետագայում զանազան եղանակներով և ուղիներով (գերազանցապես Բյուզանդիայի վրայով) մուտք գործեցին Եվրոպա։

5. Հայկական ճարտարապետության ոճի տարածողներից էին հենց իրենք՝ հայերը, աշխարհի տարբեր անկյուններում սփռված հայերը, որոնց թվում կային նաև ճարտարապետներ ու շինարարներ[153]։

Թվում է, թե ճարտարապետական ազդեցությունների ու փոխազդեցությունների բարդագույն հարցը դեռևս շատ ուսումնասիրողներ կունենան և լուսաբանելու համար մեծ ջանքեր կպահանջվեն։ Մենք պատշաճին ենք համարում միայն ասել, որ համազոր ճարտարապետությունների ուսումնասիրման ժամանակ հարցին փոխադարձ ազդեցության միտումով մոտենալն ավելի մեծ արդյունքներ կտար՝ առանց սակայն աչքաթող անելու յուրաքանչյուր ազգի ճարտարապետության խաղացած դերը և՛ երկրի ներսում, և՛ միջազգային մասշտաբով։ Անին իբրև ճարտարապետական մի մեծ թանգարան, իբրև հայկական նախաարարական շրջանի և հետագայի՝ X—XIII դարերի ճարտարապետական ոճերի համաձույլ կենտրոն, անհատական ճարտարապետական արվեստի օրրան՝ իր ազդեցությունն է թողել և՛ երկրի ներսում, և՛ դրանից դուրս, միանգամայն զգալի ավանդ մտցնելով արվեստի այդ բնագավառի համաշխարհային գանձարանը։

152 Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934, էջ 846։

153 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտարապետ. պատմ., աշխ. ժողովածու, էջ 68։

Միջին դարերում Հայաստանում կառուցվել են տասնյակ քաղաքներ ու հարյուրավոր հուշարձաններ՝ եկեղեցիներ, բերդեր, կամուրջներ, քարավանատներ և այլն։ Դրանք բոլորը կառուցվում էին ճարտարապետների նախագծով, որոնք հենց նույն քարագործ-վարպետներն էին։ Սակայն մեր հուշարձանների այդ հեղինակների անունները պատմագիրների երկերում հազվադեպ են հիշատակվում։ Վիմագիր արձանագրություններում հիմնականում հիշատակվում են եկեղեցիները կառուցող, վերանորոգող, դրանց կալվածքներ ու հարստություններ նվիրող «բարերարների» մասին, և, օրենքի ուժ ունեցող, տարբեր աստիճանի իշխանավորների կարգադրությունները։ Հուշարձանը կառուցող վարպետ-քարագործը (կամ ճարտարապետը) միայն երբեմն համարձակվում էր անունը քանդակել իր կերտած շինության վրա, այն էլ ոչ թե ճակատին, կամ լավ երևացող տեղում, այլ՝ աննկատելի մասում։ Այլ կերպ ասած, հիշատակության արժանանում էին ոչ թե կառուցող վարպետներն ու ճարտարապետները, այլ «բարերարները» ու իշխանավորները։ Վիճակն ավելի անհնախանձելի է բյուզանդական իրականության մեջ։ Ս. Ճեվահիրճյանը վկայում է, որ այստեղ, մոտ 1100 տարվա ճարտարապետության պատմություն ունեցող այդ մեծ պետության մեջ՝ հիշատակվում են միայն մի քանի հայտնի ճարտարապետների անուններ[154]։

Միջնադարյան Հայաստանում մեզ հայտնի ճարտարապետ-վարպետներից էին Իսրայել Գուսաղջեցին (VII դ.), որը կառուցել է Բագրևանդ գավառի ս. Հովհաննես եկեղեցին (638 թ.)[155], Հովհաննը (VII դ.), որի «բարձրաքանդակ պատկերը» (որմնադրական գործիքները ձեռքին) հայտնաբերված է Զվարթնոցի ավերակներում։ Թ. Թորամանյանի կարծիքով, հենց նա էլ եղել է Զվարթնոցի կառուցման գլխավոր վարպետը[156]։ Այնուհետև, հայտնի են Մանվել ճարտարապետը (X դ. առաջին կես), որի գլուխգործոցը Աթթամարի ս. Խաչ տաճարն է, Սամեհան Արեղան (X դ. առաջին քառորդ), հռչակավոր Տրդատը (X դ. վերջեր և XI դ. առաջին քառորդ), Հակոբ Ջահկեցին (XII դ.), Հեսուն (XII դ.), Գորգը (XII դ.), Անդրիասը (XIII դ, Խծկոնքում), Գայլածուկ վարդապետը (XIII դ., Գեղարդում), Սիրաեսը (Սյունիքում, XIII դ.), Կարենցին (XIII դ.),

154 Ս. Ճեվահիրճյան, Տրդատ ճարտարապետ Հայոց, «Անահիտ» ամսագիր, Բեյրութ, 1952, № 7—8, էջ 347։

155 Նույն տեղը։

156 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 252։ Հմմտ. «Անի» ամսագիր, 1952, № 6—7, էջ 347։

Շաճերը (XIII դ.), Ջուղիկը (XIII դ.), Շահիկ ճարտարապետը՝ Եղվարդի փոքր եկեղեցու կառուցողը (1321 թ.) և ուրիշներ[157]։

Նշվածներից Անիի հետ է կապված Տրդատի, Ջուղիկի, Շահերի գործունեությունը։ Ս. Բարխուդարյանը ճարտարապետ կամ քարագործ վարպետներ է համարում նաև Անիի վիմագիր արձանագրություններում հիշատակված Սարգսին, Գրիգորին և Վարդիկին, որոնք ապրել են XIII դարում[158]։

Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանի Անիի ամենահայտնի ճարտարապետը Տրդատն էր, որն ապրել է X դարի երկրորդ կեսին և XI դարի առաջին տասնամյակներում։ Շատ աղքատիկ են նրա կյանքի մասին եղած տեղեկությունները. հայտնի չէ, թե ե՞րբ է ծնվել և ո՞րտեղ, ի՞նչ կրթություն է ստացել (իսկ նրա գործերից երևում է, որ նա կրթություն պետք է ստացած լիներ կամ աշակերտած որևէ ականավոր քարագործ վարպետի), ինչքա՞ն է տևել նրա ճարտարապետական գործունեությունը, նրա ստեղծագործությունների ցանկը, գրաված դիրքն Անիում (արդյո՞ք գլխավոր ճարտարապետը չէր այդ նոր ձևավորվող քաղաքի), ե՞րբ է մահացել և այլ հարցեր, որոնք այնքան հետաքրքրում են պատմաբանին։ Այդ պատճառով էլ նրա կենսագրությունն ուրվագծվում է միայն շատ ընդհանուր գծերով՝ գերազանցապես կապված ճարտարապետական-շինարարական գործունեության հետ, որի մասին մի քանի կարևոր տեղեկություններ է հաղորդում ժամանակակից պատմագիրը՝ Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկը։

Տրդատն իր ժամանակի Հայաստանի խոշորագույն ճարտարապետն էր, որին ճարտարապետության մեծանուն մասնագետ Սարգիսովսկին կոչում է «Անիի գլխավոր ճարտարապետ», «ավագ ճարտարապետ», «գոթական ոճը տանող ճանապարհի հայտնագործող», «պալատական ճարտարապետ»[159]։ Ճարտարապետության պատմաբաններից շատերը նրան համարում են հանճարեղ։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տրդատի գործունեությունը հիմնականում կապված էր Անիի հետ, ուստի Գ. Լևոնյանը նրան կոչել է ուղղակի «Տրդատ Անեցի»։

Ինչքանով հայտնի է, Տրդատի գործունեությունն սկսվել է X դարի 80-ական թվականներից, երբ նա, Հայոց կաթողիկոսների այդ ժամանակվա աթոռանիստ Արգինայում, Խաչիկ Արշարունի Ա կաթողիկոսի օրոք, 987—988 թվականներից ոչ ուշ (ըստ Տոկարսկու՝ 990 թ.) կառուցել է հայրապետական պալատի Կաթողիկե եկեղեցին։ Դրա ավերակները, որ հնագիտական առումով չեն ուսումնասիրվել, գտնվում են Ախուրյանի աջ կողմում. մինչև այժմ դրա մի պատը խարխուլ վիճակում կանգուն է[160]։

Տրդատի գործունեության ամենաբեղմնավոր շրջանը սկսվում է դրանից հետո, երբ նա հաստատվում է Անիում։ Սակայն այստեղ նրա ղեկավարությամբ Սմբատ II-ի օրոք սկսված Մայր տաճարի շինարարությունը շուտով ընդհատվում է։ Տրդատը ժամանակավորապես թողնում է Անին (989 թ.) և ուղևորվում Կոստանդնուպոլիս, որտեղ նրա նախագծով ու ղեկավարությամբ վերականգնվում է ս. Սոֆիա տաճարի (VII դ.) երկրաշարժից նոր փլված գմբեթը, որը պահպանվում է մինչև օրս։ Հայ ճարտարապետը դրանով մեծ համբավ ձեռք բերեց ամբողջ կայսրության մեջ։

Սակայն Տրդատի գլուխգործոցը Անիի Մայր տաճարն է, որի շինարարությունն սկսվել էր Սմբատ II-ի օրոք, 988 կամ 989 թվականին և ավարտվել է 1001 թվականին՝ Գագիկ I-ի կին, Կատրամիդե թագուհու հոգացողությամբ։ Մասնագետները գտնում են, որ միայն այս տաճարը բավական է Տրդատին հանճարեղ կոչելու։

Վերջին տասնամյակներում լիովին պարզվեց, որ Անիի Գագկաշեն տաճարի գլխավոր ճարտարապետը նույնպես Տրդատն է։ Այդ մասին Ասողիկի ձեռագրերից մեկում կա ուղղակի վկայություն. «Յաղագս շինելոյ արքային Գագկայ ի քաղաքն Անւոյ զեկեղեցին անուամբ սրբոյն Գրիգորի. Տրդատ վարդապետ [վարպետ] եկեղեցւոյն»[161]։ Այդպես է վերնագրված եկեղեցու շինությանը նվիրված Ասողիկի պատմության այդ հատուկ գլուխը։ Գագկաշեն տաճարի կառուցումն ավարտվում է 1110 թվականին։ Այն կառուցված էր այդ ժամանակներում ավերված Զվարթնոցի նման։ Ս. Սոֆիայի գմբեթի վերաշինումը և ավերակների հիման վրա Զվարթնոցի ի-

157 Տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 345, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 25 և 169, Մ. արհեպիսկոպոս Տեր-Մովսեսյան, Հայկական երեք վանքեր, Երուսաղեմ, 1938, էջ 77, Գ. Լևոնյան, Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 1949, № 1—2, Ս. Ճեվահիրճյան, Տրդատ ճարտարապետ Հայոց, «Անահիտ», 1952, № 6—7, էջ 347—348, Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963, էջ 75—76, К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 177 և այլն։

158 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, էջ 75—76։

159 Տե՛ս К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 17 և 106—107։

160 Նույն տեղը։ Տե՛ս նաև Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 191։

161 Տե՛ս Ք. Փորագյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 276, ձեռնարկագրություն Կ. Դաֆեդարյանի։ Հմմտ. Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, էջ 36։

րական կառուցվածքի վերականգնումը նույնպես մեծ դժվարությունների, տքնաջան աշխատանքի ու առանձին ունակությունների հետ կապված գործեր էին, որոնք մեծ փայլ էին տալիս ճարտարապետին։

Տարբեր ժամանակներում, տարբեր մասնագետներ Տրդատին Անիի Սմբատյան պարիսպների որոշ հատվածների, Մարմաշենի մեծ տաճարի, Կեչառուքի մեծ եկեղեցու, Սանահինի ու Հաղպատի վանքերի համալիրների առանձին կառույցների, Անիի ս. Փրկիչ եկեղեցու (1035 կամ 1036 թ.), Ամբերդի եկեղեցու և այլնի մասնակից կամ հեղինակ են համարել[162]։ Սրանք, անշուշտ, հաստատ փաստերի վրա չեն հենված։ Սակայն հաստատ է, որ նշված վերջին կառույցներն որոշ չափով կրում են Տրդատի ստեղծագործությունների (հատկապես Մայր տաճարի) ոճական ու կառուցողական ազդեցությունները։ Հենց այդ էլ կովան է ծառայել այդպիսի՝ հավանականությանը մոտ ենթադրությունների համար։

Դ. Քաղաքի հատակագիծը, բարեկարգումը և կոմունալ պայմանները

Ականավոր երկրաբան Հերման Աբիխը, որ բավականին ծանոթացել է Անիի ավերակներին և հատուկ հոդվածով իր ծանրակշիռ խոսքն ասել Հայոց երբեմնի մայրաքաղաքի մասին, դրա հատակագծի վերականգնման վերաբերյալ հետևյալն է գրում. «Չնայած և խոսք չի կարող լինել այդ մնացորդների (Անիի ավերակների— Թ. Հ.) միանգամայն անկանոն տեղադրության մասին, սակայն այնուամենայնիվ ամենամանրազնին ուսումնասիրության դեպքում էլ դժվար կլիներ, եթե չասենք գրեթե անհնար, առանց պեղումներ կատարելու, բանալի գտնել հին քաղաքի գոնե մոտավոր ճշգրիտ հատակագիծը վերականգնելու համար։ Փողոցների հետքերը, որ իմացվում է որոշ տեղերում, շուտով նորից անհետանում են, և հետազոտությունների արդյունքը մնում է միայն հավանական ենթադրությունը, որ հին Անիի գլխավոր մասը բաղկացած էր բազմաթիվ նեղ փողոցների միացումից՝ դրանց վրա կուտակված տներով հանդերձ...»[163]։

[162] Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1949, № 1—2, էջ 55, К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 18—21, 102։ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան ճարտարապետներ և քարագործ վարպետներ, էջ 36—37 և այլն։

[163] Г. Абих, Ани, статья акад. Г. В. Абиха, էջ 281։

2. Արիխը ավերակ քաղաքի հատակագծի առաջին վերականգնողներից է[164] և նրա ասածները միանգամայն ընդունելի են։ Ավելին, երկարատև պեղումներից և քաղաքի տարածքում կատարված բազմաթիվ հետազոտություններից հետո կազմված հատակագիծը դարձյալ ունի պակասավոր ու անորոշ շատ կողմեր. դեռևս հայտնի չեն փողոցներից շատերը, նրբանցքները, հրապարակները և հատակագծային այլ տարրեր։ Եվ փաստորեն ամենավերջին հատակագծերը նույնիսկ ոչ թե արտացոլում են վաղեմի քաղաքի փողոցների, նրբանցքների, հրապարակների շատ թե քիչ արժանահավատ ցանցը[165], այլ ամբողջ քաղաքի տարածքում ցրված կարևոր ավերակների տեղադրությունը՝ կղզիների ձևով։ Այլ կերպ էլ լինել չէր կարող։ Հնագիտական պեղումներն ընդգրկել են ծավալուն քաղաքի միայն մի փոքր մասը և առանձին կետեր տարբեր անկյուններում, որոնց հիման վրա կատարյալին մոտ հատակագծի վերականգնման մասին խոսք անգամ չի կարող լինել։

Այդ բոլորով հանդերձ, քաղաքի ընդհանուր ճարտարապետության ուսումնասիրությանը զուգընթաց հսկայական գործ է կատարված նաև դրա հատակագծի մոտավոր վերականգնման ուղղությամբ։

Քաղաքի հատակագծային կառուցվածքը ձևավորվել է ոչ միանգամից։ Սկզբնական շրջանում գոյություն ուներ միայն Միջնաբերդն իբրև Կամսարականների ֆեոդալական ամրոց։ Հետագայում, մայրաքաղաք հռչակվելուց հետո, այդ ամրոցը վերածվում է Միջնաբերդի, որի մոտ ծավալվում են բուն քաղաքն ու դրա արվարձանները[166]։

Քաղաքի այդ երեք մասերից յուրաքանչյուրն ուներ հատակագծային առանձնահատկություններ։ Փողոցների, նրբանցքների, բակերի ու հրապարակների, տարբեր կարգի կառուցվածքների տեղադրությունը Միջնաբերդում ու բուն քաղաքում կատարված էր ավելի կանոնավոր և տարածքն ու դիրքը օգտագործված էին ավելի կատարյալ ձևով, քան արվարձաններում։ Հավանական կարելի է համարել, որ քաղաքի կառուցապատումը կատարվում էր ոչ թե կամայականորեն՝ ով որտեղ և ինչպես ցանկանում էր, այլ որոշակի հսկողության ներքո։ Մի՞թե պատահական էր, որ Հայտնի կառույցները՝ Մայր տաճարը, Գագկաշեն եկեղեցին, Մանուչեի մզկիթը,

[164] Հետաքրքիր է, որ Անիով հետաքրքրվել է նաև Ա. Ս. Պուշկինը, որը էրզրումում կատարած ճանապարհորդության ժամանակ գծագրել է դրա կարևոր ավերակների հատակագիծը։

[165] Տե՛ս Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 33։

[166] Նույն տեղը, էջ 6 և 21—22։

Պարոնի պալատը և այլ հուշարձաններ, որոնք զարդարում էին քաղաքը, տեղադրված էին այնպիսի կետերում, որ ավելի էին գեղեցկացնում քաղաքի ընդհանուր համայնապատկերը։ Քաղաքաշինական տեսակետից շենքերի ճիշտ տեղադրությամբ առանձնապես հայտնի էր Նոր քաղաքը, որը ծավալվել էր հիմնականում հին կառույցներից ազատ տարածության վրա և այն կառուցապատվել էր մեծ ու գեղեցիկ քաղաքին սազական ձևով։ Մինչդեռ Միջնաբերդը ձևավորելիս պետք է հաշվի նստեին հնից եկող շինությունների հետ, իսկ արվարձաններում ընդհանրապես քիչ էին հաշվի առնում քաղաքի հատակագծի շահերը. այստեղ շենքերի դասավորության որոշ կանոնավորություն էր ստեղծվում շնորհիվ այն բանի, որ անամերձ բանջարանոցների առկայության շնորհիվ տներն իրարից գտնվում էին որոշակի հեռավորության վրա և հաճախ հենց այդ փոքրիկ հողամասերի հետ առանձին-առանձին պարսպապատ էին։

Նոր քաղաքը միաժամանակ քաղաքի ամենաշքեղ, ճարտարապետական առումով քաղաքի ամենակարևոր մասն էր, որը կառուցապատված էր եկեղեցական ու քաղաքացիական մոնումենտալ շատ շենքերով (Մայր տաճար, Գագկաշեն եկեղեցի, ս. Փրկիչ, Ապուղամրենց եկեղեցի, իշխանական պալատներ և այլն)։ Մեծ կառույցները հիմնականում տեղադրված էին բուն քաղաքի՝ Ախուրյանի ու Ծաղկոցաձորի ձորեզրերին, քաղաքի հարավային մասում, երևում էին քաղաքի տարբեր տեղերից և ավելի գեղեցկացնում էին դրա ընդհանուր համայնապատկերը[167]։

Սովորական բնակելի տները քաղաքում և Միջնաբերդում, ինչպես ասվեց, տեղադրված էին մեծ խտությամբ, ոչ թե փողոցների երկայնքով՝ մեկ շարքով, այլ դրանց խորքում, շրամոտքով ուղղված ոչ թե դեպի փողոց, այլ դեպի բակ[168]։ Այնպես որ սովորական բնակելի տները (որոնք մեզ հայտնի են ոչ թե X—XI դարերից, այլ ավելի ուշ ժամանակներից) քաղաքին առանձին շուք չէին տալիս։ Այդ կարգի տների մեջ քաղաքը գեղեցկացնում էին իշխանական պալատներն ու դղյակները։ Մոնումենտալ կառուցվածքներից քաղաքին մեծ շուք էին տալիս պաշտպանական պարիսպներն իրենց բարձրաբերձ բուրգերով ու շքեղ մուտքերով, հյուրատները, կամուրջները և այլն։

Անիով զբաղվող գրեթե բոլոր հեղինակներն արձանագրում են, որ քաղաքն ընդհանրապես խիտ էր կառուցապատված, ազատ տե-

[167] Նույն տեղը, էջ 31—33։

[168] Н. Я. Марр, XI Анийская археологическая кампания. СПб, 1913, նույնը, Ани, էջ 106. Համմ. А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 94։

ղեր քիչ կային՝ բակերը փոքր էին և թվով քիչ, տները հաճախ ուղղակի կպած էին իրար՝ ունենալով մի ընդհանուր պատ, հրապարակներ քիչ կային և եղածներն էլ ընդարձակ չէին։ Նրանք, ի միջի այլոց, տարածքի այս սղությունն էլ հենց համարում են Քարանձավային Անիի ստեղծման հիմնական պատճառներից մեկը[169]։

Փողոցներն ունեին անկանոն դասավորություն։ Դրանցից անջատվում և տարբեր ուղղությամբ ձգվում էին մեծ ու փոքր նրբանցքները։ Քաղաքի կարևոր փողոցները հիմնականում սկսվում էին Սմբատյան պարիսպների դարպասներից և ձգվում դեպի հարավ։ Համեմատաբար լավ է ուսումնասիրված քաղաքի Գլխավոր փողոցը, որն սկսվում էր Սմբատյան պարսպի գլխավոր դարպասից և ձգվում մինչև քաղաքի հարավային ծայրաշրջանը։ Այս փողոցը, որ Ն. Յա. Մառի աշխատակիցները կոչել են նրա անունով, հնագիտական ուսումնասիրության է ենթարկվել 1908, 1909, 1910 և 1911—1912 թվականներին[170]։ Փողոցի երկու կողմերում մեծ թվով բնակելի տների ավերակներ էին, որոնց մի մասն ըստ երևույթին ունեցել է մեկից ավելի հարկեր. կան քարե աստիճանների մնացորդներ։ Գլխավոր փողոցի երկայնքով անցնում էր քաղաքի ջրմուղի հիմնական մայրուղին։ Լայնությունը հասնում էր 4—5 մետրի, որտեղով կարող էին ազատ երթևեկել ոչ միայն հետիոտն մարդիկ, այլև անվային փոխադրական միջոցները։ Փողոցի ոլորաններում, տները պաշտպանելու համար, դրված էին հսկա քարակոշտեր, իսկ տեղ-տեղ պատրաստել էին քարե նստարաններ՝ հանգստանալու համար[171]։ Հետաքրքիր է, որ նոր ժամանակներում այդպիսի նստարաններ կային նաև Ալեքսանդրապոլում (Լենինական), Ախալցխայում և մի քանի այլ քաղաքներում։

Առաջավոր Ասիայի մյուս երկրների խոշոր քաղաքների նման բարեկարգման առումով Անին նույնպես ուներ ծայրահեղ հակադրություններ։ Նրա հետամնաց թաղերն ու արվարձանները ,ինչպես ակնհայտ է դառնում մեզ հասած ավերակներից, հատուկ բարեկարգման չէին ենթարկվում։ Իսկ գլխավոր փողոցները և կենտրոնական հրապարակները բարեկարգ էին, սալահատակված, կամ խճապատված և կառուցապատված էին համեմատաբար լավ շենքերով։ Իսկ պեղումների ընթացքում քաղաքի Գլխավոր փողոցի մոտակայքում եղած անշուք տները ոչ թե Բագրատունիների

[169] Տե՛ս Г. Абих, Ани, статья акад. Г. В. Абиха. էջ 281. Н. Я. Марр. Ани, столица древней Армении, էջ 221 և այլուր։

[170] Н. Я. Марр. Ани, էջ 76—82։

[171] Նույն տեղը։

շրջանում էին կառուցվել, այլ հետագայում՝ հավանաբար XII դարից ոչ շուտ։ Քաղաքի փողոցները, ինչպես տեսանք, սովորաբար կոչվում էին արհեստակցական ու առևտրական եղբայրությունների (համքարությունների) անուններով[172], իսկ հրապարակները, որոնք սովորաբար ծառայում էին իբրև շուկաներ, հավանաբար կոչվում էին իրենց շուրջը եղած ամենանշանավոր կառույցի անունով, թեպետև այդ մասին չի պահպանվել որևէ գրավոր աղբյուր։ Սքանչելի կառույցներից բացի, քաղաքին բարեկարգ ու գեղեցիկ տեսք էին տալիս նաև կանաչ զանգվածները՝ բանջարանոցները, ծաղկանոցները և պարտեզները, որոնք ավելի մեծ տարածք էին գրավում արվարձաններում։ Նկատի ունենալով վիմագիր արձանագրությունների մի քանի հիշատակություններ՝ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ «Մրենն անեցիներու մրգաստանն ու այգեստանն էր, ինչպես նաև Բագարանը»[173]։ Բացառված չէ, որ Անիի շրջակայքում գտնվող մի քանի բնակավայրերի հետ Մրենն ու Բագարանն էլ կարող էին մայրաքաղաքի բնակիչների համար ծառայել իբրև հանգստավայր։



Քաղաքի Գլխավոր փողոցը. ջրմուղի մի հատված

Բնակչության կոմունալ պայմանների բարելավման և քաղաքի բարեկարգման հիմնական նախադրյալներից մեկը ջրամատակարարումն էր, որը, անշուշտ, ունեցել է նաև ստրատեգիական կարևոր նշանակություն։ Անիի տերերը, նրա կառուցողները և բնակչության զանգվածները քաղաքի պաշտպանությունն ամրացնելու հետ միասին մշտապես մտահոգված են եղել նաև ջրամատակարարմամբ և՛ խաղաղ ժամանակների համար, և՛ պատերազմի ու պաշարումների պահին[174]։ Եվ Անիում ժամանակի ընթացքում ստեղծվել էր ցանցավորված ու բարեկարգ ջրամատակարարման համակարգ՝ ջրմուղ, պաշտպանական խանդակ, որի ջուրն օգտագործվում էր նաև ոռոգման համար, ջրի պաշարի կուտակման համար՝ ջրավազան (Միջնաբերդում), գաղտնի ուղի դեպի Ախուրյան (պաշարման և ջրմուղի խափանման ժամանակ ջուր վերցնելու համար) և այլն։ Մեզ թվում է, որ Անին պատկանում էր այն քաղաքների թվին, որոնց ջրամատակարարումը համեմատաբար ավելի դյուրին էր և միջնադարյան ջրատեխնիկական տեսակետից իրագործելի. քաղաքը խիտ էր բնակեցված և բնակչության թվի համեմատությամբ քիչ տարածություն էր գրավում, քաղաքի տարածքն ընդհանուր թեքություն ունի դեպի հարավ-արևմուտք՝ դեպի Ախուրյանի և Ծաղկոցաձորի գետախառնուրդը և, վերջապես, քաղաքի շրջակայքում կային և՛ խմելու, և՛ տնտեսական նպատակների համար օգտագործելու ջրի բավարար պաշարներ։ Ընդ որում խմելու ջրի ակունքները քաղաքի տարածքի նկատմամբ ավելի բարձրադիր են և այդտեղից ջուրն ինքնահոս կերպով հասնում էր նույնիսկ դրա ամենաբարձր կետը՝ Միջնաբերդ։ Դրանք էին, մեր կարծիքով, այն նախապայմանները, որոնք նպաստում էին միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքի ջրամատակարարման բարեկարգ համակարգ ստեղծելու համար։ Մի այնպիսի ջրահամակարգ, որը կարող էր բավարար ջուր մատակարարել խմելու և կենցաղային, տնտեսական-ոռոգման և պաշտպանական (խանդակը լցնելու և խմելու ջրի պաշար կուտակելու) նպատակների համար։

Անիի խմելու ջրի հիմնական աղբյուրները գտնվում էին Առճո-Առիճ (Ալաջա) լեռան ստորոտին, Անիից մոտ 12 կմ հարավ-արևմուտք, այժմյան թուրքական Սյոգութլու գյուղի մոտ[175]։ Բացի այդ գլխավոր աղբյուրից, դրանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվում է մի այլ, համեմատաբար սակավաջուր աղբյուր։ Այս աղբյուրների ակունքն Անիից բավական բարձր է և այստեղից երևում է Անիի ու շրջակայքի հրաշալի համայնապատկերը։ Աղբյուրների մոտ կատարված պեղումների շնորհիվ

---

[172] Նայեք, Ани, столица древней Армении, էջ 221—222։

[173] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 323։

[174] Տե՛ս **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 210—211, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 51։

[175] **Н. Марр**, Раскопки в Ани в 1904 году, էջ 13—14։

հաշտնաբերվել են հնում այստեղից անցկացված Անիի ջրմուղի հետքերը՝ իրար մեջ հագցրած՝ թրծած կավե կարմիր խողովակներ[176]։

Պետք է նկատել, որ կատարված պեղումների ընթացքում այնուամենայնիվ հնարավոր չի եղել լիովին վերականգնել խոշոր քաղաքների բավական խիտ ցանցավորված ջրմուղի տարբեր ժամանակներում գործած մայր ջրատարներն ու դրանց ենթաճյուղերը։



Բաղեիրի կեղտաջրի խողովակաշարը

Սյոգութլուի աղբյուրներից բացի, կային նաև ավելի մոտիկ, բայց շատ սակավաջուր աղբյուրներ, որոնց ջրերը նույնպես (բայց առանց հատուկ ջրմուղի, որի կարիքը չէր էլ զգացվում) օգտագործվում էին խմելու և այլ նպատակներով։

Սակայն դրանցով չէին սպառվում Անիի ջրի աղբյուրները։ Ջրբանք բոլորը առավելագույն դեպքում կարող էին բավարարել մեծ քաղաքի բնակչությանը միայն խմելու ջրով, մինչդեռ կենցաղային, տնտեսական ու այլ նպատակների համար անհրաժեշտ էր ավելի մեծ քանակությամբ ջուր։ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ քաղաքն այդ նպատակներով օգտագործում էր Գեղիկլեր գյուղի դեսուակը, որի մի մասը տարված էր Հոռոմոսի վանքի հանդամասերը,

[176] Նույն տեղը, էջ 14։

իսկ մյուսը, ըստ նրա, հոսում էր դեպի Անի՝ հատկապես դեպի պաշտպանական խանդակը[177]։

Անիի ջրմուղն ստեղծվել է ոչ միանգամից։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ այստեղ տարբեր ժամանակներում կառուցվել են մի քանի ջրմուղներ, որոնց մնացորդները հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են տարբեր խորություններում, երբեմն ուղղակի իրար վրա։ Հենց այդ նույն պեղումներն էլ ցույց տվեցին, որ Անիի առաջին ջրմուղն ամենայն հավանականությամբ ստեղծվել է մայրաքաղաք հռչակվելուց հետո, Աշոտ III-ի կամ թերևս ավելի վաղ՝ Կամսարականների օրոք[178]։ Հավանական են համարում, որ Միջնաբերդում հայտնաբերված ջրամբարը կառուցվել է Աշոտ III-ի օրոք։ Իսկ ջրամբարի գոյությունը ենթադրում է նաև ջրմուղի առկայությունը, որովհետև ջրամբարը ջրով լցնելու այլ աղբյուր քաղաքում գոյություն չուներ։ Սակայն հնագիտական պեղումները ս. Փրկիչ եկեղեցու մոտակայքում և Ապլղարիբ մարզպանի 1036 թ. ու մեծահարուստ Տիգրան Հոնենցի 1215 թվականի արձանագրությունները որոշակի պարզություն մտցրին այդ հարցում։ Այդ երկու արձանագրություններում էլ հիշատակվում է «միլ» կոչված ինչ-որ կառուցվածքի մասին։ Ղ. Ալիշանը իրար հետ համեմատելով Ապլղարիբի նշված արձանագրությունը նրա ժամանակակից Պետրոս կաթողիկոսի նույն 1036 թվականի արձանագրության հետ, սխալմամբ ենթադրել էր, որ «միլ» նշանակում է պալատ, պարզապես նկատի ունենալով, որ մարզպանն իր արձանագրության մեջ գրել է. «... եւ կանգնեցի միլ առ սուրբ Փրկիչս»[179], իսկ Պետրոս կաթողիկոսի արձանագրության մեջ նշվում է պալատի մասին[180]։ «Միլ» հասկացությունն ավելի հստակորեն պարզվեց Տիգրան Հոնենցի 1215 թվականի արձանագրության հիման վրա, որի մեջ «միլ»-ը հիշատակվում է բաղնիքի հետ միասին իբրև ս. Գրիգոր եկեղեցուն ժառանգաբար տրված և այդ նույն եկեղեցու մոտ պեղումներով հայտնաբերված են ջրմուղի մնացորդները[181]։ Ն. Մառը այդ փաստերը և պեղումների ընթացքում ս. Փրկչի մոտ հայտնաբերված ջրի խողովակները նկատի ունենալով, վստահորեն եզրակացրել է, որ «միլ» նշանակում է «ինչ-որ ջրմուղային կա-

[177] Տ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 328։

[178] Նույն տեղը, էջ 333։

[179] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 88։

[180] Հ. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, էջ 45։

[181] Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 110։

ռույց», այդ տերմինը բխեցնելով վրացերեն mil-ի բառից, որ նշանակում է «ջրմուղ»[182]։

Տարբեր առիթներով «միլ»-ի վերաբերյալ իրենց կարծիքներն են արտահայտել նաև մի շարք այլ հեղինակներ (Մ. Բրոսե, Հ. Աճառյան, Յ. Կարստ, Մ. Բժշկյանց, Լ. Մսրեյանց, Բ. Առաքելյան և ուրիշներ)։ Սակայն ջրմուղի հետ կապված այդ տերմին-հասկացությունն ըստ ամենայնի առաջին անգամ քննարկել է Ս. Ավագյանը, որի կարծիքով նախորդներից «միլ»-ի էությունն ամենից ճիշտ բնութագրել է Բ. Առաքելյանը՝ այն համարելով միջնադարյան Անիում հասույթ բերող ջրմուղային հաստատություն՝ գետնի վրա կառուցված ավազան-աղբյուրի շենք։ Ս. Ավագյանը մեզ հասած բոլոր փաստերն ու վարկածներն ի մի բերելով գալիս է այն եզրակացության, որ «միլ»-ը «աղբյուր-ջրուղու ամբողջ կառուցվածքն» էր՝ «ջրատարը, ավազանը և վերգետնյա մյուս կառուցումները» միասին վերցրած, նշելով, որ այդ տերմինը ոչ թե փոխառություն է, ինչպես Ն. Մառն է ենթադրում, այլ տեղական ծագում ունի և աղբյուր իմաստով առ այսօր գործածվում է Լոռու կողմի բնակիչների կողմից[183]։ Ակնհայտ է դառնում, որ «միլ»-երը ոչ թե մայր ջրմուղներ էին, այլ դրա ճյուղավորումները՝ իրենց ծորակներով ու մյուս պարագաներով հանդերձ։

Այսպիսով պարզվում է, որ Բագրատունիների թագավորության շրջանում Անին ուներ իր ջրմուղը, որը հետագա ժամանակներում մշտապես ենթարկվել է փոփոխման։ Չէ՞ որ բնական աղբյուրներ չունեցող քաղաքում «միլ»-երի գոյությունը ենթադրում էր և մայր ջրմուղի առկայությունը։

Ինչպես ասվեց, ջրմուղն սկիզբ էր առնում Սյոգութլու գյուղի մոտի աղբյուրներից և մինչև քաղաք նրա երկարությունը հասնում էր մոտ 12 կմ (ավելի ճիշտ՝ ուղիղ գծով 10 վերստի)։ Ջրմուղի երկայնքով մի քանի կետերում կատարվել են մասնակի պեղումներ, որոնց հետևանքով թե՛ քաղաքի ու Սյոգութլուի միջև և թե՛ բուն քաղաքի տարբեր տեղերում հայտնաբերվել են տարբեր ժամանակների ջրմուղների մնացորդներ՝ կավե խողովակներ, ջրաբաշխիչ կետեր և այլն[184]։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ջրմուղի մայրուղին բուն քաղաքում հիմնականում համընկնում է Գլխավոր փողոցի ուղղությանը։ Մայրուղուց անջատվում էին երկրորդական ճյուղեր, որոնք ձգվում էին դեպի քաղաքի տարբեր թաղամասերը։ Նույնիսկ կարծիք կա, որ մի հատուկ ջրմուղից էին օգտվում նաև Քարանձավային Անիի բնակիչները[185]։ Հավանական պետք է համարել, որ վերը նշված Ապլղարիբի ու Տիգրան Հոնենցի արձանագրությունների «միլ»-երը գլխավոր մայրուղուց վերցրած ենթաճյուղեր էին, որոնք տարված էին՝ առաջինը դեպի ս. Փրկիչ եկեղեցու թաղամասը, իսկ երկրորդը՝ Տիգրան Հոնենցի 1215 թ. կառուցած ս. Գրիգոր եկեղեցու մոտ։

Հնագիտական պեղումները ցույց են տվել, որ Անիի ջրմուղը կառուցված է եղել այն ժամանակվա ջրատեխնիկական մակարդակին համապատասխան։ Խողովակների երկարությունը 51—54 սանտիմետր էր, տրամագիծը՝ 9—18 սանտիմետր, սովորաբար օգտագործել են կարմիր գույնի կավե թրծած խողովակներ։ Այն հատվածներում, որտեղ ճնշումն ավելի մեծ է եղել՝ ջրատար խողովակները մտցրել են քարե սալերի մեջ, որոնք ամրացվել են կրի կամ կավի խճախառն հատուկ շաղախով։ Դրանով ջրմուղի խողովակաշարը դիմացել է բարձր ճնշման և զերծ է մնացել բույսերի արմատների քայքայիչ գործունեությունից[186]։ Ջրատար խողովակներ հայտնաբերվել են տարբեր խորությունների վրա։ Ըստ ենթադրության դրանք սովորաբար գետնի երեսից ունեցել են 0,75—3,5 մետր խորություն՝ նայած տեղանքի բնույթին։ Հյուրանոցների մոտ, մայրուղուն կից հայտնաբերվել է քարե սալիրով ծածկված մի ուղի, որտեղ գտնվել է կավե խողովակների կտորտանք։ Ն. Մառը ենթադրում է, որ այդ սալածածկ կառուցվածքի միջոցով, որտեղ մարդիկ կարող էին մտնել հատուկ մուտքով, հսկել ու կանոնավորել են հիմնական ջրատարը՝ վերացնելով նրա խափանումները և փոխելով փչացած խողովակները[187]։

Գլխավոր ջրմուղի և դրա ճյուղավորումների համար ամենատարբեր տեսակի կավե խողովակներից բացի, օգտագործել են նաև երկաթե խողովակներ։ Վերջիններս, որքան հայտնի է, սկսել են օգտագործել XI դարից։ Անիում հայտնաբերված են մոտ 2 սանտիմետր տրամագիծ ունեցող երկաթե խողովակներ, որոնցով ջուր էր մղվում արքունական պալատի զանազան մասերն ու բաղնիքները[188]։ Այդ նույն ձևի երկաթե խողովակներ են հայտնաբեր-

---

[182] Նույն տեղը, էջ 110 և 117։

[183] Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 203—207։

[184] Н. Я. Марр, Ани, էջ 14, 76—77, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 210—211։

[185] Н. Я. Марр, Ани, էջ 76—77։

[186] Բ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 333—334։

[187] Н. Я. Марр, Ани, էջ 76—77։ Համմս. Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 53—54։

[188] Բ. Թորամանյան, Նյութեր հայկ.. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 146։

ված (1935 թ.) Ամբերդի բաղնիքի պեղումների ժամանակ[189], ինչպես նաև Լոռի քաղաքի բաղնիքի շենքում, որը մինչև օրս խարխուլ վիճակում պահպանված է։ Երկաթե խողովակներն իրար հետ միացնում էին կամ մուֆտով կամ կավե խողովակներով, իսկ կավե խողովակները, որոնք մեծությամբ, տրամաչափով ու տեսակներով շատ բազմազան էին, սովորաբար հագցնում էին իրար մեջ և միացման հատուկ հարմարանքների կարիքը չունեին, միայն կարուկ ոլորաններում դնում էին կավե ամաններ, որոնք ծառայում էին իբրև սուղարան (остройник)[190]։

Ն. Մառի հնագիտական արշավախումբը ջրմուղի ուսումնասիրությամբ զբաղվել է տարբեր ժամանակներում՝ 1904, 1908, 1909, 1910 թվականներին, քաղաքի տարբեր մասերում հայտնաբերել են մի քանի ջրատարներ, որոնք հիմնականում գտնվում են քաղաքի Գլխավոր փողոցի ուղղությամբ[191]։

Ջրամատակարարման տեսակետից ուշադրության արժանի կառույց է նաև Միջնաբերդում հայտնաբերված ջրամբարը։ Դրա պատերը շարված են քառակուսի աղյուսներով և հատակը ծեփված գաճ ու կրով։ Ըստ Թ. Թորամանյանի չափագրման, ջրամբարն ունեցել է 7 մ երկարություն, նույնքան էլ լայնություն, իսկ խորությունը հասել է 5 մետրի։ Ջրամբարը երկու մասի է բաժանվել միջնորմով, որի վրա բացված է եղել սրակամար երկու դուռ։ Թ. Թորամանյանը ջրամբարի կամարների աղյուսների շարվածքը նմանեցրել է «հին ասորական և պարսկական շարվածքի» հետ՝ եզրակացնելով, որ ջրամբարը կառուցվել է շատ հին ժամանակներում[192]։

Հայաստանում բաղնիքները հնագույն պատմություն ունեն, իսկ միջնադարյան Հայաստանի շատ թե քիչ նշանակալի ամարդաշատ բնակավայրերը, բերդերը, քաղաքները (Ամբերդ, Լոռի, Դվին, Անի և այլն) բոլորն ունեին բաղնիքներ, որոնք իրենց ձևերով հիշեցնում էին արևելյան երկրների բաղնիքները[193]։ Օ. Խ. Ղալփախչյանը իր հատուկ ուսումնասիրության մեջ դրանք բնութագրել է բավական մանրամասնությամբ և տվել դրանց կառուցվածքային

189 Տե՛ս նույն տեղը, Կ. Ղաֆադարյանի ծանոթագրությունը։

190 Տե՛ս Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 46։

191 Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 76—77, 117։

192 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 377։ Համմ. Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 211։

193 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժող., էջ 35—36։

առանձնահատկությունները[194]։ Անիում գոյություն ունեին երկու կարգի բաղնիքներ, որոնցից մեկը պալատական բաղնիքն էր, իսկ մյուսները՝ հասարակական օգտագործման, որոնք գտնվում էին քաղաքի տարբեր մասերում։ Վիմագիր արձանագրությունների հաղորդած տեղեկությունների և քաղաքի ավերակների ուսումնասիրության հիման վրա Անիում հայտնաբերված են տարբեր վիճակում մեզ հասած 6 բաղնիքի մնացորդներ, որոնցից մեկը Միջնաբերդի պալատական բաղնիքն էր, մյուսը գտնվում էր քաղաքի Արտաքին պարսպից դուրս, իսկ մնացած չորսը՝ բուն քաղաքում[195]։ Սակայն դրանց կառուցման ժամանակները, չնչին բացառությամբ, չեն ճշտված և հնարավոր չէ իրարից տարբերել։ X—XI դարերում գոյություն ունեցած բաղնիքները հետագայում կառուցվածներից՝ բացառությամբ պալատական բաղնիքի, որը Բագրատունիների թագավորության շրջանում, թերևս նույնիսկ Կամսարականների օրոք արդեն գոյություն ուներ, և Տիգրան Հոնենցի նշված արձանագրության մեջ հիշատակված բաղնիքը, որը նա 1215 թ. իբրև հայրենիք նվիրել է իր կառուցած ս. Գրիգոր եկեղեցուն։ Բայց և այնպես առանց սխալվելու կարելի է պնդել, որ X—XI դարերում Անիում եղել են մի քանի բաղնիքներ, որոնք, պալատական բաղնիքի նման, կարող էին շարունակել իրենց գոյությունը նաև հետագա դարերում, կամ ավերվել են և նրանց փոխարեն XII—XIII դդ. կառուցել են նորերը։ Ինչպիսի տարբերակներով էլ քննարկվի այդ հարցը, միևնույն է, պատմական տրամաբանությունը հուշում է, որ X—XI դարերում Անին ունեցել է իր հասարակական բաղնիքները, առանց որոնց դժվար է պատկերացնել այդ խոշոր, մարդաշատ ու բարեկարգ քաղաքը։

Հայկական բաղնիքների ներքին կառուցվածքը շատ հաստատուն է եղել և դարեր շարունակ էական փոփոխության չի ենթարկվել[196]։ Դրանց համալիրում պարտադիր կերպով մտնում էին հանդերձարանը, լողասրահը, վառարանի (տաքացման) բաժինը, որի վրա դրված էր ջրի կաթսան։ Դրանցից բացի, որոշ բաղնիքներ ունեցել են նաև երկրորդական հարմարություններ՝ լրացուցիչ լողասրահ, նախասենյակ և այլն[197]։ Հիմնականում նույնպիսի կառուցվածք ունեին նաև Անիի բաղնիքները։

194 О. Х. Халпахчьян, Средневековые бани Армении, «Советская археология», М., 1960, № 1։

195 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժող., էջ 35—36։

196 Տե՛ս «Советская археология», 1960, № 1, էջ 222։

197 Նույն տեղը։

Անհրաժեշտ ենք համարում խոսել դրանցից միայն երեքի՝ պալատական բաղնիքի և Նոր քաղաքում ու Հյուսիսային թաղամասում եղած հասարակական բաղնիքների մասին, որոնց ավերակները հասել են մինչև մեր օրերը։ Դրանք հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն առումով, որ գտնվում էին իրենց բնույթով ու ֆունկցիոնալ առումով միանգամայն տարբեր քաղաքամասերում՝ միջնաբերդում, բուն քաղաքում, արվարձաններից մեկում և զգալի չափով իրարից տարբերվում էին։



Միջնաբերդի պալատական բաղնիքը

Միջնաբերդում գտնվող պալատական բաղնիքն Անիի հայտնի ամենահին բաղնիքն էր, որը, ինչպես ասվեց, կարող էր կառուցված լինել դեռևս Կամսարականների օրոք, Բագրատունիների ժամանակներում համապատասխան փոփոխություններ կրելով՝ դարձել էր արքունական բաղնիք։ Վերափոխությունները, ինչպես ընդունում են շատ մասնագետներ, կատարվել են XI դ. առաջին կեսին և այդ պատճառով էլ ավերակներով մեզ հասած բաղնիքն էլ ընդհանուր ձևով համարում են XI դարի շինվածք[198], սակայն նկատի ունենալով Աշոտյան պարսպի նկատմամբ դրա «անպատշաճ դիրքը» և «պատերի շարվածքն ու քարերի տաշվածքը», Թ. Թորամանյանը այն համարում է Բագրատունիների շրջանին ոչ համապատասխանող[199]։

Միջնաբերդի բաղնիքը մոնում էր արքունական պալատի համալիրի մեջ և գտնվում էր նրա հյուսիսային մասում, արքայական

198 Տե՛ս, օրինակ՝ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 136։

199 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 277։

բազիլիկ դահլիճից արևմուտք։ Այն բաղկացած էր 7 սենյակից՝ հանդերձարանից, նախասրահից, երկու լողարաններից ու դրանց միջև ձգվող նեղ սենյակից, որտեղ էլ դրված է եղել ջրի կաթսան, իսկ դրա տակը՝ վառարանը։ Երկու մասի բաժանված բուն բաղնիքից բացի, որն անմիջապես կից էր նախասրահին, համալիրն ուներ նաև նույն միջանցքից մուտք ունեցող մի շատ փոքր, հազիվ մեկ մարդ տեղավորող սենյակ-լողարան՝ իր առանձին վառարանով ու ծխնելույզով։ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ վերջինս հատուկ շինված է եղել կանանց համար[200]։ Բաղնիքի նախասրահը բավական ընդարձակ է եղել։ Այստեղ հանվելուց ու հագնվելուց բացի, կարող էին հանգստանալ, որի համար ստեղծվել էին գորգերով ու օթոցներով ծածկված 30 սանտիմետր բարձրությամբ «բարե սալահատակներով բազմոցներ»։ Բուն բաղնիքը բաժանված էր երկու անհավասար սենյակ-լողարանների, որոնցից մեկում եղել է մեկ, իսկ մյուսում՝ ավելի մեծում, երկու ավազան։ Դրանք երկուսն էլ ծեփված են եղել ջրամերժ շաղախով։ Ծուխն անցնում էր հատուկ խողովակով, հատակի տակով, մինչև բաց օդ դուրս գալը՝ տաքացնելով լողարանները, իսկ կեղտաջուրը թեք հատակով հոսում էր ու դեպի մոտակա լեռնալանջը գնում կավե լայն խողովակներով[201]։ Լավ նշմարվում են կաթսայից դեպի լողավազան գնացող տաք ու սառը ջրի խողովակների հետքերը։ Տաք ջրի համար բաղնիքում օգտագործել են երկաթե խողովակներ, իսկ մյուս բոլոր դեպքերում օգտվել են կավե խողովակներից։ Պեղումների ընթացքում, սակայն, հայտնի չի դարձել, թե դեպի կաթսա եկող ջուրը ինչպես է անցկացված եղել և ինչ ուղղություն է ունեցել դրա խողովակաշարը։

Նույն ձևի բաղնիքներ են հայտնաբերվել նաև միջնադարյան Դմանիսի քաղաքում 1936 և 1937 թթ. պեղումների ժամանակ[202]։

Անիի Սմբատյան պարսպից դուրս, Հովվի եկեղեցուց 200—300 մետր հեռավորության վրա, պարսպի Ավագ դռան դեմ գտնվում էր մի բավական ընդարձակ հասարակական բաղնիք, որի հյուսիսային պատի մի հատվածը XX դ. սկզբներին

200 Նույն տեղը։

201 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 377, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 60—61, Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 136—137, О. Х. Халпахчьян, Средневековые бани Армении, «Советская археология», 1960, № 1, էջ 218—221, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 195 և այլուր։

202 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, էջ 137։

դեռևս կանգուն էր[203]։ Բաղնիքն արևմուտքից-արևելք երկու շարք սենյակներով ձգվող երկար շինություն է եղել, հավանաբար բաղկացած լինելով ավելի քան 12 սենյակներից, որոնցից հյուսիսային կողմի արևելյան 2—3 սենյակներն իրենց մի պատով և գմբեթների մի մասով դեռևս կանգուն էին[204]։ Բաղնիքի կառուցման ժամանակն անհայտ է։ Սակայն կարելի է ենթադրել, որ քաղաքի այդ մասի արվարձանները, մարդաշատ դառնալու հետ միասին, կառուցել են և այդ հասարակական բաղնիքը, այսինքն՝ հավանական է, որ այն կառուցել են X դարի վերջերին կամ XI-ի առաջին կեսին։

Նոր քաղաքի հասարակական բաղնիքը, որ գտնվում էր բերդի հյուսիսային պարսպի մոտ, ավելի հարմարավետ ու շքեղ է եղել, քան հյուսիսային արվարձանների նկարագրված՝ ավելի ընդարձակ բաղնիքը։ Մայրաքաղաքի այդ հասարակական բաղնիքի առաջին նկարագրողը եղել է հայտնի երկրաբան Հ. Աբիխը։ Ահա թե նա ինչ է հաղորդում այդ հասարակական բաղնիքի մասին. «Շենքը գեղեցիկ է և կառուցված է եղել արաբական բաղնիքների նման, կենտրոնում գտնվում է ընդարձակ սրահը, որի չորս կողմերում գտնվում են կամարակապ չորս սենյակներ՝ դասավորված խաչաձև և յուրաքանչյուրն ունի դեպի սրահը տանող իր դուռը։ Ջրատար կավե խողովակները նկատվում են պատի ամբողջ երկայնքով, դրանք իրար հետ միացրել են այն եղանակով, ինչ եղանակով որ կավե խողովակները միացնում էին «հին հռոմեական այդ տիպի շենքերում»[205]։ Այս բաղնիքի կառուցման ժամանակը նույնպես անհայտ է։ Սակայն Հ. Աբիխի նկարագրությունից երևում է, որ այն գոյություն ուներ Բագրատունիների օրոք՝ նոր քաղաքի առաջացման ժամանակներից։

Հյուրանոցները հիշատակվում են նաև այլ ձևերով՝ խանապար (որ արտասանել են խանաբար)[206], իջևան կամ իջևանատուն, քարվանսարա, հոգետուն, փնդուկ (որ միաժամանակ խանութ էր նշանակում) և այլն[207], որոնք ունեցել են տարբեր ծագում և, մեր

[203] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժող., էջ 178։

[204] Նույն տեղը։

[205] **Г. Абих**, Ани, էջ 288—290։ Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 81, **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 44։

[206] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 27։

[207] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 88։ Խանապարներն ի տարբերություն սովորական հյուրանոցների (կամ հյուրատուն) դրեթե առանց բացառության հյուրասենյակներից բացի, ունեին նաև օժանդակ հարմարություններ, պահեստներ, խանութ-

կարծիքով, մասամբ արդյունք են այն բանի, որ վաճառաշահ քաղաքներ էին գալիս ամենատարբեր ազգություններին պատկանող վաճառականներ և այդ քաղաքներում որոշ թիվ էին կազմում զանազան ժողովուրդների ներկայացուցիչներ։

Վիմագիր արձանագրություններից հայտնի է դառնում, որ Անիում գոյություն են ունեցել բազմաթիվ հյուրանոց-խանապարներ (կամ իջևանատներ), որոնք, ինչպես տեսանք, միաժամանակ առևտրի կետեր էին։ Հյուրանոցները համարվում էին եկամտաբեր հիմնարկներ, որոնք պատկանում էին բարձր ազնվականությանը և մեծահարուստներին, իսկ նրանք էլ հաճախ իրենց այդ հյուրանոց-խանապարները նվիրում էին եկեղեցիներին։

X—XI դարերում Անիում առևտրի, վաշխառուության, կապալառության միջոցով հարստացած ու «մեծատուն» դարձածներ արդեն գոյություն ունեին, բայց հավանաբար դրանց թիվը մեծ չէր և դեռևս վճռական դեր չէին խաղում։ Մեծատունները կենտրոնական դեմքեր դարձան հատկապես XIII դարում և դրանց տիպիկ ներկայացուցիչներից մեկը Տիգրան Հոնենցն էր, որի միայն հյուրանոցների թիվը չորսից պակաս չէր[208]։

Մեծ թիվ կազմող Անիի հյուրանոց-խանապարների կառուցման ժամանակները չեն ճշտվել։

Բագրատունիների թագավորության ժամանակներում քաղաքում կային մի քանի հյուրանոցներ։

Օձի ֆանդակ հյուրատան գլխավոր մուտքի վրա



Դրանցից մեկի մասին հիշատակություն կա ս. Փրկիչ եկեղեցու պատի վրայի արձանագրություններից մեկում, որը գրել է տվել նույն եկեղեցու կառուցող Ապլղարիբ Պահլավունին 1040 թվականին։ Արձանագրությունը եղծված է ու վատ ընթեռնելի։ Այնուամենայնիվ այն վերծանվել է և ունի հետևյալ տեսքը. «Ի՝ ՆՁԲ։ Թուականիս ես Ապլղարիպ շինեցի... ծով եւ ետու ս սուրբ Փրկիչս հիւրանոցս ոռճկի... Ան»[209]։ X—XI դարերի Անիում, ան-

[208] **Н. Я. Марр**, Ани, էջ 34։

[209] Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 46։

ներ, բակեր և այլն) և յուրատեսակ հյուրանոցային-առևտրական համալիրներ էին, հարմարեցված հատկապես վաճառականների պահանջներին։

շուշտ, հյուրանոցներ շատ կային։ Հավանական կարելի է համարել, որ Զաքարյանների շրջանի հայտնի հյուրանոցներից շատերը գոյություն ունեին նախորդ ժամանակներում, բայց ենթարկվել էին վերափոխությունների՝ ժամանակի ճարտարապետական ոճին համապատասխան, և սովորաբար վերագրվել են XII դարի վերջերին կամ XIII դարին։ Օրինակ՝ XIII դարին են վերագրում հնագիտական պեղումների ընթացքում հետազոտված շքեղ, երկու մասից բաղկացած հյուրանոցը, որն իր հիմնական կառուցվածքով տիպական կարող է լինել նաև նախորդ շրջանի համար։ Ն. Տոկարսկու կարծիքով հյուրանոցի երկու բաժինները, որ նա համարում է առանձին-առանձին հյուրանոցներ, կառուցվել են նույն XIII դարում, իրարից մոտ 50 տարի տարբերությամբ[210]։ Նրա ասելով դրանցից «Հարավային» հյուրանոցը կառուցվել է XIII դ. սկզբներին՝ Զաքարյանների իշխանության օրոք և սպասարկում էր զանազան գործերով Անի եկողներին, իսկ երկրորդը՝ «Հյուսիսայինը», որ առաջինին կից էր, դարձյալ նրա կարծիքով համանաբար կառուցվել էր մոնղոլական տիրապետության շրջանում՝ Հուլավյանների օրոք[211], իսկ Հ. Օրբելին գտնում է, որ երկու սրահն էլ կառուցվել են XII—XIII դարերում[212]։



Առյուծի բանդակ հյուրատան գլխավոր մուտքի վրա

Ահա թե ինչպիսի կառուցվածք ու հարմարություններ ունեին Անիի «Հյուսիսային» ու «Հարավային» հյուրանոցները, ինչպես կարելի է պայմանականորեն դրանք կոչել, եթե այդ մեծ հյուրանոցի սրահները (կամ բակերը) համարենք ինքնուրույն միավորներ։ Հյուրանոցը գտնվում էր Նոր քաղաքում և պեղվել է 1908 թվականին։ Ինչպես ասվեց, այն բաղկացած էր երկու երկարավուն սրահից (կամ բակից), որոնցից յուրաքանչյուրի կենտրոնում կար մի ամբողջական քարից կերտված ջրավազան, սրահները սալարկված էին տաշած քարով։ Դրանց չորս կողմերում ձգվում էին մայթաձև բարձր ու լայն գոտիներ՝ նստելու կամ բարձելու և բեռնաթափելու համար, սրահների երկայնքով իրար կողք-կողքի շարված էին «համարները»՝ փոքրիկ կամարակապ ծածկով սենյակները, որոնց մուտքը փակում էին ոչ թե սովորական դռները, այլ վարագույրները։ Այդ սենյակների տակ տեղ-տեղ կան նկուղներ՝ վաճառականների ապրանքները պահելու համար։ Դռների շրջանակները, սրահների՝ դեպի փողոց նայող ճակատները զարդաքանդակ էին և իրենց վրա կրում էին կարմիր ու սև տուֆի շարվածքով կազմված զանազան պատկերներ, աստղանիշեր, բազմանկյուններ, խաչեր և այլն։ Դրանցից բացի, սրահներից մեկի մուտքի վրա քանդակված են սֆինքսներ, իսկ մյուսի վրա՝ հովազներ ու օձեր, իբրև մուտքի պահապաններ։ Այդ պատճառով էլ պայմանականորեն դրանք կոչել են «Օձի հյուրանոց», «Սֆինքսի հյուրանոց» և այլն։ Պահպանված քարե աստիճանների մնացորդներից եզրակացնում են, որ հարավային սրահը երկհարկանի է եղել։ Մասնագետները ճարտարապետական առումով շատ նմանություններ են տեսնում նկարագրված հյուրանոցի և Զաքարյաններին վերագրվող պալատի միջև[213]։ Օգտվելով պեղումների արդյունքներից, Անիի այդ հայտնի հյուրանոցի երկու սրահների հատակագիծը կազմել է Թ. Թորամանյանը[214]։ Ն. Տոկարսկին նշում է, որ այն ունի անճշտություններ, բայց այդ երկու շենքերի մասին տալիս է ընդհանուր պատկերացում[215]։

Հյուրանոցի մոտակայքում հայտնաբերված տարբեր կարգի իրերն ու առարկաները, շինությունների ավերակները թույլ են տվել եզրակացնելու, որ դրան կից կային հիմնականում եկվոր վաճառականներին սպասարկող զանազան կետեր՝ արհեստանոցներ, առևտրի կրպակներ և այլն։ Այսպես, հայտնաբերվել են դրսից հյուրանոց-խանապարին հարող պղնձագործի արհեստանոց, որի մոտ գտնվող մի այլ սենյակում՝ կաշվի իրերի մնացորդներ, իսկ փողոցի հակառակ կողմում հայտնաբերված սենյակում՝ ան-

---

210 Տե՛ս, օրինակ՝ **Н. М. Токарский**, Архит. Армении IV—XIV вв., էջ 262։

211 Նույն տեղը, էջ 262—263։

212 **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 28—29։

213 Տե՛ս **Н. Я. Марр**, Ани, էջ 103, табл. XIV, XXXV, XXXVI, **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 350—351, **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, էջ 27—29, **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 257—259, **А. Л. Якобсон**. Очерк истории зодчества Армении V—XVII вв., էջ 101—102։

214 **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 351։

215 **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 259։

վնաս մնացած մի շարք սեղմամաններ և բավական քանակությամբ սեղմամանների բեկորներ[216]։

Անիի հետ էր կապված դրա մոտակայքում գտնվող նոր ժամանակների Զրիլիի (այժմ՝ Ներքին Զրարբի գյուղ ՀՍՍՀ Անիի շրջանում) հին քարավանատունը Ախուրյան գետի ափին, Անիից դեպի Հայաստանի հյուսիսային գավառներն ու Վրաստան տանող գլխավոր ճանապարհի վրա։ Այս քարավանատուն-հյուրանոցը, ըստ Վ. Հարությունյանի, հավանաբար կառուցվել է X կամ XI դարում[217], թեպետև դրա կառուցման մասին չկան ո՛չ մատենագրական և ո՛չ էլ վիմագրական տեղեկություններ։ Իր մեծությամբ այն ոչնչով չի զիջել Անիի Նոր քաղաքի նկարագրված հյուրանոցին։ Ըստ Վ. Հարությունյանի չափագրման (որը նա կատարել է 1955 թ. ճարտարապետ Ռ. Մելքումյանի մասնակցությամբ) քարավանատան ընդհանուր երկարությունը 31 մ է, իսկ լայնությունը՝ 13,65 մ, սրահի ամբողջ երկայնքով երկու շարքով տեղադրված են իրար հետ կամարներով միացած 8-ական մայթեր, որոնք քարավանատունը բաժանում են 3 նավի։ Քարավանատան թաղակապ ծածկի վրա կան երդիկներ, իսկ ներքին պատերի վրա, անտեսական նպատակների համար, թողնված են խորշեր՝ պատրհաններ[218]։

Չնայած պատմական համեմատաբար կարճատև գոյությանը, Անիում եղել են հասարակաց մի քանի ընդարձակ գերեզմանոցներ՝ Գլիձորի կողմում, Հյուսիսային արվարձաններում, որի զբաղված տարածքը մեկ քառակուսի կիլոմետրից ավելի էր[219], Ախուրյանի մեծ կամրջի դիմաց, գետի ձախ կողմում և այլն։ Վերջեռնյա գերեզմանոցներից բացի, բազմաթիվ դամբարաններ կային Քարանձավային Անիում, առանձնապես Մաղկոցաձորի ժայռափոր թաղամասում։ Ենթադրվում է, որ այդ ժայռափոր դամբարանները պատկանում էին հասարակության բարձր խավի ներկայացուցիչներին, արագ հարստացած մեծատուններին։ Հարուստ ժայռափոր դամբարանները պարբերաբար թալանի են ենթարկվել ոսկի և հարստություն որոնող թալանչիների կողմից։ Առանձնապես շքեղ է եղել XIII դարի սկզբների հայտնի մեծահարուստ Տիգրան Հոնենցի դամբարանը, որի պատերը ծածկված են եղել տարբեր բովանդակությամբ որմնանկարներով։ Այստեղ կատարված հետազոտությունների ժամանակ 1910 թվականին հայտնաբերվել է մի

[216] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 29։

[217] Վ. Մ. Հարությունյան, *Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները*, էջ 41։

[218] Նույն տեղը։

[219] Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող.*, էջ 328։

4—5 տարեկան աղջնակի զմռսված և այդ պատճառով լավ պահպանված դիակ՝ հագուստով հանդերձ։ Այդ դիակը (որի գլուխը մինչ այդ, ինչպես պատմել են ականատեսները, բժիշկ ոմն Թաշճյան, «իբրև սեղանի զարդ» կտրել և տարել էր Պարսկաստան) նույն թվականին Կ. Հ. Բասմաջյանն իր հետ տարել է Փարիզ[220]։ Տարբեր վիճակում պահպանված ուրիշ դիակներ են հայտնաբերվել նաև ժայռափոր այլ գերեզմաններում[221]։ Միանգամայն ճիշտ է նկատում Թ. Թորամանյանը, որ գերեզմանոցների ու դամբարանների համար քարայրներն ունեին անվիճելի մի շարք առավելություններ (քիչ են ենթակա արևի ու բնության քայքայիչ ազդեցության, ջերմությունը գրեթե հաստատուն է, քաղաքի առողջապահական տեսակետից ավելի հարմար է և այլն) և դրանցում ննջեցյալներն ուղղակի բնականորեն զմռսվում էին, եթե իհարկե այդ նույնը չէր կատարվում արհեստական եղանակով։

Բարձր խավի ներկայացուցիչների համար գերեզմանոց կար նաև քաղաքի ներսում։ Իսկ Միջնաբերդում, ինչպես ենթադրվում է, հատուկ գերեզմանոց կար արքայական մանկանց համար[222]։ Բուն քաղաքի հանգստարաններից ուշադրության արժանի է հատկապես Գագիկ I-ի կնոջ՝ Կատրամիդեի հանգստարանը։ Այն գտնվում էր Մայր տաճարից ոչ հեռու, դրա արևելյան կողմում, 1893 թ. պեղումների ժամանակ նկատված մի փոքրիկ մատուռի մոտ։ Թագուհու գերեզմանը բացելով, պարզվել է, որ այն արդեն փորփրել էին հարստություն և ոսկի որոնող բախտախնդիրները, բայց կմախքը մնացել էր տեղում[223]։

Հաջորդ շրջանի շքեղ դամբարաններ ու մատուռներ կային նաև վերջեռնյա հասարակական գերեզմանոցներում (Կիրակոս վարդապետի և այլոց)։

Պետք է նշել, որ գերեզմանոցներն ավելի շատ են ենթակա եղել անօրինական պեղողների փորփրումներին ու կողոպուտին։ Սակայն դրա հետ միաժամանակ հայտնի է, որ գերեզմանոցները, հատկապես հասարակական հանգստարանները վատ են ուսումնասիրված։

Խոսելով Անիի տարբեր կարգի ու հասարակական տարբեր շերտերի գերեզմանոցների մասին, անհնար է լռության մատնել

[220] Նույն տեղը, էջ 326—327։


[221] Նույն տեղը, էջ 327։

[222] Տե՛ս Պալասյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի աւերակներուն*, էջ 61—62։

[223] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 40։

Բագրատունի թագավորների պանթեոնի հարցը, որը փաստորեն առ այսօր մնում է վիճելի։

Բանն այն է, որ ավանդույթի ուժով Հոռոմոսի վանքի ձորում, Ախուրյանի աջ ափին, բլրի վրա պահպանված մի քանի մատուռների ավերակներից մեկի՝ ս. Գևորգ մատուռի[224] մոտ են տեղա-



Գերեզմանոց

դրում Բագրատունի թագավորների պանթեոնը, պարզապես միայն նկատի ունենալով այն, որ այդտեղ կա մի անշուք գերեզմանաքար՝ հսկայական մի տապանաքար, որը դրված է երկու աստիճանով պատվանդանի վրա, և վրան անշնորհք տառերով գրված է. «Աշոտ Ողորմած թագաւոր Հայոց»[225]։ Լևոն ամենևին չի տարակուսում, որ հենց այդտեղ էլ եղել է Բագրատունիների պանթեոնը և այդ թեզը ընդունելի դարձնելու համար վկայակոչում է նշված ս. Գևորգ մատուռի վրա Հովհաննես-Սմբատ թագավորի արձանագրությունը, որտեղ նա ասում է, թե «Եւտու զիմ գեղս զԱհառնիս ի մեր հանգստարանս թագաւորաց» և Գագիկ I-ի արձանագրությունը նույն մատուռի կառուցման մասին[226]։ Միաժամանակ պահպանված գերեզմանի խղճուկ վիճակն անհարիր համարելով Բագրատունի թագավորի մեծության համար, նա գրում է, որ «Աշոտի տխուր քարերի կողքին շարված են փոքրիկ փոսեր, կարծես մկներն են ծակեր բացել։ Բայց մկները չեն այդպես արել, այլ մարդը, հավիտյան շահի ծարավ, ոսկու համար ամեն տեսակ ոճիրի ընդունակ մարդը։ «Թագավոր» անունը այս զարհուրելի

[224] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 31։
[225] Նույն տեղը։
[226] Լեո, Անի, էջ 130—131։

ավերակների պատճառ է դարձել. նա է եղել, որ, երևի, ջնջել անհետացրել է Աշոտի վրա կառուցած շինությունը, թողնելով նրանից մի կտոր պատ միայն»[227], իսկ մի այլ տեղում ականավոր պատմաբանը ենթադրում է, թե «Շիրիմի մոտերքին երևում են պատերի հետքեր։ Գուցե այդ անհետացած պատերից մեկի վրա է եղել իսկական արձանագրությունը և նրա ընկնելուց հետո գտնվել են մարդիկ, որոնք տապանաքարի վրա փորել են թագավորի անունը»[228]։

Լեոյի վկայակոչած արձանագրություններն ուղղակի փաստեր չեն, իսկ նրա մյուս դիտողությունները հնչում են միայն իբրև ցանկալի ենթադրություններ։ Այս հարցում միանգամայն հավանական է Ն. Մառի ենթադրությունը, որը Աշոտ Ողորմածին (նրա մոտ Աշոտ I) վերագրված գերեզմանաքարի վրայի մակագրությունը պարզապես համարում է «ամենից առաջ Անի այցելող ղրոսաշրջիկների նորագույն էպիգրաֆիական մարզանքներ» և հավանական համարում, որ թագավորական հանգստարանը պալատի, պալատական եկեղեցու, գրադարանի և գանձարանի հետ գտնվում էր Անիի Միջնաբերդում ու հարցի վերջնական լուծումը կապում է հետագայում կատարվելիք պեղումների հետ[229]։

Մեզ թվում է, որ Ն. Մառի ենթադրությանն ավելի ընդունելի է։ Հավանական չէ, որ Աշոտ Ողորմածը թաղվել է ոչ թե իր հռչակած մայրաքաղաքում, այլ դրանից դուրս գտնվող վանքում, որտեղ թագավորական պանթեոն լինելու մասին չկա նույնիսկ որևէ ակնարկ։ Ընդհակառակը, կա մատենագրական հիշատակություն այն մասին, որ Բագրատունի նախավերջին թագավոր Հովհաննես-Սմբատը թաղվել է հենց Անիում՝ իրենց հայրական՝ «առաջին թագավորների» գերեզմանոցում. «Ի Հայոց տումարիս ի թուականս ՆՂ մեռաւ թագաւորն Հայոց Հովհաննէս և թաղեցին զնա ի քաղաքն յԱնի ի գերեզմանսն առաջին թագաւորացն Հայոց»,— գրում է Մատթեոս Ուռհայեցին։ Նույնն է վկայում նաև Սմբատ Սպարապետը. «Ի թուին 490 մեռաւ Հովհաննէս՝ արքայն Հայոց. և թաղեցաւ ընդ հարսն յԱնի»[230]։ Կարծում ենք, որ XII—XIII դարերի հեղինակների այդ վկայությունները չի կարելի շրջանցել։ Իսկ դրանցից միայն հետևում է, որ Բագրատունի թագավորների գերեզմանոցն սկզբից ևեթ ոչ թե Հոռոմոսում էր, այլ մայրաքաղաքում։

[227] Նույն տեղը, էջ 129։
[228] Նույնը, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 591։
[229] Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 202։
[230] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 84, Սմբատ Սպարապետ,

Ե. Քաղաքի եկամուտներն ու ծախսերը և ներքին կյանքը

Քաղաքի բարեկարգման, նրա պաշտպանունակության բարձրացման, կոմունալ պայմանների ու սանիտարական-առողջապահական վիճակի բարելավման ծախսերը Եվրոպայի, այսպես կոչված, ազատ քաղաքներում հիմնականում կատարվում էին քաղաքի եկամուտներից, իսկ քաղաքի եկամուտներն ստացվում էին չորս հիմնական աղբյուրներից՝ քաղաքային համայնական սեփականությունից, դատական եկամուտներից և ուղղակի ու անուղղակի հարկերից։ Առաջինի մեջ հիմնականում մտնում էին կոմունալ հողերից օգտվելու հարկը և համայնական արտոնավայրերից ու խոտհարքներից օգտվելու տուրքը։ Երկրորդը հիմնականում բաղկացած էր քաղաքային դատարանի կողմից վերցվող տուգանքի մի մասից, երրորդը՝ մաքսից և այլ մուծումներից[231], իսկ չորրորդը բաղկացած էր ուղղակի հարկերից, որ գանձում էին արհեստով, առևտրով, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար։

Սակայն Հայաստանի միջնադարյան քաղաքները՝ մանավանդ X—XI դարերի քաղաքները (բացառյալ մի քանի «ազատ» քաղաքների՝ Արծն, Բերդկունք և այլն, որոնք դարձյալ իրենց վիճակով շատ հեռու էին ազատ կամ անկախ լինելուց) տիպիկ ֆեոդալական քաղաքներ էին, գտնվում էին ֆեոդալական հայրենատիրական հողի վրա և կազմում էին ֆեոդալի սեփականությունը։ Այս պատճառով էլ քաղաքի եկամտի բոլոր աղբյուրները, հատկապես ուղղակի և անուղղակի հարկերից ստացվող եկամուտները հիմնականում պատկանում էին ֆեոդալին կամ թագավորին, եթե մայրաքաղաք էր, ինչպիսին էր նաև Բագրատունյաց շրջանի Անին։ Եվ մեր ամբողջ շարադրանքից դժվար չէ տեսնել, որ քաղաքի վերը նշված ծախսերը հոգում էին ոչ թե քաղաքային վարչությունները, որպիսիք ֆեոդալական քաղաքում չկային, այլ հիմնականում քաղաքի տերերն ու մեծահարուստները։ Նեղ իմաստով քա-

---

Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 56։ Նույն բովանդակությամբ հիշատակություններ կան նաև այլ աղբյուրներում, որոնց թվում նաև գրիչների հիշատակարաններում։ Այսպես, օրինակ, Թոխաթում գրված XVII դարի մի ձեռագիր հիշատակարանում ասված է. «Ասատ (Անիում—Թ. Հ.) դադարեալ թագաւորաց Հայոց Մեծաց...» (տե՛ս Հովսեփյան Դարեգին, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 88)։ Մենք հակված ենք կարծելու, որ Հռոմոսում կարող էր թաղված լինել ոչ թե Աշոտ Ողորմածը, այլ Հովհաննես Սմբատի եղբայրը՝ Աշոտը, որը նույնպես հիշատակվում է որպես Հայոց թագավոր։ Եթե իհարկե նշմարված գերեզմանը ընդունելու լինենք, որ իրոք թագավորական է եղել և ոչ մատացածին։

[231] *Տե՛ս* А. К. Живелегов. Средневековые города Западной Европы *էջ* 187—189։

ղաքի ծախսերը բաղկացած էին երկու գլխավոր հոդվածից՝ քաղաքի ամրությունների և ոստիկանության պահպանումից, ինչպես գրում է Ա. Կ. Ջիվելեգովն Արևմտյան Եվրոպայի քաղաքների վերաբերյալ[232], որը կիրառելի է նաև Հայաստանի միջնադարյան քաղաքների նկատմամբ։ Ըստ երևույթին Բագրատունիների թագավորության շրջանի Անիում քաղաքային որոշ ծախսումներ էին կատարում նաև ժողովրդական կրթության ու աղքատանոցների վրա։ Այս վերջիններս Արևմտյան Եվրոպայում քաղաքների ծախսումների հատուկ հոդված են դարձել համեմատաբար ավելի ուշ՝ մոտավորապես XIII դարից[233]։

Հայաստանի միջնադարյան քաղաքների ներքին կյանքի, հասարակական կարգուկանոնի մասին մեր պատմագիրները հազվադեպ են խոսում, այն էլ կցկտուր, և հնարավոր չէ այդ աղբատիկ տվյալների հիման վրա շատ թե քիչ հիմնավոր հետևություններ անել։

Այնուամենայնիվ, մեզ հասած անուղղակի մի քանի փաստերն ու վկայությունները թույլ են տալիս շատ ընդհանուր գաղափար կազմել բնակավայրերի, հատկապես քաղաքների ներքին կարգուկանոնի վերաբերյալ։ Ամենից առաջ ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» հատուկ հոդվածով խիստ պատիժ է սահմանված տուն կողոպտող գողերի համար։ «Ցաղագս դատաստանաց գողաց որ զտուն պատառեն» վերնագիրը կրող այդ հոդվածում ազդարարվում է. «Իսկ եթէ ի տան գայի գող եւ խոցեալ մեռանիցի, չէ այն նմա ի սպանութիւն...»[234]։ Ասողիկի մի վկայությունից հայտնի է դառնում, որ Բագրատունի թագավորները նույնպես խստագույն պատիժներ էին սահմանել հանցագործների համար։ Նա գրում է, որ Սմբատ II թագավորը թագավորական տանը պատկանող խոտն ու օրանը հրդեհելու համար հրամայել է «խելացնոր» հանցագործին նախ կուրացնել, ապա այրել։ Ահա պատմիչի խոսքերը. «Էր նորա համբարանոց խոտի և օրանի ի քաղաքն Անւոյ, ի բազում ամաց կուտեալ. և լուցին զնա հրով։ Եւ այր ոմն ի քաղաքին ցնորեալ ի խելաց մաղասկաթ գոլով՝ և աղօթէր նա յառաւօտանալ ժամուն յեկեղեցւոջն ընդ ժողովրդեանն. և ելեալ բառնայր զբով կրակին, որով զխոտնկն բուրեցուցանէին։ Եւ ասեն մարդիկ «Ջի՞նչ ի այդ». և նա ասէ «Երթամ այրել զհամբարանոցս թագաւորին»։ Եւ եկեալ

---

[232] *Նույն տեղը, էջ 194—195։*

[233] *Նույն տեղը, էջ 201։*

[234] *Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 351։*

պատմեցին թագաւորին. և նա հրամայեաց՝ նախ զաշն փորել և ապա ծղով և եղեգամբ պատել և հրոյ ճարակ տալ»[235]։

Պատմիչի տեսածներից երևում է, որ ցնորվածը «անմեղ» էր, նա չէր հանցագործը, բայց նրան ոչինչ չի փրկում։ Թագավորն անողոք էր, հրամանագիրը՝ խստագույն։ Եվ ըստ երևույթին այդպիսի խստագույն պատիժները բացառություն չէին։ Նույն պատմագրի մի այլ վկայությունից երևում է, որ ընդհանրապես հանցագործները՝ մանավանդ գողերը, ենթակա էին խիստ պատիժների։ Այսպես, Կարսի Աբաս թագավորը (984—1029) առանց խնայելու մահապատժի է ենթարկել բոլոր գողերին և այդ եղանակով վերջ տվել իր հոր՝ Մուշեղի ժամանակ Վանանդում մեծ տարածում գտած գողությանը, ավազակությանն ու «մարդադավությանը». «նախ և առաջին երարձ նա յաշխարհէն իւրմէ զաւազակութիւն, զմարդադաւութիւն, զոր ազգն Վանանդայ իբրև զկայրենիք ունէին, ըստ աւելոյ պատմագրին։ Եւ յաւուրս հօր սորա ոչ միայն ի ճանապարհս և ի բացեայ տեղիսն կողոպտէին՝ այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերեկոյացեալ ժամուն և զգիշերն ամենայն ճիշք և ձայնք կողոպտանաց լինէին։ Այլ սա ինքնին վրէժխնդիր եղեալ, և զգտեալ գողսն անաչառ մահու դատապարտեալ՝ ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքունս, յիշխանս կամ ի շինականս. և այնպէս խաղաղացոյց զաշխարհն իւր մինչ զի ի գիշերի իբրև ի տունջեան, և յանապատի իբրև յապարանս շրջէին ամենեքեան, շինութեան և աշխատութեան գործոց պարապէին, արդարադատ իրաւամբք ուղղեալք»[236]։

Ճիշտ է, դեռևս Մովսես Խորենացին Վանանդի բնակչությանը բնութագրել է որպես ավազակաբարո ու մարդադավ[237], բայց, ըստ երևույթին, մեզ հետաքրքրող շրջանում այդ տեսակետից Անին Կարսից քիչ էր տարբերվում, մանավանդ եթե նկատի ունենանք վերջինիս ավելի մարդաշատությունը և արվարձանների մեծ փոփոխությունն ու մի շարք անձուկ թաղամասերի գոյությունը։ Եթե անկարգությունը, գողությունն ու գիշերային կողոպուտները տարածված երևույթներ չլինեին, հազիվ թե Սմբատ Երկրորդը «խնայացնոր» հանցագործի նկատմամբ դիմեր այդպիսի անմարդկային միջոցի։

---

235 Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 253—254։ Համմ. Աշոտ Հովհաննիսյան, Ուրվագծեր հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 371։

236 Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 196—197։

237 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 313։ Համմ. Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 41։

Իսկ քաղաքի ներքին կարգ ու կանոնի պահպանման համար գոյություն ունեցող պաշտոնեության մասին փաստերի բացակայության պատճառով ոչինչ հնարավոր չէ ասել։ Նույնիսկ դժվար է ասել այդպիսի պաշտոնեության կար, թե ոչ, եթե նկատի չունենանք շուկայի վերակացուներին, որոնք պատասխանատու էին դրանց կանոնավոր գործունեության համար։

5. ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

961—1045 թվականներին Անիում կերտել են տասնյակ ճարտարապետական մոնումենտալ կառույցներ՝ պալատներ, կոթողներ, պաշտպանական պարիսպներ, սքանչելի կամուրջներ, անկրկնելի տաճարներ ու եկեղեցիներ, որոնց մասին ընդհանուր ձևով արդեն խոսվեց քաղաքաշինության ու ճարտարապետության բաժնում։ Այժմ անհրաժեշտ ենք համարում ըստ խմբերի՝ առանձին-առանձին համառոտակի նկարագրել Բագրատունյաց թագավորության շրջանի կարևոր հուշարձանները՝ օգտվելով սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից, հնագիտական նյութերից ու վիմագիր արձանագրություններից և հրապարակի վրա եղած գրականությունից՝ առանձնապես ուշադրություն դարձնելով բանավեճի ենթակա հարցերի վրա։

Ա. Պալատներ, քաղաքացիական հայտնի կառույցներ ու կոթողներ

Վիմագիր արձանագրություններում և այլ կարգի աղբյուրներում հիշատակված տարբեր կարգի պալատների թիվը հասնում էր հինգի, որոնցից մեկը Բագրատունիների արքայական պալատն էր, որ գտնվում էր Միջնաբերդում, իսկ մյուս չորսը իշխանական պալատներ էին, որ պայմանականորեն կոչել են Պարոնի, Սարգսի, Ապլղարիբի և Վարդապետի պալատներ։ Սրանք բոլորը գտնվում էին Միջնաբերդից դուրս, բուն քաղաքում։ Դրանցից Պարոնի, Սարգսի և Վարդապետի պալատները կառուցվել են Բագրատունյաց թագավորության անկումից հետո, իսկ Ապլղարիբի պալատի մասին մեզ հասած արձանագրությունից բացի, որի մասին ասվեց իր տեղում, գրավոր այլ տեղեկություններ կամ ավերակների հետքեր հայտնի չեն։ Ուրեմն, մեզ մնում է այդ կարգի կառույցներից ներկայացնել միայն Բագրատունիների արքայական պալատը։

Շատ ճանապարհորդներ ու Անիի առաջին ուսումնասիրողները Բագրատունիների պալատը տեղադրում էին ոչ թե Միջնաբերդում, որտեղ իրոք գտնվում էր, այլ Նոր քաղաքի հյուսիս-արևմտյան ծայրամասում, Ծաղկոցաձորի ձախակողմյան բարձրադիր ափի պռունկին, քաղաքի նկատմամբ իշխող դիրք, իսկ Ծաղկոցաձորի կողմից գեղատեսիլ համայնապատկեր ունեցող բարձունքի վրա, որտեղ պահպանվել են իրոք մի հոյակապ պալատի ավերակներ[1]: Սակայն հետագայում, Միջնաբերդում կատարված պեղումների շնորհիվ վերջնականապես հերքվեց այդ վարկածը. այստեղ, հողի տակ հայտնաբերվեցին Բագրատունիների արքայական պալատի մնացորդները և ենթարկվեցին հնագիտական հիմնական ուսումնասիրության: Եվ միանգամայն հասկանալի է, որ Բագրատունիները իրենց պալատը պետք է կառուցած լինեին ոչ թե պաշտպանական տեսակետից ավելի վտանգավոր տեղում՝ քաղաքի ծայրամասում, որտեղ գտնվում են նշված պալատի մնացորդները, այլ քաղաքի ամենաբարձրադիր կետում՝ Միջնաբերդում, որը պաշտպանված էր մի քանի պարսպաշարքերով և որտեղ, տակավին Կամսարականների ժամանակներից կային իշխանական պալատական որոշ կառուցվածքներ, որոնք կարող էին, առանց քանդելու, հարմարվել նոր ստեղծվող պալատի հետ: Բագրատունիների պալատի տեղը ճշգրտելուց հետո՝ քաղաքի հյուսիս-արևմտյան ծայրամասում գտնվող նշված պալատն արդեն վերագրում են Զաքարյաններին, կառուցված համարում XIII դ. սկզբներին և պայմանականորեն կոչում Պարոնի կամ Իշխանական պալատ:

Անիի Միջնաբերդը, Բագրատունիների արքայական պալատի հետ, պեղվել է 1907 և 1908 թվականներին՝ հնագիտական վեցերորդ և յոթերորդ արշավախմբերի ընթացքում[2]: Պալատը տեղադրված էր Միջնաբերդի ամենաբարձր կետում և զբաղում էր նրա կարևոր մասը:

Պեղումները ցույց տվեցին, որ Բագրատունիների պալատը կառուցվել է ոչ միանգամից, որովհետև, ինչպես գրում են ճարտարապետները, այստեղ նկատվում են առանձին կառուցվածքներ նույնիսկ Կամսարականների շրջանից՝ V—VII դարերից, երբ այդ ժամանակներում արդեն հետագայի Անիի Միջնաբերդում կառուցվել էր իշխանական պալատը և այն ինչ-որ չափով մտել Բագրատունիների X—XI դդ. կառուցած արքունական պալատի համալիրի մեջ: Մի համալիր, որը հետագայում, հատկապես Զաքարյանների շրջանում, նույնպես ենթարկվել է զգալի փոփոխությունների ու բարեփոխությունների, ինչպես նաև, քաղաքի հետ, մի շարք անգամ ավերվել է արտաքին նվաճողների կողմից և նորից վերականգնվել, բայց ոչ նախկին ձևով, այլ տվյալ ժամանակների պահանջներին ու ճաշակին համապատասխան: Այլ կերպ ասած, Բագրատունիների պալատի համալիրը ոչ միայն բարդ էր իր բովանդակած կառուցքների զանազանակերպությամբ, այլև ժամանակի ընթացքում կրած մեծ փոփոխություններով, շինարարական-ճարտարապետական տարաձևման շերտերով, ինչպես նշում են Անիի անցյալով զբաղվող շատ հեղինակներ[3]: Բուն քաղաքի համեմատությամբ դրա Միջնաբերդն ու արքայական պալատն ավելի շատ են ենթարկվել արտաքին նվաճողների ավերման[4], ոսկի ու հարստություններ որոնող բախտախնդիրների քանդումներին, տարբեր ժամանակներում պալատի տեղում հաստատված հովվական ցեղերի «վերակառուցումներին», որոնք շարունակվում էին մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը՝ մինչև Կարսի մարզը Ռուսաստանին միացնելը և մասամբ դրանից հետո՝ մինչև ընդհուպ Ն. Յա. Մառի 1907—1908 թթ. պեղումները: Այդպիսի պայմաններում ոչ միայն անհնար էր լուսաբանել արքայական պալատի հնագիտական բոլոր շերտերը, այլև վերականգնել Բագրատունիների շրջանի դրա շատ թե քիչ արժանահավատ պատկերը: Այս տեսակետից միանգամայն իրավացի է Թ. Թորամանյանը, երբ հայտարարում է, թե՝ «եթե կես դար ևս տևած ըլլար Անիի մարդաբնակությունը, մենք ապահովաբար չպիտի գտնեինք այն սակավաթիվ նմուշներն ալ, որոնք հրաշքով պահված էին իբր ապացույց Բագրատունիներու մեծության և գեղարվեստասեր ոգույն, թեև այս վերջիններն ալ սաստիկ եղծված ու անհայտանալու նախօրյակին մեջ հազիվ հասան մեզի»[5]: Իսկ Ն. Մառը գրում է, որ «Հին պալատից պահպանվել են միայն ողորմելի մնացորդներ, որովհետև այն բաղմաթիվ անգամ ավերվել և վերափոխվել

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 47—48, Աբել Մխիթարյան, Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1855, էջ 59—62, Պալաճյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 51—52:

[2] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 12, Н. Я. Марр, Ани, էջ 66—67:

[3] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 181—182, 361—362, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 58—59, «Ակնարկ. հայ ճարտարապետության պատմության», էջ 194 և այլուր:

[4] Տե՛ս Г. Абих, Ани, էջ 285—286, И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 12—13 և այլն:

[5] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 376:

է, վերջապես, հիմնահատակ ավերել և այրել են թշնամիները, իսկ այնուհետև նաև կողոպտել են և՛ բարեկամը, և՛ ոսոխը»[6]։

Եվ միանգամայն հասկանալի է, որ պեղումները հնարավորություն են տվել միայն շատ բնդհանուր գծերով գաղափար կազմելու Բագրատունիների արքայական պալատի մասին։ Աչքատեղ բնականաբար չպետք է հայտնաբերվեին դրա նախնական վիճակի շքեղությունները՝ պատմագիրների նկարագրած ոսկեզօծ սրահները, որմնանկարներով զարդարված գեղաքանդակ դահլիճները («տաճարները») և մյուս արքայավայել կառույցները։ Բայց և այնպես մի կերպ պահպանված հնագիտական մնացորդները, դրա «այլանդակված ու հոշոտված բեկորները»[7] թույլ են տվել արքայական պալատի համալիրը բնութագրել բավարար խորությամբ և վերականգնել հատակագիծն ու նկարագրել համալիրի մեջ մտնող կառույցները՝ բուն ապարանքը, եկեղեցիները, բաղնիքը, ջրամատակարարման համակարգը, պաշտպանական կառույցները և այլն։

Արքունի ապարանքը (կամ բուն պալատը) իր օժանդակ շենքերով գրավում էր 3500—4000 քառակուսի մետր տարածք[8], որը պարապապատ էր և այդ տարածքի ամենաբարձր կետում էլ հենց կառուցված էր ապարանքը, որին կից եղած շինություններից ուշադրության արժանի էին 7 մեծ ու փոքր եկեղեցիները։ Դրանք բոլորը կառուցվել էին մինչև XI դարը ներառյալ։ Եկեղեցիների թվումն էր նաև կանգուն մնացած, այսպես կոչված, պալատական եկեղեցին, որ կառուցվել էր դեռևս Կամսարականների օրոք, VII դարում[9]։

Պեղումների ընթացքում, Միջնաբերդի ամենաբարձր մասում հայտնաբերվել է մաքուր ու շքեղ շարվածքի մի հատված և պարզվել է, որ դա պալատի վերին հարկից պահպանված միակ կտորն է[10]։ Ներքին հարկը բաղկացած էր մի շարք սենյակներից, որոնք հիմնականում ունեցել են տնտեսական նշանակություն. դրանք օգտագործվել են որպես պահեստներ, գանձատներ և այլն[11]։

Արևելքից արևմուտք ձգվող 59 մ երկարությամբ միջանցքը պալատը բաժանում էր երկու մեծ հատվածի՝ հարավայինի ու հյուսիսայինի։ Հարավային հատվածը, որն անհամեմատ ավելի վատ է պեղված, իր մեջ ընդգրկում էր նաև պալատական եկեղեցին։ 1907 թ. հնագիտական աշխատանքների վերջում, այնուամենայնիվ, արդեն հայտնի էր դարձել պալատի հատակագիծը։ Դրա գլխավոր մուտքը գտնվում էր արևմուտքում, որտեղից նշված միջանցք կարելի էր մտնել երկու ճանապարհով՝ լայն դարպասով, որը հիմնական մուտքն էր և գաղտնի մուտքով, որտեղով դեպի վերին հարկ բարձրանում էին ժայռակերտ աստիճաններով։ Միջանցքի արևելյան ծայրի մուտքը շատ նեղ էր և այն կապում էր պալատի բակի հետ[12]։

Պալատի հարավային կեսում գտնվող ընդարձակ դահլիճը միջանցքի հետ կապված էր միայն մի շատ նեղ ու ոլորապտույտ անցքով։ Դահլիճի հատակը պատած էր սրբատաշ քարերով։ Դրա արևմտյան կողմին կից եղել է մի փոքրիկ սենյակ, որտեղ պեղումների ընթացքում հայտնաբերվել են զարդանախշ տախտակներ, որոնք օգտագործվել էին այդ սենյակի ու սրահի միջև եղած միջնորմի համար։ Հատակի տակ պեղումների ընթացքում հայտնաբերվել է ջրմուղի ցանց՝ կավե և երկաթե խողովակներով, ինչպես նաև աղյուսով շարված ջրի բակ։ Այստեղ հայտնաբերված են նաև X դարի վերջերին վերագրվող քարե սյուների մնացորդներ։ Իսկ այդ գտածոները թույլ են տվել ենթադրելու, որ հարավի այդ դահլիճն իր սկզբնական վիճակում եղել է շատ շքեղ և ունեցել ավելի բարդ հատակագիծ[13]։ Ն. Մառը գտնում է, որ այդ դահլիճում գտնվող ջրի բակից են սկիզբ առել դեպի պալատի տարբեր մասերը ձգվող կավե ու երկաթե ջրատար խողովակները, իսկ դեպի բակ ջուրը գալիս էր քաղաքի հիմնական ջրմուղից[14], որի ակունքը գտնվում էր ավելի քան 10 վերստ հեռավորության վրա։

Արևելքից արևմուտք ձգվող միջանցքից դեպի պալատի հյուսիսային կեսը եղել է երկու մուտք։ Դրանցից մեկը տարել է դեպի խաչաձև դահլիճ, որը բաղկացած էր կենտրոնական սենյակից և խաչաձև դասավորված չորս թևերից։ Հարավային թևը վերջանում էր միջանցքի հետ կապված նախասենյակով, որի մոտ հայտնաբերվել են բազմաթիվ սենյակ-պահեստներ։ Դահլիճի հյուսիսային ու արևելյան թևերում հայտնաբերվել են քանդակազարդ տախտակներ և գերաններ[15]։

Խաչաձև դահլիճը խնամքով երեսապատված էր սրբատաշ քարերով, որը համարում են հետագա ժամանակների աշխատանք[16]։

---

[6] Н. Я. Марр, Ани, էջ 67։
[7] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 361։
[8] Նույն տեղը։
[9] Նույն տեղը, էջ 361—362։
[10] Н. Я. Марр, Ани, էջ 67։
[11] Նույն տեղը։
[12] Նույն տեղը։
[13] Նույն տեղը, էջ 67—68։
[14] Նույն տեղը, էջ 68։
[15] Նույն տեղը։
[16] Նույն տեղը։

Հանդիսասրահները, որ թվով երեքն էին, գտնվում[17] էին պալատի հյուսիսային կեսի ներսում: Դրանցից մեկը տեղադրված էր հյուսիս-արևմտյան անկյունում, Գագկաշեն եկեղեցու դեմ առ դեմ, երկրորդն արևելքում էր և նայում էր դեպի Մայր տաճարն ու Ախուրյանի ձորը, իսկ երրորդը գտնվում էր պալատի հյուսիս-արեվելյան անկյունում և նայում էր դեպի իրենից ցած գտնվող բուն քաղաքը: Այդ հանդիսասրահներն ունեին տարբեր նշանակություն: Պալատի վերին հարկերի հատակը ամենուրեք բարձր էր մյուս սենյակների (որոնց թվում և խաչաձև դահլիճի ու բաղնիքի) տափակ կտուրներից, որոնք կարող էին առաջինների համար ծառայել որպես ներքին բակ[17]:

Հանդիսասրահները կառուցված և կահավորված էին տարբեր ձևով ու ոճով: Դրանցից մեկը պարզ էր, առանց զարդարանքների, երկրորդը զարդանախշված էր, իսկ երրորդը բազիլիկ դահլիճ էր, ունենալով երկշարք սյուներ, որոնցից պահպանվել են միայն մեկ շարքի սյուների խարխխները: Այստեղ պեղումների ընթացքում նկատվել են հրդեհի հետքեր: Պատերը սվաղված էին և նկարազարդված: Բազիլիկ դահլիճը, Ն. Մառի արտահայտությամբ, իր «ճարտարապետական մանրամասնություններով մեծ հետաքրքրություն է» ներկայացնում[18]:

1908 թվականի հնագիտական աշխատանքների ընթացքում բավական մանրամասնությամբ պեղել են այդ բազիլիկ դահլիճի տակ ընկած նկուղային սենյակները: Ն. Մառը գրում է. «Պարզվեց, որ այդ նկուղային հարկը արժեքավոր պատառիկների միջնակետն է»[19]: Այստեղ հայտնաբերվել են վերին հարկի բազիլիկ դահլիճի ճարտարապետական ներքին զարդարանքների մնացորդներ, սվաղի վրա արված նկարների հետքեր, զարդանախշ փայտի մասեր և այլն: Եվ այդ բոլորից Ն. Մառը եկել է այն եզրակացության, որ հայկական աղբյուրներում Անիի ոսկեզօծ դահլիճների ու իշխանական տների մասին եղած հիշատակությունները ոչ թե ավանդություն կամ առասպել են, «այլ իրականության արտացոլում»:

Հյուսիս-արևելյան դահլիճը ավելի վատ էր պահպանված: Այստեղ պահպանվել էին միայն հատակի մի փոքրիկ հատվածը և հարավային պատի մի շարքը: Սակայն հետագա պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդների հիման վրա (կիսասյուներ, փայտե կամարներ ու բիվեր և այլն)

[17] Նույն տեղը:

[18] Նույն տեղը, էջ 69:

[19] Նույն տեղը:

Ն. Մառը եկել է այն եզրակացության, որ արևելյան բազիլիկ դահլիճի նման հյուսիս-արևելյան դահլիճը նույնպես պատկանում է Բագրատունի թագավորների ժամանակներին և «վերակառուցվել կամ վերականգնվել են Բյուզանդական կայսրության [տիրապետության] ժամանակ»[20]:

Հյուսիս-արևելյան այդ դահլիճի նկուղային հարկում հայտնաբերվել են մեծ քանակությամբ նախշազարդ գիպսե սալիկներ[21]:

Հյուսիս-արևմտյան դահլիճն ուներ 20 մ երկարություն ու 10 մ լայնություն, որը, Անիի անկումից հետո, դրա ավերակների շրջանում նոր բնակություն հաստատողները միջնորմով բաժանել էին չորս սենյակների: Այս դահլիճը միանգամայն զուրկ էր վերադիր զարդերից, որմնանկարներից, գիպսե նախշազարդ սալիկներից, բայց ճարտարապետական կառուցվածքով շատ դեղեցիկ էր՝ կամարներով ու որմնասյուներով զարդարված:

Խաչաձև դահլիճը, որի մասին արդեն ասվեց, մտնում էր պալատի հյուսիսային կեսի առաջին հարկի մեջ: Այն կողքերից շրջապատված էր ծառայողական դանազան նշանակությամբ սենյակներով, իսկ հյուսիսային կողմում գտնվում էր պալատական փոքրիկ բաղնիքն իր երկու բաժիններով և օժանդակ հարմարություններով, որ այնքան մանրամասնությամբ նկարագրել է Ն. Մառը[22]:

Վերոհիշյալ հուշարձաններից բացի, ուշադրության արժանի են նաև ժայռափոր մի շարք կառուցվածքներ, որոնց ստեղծման ժամանակը վերջնականապես չի ճշտված: Դրանցից հատկապես նշելի են ստորգետնյա երկար անցքը, որ այլազգիները կոչել են Գեղան-Գյալմազ, դրա ընթացքի վրա գտնվող մեծ սրահը, ինչպես նաև Ծաղկոցաձորի կողմի՝ Քարանձավային Անիի երկու (իսկ երբեմն՝ երեք) հարկանի ժայռափոր տները, որոնցից մեկը Լեոն ուղղակի անվանել է «ապարանք», պարզապես նկատի ունենալով դրա ստորերկրյա հարմարություններն ու շքեղությունը[23]: Ըստ

[20] Նույն տեղը, էջ 70:

[21] Նույն տեղը:

[22] Նույն տեղը, էջ 70—71: Արքայական պալատի համալիրի նկարագրությունը տե՛ս նաև Х. Ф. Б. Линч, Армения, т. I, էջ 483—486, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 144, 181—182, 362—364, 375—377, И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 12—15, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 58—60, Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, էջ 71—74, Б. А. Шелковников, Поливная керамика из раскопок города Ани, էջ 11—12 և այլուր:

[23] Լեո, Անի, էջ 220—221:

նրա նկարագրության, Ծաղկոցաձորի զառիվեր կողին գտնվող այս վերջին «ապարանքը» ուներ բարձրադիր՝ սովորական այցելուների համար անմատչելի մուտք, երկհարկանի էր, բաղկացած մի շարք սենյակներից, որոնցից ոմանց «պատերը» ներսից նկարազարդված էին, իսկ որոշ սենյակներ էլ ունեին դարակներ և պատրհաններ[24]։ Ինչպես տեսանք, ենթադրում են, որ այն փորվել-կառուցվել է Բագրատունիների թագավորության շրջանում և հարմարեցված է եղել առևտրի կամ զանազան ապրանքներ պահելու համար։

Սելջուկ թուրքերը (ինչպես և արաբները) քրիստոնեական եկեղեցիները ավերելու ու կողոպտելու հետ, դրանց մի մասը դարձընում էին մզկիթ, երբեմն առանց դրա ընդհանուր կառուցվածքին ձեռք տալու, այլ պարզապես նրա վրա խաչի փոխարեն մահիկ դնելով։ Այդպիսի դեպքերը սովորական էին հատկապես Դվինում և Անիում։ Այդ եղանակով է «ստեղծվել» նաև Անիի ամենահայտնի մզկիթը՝ Մանուչեի մզկիթը, որը միաժամանակ համարվում է քաղաքի լավագույն հուշարձաններից մեկը և բավական բարվոք վիճակում հասել է մինչև մեր օրերը։ Այն գտնվում է Հին քաղաքում, Ախուրյանի զառիվեր ձորի պռնկին, Մայր տաճարից ոչ հեռու, Ախուրյանի կամրջի վրայով քաղաք մտնող հայտնի ճանապարհի վրա։

Դրա ներքնի մասը՝ առաջին և երկրորդ հարկերը, կառուցվել են X դարի վերջերին, ամուր կարմիր քարից, որ բերվել է դրսից[25]։ Իսկ վերևի մասն ու մինարեն հետագայում ավելացնելով, դարձրել էին մզկիթ՝ այն կոչելով Անիի իշխողներից մեկի՝ Մանուչեի անունով։

Այդ սյունազարդ, կամարակապ երկհարկանի շենքը, որի երկրորդ հարկի կենտրոնում գտնվում է նույնքան գեղեցիկ ընդարձակ դահլիճը, ըստ ենթադրությունների, եղել է մաքսատուն, պահակատուն, եկեղեցական-պաշտամունքային շինություն՝ ժամատուն, կաթողիկոսարան կամ նման մի շենք[26]։ Դժվար է ասել դրանցից որն է ավելի հավանական։ Միայն նկատի ունենալով շենքի շքեղությունը, դրա համար շինարարական ամբողջ քարը դրսից բերելը, քաղաքի ամենաաչքի ընկնող կետերից մեկում տեղադրելը, ընդարձակությունը և այլ հանգամանքներ, պետք է

[24] Նույն տեղը, էջ 221—222։

[25] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 6։

[26] Տե՛ս Աբել Մխիթարյանց, Ճանապարհորդութիւն յԱնի, էջ 77—79, Г. Абих, Ани, էջ 284—285, И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 6—7, Գևորգյան Մելիխսեդեկ, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 51—52 և այլն։

ենթադրել, որ իրոք այն քաղաքի կարևոր նշանակություն ունեցող շենքերից էր։

Շենքի զարդը կազմում է երկրորդ հարկի 28×35 մ մեծություն ունեցող ընդարձակ դահլիճը, որի երկու կողմերը սյունազարդ են և մասնատված առանձին բաժիններին։ Ունի չորս լայն լուսամուտներ, որոնք նայում են դեպի Ախուրյանի գեղատեսիլ ձորը։ Շատերը գտնում են, որ դրա դահլիճը, և ընդհանրապես մզկիթի նախնական շենքը, նմանություն շատ գծեր ունեն Հոռոմոսի վանքի գավիթի հետ, և ավելի հավանականն այն է, որ այն եղել է աշխարհիկ նշանակություն ունեցող շենք, ոչ թե կաթողիկոսարան կամ ժամատուն։

Առաջին հարկը մասնատված է չորս սենյակների, որոնք ունեն գաղտնարաններ և հարմարանքներ՝ զանազան իրեր պահելու համար։ Կապը երկրորդ հարկի հետ պահպանվում էր շարժական սանդոխքի միջոցով։

Մզկիթի այդ նախնական շենքի վրա կան արձանագրություններ։ Իսկ նրա մոտակայքում հայտնաբերված հայերեն արձանագրություններից մեկի վրա, ինչպես վկայում է Թ. Թորամանյանը, հիշատակվում է Գագիկ Բագրատունի անունը[27]։

Անիից Հոռոմոս տանող ճանապարհին, քաղաքից 4—5 կմ հեռավորության վրա, իշխող տեղում կառուցված են մի զույգ աշտարակներ, որոնց հիմնադրման ժամանակն ու որպիսությունը նյութերի ու փաստերի բացակայության պատճառով, չի պարզաբանված։ Պ. Էժեն-Պոռեն, որ ճանապարհորդել է 1837 թվականին, դրանք կոչում է զանգակատուն և նշում, որ դրանք միացած են եղել կամարով (հաղթական կամար էր), կառուցված քաղաքի մոտքի մոտ՝ Բագրատունի որևէ թագավորի կողմից ի նշան իր տարած հաղթանակի[28]։ Ոմանք էլ առարկում են այդ կարծիքի դեմ, եռահարկ աշտարակները համարելով գմբեթավոր զանգակատներ, որոնք ծառայել են իբրև պինվորական դիտանոցներ[29]։ Ժողովրդական ավանդության համաձայն, երբ Բագրատունի թագավորը Անիից Հոռոմոս էր գնում, այդ աշտարակների վրա գտնվող պահապանները հնչեցնում էին դրանց զանգերը՝ վանքի հովուապետությանն ազդարարելով թագավորի այցի մասին[30]։

[27] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժող., էջ 267։

[28] Տե՛ս Աբել Մխիթարյանց, Ճանապարհորդութիւն յԱնի, էջ 48—49։

[29] Նույն տեղը։ Տե՛ս նաև Լեո, Անի, էջ 132—133։

[30] Տե՛ս Լեո, Անի, էջ 133։



Հաղթական կամար

Ջույգ աշտարակները գտնվում են կիսակործան վիճակում։ Դրանք կառուցված են կարմրավուն քարից, եռահարկ են, հիմքի մասում իրար դեմ առ դեմ ունենալով մեկական դուռ։ Գմբեթավոր են։ Գմբեթները հանգչում են չորս փոքրիկ սյուների վրա[31]։

Ռուս հայտնի ճանապարհորդ Մուրավյովը, որ այնքան արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Անիի ավերակների մասին, մի մութ երեկոյան այդ խորհրդավոր աշտարակներին ու ավերակ քաղաքին նայելով, խորհել է, որ դեպի քաղաք տանող ջույգ աշտարակների կամարների վրա հարմար կլինի գրել Դանթեի «Աստվածային կատակերգության»՝

«Ինձնով են գնում գեհենն անվոր
Ինձնով են գնում հոգվոց ճարատանջ
Ինձնով են գնում մարդկանց ախտավոր»

տողերը, հետևյալ ձևափոխմամբ ու հավելումով.

«Ինձնով է անցնում ճանապարհը դեպի ցավալից բաղաթը,
Ինձնով է անցնում ճանապարհը դեպի հավիտենական վշտերը,
Ինձնով է անցնում ճանապարհը դեպի անհետացած մարդկանց ազգը.
Բոլոր նույսերդ կորի՛ր դու, որ անցնում ես ինձնով»[32]։

Ճիշտ է ասում Լեոն, այդ ջույգ աշտարակները մնում են իբրև առեղծված։ Փաստերի ու գրավոր աղբյուրների բացակայությունը թույլ չի տալիս որոշ պարզություն մտցնելու այդ հարցում։

Բ. Պաշտպանական պարիսպները և Ախուրյանի կամուրջները

Քաղաքաշինության մասին խոսելիս տեսանք, որ Անիում պաշտպանական զանազան կառուցվածքները՝ պարիսպները, պաշտպանական խանդակը, ստորերկրյա մուտքերը, գաղտնարանները, քաղաքի շուրջը եղած ամրակուռ բերդերը կազմում էին ամրացված մեծ հանգույց և քաղաքն արտաքին թշնամիների համար դարձնում անմատույց։ Բուն քաղաքում գոյություն ունեցող պաշտպանական կառուցվածքներից, իրրև ռազմաճարտարապետական կարևոր հուշարձաններ, անդրադառնանք Ներքին, Փոքր կամ Աշոտյան ու Մեծ, Արտաքին կամ Սմբատյան պարիսպներին, որոնց մասին արդեն մասնակիորեն խոսք եղել է։

Աշոտյան կամ Փոքր պարսպի կառուցման մասին հիշատակություն ունի Վարդան Վարդապետը։ Նա գրում է. «Սա (Աշոտ III-ը— Բ. Հ.) զփոքր պարիսպ քաղաքին Անւոյ շինեաց. և զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց, ի չորեքհարիւր երկուտասան (963 թ.— Բ. Հ.) թուին...»[33]։

Պատմիչի հիշատակությունից դժվար չէ նկատել, որ Անիի Ներքին կամ Փոքր պարիսպը Աշոտ III-ը կառուցել է տվել մեկ տարվա ընթացքում՝ 963 թվականին, Անին մայրաքաղաք հռչակվելուց երկու-երեք տարի անց։ Սակայն մեզ անհայտ պատճառներով Ն. Մառն այդ պարսպի կառուցումը դնում է ոչ թե 963 թվականին, ինչպես հաղորդում է պատմագիրը, այլ 963—964 թվականներին պարզապես ոչ թե նույնությամբ ընդունելով պատմիչի

[31] Աբել Մխիթարյանց, *Ճանապարհորդութիւն յԱնի*, էջ 49։

[32] Դանթե Ալիգիերի, *Աստվածային կատակերգություն*, թարգմ. Արրուն Տայանի, Երևան, 1960, Դժոխք, երգ երրորդ, էջ 18։ Հմմտ. Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 38, Լեո, *Անի*, էջ 134 և այլն։

[33] Վարդան Վարդապետ, *Համառոտ պատմութեան լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 89—90։

հիշատակությունը, այլ դրա մասին արված ծանոթագրությունը[34]։

Նոր ժամանակներում, մինչև ընդհուպ պարբերական պեղումների սկիզբը, Աշոտյան պարիսպները մնում էին անհայտ բոլոր ճանապարհորդների ու հեղինակների համար։ Ավելին, հենվելով միայն պատմագիրների հաղորդած տեղեկությունների վրա, շատերն Աշոտյան պարիսպներ էին համարում Սմբատյան կրկնակի պարիսպների ներքին շարքը, առանց նկատի ունենալու Մ. Ուռհայեցու այն վկայությունը, ըստ որի Աշոտյան ու Սմբատյան պարիսպների միջև եղած հեռավորությունը հասնում էր մեկ նետընկեցի, մինչդեռ Սմբատյան պարսպի երկու շարքերի միջև եղած տարածությունը չնչին էր[35]։

Քաղաքի պատմության համար կենսական նշանակություն ունեցող այդ հարցը միանգամից լուսաբանվեց 1892—1893 թվականների պեղումների ընթացքում։ Պարզվեց, որ Աշոտյան պարիսպը ձգվում էր Միջնաբերդի տորոտով, Հին քաղաքն անջատելով Նորից, որը տարածվում էր Աշոտյան ու Սմբատյան պարիսպների միջև։ Աշոտյան պարիսպների ավերակներն ամբողջությամբ ծածկված էին հողի հաստ շերտով և ի հայտ եկան միայն պեղումների ժամանակ[36]։ Դրանով պարզվեց նաև, որ Սմբատյան ու Աշոտյան պարիսպների միջև եղած տարածությունը մեկ նետընկեցի հասնելու մասին Մ. Ուռհայեցու վկայությունն ընդհանուր առմամբ ճիշտ է։

Ինչպես ասվեց, Աշոտյան պարիսպը ձգվում էր Միջնաբերդի հյուսիս-արևելյան ստորոտով, ընդհանուր առմամբ, հարավ-արևվելքից հյուսիս-արևմուտք ուղղությամբ՝ Ախուրյանի ու Ծաղկոցաձորի կազմած պարանոցի ամենանեղ մասում, իրար հետ միացնելով այդ երկու գետերի զառիթափ ձորերը։

Աշոտյան պարիսպները շարված էին ամուր կարմիր քարից, որը, ըստ Հ. Օրբելու ենթադրության, բերվել է հեռու տեղից[37], որովհետև դա Անիի համար հազվագյուտ էր և դրա տարածքում ու շրջակայքում այդպիսի շինարարական քար չկա։ Շարվածքը կատարված է խոշոր ժայռակոշտերից և վարպետությամբ, սակայն քարերը համեմատաբար վատ են մշակված։ Ըստ Վարդան Վարդապետի հիշատակության, պարսպի աշտարակներում կա-

[34] *Տե՛ս* **Н. Я. Марр**, Ани, *էջ 23*։

[35] *Տե՛ս* Նույն, *Անի, էջ 248*։

[36] **Н. Я. Марр**, Ани, *էջ* 55, **И Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, *էջ 4—5*. Կ. Յ. Բասմաջյան, *Անիի անցեալն ու ներկան, էջ 7*, Նույն, *Անի, էջ 247—248 և այլն*։

[37] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, *էջ 4*։

ռուցվել էին եկեղեցիներ։ Եվ իրոք, ուսումնասիրված երկու ծայրամասային աշտարակներում Թ. Թորամանյանը հայտնաբերել է եկեղեցիների մնացորդներ[38]։ Պարսպի մյուս աշտարակները և դրա կենտրոնական հատվածը հնագիտական ուսումնասիրության չեն ենթարկվել, չնայած 1892—1893 թվականների արշավախմբերից բացի, այստեղ որոշ աշխատանքներ են կատարվել նաև 1904 թվականի ամռանը։ Սակայն կասկածից վեր է, որ պատմագրի վկայությունը միանգամայն արժանահավատ է։ Աշոտյան պարսպի աշտարակներում կային փոքրիկ եկեղեցիներ, ավելի ճիշտ մատուռներ, ինչպիսիք կային նաև Լոռի քաղաքի պաշտպանական պարսպի բուրգերում[39]։ Հավանական է համարվում, որ պարսպի գլխավոր դարպասը գտնվում էր հարավային ծայրում[40] և հավանաբար դրանով էլ կապ էր պահպանվում Հին ու Նոր քաղաքների միջև։ Սակայն պեղումները համեմատաբար խոր շերտերը չեն ընդգրկել և այդպիսի դարպաս չի հայտնաբերվել, բայց պարսպի հյուսիսային հատվածում 1904 թվականի պեղումների ընթացքում հայտնաբերվել է մի փոքրիկ դռնակ[41]։

Աշոտյան պարիսպներն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում առաջին հերթին հենց նրանով, որ դրանք պահպանել են իրենց նախնական ճարտարապետական ոճն ու տեսքը։ Լիովին ընդունելի է ուսումնասիրողների արտահայտած այն կարծիքը, թե Սմբատյան պարիսպները կառուցելուց հետո Աշոտյան պարիսպները կորցրել են իրենց նախկին կարևոր նշանակությունը, իսկ հետագայում, առանց էական փոփոխությունների, ավերվել ու անցել են հողի տակ։

Իր պաշտպանական նշանակությամբ և ճարտարապետական-տեխնիկական կատարվածքով Անիի եղակի հուշարձաններից մեկը քաղաքի Մեծ կամ Սմբատյան (Արտաքին) պարիսպն էր։ Դրա կառուցման մասին Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Սա (Սմբատ II-ը—Թ. Հ.) լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրեան գետոյ մինչև զձորն Ծաղկոցաց, կրով և վիմով մածուցեալ, մահարձանօք և աշտարակօք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բևեռապինդ ամրացուցեալ»[42]։

[38] *Տե՛ս նույն տեղը*։

[39] *Տե՛ս* Վարազդատ Հարությունյան, *Անի քաղաքը, էջ 40*։

[40] **И. Орбели**, Краткий путеводитель по городищу Ани, *էջ* 4—5։

[41] *Նույն տեղը, էջ 5*։

[42] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական, էջ 187*։




Պահպանված պարսպահատվածները, դրանց դռներն ու դռնակները, աշտարակներն ու «մահարձաններըն» հատատում են Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի վկայությունն ամբողջությամբ որ քննարկման առարկա է դարձել շատ հեղինակների ու ճանապարհորդների մոտ։

Քաղաքի զինանշաններ Սմբատյան պարսպի վրա

Գրեթե նույն ձևով են հիշատակում այդ պարսպի կառուցման մասին նաև Վարդան Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին և Սամվել Անեցին. «... Սմբատ, որ Տիգրերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անւոյ շինեաց...»[43],— գրում է Վարդան Վարդապետը։ «Սա (Սմբատ II-ը— Թ. Հ.) ընդ թագաւորելն իւրում, լիր արկեալ պարսպին Անւոյ բարձրաբերձ բրգամբ և լանատարած տեղօք յԱխուրեան գետոյն մինչև ցՇաղկոցաձորն կոչեալ վայր»[44],— տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցին։ Գրեթե բառացիորեն նույնն է գրում նաև Սամվել Անեցին[45]։

Սմբատ II-ի այդ մեծ կառույցի վերաբերյալ վկայություններ ունեն նաև մի շարք ժամանակագրիրներ, հիշատակագրիրներ, պատմագիրներ, որոնց հաղորդումներն իրենց բովանդակությամբ հիմնականում իրար համընկնում են[46]։

Սմբատյան պարսպի կառուցումը տևել է 8 տարի և ավարտվել է 989 թվականին։ Դրա կառուցումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Այդպիսի մի մեծ կառույց գլուխ բերելու համար պահանջվում էին ոչ միայն հսկայական միջոցներ, այլև տեղանքի մանրամասն ուսումնասիրություն և ընդարձակվող քաղաքի հատակագծի առանձնահատկությունների ճիշտ օգտագործում. Մի փոքր առաջ անցնելով ասենք, որ Սմբատ II-ի օրոք կերտված ինժեներական այդ բարդ կառուցվածքն իրեղեն ապացույց է Բագրատունիների շրջանի Հայաստանում շինարարական արվեստի բարձր զարգացման, և հետագայի քարապատումները, նոր բուր-



Սմբատի աշտարակը

գերի ավելացումը, առանձին հատվածների պատերի բարձրացումը և քանդակազարդերը, որ հիմնականում կատարվել են Զաքարյանների իշխանության օրոք, իրենց կատարման բարդությամբ, աշխատանքի ծավալով ու ինժեներական-շինարարական տեխնիկայի տեսակետից, մեր կարծիքով, չեն կարող համեմատվել ընդամենը 8 տարվա ընթացքում ստեղծված այդ երկշարք ու երկար ձգվող, բուրգերով ավելի ամրացված պարսպի հետ, որը մինչև վերջ էլ պատմագիրների մոտ հիշատակվում է Սմբատի անունով։ «Գեղեցկուհին» Սմբատի ժամանակվա էր, որը նոր «հագուստներ» ու «զարդեր» կրեց Զաքարյանների օրոք։

Սմբատյան պարիսպը Նոր քաղաքը բաժանում էր Հյուսիսային արվարձաններից (ինչպես պարսմանակառորեն դրանք կոչեցինք)։ Այն կիսաբոլորակ ձևով, բայց, ընդհանուր առմամբ, ձգվում էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ուղղությամբ, քաղաքի պաշտպանության համար ավելի վտանգավոր հատվածում՝ Գլիձորի ու Շաղկոցաձորի միջև փռված սարահարթի վրա ունե-

---

43 Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, էջ 90։

44 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 88։

45 Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., էջ 103։

46 Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. հինգերորդ, կազմեց Նորայր եպ. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 408, Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 25, 149, Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 621 և այլուր

նալով երկու շարք։ Ավելի ճիշտ, կրկնաշարք է դրա՝ Գլիձորից մինչև Իգաձոր ընկած հատվածը[47]։

Թ. Թորամանյանի ասելով, Սմբատյան պարսպի երկարությունն ավելի քան 2500 մ էր[48]։ Տեղ-տեղ այն ձգվում էր ուղիղ գծով, տեղ-տեղ՝ ոլորաններով։ Միանգամայն ճիշտ է նկատել Ղ. Ալիշանը, որ դրա երկու շարքերի միջև եղած հեռավորությունը տարբեր հեղինակների մոտ տարբեր մեծությամբ է տրված։ Ոմանք դրանց միջև եղած հեռավորությունը համարել են 20, ոմանք՝ 17 ռտնաչափ, ոմանք՝ 6, ոմանք՝ 7 մետր և այլն[49], և իրողությունն այն է, որ տարբեր հատվածներում դրանց միջև եղած հեռավորությունը տարբեր է եղել. տեղ-տեղ դրանք շատ էին մոտենում իրար։ Արտաքին շարքը ընթեն չի պահպանվել։ Հնագետներն ու մյուս ականատես հեղինակները վկայում են, որ ներքին պատի համեմատությամբ արտաքինն ավելի բարակ և ցածր է եղել։

Սմբատյան պարիսպը բարձրաբերձ է եղել, մոտ այժմյան հոտահարկ շենքերի բարձրության։ Թ. Թորամանյանը վկայում է, որ դրա բարձրությունը հասնում էր առնվազն 8—10, իսկ լայնությունը՝ 1 մետրի[50]։ Պատերը շարված են հրաբխային քարերով՝ մածուցիկ կրաշաղախով, կազմելով միաձույլ զանգված, որը դրսից ու ներսից պատած է սրբատաշ քարերով[51]։

Տեղում կատարված ննջումները ցույց են տվել, որ Սմբատյան պարիսպը վերին մասում վերջացել է ատամնաշարով։ Թ. Թորամանյանը վկայում է, որ այդպիսի ատամնաշարի մնացորդներ են պահպանվել Դվինի, Ավագ և Կարուց դռների մոտակայքում՝ և՛ բուն պարսպի որոշ տեղերում, և՛, մանավանդ, մի քանի բուրգերի վրա[52]։

Սմբատյան պարիսպները նույնիսկ մեզ հասած ավերակ վիճակում մեծ տպավորություն են թողնում դիտողի վրա, անկախ վերջինիս մասնագիտությունից։ Այս տեսակետից բանաստեղծական դեղում չի կարելի համարել Լեոյի այն արտահայտությունը, թե՝ «Քաղաքի համար այդ պարիսպը միայն պաշտպանություն

[47] Н. Я. Марр. Ани, էջ 78։

[48] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 334

[49] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 37—38, Г. Абих, Ани, էջ 282, Սարգսյան Ներսես, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 107, Տեղագրութիւն Անի քաղաքին հանդերձ տեսարանացոյց պատկերօք, Թեոդոսիա, 1867, էջ 25 և այլն։

[50] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 334։

[51] Նույն տեղը։

[52] Նույն տեղը, Աշխ. երկրորդ ժողովածու, էջ 106—107։

չէր, այլև զարդարանք»[53]։ Անին պճնող շատ հուշարձաններ կային, բայց մեծ տարածության վրա քաղաքը գոտևորող Սմբատյան կրկնաշարք պարիսպն իր կիսաբոլորաձև ու քառանկյունի աշտարակներով ուղղակի այն դարձնում էր համայիլ։



Ուրծվի բանդակ բաղաքային պարսպի վրա

Սմբատյան պարիսպները մեզ հասած վիճակում երկու կողմերից քարաշաղախած են դեղնավուն, կարմիր, սև, սպիտակ քարերով և այդ տարբեր գույնի քարերով դրա վրա ստեղծել են զանազան զարդեր, շախմատաձև շարվածքներ, խաչեր, բարձրաքանդակներ, ժապավենաձև ձգվող գոտիներ։ Պարիսպներին առանձին շքեղություն են տալիս բարձրաբերձ աշտարակները, որոնց թիվը տասնյակների էր հասնում։ Ըստ Ն. Մառի, Անիի պարիսպներում ընդհանրապես կար 80 բուրգ, դրանցից 55-ը՝ միայն Սմբատյան պարիսպներում («Ани», էջ 144), իրարից գտնվելով 15—20 մ հեռավորության վրա։ Բուրգերում կային զորանոցներ՝ պարսպի վրա հսկող պահակախմբերի համար։ Որոշ բուրգերում կային նաև մատուռներ՝ նման Աշոտյան պարիսպների աշտարակների փոքրիկ եկեղեցիներին։ Բարձրաքանդակներից առանձնապես ուշադրության արժանի է Ավագ դռան մոտ, ներքին պարսպաշարքի վրա քանդակված վազող առյուծի (ըստ ոմանց՝ հովազի կամ վագրի) բարձրաքանդակը, որը սովորաբար համարում են Անի քաղաքի դինանշանը[54]։ Աշտարակներից մեկի վրա պահպանվել են ցուլի և բացված երախով վիշապների բարձրաքանդակներ[55]։ XIX դարի ճանապարհորդները նշում են, որ Սմբատյան

[53] Լեո, Անի, էջ 189։

[54] Տե՛ս И. Орбели, Развалины Ани, С.-Петербург, 1911, էջ 28—29։

[55] Н. Я. Марр. Ани, էջ 60։

պարիսպների վրա քանդակված է եղել մի մարդ, ինչ-որ կառուցվածքի մանրաքանդակ ձեռքին։ Ուսումնասիրողները հավանական են համարում, որ դա պատկերել է պարիսպները կառուցող Սմբատ II-ին (տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 172), բայց հետագայում անհայտացել է և ոչ մի կերպ հնարավոր չէ պարզել իրողությունը։ Անի այցելող բոլոր գիտնականները, ճանապարհորդները, պաշտոնական անձինք և զբոսաշրջիկները միշտ հիացել են Սմբատյան հոյակապ պարիսպներով։ Ականավոր գիտնական Հ. Արիխը, որ աշխարհ տեսած մարդ էր, Սմբատյան պարիսպներն իրենց մեծությամբ ու ամրությամբ համազոր է համարում Հռոմի հայտնի պարիսպներին[56], նշելով նաև առաջինների (և ընդհանրապես Անիի բոլոր կառուցվածքների) շարվածքի բարձր վարպետությունը[57]։ Սմբատյան պարիսպների շարվածքի մեծ վարպետությամբ հիացել է նաև Լինչը[58]։ Իսկ Ա. Անդրեևը այն ուղղակի կոչում է «արտիստական կառույց»։ Ահա նրա խոսքերը. «Դրանք քարերից կոպիտ շարված հաստատակ պատեր չեն. մենք մեր առաջ տեսանք արտիստական կառուցվածք, որի վրա անկասկած աշխատել են այն ժամանակվա լավագույն վարպետները»[59]։

Կարծում ենք Ա. Անդրեևի բնութագրումը դիպուկ է և դրանով էլ կարելի է ավարտել Սմբատյան պարիսպների գեղեցկության ու դիմացկունության մասին մեր խոսքը։ Հետաքրքիր են նաև պարբրասի յուրաքանչյուր աշտարակի, յուրաքանչյուր մեծ կամ փոքր վերանորոգման ու վերակառուցման մանրամասները, որոնց մասին կխոսվի քաղաքի պատմության հաջորդ ժամանակաշրջանին նվիրված գրքում։

Վերջնականապես լուսաբանված չի կարելի համարել Սմբատյան պարիսպների դռների ու դռնակների քանակի և տեղադրության հարցը։ Մ. Ուռհայեցու վկայությամբ, Անին դավաճանաբար Բյուզանդական կայսրությանը հանձնելու ժամանակ կայսրին ուղարկեցին նրա 40 բանալիները։ Եվ առաջին հայացքից թվում է, թե քաղաքի պարիսպներն էլ պետք է ունենային այդքան մեծ ու փոքր մուտքեր։ Սակայն դրեթե բոլոր հեղինակները ժխտում կամ կասկածանքի տակ են առնում տասնյակներով հաշվվող դռների քանակը, բացառյալ Ղ. Ալիշանի։ Նա քաղաքը համարում է այդ-

56 **Г. Абих**, Ани, էջ 282։


57 Նույն տեղը, էջ 280։

58 **Х. Ф. Б. Линч**, Армения, т. I, էջ 473։

59 **А. Андреев**, На развалинах армянской Пальмиры, «Исторический вестник», Москва, 1898, № 1, էջ 204։

քան բազմամուտք, բայց վերապահությամբ. «եթէ չիցեն ի նոյն համար անկեալ և արքունի ապարանից բանալիք», գրում է նա[60]։

Սմբատյան պարիսպների ներքին և արտաքին շարքերի դռները գտնվում են ոչ թե դեմ առ դեմ, այլ շեղ վիճակում։ Դռների այդպիսի դասավորությունը ելնում էր ռազմական-պաշտպանա-



Պարսպի գլխավոր դարպասը

կան նպատակներից։ Դրա շնորհիվ քաղաքի պաշտպանները հնարավորություն էին ստանում քաղաքի վրա հարձակվող թշնամուն երկու պարսպաշարքերի նեղ «միջանցքում» կաշկանդել իր գործողությունների մեջ և հասցնել կործանիչ հարվածներ։ Դռները կամարակապ էին, պարզ ու անզարդ[61]։ Սովորաբար դրանցից յուրաքանչյուրի երկու կողմերում բարձրանում էին հետահարկ աշտարակները, որոնք ավելի էին ուժեղացնում դռների պաշտպանությունը։

Գրավոր աղբյուրների հիման վրա XIX դարի հեղինակներն Անիում ընդհանրապես նշում էին հետևյալ 10 դռները՝ Ավագ, Գլիձորի, Ծաղկոցաձորի (կամ «Զորոյ դուռն», ինչպես սովորաբար գրվում է արձանագրություններում), Կամրջադուռն, Դվինի կամ Երևանի («Դունայ դուռն»), Կարսի («Կարուց դուռն»), Իգաձորի, Գտաակերցի, Տիգրանայ և «Գաղտ դուռն»[62]։ Դրանցից մի քանիսը՝ Գտաակերցի, Գաղտ դուռը և այլն գտնվում էին ոչ թե Սմբատյան պարիսպներում, այլ քաղաքի ուրիշ մասերում՝ դրա արևելյան,

60 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 112։

61 **Սարգսյան Ներսես**, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, էջ 108։

62 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 40։

հարավային և արևմտյան կողմերում։ Օրինակ՝ կասկածից վեր է, որ Կամրջադուռը գտնվում էր հարավային մասում, Մայր տաճարի մոտերքից դեպի Ախուրյանի կամուրջը տանող ճանապարհի վրա։ Արտաքին դարպասների և դռների թիվն ըստ Հ. Օրբելու հասնում էր 17-ի, իսկ ըստ Ն. Մառի՝ 14-ի[63]։

Բուն Սմբատյան պարիսպներում նշմարվում են 7 դռների հետքեր ու ավերակներ, որոնցից երկուսը (ըստ Հ. Գեղամյանցի՝ մեկ) արտաքին շարքում, իսկ 5-ը՝ ներքին։ Ներքին շարքի այդ հինգ դռները համեմատաբար լավ են նշմարվում և ըստ տեղագրության ճիշտ են նաև դրանց անունները։ Դրանք են՝ Ավագ, Գլիձորի, Ծաղկոցաձորի, Կարուց (Կարսի), Դվինի (կամ Երևանի) դռները։

Ավագ դուռը, ինչպես ցույց է տալիս անունը, Սմբատյան պարիսպների գլխավոր դարպասն էր և գտնվում էր քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, Սմբատյան պարսպի դրեթե կենտրոնում, որից մի փոքր արևմուտք գտնվում են արտաքին շարքի համապատասխան դռան ավերակները։ Այնպես որ Ավագ դռնից անմիջապես անհնար էր դուրս գալ Հյուսիսային արվարձաններ[64]։ Քաղաքի գլխավոր փողոցը, ինչպես ցույց են տվել պեղումները, Աշոտյան պարիսպներից ձգվում էր մինչև այստեղ՝ մինչև Ավագ դուռը, որտեղից երևում է ավերակ քաղաքի ամբողջ համայնապատկերը։ Դրա լայնքը 3 սաժեն և 1 արշին է (մոտ 7,1 մ), նույնքան էլ բարձրությունն է՝ լցված հողի մակարդակից հաշված։ Դրսան աջ ու ձախ կողմերում բարձրանում են երկու եռահարկ աշտարակներ, որոնցից մեկը լավ է պահպանվել, իսկ մյուսը գտնվում է կիսաքանդ ու խարխուլ վիճակում։ Դռան մոտ, պարսպապատի վրա, ինչպես ասվեց, քանդակված է վազող առյուծ (կամ հովազ), որից ոչ հեռու գտնվում է ուշ շրջանի հայերեն մի արձանագրություն։ Դուռը կամարակապ է եղել, բայց առանց զարդարանքների[65]։

Մոտավորապես ճիշտ հյուսիսային կողմում էր գտնվում Կարսի («Կարուց») դուռը, որը նույնպես կամարակապ է եղել, երկու կողմերում զարձյալ ունենալով ամրակուռ, եռահարկ աշտարակներ։ Այս դռնով էր անցնում դեպի Կարս, իսկ այնտեղից էլ՝ Սև ծովի առափնյա քաղաքները տանող քարավանային ճանապարհը։ Դրա լայնությունը երկու սաժեն էր (մոտ 4,3 մ), իսկ բարձրությունը փլված և լցված վիճակում՝ հազիվ մեկ արշին, ունի վեց կամար և ճակատին քանդակված մեկ խաչ[66]։

Դվինի («Դունա») կամ Երևանի դուռը գտնվում էր քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, Սմբատյան պարսպի այն հատվածում, որտեղ այն ուներ գրեթե հյուսիսային ուղղություն։ Սկզբնական շրջանում այս դուռը հայտնի էր Դվինի անունով, իսկ հետագայում՝ մոտավորապես XIV դարից, դրա անշուքացումից հետո, կոչվել է Երևանի անունով։ Այս դռան շրջակայքում ու բուն բացվածքի մեջ հսկայական քարակույտեր են առաջացել։ Չափերով Ավագ դարպասին միայն մի փոքր է զիջում[67]։

Իսկ Ծաղկոցաձորի ու Գլիձորի դռներն անհամեմատ ավելի փոքր էին և իրենց նշանակությամբ հավանաբար նշվածներին շատ էին զիջում։ Այս դռներից դուրս էին գալիս ոչ թե քարավանային հայտնի մայրուղիներ, այլ տեղական նշանակության ճանապարհներ։ Ծաղկոցաձորի դուռը գտնվում էր քաղաքի հյուսիս-ափամերձյան, իսկ Գլիձորինը՝ հյուսիս-արևելյան կողմում։

Մեծ դռներից բացի, կային նաև ավելի նեղ, բազմաթիվ դռնակներ և՛ Սմբատյան պարիսպներում, և՛ քաղաքի մյուս պարբսպապատերում։

Սմբատյան պարիսպները մեզ ներկայանում են մի շարք անգամ վերակառուցված, վերանորոգված, նոր աշտարակներով համալրված տեսքով՝ ավերված վիճակում։ Սմբատյան պարիսպների այդ վերափոխությունների մասին խոսել են շատ հեղինակներ[68]։ Նրանք միահամուռ նշում են, որ Անիի Արտաքին պարիսպներում նկատվում է տարբեր ժամանակների 3—4 շերտ։ Մեզ թվում է, որ այդ անհավանական է։ Պարսպի հաստությունը, ինչպես տեսանք, ընդամենը մեկ մետր էր և հնարավոր չէր, որ այդքան հաստության պարիսպը իր վրա կրեր 3—4 վերակառուցման շերտ, որոնցից յուրաքանչյուրն ամենայն հավանականությամբ 20 սանտիմետրից պակաս չէր կարող լինել։ Ստացվում է, որ

---

63 Նույն տեղը։ *Տե՛ս նաև* **И. Орбели,** Краткий путеводитель по городищу Ани, էջ V. **Н. Я. Марр.** Ани, էջ 144։

64 *Տե՛ս «Փորձ» հանդես, 1880, № 5, էջ 53—56։*

65 *Տե՛ս «Փորձ» հանդես, 1880, № 5, էջ 53—56,* Ղ. Ալիշան, *Շիրակ, էջ 40,* Ալն, *Անի, էջ 142 և 193—198,* **И. Орбели,** Краткий путеводитель по городищу Ани, էջ 19—22, **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., էջ 191—193 և այլն։

66 Նույն տեղերում։


67 Նույն տեղերում։

68 *Սմբատյան պարիսպների նոր կառուցումների, վերանորոգումների ու վերակառուցումների մասին տե՛ս* **Н. Я. Марр.** Ани, Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., Հ. Օրբելի, Հայկական վիմագրություն, պր. I, Անի քաղաք,* նույնի «Краткий путеводитель по городищу Ани», և այլուր։

Սմբատյան պարիսպն իր նախնական վիճակում 20—40 սանտիմետրից հաստ չէր. անընդունելի է։

Սմբատյան պարսպի արտաքին շարքի երկայնքով, 500 մ երկարությամբ ձգվում էր պաշտպանական խանդակը, որի մասին արդեն ասվել է։

Ճիշտ է նկատում ճարտարապետ Վ. Հարությունյանը, որ Անիի գրաված տարածքի երեք կողմերը ձորերով ու կիրճերով կտրտված լինելու հետևանքով, անհրաժեշտություն էր առաջացել կառուցել մեծ ու փոքր մի շարք կամուրջներ (տե՛ս նրա՝ «Անի քաղաքը», էջ 70), որոնք քաղաքը կապում էին շրջակայքի ու հեռավոր վայրերի հետ։ Այդ մեծ կամուրջները հիմնականում կառուցված էին Ախուրյան գետի վրա։ Սակայն ամենայն հավանականությամբ գոյություն ունեին նաև մի ամբողջ շարք ավելի մանր և կառուցողական տեխնիկայի առումով պարզունակ կամուրջներ, որոնք գտնվում էին Ծաղկոցաձորի, Իգաձորի և Գլիձորի վրա։ Սրանց միջոցով քաղաքի տարբեր մասերը կապվում էին իրար հետ։ Այդ «հատարակ» կամուրջներից ոչինչ չի պահպանվել՝ ո՛չ ավերակները և ո՛չ էլ, նույնիսկ, հետքերը, բացառությամբ Ծաղկոցաձորում նշմարվող երկու այդպիսի փոքր ու հին կամուրջների մնացորդներից, որոնց մասին հիշատակում է Թ. Թորամանյանը։



Անիի կամուրջի վերակազմության նախագիծը

Թ. Թորամանյանի վկայությամբ, Ախուրյան գետի վրա կառուցված են եղել հինգ միակամար քարաշեն մեծ կամուրջներ[69], որոնցից երկուսը Անիի տարածքում։ Ելնելով ճարտարապետական կառուցվածքի առանձնահատկություններից, նա ժխտում է այն վարկածը, ըստ որի, այդ կամուրջներն իրր վերաբերում են XIII դարին։ Նրա կարծիքով ավերակների ձևով մեզ հասած Անիի այդ երկու կամուրջները (ինչպես և Ախուրյանի վրայի մյուս 2—3 կամուրջները) կառուցվել են մինչև XI դարը, որովհետև դրանից հետո, ինչպես նշում է նա, այդ կարգի կամուրջներ Հայաստանում հայտնի չեն։ Բարձր վարպետությամբ կառուցված այդ կամուրջները միակամար են, քարակերտ, ավելի քան 30 մ բացվածքով և իրենց կառուցողական արվեստով մեծ զարմանք են պատճառում նույնիսկ այսօրվա արվեստագետ-ճարտարապետներին։ Բուն Անիի տարածքում գտնվող մեծ կամուրջը, որի տրամագիծը 31, 25 մ է, վերակազմել է Թ. Թորամանյանը։ Դրա երկու թևերում՝ հենարանների և առափնյա խոչերի միջև եղած փայտյա հատվածները շարժական էին. դրանք վտանգի ժամանակ քաշում էին դեպի ափ և այսպիսով հիմնական հենասյուների ու խոչերի միջև եղած մասերն անջատում էին իրարից՝ կամուրջի երկու թևերը կտրելով գետի աջ ու ձախ ափերից և այն դարձնելով անանցանելի։ Պաշտպանական տեսակետից պակաս նշանակություն չունեին նաև կամրջի հենարանների վրայի երկու կրկնահարկ աշտարակները, որոնց ներսում գտնվում էին պահականոցները և մաքսատունը։ Աշտարակներն ունեին կամարակապ ծածկ և կամարաձև դռներ, որոնք վտանգավոր պահերին փակում էին և կամուրջը դարձնում անանցանելի։ Թ. Թորամանյանի վերակազմած այդ կամրջից ոչ հեռու գտնվում էր Անիի մյուս մեծ կամուրջը, որից պահպանվել են միայն հենասյուների չնչին մնացորդներ։


Գ. Անիի X—XI դարերի եկեղեցական հուշարձանները

Անիի **Մայր** տաճարի մասին կան այնքան բազմաքանակ հիշատակություններ և ստեղծվել է այնքան ծավալուն գրականություն, որ այդ ճարտարապետական գլուխգործոցի վերաբերյալ անհնար է նոր խոսք ասել։ Առանձնապես համակողմանի է ուսումնասիրված դրա ճարտարապետությունը։ Սակայն հռչակավոր տաճարի հետ կապված ոչ բոլոր հարցերն են, որ ապահով պատաս-

[69] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 97։

խան են ստացել ճարտարապետական, պատմագիտական ու հնագիտական աշխատություններում։

Մայր տաճարը յուրատեսակ խորհրդանշում էր Անին։ Իբրև մայրաքաղաքի ամենահայտնի կառույցներից մեկը, այն տեղա-



Մայր տաճարը

դրված էր քաղաքի բոլոր կողմերից երևացող տեղում, որտեղից իր հերթին դիտողի առջև բացվում էր մայրաքաղաքի ընդհանուր համայնապատկերը։ Այն գտնվում էր Աշտարյան ու Սմբատյան պարիսպների միջև, Ախուրյանի ձորից ոչ հեռու, դեղատեսիլ ստորահարթում, Միջնաբերդի հետ միատին իշխող դիրք ունենալով ամբողջ քաղաքի վրա։

Մայր տաճարի կառուցման վերաբերյալ պահպանվել են վիմագրական ու մատենագրական բազմաթիվ վկայություններ, որոնք, սակայն, իրարից զգալի չափով տարբերվում են և հնարավորություն չեն տալիս դրա կառուցման ճշգրիտ թվականն ու շինարարության տևողությունը որոշել բոլոր հեղինակների համար ընդունելի ձևով։ Այսպես, ըստ Մ. Չամչյանի, Մայր եկեղեցու շինարարությանն սկսվել է Սմբատ II-ի օրոք՝ 989 թվականին և ավարտվել ընդամենը չորս տարվա ընթացքում՝ 993 թվականին[70]։

[70] Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 871—872։

Հ. Աբիխը, որ դրա մասին վկայակոչում է Բրոսեին, տաճարի շինության սկիզբը համարում է ոչ թե 989, այլ 980 թվականը, իսկ ավարտման տարին՝ դարձյալ 993 թվականը[71]։ Մ. Չամչյանի հետ համաձայն են Մայր տաճարի առաջին նկարագրողներից և, ընդհանրապես, Անիի պատմության առաջին հեղինակներից մեկը՝ Մ. Բժշկյանցը[72] և ճանապարհորդ Հ. Գեղամյանցը[73], որոնք նույնպես տաճարի կառուցման ժամանակը համարում են 989—993 թվականները։ Այս հարցում այլ է Ղ. Ալիշանի կարծիքը։ Նա նույնպես դրա կառուցման սկիզբը համարում է 989 թվականը, բայց ավարտման տարեթիվը դնում է ավելի ուշ՝ 1008 կամ 1009 թվականը, հայտարարելով, թե «Քրիստոսի հազարամեայ յոբելեանին» նվիրված այդպիսի մնայուն շենք կառուցելու համար անհրաժեշտ է եղել շուրջ 20 տարի[74]։ Հետագա ուսումնասիրողները, հենվելով նույն տաճարի հարավային պատի վրա եղած վիմագիր արձանագրության և Ասողիկի, Վարդան Վարդապետի, Սամվել Անեցու ու մյուս պատմագիրների հիշատակությունների վրա, պարզել են, որ Անիի այդ անզուգական եկեղեցին կառուցվել է ընդամենը 11—12 տարվա ընթացքում՝ 989—1001 թվականներին՝ դրա շինարարությունը սկսելով Սմբատ II-ի թագավորության վերջին տարում՝ 989 (ըստ ոմանց՝ 988) կամ 990 թվականին, ավարտվել է 1001 թվականին[75], ինչպես ազդարարում է նշված վիմագիր արձանագրությունը։

Այդպիսով տաճարի կառուցումն սկսվել է Սմբատ II-ի օրոք, հավանաբար նրա թագավորության վերջին տարում, և ավարտվել է Գագիկ I-ի ժամանակ։ Բոլոր աղբյուրները վկայում են, որ տաճարի շինարարությունը կատարվել է Գագիկ I-ի կնոջ՝ Կատրամիդե թագուհու միջոցով[76], իսկ ճարտարապետը, ինչպես նշվել է,

[71] **Г. Абих**, Ани, էջ 287։

[72] Միհաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Հայաստան, էջ 25։

[73] Հ. Գեղամյանց, Ախալցխայից մինչև Անի, «Փորձ» հանդես, 1880, № 6—7, էջ 50—51։

[74] Տե՛ս Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 28 և «Նըշդամարք Հայկանք», էջ 47։

[75] Տե՛ս И. **Орбели.** Краткий путеводитель по городищу Ани, էջ 38. Н. М. **Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., էջ 193, А. Л. Якобсон. Очерк истории зодчества Армении V—XIV веков, էջ 80, (այս հեղինակը լիովին բնդունում է Ն. Մառի «Визант. Временник»-ում, XII, 1906, I, էջ 40—41 արտահայտած կարծիքը, ըստ որի Մայր տաճարը կառուցվել է 988—1000 թվականներին). Վարազդատ Հարությունյան. Անի քաղաքը, էջ 58—59 և այլուր։

[76] Կատրամիդե թագուհուն ոմանք համարել են Սյունյաց Սահակ իշխանի

եղել է համբավավոր Տրդատը, որ ամբողջովին այդ գործին ձեռնամուխ է եղել Կ. Պոլսի սուրբ Սոֆիայի գմբեթը 989 թ. վերականգնելուց հետո։



Մայր տաճարի ներսը

Անիի այդ տաճարը սովորաբար կոչել են Կաթողիկե, Կաթողիկե Մայր եկեղեցի, Մայր եկեղեցի, Ավագ եկեղեցի։ Ղ. Ալիշանի ասելով, այն նվիրված էր ս. Աստվածածնին[77]։ Եվ չնայած պատմագիրների մոտ այդ մասին, ինչքանով մեզ հայտնի է, ոչ մի վկայություն չկա, այնուամենայնիվ, Ղ. Ալիշանի արտահայտած այդ կարծիքը գրեթե համընդհանուր ընդունելություն է գտել բոլոր հեղինակների կողմից. նրանք նույնպես Անիի մայր տաճարը կոչում են ս. Աստվածածին։

Անիի Կաթողիկե տաճարի կառուցման մասին նույն եկեղեցու

դուստրը (օրինակ՝ տե՛ս Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, էջ 90), որ անընդունելի է, իսկ Վրաց հեղինակ Վախուշտի Բագրատիոնի այն հիշատակությունը, թե նա բյուզանդական թագավորի դուստրն էր (տե՛ս Ն. Մելիխեթ-Բեկ, Վրաց աղբյուրները... հ. Գ, էջ 42), պարզապես թյուրիմացություն է։ Կատրամիդեն Սյունյաց Վասակ թագավորի (որին որոշ պատմագիրներ համարում են Անիի-Շիրակի թագավորությանը ենթակա սոսկ իշխան) դուստրն էր (տե՛ս Н. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 35, Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 303 և այլն)։

[77] Ղ. Ալիշան, Նշմարք Հայկականք, էջ 50։

հարավային պատի վրա, ամենագեղեցիկ երկաթագրով փորագրված է Կատրամիդե թագուհու արձանագրությունը, որ առ այսօր էլ լավ ընթեռնելի է։ Այնտեղ ասված է. «Ի՛ն ՆԹ՛։ թուին Հայոց (1001) ՄԺԹ։ թուին Հոռոմոց. Ի ժամանակս ածասպատիւ եւ հոգեսէր տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց Շահանշահի, ես Կատրանիդէ Հայոց թագուհի, դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի յողորմութիւնն այ ապաւինեցա եւ հրամանաւ առն իմո Գագկա շահանշահի. շինեցի զսուրբ Կաթողիկէս, որ էր հիմնադրեալ մեծին Սրմբատա եւ կանգնեցաք տուն այ նորոգ եւ կենդանի ծնունդ հո(յ)գեւոր եւ արձան մշտնջենաւոր, զարդարեցի եւ զարդիւնք պատուականաւք նուէրք ինձ ի Քրիստոս եւ զարմից իմ եւ որդոց Սմբատա, Աբասա եւ Աշոտո. Հրամանեալ եմ եւ տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցոյս, յետ էլից բարէպաշտ թագուհոյս զվարդապարին յիսնեակաւ միով քառասնիւ կատարել անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի։ Եթէ ոք զարձանագրեալդ անիծոյթ առնէ դատապարտեալ եղիցի ի Քրիստոս...»[78]։

Միայն այս արձանագրությունը (որի բնագիրը տեղ է գտել մի շարք հեղինակների աշխատություններում)[79] բավական է, որպեսզի ճշգրիտ գաղափար կազմենք տաճարի կառուցման ժամանակի և հանգամանքների մասին։ Սակայն տաճարի կառուցման, դրա ճարտարապետական մեծ արժանիքների և զանազան սպասքների նվիրատվության մասին ոչ պակաս արժեքավոր վկայություններ ունեն պատմագիրները՝ Ասողիկը, Վարդան Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Սամվել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը[80]։ Դրանցից տաճարի կառուցման ժամանակակիցը Ասողիկն է, որը տեղեկություններ է հաղորդում այդ ղուխդործոցի գեղեցկության, մեծարժեք սպասքների ու զարդարման, կառուցող ճարտարապետի և շինարարության հետ կապված

---

[78] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, էջ 35։

[79] Տե՛ս Հովհ. Շախաթունյան, Մատենագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատա, էջմիածին, հ. Բ, 1842, էջ 353—354, Սարգիս Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփխիս, 1842—1858, էջ 5, Ներսես Մարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 117—118, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 67—70, Գևորգյան Մ., Համառոտ տեղագրութիւն..., էջ 34, Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, էջ 8—9, Պալաֆյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 31—32 և այլն։

[80] Տե՛ս Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, էջ 90, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 88, Սամվել Անեցի, Հաւաքումն ի գրոց պատմագրաց..., էջ 103 և 105, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, էջ 56, Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 300։

այլ հանգամանքների վերաբերյալ։ Թվարկված մյուս պատմագիրների հիշատակություններն ամբողջովին բխում են Ասողիկի վկայություններից, որոնցից այստեղ անհրաժեշտ ենք համարում մեջ բերել միայն երկու փոքր հատված։ Դրանցից մեկը վերաբե-



Մայր տաճարի կառուցողական արձանագրությունը

րում է Սմբատ II-ի թագավորության վերջին տարիներին, երբ նա քաղաքի Արտաքին կամ Մեծ պարիսպն ավարտելուց հետո, Տրդատ ճարտարապետի ձեռքով հիմք է դնում նշանավոր տաճարի կառուցմանը. «Արկանեն հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայ»,— գրում է նա[81]։ Իսկ մի այլ տեղում արդեն հաղորդում է դրա կառուցման, գեղեցկության և սպասքների մասին. «Այլ կին նորա (Գագիկ I-ի—Թ. Հ.) Կատրամիրէ թագուհի բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վասակայ

[81] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 187։

Սիւնեաց իշխանի՝ շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ, բարձրարերձ կամարօք գմբեթաւորեալ խորան երկնանման, և զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթից և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որոք ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»[82]։

Հարտարապետական այդ սքանչելի կառուցվածքի մասին հիշատակությունները դրեթե առանց ընդհատվելու շարունակվում են նաև հետագա ժամանակներում՝ ընդհուպ մինչև XIX դարը[83], երբ այն արդեն դարձավ հնագիտական, հարտարապետական ու պատմական որոշ ուսումնասիրությունների առարկա։

Իր մեծությամբ Անիի Մայր տաճարը զիջում էր միայն արքայական պալատի համալիրին։ Այն ավելի մեծ էր, քան էջմիածնի Մայր տաճարը։ Երկարությունը՝ հաշված պատերի դրսի կողմից, հասնում է 34, 30 մետրի, լայնությունը՝ 21, 70 մետրի, իսկ ներսից հաշված դրա չափերը կազմում են 19,70×32,00 մետր[84]։ Մայրաքաղաքի Մայր տաճարը կարող էր տեղավորել հսկայական թվով մարդկանց, մանավանդ, որ դրա գմբեթակիր չորս հաստատուն սյուները գրեթե կլած էին պատերին[85] և չէին խախտում եկեղեցու ընդարձակությունը։ Տաճարը կառուցված է դեղին, սև, կարմիր և գորշ, ամբողջապես սրբատաշ տուֆից։ Պատերի քարերի լայնությունը 1/2—3 արշին է (մոտ 35 սմ—2,1 մ), իսկ երկարությունը՝ ավելի քան 1—2 (մոտ 0,7—1.4 մ) արշին։ Պատերի արտաքին կողմի քարերը ներքին կողմի քարերից համեմատաբար մեծ են։ Տիրապետող գույնը դեղինն է, հիմնականում այդ գույնի տուֆով են շարված պատերը։

Տեղի ճիշտ ընտրությունը, մեծությունն ու վեհությունը, պարզությունն ու ակնառուն դեղեցկությունը, հատակագծային ու կառուցողական կատարելությունը, հարտարապետական հնարանք-

[82] Նույն տեղը, էջ 256։

[83] Տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. I, Երևան, 1951, էջ 25, 29, 148, 149, հ. II, Երևան, 1956, էջ 130, Հովհ. Մանվելյան, Հար. Արրահամյան, Անանուն ժամանակագրություն, Երևան, 1940, էջ 15 և 16, Յ. Թօփճեան, Տուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 62, Նոռայր Պողարեան Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հ. V, Երուսաղեմ, 1971, էջ 408, Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 62 և այլն։

[84] Տե՛ս Գ. Ալիշան, Շիրակ, էջ 64, Պալամյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 29, К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 44 և այլն։

[85] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական հարտարապետութ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 222։

ների նորություններն ու անպաճույճ լինելը, շարվածքի ոսկերչական վարպետությունը, գմբեթակիր սյուներն ու մյուս սյունաշարքերը, պատերն արտաքինից զարդարող նազելի կիսասյուներն ու դրանք իրար միացնող նույնքան նրբին կամարները, քիվերի սքանչելի զարդերը, եռանկյունաձև որմնախորշերը, որոնք իրարից հավասար հեռավորությամբ ձգվում են վարից վեր, գմբեթի յուրահատուկ կառուցվածքը, տաճարի ներսի բնական համեմատաբար թույլ լուսավորվածությունը՝ այդ բոլորը Անիի կաթողիկե Մայր տաճարը դարձնում են ճարտարապետական մի այնպիսի գլուխգործոց, որի նշանակությունը դուրս էր գալիս ազգային ճարտարվեստի սահմաններից, իր ազդեցությունը թողնելով հետագայում Եվրոպայում ձևավորված գոթական ճարտարապետական ոճի վրա[86]։ Եվ իզուր չէ, որ Անի այցելած հեղինակներից մեկը կենտրոնագմբեթ Մայր տաճարը համարել է «Կովկասի լավագույն զարդը»։ Դրա մոնումենտալության մասին, ինչպես տեսանք, առաջին անգամ նշում է հենց ինքը՝ ժամանակակիցը՝ պատմագիր Ասողիկը։

Տաճարն ունի երեք դուռ, որոնցից մեկը, որ գլխավորն է, գտնվում է արևմտյան կողմում, իսկ մյուսները բացվում են դեպի հարավ ու հյուսիս և ավելի գեղեցիկ ու զարդանախշ են։ Տաճարի մեծության ու ընդարձակության համեմատությամբ պատուհանները փոքր են, նեղ ու երկար, ունենալով զարդաքանդակ շրջանակներ։ Ունի նաև ութ ավելի փոքր ու կլոր պատուհաններ, որոնք գտնվում են շինության ավելի բարձր մասում և որոնք ավելի զեղազարդ են։

Եթե տաճարը կիսականգուն վիճակում մեզ հասնելու պատճառով (փլված է միայն գմբեթը) անհամեմատ հեշտ է խոսել նրա ճարտարապետական-կառուցողական արվեստի վերաբերյալ, ապա

[86] *Մայր տաճարի ճարտարապետության մասին տե՛ս* Հ. Գեղամյանց, *Ախալցխայից մինչև Անի, «Փորձ», Տիխիս, 1880, № 6—7, էջ 51—52,* Գ. Ալիշան, *Շիրակ, էջ 65—67,* **Г. Абих,** Ани, *էջ* 287—288, **Х. Ф. Б. Линч,** Армения, т. I, *էջ* 475—479, **Н. Я. Марр,** Ани, столица древней Армении, *էջ* 206, **А. Андреев,** На развалинах армянской Пальмиры, Москва, 1898, *էջ* 158—159. Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 178 և 222,* Պալասյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 27—30,* Նոր, *Անի, էջ 157—159, «Բազմավեպ», 1939, № 8—10, էջ 233—234,* **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., *էջ* 194—197, **А. Л. Якобсон,** Очерк истории зодчества Армении V—XVII веков, *էջ* 80—82, Վ. Հարությունյան, *Անի քաղաքը, էջ 58—59, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 199—200,* **К. Л. Оганесян,** Зодчий Трдат, *էջ 35—45, 106—107 և այլ տեղերում։*

նույնը չի կարելի ասել դրա ներքին հարդարանքների և սպասքի վերաբերյալ, որոնց նույնիսկ հետքերը մեզ համար մնում են անհայտ։ Այստեղ մեզ բացառապես օգնության են գալիս գրավոր վկայությունները, առաջին հերթին, Ասողիկի ու Մ. Ուռհայեցու հիշատակությունները և տաճարի կառուցման մասին եղած արձանագրությունը։ Ըստ այդ հաղորդումների, տաճարն ուներ ոսկե և արծաթե թանկարժեք շատ սպասքներ։ Դրան մի առանձին շուք էին տալիս մարդու հասակի մեծության ունեցող արծաթյա խաչը, որ ամրացված էր գմբեթի ծայրին և Սմբատ II-ի կողմից Հնդկաստանից բերված շքեղ ու թանկարժեք բյուրեղյա կանթեղը՝ ջահը, որ կախված է եղել տաճարի ներսից և ունեցել է 12 լիտր քաշ ու տարողություն[87]։

Մայր տաճարի վրա վերը նշված շինարարական ընդարձակ արձանագրություններից բացի, մի ամբողջ շարք արձանագրություններ են թողել նաև հետագայի իշխանավորներն ու առանձին նվիրատուները՝ բյուզանդական Ահարոն կատապանը, Բագարատ մագիստրոսը (1057—1063), նվիրատուներ ոմն Զահալին (1235), մեծատուն Տիգրան Հոնենցը (1213), որը նվիրատվությունների հետ միասին կառուցել է նաև աստիճաններ, ոմն Ռոբենը (1286) և այլք, որոնցում նվիրատվությունների հետ նշվում են նաև քաղաքի ու տաճարի մասշտաբով կատարված մի շարք շինարարական աշխատանքների, հարկերի և այլնի վերաբերյալ[88]։

Ուսումնասիրողներից ոմանք անուղղակի հիշատակություններից այն եզրակացության են հանգել, որ Սարգիս կաթողիկոսի օծած Մայր տաճարում են ձեռնադրվել Հայոց հայրապետներն ու թագադրվել Շիրակի Բագրատունի թագավորները[89]։ Այստեղ են տեղի ունեցել քաղաքի եկեղեցական ամենաշքեղ ու մարդաշատ պատարագներն ու հանդիսները։

Ավանդատան, աստիճանների և մի շարք այլ, ոչ էական, կառուցումները և որոշ նկարազարդումներ, չհաշված Անիի Մայր տաճարը, հիմնական վերանորոգման, առավել ևս վերափոխության ու վերակառուցման չեն ենթարկվել։ Համենայն դեպս, մեզ հասած աղբյուրներում այդ մասին ոչինչ չի հաղորդվում։ Հոյակապ տաճարը դարեր շարունակ դիմացել է բնության ու «մարդու» ավերիչ գործունեությանը և առանց էական փոփոխության նախնա-

[87] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, էջ 149։ Համմ.* Թ. Թորամանյան, *Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 370։ Տե՛ս նաև* Նոր, *Երկերի ժողովածու, հ. 2, էջ 593։*

[88] *Տե՛ս* Գ. Ալիշան, *Շիրակ, էջ 67—73։*

[89] *Տե՛ս «Փորձ» հանդես, 1880, № 6—7, էջ 50—51։*

կան վիճակում հասել մինչև նոր ժամանակները։ Այն, Ալփ-Արսլանի 1064 թվականի արշավանքից հետո, մզկիթի վերածվելու ժամանակ նույնպես մնաց նախկինը, միայն գմբեթի կատարին գտնվող արծաթյա խաչը փոխարինվեց կիսալուսնով, իսկ Հընդկաստանից բերված բյուրեղապակյա մեծարժեք ջահը ջարդվեց վայրագ թշնամու կողմից։ Սակայն այն XII դարում նորից բերվեց իր նախկին տեսքին և մինչև վերջ մնաց իբրև քրիստոնեական տաճար։

Անընդունելի է Ն. Մառի այն ենթադրությունը, թե Մայր տաճարը հիմնական վերանորոգման է ենթարկվել XII դ. վերջերին կամ XIII դ. սկզբներին, այդ ժամանակներին վերագրելով նրա պատերի «նոր» քարապատումը, արտաքին կիսասյուները, եռանկյունաձև խորշերը, մեծ թվով զարդաքանդակներ[90]։ Մեր կարծիքով, այս հարցում նախընտրելի է Ճարտարապետ-պատմաբանի՝ Ն. Մ. Տոկարսկու կարծիքը, ըստ որի Մայր տաճարի վրա հիմնական վերանորոգման հետքեր չեն նշմարվում[91], իսկ «վերականգնելու» մասին թվում է, թե խոսք լինել չի կարող, որովհետև ոչ մի փաստ չկա նաև դրա փլուզման կամ քայքայման վերաբերյալ։ Այդ բոլորը դեռ ուշինչ, գիտական ենթադրություններ են և կարելի է ընդունել կամ չընդունել։ Սակայն հարցն այն է, որ Ն. Մառի հիմքից զուրկ այդ ենթադրությանը հետևում է մի այլ, գիտության շրջանակներում չտեղավորվող, եզրակացություն, ըստ որի այդ ենթադրվող «վերանորոգումները, վերակառուցումներն ու վերականգնումները» X դարի վերջերին կառուցած տաճարը իբր դարձնում են XII դարի վերջի կամ XIII դարի սկզբի հուշարձան[92]։ Եթե հետևելու լինենք այդ դատողությանը, ապա աշխարհի պատմական գրեթե բոլոր հուշարձաններն իրենց կառուցման ժամանակին չեն վերաբերում, որովհետև դրանք հետագա ժամանակներում կրել են զգալի փոփոխություններ։

Անիի Մայր տաճարը մեր օրերն է հասել կանգուն, բայց գմբեթը փլված վիճակում։ Եթե հավատալու լինենք կիսաավանդական տեղեկություններին, ապա դրա գմբեթի փլուզումը պետք է վերագրենք XIV դարի սկզբներին տեղի ունեցած կործանիչ երկրաշարժին[93]։ Մինչդեռ XIX դարին վերաբերող գրականության մեջ սովորաբար նշվում է, որ Մայր տաճարի գմբեթը փլվել է 1840

[90] **Н. Я. Марр**, Ани, էջ 118—119։

[91] Տե՛ս **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., էջ 194—195։

[92] **Н. Я. Марр**, Ани, էջ 119։

[93] **И. Орбели**, Путеводитель по городищу Ани, էջ 38—39։

թվականին՝ Այրարատյան աշխարհում տեղի ունեցած երկրաշարժից[94]։

Սակայն այդ վիճակում էլ Մայր տաճարը Ն. Մառի կատարած պեղումների ժամանակ պիտանի էր իբրև կանգուն շենք։ Այստեղ, որոշ վերանորոգողական աշխատանքներ կատարելուց հետո, ստեղծվեց Անիի հնագիտական թանգարանի մի ընդարձակ բաժինը՝ հնադարանը, որտեղ հավաքված էին Անիի տարածքում հայտնաբերված այն բոլոր քարակտորները, որոնք արվեստի և ճարտարապետության առումով ուշադրության արժանի էին։

Եկեղեցաշատ Անիի երկրորդ հայտնի տաճարը Գագկաշեն եկեղեցին էր, որ կրում էր «սուրբ Գրիգոր» անունը։

Գագկաշեն՝սուրբ Գրիգոր տաճարի կառուցման ճշգրիտ թվականը հայտնի չէ, չնայած դրա մասին հիշատակություններ ունեն մի քանի պատմագիրներ, որոնցից առաջինը և ժամանակակիցը Ասողիկն է։ Նա և նրա կրտսեր ժամանակակից Սամվել Անեցին վկայում են, որ տաճարը կառուցվել է Քրիստոսի ծննդյան 1000-ամյակը լրանալու ժամանակ, այսինքն՝ 1000 թվականին[95], որը նույնությամբ ընդունել է Անիի պատմությամբ առաջինն զբաղվողներից մեկը՝ Մինաս Բժշկյանցը[96]։ Կիրակոս Գանձակեցու հիշատակության համաձայն, այն կառուցվել է 998 թվականին, թեպետև պատմիչը միաժամանակ նշում է, որ շինարարությունն ավարտվել է «ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...»[97]։ Տաճարը փլատակների վերածվելու պատճառով, ուշնայացել են նաև դրա վրայի վիմագիր արձանագրությունները։ Ենթադրվում է, որ տաճարի վրա եղել է նաև դրա կառուցման մասին մի ընդարձակ արձանագրություն և տաճարի տարածքում հայտնաբերված խոշոր ու գեղեցիկ գիր ունեցող 131 քարակտորները համարում են հենց այդ արձանագրության մասերը[98], որոնք, ցավոք, շատ պակասավոր են և ամբողջություն չեն կազմում։ Այնպես որ այդ հուշակավոր տաճարի հիմնադրման և շինարարության ավարտի տարեթվերի մասին մեզ ուղղակի վկայություններ չեն հասել։ Եվ այդ է պատճառը, որ տարբեր հեղինակներ նրա

[94] «Տեղադրութիւն Անի քաղաքին հանդերձ տեսարանացոյց պատկերօք», էջ 33, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 65—66 և այլն։ Այդ նույն երկրաշարժի հետևանքով է ցնծի հակայական զանգվածի տակ ատհավետ թաղվել Մասիսի լանջին եղած հին Ակռռի գյուղը։


[95] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 204, Սամվել Անեցի, Համառօտ ի գրոց պատմագրաց..., էջ 104։

[96] Մինաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 26։

[97] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 88—89։

[98] Տե՛ս **Н. Я. Марр**, О раскопках и работах в Ани летом 1906 года. С.-Петербург, 1907, էջ 18։

կառուցումը վերագրում են տարբեր թվականների։ Ղ. Ալիշանի կարծիքով, տաճարը կառուցվել է ընդամենը 4—5 տարվա ընթացքում՝ 996/97—1000 թթ., Ն. Մառը դրա շինարարության ավարտը համարում է 1001 թվականը, Հ. Օրբելին և նրան հետևելով Ն. Մ. Տոկարսկին, գտնում են, որ տաճարը կառուցվել է 1001—1015 թթ., Վ. Հարությունյանն ընդհանուր ձևով գրում է, որ այն կառուցվել է 1001—1020 թվականներին, իսկ Ա. Լ. Յակոբսոնը, Կ. Լ. Հովհաննիսյանը և մի քանի այլ հեղինակներ, նկատի ունենալով գլխավորապես այն, որ մի քանի տարի առաջ շարք մտած Գագկաշենը 1013 թվականին ճեղքվածք էր տվել և անհրաժեշտություն էր զգացվել լրացուցիչ կառուցումներով փրկել այն փլուզումից, տաճարի կառուցման ժամանակը համարում են մոտավորապես 1001—1010 թվականները, որը, մեր կարծիքով, ավելի հիմնավորված է և ընդունելի[99]։



Գագկաշեն տաճարի վերակազմության ճակատ արևմուտքից

99 Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 51, Н. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 1, И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 32, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 197, Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, էջ 60, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 68, К. Л. Оганесян, Зодчий Трдат. էջ 66 և այլուր։

Գագկաշեն ս. Գրիգոր տաճարի տեղադրության մասին որոշակի վկայություններ են արել Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և մյուսները։ Նրանք նշել են, որ Գագիկ I-ը տաճարը կառուցել է Ծաղկոցաձորի կողմում, այսինքն՝ քաղաքի արևմտյան մասում։ Սակայն քանի որ տաճարը վաղուց փլվել է և դրա ավերակները մինչև պեղումները ծածկված էին հողի հաստ շերտի տակ՝ կազմելով մոտ 9 մետր բարձրություն ունեցող արհեստական մի բլուր, Անիի պատմությամբ ու ճարտարապետությամբ զբաղվող առաջին որոշ հեղինակներ այն շփոթել են քաղաքի այդ մասի ուրիշ, բայց նույն անունը կրող և կանգուն մնացած Ապուղամրենց ս. Գրիգոր կոչված փոքր եկեղեցու հետ։ Այդ շփոթությունն առաջացել էր ակադ. Բրոսսեի մոտ[100], որը Գագկաշեն տաճարի առաջին որոնողներից է։ Սակայն շուտով շտկվում է այդ շփոթությունը։ Նախ, 1894 թվականին Լինչը ժխտում է այդ երկու եկեղեցիների նույնությունը, գրելով, որ նույն ձորափին եղած Գագկաշեն եկեղեցին ավելի ընդարձակ է եղել և չի պահպանվել, սակայն առանց նշելու վերջիններս ավերակների կոնկրետ տեղը[101]։ Գագկաշենի ճշգրիտ տեղը որոշելու համար կարևոր նշանակություն են ունենում Խաչիկ ճարտարապետի Զվարթնոցում կատարած պեղումների նյութերը, որոնցից օգտվելով, Արամ Վրույրը 1901 թ. առաջին անգամ մատնացույց է արել Ծաղկոցաձորի ձորափի այն «բլուրը», որտեղ պետք է գտնվեն տաճարի մնացորդները»[102], և իրոք 1905—1906 թվականների պեղումների ընթացքում այդտեղ բացվեց ու հնագիտական առումով ուսումնասիրվեց Գագկաշեն տաճարը։

Տաճարը, ինչպես ասվեց, նվիրված էր Գրիգոր Լուսավորիչին և պատմագիրները սովորաբար հիշատակում են ս. Գրիգոր անունով, իսկ որոշ հեղինակներ՝ Գրիգոր Լուսավորիչ կամ ս. Գրիգոր Լուսավորիչ անուններով։ Սակայն Անիում ավանդույթ կար նաև եկեղեցիները կոչել իրենց կառուցողների անուններով՝ Ապուղամրենց եկեղեցի, Տիգրան Հոնենցի եկեղեցի և այլն։ Այդ նույն ձևով


100 Տե՛ս Brosset M. F., Les Ruines d'Ani, II, St. Pétersburg, էջ 105։ Հմմտ. Н. Я. Марр, Ани, էջ 55, К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 64։

101 Х. Ф. Б. Линч, Армения, т. I, էջ 489:

102 Տե՛ս Н. Я. Марр. Ани, էջ 55, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 178։

էլ Գագիկ I-ի կառուցած հոյակապ տաճարը նրա անունով սովորաբար կոչվել է Գագկաշեն, ինչպես նաև Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցի:

Գագկաշեն տաճարի մասին, ինչպես ասվեց, հիշատակություններ ու նկարագրություններ են թողել Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Անեցին[103] և մի շարք այլ



Գագկաշեն տաճարի գլխավոր մուտքը

հեղինակներ ու գրիչներ, որոնք հիմնականում օգտվել են Ասողիկի ընդարձակ վկայությունից: Իսկ նա գրում է. «Յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամն ի մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ, ի վասի կայսեր յաւուրս, Գագիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմեծաշէն եկեղեցին, որ ի Քաղաքուգաշտի, անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կործանեալ՝ կամեցաւ նորաձև չափով և յօրինուածով յարդարել ի քաղաքին Անւոյ, հիմնարկեալ ի կուսէ Ծագկոցաձոր ձորոյն, ի բարձրաւանդակ տեղւոջն, տարփատենչ տեսողացն, մեծատաշ, վիմարդեան, կոփածոյ վիմօք, մանուածոյ քանդակաւ յօրինեալ, յոյսայինցոյց պատուհանօք, երրակի դրանց դրանդեօք, սքանչելատես տեսլեամբ զմբէթաւրեալ, գունակ գերամբարձ և երկնանման գնդին»[104]:

Նույն բովանդակությունն ունի նաև Ասողիկի հրատար ժամանակակից՝ Սամվել Անեցու վկայությունը. «Սուրբ Գրիգորն գերահռչակ՝ զոր նախ սկիզբն առնու ի շինել թագաւորն Գագիկ ի յԱնի ի վերայ Ծագկոցայ ձորոյն վայրօք՝ գաղափար առնել զյուսա-

[103] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 282, Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., էջ 104, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 88—89:

[104] Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 282:

զարդ զհրաշալի սուրբ Գրիգորն զշինեալն ի Ներսիսէ Հայրապետէ...»[105],—գրում է նա:

Ինչպես տեսնում ենք, երկու պատմագիրներն էլ իրենց վկայություններում փաստորեն բավական համակողմանիորեն բնութագրում են Գագկաշեն տաճարը՝ նշելով դրա կառուցողին, դիրքը, Զվարթնոցից կատարված ընդօրինակությունը, ընդարձակությունը, շքեղությունը, կառուցվածքային որոշ մանրամասներ:

Սակայն Անիի ճարտարապետական այդ հրաշալի կոթողի մասին մեր գիտելիքները սահմանափակ կլինեին, եթե դրա ավերակները մնային գետնի տակ, անհայտության մեջ և հնագիտական առումով չենթարկվեին ուսումնասիրության, որ կատարվեց Ն. Մառի գիտարշավի կողմից 1905—1906 թվականներին ընթացքում: Պեղումների ժամանակ բացվել է տաճարի ամբողջ հատակագիծը. պարզվել է, որ դրա արտաքին կողմն ունեցել է ավելի հարուստ զարդաքանդակներ, քան ներսը, առանձնապես լավ են զարդանախշված եղել դռների շրջանակները, հայտնաբերվել են շատ գեղեցիկ ու նուրբ զարդաքանդակներ ունեցող մի շարք խոշոր քարակոշտեր ու դրանց առանձին կտորները: Թորոս Թորամանյանի վերականգնմամբ ցույց է տրվել արևմտյան ավագ դուռը, լուսանկարվել են տաճարի ներքին հարկը և գմբեթը գոտևորող զարդաքանդակները, լուսամուտների շրջանակների կեղծ սյուների նախշերը և այլն[106]:

Այդ երկու տարվա հնագիտական պեղումների ընթացքում Ն. Մառի արշավախումբը Գագկաշեն տաճարի ավերակների տեղում հայտնաբերել է պատմական երեք ժամանակների վերաբերող մշակույթի երեք շերտ, որոնցից ամենաներքևի շերտում պահպանվել են տաճարի մնացորդները: Այդ ամենահին շերտի հզորությունը կազմել է 1,55—2 մետր: Առանձնապես լավ է ուսումնասիրվել տաճարի հարավային կողմի սյունաշարերը, դուռը, հանդիսասրահը: Այդ նույն շերտում հայտնաբերվել են առաջին կործանման ժամանակ տապալված հսկայական շենքի աղբողջական զանգվածները, իսկ տաճարի որոշ մասերը, հատկապես որմնասյունները դեռևս շարունակել են երկար ժամանակ մնալ կանգուն[107]:


Պատմագրական հիշատակությունները, Զվարթնոցի հետ ունեցած ճարտարապետական ընդհանրությունները և հնագիտական պեղումները թույլ են տվել վաղուց փյատակների վերածված Գագկաշեն տաճարը բնութագրել բավական մանրամասնությամբ:

[105] Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., էջ 104:

[106] Н. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 15—18.

[107] Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 55—57:

Գագկաշեն եկեղեցին կառուցված էր Զվարթնոցի օրինակով, որն այդ ժամանակ ավերված էր։ Այն խաչաձև հատակագծով, բոլորակ, կենտրոնագմբեթ, եռահարկ, հսկա տաճար էր, մասնագետների արտահայտությամբ Անիի Մայր տաճարի հետ կազմելով



Գագկաշեն տաճարի սրահը

հայկական ճարտարապետության «երրորդ վերածնության (ավելի ճիշտ կլիներ ուղղակի ասել՝ անիական ճարտարապետության) գլուխգործոցներից մեկը»[108]։ Զվարթնոցի, VII դարի հայկական ճարտարապետության այդ անզուգական հրաշալիքի ընդօրինակությունը Գագկաշենով չէր սահմանափակվում. մինչև XI դարի վերջերը նույն օրինակով մի քանի եկեղեցիներ էին կառուցվել Հայաստանում։ Պատմագիրներն ուղղակի նշում են, որ Գագկաշենի «գաղափարը» վերցված է Զվարթնոցից, իսկ Թ. Թորամանյանը նույնիսկ գտնում է, որ Գագկաշենը «Չափով, ձևով ոչ մեկ տարբերություն չունի Զվարթնոցեն, միայն զարդաքանդակներն են, որ Զվարթնոցին օտար են»[109]։

Այո՛, Գագիկ I-ը մեծ ծախսումների գնով ցանկացել է իր մայրաքաղաքը զարդարել Զվարթնոցի ճարտարապետական լավագույն հատկանիշներն ամփոփող հոյակապ տաճարով։ Սակայն մայրաքաղաքում կառուցված այդ գլուխգործոցը Զվարթնոցի մեխանիկական կրկնօրինակը չէր։ Այն վերջինից տարբերվում էր ոչ

[108] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 178։

[109] Նույն տեղը։

միայն զարդաքանդակներով, ինչպես նշում է Թ. Թորամանյանը, այլ նաև չափերով, հիմքի ու բարձրության հարաբերակցությամբ և այլ հատկանիշներով։ Հայկական ճարտարապետության պատմության մի խումբ մասնագետներ Զվարթնոցի ու Գագկաշենի միջև տեսնում են ծավալային, հատակագծային ու այլ կարգի հետևյալ տարբերությունները. ա) իր ժամանակի ճարտարապետական ոգուն համապատասխան, որն այնքան ընդգծված արտահայտություն է գտել Մայր տաճարի մեջ, Գագկաշենի կենտրոնական գմբեթակիր տարածությունը նույնպես զգալիորեն մեծացված է, բ) Զվարթնոցի ծանր ու հաստահեղույս սյուները այստեղ փոխարինված են նրբագեղ, համաչափ ու վերասլաց սյուներով, գ) եթե Զվարթնոցի ներքին որմնասյուները թվով 64 հատ են, իսկ արտաքինը կազմում են 32 զույգ, ապա Գագկաշենի ներքին սյուների թիվը 72 է, իսկ արտաքինը՝ 36 զույգ, որոնք ի տարբերություն Զվարթնոցի իրար հետ կամարներով միացած լինելուն, այստեղ դրանք «ընդհատ-ընդհատ» էին և «բոլոր լայն սյունամեջներու վրա կային կամարներ և յուրաքանչյուր սյուն կկրեր մի կամարի վերջավորություն»[110]։ Սյուների քանակի ավելացման հետ, բնականորեն Գագկաշենում ավելացվել է նաև արտաքին նիստերի քանակը, դ) Գագկաշենում պարզեցված են որոշ մանրամասներ, ե) միանգամայն ինքնուրույն են լուծված դռների ու լուսամուտների շրջանակների ձևերն ու քանդակազարդերը և այլն[111]։ Այնպես որ զվարթնոցյան հիմնական ոգին պահպանելով հանդերձ, Գագկաշենը կառուցողներն այն աշխատել են ամեն կերպ հարազատ դարձնել անիական ճարտարապետական ոճին, և կարծում ենք սխալված չենք լինի, եթե Գագկաշեն ս. Գրիգոր տաճարը կոչենք «XI դարի Զվարթնոց» կամ «Անիական շրջանի Զվարթնոց»։

Եվ մեզ թվում է, որ Զվարթնոցի նկատմամբ Գագկաշեն տաճարի ավելի վերասլաց լինել բացատրվում է ոչ միայն իր կառուցման ժամանակի եկեղեցական ճարտարապետության ընդհանուր բնույթով, այլև նրանով, որ Բագրատունի թագավորը դրանցով ցանկացել է ընդգծել իր վեհությունն ու մեծությունը։

Զվարթնոցի նման, 48 մ բարձրություն և 37,5 մ տրամագիծ ունեցող այդ հսկա ու հոյակապ տաճարն իրոք որ Անի մայրաքաղաքի ամենահայտնի կառույցներից էր։

[110] Նույն տեղը, էջ 280։

[111] Գագկաշեն տաճարի մասին տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 55—56, նույնի, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 3—19, Х. Ф. Б. Линч, Армения, т. I, էջ 489, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 176, 178, 253, 281, 370, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 200—202, Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, էջ 59—60, К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 59—64, 83—87 և այլուր։

Գագկաշեն տաճարի պեղման ժամանակ հայտնաբերվել է Գագիկ I-ի քարակերտ արձանը չալմայով՝ իր կառուցած տաճարի մանրակերտը ձեռքին։ Առանձին կտորների մասնատված այդ



Գագիկ I-ի արձանը Գագկաշեն տաճարի մանրակերտը ձեռքին

արձանը մեծ վարպետությամբ իրար միացնելով, վերականգնել է նկարիչ Պոլտորացկին, վերականգնելով նաև արձանի գույները և նկեղեցու մանրակերտի վերևի մասը։ Արձանի բարձրությունը 2,26 մ էր, դրանում պատկերված Բագրատունի թագավորի հագուստը և դեմքը ներկված են եղել կարմիր գույնով, մորուքն ու բեղերը՝ սև, իսկ չալման՝ սպիտակ գույնով՝ ճակատի վրա ունենալով կարմիր գոտի[112]։ Այդ արձանը տեղադրված է եղել տաճարի հյուսիսային պատի բարձր մասում։ Նույն հյուսիսային պատի արտաքին կողմում, արձանի մոտ, մոտավորապես 10—11 մ բարձրության վրա են հայտնաբերված հայերեն խոշոր տառերով գրված այն արձանագրության 131 կտորները, որ համարում են տաճարի կառուցման մասին Գագիկ I-ի թողած արձանագրությունը։ Ենթադրվում է նաև, որ չալման Բագրատունի թագավորներին է

[112] Н. Я. Марр, Ани, էջ 59—60։

անցել արաբներից և մոտավորապես համազոր է եղել թագավորական թագին[113]։

Արվեստի պատմության առումով Գագիկ I-ի այդ արձանն ունի կարևոր նշանակություն։ Պարզվում է, որ X—XI դարերում հայ իրականության մեջ գոյություն ուներ նաև քանդակագործության այդ ճյուղը՝ արձանագործությունը, որը, սակայն, հայտնի պատճառներով մեծ զարգացում չէր ստացել։ Բագրատունի արքայի արձանի հայտնաբերումը կարևոր նշանակություն ունեցավ Թորոս Թորամանյանի կողմից արված Զվարթնոցի վերակազմության նախագծի իրական լինելը ապացուցելու համար. Գագկաշենի մանրակերտը անվիճելիորեն ցույց տվեց, որ հայ ճարտարապետության մեծ պատմաբանը միանգամայն ճիշտ է պատկերել Զվարթնոցը՝ ի հայտ բերելով և վերակազմելով դրա իրական ծավալային համամասնություններն ու մանրամասները[114], թեպետև դրանից հետո այդ հարցի առթիվ բանավեճերը երկար ժամանակ շարունակվում էին և այժմ էլ մասամբ շարունակվում են։

Սակայն Գագկաշեն ս. Գրիգոր տաճարը, ինչպես նշում են մասնագետները, ունեցել է հատակագծային ու կառուցողական զգալի թերություններ։ Այսպես, եթե «Զվարթնոցի ճարտարապետը ճնշում սպառնացող մասերու վրա թեթև ավազաքար կամ չեշաքար գործածեր է», ապա այստեղ Գագկաշենում այդ կարգի մասերը շարված են եղել «հրաբխային սովորական», ծանր քարերով,—գրում է Թ. Թորամանյանը[115]։ Նրա կարծիքով, տաճարի հատակագծային թերություններից էր ներսում առավել մեծ տարողություն ստեղծելու ձգտումը, «շինության հանդուգն» եղանակը, կառուցման հապճեպությունը (ըստ Սամվել Անեցու այն կառուցվել է ընդամենը 5 տարում) և այլն[116]։ Զվարթնոցի հաստատհղույա, ցածրանիստ ու իրենց թիկունքում նույնքան ամուր որմնամույթեր ունեցող ու իրար հետ օրգանապես կապված սյուները Գագկաշենում փոխարինված են առանձին կանգնած վերասլաց սյուներով, որոնք ավելի անհաստատուն էին և չէին կարող շատ թե քիչ երկարատև կանգուն պահել լայնածավալ ու վերասլաց մեծ տաճարը[117]։ Այդ բոլորն անշուշտ կարող էին նպաստել տաճարի փլմանը։ Սակայն մեզ թվում է, որ հիմնական պատճառները եղել են ոչ թե հանճարեղ Տրդատի, այլ նրա նախագծային

[113] Նույն տեղը, էջ 63—65։

[114] Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, էջ 59։

[115] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 176։

[116] Նույն տեղը, էջ 257 և 281։

[117] «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 202։

ու կառուցողական վրիպումներն ու թերությունները, որ շատ անհավանական է, այլ, առաջին հերթին, գեռևս ատակի ոչ կայուն լինելը, որի ակնհայտ փաստերից մեկը հենց տաճարի շրջանում, Սաղկոցաձորի ձախ կողմում նկատված բնական բազմաթիվ քարայրներն էին: Անկախ նրանից տաճարը ինչի հետևանքով է փլվել՝ երկրաշարժից (ինչպես ենթադրում են բոլորը), թե այլ պատճառներից, միևնույն է, պեղումները պարզել են, որ ավերվել է ոչ միանգամից, այլ աստիճանաբար և առաջին ճեղքը նկատվելուց հետո, որոշ վերափոխությունների շնորհիվ[118], այն մի քանի տասնամյակ մնացել է կանգուն: Կարծում ենք, հենց այդ հանգամանքն էլ գալիս է հաստատելու, որ տաճարի փլման հիմնական պատճառը հավանաբար եղել է ոչ թե հատակագծային ու կառուցողական թերությունը, այլ գեռևս անկայունությունը, որին, ըստ երևույթին, մեծ նշանակություն չի տրվել:

Ինչևէ, երկար կյանք չի ունեցել Անիի Գագկաշեն ս. Գրիգոր տաճարը: Շինարարությունն ավարտվելուց 3—4 տարի անց (ըստ Թ. Թորամանյանի, որը հիմք է ընդունել Սամվել Անեցու վկայությունը, 10—12 տարի անց)՝ 1013 թվականին տաճարը ճեղքվում է և ենթարկվում իսպառ կործանման վտանգին: Առանձնապես վտանգավոր ճեղքեր են առաջանում դրա հարավ-արևմտյան (Սաղկոցաձորի) մույթերի հատվածում: Տաճարը պահպանելու համար տարբեր տեղերում կանգնեցնում են հաստահեղույս մույթեր, կառուցում ներքին կրկնակի շրջակամարներ, տաճարն առնում պաշտպանական օղակի մեջ և այլն[119]: Սակայն դրանք միայն ժամանակավորապես փրկեցին ճարտարապետական հրաշալիքի կյանքը: Շուտով այն հավանաբար ավերիչ երկրաշարժից վերածվում է փլատակների: Հայտնի չէ, թե երբ է այդ տեղի ունեցել: Միայն հավանական է համարվում, որ Ալփ-Արսլանի 1064 թվականի արշավանքի ժամանակ տաճարն արդեն շարքից դուրս էր եկել:

Երկար ժամանակ Գագկաշենի ճարտարապետ հեղինակի հարցն իր վերջնական լուծումը չէր ստացել: Սովորաբար ենթադրում էին, որ դրա հեղինակը եղել է Տրդատը, բայց առանց այդ կարծիքն ընդունելի դարձնելու հիմնավոր փաստերի ու վկայությունների, իսկ ոմանք էլ նույնիսկ այդ ենթադրությունն ընդհան-

[118] H. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 56:

[119] Տե՛ս նույն տեղը, էջ 6, 11—13, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 176, 256—257, 281:

րապես հերքում էին[120]: Մեր դարի 50-ական թվականներին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ) «Պատմութիւն տիեզերական» աշխատության երեք ձեռագրերում նկատվել է, որ Գագկաշեն տաճարի շինարարությանը նվիրված գլուխն ուղղակի վերնագրված է. «Յաղագս շինելոյ արքային Գագկայ ի քաղաքն Անւոյ զեկեղեցին անուամբ սրբոյն Գրիգորի. Տրդատ վարդապետ [=վարպետ] եկեղեցւոյն» և դրանով միանգամից պարզվեց բանավեճի առարկա դարձած հարցը. հայտնի դարձավ, որ տաճարի հեղինակն իրոք Տրդատն է[121]:

Քանի որ տաճարը կործանվել է ոչ միանգամից, այլ աստիճանաբար, տարիների և, նույնիսկ, տասնյակ տարիների ընթացքում, ապա հասցրել են տեղափոխել դրա հարստությունները, սպասքը, զարդերը, ձեռագրերը և մյուս ունեցվածքները: Այդ է պատճառը, որ պեղումների ընթացքում տաճարի ներսում էական նյութական մշակույթի մնացորդներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերվածներն էլ, ըստ երևույթին, վերաբերում են ավելի ուշ շրջանի:

Հնագիտական հայտնաբերումների մեջ Գագիկ I-ի վերը նշված արձանից բացի, ուշադրության արժանի է պղնձյա մի բավական մեծ ջահ: Այդ ջահի տրամագիծը եղել է մոտ 69 սմ, ներկայացնելով 13,25 սմ բարձրություն ունեցող նախշազարդ պղնձի գոտի, որի վրա եղել են 12 պատկերներ՝ 6 թևատարած արծիվ և 6 թևավոր զազանների պատկերներ, որոնք հաջորդում էին մեկը մյուսին, իսկ ստորին շարքում թվով 8 բռնակներ էին՝ պղնձե հասարակ թերթիկների վրա պատկերված աղավնիների հարթ պատկերներով, որոնցից յուրաքանչյուրի վրա փորված էին շրջանաձև երեք մոմակալներ՝ մեկական թևերի և մեկ հատ էլ պոչի վրա: Ճրագներն ու մոմակալները եղել են տարբեր զույնի (սպիտակ, դեղին և այլն) և մեծության, որոնց բոլորի թիվը հասել է 114 հատի[122]: Այնուամենայնիվ հայտնաբերված այդ ջահը տաճարի շքեղությանը չէր համապատասխանում. այն շատ հասարակ էր և արվեստի առումով որևէ հետաքրքրություն չէր ներկայացնում:

[120] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 275, Գ. Ալոնյան, Ճարտարապետ Տրդատ Անեցին, «Էջմիածին», ամսագիր, 1949, № 1—2, էջ 64—65:

[121] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 276, ծանոթագրություն Կ. Ղաֆադարյանի, К. Л. Сганесян, Зодчий Трдат, էջ 59—64, Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963, էջ 36:

[122] H. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 46—48:

Եվ միանգամայն ընդունելի է Թ. Թորամանյանի այն ենթադրությունը, թե երբեք հնարավոր չէ, որ տաճարը կառուցող Գագիկ I-ը այդպիսի հասարակ ջահ կախեր նրա գմբեթից։ «Գագկաշեն բոլորակ եկեղեցվո միջեն գտնված պղնձի թերթիկներով կազմված հասարակ և անարվեստ մի ջահ վերագրել այդ հսկայական եկեղեցին կանգնողին, մի լուրջ ծաղր է Գագիկի նման հարուստ, փառասեր և գեղարվեստասեր թագավորի մը հասցեին»[123]։

Նկարագրված մեծ ջահից բացի, Գագկաշեն տաճարում հայտնաբերվել է նաև մի ավելի փոքր ջահ ևս, որը որևէ հետաքրքրություն չի ներկայացրել։

Հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցին փլվելուց հետո դրա ավերակները դարձել են յուրովի «քարհանք», որտեղից քաշել-տարել են դրա սրբատաշ ու նախշազարդ քարերը։ Վաղեմի տաճարի տեղում և դրան հարակցող տարածքում բնակություն են հաստատել հայեր և ուրիշ ազգությունների պատկանող բնակիչներ՝ իրենց կոպիտ ու անշուք խրճիթներով, որոնք տեղադրվել են խառնիխուռն, առանց որոշակի հատակագծի[124]։ Եվ տաճարի ավերակների շրջանում հայտնաբերված մշակույթի երեք շերտերից վերևի երկու շերտը պատկանում է հենց այդ ժամանակներին։


Առաքելոց եկեղեցին (կամ ս. Առաքելոց տաճար) նույնպես գտնվում է Ծաղկոցաձորի կողմում, Գագկաշեն տաճարից հյուսիս-արևմուտք, տափարակ տեղում։ Այն համարվում է Անիի ամենահայտնի կառույցներից մեկը և մեղ է հասել կիսաքանդ, լեռյի արտահայտությամբ՝ «մաշված, տրորված...» վիճակում։

Առաքելոց եկեղեցու կառուցման մասին մեղ վկայություններ ու հիշատակություններ չեն հասել՝ ո՛չ մատենագրական և ո՛չ էլ վիմագրական։ Դրա վրա (ներսի կողմից) եղած ամենահին արձանագրությունը, որ գրել է տվել Վահրամ Պահլավունու որդի Ապուղամրը, վերաբերում է 1031 թվականին։ Եվ միանգամայն հասկանալի է, որ եկեղեցին կառուցվել է դրանից առաջ։ Տիրող և ամենահավանական կարծիքի համաձայն, որին չի կարելի անվերապահորեն չմիանալ, տաճարը կառուցվել է X դարում, ամենայն հավանականությամբ դրա վերջերին, կամ նույնիսկ XI դարի սկզբին[125],

[123] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 370։

[124] Տե՛ս Н. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 55—65։

[125] Տե՛ս նույնը, Ани, էջ 73, И. Орбели, Краткий путеводитель по горо-



Առաքելոց եկեղեցու սուալաֆոտային գմբեթը

Մեր կարծիքով, այդ հարցի առթիվ ամենահիմնավորված տեսակետը Ն. Մ. Տոկարսկունն է։ Հայկական ճարտարապետության պատմության մեծ գիտակը նկատի ունենալով տաճարի զարդաքանդակների բնույթը, ճարտարապետական-կառուցողական լուծումները, նշված արձանագրությունը, ինչպես նաև, այն, որ Ստեփանոս Տարոնեցու (Asoղիկ) մոտ դրա կառուցման մասին հիշատակության խոսող բացակայությունը (պատմիչն իր աշխատությունն ավարտել է 1004 թվականին և Անիում իր օրոք կառուցված շատ թե քիչ հայտնի բոլոր շինությունների մասին ունի հիշատակություններ) գալիս է այն եզրակացության, որ Առաքելոց եկեղեցին պետք է կառուցված լինի XI դարի առաջին քառորդում[126], 1004 թվականից հետո։ Այնուհետև, նրա կարծիքով եթե Առաքելոց եկեղեցին կառուցվել է ոչ թե Գագկաշենի հետ, այլ դրանից հետո, ապա բացառված չէ, որ դրա ճարտարապետը նույն-

դищу Ани, էջ 25, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 71 և այլն։

[126] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 202—206.

պես եղել է Տրդատը[127]: Վիմագիր արձանագրություններից երեվում է, որ ս. Առաքելոց եկեղեցին կառուցել են Պահլավունի իշխանները, իսկ Ն. Տոկարսկին դրա կառուցողն ուղղակի համարում է Վահրամ Պահլավունուն՝ նույն ժամանակներում կառուցված Հայտնի Մարմաշենի տաճարի ու Ամբերդի եկեղեցու կառուցողին[128]:

Հետագայում, XII—XIII դարերում Առաքելոց եկեղեցուն կից կառուցվել են այլ շինություններ՝ երկու դավիթ և դրանցից ոչ հեռու գտնվող մի փոքրիկ եկեղեցի, ինչպես նաև գաղտնարաններ՝ եկեղեցու թանկարժեք իրերը, սպասքը և գանձերը պահելու համար: Այսպիսով, Առաքելոց եկեղեցին ժամանակի ընթացքում վերածվել էր ճարտարապետական ամբողջական համալիրի: Բուն տաճարից բացի, իր ճարտարապետական կառուցվածքով ու շքեղությամբ հայտնի էր ընդարձակ գավիթը:

Ճանապարհորդներից ոմանք Առաքելոց եկեղեցու համալիրը շփոթել են քաղաքի այլ շենքերի հետ՝ երբեմն այն համարել են Պահլավունիների իշխանական, երբեմն՝ Բագրատունիների արքունական պալատը[129]: Այդ շփոթությունը պարզապես հետևանք է եղել այն բանի, որ մեզ հասած վիճակում եկեղեցին քիչ է նման եկեղեցու, իսկ գավիթն իր ընդարձակությամբ ու զարդաքանդակներով կարող է մրցել ցանկացած արքունական պալատի հետ: Հայերենին չտիրապետելու պատճառով օտար շատ հեղինակների համար անմատչելի են եղել եկեղեցու վրայի այն բազմաթիվ արձանագրությունները, որոնցից յուրաքանչյուրն առանձին-առանձին վերցրած հաստատում են դրա եկեղեցի լինելը: Իսկ Անի այցելած ճանապարհորդներից մեկը՝ Ա. Անդրևևը, որ այնքան ջերմությամբ է խոսում Առաքելոց եկեղեցու մասին, այն սխալմամբ կոչել է ս. Փրկիչ[130], որը բոլորովին այլ եկեղեցի է: Ինչ-ինչ եղանակներով բավական տարածում էր գտել նաև հիմքից զուրկ մի զրույց, ըստ որի իբր Առաքելոց եկեղեցու գավիթը եղել է պարսից Խոսրով Նուշիրվանի (531—579) խոհանոցը[131] և, հետևապես, իբր կառուցվել է նրա կողմից:

Ճարտարապետության պատմության մասնագետները միահամուռ պնդում են, որ Առաքելոց եկեղեցու մեջ արտահայտված են

127 Նույն տեղը, էջ 206:

128 Նույն տեղը, էջ 202:

129 Н. Я. Марр. Ани, столица древней Армении, էջ 212: Համմ. Նա, Անի, էջ 231:

130 Տե՛ս Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 212, ծոզատակի ծանոթագրությունը:

131 Նույն տեղը: Համմ. Նա, Անի, էջ 231:

VI—VII դարերի հայկական կենտրոնագմբեթ տաճարների ճարտարապետական շատ ավանդույթներ: Առանձնապես հատակագծային ու կառուցողական նմանություններ են արձանագրվում մի կողմից էջմիածնի ու Հռիփսիմե տաճարների, իսկ մյուս կողմից՝ Առաքելոց եկեղեցու միջև[132]: Էջմիածնի ու Առաքելոց եկեղեցու նմանությունները ցույց տալու համար, Թ. Թորամանյանը առաջինն հյուսիսային ու երկրորդի արևելյան ճակատների նույնությունը, երկուսի էլ բազմագմբեթայնությունը, խաչաձև հատակագծերն ու կողմնակի չորսական սենյակների գոյությունը նշելուց բացի[133], մատնացույց է անում նաև դրանց երկուսի հատակագծերի համամասնության գրեթե նույնությունը: Այսպես, էջմիածնի տաճարի երկարությունը 24,5, իսկ լայնությունը՝ 23,02 մ է (տարբերությունը՝ 1,48 մ), իսկ Առաքելոց եկեղեցու երկարությունը (արևելքից արևմուտք ուղղությամբ) 21,64 մ է, լայնությունը՝ 19,68 մ (տարբերությունը՝ 1,96 մ): Այլ կերպ ասած, իր այդ չափագրման արդյունքները մեջբերելուց հետո, նա եզրակացնում է. «...էջմիածնի տաճարի համաչափությունը՝ աննշան տարբերությամբ՝ պահված կտեսնենք Առաքելոց եկեղեցիի մեջ»[134]:

Առաքելոց եկեղեցին համարվում է Հայաստանի VI—VII դարերի խաչաձև գմբեթավոր տաճարների ուշ ժամանակների կառույցներից: Այն քառասյուն տաճար է և ըստ Թ. Թորամանյանի վերակազմության նախագծի, Ավանի եկեղեցու նման (որը կանգուն վիճակում նկարել է Գ. Հովսեփյանը) ունեցել է հինգ գմբեթ, որոնցից չորսը գտնվում էին չորս խորանները վրա՝ կազմելով մի տեսակ առանձին-առանձին չորս եկեղեցիներ, իսկ կենտրոնի մեծ գմբեթը հանգում էր բավական հզոր օրմնասյունների վրա, գարձյալ ներկայացնելով մի առանձին եկեղեցի: XII—XIII դարերում եկեղեցու հարավային ու հյուսիսային կողմերում կառուցվել է երկու գավիթ, որոնք նախշաղարդված էին այդ ժամանակներին հատուկ խորշերով, քանդակներով, ստալակտիտային առաստաղով, նուրբ սյուներով և դրանք իրար հետ միացնող նույնքան բարձրարվեստ օրմնակամարներով: Եկեղեցին զարդաքանդակ շրջանակներով ու շքեղ դռներով կապված էր հյուսիսային ու հարավային գավիթների (կամ ժամատուն) հետ: Հյուսիսային ու հարավային գավիթներից բացի, եկեղեցին ժամատուն-հանգրստարան է ունեցել նաև արևմտյան կողմից: Վերջինից բացի, թա-

132 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 221, 226, 228:

133 Տե՛ս նույն տեղը:

134 Տե՛ս նույն տեղը, էջ 224:

դումներ են կատարել նաև հյուսիսային կողմի գավթում: Բուն եկեղեցու ճակատը զարդարում էին կիսասյուներն ու կամարիկները, եռանկյունաձև խորշերը: Եկեղեցու վերին մասի զանգվածները թեթևացնելու համար տարբեր տեղերում դրվել են կարասներ: Ենթադրվում է, որ բոլոր հինգ գմբեթների թմբուկները կամ եղել են բազմանիստ, կամ սովորական բրգաձև: Տաճարի լուսամուտները, դռների օրինակով, ունեցել են լայն ու զարդաքանդակ շրջանակներ[135]: Առաքելոց եկեղեցին տեսնողներից շատերն առանձնապես մեծ հիացմունքով են խոսում նրա նրբագույն ու ոսկերչական վարպետության հասնող զարդաքանդակների, սյուների, կամարների, աղեղնաձև շքեղ առաստաղի մասին: Հարկ ենք համարում բերել միայն մի հատված Ա. Անդրեևի ճանապարհորդական նոթերից. «Զարմանքից ես ուղղակի ախ քաշեցի—այդպիսի շքեղություն, այդպիսի պերճություն ու նրբագեղություն անիական ավերակներից ոչ մեկը չունի: Նկարչի վրձին է պետք, որպեսզի նկարի գեղարվեստական սյուները, վաղուց խաչաձևված կամարները, կամարաձև շքեղ առաստաղը և անհամեմատելի, անզուգական զարդաքանդակը: Իմ ուժերից վեր է նկարագրել այդ ավերակի զմայլելի պատկերը»[136]:

Առաքելոց եկեղեցուն մի առանձին հմայք են տալիս գավիթները, որոնք, ինչպես ասվեց, կառուցվել էին XII—XIII դարերում:

Առաքելոց եկեղեցու պատերին կանոնադրական արձանագրությունների առկայությունը նկատի ունենալով, գտնում են, որ այն խաշոր դեր է խաղացել մայրաքաղաքի կյանքում: Նույն այդ փաստը հիմք է տվել նաև ենթադրելու, թե նա եղել է Անիի եպիսկոպոսանիստը: Արձանագրությունները ցույց են տալիս, որ եկեղեցին կապված էր Պահլավունի տոհմի հետ, որին պատկանում էին Անիի եպիսկոպոսները[137]: Այդ պատճառով էլ Լեոն Առաքելոց եկեղեցին համարում է «մի տեսակ վարչական պաշտոնարան», որտեղ ըստ նրա «հավաքվում էր ժողովուրդը ոչ միայն եկեղեցական, այլև վարչական, նույնիսկ քաղաքական հարցեր քննելու համար»[138]: Առաքելոց եկեղեցու գավիթներում թաղվել են նշանավոր հոգևոր-

[135] Առաքելոց եկեղեցու համալիրի ճարտարապետության մասին տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 73—76, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 71, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 205—206, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 63—64, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմ.», էջ 203 և այլուր:

[136] Տե՛ս Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 212:

[137] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 24—25:

[138] Լեո, Անի, էջ 234:

բականներ ու աշխարհականներ: Նրանցում տեղի էին ունենում քաղաքի ներքին կյանքին վերաբերող զանազան ժողովներ ու խորհրդակցություններ[139]:

Առաքելոց եկեղեցում Ն. Մառը հնագիտական պեղումներ է կատարել հիմնականում 1909 թվականին: Դրանք, ինչպես նշում է ինքը՝ արշավախմբի ղեկավարը, «հնարավորություն են տվել կազմել հենց տաճարի ճշգրիտ հատակագիծը, հավաքել նրա նոր մանրամասները, ձեռք բերել զարդաքանդակային նյութ՝ հազվագյուտ, երբեմն հայկական ամբողջ ճարտարապետության մեջ միակ օրինակներով, և հարստացնել հայկական էպիգրաֆիկան»[140]:

Տաճարի պեղումների ընթացքում հայտնաբերվել են շենքի վերին մասերը թեթևացնող և ձայնի հզոր արձագանք առաջացնող կարասներ, մեծ թվով քիվի զարդաքանդակ կտորներ, պեղվել են խաղողի ողկույզներով ու նռով զարդանախշված ամբողջական սալիկներ և բուսական պատկերներով քանդակազարդ այլ քարեր: Փողոցի նկատմամբ Առաքելոց եկեղեցին ցածր է և փողոցից տաճարի հարավային գավթի առաջ գտնվող մեծ հրապարակն իջնում էին հատուկ սանդուղքով, որը, ինչպես պարզել են պեղումները, ունեցել է մինչև վեց աստիճան[141]: Ճարտարապետական հարուստ նյութեր են ձեռք բերվել հատկապես հարավային գավթի ուսումնասիրության ընթացքում:

Առաքելոց եկեղեցու համալիրում, պեղումներին զուգահեռ, հուշարձանը հնարավորին չափով պահպանելու համար 1909 թվականին կատարվել են նաև որոշ աշխատանքներ: Առաջին իսկ հայացքից աչքի է զարնում գավթի արևելյան պատի հարավային անկյունի շարվածքը, որի համար 1906 թվականի ամառը Ն. Ա. Յուզբաշևի նախաձեռնությամբ համապատասխան միջոցներ էին հավաքել Բաքվում[142]:

Առաքելոց եկեղեցու գլխավոր գավթին հարավից կցված բարձր հրապարակում, որի մասին արդեն նշվեց, կառուցված էր մի փոքր եկեղեցի, որի բարձրաքանդակներից երևում է դրա հնությունը՝ VII—VIII դարերի հուշարձան լինելը[143]:

Առաքելոց եկեղեցու վերակազմման հատակագիծը կապված է

[139] Նույն տեղը, էջ 235:

[140] Н. Я. Марр, Ани, էջ 73:

[141] Նույն տեղը, էջ 73—74, տե՛ս նաև նույնի «Восьмая Анийская археологическая кампания», СПб, 1912:

[142] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 27:

[143] Նույն տեղը:

մեծ դժվարությունների հետ։ Թ. Թորամանյանին հաջողվել է այնուամենայնիվ կազմել դրա առաջին նախագիծը, որից և լուսանկարներից օգտվելով երկրորդ, բայց շատ սխեմատիկ վերականգնման հատակագիծը տվել է Ն. Մ. Տոկարսկին[144]։ Վերջինիս ասելով դրա վերակազմման հատակագիծը ավելի ճիշտ ու իրականին մոտ կարելի էր տալ միայն այն ժամանակ, երբ Պետրոգրադից ստացվեր պեղումներով ձեռքբերված նյութերը, որոնք, ցավով պետք է ասել, որ անհետ կորել են Պետրոգրադից Թիֆլիս տեղափոխելու ընթացքում, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ[145]։

Առաքելոց եկեղեցին Անիի վիմագիր արձանագրություններով ամենահարուստ հուշարձաններից է։ Ժամանակագրական առումով այդ արձանագրությունները վերաբերում են X—XIV դարերին և ունեն տարբեր բովանդակություն։ Դրանք հիմնականում նվիրատվական և քաղաքի հարկերին ու տուրքերին վերաբերող արձանագրություններ են, որոնք առաջնակարգ սկզբնաղբյուրներ են քաղաքի սոցիալ-տնտեսական կյանքի և գյուղատնտեսության մի շարք հարցեր լուսաբանելու համար։ Առաքելոց եկեղեցու արձանագրությունները տեղ են գտել Անիի վիմագիր արձանագրությունների գրեթե բոլոր ժողովածուներում[146]։

Անիի համեմատաբար փոքր, բայց ոչ պակաս հայտնի հուշարձաններից մեկը համարվում է ս. Փրկչի եկեղեցին։ Այն տեղադրված է Մայր տաճարից հազիվ 60—70 մ հյուսիս-արևելք, Գլիձորի ափին։

Ս. Փրկիչ եկեղեցու կառուցման թվականը, հետևելով դրա վրա եղած վիմագիր երկու արձանագրություններին, ոմանք համարում են 1035[147], ոմանք՝ 1036 թվականը[148], իսկ Պալաբյան Գրիգորիսը,

[144] Н. М. Токарский. Архитектура Армении IV—XIV вв., էջ 203։

[145] Նույն տեղը, էջ 203—204։

[146] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 61—62, Հ. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, և այլուր։

[147] Տե՛ս, օրինակ՝ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 81, Գևորգյան Մելիքսեթեկ, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 37 և 38, Լեո, Անի, էջ 163։

[148] Աբել Մխիթարյանց, Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1855, էջ 83—84, Էփրիկյան Սուքիաս, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վիեննա, 1903—1905, էջ 193, Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 166, В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, էջ 54։ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և բարեգործ վարպետներ, էջ 36 և այլն։

որ մի արձանագրության հայոց «ՆՀԸ» թվականը մեզ անհայտ պատճառով կարդացել է «ՆՈՌ», այն կառուցված է համարում 966 թվականին, թուլ տալով կրկնակի սխալ, որովհետև նախ «Հ»-ի (80) փոխարեն դրել է «Ո» (50), իսկ ապա իր ընթերցած «ՆՈՌ» թվականը 1006-ի փոխարեն հաշվել 996. երկուսն էլ բացահայտ սխալ են[149]։ Նա նույն եկեղեցու կառուցմանը վերաբերող մյուս արձանագրության հայոց «ՆՀԴ» թվականը դարձյալ ընթերցել է «ՆՈԴ» և դարձյալ նույն կրկնակի սխալը գործելով՝ եզրակացրել, որ իբր ս. Փրկչի շինարարությունը սկսվել է 995 (նրա մոտ վրիպակով՝ 965) թվականին[150]։



Ս. Փրկիչ եկեղեցին

Թե երբ է սկսվել ս. Փրկիչ եկեղեցու շինարարությունը՝ դժվար է ասել։ Սակայն որոշակի հայտնի է, որ դրա կառուցողը՝ Ապուղամրի Բոռ Ապլղարիբ մարզպանը, Գրիգոր իշխանի որդին,

[149] Պալաբյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անւոյ աւերակներուն, էջ 39։

[150] Նույն տեղը, էջ 39—40։

զորավար Վահրամի և Վասակի եղբայրը, 1035 թվականին Կոստանդնուպոլսից գալով (ուր նա գնացել էր Հովհաննես-Սմբատ թագավորի կամքով), ավարտում է եկեղեցու շինարարությունը: Ահա այդ արձանագրության համապատասխան հատվածը.

«Ի:ՆՉԴ: թուականիս [1035] ես Ապլղարիբ մարզպան եղէ հրովարտակ ի Սմպատաս Շահնշահէ առ կայսրն Յունաց Միխաէլի Կոստանդինուպոլիս. եւ շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ բերի մասն ի սրբոյ Խաչէն եւ եկեալ կատարեցի զտաճարս զայս (ս. Առաքելոցը—Թ. Հ.) եւ զնշանն լուսո կանգնեցի ի պսակ հարսնիս Քրիստոսի եւ եդի լուծ սպասաւորաց եկեղեցւոյս զկիւրակէին աւրն գիշերապաշտպան առնել մինչեւ ի գալուստն Քրիստոսի: ...ՉԳևորգ զրիչ յիշեա Քրիստոս»[151]:

Հենց այդ արձանագրությունն են նկատի ունեցել ոմանք՝ տաճարի կառուցումը վերագրելով 1035 թվականին: Մինչդեռ այնտեղ նշված է միայն, որ Ապլղարիբը այդ թվականին վերադառնում է Կոստանդնուպոլսից և կատարում տաճարի շինարարությունը, որն ամենայն հավանականությամբ սկսվել էր տարիներ առաջ: Իսկ տաճարի կառուցման ավարտի մասին ազդարարում է նրա թողած մյուս արձանագրությունը, որ արդեն վերաբերում է 1036 թվականին: Այնտեղ ասվում է. «Յամս ածապատիւ եւ հոգեւոր տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սմբատայ, որդւոյ Գագկա Շահնշահի ի:ՆՉԸ: թուականիս [1036 թ.], ես Ապլղարիպ մարզպան որդի Գրիգորիս իշխանի եւ թոռն Ապուղամրի եւ եղբայր Վահրամա եւ Վասակա, շինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ, և գնեցի հալալ ընչից իմոց կուղպականի :Գ: եւ ձիթհաց [ձիթհանք] եւ այգի եւ հողեար եւ եռու ի սուրբ Փրկիչս, եւ զարդարեցի ոսկւով եւ արծաթով եւ ակամբ պատուականաւք եւ եռու աւետարան ու տաւնական եւ... հին ու նոր կտակարանաւք եւ կանգնեցի միլ առ սուրբ Փրկիչս:...»[152]:

Վկայակոչված այս վերջին արձանագրությունն արդեն տաճարի կառուցմանն է վերաբերում և առաջինից տարբերվում է ոչ միայն ժամանակով (1036 թ.), այլ նաև բովանդակությամբ: Այստեղ կառուցողը՝ մարզպան Ապլղարիբը իր տոհմի ու հայտնի հարազատների հետ, տաճարի կառուցման ժամանակն ընդգծելու նպատակով, թվականը գրելուց բացի, նշում է նաև ժամանակի

151 Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 46:
152 Նույն տեղը, էջ 45:

թագավորի ու կաթողիկոսի անունները. եկեղեցուն տված հարըստությունները, կալվածքները, ձեռագրերը և այլն:

Ս. Փրկիչն իր կառուցողի անունով սովորաբար կոչում են նաև Ապլղարիբ Պահլավունու եկեղեցի[153]:

Ճարտարապետական ոճով ու կառուցողական հնարանքներով ս. Փրկչի արտաքին մասը հար ու նման է X—XI դարերի բրգաձև, բազմանիստ տաճարներին, գոնավելով առաջին հերթին Գագկաշեն եկեղեցու ոճական ազդեցության տակ, որի հիման վրա է կառուցվել նաև Ծծկոնքի համալիրի բրգաձև եկեղեցին: Ներսի կողմից ս. Փրկիչը հիշեցնում է VII դարի տաճարների հատակագծումները:

Տաճարը բրգաձև է՝ 15,2 մ տրամագծով, ներսից ութանիստ է, իսկ արտաքինից՝ բազմանիստ, պատերը շարված են սրբատաշ գորշ մեծամեծ քարերով, հաստատատ է, որի շնորհիվ պահպանվել է դարեր շարունակ: Գմբեթը փլվելուց հետո վերականգնել են 1173 թվականին՝ պահպանելով նախնական ձևը: Սյունազարդ է, զույգ կիսասյուների վրա գտնվում են զարդանախշ կամարներ, որոնց և քիվի միջև տեղադրված է մանրաքանդակներով նախշված համատարած գոտի: Եկեղեցու դուռն առնված է քարակերտ լայն շրջանակի մեջ, որն իր վրա կրում է զանազան քանդականախշեր[154]: Նախշազարդ են և նրա 12 լուսամուտները: Ս. Փրկիչը պատկանում է Անիի այն փոքրաթիվ եկեղեցիների թվին, որոնք նկարազարդ են եղել: Սակայն այդ նկարազարդումները վերաբերում են ավելի ուշ ժամանակներին՝ XII և XIII դարերին[155]: Եկեղեցին ընդհանրապես նորոգվել է XII դ. 70-ական թվականներին, երբ 1173 թվականին վերականգնվել է նաև գմբեթը[156], իսկ ամբողջ վերին յարուսը՝ XIV դարում[157]: 1201 թվականին եկեղեցու հարավային կողմում կառուցվել են դանգակատուն ու գավիթ: Եկեղեցին կանգնած, բայց «մաշված» վիճակում հասել է մինչև մեր օրերը:

Կառուցման մասին վերը վկայակոչված արձանագրություններից բացի, ս. Փրկիչ եկեղեցու վրա կան նաև մի քանի այլ արձա-

153 Տե՛ս, օրինակ, նույն տեղը, էջ 45 և 46:
154 Տե՛ս Աբել Մխիթարյանց, Ճանապարհորդութիւն յԱնի, էջ 82—84, Գ. Ալիշան, Շիրակ, էջ 81, И. Орбели, Развалины Ани, СПб. 1911, էջ 31—32, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 207—208, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, էջ 69—70, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 61—62:
155 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական հարտ. պատմ., աշխ. ժող., էջ 166:
156 Նույն տեղը:
157 Н. Я. Марр, Ани, էջ 111:

նագրություններ, որոնք մեզ են հասել եղծված վիճակում և դժվար է եղել վերծանել ամբողջական կերպով[158]։ Այնուամենայնիվ, դժվար չէ կռահել, որ դրանք հիմնականում եղել են նվիրատվական արձանագրություններ։

Անիի շատ հուշարձանների նման ս. Փրկչի ճարտարապետը նույնպես հայտնի չէ։ Ճիշտ են կռահում, որոշ հեղինակներ։ Տաճարի ճարտարապետական ոճը ցույց է տալիս, որ դրա ճարտարապետը եղած պետք է լինի Տրդատի որևէ աշակերտը։ Այլ կարծիք է արտահայտել Ս. Բարխուդարյանը։ Նա, նկատի ունենալով եկեղեցու արտաքին կողմում, հարավային մուտքից վեր Տրդատ անվան վիմագիր հիշատակությունը՝ խոր փորված տառատեսակներով և ս. Փրկչի ու Գագկաշենի ճարտարապետական ոճական նմանությունները, խնդրո առարկա տաճարի ճարտարապետը համարում է նշանավոր Տրդատին՝ նրան նույնացնելով արձանագրության հիշատակած Տրդատի հետ[159]։ Այդ դեպքում ինչպե՞ս կարելի է բացատրել, որ հռչակավոր ճարտարապետն իր անունը չի թողել ավելի հայտնի ձեռակերտի՝ Մայր Տաճարի (և մյուս կոթողների) վրա։

Ապուղամրենց ս. Գևորգ եկեղեցին գտնվում է Ծաղկոցաձորի կողմում, Բագրատունյաց պալատից հարավ, Մայր եկեղեցուց ոչ հեռու, և մինչև օրս էլ իր կանգուն վիճակով գրավում է բոլոր այցելուների ուշադրությունը։

Կառուցման ճշգրիտ թվականը հայտնի չէ. այդ մասին չեն պահպանվել ո՛չ մատենագրական տեղեկություններ և ոչ էլ վիմագրական հիշատակություններ։ Այդ պատճառով էլ տարբեր հեղինակներ եկեղեցու կառուցումը դնում են տարբեր թվականների տակ։ Այսպես, Կ. Յ. Բասմաջյանը նկատի ունենալով այն, որ Ապուղամրենցը համարվել է 982 թվականին մահացած Պահլավունի Գրիգոր իշխանի սեփական եկեղեցին, դրա կառուցումը վերագրում է 980 թվականին, վկայակոչելով նաև եկեղեցու արձանագրություններից մեկում նույն Գրիգոր իշխանի անվան հիշատակությունը[160]։ Գևորգյան Մելքիսեդեկը եկեղեցու կառուցումը դնում է 996—97 թվականների տակ[161], մատնացույց անելով Ասողիկին, որը, սակայն, այդպիսի վկայություն չունի, իսկ Պալաբյան Գրիգորիսն այն համարում է 1040 թվականի կառուցվածք՝ նկատի

158 Հ. Ա. Օրբելի, *Հայ վիմագրություն*, պր. I, էջ 45—46։

159 Ս. Բարխուդարյան, *Միջնադարյան հայ ճարտարապետներ ու քարագործ վարպետներ*, էջ 36—38։

160 Կ. Յ. Բասմաջյան, *Անիի անցեալն ու ներկան*, էջ 11—12։

161 Գևորգյան Մելքիսեդեկ, *Համառոտ տեղագրութ. մեծին Շիրակայ և մյուրաքաղաքին Անւոյ*, էջ 41։

ունենալով այդ թվականին եկեղեցու վրա գրված արձանագրությունը, որը, սակայն, Ապուղամրենցի առաջին արձանագրությունը չէ և իր բովանդակությամբ դրա կառուցմանը չի վերաբերում, այլ ավելի շուտ երկու ուրիշ մատուռների[162]։ Այդպիսով Գևորգյան Մելքիսեդեկի և Պալաբյան Գրիգորիսի արած ենթադրությունները միանգամայն բացառվում են, որովհետև, եկեղեցու վրա կա 994 թ. արձանագրություն, հետևապես անհիմաստ է կարծել, թե արձանագրությունից հետո է այն կառուցվել։ Մնում է ընդունել Կ. Բասմաջյանի կարծիքը, ըստ որի եկեղեցին պետք է կառուցված լինի Գևորգ իշխանի մահվանից երկու տարի առաջ՝ 980 թվականին։ Ըստ էության նրա այդ կարծիքը չեն ժխտում նաև մի խումբ հեղինակներ, որոնք հետևելով Հ. Օրբելուն, գրում են, որ Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին վերաբերում է X դ. երկրորդ կեսին, «համենայն դեպս այն կառուցվել է 994 թվականից ոչ ուշ»[163]։

Հայտնի չէ Ապուղամրենցի նաև կառուցող ճարտարապետի անունը։ Ղ. Ալիշանը կասկածանքով ենթադրում է, թե դրա ճարտարապետը նույնպես կարող է լինել հայտնի Տրդատը. «Փոքր է, այլ վայելուչ և ճարտարաշէն յոյժ, թերևս Տրդատայ հմտին ձեռակերտ և այս»,— գրում է նա[164]։

Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին փոքրության պատճառով հաճախ ուղղակի համարվում է մատուռ, որը գտնվում էր հետագայում առաջացած Պահլավունիների մի ճյուղի տոհմական գերեզմանոցի հարավային կողմում։ Այն Պահլավունիների այդ ճյուղի տոհմական եկեղեցին էր, որին կից էին գտնվում նաև երկու մատուռներ՝ ս. Ստեփաննոս և ս. Քրիստափոր՝ կառուցված 1040 թվականին, Պահլավունի Ապլղարիբ մարզպանի կողմից[165]։

Ապուղամրենց կոչված այդ փոքրիկ եկեղեցին կատարյալ վերարտադրությունն էր տակավին VII դարում մշակված հայկական կոնաձև բազմաբսիդ տաճարների։ Արտաքինից ունի ճոխ կառուցվածք՝ ներքին ու վերին յարուսները բաժանված են 12 նիստերի և կողերին ունի խոր խորշեր, վերին մասում սյունազարդ և կամարազարդ թմբուկն է, որի վրա հանգում է հովհարաձև գմբեթն իր 12 փոքրիկ լուսամուտներով։ Ներսի մասը պարզ է, բայց

162 Պալաբյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի ամրակներուն*, էջ 44—46։

163 И. Орбели. Краткий путеводитель по городищу Ани, էջ 24, Համմ.. Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 206, В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, էջ 53 և այլն։

164 Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 52։

165 *Տե՛ս* նույն տեղը, էջ 54։



Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին

շքեղ։ Այստեղ առկա են 8 խոր աբսիդիաններ, որոնք իրարից բաժանվում են դեղեցիկ սյուներով։ Եկեղեցին շարված է մեծ խնամքով մշակված սրբատաշ քարերով։ Դրա հյուսիսային կողմից կրցված է Ապուղամրենց ընտանիքի հանգստարանը, որը դիպվածով հայտնաբերել է Մ֊իքայել արքեպիսկոպոսը։ Ըստ վիմագիր արձանագրության, այդ հանգստարանը կառուցել է Ապուղամրի թոռը, Գրիգոր իշխանի որդի Ապլղարիբը (ս. Փրկիչ եկեղեցու կառուցողը) 1040 թվականին։ Եկեղեցու պատերը ներսից հետագայում սվաղել են կրով, որը հավանաբար ծածկում է դրա որմնանկարները։ Առանձնահատուկ գեղեցկություն ունեն մանավանդ եկեղեցու նեղ ու երկար լուսամուտներն ու դռները, որոնք թվով երեքն են։ Թե՛ լուսամուտները և թե՛ դռներն առնված են կիսասյուներով ու կամարներով զարդարված շրջանակների մեջ։ Ականատեսները վկայում են, որ այս եկեղեցի-մատուռը հաղիվ կարող էր տեղավորել 40—60 հավատացյալների, բայց ներսի ծավալային-ճարտարապետական լուծումները կատարված են այնպիսի վարպետությամբ,

որ այն բավական ընդարձակ է երևում[166]։ Եվ պատահական չէ, որ եվրոպական ճանապարհորդներն առանց բացառության գովում են Ապուղամրենցի գեղեցկությունը՝ հատկապես դրա անպաճույճ, պարզ, բայց վեհաշուք կառուցվածքը, որի մասին առանձնապես գովեստով է խոսում Համիլտոնը[167]։

Սկզբնական շրջանում Ապուղամրենց ս. Գրիգորը թե՛ դրսից և թե՛ ներսից շարված է եղել սրբատաշ քարերով։ Հետագայում, երբ անհրաժեշտություն է զգացվել ներսից այն ն.կարազարդել՝ ծեփել են դաճ ու կրով և վրան արել զանազան նկարներ[168]։ Այդ նկարների հազիվ հետքերն են երևում։ Սակայն այնուամենայնիվ նկատվում է, որ մյուս եկեղեցիների որմնանկարների նման Ապուղամրենցի նկարները նույնպես կրոնական բովանդակություն են ունեցել. դրանցում պատկերված է Քրիստոսը՝ շրջապատված հրեշտակներով[169]։

Ապուղամրենց եկեղեցին, ինչպես ասված է վիմագիր արձանագրության մեջ, համալրվել է տոհմական գերեզմանոցով և երկու մատուռներով, որոնք կառուցվել էին Ապլղարիբ մարզպանի կողմից 1040 թվականին։ Սակայն այդ բոլորից կանգուն և բավական բարվոք վիճակում մեզ է հասել միայն հաստատապատ եկեղեցին։ Թագավորական ու մյուս իշխանական հանգստարանների նման Պահլավունի իշխանական տան այս ճյուղի հանգստարանը նույնպես (որտեղ դրնվում էին Ապլղարիբի հոր՝ Գրիգոր իշխանի, եղբոր՝ Համզայի, մոր՝ Շուշանի, մորեղբոր գերեզմանները)[170] ենթարկվել է կողոպուտի և չի պահպանվել մինչև մեր օրերը։

Մի քանի կարևոր արձանագրություններ կան Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու վրա։ Դրա առաջին արձանագրությունը, որ, ինչպես ասվեց, վերաբերում է 994 թվականին, նվիրատվական է։ Բագրատունյաց ժամանակաշրջանի երկրորդ, բավական ընդարձակ, արձանագրությունը թողել է արդեն քանիցս հիշատակված Ապլղարիբ մարզպանը և վերաբերում է 1040 թվականին։ Այդ ար-

---

166 *Ապուղամրենց եկեղեցու մասին տե՛ս* Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 52—54, Х. Ф. Б. Линч, Армения, т. I, էջ 488—489, И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 23—24, Պալասյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 45—46, և այլ տեղերում։

167 *Տե՛ս* Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 52։

168 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. ժողովածու, էջ 166։

169 *Նույն տեղը։ Տե՛ս նաև* Х. Ф. Б. Линч, Армения, т. I, էջ 487—489։

170 И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, էջ 24։

ձանագրության մեջ մարդպանը գրում է, որ ինքը կառուցել է երկու մատուռ-դամբարան իր հոր, մոր և Էդբոր հիշատակին[171]: Հետագայի արձանագրություններն իրենց նշանակությամբ այնքան կարևոր չեն և իրենցից ներկայացնում են սոսկ հիշատակարանկտակներ:


Անիի XI դարի եկեղեցիների մեջ իր ուրույն տեղն ունի Հովվի եկեղեցին, որ գտնվում էր քաղաքի պարիսպներից դուրս, Հյուսիսային արվարձանում, գլխավոր մուտքից մոտ 1,5—2 կմ հեռավորության վրա: Հովվի եկեղեցին նույնպես պատկանում է Հայաստանի վաղեմի մայրաքաղաքի այն կառույցների թվին, որոնց կառուցման ճշգրիտ ժամանակը չի որոշված: Սակայն հաշվի առնելով ճարտարապետական ու կառուցողական լուծումները՝ այն իրավացիորեն համարում են XI դարի (իսկ ըստ Ն. Մ. Տոկարսկու՝ XI դարի առաջին կեսի)[172] եկեղեցի: Անընդունելի է Ա. Լ. Յակոբսոնի այն պնդումը, թե Հովվի եկեղեցին «ավելի շուտ» պատկանում է XIII դարին[173]: Նրա վկայակոչած անուղղակի «փաստերը» ոչնչով չեն հիմնավորում այդ տեսակետը: Հովվի եկեղեցին, ինչպես արձանագրում են ճարտարապետության մյուս մասնագետները, ճարտարապետությամբ միանգամայն հարազատ է տակավին VII դարում մշակված հայկական գմբեթավոր այն եկեղեցիներին, որոնք X—XI դարերում վերարտադրվել են այդ նոր ժամանակներին հատուկ ձևերով: Այն նմանության շատ գծեր ունի Զվարթնոցի, Իրինդի, Գագկաշենի, Ապուռամրենց ս. Գրիգորի, Վահանավանքի փոքր եկեղեցու, Յախացքարի և նույն կարգի մի քանի այլ եկեղեցիների ու տաճարների հետ:

Հովվի եկեղեցու կառուցման մասին մինչև նորագույն ժամանակները պահպանվել է մի ավանդություն, որը շնչին տարբերակներով տեղ է գտել և՛ մեր ազգային, և՛ օտար պատմիչների մոտ: Այդ ավանդությունը մանրամասն վերապատմել են նաև նոր ժամանակների շատ հեղինակներ ու ճանապարհորդներ: Առանձնապես ուշագրավ է Կովկասի նոր պատմության հայտնի հեղինակներից մեկի՝ գեներալ Պոտտոյի պատումը: Ավանդության բովանդակությունը հետևյալն է. եկեղեցին իբր կառուցել է մի ծեր հովիվ, որը զատկի օրը ուշացած լինելով, աղոթելու համար չի կարողանում մտնել մայրաքաղաքի որևէ եկեղեցի, դրանք աղոթող

[171] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք, էջ 33:

[172] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 210:


[173] Տե՛ս Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտ. պատմ., աշխ. ժող., էջ 158, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 206—207 և այլն:



Հովվի եկեղեցին

հավատացյալներով լեփլեցուն լինելու պատճառով: Ավանդության իրական հիմքն այն է, որ Անին մարդաշատ էր և նրա եկեղեցիները կրոնական տոներին իրոք կարող էին լցվել հավատացյալներով: Իսկ արվարձանում այդ եկեղեցու կառուցումը հատկապես ոմն Հովվի հետ կապելը թվում է, թե արձագանքն է այն իրողության, որ քաղաքի այդ թաղամասի բնակիչների զբաղմունքների մեջ անասնապահությունը գրավում էր կարևոր տեղ: Հովվի եկեղեցու գոյությունը, բուն քաղաքի մյուս փոքր, բայց նույնպես շքեղ եկեղեցիների հետ, ցույց է տալիս, որ Անիի եկեղեցական կառուցվածքները՝ սկսած փոքրիկ մատուռներից և վերջացրած ավելի խոշոր եկեղեցիներով ու տաճարներով, մի-մի ճարտարապետական հուշարձան էին, ուշադրության արժանի կոթողներ:

Հայկական ճարտարապետության պատմության մեծ երախտավոր Թ. Թորամանյանը հիացմունքով է խոսում Հովվի եկեղեցու մասին. «Ոչ ոք թող չզարմանա,— գրում է նա,— երբ այս



Հովվի եկեղեցու
վերակազմության ճակատը

խեղճ ու ողորմելի մնացորդը (Հովվի եկեղեցու ավերակները—Թ. Հ.) մեր հիացումը գրավող Մայր եկեղեցիի, Գագկաշեն մեծագործ ս. Գրիգորի և մեզ ապշություն պատճառող վիթխարի պարիսպներու հավասար կդասեմ[174], իսկ այլ տեղերում որակում է ուղղակի որպես «մի ճարտարապետական գոհար», «Անիի ճարտարապետության պսակ», «աննեղի ճարտարապետի պայծառ ու բեղմնավոր ուղեղի մարմնացում» և այլն[175]։

Չափսերով շատ փոքր այս եկեղեցին (ներքին տրամագիծը 4,65 մ է, իսկ արտաքինը՝ 6,35 մ), որի չափագրումը կատարել ու վերակազմման հատակագիծը կազմել է Թ. Թորամանյանը[176],

174 Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմ., աշխ. երկրորդ ժող., էջ 106։

175 Նույն տեղը, աշխ. ժող., էջ 94։

176 Նույն տեղը, աշխ. երկրորդ ժող., էջ 106։

պատկանում է սյունաձև եկեղեցիների թվին, արտաքինից եռահարկ, իսկ ներսից՝ երկհարկ է։ Նրա առաջին յարուսը (հարկը) ունի աստղաձև հատակագիծ, որի վրա բարձրանում են ավելի քիչ մասնատված երկրորդ ու երրորդ յարուսները։ Առաջին հարկի պատերի արտաքին մասը մասնատված է եղել 12 եռանկյուն և 6 կիսաշրջան որմնախորշերով, որոնք թեթևացրել և ակնահաճո են դարձրել նրա պատերը։ Երկրորդ հարկի պատերն ունեցել են 6 որմնախորշեր, իսկ երրորդ հարկինը՝ ունեցել են ավելի պարզ կառուցվածք։ Թ. Թորամանյանի արտահայտությամբ Հովվի եկեղեցին «իր մեջ հրաշալի կերպով մարմնացնում է թե՛ խաչաձևող կամարներ, թե՛ կամարաջիլեր և թե՛ սյունախուրձեր»[177]։ Այս փոքրիկ եկեղեցի-դամբարանում կատարելության է հասցված հայ քարագործ վարպետի արվեստը։ Ճարտարապետական առումով հրաշք են համարվում մանավանդ եկեղեցու առանց հենասյուների թվով վեց «կախված կամարները», որոնց մի ծայրը հանգում էր որմնասյուների վրա, իսկ «մյուս ծայրերը հավաքված դեպի կենտրոն, հրաշքով կախ եկած են ձեր գլխուն վերև»[178], որտեղից մի ժամանակ կախված է եղել մատուռը լուսավորող ջահը։



Խումբուշենց
եկեղեցու
պեղումները

Հովվի եկեղեցին լրիվ կործանման ու անհետացման եզրին էր գտնվում դեռևս անցյալ դարի վերջերին։ Դրա պահպանված «ողորմելի» մնացորդների հիման վրա Թ. Թորամանյանին հաջողվել է կազմել դրա վերականգնման հատակագիծը, ինչպես նաև չափագրել մեծ ճշտությամբ։

177 Նույն տեղը, էջ 339—340։

178 Նույն տեղը, աշխ. երկրորդ ժող., էջ 106։

Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանի եկեղեցիներից էր նաև ս. Աստվածածին կոչված Խամբուշենց տոհմական եկեղեցին, որը կառուցվել է հավանաբար XI դ. սկզբներին, համենայն դեպս, 1042 թվականից առաջ։ Տոհմական այդ մատուռի մոտ, դրա հարավային կողմում գտնվում է Խամբուշենց գերեզմանատունը։ Խամբուշենց եկեղեցին նոր ժամանակներում արդեն միանգամայն ավերված էր և նրա մասին գաղափար ենք կազմում հիմնականում 1893 թ. Ն. Մառի կողմից այդտեղ կատարված պեղումներով հայտնաբերված մնացորդների շնորհիվ։ Եկեղեցին գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում, Աշոտյան պարիսպների մոտ։ Ունեցել է շատ խիտ ու զուսպ, բայց գեղեցիկ ճարտարապետական կառուցվածք, նույնքան զուսպ քանդակներով զարդարված[179]։ Եկեղեցին գտնվում էր քաղաքի ամենախիտ բնակեցված ու կառուցապատված թաղամասում։ Այդ է եղել պատճառը, որ Խամբուշենց եկեղեցին արևմտյան կողմից դուռ չի ունեցել և օգտվել է միայն կողմնակի մուտքերից[180]։

Միանգամայն ավերված վիճակում է մեզ հասել նաև Գրիգոր իշխանի կնոջ՝ Շուշաճի սեփական եկեղեցին, որը գտնվում էր Աշոտյան պարիսպներից ներս, Ծաղկոցաձորի բարձրադիր ափին։ Այս եկեղեցին նույնպես կառուցվել էր XI դ. առաջին կեսին, ամենայն հավանականությամբ 1037 թվականին։ Եկեղեցու ավերակները պեղվել են 1916 թվականին։ Հետագայում դրա շուրջը կառուցել են մի շարք բնակելի տներ։ Բուն եկեղեցին կառուցված է եղել ժայռի վրա, ունենալով 13,3 մ երկարություն և 8,1 մ լայնություն։ Պատերը շարված են եղել սև, սրբատաշ տուֆից և ունեցել է միայն դեպի հարավ բացվող մի դուռ[181]։ Դժվար է ասել, թե երբ է վերջնականապես այդ եկեղեցին ավերվել, քաղաքի հետ միասի՞ն, թե՞ դրանից հետո։

Նշվածներով, անշուշտ, չի ավարտվում Անիի Բագրատունյաց շրջանի եկեղեցիների ցանկը։ Քաղաքում նշմարված բազմաթիվ այլ եկեղեցիների մի մասը ևս պատկանում է այդ ժամանակներին։ X—XI դարերում է կառուցվել նաև Միջնաբերդի եկեղեցին, որն իր ճարտարապետական լուծումներով կրում է ավելի հին ժամանակների, հատկապես պալատական եկեղեցու կնիքը։ Այն կանգուն վիճակում է հասել մինչև մեր օրերը։ Այն տեղադրված է թեք լանջի վրա։ Առանձնապես հիշատակության արժանի են արևմտյան գլխավոր մուտքի շրջանակի և քիվի զարդաքանդակները։ Դրանից բացի, ինչպես ասվեց իր տեղում, Միջնաբերդում կային նաև մի քանի այլ եկեղեցիներ, իսկ պալատական եկեղեցին արդեն պատկանում է ավելի վաղ ժամանակներին։

[179] Տե՛ս Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 209—211։ Լեո, Անի, էջ 252—253։

[180] Н. Я Марр, Ани, столица древней Армении, էջ 210։

[181] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժող., էջ 325, «Отчет Анийского музея древностей за 1916 год», составил Г. Н. Чубинов, Петроград, 1918, էջ 5—14։

6. ՄՇԱԿՈՒՅԹԸ

X—XIII դարերի առաջադիմությունը տնտեսական կյանքին հավասար վերաբերում է նաև մշակույթին՝ դպրոցներին, գիտությանը, մատենագրությանը, արվեստին։ Մշակույթի կենտրոններ էին դարձել Տաթևը, Աղթամարը, Նարեկավանքը, Հաղպատը, Սանահինը և այլ վանքեր։ Սակայն մշակույթի զարդացումը չէր սահմանափակվում միայն վանքերով։ Մշակույթի մեծ կենտրոններ են դառնում նաև երկրի խոշոր ու մարդաշատ քաղաքները, հատկապես՝ Անին։

Մոտավոր հաշվումներով Հայաստանում և Կիլիկիայի հայկական պետությունում X—XV դարերում գործել են մեզ հայտնի մոտ 80 դպրոցներ, որոնց մի մասը՝ Տաթև, Գլաձոր, Սանահին, Հաղպատ, Բջնի և այլն, եղել է բարձր տիպի՝ վարդապետարաններ կամ ճեմարաններ[1]։ Սակայն ցավով պիտի նշել, որ Անիի դպրոցների մասին վկայություններն աղքատիկ են և կցկտուր։ Մայրաքաղաքի պատմության բազմաթիվ հարցերին վերաբերող մատենագրական ընդարձակ (շատ դեպքերում բազմակողմանի ու շատ մանրամասն) հիշատակություններում ու ստվարաթիվ վիմագիր արձանագրություններում մայրաքաղաքի դպրոցների վերաբերյալ ուղղակի գրեթե ոչինչ չի հիշատակված։ Մի փոք առաջ գնալով նշենք, որ մեր մատենագիրներն ու գրիչները, ինչքանով մեզ հայտնի է, ընդհանրապես ցածր կարգի դպրոցների մասին տեղեկություններ շատ սակավ են հաղորդել, կամ ուղղակի դրանք ամենևին ուշադրության առարկա չեն դարձրել։ Նրանք այս կամ այն առիթով դպրոցների մասին խոսելիս գերազանցապես նկատի են ունեցել միայն բարձր տիպի դպրոցները՝ «վարդապետարանները»։ Այնպես որ Անիի ցածր տիպի դպրոցների վերաբերյալ, որոնք հավանաբար բավական թիվ էին կազմում, կարելի է դատո-

[1] Տե՛ս Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X—XV դդ.), Երևան, 1958, էջ 95—321։

ղութիւններ անել միայն անուղղակի տվյալների հիման վրա, այն էլ ենթադրութիւնների ու հավանականության սահմաններում։

Կասկածից վեր է, որ Գագիկ II-ն ինքը լինելով կրթված անձնավորություն մայրաքաղաքում հովանավորել է դպրոցական կրթական գործը։ Ժամանակակիցներն ու հետագայի պատմիչները նրան որակում են որպես իմաստուն և մանկությունից ուսյալ անձնավորություն. «ընդ դպրութիւն գրոց վարժեալ էր»,— գրում է Սամվել Անեցին։ Նույն ձևով է Գագիկին բնութագրում նաև Մատթեոս Ուռհայեցին[2]։ Իսկ Սմբատ Սպարապետը հաղորդում է, «օծեցին զորդին Աշոտոյ զԳագիկ թագաւոր Հայոց. զի էր զարգացեալ եւ վայելուչ եւ իմաստուն եւ հմուտ աստուածային ուսմանց հին և նոր կտակարանաց»[3]։

Անիում կրթություն ստացած մարդկանց թիվը, ինչպես կարելի է եզրակացնել այլ առիթներով արված հիշատակություններից, բավական մեծ է եղել։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ամենահետաքրքիր ու բազմակողմանի զարգացած մտավորականներից էր Գրիգոր Պահլավունին, որի մասին խոսք կլինի մի փոքր հետո։ Հավանական է համարվում, որ ապագա մեծ փիլիսոփայի մանկությունն ու պատանեկությունն անցել է Անիում և այստեղ էլ նա ստացել է իր նախնական կրթությունը[4]։ Այդ ենթադրությունը հաստատող փաստ է համարվում այն, որ Պահլավունիներն Անիում ունեին իրենց իշխանական պալատը և, բնականաբար, այստեղ էին, հավանաբար, դաստիարակվում և հայոց լեզվով կրթություն ստանում իշխանազունները։

Միանգամայն իրավացի է բազմավաստակ Ղ. Ալիշանը. Անիում մեծ թվով վարդապետների գոյությունը (Կոստանդնուպոլիս գնալիս Պետրոս կաթողիկոսին ուղեկցողների թվում կային 16, ըստ այլ աղբյուրների՝ 12 վարդապետներ, որոնց մեծ մասը, ամենայն հավանականությամբ, Անիից էր), եկեղեցիներում կուտակված բավական թվով ձեռագրերը, որոնց թվում և այնպիսիները («Տոնականք» և այլն)[5], որոնք ավելի շուտ ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր էին, նույնպես գալիս են հաստատելու, որ Անիում գոյություն ունեին տարբեր կարգի բավական թվով դպրոցներ։

[2] Սամվել Անեցի, *Հանաքմուռ ի գրոց պատմագրաց...*, էջ 108, Մ. Ոսկանյեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 161։

[3] Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Փարիզ, 1859, էջ 57—58։

[4] *Տե՛ս* Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, Ереван, 1946. էջ 16:

[5] Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 95։

Մեր դարի 50-ական թվականներին հայտնաբերված մի հիշատակարանի շնորհիվ ակնհայտ դարձավ, որ Անիում ցածր կարգի դպրոցներից բացի գոյություն է ունեցել նաև ավելի բարձր կրթություն տվող ուսումնական հաստատություն։ Հիշատակարանից ասելով մայրաքաղաքի այդ դպրոցի գլուխ XII դ. սկզբներից անցել է մինչև այդ Հաղպատի նույնատիպ դպրոցում պաշտոնավարող Հովհաննես Սարկավագը[6]։ Մինչև տնօրինողի դերում Հովհաննես Սարկավագի հանդես գալը՝ Անիի բարձր կարգի դպրոցի մասին որևէ հիշատակություն կամ ակնարկ չկա և դժվար է իմանալ, թե երբ է այն հիմնադրվել և ում կողմից։ Միայն հաստատ կարելի է պնդել, որ Անիի բարձր տիպի դպրոցը XI դ. սկզբներից արդեն գոյություն ուներ և Գրիգոր Մագիստրոսի՝ Անիում կարդացած դասախոսությունների մի զգալի մասը տեղի էր ունենում այդ դպրոցում[7]։

Կասկած չկա, որ Անիի դպրոցներն իրենց ծրագրերով, ձեռնարկներով, ուսման դրվածքով, ավանդվող առարկաներով հար ու նման էին միջնադարյան Հայաստանի տարբեր մասերում գործող համապատասխան վարժարաններին և ուսումնարաններին։ Անուղղակի հիշատակություններից երևում է, որ ժամանակի պայմաններին համապատասխան հոգ են տարել այդ դպրոցները մայրենի լեզվով դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով ապահովելու համար, որովհետև ուսումը տարվում էր հայերեն։ Հայկական այդ դպրոցներում կային և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն դասագրքեր ու ձեռնարկներ։ Օրինակ՝ Անանիա Շիրակացու մի քանի աշխատությունները, Գր. Մագիստրոսի քերականության մեկնությունը, ինչպես նաև Էվկլիդեսի «Երկրաչափություն»-ը, Ոլիմպիանոսի առակները և հունական, ասորական ու, մասամբ, արաբական հեղինակներից թարգմանված այլ գրքեր[8]։

Ցածր կարգի դպրոցները հիմնականում տալիս էին գրաճանաչություն, իսկ բարձր կարգի ուսումնարաններում ավանդվում էին քերականություն, ճարտասանություն, իմաստասիրություն, առասպելաբանություն, համարողական արվեստ (մաթեմատիկա), աստղաբաշխություն, աշխարհագրություն, մատենագրություն և այլ առարկաներ։ Անիի բարձր կարգի դպրոցն ավելի հայտնի

[6] *Տե՛ս* Ա. Խ. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X—XV դդ.)*, էջ 239։

[7] Նույն տեղը, էջ 241։

[8] *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերություններն նրանց մեջ*, Երևան, 1935, էջ 8, նույնի, *Երկեր*, հ. Դ, Երևան, 1970, էջ 39, Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, էջ 20:

դարձավ XII դարից, երբ դրա տնօրինող կարգվեց Հովհաննես Սարկավագը։

Բարձր տիպի դպրոցի գոյությունը, Գրիգոր Մագիստրոսի ծավալած դիտամանկավարժական գործունեությունը, բազմաթիվ վարդապետների առկայությունը, Բագրատունի թագավորներից ոմանց (Գագիկ I, Հովհաննես-Սմբատ, Գագիկ II) դիտությանն նկատմամբ ցուցաբերած հակումներն ու բարեհաճությունը, XI դարի առաջին կեսին մեծ հեղինակություն վայելող Հովհաննես Կողնեանի գիտական գործունեությանը տեղյակ լինելը և անհրաժեշտության դեպքում նրան դիմելը, այդ բոլոր հայտնի փաստերն անուղղակիորեն դալիս են ասելու, որ մայրաքաղաք Անին X դարի վերջերին և XI դարի առաջին կեսում դարձել էր գիտության կարևոր կենտրոն։ Գրիգոր Մագիստրոսը, Անիի նրա ունկնդիրներն ու վարդապետները, որոնց թվում և նրա բարեկամներից մեկը՝ Սարգիս վարդապետը, զբաղվում էին գիտության զանազան հարցերով՝ բնագիտությամբ, փիլիսոփայությամբ ու աստվածաբանությամբ, մատենագրությամբ, բժշկագիտությամբ, առասպելաբանությամբ, մաթեմատիկայով և այլն։ Առանձնապես նշելի են Գրիգոր Մագիստրոսի քերականության մեկնությունը և իր նամակներում զանազան գիտությունների ու գիտության ամենատարբեր հարցերի վերաբերյալ արած դիտողություններն և արտահայտած մտքերը[9]։ Իսկ Անիի պեղումների ընթացքում հայտնաբերված բժշկական զանազան գործիքները ցույց են տալիս գործնական բժշկության զարգացումը[10]։ Գիտության առաջընթացի մասին են վկայում օտար հեղինակներից կատարված թարգմանությունները։ Հայտնի է, որ ինքը Գրիգոր Մագիստրոսը թարգմանել է Պլատոնի «Տիմեոս» ու «Փեդովնա» և Էվկլիդեսի «Երկրաչափություն» աշխատությունները։ Ինչպես երևում է, որոշ գրքերի թարգմանությամբ շահագրգռված են եղել նաև Բագրատունի թագավորները։ Մեզ թվում է այդ կարգի աշխատություններից էր նաև XI դարի առաջին կեսին արաբերենից հայերեն թարգմանված արաբական մի բժշկարան, որը կրում է «Բժշկարան, թարգմանված արաբերենից հայերեն Հայոց Գագիկ անհաղթելի թագավորի օրոք» վերնագիրը[11]։ Դժվար է ասել, թե հատկապես Հայաստանի ո՞ր վան-

[9] Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 53, 57—58, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 35—37, Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, էջ 20։ Ս. Գ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1965, էջ 172 և այլն։

[10] Տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, էջ 226—229։

[11] Նույն տեղը, էջ 47։

քում կամ քաղաքում է կատարվել այդ թարգմանությունը և ո՞ւմ ձեռքով։ Սակայն վերնագրից երևում է, որ այդ թարգմանությունը ամենայն հավանականությամբ կատարվել է Հայոց թագավորի միջամտությամբ։ Լ. Ա. Հովհաննիսյանը ենթադրում է, որ այդ բժշկարանում հիշատակված Գագիկը ամենայն հավանականությամբ Գագիկ Առաջինն է, իսկ եթե նույնիսկ լինի Գագիկ II-ը, միևնույն է, ժամանակի տեսակետից դրանք իրար շատ մոտ են և ըստ էության դրանից ոչինչ չի փոխվի[12]։

Մեզ թվում է, որ «Բժշկարան»-ում հիշատակված Գագիկ թագավորը ոչ թե Գագիկ I-ն է, այլ Գագիկ II-ը։ Նախ Գագիկ I-ը «անպարտելի» երբեք չի կոչվել և նրա կարիքը չկար. նրա թագավորության տարիները հիմնականում խաղաղ ժամանակներ էին և «անպարտելի»-ի փոխարեն նա ավելի շուտ իր մի քանի նախորդների նման հայտնի էր «շահնշահ» տիտղոսով։ Այլ էր Գագիկ II-ի թագավորության կարճատև շրջանը. ներքին երկպառակությունների և բյուզանդական զավթողական հարձակումների տարիները, երբ փաստորեն այդ բոլորից հաղթող դուրս եկավ Գագիկ II-ը։ Մեր այս կարծիքը ավելի հավանական կդառնա, եթե հիշենք նաև, որ Գագիկ II-ը պատմագիրների կողմից երբեմն հիշատակվում է իբրև «իմաստուն» թագավոր, լուսավորված, ուսումնասեր թագավոր։ Ինչպես նաև այն, որ հայ բժշկական գիտության բնագավառում այնքան երախտիք ունեցող Գրիգոր Մագիստրոսի անհատական եռանդուն գործունեությունը համընկնում է հատկապես Գագիկ II-ի թագավորության տարիների հետ։ Բացառված չէ, որ այդ թարգմանության մեջ իր մասնակցությունը կարող է ունեցած լինել նաև նա։

Մի այլ, ավելի համառոտ բժշկարան թարգմանվել է Հովհաննես-Սմբատի օրոք, նրա կարգադրությամբ։ Դրա մի օրինակը պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մի այլ օրինակը՝ վենետիկի Մխիթարյանների Ձեռագրատանը (տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, Ереван, 1946, էջ 48—49)։

Գրավոր աղբյուրների վկայություններից և պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդներից ակնհայտ է դառնում, որ Անին ունեցել է իր գրադարան-ձեռագրատները։ Մեզ է հասել Գրիգոր Մագիստրոսի ժամանակակից Սարգիս վարդապետ Սևանեցու հիշատակարանը, որը տեղ է գտել շատ գեղեցիկ գրերով գրված 999 թվականի մի ձեռագրի վեր-

[12] Նույն տեղը։

ջում: Այդ հիշատակարանում հեղինակը գրում է, որ ինքն այդ ձեռագիրը գտել է արքունական գրադարանում («ի գրանոցին») անխնամ ընկած և ինքն այն վերցրել ու իր հետ տարել է «հանեալ է ի բանտէն»: Վերջում հիշատակագիրը մաղթում է այդ ձեռագիրը տեսնող ու վերծանող հետագա սերնդի ներկայացուցիչներին՝ հիշել իրեն: Հիշատակարանը վկայակոչել են Ղ. Ալիշանը և Գար. Զարպհանալանյանը: Իբրև մայրաքաղաքում մշակութային կարևոր հաստատության գոյությունը հաստատող գրավոր ու միանգամայն արժանահավատ հաղորդում անհրաժեշտ ենք համարում այն մեջ բերել նույնությամբ. «Յամի յորում էր Հայ թուականս ՆՂ [1041 թ.] եւ վճարեցաւ ի մարդկանէ արքայն Հայոց մեծիմաստն Յովհաննէս, զոր ես Սարգիս վարդապետ զգիրքս զայս յարեւմտական տան գանձուն, անգնալ յանկեան միում, անայցելու թափառեալ թաւալեր յաճիւն յատակին, եւ գրեաթէ լայր լռելեան, իսկ իմ հայեցեալ խնամով ի գրանոցին, եւ ըստ սովորական մեր ախորժակաց զյոքունս բացեալ՝ ի բանսն բերկրեի. եւ սա զատուցեալ զընկերացն կայր կարաւտ ձեռին առ ինքն կարկառելոյ. զոր ապա առեալ իմ ընդ իս տարա, հանեալ ի բանտէն: Արդ մաղթեմ, մեզ ապագայիցդ, աղաւթիւք զիս յիշեսջիք, որք ի գիրքս յայս հայիք եւ վերծանէք»[13]:

Բագրատունիների արքայական գրադարանի մասին վկայակոչված հույժ կարևոր այդ հիշատակարանից բացի, կարևոր են նաև «գրադարանային» այն իրերը, որոնք հայտնաբերվել են Ն. Մառի հնագիտական պեղումների ընթացքում: Դեռևս 90-ական թվականներին Ն. Մառը ենթադրում էր, որ ամենահին կառույցները պետք է գտնվեին Միջնաբերդում և արքայական պալատի, պալատական եկեղեցու ու շինությունների հետ միասին ու ենթադրաբար այդտեղ էր տեղադրում նաև թագավորական գրադարանը[14]: Եվ ահա պեղումների ընթացքում լիովին հաստատվում է Միջնաբերդում թագավորական գրադարանի գոյության հարցը. հայտնաբերվում են բավականին թվով շքեղ գրքակալներ, որոնցից մի քանիսը ներկայումս պահպանվում են ՀՍՍՀ Պետական պատմական թանգարանում: Քանդակազարդ այդ գրքակալները ցույց են տալիս, որ թագավորական գրադարանը կահավորված է եղել նուրբ ճաշակով՝ թեկուզ վերը վկայակոչված հիշատակարանում նշվում է այն մասին, որ Հովհաննես-Սմբատի մահից հետո գրադարանի գրքերը գտնվում էին անխնամ վիճակում:

Ըստ երևույթին արքայականը Անիի միակ գրադարանը չէր: Սովորաբար հատուկ գրադարան գոյություն ուներ նաև կաթողիկոսարանին կից: X դարում, մինչև կաթողիկոսական աթոռը Անի փոխադրվելը, Աշիկ կաթողիկոսը Հայրապետական նստավայրում ստեղծել էր, Գարեգին Զարպհանալանյանի արտահայտությամբ, «փառաւոր գրատուն մը... ու հոն հաւաքեց այլ և այլ արտաքին և վարդապետական գրքերու բազմութիւն մը»[15]: Միանգամայն տրամաբանական է, որ Անիի կաթողիկոսարանում (կամ եպիսկոպոսի աթոռանիստում) նույնպես ստեղծվել էր գրադարան: Չէ որ դարերի ընթացքում այդ նույն կերպ են ստեղծվել նաև էջմիածնի կաթողիկոսարանի ձեռագրատունն ու գրադարանը, որոնցից առաջինը դարձավ մեր օրերում ստեղծված Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հայտնի ձեռագրատան՝ Մատենադարանի հիմքը:

Վիմագիր արձանագրությունների հիշատակություններից երևում է, որ նշված պաշտոնական գրադարաններից բացի տարբեր բովանդակության ձեռագրերի հավաքածուներ ունեին Անիի մի ամբողջ շարք եկեղեցիներ[16]: Այդ հավաքածուները հիմնականում ստեղծվել էին նվիրատվությունների միջոցով: Պահպանվել են այս կամ այն անձի՝ եկեղեցիներին ձեռագրեր նվիրելու մասին մի շարք արձանագրություններ: Այսպես, օրինակ, ս. Փըրկիչ եկեղեցու վրա թողած իր երկու արձանագրություններում, դրա կառուցող Ապլղարիբ Պահլավունի մարզպանը գանձերի ու սպասքի հետ ձեռագրեր է նվիրել եկեղեցուն: Նրա 1035 թվականի արձանագրության մեջ մասնավորապես ասված է. «Եւ եթէ ոք ի քահանայից եկեղեցոյս եւ յիմ սպասուցս եւ կամ ի գրենոյս յափշտակէ կամ ծախելով կամ զինչ եւ իցէ պատճառանաւ եւ կամ զագահութեան դէտ երթայ ի զեկեղեցոյս մուտքս խորէ եւ սուրբ Փրկիչս ի պէտս ոչ անցուցանէ...»[17], իսկ մյուս, 1036 թվականին վերաբերող արձանագրությունում նվիրատու բարձրաստիճան իշխանը գրում է, որ ինքը ս. Փրկիչ եկեղեցին կառուցելուց հետո, դրամով գնած կալվածքների հետ եկեղեցուն է նվիրել ավետարան, տոնական, նորոգել տվել հին ու նոր կտա-

---

[13] Տե՛ս Ղ. Ալիշան, *Սիսական*, Վենետիկ, 1881, 50: Համմ. Գար. Զարբհանալյան, *Մատենադարան Հայկական Թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԹ)*, Վենետիկ, 1889, էջ 455:

[14] Н. Я. Марр, Ани, столица древней Армении, էջ 202:

[15] Զարբհանալյան Գարեգին, *Հայկական հին դպրութիւն*, Վենետիկ, 1897, էջ 549: Տե՛ս նաև Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Դ, էջ 34:

[16] Ղ. Ալիշան, *Շիրակ*, էջ 96:

[17] Հ. Ա. Օրբելի, *Հայ վիմագրություն*, պր. 1-ին, *Անի քաղաք*, էջ 46:

կարաններ. «Եվ ետու աւետարան և տաւնական եւ նո... հին և նոր կտակարանաւք եւ կանդնեցի միլ առ սուրբ Փրկիչս...»[18]։

Եթե երկրորդ արձանագրության մեջ հիշատակված ձեռագրերը (ավետարան, կտակարաններ) հիմնականում ծառայում էին կրոնական ծիսակատարությունների համար, ապա առաջին արձանագրությունից կարելի է եզրակացնել, որ եկեղեցին ընդհանրապես ուներ իր գրականությունը։

Եկեղեցիներին ձեռագրեր նվիրելու մասին հիշատակություններ կան նաև այլ արձանագրություններում, որոնք վերաբերում են մի փոքր ավելի ուշ ժամանակների։

Միջնադարյան Հայաստանում և հայկական Կիլիկիայում գոյություն են ունեցել մի քանի տասնյակ գրչության դպրոցներ՝ Տաթևի, Հաղպատ-Սանահնի, Գլաձորի, Մեծոփա, Հռոմկլայի, Սկևռայի և այլն[19]։ Իր գրչության դպրոցն ուներ նաև Անի մայրաքաղաքը։ Անիի դպրոցը, սակայն, ձևավորվել է մեզ հետաքրքրող ժամանակներից մի փոքր ուշ և հիմնականում գործել է XII—XIII դարերում։ Անիի դպրոցում գրված կամ ընդօրինակված ձեռագրերից մեզ շատ քիչ բան է հասել։ Իսկ պեղումների ընթացքում ընդհանրապես ձեռագրեր չեն հայտնաբերվել։ Դրանք հավանաբար զանգվածորեն ոչնչացել են թշնամական հարձակումների հետևանքով, կամ «գերեվարվել», տարվել են այլ երկրներ[20]։ Այնուամենայնիվ, պահպանվել է Անիի XIII դարի մի ձեռագիր, որի հիշատակարանի համաձայն այն 1347 թվականին նվիրվել է Հոռոմոսի վանքին[21]։

Անիում գոյություն են ունեցել հարյուրավոր վիմագիր արձանագրություններ։ Քաղաքի ավերակներում հայտնաբերված ամբողջական արձանագրությունների և առանձին բառերի ու հատվածների թիվը անցնում է երկուս և կես հարյուրից[22]։ Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում քաղաքաշինության, քաղաքի տնտեսական կյանքի, կոմունալ պայմանների, հարկերի ու հարկային քաղաքականության և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այդ արձանագրությունները փաստորեն Անիի պատմության

[18] Նույն տեղը, էջ 45։

[19] Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 368։

[20] Հայաստանում թուղթը սկսել են օգտագործել X դարից։

[21] Տե՛ս Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 37։

[22] Տե՛ս Հ. Ա. Օրբելի, Հայ վիմագրություն, պր. I, Անի քաղաք։

քարագիր ժամանակագրությունն են, առանց որի մայրաքաղաքի անցած ուղու մի շարք հարցեր անհնար կլիներ լուսաբանել։

Հայկական արվեստի զարգացման պատմության մեջ Անին թողել է մնայուն և լուսավոր հետք։ Այստեղ առանձնապես զարգացած է եղել ճարտարապետության հետ միահյուսված՝ քանդակագործությունը, որը կարելի է կոչել կիրառական քանդակագործություն։ Արքայական և իշխանական պալատները, տաճարները, եկեղեցիներն ու մատուռները, խաչքարերը, պաշտպանական պարիսպների որոշ հատվածներ զարդարված էին ամենատարբեր բովանդակության զարդաքանդակներով՝ կենդանիների ու բույսերի պատկերաքանդակներով, ծաղիկների նախշագոտիներով, երկրաչափական դանադան ձևերի քանդակներով, քարե հյուսվածքներով և այլն։

Այդ բոլորով հանդերձ, համեմատաբար թույլ էր զարգացած քանդակագործության ճյուղերից մեկը՝ արձանագործությունը։ Մեզ հետաքրքրող ժամանակների Անիում կերտված մեզ հայտնի արձաններից շատ քիչ ուշադրության արժանի գործը Գագիկ I-ի արձանն էր, որը, ինչպես ասվեց, տեղադրված էր իր կառուցած Գագկաշեն ս. Գրիգոր տաճարի պատի վրա։ Սակայն Գագիկի բարձրաքանդակ արձանը Անիում հայտնաբերված այդ կարգի միակ կերտվածքը չէր։ Ասել Մխիթարյանցի վկայությամբ, նույն ձևի մի արձան էլ գտնվելիս է եղել Պարոնի պալատի (որը տասնամյակներ շարունակ սխալմամբ համարում էին Բագրատունիների արքունական պալատը) պատի վրա և այդտեղից հանվել ու Պետերբուրգ է տարվել 1843 կամ 1844 թվականին, այսինքն՝ իր ճանապարհորդությունից (1851 թ.) 7—8 տարի առաջ[23]։ Այդ բարձրաքանդակը սովորաբար համարել են գինվորականի կամ, ըստ ավանդության, Սմբատ II Բագրատունի արձանը։ Այն քանդակվել է ուշ, Պարոնի պալատի հետ միասին։ Ղ. Ալիշանի ասելով, անգլիացի մի ճանապարհորդ, որ Անիում եղել է 1837 թվականին, հիշատակել է մի հեծյալի քանդակ՝ ինչ-որ գնդաձև իր ձեռքին[24]։ Գունդը համարում են իշխանության խորհրդանիշ[25]։ Նույն ձևի մի գունդ էլ քանդակված էր քաղաքի Սմբատյան պարսպի գլխավոր մուտքի վրա՝ պատկերված Բագրատունիների զինանշան վագրի (ըստ ոմանց՝ հովազ, կամ, նույնիսկ՝ առյուծ) ճանկերում։ Գրեթե դրանցով էլ սահմանափակվում էին Անիի Բագրատունիների շըր-

[23] Աբել Մխիթարյանց, Ճանապարհորդութիւն յԱնի, էջ 61—62 և 64—65։

[24] Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 95։

[25] Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստը, Երևան, 1955, էջ 505։

ջանի մեզ հայտնի արձանագործական աշխատանքները: Նույն բնույթի և զարգացման միևնույն աստիճանի վրա էին գտնվում նաև Հայաստանի մյուս տեղերում՝ Մրենում, Հոռոմոսում, Սանահնում, Հաղպատում, Աղթամարում և այլ տեղերում նույն ժամանակներում կերտված արձանագործական աշխատանքները[26]:

Անիի գեղանկարչությունը նույնպես հիմնականում կապված էր ճարտարապետության հետ: Քաղաքի ավերակներում հայտնաբերված նմուշները, պատմագիրների վկայությունները, ուշ ժամանակների ճանապարհորդների նկարագրությունները ցույց են տալիս, որ Անիի ճարտարապետական գլուխգործոցներից շատերը զարդարել են նաև գեղանկարներով: Սակայն, ամենայն հավանականությամբ, գեղանկարչության զարգացած ճյուղերը եղել է մանրանկարչությունը, որը առաջին հերթին կապված էր գրչության արվեստի հետ:

Մենք տեսանք, որ Անիի Մայր եկեղեցին ս. Փրկիչը և մի քանի ուրիշ եկեղեցիներ զարդարված էին նկարներով, որոնք ունեին կրոնական բովանդակություն. դրանք հիմնականում Քրիստոսի և առաքյալների պատկերներն էին, նկարված գմբեթների ներսի կողմից[27]: Այդ նկարները մեծամասամբ արված էին մի փոքր ավելի ուշ՝ XII դարի վերջերին ու XIII դարի սկզբներին: Պահպանվել է Անիի ս. Փրկիչ եկեղեցին նկարազարդող նկարիչի անունը: Սարգիս անունը կրող այդ նկարիչի՝ «փարշկան»-ի (=նկարիչ)[28] պատկերը կրոնավորի հագուստով, ավետարանի առաջ ծունկ չոքած աղոթելու տեսքով գտնվում էր եկեղեցու վրա և չնայած կրոնավորի տեսքին, նա աշխարհական էր[29]:

Ցավով պիտի նշել, որ Անիում ընդօրինակված կամ գրված ձեռագրերը մեզ համար մնում են անծանոթ և, հետևապես, դրանց նկարազարդման բնույթի մասին անհնար է որևէ բան ասել:

Ճանաչված մասնագետ Գեորգ Գոյանը հայ հին թատրոնի պատմությունը բաժանում է երեք ժամանակաշրջանի, որոնցից առաջինն ընդգրկում է I դարից (մ. թ. ա.) մինչև IV դարը (մ. թ.) ներառյալ, երկրորդը՝ IV դ. վերջերից մինչև X դ. սկզբները, իսկ

[26] Տե՛ս Н. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 года, էջ 19—29:

[27] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 95:

[28] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 372, Գառեգին Հովսեփյան, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 922:

[29] Թ. Թորամանյան, Նյութեր հայկ. ճարտ. պատմութ., աշխ. ժողովածու, էջ 372:

երրորդը, որ համընկնում է անիական ժամանակաշրջանին, ներառնում է X—XIV դարերը[30]: Այս վերջին ժամանակաշրջանում թատրոնի զարգացումը նա միանգամայն իրավացիորեն համարում է քաղաքային ու տնտեսական կյանքի առաջադիմության և երկրի



Հայ ծաղրածու-խեղկատակ (12-րդ դ.)

քաղաքական անկախության արդյունք ինչպես Անիի թագավորության, այնպես էլ Կիլիկիայի հայկական պետության մեջ: Իր հիմքում ունենալով բազմադարյան ավանդույթները՝ հայկական թատրոնը X—XIV դարերում ապրում էր վերելքի շրջան: Դուսանները, ողբերգակներն ու խեղկատակները տալիս էին ոչ միայն սիրերգային ու պատմական բնույթի ներկայացումներ, այլ նաև երգիծական ստեղծագործություններ, որոնք ունեին ընդգծված դասակարգային բովանդակություն և այլաբանորեն արտահայտում էին հասարակության ցածր շերտերի շահերն ընդդեմ աշխարհիկ ու հոգևոր վերնախավերի: Եվ պատահական չէ, որ հայկական եկեղեցին առաջվա նման թատրոնը դիտում էր իբրև «հեթանոսության մնացուկ», իբրև շահագործվող զանգվածների տրիբունա և անհաշտ պայքար էր մղում դրա դեմ[31]: Տարածված «ներկայացումներից» էին նաև երկրի քաղաքական կյանքի դանդաղ դրվագներ արտահայտող մենախոսությունները[32]: Այս վերջին կարգի, բայց մի փոքր ավելի ուշ ժամանակներին վերաբերող գործերից էին Հովհ. Թլկուրանցու «Քաջ Լիպարիտը»,

[30] Георг Гоян, 2000 лет армянского театра, т. I, Москва, 1952, էջ 68—69:

[31] Նույն տեղը, էջ 69: Տե՛ս նաև Գառեգին Լևոնյան, Թատրոնը հին Հայաստանում, Երևան, 1941, էջ 75—76:

[32] Գ. Լևոնյան, Թատրոնը հին Հայաստանում, էջ 75—76:

Տկար Մովսեսի «Անին» և այլն: Ներկայացնում էին նաև թարգմանական զանազան գործեր[33]: Իսկ թե Անիում հատկապես ինչ գործեր են բեմադրվել, այնուամենայնիվ, մեզ համար մնում են անորոշ: Պատմագիրները, գրեթե առանց բացառության լինելով թատրոնի նկատմամբ այնքան թշնամաբար տրամադրված քրիստոնեական եկեղեցու գաղափարախոսները, հարկ չեն համարել դրա մասին հաղորդել իրական տեղեկություններ:



Խեղկատակ (Անիից)

Մեզ հետաքրքրող ժամանակների հայկական թատրոնի և դրա դեմ եկեղեցու մղած պայքարի մասին հիշատակություններ ունեն մի քանի հեղինակներ՝ խոսրով Անձևացին (X դ.), Դավիթ Մաշկևորը, Սարգիս Շնորհալին (XII դ.) և ուրիշներ, որոնք առելությամբ են խոսում դրա «հեթանոսական» ներկայացումների վերաբերյալ[34]: Իսկ Գրիգոր Պահլավունին, որ XI դարի ամենաազդեցիկ հեղինակն էր, ընդհակառակը, թատրոնը պաշտպանում էր՝ կատակերգությունը դիտելով ընտանեկան արատները ծաղրելու և դրանք վերացնելու լավագույն միջոց: Նրա կարծիքով կատակերգության նպատակը հենց դրանով էլ պիտի սահմանափակվի և քաղաքականությանը չպետք է դիպչի[35]:

Անի քաղաքի հասարակական շքահանդեսների (որոնց մեջ, անշուշտ, մտնում էին նաև թատերական ներկայացումները) վերաբերյալ չափազանցված, բայց ըստ էության իրականությունն

[33] Նույն տեղը, էջ 76:

[34] Георг Гоян, 2000 лет армянского театра, т. I, էջ 326:

[35] Նույն տեղը:

ընդհանուր գծերով արտահայտող նկարագրություն ունի XI դարի մատենագիր Արիստակես Լաստիվերտցին: Ի հակադրություն իր ժամանակվա քաղաքական վատթարագույն վիճակի, հայրենասեր պատմագիրը վերհիշում է Հայոց մայրաքաղաք Անիի խաղաղ, անվտանգ և ուրախ օրերը, երբ նրա արտահայտությամբ, այստեղ «ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն ու ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն պլսողացն լի՛ առնէին ուրախական բերկրանօք»[36]:

Այդ հանդեսների ու ներկայացումների մի մասը տեղի էր ունենում քաղաքի հրապարակներում ու փողոցներում: Սակայն Անին ուներ նաև թատրոնի հատուկ շենք (կամ թերևս մի քանի շենքեր): Մինչև մեր ժամանակները են հասել Անիի թատերական շենքերից մեկի մնացորդները[37]:

Անիի թագավորության մեջ Պահլավունի իշխանական տունը խաղացել է հույժ կարևոր դեր: Այն առաջին անգամ երևան է եկել X դ. սկզբներին և մոտ 300 տարի գործուն մասնակցություն ունեցել երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային կյանքի ամենատարբեր բնագավառներում: Պահլավունի այդ հայտնի տան ամենահայտնի ներկայացուցիչներից էր **Գրիգոր Մագիստրոսը**, իր ապրած ժամանակաշրջանի լուսավորական գործիչը, փիլիսոփան, հայ վաղ վերածննդի փայլուն ներկայացուցիչներից մեկը: Գ. Մագիստրոսը ծնվել է մոտ 990 թ. Անիում, Պահլավունիների ընտանիքում: Նա վահրամ Պահլավունու նահատակ եղբոր՝ վասակի որդին էր: Սկզբնական կրթությունը ստացել էր Անիում, իսկ հետագայում բարձր կրթություն հավանաբար ստացել էր Բյուզանդիայում: Մասամբ դրանով է բացատրվում նրա հայտնի հումանիստական հայացքները:

Գրիգոր Մագիստրոսը աշխարհիկ, բազմակողմանի զարգացած, ազդեցիկ մտավորական էր: Նրա կյանքի ու գործունեության գլխավոր մասը բաժին է ընկնում Անի քաղաքին: Բագրատունիների մայրաքաղաքում նա եռանդուն մասնակցություն ուներ կրթության, դիտության ու մատենագրության զարգացման, երկրի ներքին քաղաքական կյանքում: Նա այն ազդեցիկ իշխանների շարքում էր, որոնք Հովհաննես-Սմբատ թագավորի մահից հետո խափանեցին Բյուզանդիայի խարդախ դիվանագիտության բոլոր կամայականությունները և Բագրատունիների գահի վրա հաստատեցին պա-

[36] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 56: Հմմտ. Գ. Ալոնյան, Թատրոնը հին Հայաստանում, էջ 74:

[37] Տե՛ս Գ. Ալոնյան, Թատրոնը հին Հայաստանում, էջ 73:

տանի Գագիկ II-ին։ Հովհաննես-Սմբատ թագավորն ու Պետրոս I կաթողիկոսը Գրիգոր Մագիստրոսին, իբրև գիտակ, 1036 թվականին վարդապետներից ու այլ կարգի մարդկանցից բաղկացած մի բավական մեծ խմբի հետ ուղարկում են այդ ժամանակներում իր գիտությամբ համբավավոր Հովհաննես Կողեռնի մոտ արևի խավարման պատճառներն իմանալու։

Գրիգոր Մագիստրոսի ջանքերով են կառուցվել Հավուց թառի ու Կեչառիսի վանքերը, որոնք դարձել էին մշակույթի զգալի կենտրոններ, և Բջնիի հոյակապ եկեղեցին։ Այս վերջինը նա կառուցել է տվել 1031 թվականին՝ եկեղեցուն տալով հսկայական կալվածքներ և կառուցման ու այդ նվիրատվությունների մասին թողնելով ընդարձակ արձանագրություն։ Պահլավունիների իշխանանիստ Բջնիի անունով Մագիստրոսը կոչվել է նաև Գրիգոր Բջնեցի։

Թեպետև Գրիգոր Մագիստրոսի կյանքի ու գործունեության, ինչպես և Բագրատունիների Անիի թագավորության վերաբերյալ գոյություն ունեն բազում աղբյուրներ և գրվել են տասնյակ աշխատություններ, այնուամենայնիվ, Անին Բյուզանդիայի կողմից գրավելու գործում նրա խաղացած դերը լիովին լուսաբանված չի կարելի համարել։

Պահլավունիները Բջնիում երկար չեն մնում։ Նրանք XI դ. կեսերից Բյուզանդիային հանձնած Բջնիի կալվածքների փոխարեն ընդարձակ հողեր են ստանում Հարավային Հայաստանում և տեղափոխվում այնտեղ։ Հենց այդ ժամանակներում՝ 1048 թվականին Գրիգոր Մագիստրոսը կայսրության կողմից նշանակվում է Միջագետքի կառավարիչ՝ Մագիստրոս (այստեղից էլ նրա Մագիստրոս մականունը) կամ կատապան։ Հետագայում բուն Հայաստանից նրա կառավարչության ներքո են անցնում նաև Վասպուրականն ու Տուրուբերանը։ Բյուզանդիան հույս ուներ նրա գլխավորությամբ հայերի միջոցով կանգնեցնել սելջուկ թուրքերի առաջխաղացումը, բայց արդեն ուշ էր. հայերը հազիվ թե թուրքերի հետ կենաց ու մահու կռվի բռնվեին հանուն մյուս հափշտակիչի, որը ընդամենը մի քանի տարի առաջ խլել էր իրենց երկիրը և կիրառում էր հայահալած քաղաքականություն։ Կայսրությանը հաջողվեց միայն Գրիգոր Մագիստրոսի զորքերի միջոցով վերջնականապես ճնշել Հայաստանում XI դարի կեսերին նոր ուժով բռնկված Թոնդրակեցիների շարժումը, որը սոցիալականի հետ, ըստ երևույթին, ուներ նաև ազատագրական բնույթ և ուղղված էր նվաճողական Բյուզանդիայի դեմ, ինչպիսին դրան նախորդած Պավլիկյանների շարժումն էր[38]։

Սակայն Գրիգոր Մագիստրոսի հակումներն այլ էին։ Նրան գրավում էին ոչ թե վարչական բարձր պաշտոնները կամ զորավարությունը, այլ գիտությունը և լուսավորական գործը։ Նա Միջագետքի ու Հարավային Հայաստանի կառավարիչ եղած ժամանակ էլ շարունակում է իր լուսավորական գործունեությունը. Մուշի ս. Կարապետ վանքում նրա համար կառուցել էին մի ապարանք և դպրոց, իսկ կյանքի վերջին տարիներին իրեն ամբողջովին նվիրում է գիտությանն ու լուսավորական գործին։ Գրիգոր Մագիստրոսը մահացել է 1058 թվականին՝ 68 կամ 69 տարեկան հասակում։ Իր իսկ վկայությամբ նա սիրված էր հորեղբոր՝ վահրամ Պահլավունու կողմից, որի դյուցազնական մահը (1047 թ.) մեծ սուգ է պատճառել նրան։

Մ. Աբեղյանը Գրիգոր Մագիստրոսին բնութագրում է որպես «հայտնի իշխան», «եկեղեցական գրականության» «շատ հմուտ», «կրոնասեր» ու եկեղեցապաշտպան, «բայց իր ժամանակի համեմատ՝ ազատամիտ ու լուսամիտ մի բազմագետ անձ»[39]։ Նա ամեն կերպ ջանացել է Հայրենի երկրում տարածել ու զարգացնել հին հունական գիտությունը, գրականությունը, ուսումնասիրել արտաքին գիտությունները։

Մագիստրոսի գիտական հետաքրքրությունների շրջանակները լայն էին ու համակողմանի։ Նա թողել է մի քանի ինքնուրույն և թարգմանական աշխատություններ, որոնք վերաբերում են գիտության ամենատարբեր բնագավառներին՝ փիլիսոփայությանը, բժշկական գիտությանը, կենդանաբանությանն ու բնագիտությանն առհասարակ, մանկավարժությանը, լեզվաբանությանը և այլն։ Նրա գիտական ժառանգության պսակը կազմում են «Թղթերը», որոնցով, Մ. Աբեղյանի արտահայտությամբ՝ «մեր գրականության մեջ մտել է մի նոր գրական տեսակ—նամականի ասածը»[40]։ Իրականում իր ժամանակի կրթված մարդկանց, եկեղեցական գործիչներին, իր աշակերտներին ուղղված այդ նամակները մեծամասամբ շոշափում են գիտության ամենատարբեր հարցեր, որոնց մասին հեղինակը լայն ծանոթագրություններ անելու հետ միասին արտահայտում է իր կարծիքը։ Նրա որոշ նամակներում շոշափվում են նաև լուսավորական ու կենցաղային հարցեր։ «Թղթեր»-

[38] Տե՛ս Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 177—196։

[39] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 35։

[40] Նույն տեղը, էջ 40։

ում ամենուրեք զգացվում է հեղինակի բարձր կրթվածությունը, ինքնատիպ մեկնություններն ու դատողությունները, իր գիտելիքների նկատմամբ մեծ վստահությունը։ Շատ դեպքերում այդ նամակները, ինչպես Կ. Կոստանյանն է նշում, հասցեատերերին ուղղված յուրակերպ դասախոսություններ են՝ այս կամ այն հարցի մասին բովանդակելով առողջ դատողություններով հագեցված հարուստ նյութեր։

Մագիստրոսի գիտական ժառանգության մեջ փիլիսոփայությունը գրավում է կենտրոնական տեղ։ Նրա փիլիսոփայական հայացքները, որ զարգացրել է իր նամակներում, ընդհանուր առմամբ առաջադիմական են և կարևոր դեր են խաղացել փիլիսոփայական մտքի զարգացման գործում։ Գրիգոր Մագիստրոսը իր փիլիսոփայական քննախոսություններում մեծ տեղ է տալիս և պաշտպանում հին հունական փիլիսոփայության առաջադիմական որոշ սկզբունքները, կարևոր տեղ տալով բանականության ու հասարակական կյանքում մարդու խաղացած դերին։

Հին հունական բնափիլիսոփաների նման՝ Մագիստրոսը ևս բավական հանդամանորեն զբաղվել է կենդանիների օրգանիզմների ուսումնասիրությամբ և բնագիտության այլ հարցերով։ Նա մեծ գիտակ էր բժշկական գիտության մեջ։ Մագիստրոսին հավասարապես հետաքրքրել են և՛ տեսական, և՛ գործնական բժշկությունը, և՛ հիվանդությունների առաջացման դրդապատճառները, իր «Թղթեր»-ում տարբեր առիթներով անդրադառնալով այդ խնդիրներին։

Բանասիրության բնագավառում Գրիգոր Մագիստրոսը առանձնապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հին հունական առասպելաբանության և քերականության նկատմամբ։ Նրա գրչին պատկանող քերականական գլխավոր և միակ աշխատությունը կոչվում է «Մեկնութիւն Քերականի»[41], որտեղ ընդհանրապես քերականության խնդիրների, էության ու ուսման մասին խոսելուց բացի, մի առանձին գլխում համառոտակի անդրադառնում է տարբեր ժողովուրդների գրերի գյուտին։ Նա այդ մասին գրում է. «Գտաւալ գոլր նախ՝ Փիւնիկեցիք. երկրորդ՝ Եգիպտացիք. երրորդ՝ Եբրայեցիք. չորրորդ՝ Արքիացիք, հինգերորդ՝ Քաղդէացիք. վեցերորդ՝ Հելլենացիք. եօթներորդ՝ Հայք և ապա այլք...»[42]։

[41] Դրա լրիվ վերնագիրն է. «Գրիգոր Մագիստրոսի և կինառնի (՞) որդւոյ Վասակայ Մարտիրոսի, մեկնութիւն Քերականի՝ զոր եդեալ է զայլոցն, և այլ եւս յաւելեալ յիւրոց իմաստիցն» (տե՛ս Գ. Ջարբհանալյան, Հայոց հին դպրութիւն, էջ 582)։

[42] Տե՛ս նույն տեղը։

Գրիգոր Մագիստրոսը թեպետ բանաստեղծ չէ, բայց ունի չափածո մի քանի գործեր, որոնցից հայտնի է «Հաղարտողեան» կոչված ոտանավորը (բաղկացած 1016 տողից), որ նա գրել է Կոստանդնուպոլսում, 1045 թվականին, չորս օրվա ընթացքում։ Այդ ոտանավորը գրված է արաբական հեղինակ Մանուչեհի խնդրանքով, որը որոշ չափով գիտակ էր նաև հայերենին։ Ոտանավորի բովանդակությունը վերցված է ս. Գրքից, իսկ վերջին մասի մեջ խոսվում է նաև Հայոց նկեղեցու պատմության վերաբերյալ՝ ըստ կրսած Գրիգոր Լուսավորիչից մինչև գրերի գյուտն ու մեր առաջին թարգմանիչները։ Մ. Աբեղյանի կարծիքով Մագիստրոսը քերթողական տաղանդ չուներ, բայց «վարժ ու հմուտ տաղաչափ էր»[43]։ Այնպես որ նրա և՛ «Թղթեր»-ում եղած որոշ չափածո քերթվածքները, և՛ «Հաղարտողեան»-ը առաջին հերթին ուշադրության արժանի է գերազանցապես տաղաչափական տեսակետից։

Մագիստրոսը, ինչպես ասվեց, նաև ուսուցչապետ էր և տարբեր ժամանակներում ավանդել է Անիում, Սանահնում և Հաղպատում, Կեչառիսում, Մուշի ս. Կարապետի դպրոցում և այլուր։ Նա լուսավորական գործիչ էր և խրախուսում էր կրթության ու գիտության տարածման գործի յուրաքանչյուր ձեռնարկում։ Փիլիսոփայությունից, երկրաչափությունից և գիտության այլ ճյուղերից կատարած նրա թարգմանությունները (հիմնականում հունաբերենից) մասամբ ծառայում էին նաև իբրև ձեռնարկներ Հայաստանի բարձր տիպի դպրոցների սանների համար[44]։

Գրիգոր Մագիստրոսի ժամանակակիցներից է Պետրոս I կաթողիկոսը, որը կրում էր Գետադարձ տիտղոսը։ Մագիստրոսի թղթերի մի զգալի մասը հասցեագրված է դավաճան կաթողիկոսին, որը սակայն մեր մատենագրության կողմից չի արգահատվել իր հայրենադավ արարքի համար։ Հայտնի չէ, թե երբ և որտեղ է ծնվել նա։ Վերջնականապես չի ճշտված, թե որտեղ է ստացել նա իր նախնական կրթությունը՝ Արգինայի կաթողիկոսարանում իր

[43] Նույն տեղը, էջ 583—586, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 48—49։

[44] Գրիգոր Մագիստրոսի կյանքի և գործունեության մասին տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 52—53, Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910 (Առաջաբանը Կ. Կոստանյանցի), Հ. Գրիգորիս Վ. Գալեմքյարյան, Յուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն, Վիեննա, 1892, էջ 12, Ջարբհանալյան Գարեգին. Հայոց հին դպրութիւն, էջ 570—573 և 582—586, Լեո, Անի, էջ 270, նույնը, Երկերի ժողովածու, հ. 2-րդ, Երևան, 1967, էջ 645—646, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 35—43, 48—49, Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, էջ 16—18, 20—25, 26—27, 29, 30, 32—35, 39, Հենրի Գարիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. II, Երևան, 1958, էջ 37—41 և այլն։

եղբոր՝ Խաչիկ Ա-ի հակողության ներքո[45], ինչպես գրում է Կ. Կոստանյանցը, թե՞ Տրապիզոնում[46]։ Աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Պետրոսը Բյուզանդիայի կողմից Անիի գրավումից հետո, երբ գտնվում էր տարաշրջության մեջ, հորինել է զանազան շարականներ, որոնք հասել են մինչև մեր օրերը։ Մատենագրական որոշ վկայություններ և ավանդություններ կան այն մասին, որ Պետրոս կաթողիկոսը շարականներից ու աստվածաբանական երկերից (որոնք մեզ չեն հասել) բացի հայտնի է եղել նաև արտաքին գիտությունների և տաղաչափության մեջ։ Նրա շարականներից երևում է, որ Պետրոսն օժտված է եղել բանաստեղծական-քերթողական արվեստով։ Ավանդությունը նրան է վերագրում նաև այլ քերթվածքներ, որոնք սակայն մեզ չեն հասել և որոնց գոյության վրա անհնար է պնդել։ Իսկ արտաքին գիտությունների ու աստվածաբանության բնագավառում նրա ունեցած հակումների ու գիտելիքների վերաբերյալ մենք գրեթե բացառապես գաղափար ենք կազմում Գրիգոր Մագիստրոսի գրած նամակներից։ Նշելի է նաև այն, որ Պետրոս կաթողիկոսին վերագրվող ոչ բոլոր շարականներն են նրա հորինածը. դրանց մի մասը, ըստ մասնագետների, պատկանում է նաև այլ հեղինակների, որոնց թվում են նաև նույն ժամանակներում ապրած Սարգիս Սևանեցին և Հակոբ Սանահնեցին[47]։ Պետրոս կաթողիկոսը, որ Գետադարձ մականունը ստացել էր Տրապիզոնում, բյուզանդական Վասիլ կայսրի ներկայությամբ իր գետի ընթացքը նախ կանգնեցնելու, ապա հակառակ ուղղությամբ հոսեցնելու շնորհիվ, մահացել է տարագրության մեջ, Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում 1058 թվականին[48]։

Բագրատունիների ժամանակաշրջանի Անիի հետ է կապված նաև Գրիգոր Մագիստրոսի որդու՝ Վահրամի գործունեությունը։ Նրա ծննդյան թիվն ու տեղը մեզ հայտնի չէ։ Իր որդուն ուղղած Գրիգոր Մագիստրոսի մի ոտանավորից միայն հայտնի է դառնում, որ նա ձգտել է պատանի Վահրամի մեջ սեր առաջացնել դեպի գիտությունը, պոեզիան, և նրան տվել է համապատասխան կրթություն։ Հոր մահից հետո Վահրամը նշանակվում է Միջագետքի և Հարավային Հայաստանի կուսակալ։ Սակայն վարչական

[45] Կոստանյանց Կ., Տէր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 6։

[46] Գ. Զարպհանալյան, Հայկական հին դպրութիւն, էջ 87։

[47] Պետրոս 1-ին Գետադարձ կաթողիկոսի գրական գործունեության մասին տե՛ս Կոստանյանց Կ., Պետրոս Ա Գետադարձ, էջ 6 և 45—48, Զարբհանալյան Գարեգին, Հայկական հին դպրութիւն, էջ 587։

[48] Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, կազմեց Հ. Հակովբոս, Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 91—92։

գործը անհարիր էր նրա հակումներին և թողնելով այդ բարձր պաշտոնը ու բաժանվելով կնոջից, դառնում է կրոնավոր՝ ստանալով Գրիգոր անունը։ Շուտով (1065 թ.) հակառակ իր կամքի Գրիգորին ընտրում են կաթողիկոս։

Գրիգորից ինքնուրույն գործեր ու քերթվածքներ չեն պահպանվել։ Նա հիմնականում զբաղվել է հունարենից ու ասորերենից զանազան գործեր հայերեն թարգմանելով կամ թարգմանել տալով։ Թարգմանության ենթակա աշխատանքները նա ձեռք էր բերել անձնապես այցելելով Եգիպտոս, Պաղեստին և Կ. Պոլիս։ Նրա թարգմանած կամ թարգմանել տված գործերը հիմնականում վկայաբանություններ էին, դրա համար էլ կրել է Գրիգոր Վկայասեր անունը։ Հայսմավուրքի հիշատակարաններից մեկում գրիչ Հակոբ երեցը Մագիստրոսի այդ գրասեր որդու մասին գրում է. «Եւ խնդիր արարեալ (Խաչիկ կաթողիկոսից հետո—Թ. Հ.) գտին յազգէ Լուսաւորչին զՎահրամն... որդի Գրիգորու Պահլաւունոյ մագիստրոսի, որդւոյ Վասակայ սպարապետին Հայոց։... Զնա առեալ հաւանութեամբ ամենեցուն եդին յաթոռն հայրապետական կաթողիկոս Հայոց։ Եւ կոչեցին զՎահրամն յանուն Լուսաւորչին Գրիգորիոս. որ ըստ նմանութեան նախնոյն Գրիգորի, պայծառացոյց զեկեղեցին Հայոց ազգիս. թարգմանութեամբ Յունաց եւ յԱսորւոց ճառս բազումս ի հայ լեզուս. զարս արքոցն եւ պատմութիւն վկայիցն. մինչև զի վկայասէր անուանեցաւ...»[49]։

Վկայաբանություններից բացի Գրիգոր վկայասերը թարգմանել է (կամ թարգմանել է տվել) նաև ճառեր ու մեկնություն.

«...Զգիրս բազումս թարգմանեալ,

Առ ի Յունաց և յԱսորւոց

Ճառս սրբոց վերաբերեալ»,—գրում է Ներսես Շնորհալին[50]։ Մ. Աբեղյանը նշում է, որ թեպետ Վահրամը բանաստեղծ չի դարձել, ինչպես ցանկանում էր հայրը, բայց իր եռանդուն գործունեությամբ «ջանացել է լրացնել մեր վկայաբանական թարգմանական գրականության թերին»[51]։

Հովհաննես-Սմբատ թագավորի և Գրիգոր Մագիստրոսի օրոք Անիում իր գիտությամբ հայտնի էր Սարգիս Վարդապետը, որին կոչում են նաև Սևանեցի, հիմնականում Սևանա վանքում լինելու համար։ Այդ գիտնական վարդապետը Մագիստրոսի բարեկամներից էր, որին նա իր նամակներից մեկում բնութագրել է իբրև

[49] Նույն տեղը, էջ 92։

[50] Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 51։

[51] Նույն տեղը։

«Հզօր Հռեաոր և աստուածային տէլետիս (=«կատարելություն», որ գործածվել է «գլուխ իմաստասիրաց կամ հռետորաց» իմաստով)[52]» ավելացնելով, որ ինքը «միշտ կարոտեալ է»... նրա «բանի... և գրի» «քանդի հզօր» է «ի պուետիկոսական մատենագրութեանն»[53]: Այս այն նույն Սարգիս վարդապետն է, որը, ինչպես ասվեց, 1041 թվականին Անիի արքայական գրադարանում գտնել էր անթնամ ընկած մի ձեռագիր և «ազատել բանտից»: Ցավով պիտի ասել սակայն, որ նրա աշխատությունները (եթե այդպիսիք իրոք եղել են) չեն պահպանվել:

Վարդան Անեցի անունով մի հեղինակ, որը, Բ. Սարգսյանի ենթադրությամբ ապրել է X կամ XI դարում, թողել է կրոնական բովանդակությամբ մի փոքրիկ քերթվածք՝ բաղկացած ընդամենը մի քանի էջից, որի տների գլխատառերը կազմում են հետևյալ խորագիրը. «Անեցի Վարդանա վարդապետի երգելիկ», իսկ բուն բնագիրը սկսվում է հետևյալ բառերով. «Աւ կարդ աստուածութեանդ և լծակիցդ քառադիմանդ... (և այլն)»: Այդ անեցի վարդապետի տոհմագրության, ապրած ժամանակի, ծննդյան տեղի, գործունեության մասին ոչինչ չի պահպանվել: Անհետ կկորչեր նաև նրա անունը, «եթե նա,— Բ. Սարգսյանի արտահայտությամբ,—ինքն նախահոգակ իմաստութեամբ մտածած չըլլար դրոշմելու... իւրաքանչիւր տան գլխատառերը», որոնք կազմում են նշված վերնագիրը[54]: Բ. Սարգսյանը նշում է, որ Վարդան Անեցու քերթվածքի ոճը «խորհրդապաշտ» է և լեզուն «խրթին», Նարեկացու ապրած դարին համապատասխանող: Հենց միայն այդ հանգամանքն է նկատի ունեցել Բ. Սարգսյանը, որ Վարդան Անեցու ապրած ժամանակաշրջանը ենթադրաբար համարել է X կամ XI դարը, սակայն առանց իր այդ կարծիքը վերջնական համարելու[55]:

7. ԱՆԻԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Անիի թագավորությունն իր հզորության գագաթնակետին է հասնում Գագիկ I-ի օրոք (989—1020): Նրա մահից հետո անմի-

[52] Նույն տեղը, էջ 34:

[53] *Տե՛ս* Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը*, էջ 57, Գառ. Ջարբհանալյան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԴ)*, էջ 455, Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Դ, էջ 34:

[54] Հ. Բ. Սարգ., *Անեցի Վարդանա վարդապետի երգելիկ վասն կառաց աստուածութեան ներբող*, «Բազմավեպ», 1919, № 6, էջ 164:

[55] Նույն տեղը:

ջապես սկսվում է քաղաքական անկման, ներքին ճգնաժամությունների և արտաքին թշնամիների ոտնձգությունների շրջան: Ճիշտ է, այդ միջոցին, մինչև Բյուզանդիայի կողմից գրավվելը, այդ փոքրիկ թագավորությունը երբեմն ունեցել է կարճատև խաղաղության տարիներ, բայց դրանք անցողիկ էին: Այնպես որ 1020—1045 թվականները Անի քաղաքի և համանուն թագավորության համար լարված տարիներ էին, չափազանց աննպաստ քաղաքական կյանքի և ներքին անկայուն ու խառնակ կացության մի ժամանակաշրջան, երբ աստիճանաբար կորցնելով իր քաղաքական կշիռը, այդ փոքրիկ թագավորությունը կուլ գնաց աներևույթ դեռևս հզոր թվացող՝ Բյուզանդական կայսրությանը:

Անիի թագավորության մեջ ներքին անհամաձայնությունները, որոնք երբեմն վերածվում էին ռազմական ընդհարումների, ըստ երևույթին Գագիկ I-ի մահից անմիջապես հետո: Բանն այն էր, որ Բագրատունի այդ թագավորի երկու որդիներից յուրաքանչյուրն ինքն էր ձգտում տիրանալ գահին: Ժառանգական կարգի համաձայն գահաժառանգը Հովհաննեսն էր, որ կոչվում էր նաև Սմբատ (նրան սովորաբար կոչել են Հովհաննես-Սմբատ), ավագ որդին, բայց գահին տիրանալու մեծ հավակնություններ ուներ նաև կրտսերը՝ Աշոտը: Այս վերջինը օժտված էր զինվորականի քաջությամբ և, հիմնականում ստանալով բյուզանդական կայսրի ու Վասպուրականի Սևնեքերիմ թագավորի օգնությունը, կռիվ է սկսում արդեն թագակիր ավագ եղբոր դեմ: Պատմագրական աղբյուրների վկայություններից երևում է, որ այդ գահակալական կռվին երկու կողմերից մասնակցում էին տասնյակ հազարների հասնող մարտիկներ: Տեղի ունեցած ճակատամարտում Հովհաննես-Սմբատի զորքը պարտություն է կրում և նրա մնացորդները փախչում են Անի: Դժվար է ասել, թե ինչով կավարտվեր եղբայրասպան պատերազմը, եթե Վրաց ու Աբխազաց թագավոր Գիորգիի, Հայոց Պետրոս կաթողիկոսի, իշխանների և Կարսի Աբաս թագավորի եռանդուն միջամտությունը չլիներ: Դրանց հորդորանքով երկու եղբայրների միջև 1022 թ. կնքվում է հաշտություն, որի համաձայն Հովհաննես-Սմբատը թագավորելու էր Անի մայրաքաղաքի և դրա շրջակայքի գավառների վրա, իսկ Աշոտը՝ ծայրաշրջաններում, հատկապես՝ Վրաստանի և Պարսկաստանի սահմանամերձ գավառներում, իսկ ավագ եղբոր մահից հետո պետք է տիրեր նաև նրա բաժնին՝ դառնալով Հայոց թագավոր[1]:

[1] *Տե՛ս* Առիստակես Լաստիվերցի, *Պատմութիւն*, էջ 26—27, Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 10, Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 2, էջ 647—649, Ս. Պ. Պողոսյան, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. II, էջ 59 և այլուր:

Այդ հաշտության դրական կողմը միայն ժամանակավորապես հաստատված խաղաղությունն էր, որը, սակայն, ձեռք է բերվել Անիի թագավորության մասնատման գնով և այդ ժամանակից ի վեր կենտրոնական թագավորության տարածքը սահմանափակվում էր Շիրակով և դրա մոտակայքի որոշ գավառներով: Մեր կարծիքով դեպքերի հետագա ընթացքից երևում է, որ խաղաղություն հաստատելու պատրվակի տակ կատարված այդ մասնատման մեջ Գիորգի թագավորից բացի խառն էր նաև Բյուզանդիայի մատը: Միամտություն կլիներ կարծել, որ Անիի «կտակումը» կատարվել է միանգամից, Վասիլ II-ի վրացական արշավանքի պահին, առանց դրան նախորդած դեպքերի ու նենգությունների: Իսկ Վրաց և Աբխազաց Գիորգի թագավորը պարզապես ձգտում էր օգուտ քաղել ստեղծված խառը վիճակից: Այսպես, երբ Հովհաննես-Սմբատի ու Աշոտի միջև սահմանային նոր վեճ է առաջանում և վերջինիս կողմնակից իշխաններից մեկը այդ առիթով գանգատվում է Գիորգիին, ապա նա թագավոր եղբայրների միջև ծագած անհամաձայնությունը վերացնելու համար միջամտելու փոխարեն զորք է ուղարկում Հովհաննես-Սմբատի դեմ և նույնիսկ դրավում երեք բերդ[2]: Դրանով չեն ավարտվում երկու եղբայրների միջև եղած հակասությունները: Աշոտը չի հաշտվում ստեղծված վիճակի հետ: Նա յուրաքանչյուր առիթ օգտագործում է մեծ եղբորը շարքից հանելու և ամբողջ թագավորությանը տեր դառնալու համար, նույնիսկ չխորշելով ամենաստոր ու նենգ միջոցներին դիմելուց, որոնցից մեկի մասին ավանդության ձևով պատմում է Մխիթար Անեցին[3]:

Երկրի մասնատումը ֆեոդալական մանր թագավորությունների, որոնց թիվն արդեն հասնում էր 6-ի, չհաշված արաբական կիսանկախ իշխանությունները, թուրքական ցեղերի հարձակման ուրվագծվող վտանգը, ներքին երկպառակությունն ու Անդրկովկասի երկրների նկատմամբ X դարի երկրորդ կեսից Բյուզանդիայի վարած բացահայտ ագրեսիվ քաղաքականությունը, որ շաղախված էր ստորություններով ու նենգություններով, չէին կարող իրենց անդրադարձումը չունենալ երկրի ներքին կյանքի, հատկապես՝ հասարակական խմբավորումների ու սոցիալական հարաբերությունների վրա: Մեզ թվում է, որ, օրինակ՝ XI դարի առաջին կեսի Թոնդրակյան շարժման ուժեղացումը, դասակարգային

[2] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 10: Համմ. Ված, *Երկերի ժողովածու*, հ. 2-րդ, էջ 648:

[3] **Մխիթար Անեցի**, *Պատմութիւն*, ս. Պետերբուրգ, 1879, էջ 52:

հարաբերությունների սրման հետ միասին, մի կողմով ուղղված էր նաև բյուզանդական ագրեսիայի դեմ՝ հիմնականում ֆեոդալական կարգի դեմ ուղղված լինելով հանդերձ ունենալով նաև ազատագրական պայքարի երանգավորում: Այլապես ինչո՞վ կարելի է բացատրել XI դ. կեսին Գրիգոր Մագիստրոսի միջոցով Բյուզանդական կայսրության ձեռնարկած այնքան դաժան ու եռանդագին արշավանքը՝ Թոնդրակեցիներին արյան մեջ խեղդելու համար: Չէ՞ որ այդ շարժումը ուղղված էր նաև հայոց պաշտոնական եկեղեցու դեմ, որի նկատմամբ այնքան բշնամական էր տրամադրված կայսրության քաղկեդոնական պաշտոնական եկեղեցին: Սակայն մի կողմ թողնելով մեզ անմիջապես չվերաբերող այդ հարցը, այժմ տեսնենք բյուզանդական գավթողական քաղաքականությունն ինչպես էր աղդում Անիի հասարակական խմբավորումների վրա: Այդ հարցն արդեն դասագրքային ճանաչում է ստացել. երկրի անկախությանը սպառնացող բյուզանդական ագրեսիայի հետևանքով մայրաքաղաք Անիում որոշակիորեն ձևավորվում է երկու խումբ: Խմբերից մեկը հունասիրական-բյուզանդասիրականն էր, որի պարագլուխը սկզբնական շրջանում միայն Վեստ Սարգիս իշխանն էր, ինչ-ինչ եղանակներով Բագրատունիների արքունիքում խնամակալի բարձր պաշտոնը ձեռք բերած և դրա օգնությամբ գահակալության ձգտող մի անձ և որն իր նպատակին հասնելու համար միջոցների մեջ խորություն չէր դնում: Վեստ Սարգիսը, որին որոշ ուսումնասիրողներ, մեզ անհայտ պատճառներով, համարում են սյունեցի (պարզապես միայն հիմք ընդունելով որոշ աղբյուրներում նրան հայկազուն կոչելը, որպիսին կոչված են նաև Պահլավունի ու այլ իշխանական տների ներկայացուցիչներ, և չի կարող այդպիսի ենթադրության համար հիմք լինել), Արշակ Ալպոյաճյանի արտահայտությամբ՝ «Բիւզանդական ոսկիէն և նենգութենէն շլացած Հայաստանի մէջ ստեղծեց անախորժ դրութիւն մը և կուսակցական պայքարնե...»[4]: Հունասերների մյուս հայտնի պարագլուխներից էին ժամանակի Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Գրիգոր Մագիստրոսը: Իսկ մյուս խմբի՝ հայրենասերների գլուխ կանգնած էր Անիի թագավորության նշանավոր սպարապետ Վահրամ Պահլավունին, Գրիգոր Մագիստրոսի հորեղբայրը: Երկու խմբերի միջև պայքարը սրվեց հատկապես Անին զավթելու՝ Բյուզանդիայի ձեռնարկած արշավանքների տարիներին: Այդ երկու խմբերն իրարից տրամագծորեն

[4] Արշակ Ալպոյաճյան, *Պատմութիւն հայ գաղթականութեան*, հ. Ա, Գահիրէ, 1941, էջ 243—244:

տարբերվում էին ոչ միայն նրանով, որ հունասերները, հակառակ քաղաքական անկախության անկաշառ կողմնակիցների, ամեննին դեմ չէին երկիրը Բյուզադիային ենթարկելու մտադրությանը, այլ նաև գործելակերպով. հունասերներն իբրև կանոն ժողովրդից խնամքով թաքցնում էին իրենց հերձվողական, օտարամոլ, հայրենիքը վաճառքի հանելու զազրելի ու նենգ քայլերը։ Թվում է, որ հենց այդ նույն նպատակով է հյուսված Պետրոս I կաթողիկոսի մասին այն հրաշապատումը, ըստ որի նա Վասիլ II-ի ներկայությամբ, ջրօրհնեքի օրը, Հայոց մեռոնի օգնությամբ իբր կանգնեցրել կամ, նույնիսկ, հակառակ ուղղությամբ է շրջել Տրապիզոնի մոտ Սև ծովը թափվող գետերից մեկը[5], որը ոմանք անգամ նույնացնում են ջրառատ ու սրընթաց Ճորոխի հետ։ Այդ հրաշապատումն ստեղծված է նրա ստոր արարքը՝ Հովհաննես-Սմբատի անունից Անին Բյուզանդիային կտակելը քողարկելու համար, թեպետև առերևույթ այն Հայոց եկեղեցու «հրաշագործությանն» է նվիրված։ Թվում է, թե նույն նպատակով է ստեղծված նաև վարդապետ Հովհաննես Կոզեռնի տեսիլը։

Կարծես ժամանակը և դեպքերը գործում էին օտարամոլների։ Բյուզանդական կայսրությունը, գրավելով Հայաստանի զանազան մասերը՝ աստիճանաբար մոտենում էր Անիին։ Արևմտյան Հայաստանի մի մասը նա «ժառանգություն» էր ստացել դեռևս Հռոմեական միացյալ կայսրությունից և արաբական հարձակումներից հետո դրա մեծագույն մասը, այնուամենայնիվ մշտապես մնացել էր կայսրության իշխանության տակ։ Բյուզանդական կայսրության X դարի երկրորդ կեսից վարած զավթողական քաղաքականության առաջին զոհը Տարոնի ընդարձակ տարածքն էր, որը նրա կողմից գրավվեց 966 թվականին, երկրորդը՝ Տայքի ընդարձակ կյուրապաղատությունն էր, որի կազմում Տայքից բացի մտնում էին նաև շրջակայքի մի քանի գավառներ։ Թեպետ, ընդհանուր առմամբ, Տայքի կյուրապաղատությունը ենթակա էր Բյուզանդիայի խիստ ազդեցությանը, բայց այդ ամեննևին չխանգարեց՝ այն վերջնականապես գրավել ու կցել կայսրությանը որպես բաղկացուցիչ մաս։ Անիի նման, Տայքի կյուրապաղատությունը նույնպես զավթվում է «համաձայն կտակի»։ Նախ, անժառանգ կյուրապաղատ Դավիթին հարկադրում են իր իշխանությունը կտակել կայսրությանը, իսկ նրա մահից հետո իբրև «ժառանգություն» 1000 կամ 1001 թվականին այն կցում կայսրությանը։ «Ցայսմ ժամանակի վախճանեցաւ կիւրապաղատն Դաւիթ, անժառանգ գոլով. և տայ անդարձապրով զհայրենիսն իւր ի վասիլն, զԻւխթիսն և զնամրուան, և զքաղաքն Ապահունեաց՝ զմանծկերտ, և զամենայն ինչս»,— հաղորդում է Վարդան Վարդապետը[6]։

Դրանից հետո, Լեոի արտահայտությամբ «հերթը գալիս է» «Բյուզանդական արևելյան սահմանի վրա շղթա» կազմած «մյուս անկախություններին», որոնց զավթումը սկսվեց մի փոքր ուշ, նույն Վասիլ II-ի կողմից բուլղարական պատերազմներն իր համար հաղթականորեն ավարտելուց հետո, երբ նա արդեն ստացել էր Բուլղարասպան մականունը։ 1021 թվականին մի բավական մեծ բանակի գլուխ անցած, Վասիլ Բուլղարասպան կայսրը շտապում է արևելք՝ Աբխազաց և Վրաց թագավորության ապստամբությունը ճնշելու առիթով, բայց, դատելով դեպքերի ընթացքից, հետապնդելով ավելի լայն նպատակներ։ Այսպես, Վրաց թագավոր Գիորգիի ապստամբությունը ճնշելուց հետո նա վերադառնում է Տրապիզոն 1021—1022 թթ. ձմեռն այստեղ անցկացնելու համար։ Հենց Տրապիզոնում ձմեռելու ժամանակ էլ «լուծվում է» Վասպուրականի թագավորության հարցը, որի վերջին թագավոր Սենեքերիմը, բյուզանդական ճնշման հետ միասին, հավանաբար նաև թուրքական արևելյան ցեղերի արդեն սկսվող արշավանքներից նեղված, կայսեր մոտ բանակցություններ ուղարկած իր Դավիթ թագաժառանգի միջոցով Վասպուրականը «ժառանգում է» Բյուզանդիային, փոխարենն ստանալով Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքը շրջակայքի հետ միասին. «Քանզի Դաւիթ որ Սենեքերիմ կոչիւր[7], որ նեղեալ ի Պարսից՝ տայ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն Վասպուրականի յինքնակալն Վասիլ, և առնու փոխարէն զքաղաքն Սեբաստիա և որ շուրջ զնովաւ գաւառք»,—վկայում է ժամանակակից պատմագիրը[8]։ Մեր պատմագրությունից հայտնի է, որ Վասպուրականի թագավորությունը գրավում էր ընդարձակ տարածություն և ուներ մի քանի հազար գյուղեր ու գյուղակներ, տասնյակ քաղաքներ, բերդեր ու վանքեր, միլիոնից ավելի բնակչություն և տասնյակ հազարավոր զինվորներից բաղկացած բանակ։ Վասպուրականի միացումը Բյուզանդիային ավելի սպառնալից դրություն ստեղծեց Շիրակի թագավորության և նրա մայրա-

[5] Արիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն*, էջ 16—17։ Համմ. **Н. Я. Марр**, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, СПб, 1895, էջ 19—26։

[6] Վարդան Վարդապետ, *Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 93։ Տե՛ս նաև Ալ. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 633։

[7] Սենեքերիմին նաև Դավիթ է կոչում միայն Արիստակես Լաստիվերացին։ Նրա ավագ որդու անունը նույնպես Դավիթ էր։

[8] Արիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն*, էջ 20։

քաղաքի համար: Այսպիսով XI դ. 20-ական թվականների սկզբներից փաստորեն բյուզանդական սպառնալիքներին դամարվում էր արևելյան թուրքական ցեղերի արշավանքի վտանգը, որի մասին («պարսիկներ» անվան տակ) ակնարկված է մեջբերված վկայությունում: Քրդական դելմուք կոչված ցեղը 1021 թ. արդեն հարձակում է գործում Հայաստանի վրա: Ատրպատականի կողմից մտնելով՝ դելմուք հրոսակները հասնում են Դվին ու Պահլավունիների աթոռանիստ Բջնի և ավեր ու ասպատակ սփռում Հայաստանի կենտրոնական գավառներում[9]: Ճիշտ է, Վասակ Պահլավունին ջարդում և երկրից դուրս է շպրտում թուրքական ավարառու ոհմակներին, բայց արևելյան այդ նոր վտանգը գնալով ավելի որոշակի կերպարանք է ստանում՝ 40-ական թվականների վերջերին, դառնալով սպառնալից ամբողջ Անդրկովկասի, իսկ շատ չանցած նաև Բյուզանդական աշխարհակալության համար:

Անիի գլխին ամպեր էին կուտակվում: Վրաց թագավոր Գիորգիի ապստամբության ճնշումը, որի հետ Հովհաննես-Սմբատն ուներ դաշնակցություն և հավանաբար, օգնել էր նրան, Վասպուրականի ու Տայքի կցումը Բյուզանդիային, վերջինիս խարդախ ու ննջող քաղաքականությունը, թուրքական ցեղերի արշավանքների աճող վտանգը, թագավորության մասնատումը, հունասերների և լիակատար անկախության կողմնակիցների միջև աստիճանաբար խորացող հակասությունները՝ այս բոլորն Անիի թագավորությունը դնում էին ծանր կացության մեջ:

Ժամանակի Հովհաննես-Սմբատը, որին մեր պատմագիրները որակում են որպես գրասեր ու իմաստուն, բայց միաժամանակ «ծանրաշարժ», «թանձրամարմին», «վախկոտ» և ռազմական գործի համար ոչ պիտանի, ելքը տեսնում է Անին Բյուզանդիային կտակելու մեջ:

Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ Վասիլ II-ը 1021 թվականին դուրս գալով արշավանքի, Հովհաննես-Սմբատից պահանջում է իրեն տալ Անի ու Կարս քաղաքները. «Ի թուականութեանս Հայոց ՆՀ ելանէր Վասիլն յարեւելս անթիւ զօրօք և խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի և զԿարս»[10]: Վրաստանում բռնկված ապստամբությունը ճնշելուց և Տրապիզոն վերադառնալուց հետո, Հովհաննես-Սմբատը 1021 թ. դեկտեմբերի վերջին (ըստ Մ. Ուռհայեցու 1022 թ. հունվարի սկզբներին, ջրօրհնենքի օրը), Պետրոս կաթողիկոսի գլխավորությամբ մի մեծ շքախումբ է ուղարկում

[9] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 11—13:

[10] Նույն տեղը, էջ 49:

նրա մոտ, հանձնարարելով իր անունից բանակցություններ վարել կայսեր հետ:

Հայ պատմագրության մեջ ընդունված կարծիքի համաձայն, Պետրոս կաթողիկոսը կամ իր հետ կայսրին է տարել Հովհաննես-Սմբատի կտակը՝ Անին նրան ժառանգելու մասին, կամ, համենայն դեպս, Հայոց թագավորը տվել է բանավոր համաձայնություն իր մահից հետո Անին Վասիլին ժառանգելու և հանձնարարել է Հայոց հայրապետին՝ իր անունից գրավոր կտակ տալու նրան:

Թվում է, թե մեր պատմագիրների վկայությունները երբեք հիմք չեն տալիս կտակի հեղինակը համարել Հայոց թագավորին: Ահա թե ինչ է գրում ժամանակակից պատմագիրը՝ Արիստակես Լաստիվերտցին: Նա Վասիլի ներկայությամբ Պետրոս կաթողիկոսի «հրաշագործության» և նրանից մեծ «պատիվ» ստանալու վերաբերյալ, ժամանակին տարածված կիսաավանդական զրույցը շարադրելուց հետո, շարունակում է. «Բայց անդ եղև Հայոց կորըստեան դիր և նամակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր Հայրապետին, եթէ գրէ գիր և տո՛ւր կտակ թագաւորին, զի չետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն. քանզի իւր ոչ զոյր որդի թագակալ թագաւորութեանն. վասն զի որդի նորա վախճանեցաւ...»[11]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ մի խոսք չի ասվում անձամբ Հովհաննես-Սմբատի «գրած կտակի» մասին, ընդհակառակը, պատմիչը վկայում է, որ «Անդ (այսինքն՝ Տրապիզոնում—Ռ. Հ.) եղև Հայոց կորստեան դիր և նամակ», միաժամանակ նշելով, որ Հայոց թագավորը կաթողիկոսին պատվիրել էր. «գրէ գիր և տո՛ւր կտակ թագաւորին, զի չետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»[12]:

Մատթեոս Ուռհայեցին այդ ստոր գործարքի մասին հաղորդում է շատ համառոտ և անորոշ, եթե բացառելու լինենք Պետրոս կաթողիկոսի «հրաշագործության» բավական մանրամասն նկարագրությունը, որը, նա, ի միջի այլոց, կատարում է այլ առիթով: Այսպես, Վասիլի վերը նշված արշավանքի և Անին ու Կարսն իրեն հանձնելու առաջարկի մասին հիշատակելուց հետո, ավելացնում է միայն հետևյալ համառոտ վկայությունը. «Եւ Յովհաննէս որդին Գագկայ խորհեցաւ տալ (Անին—Ռ. Հ.) վասն թուլութեան սրտին իւրոյ»[13]: Իսկ թե հատկապես ե՞րբ, ո՞ւմ միջոցով և

[11] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 17:

[12] Նույն տեղը:

[13] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 49:

ինչպե՞ս կնքվեց այդ գործարքը, պատմագիրն իր հիշատակություններով այդ հարցին որոշակի պատասխան չի տալիս։

Անիի կտակման փաստը ժամանակագրական առումով և շարժառիթների տեսակետից մի փոքր այլ ձևով է ներկայացնում Վարդան Վարդապետը։ Այսպես, օրինակ, Անիի կտակման հիմնական պատճառը նա համարում էր Վրաց թագավորի պատճառած նեղությունները, որ միանգամայն անընդունելի է։ Պատմիչը գրում է. «Այլ և նեղէր ղՅովհաննէս՝ արքայն Վրաց. վասն որոյ պատիրարգին պատուիրէ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոց ի Հոռոմս, որպէս և կիւրապաղատն, եթէ պահէ զնա ի նեղչաց իւրոց. զոր խնդութեամբ լուաւ Վասիլն»[14]։ Ստացվում է այնպես, որ Անիի կտակումը նախորդել է Վրաց ապստամբության ճնշմանը։ Իհարկե, Հովհաննես-Սմբատն այնքան միամիտ չէր, որ չսպասեր ապստամբության վախճանին և շտապեր իրենց տոհմի թագավորությունն օր առաջ հանձնել Բյուզանդիային։

Խնդրո առարկայի վերաբերյալ պատմագիրների այդ վկայություններից էապես չեն տարբերվում նաև ձեռագրերի հիշատակարաններում պահպանված տեղեկությունները։ Ընդ որում կան այնպիսի ձեռագիր հիշատակարաններ, որոնք ամբողջապես ընդօրինակված են պատմագիրների երկերի վկայություններից։ Այդ կարգի է, օրինակ, Արմաշի վանքի ձեռագրերից մեկը՝ XVII դ. մի ժողովածուի հիշատակարանը, որը վերաբերում է Հովհաննես Կոզեռն վարդապետի տեսիլքին։ Այնտեղ նախ, ասված է, որ Վասիլ կայսրը 1021 թվականին մեծ զորքով արշավում է Հայաստան և Հովհաննես-Սմբատից պահանջում իրեն հանձնել Անին, որը և «յաղագս տկարութեան մարմնոյ իւրոյ խոստացաւ տալ զԱնի զկնի մահուան իւրոյ», ապա պատմում Վրաց Դիորգի թագավորի ապստամբության ճնշման, իսկ վերջում բավական մանրամասնությամբ նկարագրում Պետրոս I Գետադարձ կաթողիկոսի գլխավորած դեսպանության մասին[15]։ Որոշ պատմագիրների անուղղակի ակնարկների նման, այս հիշատակարանից նույնպես այն տպավորությունն է ստացվում, որ իբր Հովհաննես-Սմբատը խոստացել է իր մահից հետո Անին Բյուզանդիային տալ Վասիլ II-ի պատժիչ արշավանքի սկզբում՝ մինչև վերջինիս կողմից Վրաց ապստամբության ճնշումը։

Ի մի բերելով այս բոլոր վկայությունները, կարելի է լիովին ընդունելի համարել այն տեսակետը, ըստ որի Անին Բյուզանդիային կտակելու հարցը կարող էր առաջ գալ միայն Վրաց ապստամբության ճնշումից հետո, երբ Բագրատունիները զրկվել էին դաշնակիցից և ուղղակի ենթակա էին կայսրության հարձակման վտանգին։

Այդ վկայություններում նաև խճճված է «կտակ»-ի հեղինակի հարցը։ Եթե տառացիորեն հետևելու լինենք պատմագիրների ու գրիչների հաղորդումներին, ապա աներկբայորեն պետք է եզրակացնենք, որ Անիի կտակման հարցը վերջնականապես լուծել է ինքը՝ Հայոց թագավոր Հովհաննես-Սմբատը և Պետրոս կաթողիկոսը Տրապիզոնում կատարել է սոսկ արքայի կամքը՝ Անիի ժառանգման մասին նրա անունից «գիր» կամ «կտակ» գրելով ու ներկայացնելով Վասիլ II-ին։ Մեզ թվում է, որ այդ չարաբաստիկ կտակը, օգտվելով Հովհաննես-Սմբատի «թուլակամությունից», ստեղծել է ինքը՝ կաթողիկոսը, որի հոգևոր իշխանությունը գուցե և դրանից կշահեր, իսկ ինքը, այդ փողամոլն ու ընչաքաղցը, ինչպես նույն աղբյուրներն են հաղորդում, անձնապես ընդարձակ կալվածքներ և մեծ պարգևներ էր ստացել Վասիլ II-ից։ Կարծում ենք, որ Հայոց կաթողիկոսի այդ զաղրելի արարքը թաքցնելու հիմքի վրա են հյուսվել նրան վերագրվող «հրաշագործությունները, մինչդեռ նա իրականում սովորական ֆեոդալ էր, հարստություն, փառք և իշխանություն ձեռք բերելու համար պատրաստ իր հայրենիքը օտարին վաճառելու։ Եթե այդպիսի մի զաղրելի «կտակ»-ը ստեղծվել է Հովհաննես-Սմբատի կամքով, ապա իրավացիորեն հարց է առաջանում, թե ինչո՞ւ նա իր ձեռքով չի գրել այն, «գրասեր» ու «իմաստուն» թագավորը մի՞թե չէր կարող այդ անել, կամ ինչո՞ւ աղգադավ գործարքից հետո կաթողիկոսն անմիջապես չվերադարձավ Անի, այլ ավելի քան 4 տարի մնաց Արևմտյան Հայաստանում (հիմնականում Սեբաստիայում)։ Վերջին փաստի վրա հենվելով, Լեոն գրում է. «... երբ (Պետրոս կաթողիկոսը—Ք. Հ.) վերադարձավ Անի, այստեղ արդեն շատերն էին մոռացության տվել Տրապիզոնի դաշնագրությունը։ Բայց Հովհաննես-Սմբատ թագավորը չէր մոռանում այդ վաճառքը, և հարաբերությունները նրա ու կաթողիկոսի միջև լարված մնացին հետո էլ, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե դժբախտ թագավորը Պետրոս կաթողիկոսին չէր տվել այն լիազորությունները, որ նա գործադրել էր Տրապիզոնում»[16]։ Միանգամայն տրամաբանական և ընդունելի եզրակացություն է։ Պետրոս կաթողիկոսը չարաշահել էր թագավորի վստահությունը։ Նա հարմար պահը ճարպ-

[14] Վարդան Վարդապետ, Համառոտ պատմութեան լուսաբանեալ, էջ 93։

[15] Տե՛ս Յ. Թօպճեան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 402։

[16] Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 654։

կորեն օգտագործել էր իր նեղ փառասիրական և ֆեոդալական շահերի համար, կավելացնեինք մենք[17]։

Պետրոսի՝ Անի վերադառնալուց հետո, նրա և Հայոց թագավորի միջև հարաբերությունները ծայր աստիճան սրվում են։ Դրանց, ինչպես և ընդհանրապես հունասեր ու անկախության կողմնակիցների միջև հակասությունները առավելագույնին են հասնում մանավանդ 1036 թ. տեղի ունեցած արևի խավարման ու երկրաշարժի առիթով Հովհաննես Կողեոն վարդապետի գուշակությունը հատուկ պատվիրակության միջոցով Անիում հայտնի դառնալուց հետո[18]։ Անուղղակի փաստերը ցույց են տալիս, որ Հովհաննես-Սմբատը չէր կարող հանդուրժել դավաճան կաթողիկոսի ազդազրավ գործունեությունը և պատրաստ էր նույնիսկ նրան հեռացնել հայրապետական պաշտոնից։ Բանը հասնում է նրան, որ Պետրոսը 1033 թ. ծածուկ փախչում է Հայաստանի բյուզանդական մասը՝ Վասպուրական և չորս տարի մնում Զորո վանքում[19]։ Սմբատի միջև մղվող պայքարը զեթ ժամանակավորապես մեղմելու և երկրի՝ բյուզանդիային ենթակա հատվածում Հայոց կաթողիկոսական աթոռին հակաթոռ ստեղծելու ամեն հնարավորություն խափանելու նպատակով, Հովհաննես-Սմբատն ու իշխանները բոլոր միջոցները գործադրում և Պետրոսին վերադարձնում են Անի, այնտեղից չորս տարի բացակայելուց հետո։ Սակայն մայրաքաղաք հասնելուց հետո, նրան թագավորի հրամանով անմիջապես կալանավորում և «պահ են տալիս» Բշնիի տիրոջ՝ նրա բարեկամ Գրիգոր Մագիստրոսին, փոխարենը Հայոց կաթողիկոս ընտրելով Սանահնի վանահայր, «մեծ հռետորն Դէոսկորոս»-ին[20]։ Պատմագրի վկայության համաձայն, հոգևորականության մեջ առաջանում են սուր հակասություններ. նրանք չեն ուզում ենթարկվել նորընծա հայրապետին և նզովում են «զթագաւորն և զամենայն նախարարսն Հայոց վասն հակառակութեան, որ եղև ի մէջ եկեղեցւոյն»[21]։

[17] Նշված աղբյուրներից և ուսումնասիրություններից բացի՝ Անին Բյուզանդիային կտակելու մասին տե՛ս նաև՝ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 46—47, Միխա Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 30—31, Ալթունյան Արշակ, Տեղագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, Ֆոքշան, 1877, էջ 4, Կոստանյանց Կ., Տեր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 7—13, Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 47։

[18] Նույն տեղը, հ. 2, էջ 661։

[19] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 75։

[20] Նույն տեղը, էջ 76։

[21] Նույն տեղը, էջ 76—78։ Համմ. Նույն, Հայոց պատմություն, հ. 2, էջ 661—662։

Թագավորն ու իշխանները վերջիվերջո հարկադրված են լինում Աղվանից Հովսեփ կաթողիկոսի միջնորդությամբ և մասնակցությամբ Անիում 1038 թվականին գումարված եկեղեցական ժողովում Պետրոս I Գետադարձ կաթողիկոսին նորից վերհաստատել իր աթոռին, Դեոսկորոսին ետ ուղարկելով Սանահին և չեղյալ հայտարարելով նրա մեկ տարի և երկու ամիս պաշտոնավարած շրջանում հաստատված բոլոր կարգուկանոնները։

Սակայն, ինչպես հայտնի է, դրանով հակասությունները միայն առերևույթ, ժամանակավորապես մեղմացան և կաթողիկոսն էլ չդադարեց բյուզանդամոլ լինելուց։ Ավելին, Անիի թագավորության վերջին տարիներին նա հանդես էր գալիս սուր դավաճանի դերում։

Հովհաննես-Սմբատի թագավորության շրջանը, բացառյալ առաջին 2—3 տարիներին տեղի ունեցած միջեղբայրական պատերազմը (որն ավարտվեց թագավորության հետագա մասնատմամբ), ընդհանուր առմամբ անդորր, բայց հակասություններով լի ժամանակ էր, հակասություններ, որոնք հարմար հող ունենալու դեպքում կարող էին բռնկվել և վերածվել համազգային ողբերգության։ Սակայն առայժմ դրանք դերազանցապես պոտենցիալ վիճակում էին։ Արտաքին քաղաքական միակ դեպքը, որ այդ տասնամյակներում կարճ ժամանակով խախտել է Անիի թագավորության հյուսիսային հարևանի՝ Տաշիր-Զորագետի և մասամբ իր անդորրը, Դվինի Աբուսավար քուրդ էմիրի արշավանքն էր, որ տեղի է ունեցել Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտի մահից հետո, 1040 թվականին։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, քուրդ էմիրն իր արշավանքը սկսել էր 150 հազարանոց մի հսկա բանակով[22] և, գրավելով Լոռու թագավորությանն անցած Հայոց Աղվանքի բազմաթիվ գավառներ, ուղղակի վտանգ էր սպառնում Դավիթ Անհողինին։ Վերջինս ստեղծված դրության մասին հաղորդելով ու մասամբ ահաբեկելով, կարողանում է Հովհաննես-Սմբատից, Կապանի և արխազների թագավորներից լրացուցիչ ուժեր ստանալ, կազմել 20 հազարանոց բանակ և Աղվանքի կաթողիկոսի միջոցով պատերազմին տալով նաև կրոնական քող, մեծ հանդուլ, տարբեր աստիճանի հարյուրավոր հոգևորականների

[22] Ակնհայտ չափազանցված է այդ թիվը կամ, թերևս, էմիրի բանակին ուղեկցում էր նաև կողոպուտի ծարավ խուժանը, որ աշքքան սովորական էր արևելքի բանակների համար։

ուղեկցությամբ հարձակվում է էմիրի ավարառու բանակի վրա և պարտության մատնում նրան[23]։

Հովհաննես-Սմբատի թագավորության տարիներին, XI դարի 30-ական թվականներին Հայաստանում դասակարգային շերտավորման խորացման հողի վրա առաջացած տրտունջները (որ հավանաբար ծագել էին Բոնդրակեցիների շարժման ազդեցությամբ) և Բյուզանդիայից ու արևելքից եկող վտանգը մի տեսակ իրենց արտացոլումն են գտնում իր գիտությամբ ժամանակի հայտնի վարդապետներից մեկին՝ Հովհաննես Կոզեռնին վերագրված տեսիլքի ձևով։ Ն. Մառը, բավականին հանդամանորեն ուսումնասիրելով, եկել է այն եզրակացության, որ այն գրվել է Կլիլիկիայի վանքերից մեկում՝ 1147 թվականի խաչակրած արշավանքի հաջող ելքի ազդեցության տակ և իրենից ներկայացնում է ապոկրիֆ (պարականոն, անվավեր գրվածք)[24]։ Կարծում ենք այս հարցում ընդունելի է Աշ. Հովհաննիսյանի կարծիքը, ըստ որի տեսիլքի կիլիկեցի հեղինակն այդ գրվածքը ստեղծել է «Անիի բյուզանդական օկուպացման ժամանակ» Արևելյան Հայաստանում գրված որևէ գրական աղբյուրի հիման վրա[25]։ Տեսիլքն Անիի բնակչության տրտունջներն արձանագրելու հետ միասին, ինչպես եզրակացնում է նա, «միաժամանակ ներշնչում [է] նրանց այն մտայնությունը, թե ներքին ու արտաքին բոլոր նեղիչների դեմ փրկության ապավենն կարող է լինել միայն «բյուզանդական զեմքը»[26]։ Ե՛վ Հովհաննես Կոզեռնը, և՛ նրա տեսիլքում հիշատակվող Պետրոս կաթողիկոսը, և՛ Գրիգոր Մագիստրոսը պատկանում էին բյուզանդասերների խմբին և տեսիլքն էլ ստեղծված էր դրանց ու մյուս ազգադավների ֆեոդալական-դավաճանական շահերի ու գործունեության համապատասխան։ Տեսիլքում հիշատակվում են 1023 և 1036 թվականներին տեղի ունեցած արևի խավարումները ու աղետաբեր երկրաշարժները, Հովհաննես-Սմբատի և Պետրոս կաթողիկոսի կողմից այդ երևույթների բացատրությունն ստանալու համար Հովհաննես Կոզեռնի մոտ ուղարկած պատվիրակությանը (որի կազմում էր նաև Գրիգոր Մագիստրոսը) և գիտնական վարդապետի այդ պատվիրակությանը տված պատասխանները, որոնք և

---

[23] *Տե՛ս* Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 79—82։ Համմ. Ան., *Հայոց պատմություն*, հ. 2, էջ 664։

[24] Н. Я. Марр, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, էջ 18։

[25] Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, *գիրք I*, էջ 47։

[26] Նույն տեղը։

կազմում են գրվածքի բուն բովանդակությունը՝ բնակչության անբավականությունը, վերնախավի քայքայման ախտանշանները, երկրին սպառնացող վտանգը, կրոնական-աստվածաբանական մտայնության արտահայտումները և այլն[27]։

1040 թվականին մահանում է Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտը։ Առիթից օգտվելով, Դավիթ Անհողինը գրավում է նրա իշխանության տակ գտնված գավառների մի մասը, որը փորձեց նրանից ետ խլել վերը նշված քուրդ էմիր Աբուսվարը, բայց վերջ ի վերջո պարտություն կրեց և ստիպված եղավ հրաժարվել այդ մտքից։ Պատմագրի ասելով, Աշոտի մահից հետո Հայոց զորքի մեջ տիրում էր ընդհանուր հուսալքություն՝ ընկել էր նրա մարտունակությունը, կարգապահությունը, միաբանությունը, սերը դեպի պատերազմական արվեստը, կոնծաբանությունն ու խրախճանքները գերադասելով ռազմական գործից. «Եւ եղև զկնի մահուանն Աշոտոյ Բուլամորթեցան զօրքն Հայոց և ատեցին զարուեստս պատերազմի, մտին ընդ լծով ծառայութեան ապգին Հոռոմաց, նստան ի գինարբուսն, սիրեցին զբարբուտ և զերդս գուսանաց. հեռացան ի միաբանութենէ միմեանց և յօգնութիւն իրերաց ոչ հասանէին...»,— գրում է նա[28]։

Հաջորդ տարվա սկզբներին մահանում է նաև Անիի թագավորը՝ Հովհաննես-Սմբատը և եթե Աշոտի մահը, ինչպես Մատթեոս Ուռհայեցին է վկայում, ընդհանուր հուսալքություն է առաջացնում զորքի մեջ, ապա Անիի անժառանգ թագավորի մահվամբ Բագրատունիների մայրաքաղաքում ստեղծվում է ծայր աստիճան լարված դրություն, մի կողմից, Բյուզանդիան իր ձեռքին ունենալով 1022 թվականի չարաբաստիկ կտակը, պահանջում էր դրա համաձայն «իբրև օրինական ժառանգ» իրեն հանձնել Անին[29], մյուս կողմից՝ վեստ Սարգիս իշխանն օգտվելով արքունիքում գրա-

---

[27] *Տեսիլքի* ամբողջական բնագիրը տե՛ս Н. Я. Марр, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, էջ 19—26։

[28] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 79։

[29] Ավանդական մի պատմություն է ստեղծվել այդ կտակի շուրջը։ Ըստ դրա, Վասիլ II կայսրը (976—1025) (մի այլ տարբերակի համաձայն՝ Կոստանդին VIII-ը, 1025—1028) մահվան մահճում «խղճի խայթ» զգալով՝ իր մոտ է կանչում Կոստանդնուպոլսում կաթողիկոսարանի «հիւրատեսս» (հյուրերին նայող) Կիրակոս («Կիւրակոս») քահանային և նրան տալով «կտակը» պատվիրում է այն հանձնել Հայոց թագավորին։ Սակայն փողմոլ քահանան այդ գիրը պահում է իր մոտ և մեծ հատուցում ստանալով՝ դավաճանաբար հանձնում Միխայիլ Ե (Պաֆլագոնացի, 1034—1041) կայսրին, որը հաջորդել էր Ռոմանոս Արգիրոսին (1028—1034), տե՛ս Առիստակես Լաստիվերտցի, *Պատմություն*, էջ 53—54 և 57—58։

ված իր բարձր պաշտոնից, ամեն հնարավոր միջոցի դիմում է Բագրատունիների գահին տիրանալու համար: Նույնպիսի հավակնություններ ուներ նաև Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Անհողինը: Այդպիսի բարդ իրադրության հետևանքով իշխող խավի երկու խմբերի՝ անկախականների, ինչպես կարելի է կոչել երկրի անկախության համար պայքարողներին, և հունասերների միջև հակամարտությունն ավելի է սրվում: Կարծես պատմությունը կրկնվում էր. երկրում ստեղծվել էր գրեթե այնպիսի վիճակ, ինչպիսին տիրում էր Գագիկ I-ի մահից հետո, երբ գահի համար սկսեցին իրար դեմ մարտնչել երկու եղբայրները:

Թափուր մնացած գահին տիրելու համար առաջինը գլուխ է բարձրացնում Բագրատունի թագավորների դավաճան խնամակալը՝ Վեստ Սարգիսը: Օգտվելով խառնակ դրությունից, նա հափշտակում է արքունական գանձերը և ամրանում մայրաքաղաքի Միջնաբերդում:

Հենց այդ նույն թվականին, բյուզանդական հարձակման հետ միաժամանակ, նախքան կայսերական զորքն Անիին մոտենալը և նրա ու հայոց գնդերի միջև արյունահեղ մարտերը, իր զորքերի գլուխ անցած դեպի Բագրատունիների մայրաքաղաք է շտապում նաև Դավիթ Անհողինը, Տաշիր-Զորագետի (նույնպես Բագրատունի) թագավորը, որն իրեն համարում էր, առայժմ թափուր մնացած գահի իսկական ժառանգորդը: Պատմագիրները վկայում են, որ Դավիթ Անհողինն այդ արշավանքի ընթացքում գրավել ու ավերել է բազմաթիվ գավառներ, բայց հակահարված տանելով հրաժարվել է իր մտադրությունից և մեծ ավարով ու գերիներով վերադարձել[31]:

Պատմական դեպքերի ընթացքը ցույց է տալիս, որ հակառակ Դավթի, Կարսի ուսումնասեր ու հեռատես Գագիկ Աբասյան թագավորն Անիի գահին տիրանալու հավակնություն չի ունեցել[32] և, մեզ ինչքանով հայտնի է, նա այդ պայքարի ընթացքում մնացել էր սոսկ դիտողի դերում:

Այսպիսով, Անիի թագավորության ճակատագրի համար պայքարող ուժերից հրապարակի վրա փաստորեն մնում են երկուսը, դրանցից մեկը անկախության ջերմ պաշտպանն էր ժողովրդական

30 Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 56—59, Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 84, Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, էջ 56—57 և այլն:

31 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 84—85, Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, էջ 57:

32 Լեո, *Հայոց պատմություն*, հ. 2, էջ 670:

լայն զանգվածների ու զորքի հետ միասին, իսկ մյուսը՝ դավաճանների խումբն էր (որ հայագիտության մեջ, ավանդույթի ուժով, ներողամտաբար կոչվել է «հունասեր»)՝ երկիրը Բյուզանդիային զոհելու աշխարհիկ ու հոգևոր ազգադավ ֆեոդալների հոսանքը, որ հենվում էր բյուզանդական զորքի և կայսերական ագրեսիվ ուժ ննջ քաղաքականության վրա, զանազան պատրվակներով, ժողովրդից խնամքով թաքցնելով իր դավաճանական գործունեությունը:

Ահա այդպիսի բարդ պայմաններում նախ պետք է հակահարված տրվեր Անին գրավելու համար Հայաստան արշաված Միխայիլ կայսեր ահռելի բանակին և խափանելով ներքին կենտրոնախույս ու օտարամոլ ուժերի բոլոր նենգությունները, Բագրատունիների գահի վրա հաստատել հրապարակի վրա եղած միակ թեկնածուին՝ Աշոտ IV-ի որդուն՝ պատանի Գագիկին:

Մեծ հերոսություն և գերմարդկային ուժեր էին պետք զգալի չափով ջլատված Անի-Շիրակի փոքրիկ բագավորության փոքր ուժերով բյուզանդական մեծաթիվ բանակին պարտության մատնելու և երկրի սահմաններից դուրս շպրտելու համար: Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, Անին հանձնելու մասին Միխայիլ կայսեր առաջարկը մերժելուց հետո, 1041 թվականի վերջերին և հաջորդ տարվա սկզբներին այն զենքի ուժով գրավելու համար, բյուզանդական բանակը մի քանի արշավանքներ է կատարում: Ուռհայեցին նշում է այդպիսի երկու արշավանքի մասին: Նրա ասելով, վերջին արշավանքը կատարվել է 100-հազարանոց բանակով, որը ավերելով իր առաջխաղացման ճանապարհին եղած գավառներն ու բնակավայրերը, հասել է Անիի պաշտպանական պարիսպներին[33]: Ինչքան էլ չափազանցված համարենք Անի արշավող կայսերական բանակի մեծությունը, այնուամենայնիվ այն թվական մեծ գերակշռություն է ունեցել Հայոց ընդամենը 30-հազարանոց զորագնդերի նկատմամբ, որոնց գլուխ կանգնած էր քաջ, մեծ զորավար Վահրամ Պահլավունին՝ անշահախնդիր հայ-

33 Արիստակես Լաստիվերտցին (*«Պատմութիւն»*, էջ 55—56) վկայում է, որ Բյուզանդիան ընդհանրապես չորս արշավանք է կատարել Անիի գրավման համար, որոնց ընթացքում «...մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և գերութեամբ»: Ոմանք այդ չորս հարձակումները (տե՛ս օրինակ՝ Լեո, *Հայոց պատմություն*, հ. 2, էջ 670) դնում են 1041—1042 թվականներին՝ Հովհաննես-Սմբատի մահից մինչև Գագիկ II-ի թագադրելն ընկած ժամանակներում, որ միանգամայն անհավանական է: Պատմագրի խոսքը վերաբերում է ոչ միայն դրանց, այլև ընդհանրապես Անիի գրավման համար կազմակերպված բոլոր արշավանքներին:

րենասերն ու երկրի քաղաքական անկախության համար իր ուժերն ու եռանդը անմնացորդ զոհաբերողը, մի զորավար, որի համբավը համընդհանուր ճանաչում էր գտել ոչ միայն Հայաստանում, այլև բովանդակ Վրաստանում, աշխարհակալ Բյուզանդիայում և արաբական խալիֆայությունում:

Ուժերի անհավասարությունը նկատի ունենալով, Վահրամ Պահլավունին դիմում է սրամիտ, բայց համարձակություն ու հերոսություն պահանջող մարտավարության: Սովորական բաց դաշտում ճակատամարտ մղելը կամ մեծ բանակին քաղաքը պաշարելու հնարավորություն տալը կարող էր կործանարար հետևանքներ ունենալ: Ուստի Պահլավունի ծեր սպարապետն առանց ժամանակ կորցնելու, բյուզանդացիների համար անսպասելի, իր բանակի գլուխն անցած դուրս է գալիս քաղաքի արևմտյան մասում գտնվող Ծաղկոցաձորի դարպասից և մխրճվում թշնամու զորքերի մարտակարգերի մեջ: Հանկարծակիի եկած կայսերական բանակը կատաղի դիմադրություն է ցույց տալիս՝ մեծամասորեն լուտանք թափելով հայ զինվորների հասցեին: Այդ ահեղ մարտում հայկական զորքը ջարդում է թշնամուն և հետապնդում նահանջողներին՝ մինչև որ Վահրամ Պահլավունին հրաման չի տալիս ջախջախված թշնամու մնացորդներին խնայել և նահանջի հնարավորություն տալ:

Զգալի չափազանցությամբ, սակայն պատկերավոր ոճով է նկարագրում Մատթեոս Ուռհայեցին այդ ճակատամարտը. «Յայսմ ամի (1041 թ. —Թ. Հ.) յարեան Հոռոմք կրկնակի ի վերայ աշխարհին Հայոց՝ և առ ի չգոյէ գլուխ զօրացն Հայոց, բազում տեղիք հաւանեցան Հոռոմոց, և վասն զի էր կոտորած մեծ ի վերայ աշխարհին Հայոց: Եւ յայնժամ ժողովեցան զօրք Հոռոմոց ի վերայ թագաւորաբնակ քաղաքին Անւոյ հարիւր հազարաց և բանակ հարկանէին ի դուռն քաղաքին Անւոյ: Յայնժամ ժողովեցան մնացեալք զօրքն Հայոց առ մեծ սպարապետն Վահրամ Պահլաւունին և խընդրէին ելանել ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց...: Յայնժամ... զօրքն... ելեալ ի պատերազմ արք երեսուն հազար հեռւակք և ձիաւորք ընդ դուռն, որ Ծաղկոցի ասի, և որպէս զկայծակն հեղան ի վերայ զօրացն Հոռոմոց և զայնքան զՊարտացեալ և զամբարտաւանեալ զօրսն ընդ կրունկն դարձուցանէին ի փախուստ և անողորմ ի բերան սրոյ կոտորէին զնոսա. և Ախուրեան գետն որ գայր՝ ի յարիւն դարձաւ...: Եւ անդ էր տեսանել զահեղ և զմեծ օրն ի վերայ զօրացն Հոռոմոց, որ ի հազարէն հաւրիւր լինէր մնացեալ... և այ ոչ եւս խնդրեցին զօրքն Հոռոմոց զքաղաքն

Անի, այլ դարձան ամօթով և գնացին և Կոստանդնուպոլիս առ Միխայլն»[34]:

Այդ խայտառակ պարտությունից հետո Անին առայժմ, իրոք որ, զերծ է մնում բյուզանդական հարձակումներից: Վահրամ Պահլավունին ու նրա համախոհներն այժմ հնարավորություն ունեին զբաղվելու երկրի ներքին գործերով: Առաջին և անհետաձգելի հարցը երկրի անիշխանության վերացնելն էր՝ բագրատունիների թափուր գահի համար հարմար թեկնածու գտնելը: Անիի վերնախավի ճնշող մեծամասնության համաձայնությամբ՝ Վահրամ Պահլավունին, Հայոց կաթողիկոս Պետրոսի ձեռքով (որը Հունաստանների մյուս պարագլուխների հետ նույնպես ժամանակավորապես պարտություն էր կրել և առայժմ լռելյայն հաշտվում էր ստեղծված իրադրության հետ) Կաթողիկե մայր եկեղեցում Աշոտ IV-ի որդի, 17—18 տարեկան Գագիկին մեծ հանդիսավորությամբ կարգել է տալիս Հայոց թագավոր՝ Գագիկ II անունով[35]: Գագիկին թագավորացնելու հարցում իր հորեղբայր Վահրամ Պահլավունուն գործակցում և օգնում է նաև Դրիգոր Բջնեցի Մագիստրոսը: Պատմագիրները միաբերան պատանի Գագիկին որակում են որպես գրասեր, ուսումնասեր, քաջ և «երկիւղած» ու «աստուածասէր» անձնավորություն: Երկրի միասնությունը և մայրաքաղաքի անվտանգությունն ապահովելու համար եռանդուն թագավորը դիմում է վճռական միջոցների: Բյուզանդիայի օգտին առայժմ բացահայտ գործողը Վեստ Սարգիս իշխանն էր, որն, ինչպես ասվեց, օգտվելով իր պաշտոնից, հափշտակել էր արքունական գանձերն ու թանկարժեք իրերը և ամրացել Անիի Միջնաբերդում: Գագիկն «այրական քաջութեամբ», միայնակ մտնելով դավաճան իշխանի մոտ՝ հորդորում ու համոզում է թողնել մայրաքաղաքը և հեռանալ[36]: Սակայն թագավորի մեծահոգությանը բյուզանդամոլ իշխանը պատասխանում է երախտամոռությամբ՝ ամրանալով Սուրմառի (այժմ՝ Սուրմալու) բերդաքաղաքում, խորհում է իր ամրությունները տալ հույներին և զորքով «ելանել առ նոսա», այսինքն՝ հանձնվել Բյուզանդիային: Այս անգամ նույնպես դավաճանը նեղոզամտաբար փրկվում է: Գագիկ II-ը սակավաթիվ մարդկանցով նրան ձերբակալում և բանտարկում է Անիում, փոխանակ մահապատժի ենթարկելու, որովհետև, ինչպես ժամանակակից պատմագիրն է ասում, դավաճանը պետք է զրկվեր կյանքից. «պարտ էր

---

34 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 85—86:

35 Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 54—55, Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 86:

36 Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 58:

զապստամբն բառնալ ի կենաց»[37]: Այո՛, Հայոց թագավորի ներողամտությունն ու մեծահոգությունը, ինչպես կտեսնենք, անտեղի էր, թեպետև Մատթեոս Ուռհայեցու ասելով, Դագիկ II-ը ապըստամբ իշխանին վնասազերծել և նրանից խլել էր արքունական գանձերը ոչ թե համոզելով ու ներողամտությամբ, ինչպես Լաստիվերտցին է հաղորդում, այլ բռնությամբ՝ նույնիսկ ենթարկելով զանազան տանջանքների[38]: Դրանից հետո «խաղաղանայր զօրքն Հոռոմոց, և այլ ոչ յաւելեան ի խնդրել զքաղաքն Անի և ոչ այլ պատերազմ յարուցանել ընդ Հայք: Յայնժամ եղեւ յաջողեալ երկու ամ թագաւորութիւնն Գագկայ...»[39]:

Պատմագրական աղբյուրների վկայություններից երևում է, որ Դագիկ II-ը տվյալ պահին պառակտիչների դլխավոր Վեստ Սարգսին մեկուսացնելուց ու ժամանակավորապես վնասազերծ անելուց հետո, շարունակում է երկրի բնականոն կյանքի վերականգնման գործը, որ այնքա՜ն խախտվել էր անիշխանության երկու տարիներին (1041—1042) թշնամական հարձակումների և ներքին երկպառակությունների հետևանքով: Իրոք որ նրան հաջողվում է բանակի օգնությամբ կարճ ժամանակամիջոցում իրեն ենթարկել անհնազանդներին և երկրի ներսում խաղաղություն հաստատել[40]:

Հենց այդ ժամանակ, 1042 թվականի վերջերին (կամ թերևս 1043-ի սկզբներին) սելջուկյան հորդաները Պարսկաստանի կողմից մտնելով Այրարատյան աշխարհ՝ սկսում են ավերել նրա գավառներն ու բնակավայրերը: Դագիկ II-ն ու Բջնիի տեր Գրիգոր Մագիստրոսն իրենց միացյալ զորքերով, Հրազդանի ափին, Բջնի բերդի մոտակայքում ջարդում են թուրքական ավարառու զորքերին, գերում նրանց իշխաններին, իսկ զորքի մնացորդներին դուրս են շպրտում երկրի սահմաններից[41]:

Այդ բոլորի հետևանքով վերականգնվում է, գոնե առերես, Անիի թագավորության միասնությունը և վերացվում է արևելքից եկող վտանգը: Սակայն պահպանվում էր Անիի անկախությանը սպառնացող հիմնական վտանգը, որ գալիս էր արևմուտքից՝ ադրբեջիվ Բյուզանդիայից:

1042 թվականին կայսրության գահին տիրացած Կոստանդին Մոնոմախը, անդրկանալով 1022 թվականի Տրապիզոնի գործարքի մասին, Գագիկ II-ից համառորեն պահանջում է Անին համանուն թագավորության հետ հանձնել Բյուզանդիային: Միաժամանակ, փոխանակ հաշվի առնելու արևելքից եկող թուրք-սելջուկյան արշավանքների վտանգը և, զիջումներ անելով, հայերին իր դաշնակիցը դարձնելու, կամ ուղղակի օգտագործելու այդ ընդհանուր թշնամու դեմ, Կոստանդին Մոնոմախը Հայաստանի նկատմամբ ավելի մարտնչող դավիճի դիրք է ընդունում: Նա Անին իր իշխանությանը ենթարկելու համար գործի է դնում կայսրության զավթողական քաղաքականության ամբողջ զինանոցը՝ մարդաշատ բանակները, նենգությունն ու խաբեությունը, քաղկեդոնական եկեղեցին, տեղում հուսալի գործակալներ ու ուժեր ստեղծելու իր արգահատելի միջոցները՝ նվիրատվություններ, սուտ խոստումներ ու երդումներ և այլն: Ականավոր շատ պատմաբաններ սելջուկյան ավերիչ արշավանքների ու առաջխաղացման նախօրյակին Բյուզանդիայի կառավարող շրջանների և կայսրության պաշտոնական քաղկեդոնական եկեղեցու այդ հայատյաց քաղաքականությունը միանգամայն իրավացիորեն համարում են վնասակար:

Կոստանդին Մոնոմախը, կայսերական պաշտոնական երկրնակ եկեղեցու միջոցով հայկական միաբնակ եկեղեցուն ֆանատիկոսության հասնող հալածանքների ենթարկելու հետ միասին, նորից է առաջքաշում Անին և համանուն թագավորությունը Բյուզանդիային հանձնելու հարցը: Իր հրեշավոր նպատակին հասնելու համար, նա լավ սպառազինված, բազմահազարանոց բանակներից բացի, բորբոքում է ներքին երկպառակություններ, իր համար Անիի ներսում ստեղծում դաշնակիցներ, մի բան որ այնքա՜ն հատուկ էր բյուզանդական արտաքին նենգ քաղաքականությանը: Մատթեոս Ուռհայեցու մի վկայությունից երևում է, որ Բյուզանդիայի այդ ստոր գործարքի ստոր գործակիցն առաջին հերթին Դավիթ Անհողինն էր, իրեն Բագրատունիների գահի «օրինական» ժառանգորդ համարող մի սովորական ծախու անձնավորություն, որն իր տրամադրության տակ ուներ զինվորական շոշափելի ուժեր և կարող էր մեծ վնասներ պատճառել Անիի հերոս պաշտպաններին: Եվ նա այս անգամ իր ազգադավ մտադրություններն իրագործելու համար ժամանակ էր ընտրել Դագիկ II-ին ներկայացրած՝ Կոստանդին Մոնոմախի կարուկ առաջարկի և սելջուկյան հորդայի նշված արշավանքի պահը: Դավիթ Անհողինի ռազմական չարագործությունների մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յայն ժամ յազգմանէ չարին կրկին շարժումն լինէր Յունաց դաւաճանութեամբ և կեղծաւորութեամբ սուտ քրիստոնէին Դաւթի Անհողի-

---

37 Նույն տեղը:

38 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 87:

39 Նույն տեղը:

40 *Տե՛ս* Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 87: *Համմ.* Ստ. Հասրատ պատմություն, հ. 2, էջ 673:

41 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 87—88:

նին ,զոր հարկ եղև մեզ զանուն նորա փոխել և ասել թէ Դաւիդ (Դաւիդ—Թ. Հ.), վասն զի ի վիհն տառապանաց էած ազգս քրիստոնէից. և ինքն հոգւովն տանջեալ եղեւ ի բանսարկուէն և ի վիհն կորստեան յաւիտենից տանջանացն մատնեալ լինէր»[42]։ Պատմագիրը, ճիշտ է, որոշակի չի հաղորդում դավաճանի ոճրագործությունները, բայց ընդհանուր ձևով նրան բնութագրում է իբրև Բյուզանդիայի ստոր գործիք և իր ժողովրդին պատուհասներ ու տառապանք պատճառող։

Անիի ներքին կյանքում նոր շփոթություններ ու անհամաձայնություններ են առաջանում Վեստ Սարգսի նոր բանսարկությունների հետևանքով։ Բանն այն էր, որ այս վերջինն իր քսությամբ և կեղծավորությամբ կարողացել էր ոչ միայն ազատվել կալանքից, այլև իր աներոջը՝ Գրիգոր Մագիստրոսին, մատնելու գնով կարողացել էր շահել երիտասարդ թագավորի սիրտը և ձեռնամուխ նրա մոտ բարեկամը[43]։ Մատնիչը հասնում է իր նպատակին։ Նա կարողանում է քննցնել երիտասարդ թագավորի զգոնությունը՝ իր գործում ամբողջ չարիքների դրդապատճառ համարելով աներոջը և նրա ու թագավորի միջև սերմանելով ատելություն ու թշնամանք։ Թագավորը հետագայում մեծ մտածողի և իր երբեմնի բարեկամի ու դաշնակցի հետ հաշտության եղրեր է որոնում, բայց վերջինս կարեկանապես մերժում է։ Ավելին, Գրիգոր Մագիստրոսն իր «Թղթեր»-ում Հայոց երիտասարդ թագավորին զրպարտելով և արհամարհելով, կոչում է «մանուկ», «մանկամիտ», «տհաս», «անբուժելի հիվանդ» և այլն[44]։ Նա գրում է, որ ինքը հալածանքի, զրկանքների և, նույնիսկ, մահվան սպառնալիքների է ենթարկվում թագավորի կողմից։ Մի փոքր առաջ գնալով ասենք, որ Գրիգոր Մագիստրոսի՝ Բջնիից Բյուզանդիա գնալու պատճառներից մեկը համարում են հենց այդ գժտությունը։

Ներքին ու արտաքին այդպիսի աննպաստ պայմաններում էր, որ Բյուզանդիայի կայսրը համառորեն պահանջում էր Անիին։ Հայոց թագավորը, անշուշտ, չէր կարող և ցանկություն էլ չուներ իր թագավորությունն ու մայրաքաղաքը Բյուզանդիային տալու։ Նա կայսեր կտրուկ նամակին տալիս է ավելի մեղմ, բայց մերժողական պատասխան, նշելով, որ ինքը միշտ կարող է հավատարիմ մնալ կայսրությանը, բայց առանց Հայրենի քաղաքը նրան տալու։ Կայսրը դայլայլած դիմում է ռազմական ուժի և 1043—1044 թթ.

---

[42] Նույն տեղը, էջ 88։

[43] Տե՛ս ԵՒո, Հայոց պատմություն, հ. 2, էջ 328, նույնի, Անի։

[44] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ 64 և 139—142։ Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ., Երևան, 1970, էջ 35։

ԱՐԱՐԱՏ Թ. ՏԱՒՈՍԵԱՆ

Վաղագաղթ, հայրենիքի կորուստ և ժողովրդի ցրվում

ԵՐԵՒԱՆ 1979թ.

0 100 200 300 400 500մ.

Ուղղագրությունը ըստ 1940թ. հրատարակության

Ուղղագրությունը ըստ 1940թ. հրատարակության

Ուղղագրությունը ըստ 1940թ. հրատարակության

երկու արշավանք է կազմակերպում Անին գրավելու համար։ Առաջին արշավանքը կատարվում է Բյուզանդիային ենթակա Վրաստանի դուքս Խասիտեսի հրամանատարությամբ։ Այդ արշավանքին մասնակցած զորքի քանակի, ընթացքի և հետևանքների մասին պատմագրական երկերում շատ քիչ արժանահավատ տեղեկություններ չեն պահպանվել[45]։ Սակայն նույն նպատակի համար շուտով երկրորդ արշավանքի կազմակերպումը ցույց է տալիս, որ առաջինը բյուզանդացիների համար ավարտվել էր պարտությամբ։

Երկրորդ արշավանքը կազմակերպվում է ավելի մեծ ուժերով՝ ավելի հայտնի զորավար Նիկողայոսի հրամանատարությամբ։ Ըստ երևույթին անցյալի փորձը նկատի ունենալով, կայսրն այս արշավանքի հաջողությունը նույնպես կասկածելի է համարել։ Այդ պատճառով էլ, նախօրոք ստորաբար դաշնակցության մեջ է մըտնում Դվինի Աբուսավար քուրդ էմիրի հետ և վերջինիս առաջարկում Անիի վրա հարձակվել արևելքից՝ արամուտքից բյուզանդական զորքերի արշավանքի հետ միասին։ Պայմանի համաձայն, Աբուսվարին էին անցնելու այն բոլոր գավառներն ու բերդերը, որ նա կգրավեր Թիկունքից Գագիկ II-ի վրա հարձակվելու ընթացքում։ Երկկողմանի արշավանքները փոքրիկ թագավորությունում ստեղծում են ծանր կացություն։ Կենաց և մահու կռիվ մղելու հետ միասին երիտասարդ թագավորը պետք է ցուցաբերեր նաև հեռատեսություն և իր մարտավարությունն ընտրեր ստեղծված դրության համապատասխան։ Քուրդ էմիրի զորքերը մեկը մյուսի ետևից գրավում են Անիի թագավորության գավառներն ու բերդերը՝ բնակչությանը ենթարկելով խոշտանգումների, զգալի մասին բռնությամբ կրոնափոխ անելով[46]։ Գագիկ II-ը, այնուամենայնիվ, հիմնականում վտանգը համարում էր բյուզանդական զորքի հարձակումը. բանակցությունների և բավական մեծ քանակությամբ գանձեր տալու միջոցով նա կարողանում է լեզու գտնել ու հաշտություն կնքել Աբուսավարի հետ և իր ամբողջ զորքով դուրս գալ բյուզանդական մեծաթիվ բանակի դեմ։ Անի արշաված կայսերական բանակն այս անգամ ևս պարտություն է կրում և նահանջում[47]։ Քուրդ էմիրի դաշնակցությունն ու ավարառական արշավանքը նույնպես ոչնչով չկարողացավ հաջողություն բերել բյուզանդացիներին։

---

[45] Նա, Հայոց պատմություն, հ. 2, էջ 676։

[46] Gustave Schlumberger, L' Epopée Buzantin alafin Dixième Siecle, Paris, 1896, h. III, էջ 482։ Համմ. Նա. Հայոց պատմություն, հ. 2, էջ 676—677։

[47] Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 926—927։

կան զավթիչներին։ Նրանք այս անգամ էլ պարտվեցին Անիի թագավորության զորքերից։

Այսպիսով, Անին գրավելու համար բյուզանդական զորքը չորս անգամ արշավանքի է դուրս գալիս (երկուսը Միխայիլ կայսեր, իսկ երկուսը՝ Կոստանդին Մոնոմախի ժամանակ) և չորս անգամ էլ պարտություն կրելով, հարկադրված է լինում նահանջել ձեռնունայն։ Կայսերական բանակի հարձակումներն իրենց թողած հետևանքներով արևելյան վայկատուն ցեղերի հարձակումներից քիչ էին տարբերվում, վերջիններիս նման առաջինները ևս երկրին բերում էին ավերածություն, կոտորած, գերեվարություն. «Յայսոսիկ աւուրս հետամուտ եղեալ զօրքն Հոռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին զերկիրն ու ամենայն սրով և հրով և գերութեամբ»,— գրում է Արիստակես Լաստիվերտցին[48]։

Այդ բոլորով հանդերձ, Բյուզանդիային չի հաջողվում Անին գրավել զենքի ուժով։ Հարազատ երկրի ու հայրենի մայրաքաղաքի հերոս պաշտպանները միշտ հաղթող են դուրս գալիս զավթիչների մեծաքանակ ու լավ զինված բանակների դեմ մղած ահեղ մարտերում։

Նիկողայոս զորավարի վերը նշված արշավանքից հետո, որը թվով չորրորդն էր և հավանաբար կատարվել է 1044 թվականի սկզբներին, Բյուզանդիան Անին գրավելու համար զենքի փոխարեն կամ, ավելի ճիշտ, զենքից բացի գործի է դնում իր նենգ ու խարդախ քաղաքականության բոլոր օղակներն ու միջոցները։ Եվ այդ պահից ի վեր, մինչև Բագրատունիների մայրաքաղաքի գրավումը ու նրա վերջին թագավորի գահազրկումը, Բյուզանդիայի և նրա գործակալների կողմից հարուցված ողբերգական դեպքերի մի տխուր ժամանակագրություն է, արաբական խալիֆայության դեմ ուղղված ազատագրական հուժկու շարժումներով ձեռքբերված՝ անկախության կորստի մի մռայլ շրջան, երբ կայսերական իշխանությունները բացահայտ պայքարը փոխարինել էին խարդախ դիվանագիտությամբ, բանսարկություններով, իրենց այդ ստոր գործի մեջ ներգրավելով երկրի ներսի փողամոլ, ընչաքաղց, դավաճան ուժեր ու առանձին դեմքեր՝ սկսած տերտեր Կիրակոսից մինչև Հայոց Պետրոս Հայրապետն ու վերջին Բագրատունիների խնամակալ Վեստ Սարգիսը ներառյալ։ Զենքով չկարողանալով գրավել Անին, բյուզանդական կայսր Մոնոմախը դիմում է խորամանկության։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, Վեստ Սարգսի խոր-

[48] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 55—56։

հրդով, նա բանակցություններ վարելու և բարեկամություն հաստատելու պատրվակով, սիրալիր նամակ է գրում Գագիկ II-ին և նրան հրավիրում Կոստանդնուպոլիս։ «Յայսմ ժամանակիս սկսաւ անօրէնն Սարգիս յառաջ բերել զչար նենգութիւնն իւր և ազգ արարեալ Մոնոմախին և ասէր, եթէ «Կոչեա առ քեզ զԳագիկ ի Կոստանդնուպօլիս սիրոյ պատճառանօք և յայնժամ խաբեութեամբ առցես ի նմանէ զքաղաքն Անի»։ Եւ լուեալ զայս թագաւորն Մոնոմախ, ուրախ լինէր յոյժ...։ Եւ գրեաց թուղթ առ Գագիկ արքայ Հայոց հանդերձ մեծամեծ երդմամբ և այնչափ մոլեգնեալ՝ մինչեւ զքրիստոսական աւետարանն և զնշանն սուրբ խաչին Քրիստոսի միջնորդս և երաշխաւորս յուղարկեալ ի Հայք և այսպիսի օրինակաւ կոչէր զթագաւորն Հայոց Վասն սիրոյ և տեսութեանն»[49]։ Գրեթե նույն բովանդակությունն ունի նաև անմիջական ժամանակակից Արիստակես Լաստիվերացու վկայությունը, որը, սակայն, ի տարբերություն վկայակոչվածի, ավելի ընդհանուր է և Վեստ Սարգսի նենգության մասին հիշատակում է միայն Գագիկին համոզելու ու Կոստանդնուպոլիս ուղարկելու առնչությամբ[50]։ Հնարավոր է, որ պատմագիրները որոշ մանրամասներ խտացրել ու դրամատիկական տեսք են տվել, սակայն նրանք ընդհանուր առմամբ չեն խեղաթյուրել իրական դրությունը։ Վեստ Սարգիսն ականատես էր երիտասարդ թագավորի ամբողջ գործունեությանը, երկրի անկախության օրավուր ամրապնդման և կենտրոնախույս ուժերի սանձահարման համար նրա ձեռնարկած վճռական գործողություններին։ Իշխանատենչ ու փառամոլ դավաճանն այս անգամ ևս դիմում է իր հին «դաշնակցին» ու հովանավորին՝ Բյուզանդիային և վերջինիս զավադրական միջոցներով հայրենի երկրի քաղաքական անկախության վերացման մեջ տեսնում իր ստոր նպատակների իրականացման միակ հնարավորությունը։

Հեռատես թագավորը, սակայն, անցյալի դառը փորձով գիտեր բյուզանդական կայսրների ուխտադրժությունն ու նենգությունը և երկար ժամանակ հրաժարվում է Կոստանդին Մոնոմախի ցանկությունը կատարելուց՝ «բարեկամական» հրավերի մեջ տեսնելով Անին կորցնելու և ծուղակն ընկնելու վտանգ. «Գագիկ ոչ էած յանձն գնալ զհետ ստութեանն, վասն զի գիտէր զՀոռոմոց նենգութիւն»,— գրում է Ուռհայեցին[51]։ Վեստ Սարգիսը և նրա

[49] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 93—94։

[50] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 61—62։

[51] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 94։

կողմնակից ազատները բոլոր միջոցներով հորդորում ու համոզում էին Թագավորին ընդունել կայսերական «խաղաղասիրական» և «բարեկամական» հրավերը՝ մատնացույց անելով Կոստանդին Մոնոմախի երդումների «անկեղծությունը»։ Թագավորի Կոստանդնուպոլիս գնալը կործանարար էր համարում նաև Ծերունի սպարապետը՝ Վահրամ Պահլավունին։ Սակայն դավադիր ուժերին այնուամենայնիվ հաջողվում է կոտրել Գագիկ II-ի համառությունը, և Պետրոս կաթողիկոսի ղեկավարությամբ կնքծ երդումներ տալով՝ նրան ուղևորել Կոստանդին կայսեր մոտ։ Արիստակես Լաստիվերացին Գագիկ II-ի այդ քայլը համարում է անմիտ, կործանարար և նրան մեղադրում Վահրամ Պահլավունու ու նրա կողմնակիցների խորհուրդները լսելու համար։ Նա գրում է, թե՝ «երդմամբ և խաչիւ հաւանեցուցին զԳագիկ՝ հրամանաւ թագաւորին, թէ միայն ի տեսանել զքեզ, դարձուցից և քեզ զթագաւորութիւնդ քո, և գրեցից զքեզ ժառանգ յաւիտենից աշխարհիդ և քաղաքիդ քոյ...։ Հաւատաց վասն երդմանցն և խաչին, եթէ վասն խակութեան մտացն եթէ վասն երկիւղածութեան բարուցն՝ ոչ գիտեմ. տուեալ զբանալի քաղաքին ի Պետրոս... և յանձնեաց ի նա զամենայն հոգս աշխարհին մեծաւ դաշամբ և ուխտիւ։ Եւ ոչ եկաց ի պատուէր Վահրամայ և այլ ազատացն որ թագաւորեցուցին զնա, այլ նենգաւորին Սարգսի սադրելոյն լուեալ՝ ել ի քաղաքէն, և չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղևորութիւն. իբրև զձուկն ի կարթէ ըմբռնեալ կամ իբրև զհաւ ի ծուղակաց»[52]։

Պատմագիրը սրտի կսկիծով է Գագիկ II-ին դյուրահավատ, կարթն ընկնող «ձուկ» կամ ծուղակն ընկնող՝ «հավ» (թռչուն) համարում, որ Վահրամին ու իրեն թագավոր կարգող մյուս իշխաններին լսելու փոխարեն հավատացել է նենգ Սարգսի սադրանքներին։ Եթե կատարվածի մասին դատելու լինենք դրա արդյունքներով, ապա Գագիկ II-ի հասցեին ասված այդ խոսքերն ամենևին էլ խիստ չեն։ Սակայն մեզ թվում է, որ Գագիկն այնքան միամիտ չէր, որ հեշտությամբ խաբվեր, մանավանդ նրան արդեն հայտնի էին կայսրների ուխտադրժությունն ու սարդիսների դավաճանական գործունեությունը։ Կարծում ենք, որ անշուշտ և՛ Կոստանդին կայսեր «բարեկամական» նամակը, և՛ Պետրոսի ու Վեստ Սարգսի՝ թագավորի բացակայության ժամանակ երկիրն ու մայրաքաղաքը պաշտպանելու մասին տրված «երդումը» Գագիկի ուղևորության միակ պատճառը չէին, և նա անմնացորդ չէր կարող հավատալ դրանց անկեղծությանը։ Հայոց թագավորն ամենայն հավանականությամբ այդ վտանգավոր քայլին է դիմել առաջին հերթին նկատի ունենալով երկրի քաղաքական և ներքին անկայուն դրությունը՝ թուրք սելջուկների արշավանքների վտանգը, Աբուսվար էմիրի թշնամական դիրքը Անիի թագավորության նկատմամբ (քուրդ էմիրը յուրաքանչյուր հարմար առիթ օգտագործում էր Անիի դեմ ռազմական գործողություններ սկսելու համար), երկրի ներքին երկպառակությունները, որ կարող էին հարմար պահերին նորից բռնկվել, նրան հայտնի էր 1022 թ. Հովհաննես-Սմբատի շարաբաստիկ կտակը և այլն։ Այնպես որ Գագիկի Բյուզանդիա գնալու հիմնական պատճառն աշխարհակալ մեծ պետության հետ լեզու գտնելու մեծ ցանկությունն էր, որով Հայոց թագավորն ավելի կկայունացներ իր երկրի ընդհանուր կացությունը։ Թե չէ բանն այնպես ներկայացնել, թե իբր Հայոց թագավորը «դյուրահավատ» «մանուկ» էր և անտեղի իրեն ձգեց թակարդի մեջ, առնվազը միամտություն կարելի է համարել։ Հետևապես դավադիրներն էլ հենց օգտվել էին երկրի կացությամբ շատ անհանգրստացած թագավորի ձգտումներից։

Այսպես թե այնպես, Հայոց թագավորը, Արիստակես Լաստիվերացու արտահայտությամբ «չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղևորութիւն»[53]։

Մատթեոս Ուռհայեցու ասելով, Կոստանդին Մոնոմախը Հայոց թագավորին ընդունում է արքայավայել և «աւուրս ինչ մեծարեաց զնա»[54]։ Սակայն շուտով կտրուկ փոխում է իր վերաբերմունքը. Հայոց թագավորն իրոք որ գերված ու ծուղակն էր դցված ամենաստոր միջոցներով։ Պատմիչը պատմական իրողությանը դրամատիկական ձև տալով, վկայում է, որ Գագիկը Կոստանդնուպոլիս գնալուց որոշ ժամանակ անց՝ մինչև իր վերադարձը, Անին պաշտպանելու համար նրան երդումնագիր տված «նենգաւուրքն», Պետրոս կաթողիկոսի և Վեստ Սարգսի գլխավորությամբ, «առաքեն քառասուն բանալին զքաղաքին Անւոյ առ թագաւորն Մոնոմախն և ի հետ թուղթ՝ թէ Անի քաղաքն և ամենայն արեւելքն քեզ եղեւ»[55]։

Պատմագրական տեսակետից այդ պահն Արիստակես Լաստիվերացին նկարագրում է ավելի արժանահավատ ձևով, առանց դրամատիկական-գեղումների։ Նա վկայում է, որ Հայոց թագավորին տեսնելուն պես՝ կայսրը մոռացավ իր տված բոլոր երդում-

---

[52] Արիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն*, էջ 61—62։

[53] Նույն տեղը, էջ 62։

[54] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 94։

[55] Նույն տեղը, էջ 94—95։

ները և նրան արգելափակելով, պահանջեց իրեն հանձնել Անին, փոխարենը խոստանալով «զՄելիտինէ և զգաւառսն որ շուրջ զնովա»[56]։

Հայոց թագավորը կտրականապես մերժում է կայսեր առաջարկ-վերջնագիրը։ Մ. Ուռհայեցու հիշատակության համաձայն, Հայոց թագավորը կալանավորված վիճակում 30 օր ապարդյուն պայքար էր մղում իր իրավունքների ու Անիի ճակատագրի համար։ Նա մերկացնում է Կոստանդին կայսեր ուխտադրժությունն ու սուորությունը, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի, Վեստ Սարգսի և մյուս բյուզանդամոլ իշխանների օրինազանցությունն ու դավաճանությունը, 1022 թվականի Տրապիզոնի զազրելի գործարքը։

Արիստակես Լաստիվերտցին վկայում է, որ այդ խնդրով Կոստանդնուպոլիս է գնացել նաև Գրիգոր Մագիստրոսը և «իբրև եթէ ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր, յառաջ կացեալ տայ զբանալին զթագաւորն, և զամենայն գիւր զՀայրենի ժառանգութիւնն», կայսրից փոխարենը ստանում մագիստրոսության պատիվ և քաղաքներ ու գյուղեր բյուզանդական Միջագետքի սահմաններում[57]։ Պատմագիրը ոչ մի խոսք չի ասում Գագիկ II-ին ազատելու համար կայսեր առաջ միջնորդելու մասին։ Այնպես որ անհավանական է որոշ հեղինակների այն կարծիքը, թե Գրիգոր Մագիստրոսը Կոստանդնուպոլիս էր գնացել առաջին հերթին Անիի ճակատագրի հարցով։ Իրոք, նա իբրև հեռատես և «խելամիտ» անձնավորություն, անհանգստացած էր տեղի ունեցած դեպքերից։ Սակայն մեր կարծիքով, նրան ոչ թե անհանգստացնում էր Գագիկի ու Անիի վիճակը, այլ իր Հայրենի կալվածքների ճակատագիրը՝ դրանց փրկության հարցը, որի միակ միջոցը համարեց Բյուզանդիային հանձնելը և փոխարենը Միջագետքում հաստատվելը։

Կորուստն անդառնալի էր։ Իրավունքը իրադրության տիրոջ կողմն էր։ Կայսրն իր ձեռքի տակ ունենալով 1022 թվականի կտակը, Անիի քառասուն բանալիներն ու դավաճան իշխանների երդումնագիրը, որ ուղարկել էր Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, վերջ ի վերջո Գագիկ II-ին հարկադրում է հրաժարվել Անի վերադառնալու ու իր թագավորությանը տեր դառնալու մտքից, Հայոց մայրաքաղաքն ու Բագրատունիների թագավորությունը համարելով Բյուզանդիայի «օրինական ժառանգությունը»։

Ինչպես երևում է, կայսրը սակարկել է նաև Անիի և համանուն

[56] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 61։
[57] Նույնը, էջ 62։

թագավորության դիմաց Գագիկ II-ին տրվելիք տարածքների շուրջը։ Վերը մեջբերված վկայության մեջ ասված է, որ Կոստանդին կայսրը խոստանում էր Բագրատունիների թագավորության և մայրաքաղաքի դիմաց Հայոց թագավորին տրամադրել Մելիտինե քաղաքը յուր շրջակայքի գավառներով։ Սակայն հետագայում, ինչպես կարելի է կռահել նույն Արիստակես Լաստիվերտցու մի այլ հիշատակությունից[58], կայսրը, ըստ երևույթին հրաժարվել է այդ մտքից և Գագիկ II-ին է տրամադրել ավելի երկրորդական նշանակություն ունեցող տարածքներ՝ Կալոն-Պեդատն ու Պիզու քաղաքները և դրանց շրջակայքը, ինչպես տեղեկացնում է Մատթեոս Ուռհայեցին[59]։ Հենց այդտեղ էլ Բագրատունի վերջին թագավորը մնաց իբրև «աքսորական»։ Ճիշտ է հետագայում ամուսնանալով Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդի Դավթի դստեր հետ, նա տիրում է նաև վերջինիս իշխանության տակ գտնվող գավառներին, որովհետև, ինչպես Լաստիվերտցին է տեղեկացնում, Դավիթն այլ զավակ չուներ[60], բայց այդ ձեռքբերումները նույնպես էապես չէին փոխել նրա դրությունը։

Բյուզանդական կայսրն առատաձեռն դտնվեց Հայրենի քաղաքի վաճառքի գլխավոր գործող անձի՝ Պետրոս կաթողիկոսի նկատմամբ. «զչնորհակալիսն և զտրից տուրսն կաթուղիկոսին հատուցին, յորմէ զքաղաքն առին»,— գրում է Արիստակես Լաստիվերտցին[61]։

Որոշ դեպքեր տրամաբանական վախճանին հասցնելու մղումով, մենք մի փոքր խախտեցինք ժամանակագրական կարգը։ Այժմ վերադառնանք հիմնական խնդրին։

Անիում դեռևս անտեղյակ էին իրերի իսկական դրությանը, երբ Կոստանդին Մոնոմախը, Գագիկին դահաղրկելուց հետո, ըստ Մ. Ուռհայեցու, 1044 թվականին, ներքինի Պատակամանոս զորավարի հրամանատարությամբ մի հսկա բանակ է ուղարկում Անին գրավելու համար։ Բյուզանդական ստվարաթիվ բանակը մոտենում է ընդհուպ Անիի դռներին։ Այս էլ ո՞րերորդ անգամ կայսերական զորքերը ուղղակի սպառնում են Հայոց մայրաքաղաքը գրավել։ Ոտքի են կանգնում Հայոց զորքը և ամբողջ բնակչությունը[62]։ Գագիկ II-ի կողմից բերդապահ նշանակված Ապիրատ իշխանի գլխավորությամբ Հայոց զորքն ու նրան միացած աշխար-

[58] Նույն տեղը, էջ 63։
[59] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 95։
[60] Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 63։
[61] Նույն տեղը։
[62] Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 96։

հազորը հենց Անիի դռների մոտ տեղի ունեցած արյունահեղ մարտում պարտության են մատնում ներքինու բանակին և ետ շպրտում դեպի արևմուտք։ Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ երբ բյուզանդական զորքը մոտեցավ Անիին. «յայնժամ ելանէին ամենայն քաղաքն միաբան ի պատերազմ ի դուռն քաղաքին Անւոյ և դարձուցին ի փախուստ զօրսն Հոռոմոց և կոտորելով արարին զնոսա հալածականս...»[63]։

Շուտով հայտնի է դառնում տեղի ունեցած ողբերգությունը։ Լուր է հասնում, որ Բագրատունի երիտասարդ թագավորն այլևս չի վերադառնալու, որ նա իր թագավորության ու մայրաքաղաքի դիմաց կալվածքներ է ստացել կայսրության տարածքում և այնտեղ էլ հաստատվել։ Հայոց մայրաքաղաքի կորստյան գույժը մեծ սուգ է առաջացնում զորքի և քաղաքացիների լայն շրջաններում։ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Ընդ իբրև իմացան զօրքն Հայոց՝ թէ թագաւորն Հայոց այլ ոչ է ելանելոց յարեւելս և ծանեան զնենգութիւն նախարարացն Հայոց առ հասարակ ամենայն տունն Հայոց. և արարին ամենայն քաղաքն ժողով ուր էին դերեզմանն ամենայն Հայոց առաջին թագաւորացն և անդ լային զանտիրանալն ազգին Հայոց. լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց և կոծ եդեալ առ հասարակ լային զթագաւորն իւրեանց զԳագիկ»[64]։

Դրա հետ միաժամանակ միջոցներ են փնտրում Անիի ճակատագիրը ընդունելի ձևով տնօրինելու համար։ Բյուզանդական խարդախություններից զայրացած՝ աննեցիները կայսերական տիրապետությունից գերադասում են հարևան տիրապետողներից որևէ մեկի իշխանությունը։ Ոմանք առաջարկում են Անին ու Համամնուն թագավորությունը հանձնել Վրաց թագավորին, ոմանք՝ Արխազաց թագավորին, ոմանք՝ Դավիթ Դվինացուն, ոմանք էլ, նույնիսկ, Դվինի էմիրին, որ խնամիական կապերով կապված էր Բագրատունիների հետ[65]։

Առեղծվածային է մնում այն հարցը, թե ինչո՞ւ այդ թեկնածուների շարքում չեն թվարկված Բագրատունի երկու թագավորների՝ Տաշիր-Զորագետի ու Կարսի թագավորների անունները։ Չէ որ Անին ու Շիրակը դրանցից որևէ մեկին տալը մեծապես կհզորացներ ովյալ հայկական թագավորությունը և ընդհանրապես երկրի քաղաքական անկախության համար կստեղծվեր հուսալի հենարան։ Մի՞թե Անիի հայրենասեր իշխանավորներն այդ մասին

[63] Նույն տեղը, էջ 96—97։

[64] Նույն տեղը։

[65] Տե՛ս Առիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 61—62, Н. Я. Марр. Ани, էջ 24, Ստ. Անի, էջ 337 և այլուր։

ամենևին չէին մտածում, կամ «Արդյոք Կարսի Բագրատունիները Դվինի էմիրների՞ց էլ հեռու էին աննեցիներից, թե կատաղի քրշնամությունը Բագրատունյաց հարազատ տոհմի դեմ չէր թույլ տալիս նրանց անունը տալ»,— մտորում է Լեոն[66]։ Իրոք որ դժվար է այդ առթիվ որևէ բան կռահել։ Արդյոք դրանում որևէ դեր չե՞ն խաղացել Տաշիր-Զորագետի թագավորների բշնամական գործողությունները, որ ծայր էին առել Հովհաննես-Սմբատի թագավորության առաջին տարիներից, կամ Կարսում Բյուզանդիայի ունեցած ուժեղ ազդեցությունը, որը նույնպես կարող էր հակակրանք առաջացնել Գագիկ թագավորի նկատմամբ։ Այս հարցերն Անիի Բագրատունիների թագավորության վերջին տարիների քաղաքական կյանքի լուսաբանման համար կարևոր, բայց փաստերի բացակայության պատճառով, առայժմ անլուծելի են։ Այնուամենայնիվ, կարելի է հավանական համարել, որ Կարսի և Տաշիր-Զորագետի թագավորների անտեսումը գալիս էր բյուզանդամոլներից։ Մի՞թե հասկանալի չէ, որ Վրաց և Աբխազաց թագավորների կամ Դվինի էմիրի նկատմամբ ավելի հեշտ կլիներ Բյուզանդիային առաջնություն տալը, քան Կարսի կամ, նույնիսկ, Տաշիր-Զորագետի ազգային թագավորություններին։

Այդպիսի պայմաններում բյուզանդասերներին դժվար չէր կշեռքի նժարը առանց մեծ դժվարության թեքել իրենց կողմը և օգտվելով հասարակության մեջ մայրաքաղաքի ճակատագրի շուրջն առաջացած խմբավորումների տարակարծություններից, «գլխավորներին» համոզել Անին Համամնուն թագավորության հետ հանձնելու Բյուզանդիային։ Ըստ երևույթին քաղաքի բոլոր «գլխավորների» կողմից վերջ ի վերջո ընդունելի ելքը համարվել է վերջինը, հետագա դիմադրությունը համարելով անիմաստ, մանավանդ որ արդեն որոշակի էր դարձել թուրքական վաչկատուն ցեղերի ներխուժման վտանգը, և անիշխանությունը կարող էր ավելի մեծ դժբախտությունների պատճառ դառնալ։

Անին անմիջականորեն Բյուզանդիային հանձնելու մասին լավատեղյակ երկու պատմագիրների վկայություններն, այնուամենայնիվ, իրարից որոշ չափով տարբերվում են։ Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ Հայոց կաթողիկոսը տեսնելով քաղաքացիների կողմից այլ թեկնածուների առաջքաշումը՝ հատուկ գրությամբ հայտնում է Սամոսատ քաղաքում նստող բյուզանդական կառավարիչին, որպեսզի նա տեղեկացնի կայսրին, թե նա «գի՛նչ հատուցանէ փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս որ

[66] Ստ. Անի, էջ 337։

յաշխարհիս են»։ Եվ ապա շարունակում. «Իսկ նա իբրև լուաւ փութապէս ծանոյց թագաւորին. և լուեալ թագաւորին, զանձիւք և իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, և այնու տիրեցին Անւոյ և ամենայն աշխարհին»[67]։

Մատթեոս Ուռհայեցին Հայոց դավաճան կաթողիկոսի այդ վերջին զազրելի գործարքի մասին ոչինչ չի հաղորդում։ Լինելով մի փոքր ավելի ուշ շրջանի հեղինակ, նա ըստ երևույթին պարզապես խնայել է Հայոց Հայրապետին, ինչպես հետագա շրջանի ուրիշ շատ հեղինակներն են լռությամբ անցել նրա ազգադավ գործունեության կողքով։ Մեղ թվում է, որ դա կարող էր լինել նաև այն բանի հետևանք, որ Պետրոսը նույնպես հալածանքի ենթարկվեց։ Բացի դրանից, միանգամայն տրամաբանական է, որ Ուռհայեցու ժամանակներում Անիի թագավորության անկման մանրամասները որոշ չափով մոռացության էին տրվել, իսկ որոշ բաներ էլ՝ «ներվել»։ Այդ բոլորով հանդերձ, Մատթեոս Ուռհայեցին նույնպես ճշմարտացիությամբ է հաղորդում Անիի թագավորության անկման պահի մասին, գրելով, թե՝ «Եւ յորժամ անճարեալ հաւանեցան քաղաքն և ամենայն զօրքն, և գրեցին առ զօրապետն Հոռոմոց ի Պառակամանոսն և երդմամբ կոչեցին զնա ի քաղաքն Անի և եառն զքաղաքն Անի ի ձեռս Հոռոմոց, և խախտեալ փլաւ տէրութիւն ազգին Բագրատունեաց»[68]։

Բյուզանդիան հաստում է իր նպատակին։ 1045 թվականին նրա զորքերն առանց կռվի մտնում են Անի։ Ավելի քան 160 տարի տևած Բագրատունիների թագավորությունը վերանում է պատմական ասպարեզից և դրանով Անին դադարում է ինքնուրույն պետության մայրաքաղաք լինելուց։ Արիստակես Լաստիվերտցու դիպուկ արտահայտությամբ՝ Բյուզանդիան Անին գրավել է ոչ թե պատերազմի կարգով, այլ խաբեությամբ. «Արդ ի չորեքհարիւր և իննսուն և չորս թուականին (494+551=1045 թ.) առաւ Անի, ո՛չ պատերազմի օրինիւ, այլ պատիր բանիւ...»[69]։ Իսկ Սամվել Անեցին Բյուզանդիայի խարդախ և մեր ժողովրդի համար կորստաբեր այդ քաղաքականության մեղսակից հայերին՝ Պետրոս կաթողիկոսին, Վեստ Սարգիս իշխանին և Գրիգոր Մագիստրոսին բնութագրում է որպես մայրաքաղաքը նենգաբար կայսրին հանձնողների. «Էէր Պետրոս և ազատ Սարգիս և Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ և զԱնի եառն ի կայսրն Յունաց»,—գրում է նա[70]։

---

67 Արիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն*, էջ 62—63։

68 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 97։

69 Արիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն*, էջ 61։

70 Սամվել Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...*, էջ 107։

Անիի գրավումը և Բագրատունիների թագավորության անկումը սրտի կսկիծով է ողբում Արիստակես Լաստիվերտցին, ինչպես իր ժամանակին Հայոց պատմահայրն է ողբացել Արշակունիների թագավորության անկումը։ Նա իր ողբը ստեղծել է երկու հակադրությունների հիման վրա՝ քաղաքական անկախության շրջանի գովաբանման և բյուզանդական տիրապետության կորբստարեր ու մռայլ ժամանակի նկարագրման հիման վրա։ Եվ իզուր են որոշ ուսումնասիրողներ Արիստակես Լաստիվերտցուն մեղադրում Բագրատունյաց շրջանի իրականությունը իդեալականացնելու, «անտեղի» ավելի վառ ներկայացնելու մեջ։ Նա, մեր կարծիքով, գովաբանելով Բագրատունիներին, պարզապես դրանով արտահայտել է իր հայրենասիրությունը, մեր ժողովրդի համար երկրի քաղաքական անկախության կարևորությունը։ Բյուզանդական զորքերի շորս արշավանքների, դրանց հետանքով երկիրն ավերելու և օտարի տիրապետությունն այնտեղ հաստատվելու մասին կրկիծով նշելուց հետո, նա գրում է. «...զդող առեալ ձեռինս՝ զոճ տողիս ոչ կարեմ յառաջ խաղացուցանել. զի դառն է պատմութիւնս, և բազում ողբոց արժանի։

Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք, և զօրացն՝ զդարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալ, ուրախական երգոց ի բանից միայն լինէին հանդէսք...»[71], և այլն։ Իր անկախ երկրի գովքը անելուց հետո, պատմիչը նկարագրում է քաղաքական անկախության կորստով երկրում ստեղծված դառն վիճակը. «Արդ այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զզերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի սխուր դիմօք իբրև զկին նորահարսն՝ մնացեալ յայրիութեան։ Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս։ Սնապտոյտ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ...։ Արքունական ապարանքն աւերակ և անմարդի։ Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչաց...։ Այժմ յողբս փոխեցաւ մեզ ամենայն, և ուրախութեան պատմուճանն այն յարջնազգեստ խորգ փոխեցաւ։ Ո՛ր լսելիք տանիցին զիշուատութեանս մերոյ զպատմութիւն։ Ո՛ր սիրտ քարեղէն, որ ոչ լքանի հառաչմամբ և բեկանի հեծեծելով...։

---

71 Արիստակես Լաստիվերացի, *Պատմութիւն*, էջ 58—59։

Արդ այս ամենայն ի վաճառէն յայնմ հանդիպեցաւ Հայոց՝ զոր յառաջ սակաւ մի յիշեցուք: Այս վաճառ անմարդագոյն զոլ թուի ինձ քան զՅուդային...»[72]:

Իսկ այդ վիճակը, ինչպես տեսնում ենք, նա համարում է թշվառ ու ողբերգական: Նա նկարագրում է մի սգվոր երկիր, որի զորքերը ցիրուցան են եղել, արքունական ապարանքը՝ ավերվել ու անմարդաբնակ դարձել, երկիրն ամբողջապես մարդաթափ եղել: Եվ, խիստ խտացված գույներով ներկայացված այդ տխուր իրականության պատճառը նա համարում է Հայրենիքի վաճառքը օտարին:

Անիի թագավորության անկումը ողբացել են նաև այլ հեղինակներ, և այդ այնքան տարածված մտայնություն է եղել, որ ավանդույթի ուժ է ստացել՝ շատ դեպքերում առանց էական փոփոխության տեղ գտնելով ուշ շրջանի պատմաբան-մասնագետների աշխատություններում[73]:

---

[72] Նույն տեղը, էջ 60—61:

[73] Նշվածներից բացի, Անիի անկման պատմության մասին տե՛ս նաև հետևյալ աղբյուրները և ուսումնասիրությունները ու այլ կարգի գրքերը. Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., էջ 105, 108, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58, Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 61—63, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 91—93, Գրիգոր Կամախեցի (կամ Պարանաղցի), Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 4, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Բյուզանդական աղբյուրներ, Հովհաննես Սկիլիցես Թարգմ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, 146—150, Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. II, Երևան,, 1956, էջ 263, Հովհաննես Դարոնեցի, Ժամանակագրութիւն Հայոց, ս. Պետերբուրգ, 1891, էջ 7—8, Միքայել Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 33—44, 46—49, Տեղեկագրութիւն Անի քաղաքին հանդերձ տեսարանացոյց պատկերօք, խմբ. Հովհաննես Տեր-Աբրահամյան, Թեոդոսիա, 1867, էջ 20, Ալբունյան Առշակ, Տեղագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մօլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, էջ 4—11, «Փորձ» միամսյա հանդես, Տփխիս, 1880, № 5, էջ 40, Կոստանյանց Կ., Տեր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 7—13, 19—29, 35, 52, Գևորգյան Մելիքսեդեկ, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, էջ 57—58, Էփրիկյան Սուքիաս, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վիեննա, 1903—1905, էջ 180—181, Х. Ф. Б. Линч, Армения, т. I, էջ 465, Պալաճյան Գրիգորիս, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, էջ 8—11, J. Laurent, L'Arménie entre Buzance of l'Islam depuis la canquête arabe jusquén 886, Paris, 1919, էջ 294—295, Կ. Յ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, էջ 27, Н. Я. Марр, Ани, էջ 24, 28—29, 34, Առշակ Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրե, 1955, էջ 30, 501—502, Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, էջ 47, Լեո, Հայոց պատմություն, հ. 2, էջ 651—652, 659—660, 673—674, 677—678, 679—681, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 35—36, 49, Ս.

Թվում է, թե մեր շարադրանքից դժվար չէ տեսնել Անիի և Բագրատունյաց թագավորության անկման հիմնական պատճառները, որոնք տարբեր առիթներով նշվել են նաև նախորդ մի շարք ուսումնասիրողների կողմից: Երկրի ֆեոդալական մասնատումն առանձին մանր թագավորություններին, դրանց միջև մղվող պայքարը, բուն Անիի թագավորության տրոհումը երկու մասի, Բյուզանդիայի և, մասամբ, Անդրկովկասի ֆեոդալական պետությունների հաճախակի հարձակումները, երկրի ներսում ավատական խմբերի միջև ծայր առած պայքարը, որ հանգեցրեց դավաճանական մի ամբողջ խմբի առաջացմանը, արևելյան վաչկատուն ցեղերի՝ թուրք սելջուկների ավերիչ արշավանքների օրավուր աճող վտանգը, որ իրեն արդեն զգացնել էր տվել մի քանի մասնակի հարձակումներով, Բյուզանդիայի նենգ, «բաժանիր և տիրիր» սկզբունքով, սուտ խոստումներով ու կաշառքով ղեկավարվող քաղաքականությունը, որին հաջողվել էր ամենուրեք սերմանել երկպառակություններ, դավաճանություն, ներքին պայքար՝ այս բոլորը դեպի անկում տարան Բագրատունիների թագավորությունն ու նրա մայրաքաղաք Անին: Երկիրն ու նրա քաղաքները, դրանց թվում և Անին, տնտեսական բարգավաճման նոր շրջան ապրեցին միայն XII դարի վերջերին ու XIII դարի առաջին տասնամյակներին, որը, հետագա ժամանակների հարցերի հետ, կներկայացվի սույն մենագրության երկրորդ գրքում:

Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 61—63 և այլուր: Անիի գրավումը Բյուզանդիայի կողմից տարբեր սկզբնաղբյուրներում և տարբեր հեղինակների կողմից նշված է նաև 1044 կամ 1046 թվականը, որ անընդունելի է:

Т. Х. Акопян

ИСТОРИЯ АНИ

(с древнейших времен до 1045 г.)

Резюме

Столица средневековой Армении—город Ани входил в состав области Ширак, страны Айраратской. Он занимал небольшое треугольное плато, которое с трех сторон ограничено рекой Ахурян и ее правым притоком Цахкоцадзор (Ани).

На территории Ани еще в VII—VIII вв. до н. э. существовало укрепленное поселение. Основываясь на одном из свидетельств Страбона, происхождение топонима «Ани» связывают с названием племени аения или аниани, колыбелью которого была Атропатена.

Уже в античную эпоху на территории Ани, на скальном мысу Кыз-Кала (Ахчкаберд—«Девичья крепость») были возведены различные оборонительные и культовые сооружения.

Довольно богатые археологические материалы были обнаружены на кладбище села Ани, неподалеку от развалин города, а также в пещерах Цахкоцадзора.

С IV века области Аршаруник и Ширак переходят к нахарарскому дому Камсараканов, и Ани становится одной из их крепостей. Как таковая, Ани в армянской историографии упоминается уже с V века, в связи с освободительными войнами.

После этого будущий город несколько раз упоминается в полумифических сказаниях VI—VII веков. В VII веке Камсараканы достигли вершины своего могущества, и их княжеская резиденция Ани превратилась в сильную и благоустроенную крепость.

Развалины и следы ее сооружений обнаруживаются на Ахчкаберде и в самой Цитадели города, где, повидимому, находился княжеский престол Камсараканов.

В ходе археологических раскопок в Цитадели Ани найдены отдельные участки оборонительной стены. Предполагается, что в эпоху Камсараканов были построены также водохранилище Цитадели, дворцовая церковь-базилика, орнаментированная, т. н. «гранатовая церковь», а также часть «картунов»—пещерных жилищ. Со временем наивысшего подъема княжества Камсараканов связана деятельность основателя целого ряда естественных наук в Армении Анания Ширакаци, имя которого обычно связывают с областью Ширак или с поселением Ширакаван (впоследствии Ераздгаворс).

Род Камсараканов, который в конце VIII века уже сходил с политической арены вследствие жестокой политики арабского халифата, продал области Аршаруник и Ширак роду Багратуни. Последние фактически силой отняли эти области у арабов, уплатив прежним владельцам—Камсараканам определенную сумму. Так начинается Багратидский период истории Ани. Вначале, с конца IX века и, повидимому, до 40-х годов X века, Ани оставался крепостью, а потом он превратился в мощный укрепленный город. К 961 г. Ани уже был стольным городом ширакской ветви Багратидов, крепостью-казной их царства.

Тогда же были построены церковь св. Григория-Абугамренц, которая своим планом и наружными треугольными нишами тесно связана с храмами VII века, маленькая церковь у Смбатовых стен, развалины которой сохранились до времени археологических раскопок, т. н. здание с пилонами, некоторые части Ашотовых стен и т. д.

В этой связи следует указать, что неприемлема и противоречит его же собственным исследованиям точка зрения Н. Я. Марра, согласно которой Ани до превращения его в столицу «не был настоящим городом, а являлся крепостью-дворцом некоронованного феодала».

В 961 году Ашот III с большой торжественностью провозглашает Ани столицей Армении. Начинается анийский период царства Багратидов. Как в военном, так и в политическом и экономическом отношениях Ани имел выгодное расположение. Превратив его в свою резиденцию, багратидские цари могли вести успешную борьбу за создание единого государства, хотя для этого еще не имелось необходимых социально-экономических условий. Всего за несколько десятилетий Ани превращается в большой город, возводятся его внутренние и внешние оборонительные стены, укреп-

ления Ахчкаберда и Цитадели, участки крепостных стен вдоль Ахуряна, Цахкоцадзора, Гайладзора. Был прорыт защитный ров, который во время опасности заполнялся водой; построены несколько мостов через Ахурян, комплекс царских дворцов, целые жилые кварталы, улицы, многочисленные церкви, княжеские чертоги, гостиницы-караван-сараи, картуны и др.

В 961—1045 гг. Ани становится одним из крупнейших городов Передней Азии, многолюдной, просторной, благоустроенной столицей, которая одновременно являлась важным экономическим и культурным центром, колыбелью политической жизни страны. Летописец того времени назвал его «вселенским городом».

В управлении столицей, наряду с возникшей со временем государственной администрацией, важную роль играли также органы самоуправления—«главы» города. В процессе общего экономического подъема Армении в X—XI веках, развивается и Ани, хотя по своему характеру он оставался типично феодальным городом.

В экономической жизни города важную роль играли ремесла и торговля. Здесь насчитывались десятки различных ремесел (кузнечное и медницкое дело, гончарное производство, выделка оружия, ткачество, строительные ремесла и т. д.).

Углубилось внутриремесленное разделение труда, ремесленники создавали братства, которые впоследствии были названы «амкарствами» (цехами).

При археологических раскопках в Ани были обнаружены в большом количестве остатки ремесленной продукции, различные инструменты. В городе имелось несколько десятков маслобоен и мельниц. По своему значению ничем не уступала ремеслу и торговля. Ани был торговым городом. Здесь были одинаково развиты внутренняя, внешняя и транзитная торговля. Торговля, ее система, денежные единицы, единицы мер и весов, цены на товары, пошлины—все это подлежало контролю должностных лиц. Торговыми точками являлись рынки, лавки («кухпаки»), караван-сараи, мастерские и т. д. Торговали сельскохозяйственными продуктами, ремесленными изделиями. Рынки и лавки в городе были распределены неравномерно.

Ани располагался на пересечении местных и международных путей, его торговые связи простирались до далеких Китая и Индии. В город ввозились и вывозились из него многие товары.

Следует отметить, что значительная часть населения Ани занималась сельским хозяйством—земледелием, животноводством, овощеводством.

В анийских эпиграфических надписях, как и в сочинениях историков, содержится довольно много сведений о городских налогах, податях и принудительных работах. Их сравнительно полный список составил Г. Алишан, согласно которому в городе и прилегающих к нему областях в эпоху Багратидского царства и непродолжительного византийского владычества существовало несколько десятков налогов и податей (садовый налог, тастак, камин, пахт, капичк, барщина и др.), которые взимались «крпичами» (сборщиками) и подчиненными им надзирателями.

Как отмечалось, в X—XI веках Ани являлся типичным феодальным городом, столицей Ани—Ширакского царства, стоявшего во главе нескольких более мелких царств. Основную массу его населения составляли крупная и мелкая землевладельческая верхушка и горожане. В городе существовали четыре формы собственности: государственная, крупная частновладельческая, церковная и мелкая частновладельческая. Особенно быстро расширялась церковно-монастырская собственность, которая в основном росла за счет дарений. С течением времени углубилось классовое расслоение городского общества и постепенно сформировалась новая общественная прослойка, так называемые мецатуны (обладатели крупного состояния). Эта социальная категория состояла из ростовщиков, купцов, подрядчиков. Они носили титул «парон» или «патрон» и занимали важное положение в обществе XII—XIII веках, в период, последовавший за падением Багратидского царства.

Численность населения Ани росла с необычайной для средневековья быстротой, в основном вследствие механического прироста, за счет прибывавших в город из различных частей Ани—Ширакского царства и обосновывавшихся в нем людей. В изучаемое нами время эмиграция жителей из Ани не наблюдалась. В эти века население Ани вероятно дости-

гало 100 тысяч человек. Оно распределялось по общественным слоям. В Цитадели жили царь и его семья, придворные, отряды телохранителей. В самом городе проживали в основном торговцы и ремесленники, а в предместьях—земледельцы и неимущий люд. В этническом отношении в X—XI веках Ани был полностью однородным городом. Его население состояло из армян, число лиц, принадлежавших к другим народностям было ничтожно.

Общественная жизнь столицы характеризовалась такими заметными явлениями как классовая борьба в ее различных формах, ослабление религиозного аскетизма (что нашло свое отражение в «Видении», приписываемом Ованесу Козерну), в формировании светского мышления. Населению Ани было присуще свободолюбие, жители любили свой родной город, гордились своим анийским происхождением.

Ани был густо заселен. За стенами Ани простирались его обширные, также плотно населенные, пригороды. Подобно другим крупным городам средневекового Востока, Ани состоял из трех частей—Цитадели, собственно города («шахастана») и пригородов. Наряду с надземным Ани существовал и Ани подземный. В связи с быстрым ростом города, здесь, во второй половине X века развернулось крупномасштабное строительство. Сооружения, возведенные в Ани в этот период, можно разделить на три группы:

оборонительные — укрепления Ахчкаберда и Цитадели, Ашотовы и Смбатовы стены, ров, дополнительные стены, построенные вдоль ущелий Цахкоцадзора, Гайладзора и Ахуряна, стены в пригородах и укрепленные пункты на подступах к столице;

церковные или культовые—Кафедральный собор, церкви Гагкашен, Аракелоц, св. Спасителя, Овви и т. д.;

гражданские—царские и княжеские палаты, жилые кварталы, гостиные дворы, мосты, лавки, пещерные жилища, водопровод, бани, маслобойни, мельницы и т. д.

Ани подробно изучен архитекторами и историками искусства. В этом деле наибольшая заслуга принадлежит Торосу Тораманяну. Исследования показали, что архитектура Ани формировалась на основе классической армянской архитектуры предшествующей эпохи и в дальнейшем развивалась в соответствии с потребностями времени. Она испытала

влияние архитектуры, развивавшейся в других областях Армении и в соседних странах и, в свою очередь, воздействовала на нее.

Поэтому нельзя согласиться с мнением Н. Я. Марра, будто архитектура Ани X—XI веков является всего лишь повторением форм армянской архитектуры предшествовавшего периода, как и с его утверждением, что эпоха сельджукского владычества в архитектурном отношении была эпохой прогресса.

Анийской архитектуре были присущи следующие черты: простота планов, совершенная гармония между всем сооружением и его отдельными частями, обилие арок, колонн, скульптур, но без излишеств, отсутствие однообразия, мастерски исполненная кладка, высокое качество стройматериалов и т. д.

В силу указанных обстоятельств Ани стал крупнейшим центром средневековой армянской архитектуры, своего рода кузницей зодческой культуры, «законодателем» архитектурных направлений в Армении. Многие крупные специалисты в области истории архитектуры, в том числе и известный Стржиговский, считают, что армянская архитектура непосредственно воздействовала на византийскую и западноевропейскую архитектуру, хотя они не отрицают, что имело место и обратное влияние.

До нас дошли имена некоторых анийских зодчих, среди которых самым известным был Трдат—гениальный автор церкви Аргина, Кафедрального собора и церкви Гагкашен. Он творил во второй половине X века и в первые десятилетия XI века.

Планировочная структура Ани формировалась постепенно. Размещение улиц, переулков, дворов, площадей и разного рода сооружений носило более упорядоченный характер в Цитадели и собственно городе.

Ани застраивался не произвольно, а по определенному плану. Вместе с тем, в расположении ряда улиц просматривается бессистемность. В городе, вследствие его плотного заселения, свободных пространств было мало. Основные улицы начинались у ворот Смбатовых стен и шли к югу (улица, начинавшаяся у главных ворот археологической экспедицией была названа именем Марра). Ширина главных улиц дости-

гала 6 метров, они, как и площади, были вымощены плитами. Обычно улицы носили названия ремесленных и торговых цехов и братств. Ани имел зеленые массивы—огороды и цветники, довольно разветвленную сеть водопровода, бани, гостиные дворы.

Ани был городом архитектурных шедевров. К числу известных памятников, построенных здесь в эпоху Багратидского царства относятся: царский дворцовый комплекс с его приемными залами, церквами и вспомогательными сооружениями; двухэтажное здание с колоннадой, расположенное неподалеку от Цитадели, которое во второй половине XI века сельджуки превратили в мечеть (мечеть Мануче); две башни на дороге, ведущей из Ани в Оромос, назначение которых точно не выяснено; внешние и внутренние стены со своими входами и башнями; прекрасные однопролетные мосты через Ахурян; Кафедральный собор, храм Гагкашен, церкви Аракелоц, св. Спасителя, св. Григора-Абугамренца, Овви, Хамбушенц.

В Ани существовали в немалом числе разного рода школы, среди них и высшая школа. Город являлся одним из центров науки тогдашнего времени, здесь развернулась деятельность Григора Магистроса, Саркиса Вардапета. В XI веке был сделан ряд переводов. Имелись библиотеки—хранилища рукописей, собрания рукописей существовали также при церквах. Ани имел свою школу переписчиков, которая сформировалась полностью несколько позднее, в 12—13 веках.

Количество эпиграфических надписей, найденных в развалинах города, превышает две с половиной сотни.

В развитии армянского искусства Ани сыграл большую роль, оставил свой немеркнущий след. Особенно была развита скульптура, точнее прикладная скульптура, тесно связанная с архитектурой, но отдельных скульптурных памятников до нас дошло мало. Достойная внимания работа—это статуя Гагика I, установленная на стене храма Гагкашен.

Живопись в основном была связана как с рукописным делом, так и с архитектурой. Развитым видом живописи являлась миниатюра, затем фресковая живопись. В Ани имелся театр, с которым церковь боролась различными средствами. Развивалась литература, видными представителями которой в X—XI веках были Григор Магистрос, католикос Петрос Гетадарц, сын Григора Магистроса—Ваграм, а также Вардан Анеци.

Анийское царство достигает вершины своего могущества при Гагике I (989—1020 гг.). Однако после его смерти начинается период политического упадка, внутренних раздоров и посягательств внешних врагов.

Отрицательные последствия имела борьба между сыновьями Гагика I—законным царем Ованнесом-Смбатом и Ашотом, завершившаяся военным столкновением. В результате, в 1022 году царство Багратидов распалось на две части.

В последующем враждебные нападения на Ани совершили грузинский царь Георгий и курдский эмир Двина. Неспокойной была и внутренняя жизнь города. Под влиянием захватнической политики Византии в Ани сложились две партии—сторонников независимости страны и грекофилов. Вследствие византийской агрессии и подрывной деятельности грекофилов, царь Ованнес-Смбат был вынужден в 1022 году завещать Ани Византии.

После его смерти, в 1040—1044 гг. Византия предпринимает несколько походов для захвата своего «наследства», однако, армянское войско под руководством известного полководца Ваграма Пахлавуни и юного царя Гагика II Багратуни (1042—1045) наносит поражение императорской армии и отбрасывает ее от стен столицы.

Не сумев овладеть Ани силой оружия, византийский император Константин Мономах для достижения своей цели, по совету армянского князя, предателя Вест Саркиса, прибегнул к хитрости и вероломству. Под предлогом ведения дружественных переговоров он вызвал в Константинополь Гагика II и коварно лишил его престола, после чего послал большую армию для взятия Ани. Но и на этот раз византийцы потерпели поражение. Однако, узнав, что армянский царь навсегда лишен престола, и учитывая опасность нашествия турок-сельджуков, патриоты Ани были вынуждены пойти на соглашение с грекофилами и без боя сдать город Византии.

Таким образом, в 1045 году царство Багратидов сходит с исторической арены и Ани на определенное время попадает под власть Византии.

T. Kh. Hakopian

HISTORY OF ANI
(From ancient times to 1045)
Summary*

As early as the 8th-7th century B. C. the site of the famous mediaeval Armenian capital Ani was taken up by a habitation. Relying on a testimony of Strabo the origin of the name ANI is related to the tribe «Aenia» or «Anian» whose original a bode had been Atrpatakan. Still in ancient days various defence and cult structures were erected on the territory of Ani.

From the 4th century the provinces of Arsharunik and Shirak came under the sovereignty of the Kamsarakan family, of 'nakharar' stock[1], and Ani became a stronghold of that ruling dynasty. As a fortress Ani is recorded in the annals since the 5th century. Particular fragments of the defence wall have been dug out during archaeological excavations of the citadel of Ani. It is assumed that the reservoir of the citadel, the royal basilica church, the so-called ornamented «church with pomegranates» as well as part of the kartoons[2] were built under the Kamsarakans whose power dwindled at the close of the 8th century in consequence of the ruthless policy of the Arab Caliphate. As a result they sold the provinces of Arsharunik and Shirak to the Bagratuni dynasty. This marked at the same time the beginning of the Bagratuni period in the history of Ani. Initially, i. e. in the years 885—961, Ani was a stronghold which since the 40s and 50s of the 10th century became a notable fortress. In those days Ani was the seat of the Shirak branch of the Bagratunis—the fortress—treasury of the kingdom. It was during that period that the Abughamrents St. Grigor church was built which is closely related to the 7th century churches as to its plan and external triangular recesses, the so—called building with pylons. Again several parts of the Ashot wall and other structures were erected. N. Marr's view to the effect that before becoming a capital Ani

---

* Translated into English by P. M. Mesrobian

[1] feudal

[2] cave dwellings

allegedly «had not been a true city but a crown—invested fortified feudal estate» is at variance with the results of his own investigations.

In 961 Ashot VIII solemnly proclaimed Ani the capital of Armenia and this ushered in the Ani period in the reign of the Bagratunis. Ani commanded a convenient position as to defence, policy and economy. In a score of years Ani turned into a large city; internal and external defence walls were erected along with the fortifications of Aghjekaberd and Mijnaberd, parts of the walls of Akhurian, Tsaghkadzor, Glidzor, a defence moat which in time of danger was filled with water, some of the bridges over the Akhurian, the premises of the royal palace, entire residential quarters, streets, numerous churches, mansions of princes, caravan—inns, kartoons, etc. During 961—1045 Ani achieved fame as a major city of the Middle East—populous, extensive, prosperous—a capital of architectural masterpieces. It also won prominence as a notable economic and cultural centre the principal artery of the country's political life, which was termed «universally famed» by the contemporary historians. Apart from the government officials that came into being in course of time in the city's administration, self—governing bodies—the city's «chiefs»—also came to play a considerable part.

Handicraft and trade were of no lesser importance in the economy of the city. Ani boasted dozens of trades (blacksmithing coppersmithing, pottery, armoury, weaving, building, etc.). Within the crafts the division of labour had gained a firm footing, the artisans formed «brotherhoods», subsequently called guilds. During the excavation remnants of handicraft products were discovered in profusion in Ani, in addition to implements. Trade was no inferior in importance to craftsmanship. Ani conducted a profitable trade. Trade, its regulations, the currency, the measure and weight units, the prices of goods and the duty came under the supervision of state officials. The trading centre was made up of markets, shops, caravan houses, workshops, etc. The items for trade were farming products and handicraft goods. Ani was the hub of local and international routes, its trade routes extending as far as China and India. Part of the urban population was engaged in agriculture—husbandry, stock—breeding and vegetable growing.

The epigraphs of Ani as well as the writings of historians contain a fair amount of information concerning taxes, duties and forced labour. The taxes and duties, several dozen in number were collected by «kerpichs»[1] and their subordinate supervisors.

Standing at the head of some smaller kingdoms, Ani was during the 10th and 11th centuries the capital of the kingdom of Ani—Shirak. The bulk of its population consisted of large and petty land—owning upper layer and the urban population. Four forms of ownership could be distinguished in the city: state, large, clerical and petty proprietorship. Of these the clericalmonastic landownership was the one that expanded swiftly; it enlarged at the expense of contributions. The class stratification of the urban society intensified more and more and gradually a new social group shaped itself, the so—called group of «large trading houses», made up of usurers, tradesmen and contractors who held the title of «parons» or «patrons».

The population of Ani increased at a rate uncommon in the Middle Ages, mechanical growth accounting mainly for such increase. People flocked into Ani from various parts of the kingdom of Ani—Shirak. There is no evidence testifying to any emigration from Ani during the period under discussion. In those centuries the population of Ani must have reached one hundred thousand. Ethnographically Ani was a completely homogeneous city during the 10th and 11th centuries, its population being composed exclusively of Armenians with an insignificant portion of inhabitants belonging to other nationalities. The social phenomena manifested themselves in various forms of class struggle; in the decline of the rigid mode of religious life reflected in the vision ascribed to Hovhannes Kozern and in the formation of secular thinking.

Ani was a densely populated city. Thickly inhabited suburbs extended beyond the walls of the city. Like other major cities of the mediaeval East, Ani was divided into three parts: the citadel, the city proper («Shahastan») and the suburbs. The city was located both overground and underground.

Ani was a rapidly expanding city, and large—scale con-

[1] tax-collectors

struction was underway in the second half of the tenth and the beginning of the 11th centuries. In those days the constructions of Ani can be grouped into three divisions: defence (the strongholds of Akhjekaberd and Mijnaberd, the walls of Ashot and Sembat, a defence carving, additional walls erected along the gorges of Tsakhkotsadzor, Glidzor and Akhurian, suburban walls and fortified positions in the approaches of the city), church or cult (the cathedral, the churches of Gagkashen, Arakelots, St. Perkich, Hoviv, etc.) and civilian structures (palaces of kings and princes, residential quarters, inns, bridges, shops, rock—carved dwellings, sewage, baths, watermills, etc.).

The architecture of Ani was patterned by the classical architecture of the preceding period and developed with due account of the requirements of the time under the impact of and exercising its influence over the developing architecture of the various parts of Armenia and the neighbouring countries. N. Marr's view to this effect is inadmissible; he maintained that the 10th and 11th century architecture of Ani was allegedly a mere repetition of the forms of the Armenian architecture of the preceding period. It is equally erroneous to consider, as N. Marr did, that the Seljuk reign marked a progress in architecture. The distinctive features of the architecture of Ani were as follows: simplicity of design, complete harmony between the entire structure and its constituent parts, profusion of arches, columns and reliefs, yet without excesses, lack of monotony, great skill of masonry, high quality of building materials and the like. Ani was the most significant centre of meadiaeval Armenian architecture. A great number of distinguished specialists in the history of architecture, including the famous Strzigowski, believe that Armenian architecture manifested its influence over the architecture of Byzantium and Western Europe without denying the impact the former has been subject to. Mention is made of several architects of Ani with Terdat achieving great prominence (the second half of the 10th century and the first decades of the 11th). He was the gifted architect of the church of Argina, the cathedral of Ani and the church of Gagkashen.

The basic design of Ani took shape not straight away but gradually. The streets, the corridors, the yards, the squares and other structures were of a more regular shape in the citadel

and the city proper. The main streets originated from the gates of the Sembatian walls and extended southward (the archaeological expedition called the street originating from the main gate after Marr). The main streets were as wide as 6 metres; like the squares they were paved. The streets were usually named after the handicraft or trade guilds.

Ani was a city of architectural chef d'oeuvres. Architectural vestiges built under the reign of the Bagratuni dynasty include the buildings of the royal palace with its halls, churches and auxiliary constructions; the two—storeyed columnar building, close to the citadel, which the Seljuks turned into a minaret in the 11th century (the minaret of Manoucheh), the twin towers on the road from Ani to Horomos, their origin remaining uncertain; the internal and external walls of the city with their entrances and pyramids; the marvellous single—span bridges over the river Akhurian, the cathedral, the churches of Gagkashen, Arakelots, St. Perkich, Apughamrents St. Grigor, Hoviv and Khambushents.

Ani counted a good number of various schools, including one for more advanced studies. The city was renowned as a centre of contemporary science where Grigor Magistros and Sarkis Vardapet maintained their activities. A number of translations were done in Ani in the 11th century. The city had its own libraries—scriptories; the churches also possessed collections of manuscripts, Over 250 epigraphs have been discovered under the ruins of the city. Ani has left an indelible and brilliant imprint on the development of Armenian art history. Sculpture, more precisely applied sculpture, intertwined with architecture, has been a salient feature of the capital. Statuecraft was comparatively less developed. The only work that draws more or less attention is Gaguik I's statue erected on the wall of the church Gagkashen. Painting was also linked mainly with architecture and scriptorial art, with illumination as a more advanced branch of painting. Ani had a theatre of its own. During the 10th and 11th centuries the city excelled also in the literary writings of Grigor Magistros, the supreme patriarch Petros Guedatarts, Vahram, the son of Grigor Magistros and a certain Vartan Anetsi.

The kingdom of Ani attained the acme of its power under Gaguik I (989—1020). Soon after his death a period of political decline, civil strifes and encroachments by foreign enemies set in. Under the influence of Byzantine aggression and the subversive activities of the Grecophils Hovhannes—Sembat, the successor of Gaguik I, was compelled to devise Ani to Byzantium after his death.

Following his decease Byzantium launched during 1040—1044 several invasions to win over its «bequest». The brave Armenian troops led by commander Vahram Pahlavuny and the young Pahlavuny king Gaguik II (1042—1045) administered defeat to the imperial army and hurled it back from the walls of the capital. Failing to capture Ani by force of arms, the Byzantine Emperor Constantine Monomach resorted to fraud and perfidy. Under the guise of conducting friendly negotiations he invited Gaguik II to Constantinople and perfidiously dethroned him, whereupon he sent a large army to occupy Ani. Once again did the Byzantine army sustain defeat. However, when word came that the Armenian king had been stripped of regal power for good, and considering, on the other hand, the imminent danger of Turkish Seljuks, the patriots of Ani were forced to turn over the city to Byzantium in 1045. This put an end to the reign of the Bagratuni dynasty, and Ani passed temporarily under Byzantine sway.

ՎԿԱՅԱԿՈՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ

Աբեղյան Մ., *Երկեր, հ. Դ, Երևան, 1970*

Աբեղյան Մ., *Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1964*

Աբեղյան Մ., *Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ, Երևան, 1935*

Աբրահամյան Ա. Դ., *Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959*

Աբրահամյան Վ. Ա., *Արհեստները Հայաստանում 4—18-րդ դդ., Երևան, 1956*

Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909*

Ադոնց Ն., *Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948*

Ալթունյան Աբշակ, *Տեղագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, Ֆօքշան, 1877*

Ալիշան Ղ., *Այրարատ, Վենետիկ, 1890*

Ալիշան Ղ., *Հայապատում, հ. Ա, Վենետիկ, 1901*

Ալիշան Ղ., *Նշմարք Հայկականք, Վենետիկ, 1870*

Ալիշան Ղ., *Շիրակ, Վենետիկ, 1881*

Ալիշան Ղ., *Սիսական, Վենետիկ, 1893*

Ալիշան Ղ., *Սիսուան, Վենետիկ, 1885*

Ալիշան Ղ., *Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855*

Ալպոյաճյան Աբշակ, *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Ա, Գահիրե, 1941, հ. Բ, 1955*

«Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964

Անապատ Հ., *Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, հ. Բ, 1931*

«Աշխարհացոյց», Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963

Առաբել Դավրիժեցի, *Պատմութիւն, Վաղարշապատ, 1896*

Առաքելյան Բաբկեն, *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հ. 1-ին, Երևան, 1958, հ. 2-րդ, 1964*

Ավագյան Ս., *Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978*

«Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965

Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն, Թիֆլիս, 1912*

Բասմաջյան Կ. Յ., *Անիի անցեալն ու ներկան, Վենետիկ, 1923*

Բարխուդարյան Ս. Գ., *Դիվան հայ վիմագրության, պր. 4-րդ, Երևան, 1973*

Բարխուդարյան Ս., *Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963*

Բժշկյանց Միքայել, *Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830*

Գաբրիելյան Հ., *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1958*

Գալեմքյարյան Հ., Գրիգորիս Վ., *Յուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն, Վիեննա, 1892*

Գեղամյանց Հ., *Ախալցիխայից մինչև Անի, «Փորձ» հանդես, Տիֆխիս, 1880, № 5, 6—7, 8—9*

Գևորգյան Մելիխսեդեկ, *Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անւոյ, Ալեքսանդրապոլիս, 1903*

Գրիգոր Կամախեցի *(կամ Դարաճաղցի), ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915*

Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, *Ալեքսանդրապոլ, 1910*

Դանթե Ալիգիերի, *Աստվածային կատակերգություն, թարգմ. Արբուն Տայանի, Երևան, 1960*

Ջարպհանալանյան Գար., *Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897*

Ջարպհանալանյան Գար., *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889*

Էփրիկյան Սուքիաս, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վիեննա, 1903—1905*

Թովմա Արծրունի, *Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917*

Թորամանյան Թորոս, *Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, աշխատությունների երկրորդ ժողովածու, 1948*

Թօփճեան Յ., *Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962*

Ինճիճյան Ղուկաս, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822*

Ինճիճյան Ղուկաս, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ և Դ, Վենետիկ, 1835*

Լեո, *Անի, Երևան, 1963*

Լեո, *Երկերի ժողովածու, հ. 2-րդ, Երևան, 1967*

Լեո, *Հայոց պատմություն, 1-ին, Երևան, 1966*

Լեո, *Հայոց պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1969*

Լևոնյան Կարեգին, *Թատրոնը հին Հայաստանում, Երևան, 1941*

Լևոնյան Դ., *Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 1949, № 1—2*

Խաչիկյան Լ., *Արհեստագործության վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում 10—14-րդ դդ., ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., ե., 1958, № 3*

Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, Երևան, 1961*

Կոստանյանց Կ., *Վիմական տարեգիր, ս. Պետերբուրգ, 1912*

Կոստանյանց Կ., *Տեր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897*

Հակոբյան Թ. Խ., *Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան, 1959*

Հակոբյան Թ. Խ., *Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969*

Հակոբյան Թ. Խ., *Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968*

Հակոբյան Թ. Խ., *Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966*

Հակոբյան Թ. Խ., *Սովետական Հայաստանի քաղաքները, Երևան, 1977*

Հակոբյան Թ. Խ., *Անի, «Սովետական Հայաստան» ամսագիր, ե., 1977, № 7—8*

Հակոբյան Հովհ., *Ուշագրություններ, հ. Զ, Երևան, 1934*

Հակոբյան Վ. Ա., *Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951*

Հակոբյան Վ., *Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Երևան, 1956*

Հարությունյան Վահագնատ, *Անի քաղաքը, Երևան, 1964*

Հարությունյան Վ. Մ., *Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960*

Հովհաննես Դարդնլի, *Ժամանակագրութիւն Հայոց, ս. Պետերբուրգ, 1891*

Հովհաննես Կաթողիկոս Դեասխանակերտցի, *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912*

Հովհաննիսյան Աշոտ, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957*

Հովսեփյան Դ., *Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930*

Հովսեփյան Գարեգին, *Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951*
Ղաֆադարյան Կ., *Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1-ին, Երևան, 1952*
Ճեվահիրճյան Ս., *Տրդատ Հարտաւրապետ Հայոց, «Անի» ամսագիր, Բեյրութ, 1952, № 6—8*
Մանանդյան Հակոբ, *Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940*
Մանանդյան Հ., *Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Պետհամալսարանի «Տեղեկագիր», Երևան, 1928, № 4*
Մանանդյան Հ., *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մաս նյութեր, Երևան, 1960*
Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898*
Մարկվարտ Ի., *Պարսկահայք նահանգը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1961*
Մելիք-Բախշյան Ստ. Տ., *Հայաստանը 7—9-րդ դարերում, Երևան, 1968*
Մելիք-Բախշյան Ստ. Տ., *Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953*
Մելիքսեթ-Բեկ Լևոն, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, հ. Բ, 1936, հ. Գ, 1955*
Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860*
Մխիթար Անեցի, *Պատմութիւն, ս. Պետերբուրգ, 1879*
Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880*
Մխիթարյան Աբել, *Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1855*
Մնացականյան Ա., *Բանդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1954, № 3*
Մնացականյան Ա. Շ., *Հայկական զարդարվեստ, Երևան, 1955*
Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913*
Մովսիսյան Ա. Խ., *Ուրվագծեր հայ գպրոցի և մանկավարժության պատմության (10—15-րդ դդ.), Երևան, 1958*
Մուշեղյան Խ. Ա., *Հայաստանի դրամական գանձերը, հ. 1-ին, Երևան, 1973*
Շահխաթունյանց Հովհ., *Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատա, հ. Բ, Էջմիածին, 1842*
Ջալոյան Վ. Կ., *Հայկական սննդանյութ, Երևան, 1964*
Ջամչյան Մ., *Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785*
Պալաֆյան Գրիգորիս, *Նկարագրութիւն Անիի աւերակներուն, Կ. Պոլիս, 1910*
Պողարյան Նարայր, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 5-րդ, Երուսաղեմ, 1971*
Պողոսյան Ս. Պ., *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956*
Պողոսյան Ս. Պ., *Հայ ժողովրդի պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1965*
Սամվել Անեցի, *Հաւաքումք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893*
Սամվելյան Խ., *Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1-ին, Երևան, 1939*
Սարգ. Հ. Բ., *Անեցի Վարդանա վարդապետի երգելիկ վասն կառաց աստուածութեան ներբող, «Բազմավէպ», 1919, № 6*
Սարգսյան Ներսես, *Տեղագրութիւնք ի Փոքր եւ Մեծ Հայս, Վենետիկ, 1864*
Սարուխան, *Անի քաղաքը, «Հանգէս ամսօրեայ», Վիեննա, 1940, № 7—12*
Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք, Փարիզ, 1859*
Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական, ս. Պետերբուրգ, 1885*
Ստեփաննոս Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910*
Ս. Ք. Մ., *Ազգային պատմութիւն Անի քաղաքի, «Մեղու Հայաստանի» լրագիր, Թիֆլիս, 1858, № 9*

Վարդան Վարդապետ, *Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, Վենետիկ, 1862*
Վարդան Վարդապետ, *Աշխարհացոյց, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիզ, 1960*
Տաշյան Հակովբոս, *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, հ. Ա, 1895*
«Տեղագրութիւն Անի քաղաքին հանդերձ տեսարանացոյց պատկերօք», խմբ. Հովհաննես Տեր-Աբրահամյան, Թեոդոսիա, 1867
Տեր-Մովսեսյան Մ., *Հայկական երեք վանքեր, Երուսաղեմ, 1938*
«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», բյուզանդական աղբյուրներ, հ. Գ, թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1979
Օրբելի Հ., *Անվո ավերակները, Վաղարշապատ, 1911*
Օրբելի Հ. Ս., *Հայ վիմագրություն, պր. 1-ին, Անի քաղաքը, Երևան, 1966*
Օտմանյան Մաղաքիա արհեպ., *Ազգապատում, հ. Ա, մասն Գ, Բեյրութ, 1959*
Ֆրիկ, *Բանաստեղծություններ, կազմ. Մ. Մկրյան և Ե. Թորոսյան, Երևան, 1941*
К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IV
К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, т. I, М., 1947
Г. Абих, Аник, статья акад. Г. В. Абиха (перевод с немецкого). СПб, 1881
Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб, 1908
Ал. Мукадассий, перевод Н. А. Караулова, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXXVIII
Андреев А., На развалинах армянской Пальмиры, «Исторический вестник», Москва, 1898, № 1.
Анийская серия, кн. I—VII, С.-Петербург—Петроград, 1906—1921
Аракелян Б. Н., Арутюнян В. М., Мнацаканян С. Х., О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуры»). Ереван, 1969
Арутюнян В. М. и Сафарян С. А., Памятники армянского зодчества, Москва, 1951
Ахвердов Ю. Ф., Тифлисские амкары, Тифлис, 1883
Бартольд В., Персидская надпись на стене Анийской мечети Мануче, Анийская серия № 5, СПб, 1911
Бартольд В., Историко-географический обзор Ирана, СПб, 1903
Бенешевич В. Н., Три Анийские надписи XI в., Анийская серия № 7, вып. II, Петроград, 1921
Брикман А. Э., Площадь и монумент, Москва, 1935
Гоян Георг, 2000 лет армянского театра, т. I, Москва, 1952
Гурко-Кряжин В., Прошлое и настоящее Советской Армении, «Новый Восток», Москва, 1927, кн. 16—17
Гусейнов Р. А., Из истории денежного обращения в Передней Азии в XI—XII вв., Инст. Археологии АН СССР, Нумизматика и эпиграфика, т. IX, Москва, 1971
Дживелегов А. К., Средневековые города Западной Европы, СПб, 1902.
Егизаров С. А., Исследования по истории армянского права, публичного и частного, вып. I, Киев, 1919
Егиазаров С. А., Исследования по истории учреждений Закавказья, ч. II, Городские цехи, Казань, 1891
Ибн-Ал-Асри, Из Тарика ал-Камиль Ибн-ал-Асри, пер. Т. К. Жузе, Баку, 1940

Измайлова Т. А., Культурное наследие и убранства анийских памятников, «Изв.» АН Арм. ССР, 1959, № 10.
Измайлова Т., Айвазян А., Искусство Армении, Москва, 1962
Каковкин А. Я., Памятники армянского художественного серебра XI—XV вв., автореферат, Ленинград, 1970
Кварфельд Э. К., Керамика Ближнего Востока, Ленинград, 1947
Кипшидзе Д. А., Пещеры Ани (материалы XIV Анийской археологической кампании 1915 года), Ереван, 1972
Кондаков Н. П., Русские клады, СПб, т. I, 1886
Линч Х. Ф. Б., Армения, т. I, Тифлис, 1910
Манандян Я. А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954
Марр Н. Я., Ани, книжная история города и раскопки на месте городища, Л. М., 1934
Марр Н. Я., Ани, столица древней Армении (историко-археологический набросок), СПб, 1898
Марр Н., Восьмая анийская археологическая кампания, СПб, 1912
Марр Н., Дворцовая церковь, «Памятники армянского искусства Ани», вып. I. Петроград, 1915
Марр Н. Я., Кавказский культурный мир и Армения
Марр Н., XI Анийская археологическая кампания, СПб, 1913
Марр Н., О раскопках и работах в Ани летом 1906 года, СПб, 1907
Марр Н., Раскопки в Ани в 1904 г., СПб, 1906
Марр Н. Я. Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, СПб, 1895
«Материалы по истории туркмен и Туркмении», т. I, М.-Л., 1939.
Мнацаканян С., Новые материалы по истории армянского зодчества IX—X вв., «Изв.» АН Арм. ССР, 1957, № 2
Мушегян Х., Из истории денежного обращения Двина, «Изв.» АН Арм. ССР, 1956, № 1
Оганесян К. Л., Зодчий Трдат, Ереван, 1951
Оганесян Л. А., История медицины в Армении, ч. II, Ереван, 1946
Орбели И., Краткий путеводитель по городищу Ани, С.-Петербург, 1910
Орбели И., Развалины Ани, С.-Петербург. 1911
Орбели И., Шесть армянских надписей VII—XI вв. Две надписи Дворцовой церкви в Ани, «Христианский восток», т. III, Петроград, 1915
«Отчет Анийского музея древностей за 1916 год», составил Г. Н. Чубинов, Петроград, 1918
Пахомов Е. А., Монетные клады Азербайджана, Баку, 1926
Пахомов Е. А., Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, Баку, вып. I, 1926, вып. II, 1938
«Сасунский Давид», сборник под ред. Меликсет-Бека, Тбилиси, 1939
Саушкин Ю. Г., Введение в экономическую географию, Москва, 1970
«Сборник военных рассказов, составленных офицерами участниками войны 1877—1878 гг., С.-Петербург, 1880
Страбон, География в 17 томах, Москва, 1964
Токарский Н. М., Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961

Халпахчьян О. Х., Средневековые бани Армении, «Советская археология», Москва, 1960, № 1
Чубинашвили Г. Н., Армянское искусство с конца IX до начала XI в., «Сасунский Давид», сборник под ред. Меликсет-Бека, Тбилиси, 1939
Чубинов Г., Декоративное убранство анийских карасов (опыт классификации), «Христианский восток», вып. I, Петроград, 1916
Шаншиев П., Два слова об амкаре, Тифлис, 1875
Шелковников Б .А., Поливная керамика из раскопок города Ани, Е., 1957
Якобсон А .Л, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950
Brosset M., Les Ruines d'Ani, Gapital de l'Armenie, St. Pétersbourg, I 1860, II, 1861
Laurent Joseph, L'Armenie entre Buzance et l'Islam depuis conguete arabe jusquén 886, Paris, 1919
Strzygowski Josef, Die Baukunst der Armenier und Europe, Wien, 1918
Texier C., Description de l'Armenie, la Perse et la Mèsopotamie, Paris, 1842.

Պարբերական մամուլ

«Անի», Բեյրութ, 1952, № 6—8
«Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1880, № 7
«Բազմավէպ», Վենետիկ, 1846, Դ, 1919, № 6, 1939, № 8—10
«Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1970, № 1
«Գեղարվեստ» հանդես, Թիֆլիս, 1917, № 6
«Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 1949, № 1—2
«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1926, № 1—2, 1940, № 7—12
«Մեղու Հայաստանի», լրագիր, Թիֆլիս, 1858, № 9
«Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1961
«Սովետական Հայաստան» լրագիր, Երևան, 1977, հուլիս
«Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1977, № 7—8
«Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. բաժանմունքի, Երևան, 1947, № 5, 1954, № 3, 1956, № 11, 1957, № 2, 1958, № 3, 1959, № 2
«Տեղեկագիր» Երևանի պետհամալսարանի, Երևան, 1928, № 4
«Փորձ» հանդես, Տիֆխիս, 1880, № 5—9
«Исторический вестник», Москва, 1898, № 1
«Новый восток», Москва, 1927, кн. 16—17
«Советская археология», Москва, 1960, № 1
«Христианский восток», Петроград, 1915, т. III, 1916, вып. I

Անձնանունների ցանկ

Աբաս, *կարսի բագավոր, 266, 349*
Աբեղյան Մ. *7, 32, 83, 87, 118, 142, 178, 179, 181, 182, 331, 332, 335, 343, 345, 347, 348,*
Աբիխ Հերման *7, 22, 23, 41, 129, 222, 242, 243, 245, 256, 269, 274, 282, 284, 291, 296*
Աբիսողոմ վարդապետ *41, 42*
Աբրահամ վարդապետ *41, 42*
Աբրահամյան Ա. Գ. *336*
Աբրահամյան Հ. *295*
Աբրահամյան Վ. Ա. *7, 91, 100, 101, 103, 105, 108, 112*
Աբուլ-Ֆազլ-Բեյխակին *137*
Աբուսվար, *էմիր, 359, 369, 373*
Ագաթանգեղոս *19*
Ադոնց Ն. *6, 7, 20, 21, 48—51, 87, 118, 175*
Ալեքսանդր Մակեդոնացի *27*
Ալթունյան Ար. *358, 380*
Ալ-Իդրիսի *136*
Ալ-Մուհադասի, *արաբ պատմագիր, 120*
Ալպոյաճյան Արշ. *68—70, 136, 351, 380*
Ալփ-Արսլան, *սուլթան, 210, 219, 226, 229, 230, 298*
Անառոճ, *կաոտապան, 297*
Անմեղ բեն-Մուհամմեդ էլ-Ջաֆարի *23*
Անռայան Հր. *150, 152, 250*
Այվազյան Մ. *223*
Անանիա Շիրակացի *47, 331*
Անանուն զրուցագիր *32, 33*
Անդրեև Ա. *284, 296, 312, 314*
Անդրիաս, *վարդպետ-Հարտարապետ, 239*
Աշոտ I *32, 49, 54, 58, 60, 61, 64, 65, 81, 262—264*
Աշոտ II *(Աշոտ Երկաթ) 69, 83*
Աշոտ III *54, 61—67, 69, 70, 72, 190, 206, 216, 249, 264, 277, 349, 350, 359, 361*
Աշոտ IV *363*
Աշոտ Մսակեր *49—51, 53, 55*
Ապիճաճ, *ամիրա, 69*
Ապլղարիբ, *մարզպան, 121, 122, 161, 162, 164, 249, 258, 317—319, 321, 323, 335*
Ապուղամր Պանլավուճի *121, 143, 161, 163, 310, 317, 322*
Առաքել Դավրիժեցի *289, 295*
Առաքելյան Բ. *7, 8, 83, 85, 91, 118, 169, 171, 231, 232, 250*
Ավագյան Ս. *250*
Աւորներսեհ, *վրաց բագավոր, 55—57*
Աւրվշնասպ, *մարզպան, 30*
Արամ Վրույր *301*
Արիստակես Գրիչ *(կամ Քնրական) 130*
Արիստակես Լաստիվերտցի *5, 11, 74, 75, 80, 82, 83, 86, 116, 118, 166, 172, 177—179, 181, 186, 207, 341, 349, 350, 353, 355, 361—363, 365, 370—379*
Արշակ Երկրորդ *28*
Արշավիր *29*
Արտավազդ Բ *27*
Ափշին, *էմիր, 56*
Բագրատ մագիստրոս *297*
Բամաջյան Կ. Հ. *5, 7, 29, 78, 210, 216, 261, 278, 293, 320, 321, 380*
Բարթիկյան Հր. *380*
Բարխուդարյան Ս. *148, 165, 240—242, 309, 316, 320*
Բարտոլդ Վ. *80, 185*
Բենեշևիչ Վ. Ն. *147*
Բորիսով, *ապա, 203*
Բժշկյանց Մ. *7, 49, 51, 170, 216, 250, 291, 299, 356, 358, 380*
Բրինկման Ա. Է. *173*
Բոսսե Ֆ. Մ. *7, 250, 291, 301*
Պաբրիելյան Հենրի *345*
Պագիկ I (Պագիկ Շահինշահ), *66, 69—71, 81, 206, 216, 241, 261, 275, 291, 293, 294, 302, 304—307, 309, 310, 318, 332, 333*
Պագիկ II *80, 203, 204, 330, 332, 342, 363, 365—367, 371—378*
Պագիկ Արծրունի *189*
Պալեմբարյան Վ. *345*
Պայլաձուկ վարդպետ *(վարպետ) 239*
Պեղոմյանց Հ. *7, 12, 16, 29, 51, 202, 203, 286, 291, 296*
Պիորգի, *Վրաց բագավոր, 349, 350, 353, 354, 356*
Պոյան Գ. *338—340*
Պևորգ, *վարդպետ-Հարտարապետ, 239*
Դրիգոր, *Անի բերդի տերը, 21*
Դրիգոր Անեցի (Մանկիկ) *34*
Դրիգոր Բջնեցի, *տե՛ս Դրիգոր Մագիստրոս*
Դրիգոր, *իշխան, 317, 322, 323*
Դրիգոր Լուսավորիչ *10, 20, 25, 26, 29, 37, 301, 303, 345*
Դրիգոր Կամախեցի *(Դարանաղցի) 380*
Դրիգոր Մամիկոնյան *221*
Դրիգորիս Հ. *345*
Դրիգոր Մագիստրոս (Դրիգոր Պահլավունի) *5, 60, 89, 90, 97, 99, 105, 177, 178, 330—334, 340—348, 351, 358, 360, 366, 374*
Դրիգոր, *վարդպետ-Հարտարապետ, 240*
Դրիգոր Վկայասեր *346, 347*
Դրիգոր Սուփան, *իշխան, 58*
Դևորգ, *իշխան, 331*
Դևորգ, *կաթողիկոս, 54*
Դևորգյան Մելիքսեդեկ *66, 143, 168, 171, 173, 224, 274, 293, 316, 320, 321, 380*
Դուստաֆ Զլումբերզեր *369*
Դուրկո-Կրյաժին Վ. *116*
Դանթե Ալ. *276, 277*
Դավրոսկ, *բորեպիսկոպոս, 179*
Դավիթ, *ըստ ավանդության Մորիկ կայսեր հայրը, 33*
Դավիթ, *Անենքերիմի որդին, 375*
Դավիթ Անհաղբ *24*
Դավիթ Անհողին *359, 361, 362, 367, 368*
Դավիթ Դվինեցի *376*
Դավիթ Կյուրոպաղատ *69, 352, 353*
Դավիթ Մաշկևոր *340*
Դեոսկորոս *358, 359*
Դյուբուա, *ճանապարհորդ, 215*
Եղիազարով Ս. Ա. *79, 91, 92, 121, 148, 151, 155*
Եղիշե *5, 30, 31, 34*
Երեմյան Ս. *20, 118*
Զարբհանալյան Դար. *334, 335, 344—346, 348*
Զահարե, *սպասալար, 26, 37, 39, 229*
Էժեն-Պոոն Գ. *275*
Էնգելս Ֆր. *86, 88, 169*
Էվլիյա Զելեբի *22*
Էվկլիդես *331, 332*
Էփրիկյան Ս. *19, 316, 380*
Թամար, *Բագրատ, 195*
Թաշճյան *261*
Թովմա Արծրունի *70, 138, 139, 171, 189, 240*
Թորամանյան Թ. *3, 6—8, 14, 15, 25, 27, 36—38, 40, 42, 44—46, 59, 60, 62, 72, 78, 99, 101, 118, 129, 142, 145, 158, 161, 171, 180, 181, 183—186, 189, 192, 193, 196, 197, 200, 205, 210—212, 216, 219, 221, 224, 226, 229, 231—235, 237—239, 241, 246—249, 251, 256, 259—261, 269, 270, 273, 275, 279, 282, 287, 289, 295—297,*

301, 303—305, 307—311, 313, 314, 316, 319, 323—328, 338
Թորոսյան Ե. 167
Թոփճեան Յ. 295
Իասիտես, բյուզանդական դուքս, 369
Իբն Ալ-Ասիր, պատմագիր, 215
Իբն-Ֆակիհ, պատմագիր, 83
Իզմայլովա Տ. 223, 228
Իննիեյան Ղ. 19, 22, 23, 47, 168
Իսրայել Գուսաղչեցի 239
Լաուրենթ Ջ. 380
Լինչ Հ. Ֆ. Բ. 7, 24, 100, 195, 231, 237, 273, 284, 296, 301, 305, 323
Լեո 7, 20, 30, 35, 36, 38, 51, 56, 64, 66, 68, 70, 73, 74, 78, 83, 118, 120, 129, 142, 148, 157, 158, 166, 171, 202, 203, 206, 212, 216, 262, 273, 275, 277, 283, 296, 310, 312, 314, 316, 323, 349, 350, 353, 357—359, 362, 363, 368, 369, 376, 377
Լարան 83
Լևոնյան Գար. 240, 309, 339, 341
Խաչերյան Լ. Գ. 130
Խաչիկ, վարդապետ-Ճարտարապետ, 301
Խաչիկ Արշարունի Ա., կաթողիկոս, 241, 346
Խաչիկյան Լ. 5, 7, 89, 91, 93
Խոսրով Անձևացի 340
Խոսրով Նուշիրվան 312
Կակովկին Ա. Յա. 99
Կամսար, նախարար, 29
Կատրամիդե, բագրատի, 164, 241, 261, 291—294
Կարաուլով Ն. Ա. 120
Կարնեցի, վարդապետ-Ճարտարապետ, 239
Կարսա Յ. 250
Կեսարեր 45
Կիրակոս, քահանա, 261, 361, 370
Կիրակոս Գանձակեցի 5, 59, 76, 82, 280, 293, 299, 301, 302, 380
Կիրսիլոս 21
Կիպշիձե Գ. Ա. 6, 11, 194—201
Կլավիխո 22
Կոզյան Ս. 35
Կոնդակով Ն. Պ. 106
Կոնիբեր 24
Կոստանդին, բագավոր, 57
Կոստանդին Մոնոմախ 366, 367, 370—375, 380
Կոստանդին VIII 361
Կոստանյանց Կ. 5, 58, 79, 150, 166, 344—346, 358, 380
Կպերֆելդ Է. Կ. 108
Հակոբ, երեց, 54
Հակոբ Ջանկեցի 239
Հակոբ Սանահնեցի 349
Համզա 323
Համիլտոն 323
Հասան, իշխան, 55, 56
Հակոբյան Թ. Խ. 68, 70, 71, 77, 91, 103, 104, 124, 152, 220
Հակոբյան Հովհ. 6, 22, 238
Հակոբյան Վ. Ա. 5, 195, 280, 295
Հարությունյան Վ. Մ. 7, 8, 19, 73, 96, 130, 131, 134, 146, 186, 203, 212, 220, 223, 231, 232, 243, 251, 260, 273, 279, 288, 291, 296, 300, 301, 305, 307, 314, 316, 319
Հեսու, վարդապետ-Ճարտարապետ, 239
Հովհան, Ճարտարապետ, 239
Հովհան, քահանա, 195
Հովհաննես, հոգևորական, 31
Հովհաննես, կաթողիկոս, 66
Հովհաննես Դարդելի 380
Հովհաննես Դրասխանակերացի 5, 32, 49, 55—57, 175
Հովհաննես Թլկուրանցի 339
Հովհաննես Կոգեռն 177, 178, 332, 342, 352, 356, 358, 360
Հովհաննես Սարկավագ 331
Հովհաննես Սկիլիցես 172, 380
Հովհաննես Սմբատ, Բագրատունի թագավոր, 76, 164, 178, 179, 222, 232—235, 262, 263, 318, 341, 347, 349, 350, 352, 354—361, 363, 373, 377
Հովհաննիսյան Աշ. 69, 180, 266, 358, 360, 380
Հովհաննիսյան Լ. Ա. 87, 330—333, 345
Հովհաննիսյան Կ. Լ. 7, 235, 240, 242, 295, 296, 300, 301, 305
Հովսեփ, կաթողիկոս, 359
Հովսեփյան Գ. 5, 31, 32, 264, 313, 336, 338
Հուսեյնով Ռ. Ա. 127
Ղազար Փարպեցի 5, 30, 31, 34
Ղալփախչյան Օ. Խ. 252, 253,
Ղափանցյան Գ. 6
Ղաֆադարյան Կ. 8, 83, 99, 102, 104, 108, 110—112, 118, 135—137, 139, 220, 237, 241, 252, 254, 255, 309
Վահող Ալիշան 3, 5, 7, 10, 19, 21, 22, 24, 31, 34, 47, 50, 51, 53, 55, 56, 66, 67, 78, 79, 92, 95, 96, 102, 103, 115, 120, 123, 124, 129—131, 148—150, 152, 153, 171, 195—197, 201, 205, 222, 224, 240, 249, 256, 261, 268, 282, 284—286, 291—293, 295—300, 316, 319, 323, 330, 334, 335, 337, 338
Ճեվահիրճյան Ս. 239, 240
Մաղաքիա Օրմանյան 76
Մանանդյան Հ. 7, 51, 75, 79—81, 83, 86, 87, 91, 116—118, 120, 126, 131—133, 139, 142, 148, 151, 152, 156, 168, 171, 173, 176, 183, 185, 220, 266
Մանվել, Ճարտարապետ, 239
Մանվելյան Հովհ. 295
Մանուշն, էմիր, 223, 230, 274
Մաո Ն. 3, 6—8, 18, 20, 21, 23—26, 28, 31, 33, 34, 39, 41, 43—45, 47—53, 56, 58, 60—62, 66, 70, 72, 73, 75, 81, 82, 84, 87, 89, 91, 92, 95, 96, 99, 104, 106, 112—114, 127, 147, 148, 157, 158, 174, 176, 177, 183, 184, 187, 189, 191, 193, 195—197, 204, 209, 210, 216—220, 222—224, 226—230, 232, 244, 245, 247, 249—252, 258, 259, 263, 269—273, 277, 278, 282—284, 286, 287, 291, 296, 298—301, 303, 305, 306, 308—310, 312, 314, 319, 328, 334, 338, 352, 360, 361, 376, 380
Մատթեոս Ջուղայեցի 89
Մատթեոս Ուռհայեցի 5, 11, 64, 66, 67, 76, 166, 172, 177—179, 263, 278, 284, 297, 330, 349, 354, 355, 359—367, 370, 371, 373—376, 378
Մարիամ, Գրիգոր Սուփանի մայրը, 58
Մարկվարտ Ի. 21
Մարկո Պոլո 179
Մարմս Կ. 86—88, 169
Մեդիոս 21
Մելիք-Բախշյան Ստ. 343
Մելիքսեթ-Բեկ Լ. 22, 195, 292
Մեսրոպ, եպիսկոպոս, 31, 32
Մելֆուխյան Ռ. 260
Միխայել, կայսր, 164, 318, 370
Միխայել Ե (Պաֆլագոնացի), կայսր, 361—363
Միքայել, արքեպիսկոպոս, 322
Մխիթար Այրիվանեցի 5, 22, 293
Մխիթար Անեցի 5, 302, 350
Մխիթար Գոշ 5, 92, 93, 118, 119, 121, 124—126, 128, 133, 134, 154, 157, 166, 176, 265
Մխիթարյանց Արել 7, 268, 274—276, 316, 319, 337
Մկրյան Մ. 167
Մնացականյան Ա. 177, 337
Մնացականյան Ս. 8, 228, 231, 232
Մորիկ, կայսր, 32, 35
Մորից Յոհ Կոցեբու 22
Մոսինիչ Ֆ. 186, 189
Մովսես Խորենացի 5, 15, 19, 20, 29, 74, 175, 266
Մովսիսյան Ա. Խ. 7, 329, 331
Մարեյանց Լ. 250
Մուշեղ Բագրատունի 65
Մուշեղ, Աշոտ III-ի եղբայրը, 67, 68
Մուշեղյան Խ. 27, 28, 126, 128
Մուրավյով, ռուս ճանապարհորդ, 276
Յակոբսոն Ա. Լ. 42, 130, 131, 206,

216, 219, 220, 244, 255, 259, 269, 273, 291, 296, 300, 301, 319, 324
Յակուտ 83, 208
Յոսեֆ Ֆրասստ 231, 237
Յուզբաշև Ն. Ա. 315
Յուսուֆ, ոսոխկան, 55
Նալբանդյան Հ. Ֆ. 209
Ներսեհ Կամսարական 48
Ներսես Գ. Շինող, կաթողիկոս, 221
Ներսես Լամբրոնացի 78
Ներսես Շնորհալի 5, 78, 177—179, 347
Նիկողայոս, զորավար, 369, 370
Շախաթունյան Հովճ. 293
Շաներ, հարտարապետ 240
Շահիկ, վարդապետ-հարտարապետ, 240
Շանչիև Պ. 91
Շապուհ 50
Շելկովնիկով Բ. Ա. 7, 47, 106, 107, 111, 138, 273
Շուշան, տիկնանց տիկին, 121, 163, 164, 323, 328
Ոլիմպիաններ 331
Ջալոյան Վ. Կ. 87
Ջամշյան Մ. 50, 51, 66, 172, 173, 290, 291, 369
Ջուբինով Գ. Ն. (Ջուբինաշվիլի) 42, 43, 46, 84, 110, 111, 227, 231, 328
Պալաբյան Գր. 17, 23, 53, 54, 65, 129, 171, 173, 232, 237, 261, 268, 293, 295, 296, 316, 317, 321, 323, 380
Պախումով Ե. Ա. 27, 127
Պետրոս Գետադարձ, կաթողիկոս, 76, 89, 165, 166, 176—179, 249, 318, 330, 342, 345, 346, 349, 351, 352, 355—360, 365, 370, 372, 374, 375, 377, 378
Պերպերյան Հ. 22
Պլատոն 332
Պողարյան Նոեայր. եպիսկոպոս, 280, 295
Պողոսյան Ս. Պ. 68, 69, 76, 80, 118, 145, 150, 151, 155, 177, 240, 332, 349, 380
Պոլտորացկի, նկարիչ, 6, 306
Պոստան, գեներալ, 324
Պուշկին Ա. Ս. 243
Ջալալյան Ս. 5, 7, 293
Ջանապ, զորավար, 50, 51
Ջիվելեգով Ա. Կ. 79, 82, 91, 173, 175, 264, 265
Ջուղղիկ, վարդապետ - հարտարապետ, 240
Ռժևսկի, ապա, 202, 203
Ռոբերտ Կնր Փորտեր 238
Ռոմանոս Արգիրոս, կայսր, 361
Սահակ, կաթողիկոս, 32
Սահակ, Սյունյաց իշխան, 291
Սամեհա, արհեստ, 239
Սամվել, Հոգևորական, 31
Սամվել Անեցի 5, 69, 76, 177, 280, 291, 293, 299, 301—303, 307, 308, 330, 378, 380
Սամվելյան Ե. 77, 154
Սարգիս, լարարար, 160
Սարգիս, ծաղկող, 222, 338
Սարգիս, հարտարապետ, 240
Սարգիս Ա Սյունեցի, կաթողիկոս, 76, 293, 297
Սարգիս Շնորհալի 340
Սարգիս Սևանեցի, վարդապետ, 333, 334, 346, 348
Սարգսյան Հ. Բ. 348
Սարգսյան Ն. 7, 201, 282, 285
Սարուխան 53, 62, 63
Սաուչկին Յու. Գ. 170
Սաֆարյան Ս. Ա. 223, 316, 321
Սենեքերիմ, թագավոր, 375, 399
Սիրանես, վարդապետ - հարտարապետ, 239
Սիմոն, Անի բերդի տերը, 21
Սմբատ, թագավոր, 318
Սմբատ I 55—57, 76
Սմբատ II 69, 70, 72, 73, 145, 146, 156, 164, 206, 210, 241, 265, 266, 279—281, 284, 290, 291, 294, 295, 297
Սմբատ Բագրատունի, իշխան, 49
Սմբատ Խոսոռովանող 49, 55
Սմբատ սպարապետ, 5, 178, 179, 263, 330, 332, 345, 358, 362
Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ) 5, 51, 65, 66, 70—72, 84, 100, 101, 118, 146, 156, 181, 216, 240, 241, 265, 266, 279, 280, 291, 293, 294, 297, 299, 301, 302, 309, 311
Ստեփանոս Օրբելյան 58, 59, 70, 71, 122, 128, 157, 165, 293
Սարարոն 20, 21, 238
Սարժիգովակի 7, 231, 237, 240
Սուրի, էմիր, 137
Սուփան, իշխան, 122, 165
Վախուշտի Բագրատիոն 22, 292
Վահրամ, իշխանաց իշխան, 143, 161, 163
Վահան Մամիկոնյան 30
Վահրամ Պահլավունի, սպարապետ, 60, 78, 121, 157, 236, 310, 318, 341, 343, 351, 363—365, 372
Վասակ, զորավար, 161, 318
Վասակ, Սյունյաց թագավոր, 292—294
Վասակ Բագրատունի 49
Վասակ Գաբուռ 58
Վասակ Պահլավունի 341, 354
Վասիլ, կայսր, 302, 346
Վասիլ II (Բուլղարասպան) 350, 352—357, 364
Վարազդատ Ամատունի 30
Վարդիկ, վարդապետ -հարտարապետ, 240
Վարդան Անեցի 348
Վարդան Մեծ Բարձրաբերդցի 69
Վարդան Մամիկոնյան 30
Վարդան Վարդապետ 5, 11, 13, 20, 50, 51, 53, 72, 216, 222, 230, 277, 278, 280, 291—293, 348, 353, 356
Վեստ Սարգիս 76, 157, 158, 351, 361, 362, 365, 366, 368, 370—374, 378
Վրույր Ա. Ս. 6, 200
Տաշյան Հ. 54, 346
Տեր-Աբրահամյան Հ. 124, 203, 380
Տեր-Միրաչյան Գ. 32
Տեր-Մովսիսյան, արքեպիսկոպոս, 240
Տեխին 231, 237
Տիգրան II 27, 28, 67
Տիգրան Հոնենց 199, 222, 249, 251, 253, 257, 260, 297
Տկար Մովսես 240
Տոկարսկի Ն. Մ. 7, 8, 42, 61, 131, 146, 174, 196, 199, 200, 206, 215, 216, 218, 222, 223, 227, 228, 233, 236, 241, 247, 250, 252, 258, 259, 286, 291, 296, 298, 300, 301, 311, 312, 314, 316, 319, 324
Տոդատ 29, 292, 294, 320, 321
Տոդատ III 29, 34
Տոդատ, հարտարապետ, 227, 239, 240—242, 307—309, 312
Փիլիպպոս, Ադվանից աշխարհի թագավոր, 66
Քալանթարյան Ա. Ա. 81
Քյուրճյան Հ. 6
Օրբելի Հ. 3, 5, 6, 10, 18, 42, 45, 46, 61, 81, 84, 96, 111, 113, 115, 119, 122, 129, 134, 144, 153, 157, 159, 161, 163, 164, 171, 183, 186, 190, 194, 196, 202, 204, 205, 216, 222, 249, 256, 258—261, 268, 269, 273, 274, 278, 279, 283, 286, 287, 291—293, 298, 300—310, 314—316, 318—321, 323, 324, 335, 336
Ֆրիկ 167

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբելի ակն, *գյուղ, 205*
Աբուլ-Մամրաե, *մզկիթ, 121*
Աբուղամրենց եկեղեցի *204*
Աբխազիա *57, 69*
Ադրբեջան *110*
Ադրբեջանական ՍՍՀ *183*
Աին *22*
Ալամաե *36*
Ալաջա (Աեի), *գետ, 14, 15, 18, 23*
Ալաջա (Առնո-Առին), *լեռներ, 14, 27*
Ալեքսանդրապոլի գավառ *104, 127, 236, 245*
Ախալցխա *245*
Ախալքալաք *27*
Ախուրյան, *գետ, 4, 10—19, 23, 25, 33, 36, 50, 56, 66, 72—73, 129, 174, 184, 185, 187, 193, 194, 196, 203, 204, 208, 211, 212, 223, 224, 241, 244, 247, 260, 262, 272, 274, 275, 278—280, 288, 289*
Ախուրյանի ձոր *10, 17, 186, 208, 290*
Ակռի գյուղ *299*
Ախթամարի ս. Խաչ տաճար *239*
Ախթամար *86, 117, 228, 329, 338*
Աղձնիք, *աշխարհ, 67*
Աղռնեջք, *գավառ, 70*
Աղչկաբերդ *4, 11, 14, 25, 26, 28, 36—38, 45, 73, 193, 208, 211*
Աղչկաբերդ, *լեռ, 18*
Աղվանք *66, 69, 137, 359*
Աեարայի լեռներ *21*
Ամասիա *238*
Ամբերդ *110, 252*
Ամբերդի եկեղեցի *312*
Ամերիկա *107*
Ամիդ (Դիարբեքիր) *132*
Այգեստաե, *թաղամաս Անիում, 141*
Այրային Աեի *95, 123*
Այրարատ *71, 167*
Այրարատյան աշխարհ *10, 29, 49, 67, 70, 299, 366*
Աե *22*
Աեա *22*
Աեակերտ, *վայր, 21*
Աեաճիա, *տաճար, 18, 19*
Աեգիա *173, 174*
Անդրկովկաս *92, 106, 112, 350, 354, 381*
Անէ, *բերդ Կիլիկիայում, 21*
Անի ամրոց *(Հետագայում Կամախ) 19—21, 25, 29, 31, 41, 45, 55—58*
Անի, *բերդ, 30, 31*
Անի, *բերդաքաղաք, 33*
Անի, *գետ (Ծաղկոցաձոր, Ալաջա), 10, 12, 14, 25, 66*
Անի, *գյուղ, 14, 18, 26, 192*
Անի, *երկաթուղային կայարան, 10*
Անիոն *(Aviov) 22*
Անիպեմզա, *հանքավայր, 17*
Անի, *ջրմուղ, 248, 249, 251*
Անիսի *22*
Անի-Շիրակի բագավորություե *69, 70, 76—78, 126—128, 135, 136, 140, 150, 156, 157, 168, 169, 292, 363*
Աշնակ, *գյուղ, 153, 162*
Աշոտյան պարիսպ *60, 186, 190, 191, 204, 208, 209, 211, 219, 223, 290, 328*
Աշոցք *51*
Ապահունիք, *գավառ, 49*
Ապլղարիբի պալատ *222, 267*
Ապրոնց ձոր, *թաղ, 205*
Ապուղամրենց եկեղեցի *244, 301*
Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի *78, 216, 226, 235, 301, 321—324*
Ապուղամրենց ս. Գևորգ եկեղեցի *320*
Ապուղամրենց ս. փրկիչ *214, 215*
Առաքելոց եկեղեցի *43, 46, 73, 78, 105, 143, 148, 159, 161, 163, 191, 204, 215, 216, 227, 300, 310—316*
Առջո-Առին (Ալաջա), *գյուղ, 184, 205, 247*
Առջո-Առին (Ալաջա), *լեռներ, 11, 15*
Ասիա *74, 107, 245*
Ասորիք *116, 132*
ս. Աստվածածին եկեղեցի (Անիի մայր տաճար) *292*
ս. Աստվածածին *կամ* Խամբուշենց եկեղեցի *328*
Ավազ դարպաս *287*
Ավազ դուռ *255, 282, 283, 285, 286*
Ավազ եկեղեցի *292*
Ավան, *կամրջակապ, 225*
Ավան *228, 313*
Աատպատական *20, 21, 31, 55, 56, 69, 132, 354*
Աատական խալիֆայություե *35, 75, 127*
Աատած *11*
Աատածոան գավառ *162*
Աատատյան գաշտ *102, 145*
Աատս *13, 22, 83, 129, 131, 133*
Աոգինա, *աման, 76, 241, 345*
Աոգն (Հազրո) *132*
Աոծն, *բաղաք, 75, 80, 86, 88, 116, 131, 133, 169, 171, 172, 179, 181, 206, 264*
Աոենշ, *բաղաք, 132*
Աոմայ *356*
Աոշակունյաց բագավորություե *28, 75, 221*
Աոշարունիք, *գավառ, 28, 29, 31, 34, 36, 49—53, 67, 165*
Աոատգերս, *բերդ, 28—30, 53*
Աոատաեուչ *86, 117, 131, 132*
Աոատաշատ *25, 31, 67, 129, 131, 133*
Աոատաշեսյան բագավորություե *221*
Աոատիին կամ Սմբատյան պարիսպ *14, 72, 97, 142, 168, 172, 184—186, 191, 202—203, 209—212, 253, 287, 294*
Աոցախ *49, 68, 70—71*
Աոուե *130, 221*
Աոփա, *գետ, 131*
Աոփա (Աոփի), *լիճ, 13*
Աոփաշայ (Ախուրյան), *գետ, 13, 23*
Աոփսուս *33*
Աոեելյան Հայաստան *48, 360*
Աոեելիք *120, 132, 140, 141, 220*
Աոևմտյան Հայաստան *146, 352, 357*
Աոևմտյան Ուկրաինա *180, 238*
Աոևմտյան Եվրոպա *87, 168, 238, 265*
Աոևմուտք *132, 140, 141*
Բագարան, *քաղաք, 13, 50, 53, 64, 67, 221, 246*
Բագնայր (Պոլիչա) *142, 184, 205*
Բագրատունիների արքունական պալատ *11, 135, 222, 267, 268, 320, 337*
Բագրատունիների բագավորություե *4, 71, 73, 74—77, 80, 267*
Բագրեաեդ, *գավառ, 48, 239*
Բագել, *քաղաք, 173*
Բազզնոց, *փողոց, 92*
Բաղաբերդ *202*
Բաղդադ *32*
Բաղեշ (Բիթլիս) *86*
Բարդա, *քաղաք, 183*
Բարձր Հայք *19*
Բաֆու *315*
Բերդկունք, *բաղաք, 264*
Բերկրի *132*
Բիթլիս *132*
Բղրուչ, *գյուղ, 31*
Բյուզանդիա *4, 32, 35, 49, 70,*

83, 127, 128, 134, 137, 138, 148, 164, 238, 341—343, 346, 348—352, 354, 356, 358, 360, 361, 363—375, 377—379, 381
Բյուզանդական կայսրություն *284*
Բողաշեն, *ձկնորսարան, 122, 165*
Բովածոր, *թաղ, 15, 205*
Բորշալու, *գավառ, 127*
Բջնի *77, 78, 132, 157, 329, 342, 354, 358, 366, 368*
Բրխատոլ *173*
Բուն խաղաք (Շահաստան) *190*
Գագկաշեն տաճար *43, 73, 81, 98, 172, 191, 214—216, 218, 227, 234, 236, 241, 243, 244, 272, 299—301*
Գագկաշեն ս. Գրիգոր եկեղեցի *299, 301—311, 319, 320, 324, 326, 337*
«Գաղտ դուռն» *285*
Գայլաձոր (Գլիձոր), *գետակ, 11, 15, 205*
Գայլեձոր *97, 196*
Գայլիձոր *145, 210*
Գառնի *25, 30, 62, 110, 117, 122, 123, 165*
Գարդման *71*
Գղակկարոց փողոց *102*
Գեղամ-Գյալմազ *(ատորերկրյա անցք) 273*
Գեղիկլեր, *գետակ, 15, 145*
Գեղիկլեր, *գյուղ, 248*
Գեղամա ծով *129*
Գեղարդ *199, 239*
Գեղարհունիք, *գավառ, 70*
Գերմանիա *85, 173*
Գլաձոր *329, 336*
Գլիձոր *73, 185, 196, 203, 208, 209, 211, 212, 260, 281, 282, 288, 316*
Գլիձոր, Գելիձոր (Գայլի ձոր, Գայլեձոր), *գետակ, 13, 14*
Գլիձորի դուռ *285—287*
Գլխավոր մուտք *324*
Գլխավոր փողոց *245, 250, 252, 286*
Գողթն *68*
Գոռի, *քաղաք, 194, 197*
Գղակկարոց փողոց *92*
Գղակկրոցի դուռ *285*
ս. Գրիգոր Նկեղեցի *21, 92, 160, 163, 204, 251, 253, 301*
Գուգարք *70*
ս. Գևորգ, *մատուռ, 262*
Դաղստան *111*
Դարանաղի գավառ *19, 22, 50*
Դարբնոց, *փողոց, 92*
Դարոյնք, *ամրոց, 49*
Դեղձաճագեստ *122*
Դմանիս, *քաղաք, 255*
Դվին *25, 27, 31, 50, 57, 75, 80, 86, 88, 98, 100, 102, 108—112, 120, 128, 129, 130, 131, 133, 135, 137, 139, 171, 172, 221, 225, 226, 252, 274, 282, 287, 354, 359, 377*
Դվինի կամ Երևանի դուռ *285—287*
Դվնաղաշտ *142*
Դռասխաճակերտ, *դաստակերտ, 29*
Եգիպտոս *106, 199, 347*
Եղեսիա, *քաղաք, 5*
Եկեղյաց գավառ *19*
Եղեգիս, *գյուղաքաղաք, 117, 122, 165*
Եղվարդ *225, 240*
Եռակատար (Ուշքափալար), *լեռ, 16*
Եվրոպա *82, 91, 107, 163, 173, 214, 238, 264, 296*
Երազգավորս (Շիրակավան), *47, 55, 67*
Երասխաձոր *29*
Երերույք *36, 47*
Երզնկա *100, 131*
Երվանդաշատ, *գյուղ, 13*
Երվանդաշատ, *քաղաք, 24, 25, 29, 133*
Երուսաղեմ *31*
Երևան *32, 62, 120, 122—124, 165, 220, 287, 335*
Երևանի գավառ *127, 129*
Եփրատ, *գետ, 20, 23, 129*
Ջանգեզուրի գավառ *127*
Ջող *131, 137*
Ջվարթնոց *46, 110, 142, 214, 221, 225, 227, 228, 235, 239, 241, 275, 301, 303—305, 307, 324*
Էջմիածին *24, 27, 32, 100, 101, 127, 142, 214, 227, 228, 235, 295, 313, 335*
Էրզրում *տե՛ս Կարին*
Էրմենիա *50*
Թալիշ *225*
Թամարգա, *քաղաք, 101*
Թաո-Կլարգեթիա *50*
Թարթառ, *գետ, 131, 183*
Թիֆլիս *316*
Թոխաթ *264*
Թուրքիա *10, 238*
Թուրմենիա *136*
Թուրմենիստան *137*
Իգաձոր *15, 60, 174, 185, 196, 210, 282, 288*
Իգաձոր, *գետակ, 11, 14*
Իգաձորի դուռ *285*
Իգաձորի քաղ *205*
Իգաձորի ղուկտ *120*
Իրինդ *324*
Լայպցիգ, *քաղաք, 173*
Լեհաստան *180*
Լենինական *10, 104*
Լոնդոն *173*
Լոռի *21, 195*
Լոռի, *86, 137, 221, 250, 252, 359*
Լոռի, *բերդաքաղաք, 21, 132, 212, 279*
Լոռու *(կամ Կյուրիկյան) թագավորություն 68, 129*
Լուսավորիչ եկեղեցի *211*
Խամրուշենց գերեզմանատուն *328*
ս. Խաչ եկեղեցի *191*
ս. Խաչ եկեղեցի *(Լենինականում) 104, 236*
Խարկով, *գյուղ, 10*
Խերսոնես *106*
Խլաթ, *քաղաք, 75, 86, 88, 132*
Խծկոնքի վանք *236, 239*
Խնամք *22, 23*
Խնձորեսկ, *բնակավայր, 194*
Խորասան *137*
Խուվախ, *գյուղ, 146, 200*
Ծաղկոցաձոր *14, 15, 36, 39, 72, 73, 97, 137, 143, 174, 184—187, 193, 196, 199, 200, 202, 204, 205, 208, 209, 211, 212, 219, 224, 244, 247, 260, 268, 273, 274, 278, 280, 281, 288, 301, 302, 308, 310, 320, 328*
Ծաղկոցաձորի դուռ *285—287*
Ծաղկոցաձորի իշխանական դամբարան *100*
Ծառաբար, *բնակավայր, 166*
Կաթողիկե եկեղեցի *104, 172, 235, 292*
Կաթողիկե Մայր տաճար *292, 296, 365*
Կալմախ, *ամրոց, 50*
Կարս-Պեղատ *375*
Կաղզվան *140*
Կամախ *20, 23, 53*
Կամախ (Կալմախ), *ամրոց, 50*
Կամսարականների ամրոց *39*
Կամսարականների աշտարակ *24*
Կամսարականների պարիսպ *39*
Կամրջադուռն *285, 286*
Կայեան, *բերդ, 195*
Կապադովկիա *33*
Կապան *86, 359*
Կատունց փողոց *92, 102*
ս. Կարապետ վանք *(Մուշում) 343, 345*
Կարին (Էրզրում) *70, 71, 75, 100, 130—132, 171, 243*
Կարինի դուռ *96*
Կարմնջի *(կամ Աբելանց) ձոր 15*
Կարմնջի ձոր, *թաղ, 205*
Կարս *22, 53, 64, 65, 67—75, 80, 86, 88, 116, 131—133, 169, 202, 206, 266, 287, 354, 355, 362, 377*
Կարս, *գետ, 13, 234*
Կարուց դուռ *282, 286*
Կարսի դուռ *285*
Կարսի թագավորություն *221*
Կարսի մարզ *10, 269*
Կարսի օկրուգ *10*
Կեչառիս, *վանք, 78, 342, 345*
Կեչառուտ *217, 242*
Կզկալա, *ժայռ, 19, 25*
Կիլիկիա *21, 22, 178, 329, 330, 339, 360*

Կիրանց վանք 223
Կինյան Ռուսիա 134
Կոզովիտ 51
Կողբ 140
Կոշկակարոց փողոց 92
Կ. Պոլիս 292, 347
Կոստանդնուպոլիս 241, 318, 345, 361, 371, 373, 374
Կովկաս 106, 296, 324, 361
Կովկասյան լեռնաշղթա 57
Կոտայք 123
Կումայրի 48
Կուր, գետ, 22, 139
Հաղպատ 217, 242, 329, 331, 336, 338, 345
Հայաստան 3, 4, 17, 20—22, 24, 27, 28, 30, 32, 35, 36, 47—50, 52, 55, 56, 58, 59, 62, 65—69, 71, 75, 76, 78—83, 85—89, 91, 92, 99—102, 106, 108, 111, 112, 116—118, 120, 126, 127, 129—132, 134—141, 144, 147, 150, 153, 156, 167—169, 171, 172, 175, 182, 185, 194, 195, 200, 202, 207, 208, 212, 214, 215, 217, 221, 230, 233, 235, 237, 239, 240, 247, 252, 260, 264, 265, 281, 289, 304, 313, 324, 329, 331, 332, 336, 338, 342, 345, 351, 352, 354, 356, 358, 360, 363, 364, 367
Հայկական լեռնաշխարհ 18
Հայք 33, 130, 371
Հանի, գավառ Անի, Փայտակարանում, 20, 21
Հարավային արվարձան 187, 193, 194, 216
Հարավային Հայաստան 342, 343, 346
Հարք, գավառ, 49
Հացունյաց գավառ 33
Հեր (Խոյ) 132
Հին Գորիս 194
Հին Երևան 220
Հին Բաղաք 190, 204, 209, 274, 278, 279
Հին Բաղաք (Ներքին բերդ) 186, 187
Հյուսիսային արվարձան 187, 193, 194, 216, 260, 281, 286, 324
Հյուսիսային բաղամաս 254
Հյուսիսային Հայաստան 131
Հնդկաստան 120, 135—137, 164, 297
Հոկտեմբերյանի շրջան 13
Հռոմոս 68, 192, 263, 264, 338
Հռոմոսի վանք 13, 15—17, 142, 145, 184, 193, 205, 248, 275, 336
ս. Հովհաննես եկեղեցի (Բագրևանդի գավառում) 239
Հովվի եկեղեցի 4, 184, 193—194, 214, 216, 217, 227, 255, 324—327
Հռիփսիմեի տաճար 228, 313
Հռոմ 173, 284
Հռոմեական կայսրություն 352
ՀՍՍՀ 10, 13, 27, 101, 114, 120, 260, 334
Հրազդան, գետ, 366
Հունաստան 199
Ձորո գետ 71
Ձորո վանք 76, 358
Ձորք, բաղ, 205
Ղարաբաղ 27
Ղոլթջա, գյուղ (պատմական Բագեայր), 27
Ղրիմ 180
Ճորոխ, գետ, 21, 50, 129, 352
Մազրա, գետ, 136
Մազազ, գավառ, 123
Մաղասբերդ 32—34, 36, 47, 67, 156, 212, 213
Մայր եկեղեցի 73, 136, 164, 191, 216, 217, 292, 320, 326, 338
Մայր տաճար 204, 211, 214, 215, 227, 236, 238, 241—244, 261, 272, 274, 286, 289, 291, 295—299, 304, 305, 316, 320
Մանազկերտ 86, 132
Մանուչեի մզկիթ 134, 211, 218, 223, 230, 243, 274
Մասիս 299
Մարանդ, բաղաք, 132
Մարդաղի, գավառ, 20
Մարդաստան, գավառ, 20
Մարմաշեն 78, 157, 217, 236, 242, 312
Մարևեռլ, շրջան, 27
Մաճենիսի վանք 58, 122, 123, 165
Մեծ, Աբաաիին կամ Սմբատյանց պարիսպ 277, 278, 280—282, 284—288, 290
Մեծ Հայք 20, 21, 178
Մեծոփա վանք 336
Մերձավոր Արևելք 106
Մերվ, բաղաք, 183
Միջագետք 132, 342, 343, 346, 374
Միջերկրական ծով 88
Միջին Ասիա 112, 113, 135, 136, 183, 185
Միջին Արևելք 106
Միջնաբերդ 19, 24, 30, 36, 38—40, 45, 60, 61, 72, 73, 174, 184, 186—190, 193, 205, 206, 208, 209, 211, 212, 215, 216, 218, 228, 243, 244, 247, 249, 252—254, 261, 263, 267—270, 278, 290, 328, 329, 334, 362, 365
Միջնաբերդի պարիսպ 190
Միջնաբերդի շրամբար 233
Մոլդավիա 238
Մոնե 36, 246, 380
Մուշ 343, 345
Նալպանդնոց փողոց 92
Նախիջևան 75, 86, 131, 132
Նարեկավանք 329
Ներսին պարիսպ 172, 184, 206, 215, 216
Ներսին Ջրաբերդ 130, 260
Ներսին, Փոքր կամ Աջոյան պարիսպ 72, 174, 277—279, 286
Նյուրնբերգ, բաղաք, 173
Նոր Բաղաք 186, 187, 190, 191, 195, 204, 209, 254, 256, 258, 260, 268, 279, 281
Նամշուդե 132, 137
Նապոլեոնարանիսար 101
Շիրակ 5, 12, 22, 27, 29, 31, 32, 34, 49—53, 55, 64, 67, 71, 95, 104, 140, 144, 170, 172, 175, 177, 229, 297, 350, 353, 377
Շիրակի դաշտ 10, 12, 15, 192
Շիրակի գավառ 10, 29, 47, 62, 176
Շիրակավան (Երազգավորս) 47, 53, 64
Շիրակի բազավորություն 8
Ոստան 86, 132
Չինաստան 86, 132
Չրվիլի, տե՛ս Ներսին Ջրաբերդ
Պաղեստին 347
Պարոնի կամ իշխանական պալատ 222, 267, 268, 244, 337
Պարսկաստան 75, 86, 106, 108, 112, 133, 135—138, 185, 261, 349, 366
Պարտավ, բաղաք, 131, 137, 183
Պետերբուրգ (Պետրոգրադ), 7, 316, 337
Պիզու 375
Պողշաբերդ 202, 212
Ջահան, գետ, 21
Ռեյ, բաղաք, 108, 183
Ռումի երկրներ 136
Ռուսաստան 10, 112, 269
Սամոսատ 377
Սանահին 217, 242, 329, 338, 345, 358, 359
Սառան, փողոց, 115
Սասուն (իշխանություն) 68
Սատաղ 131, 133
ս. Սարգիս եկեղեցի 44, 96, 97
Սարգսի պալատ 222, 267
Սարիղամիշ 234
Սերաստիա, բաղաք, 130, 131, 215, 346, 353, 357
Սիբիա 106
Սկեռայի վանք 336
Սմբատյան պարիսպ 24, 39, 45, 60, 72, 73, 192, 206, 208, 242, 245, 255, 278, 283, 377
Սյոզության, Թուրքական գյուղ, 247, 248, 250
Սյունիք 58, 69—71, 122, 123, 145, 167, 239
Սյունիքի (Կապանի) Թագավորություն 68, 221
Սովետական Հայաստան 110, 112
Սոսի, գավառ, 70
ս. Սոֆիա, տաճար Կոստանդնուպոլսում, 229, 241

Սպեր, *գավառ, 49, 50, 52, 53*
Սպիտակ, *քաղաք, 114, 120*
Ստարգեոնյա Անի *4, 187, 200—205, 208, 213, 224*
Սրվեղի վանք *233*
Սուլեմայի լեռնանցք *131*
Սուլթանաբադ *108*
Սուրբ Մարի, *քաղաք, 117*
Սուրմալու, *գավառ, 127*
Սուրմարի *(Սուրմալու), 165, 365*
Սևանա լիճ *131, 139*
Սևանի վանք *105, 174, 347*
Սև ծով *132, 238, 287, 352*
Վանանավանք *324*
Վահրամաբերդ *157*
Վաղարշակերտ *132*
Վաղարշապատ (Էջմիածին) *75, 141, 142*
Վայոց ձոր, *գավառ, 70*
Վան *24, 75, 86, 100, 132, 141*
Վանա լիճ *129, 132, 139*
Վանանդ, *գավառ, 65, 68, 266*
Վասպուրական *20, 22, 68, 69, 71, 76, 112, 128, 145, 342, 349, 353, 354, 358, 375*
Վարդապետի պալատ *222, 267*
Վարձիա *197*
Վենետիկ *10, 333*
Վերին Թալին *130*
Վիեննա *237*
Վիրք *57, 59, 69, 70*
Վրաստան *110, 137, 138, 194, 197, 215, 260, 349, 354, 364*
Վրացական ՍՍՀ *27*
Վուրի, *աշխարհ, 57*
Տաթև *27, 228, 229, 235, 236*
Տայոց աշխարհ *51, 56*
Տայք, *կյուրապաղատություն, 22, 49, 56, 68, 69, 128, 212, 352, 354*
Տաշիր *55*
Տաշիր-Զորագետ *359, 362, 376, 377*
Տավուշ *110, 202*
Տարոն *(իշխանություն) 33, 49, 68, 128, 352*
Տեկոր *31, 32, 36, 47, 48, 68*
Տիգնիս, *բևրդ, 67, 156, 212, 213*
Տիգրան Հոնենցի եկեղեցի *301*
Տիգրանա դուռ *285*
Տյուրոս, *քաղաք, 28*
Տրապիզոն *86, 131, 346, 352—355, 357, 367, 374*
Տուրուբերան աշխարհ *20, 342*
Տփխիս *132, 137*
Յախացմարի վանք *324*
Ովսիիք (Օլբի) *70, 71*
Ոլպիս-ցիխե, *բնակավայր, 194, 197*
Ոստիք *49*
Ուրմիո լիճ *129*
Փամբակ, *գետ, 114*
Փայտակարան *20—22, 56*
Փառիսոս *70, 71*
Փարիզ *10, 173, 261*
Փոլկարարոց փողոց *92*
Փոքր Ասիա *112, 113, 116, 132, 180*
Փոքր Հայք *346, 353*
ս. Փրկիչ եկեղեցի *36, 73, 78, 121, 143, 153, 161, 164, 211, 216, 222, 235, 242—244, 251, 257, 312, 316—320, 335, 338*
Քաղաքաղաշտ *տե՛ս* Էջմիածին
Քասախ, *գետ, 141*
Քարաենձավային կամ Այրային Անի *115, 187, 194—200*
Քյոլն *173*
Քուրայիս *27*
Օլբի, *քաղաք, 131, 146, 200*
Օշական, *գյուղ, 33*
Ֆրանկֆուրտ, *քաղաք, 173*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Անի մայրաքաղաքի և նրա շրջակայքի բնական պայմանները . . 10

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԱՆԻՆ ՀՆԱԴՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 961 ԹՎԱԿԱՆԸ

1. Անիի ճնագույն ժամանակներից մինչև VIII դ. (մ. թ.) վերջերը . 18
2. Անիի VIII դարի վերջերից մինչև 961 թվականը 48

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԱՆԻՆ 961—1045 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. Անին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք . . . 64
2. Սոցիալ-տնտեսական կյանքը 82
   Ա. Երկրի ընդհանուր տնտեսական զարգացումը և Անին . . 82
   Բ. Անի մայրաքաղաքի արհեստագործությունը X—XI դդ. . . 88
   Գ. Առևտուրը 116
   Դ. Գյուղատնտեսական զբաղմունքները 141
   Ե. Հարկերն ու տուրքերը և հարկադիր աշխատանքները . . 147
   Զ. Հասարակական-տնտեսական հարաբերությունները . . 156
3. Բնակչությունը 168
4. Քաղաքի շինարարական-ճարտարապետական դեմքը, կոմունալ պայմաններն ու ներքին կյանքը 182
   Ա. Քաղաքի կառուցվածքը և թաղամասերը 183
   Բ. Քաղաքաշինություն 205
   Գ. Անին հայկական ճարտարապետության խոշորագույն կենտրոն 224
   Դ. Քաղաքի հատակագիծը, բարեկարգումը և կոմունալ պայմանները 242
   Ե. Քաղաքի եկամուտներն ու ծախսերը և ներքին կյանքը . . 264
5. Կարևոր նուշարձանները 267
   Ա. Պալատներ, քաղաքացիական հայտնի կառույցներ ու կոթողներ 267
   Բ. Պաշտպանական պարիսպները և Ախուրյանի կամուրջները . 277
   Գ. Անիի X—XI դարերի եկեղեցական հուշարձանները . . 289
6. Սշակույթը 329
7. Անիի գրավումը Բյուզանդիայի կողմից 348
Резюме 382
Sommary 390
Վկայակոչված գրականության ցանկ 396
Անձնանունների ցանկ 402
Տեղանունների ցանկ 408

ՀԱԿՈԲՅԱՆ
ԹԱԴԵՎՈՍ
ԽԱՉԱՏՈՒՐԻ

ԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է
ներկայացրել
համալսարանի
հայ ժողովրդի
պատմության ամբիոնը

Հրատ. խմբագիր՝ Հ. Պ. Համբարձումյան
Նկարիչ՝ Հ. Ն. Գոճայակյան
Գեղ. խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Ֆ. Գ. Տոնոյան
Վերատ. սրբագրիչ՝ Ս. Վ. Ավետիսյան

ԻԲ № 299

ՎՖ 02554, պատվեր 1918, տպաքանակ 10000։
Հանձնված է արտադրության 17.12.1979 թ.։
Ստորագրված է տպագրության 30.4.1980 թ.։
Թուղթ տպագր. № 2, չափը՝ 60×90¹/₁₆։
Տառատեսակը՝ «Սովորական»։
Տպագրության եղանակը՝ «Բարձր»։
Տպագր. 26 մամուլ+2 ներդիր (քարտեզ)։
Հրատ. 21,8 մամուլ։
Գինը՝ լաթե կազմով 1 ռ. 90 կոպ.
թղթե կազմով 1 ռ. 60 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն,
Երևան, Մռավյան փող. № 1։
Издательство Ереванского университета,
Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան,
Երևան, Աբովյան փող. № 52։
Типография Ереванского университета,
Ереван, ул. Абовяна № 52.

Նկատված վրիպակներ

էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
77	19 ն.	Հիմնական	Հիմնականում
124	16 վ.	Քվի	Քվա
219	3 վ.	1940	1904
224	16 վ.	Հետ	մոտ
320	19 վ.	ս. Գևորգ	ս. Գրիգոր
416	12 ն.	+2 քարտեզ	+1 քարտեզ